

ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՁՅԱՆ

Բ Ա Ռ Ե Ր Ի

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ


ԲԱՌԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ.

ԴԵՊՒ ԼԵՉԿԻ ԱԿՈՒՆԵՆԵՐԸ

ՉՈՐՐՈՐԿ ԲԱՐԵՓՈՒԿԱԾ ԵՎ ԱՐՁԱԿԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.



ԵՐԵՎԱՆ 2004



4
2P-80

ՆԵՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Արթուր Արևելյան զբոսաշրջության ինտերպուլայթ
Գրասենյակային հեռ. կապակցություն

ՕՍԵ
10.06.04
Է. Գրեան

ԲԱՌԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Բառերի ճակատագիրը, դեպի լեզվի ակունքները

Չորրորդ՝ վերամշակված և լրացված հրատարակություն

3336



ԵՐԵՎԱՆ - 2004



ԳԻՐԸ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ Ե ԵՐԱՇԽԱՎՈՐՎԵԼ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԱՄԲԻՈՆԻ ԿՈՂՄԻՑ

Գիրքը նվիրում եմ դստերս՝ արևելագետ
Հասմիկ Սկրտչյանի պայծառ հիշատակին

ՀՏՂ 809.198.1
ՊՄՂ 81.27
Ս 806

Նկարները՝ Ն. Մանուկյանի և հեղինակի

Սկրտչյան Ն.

Ս 806 ԲԱՌԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ: / Լեզվաբանություն/.-եր.:
Ձանգակ-97, 2004.—300 էջ:

Գիրքը մատչելի, հետաքրքրաշարժ լեզվաբանությամբ ներկայացնում է հայերենի երկու հազարից ավելի բառերի պատմությունը, ծագումն ու ստուգաբանությունը՝ սխառ հայերենի վաղնջական և սեպագիր լեզուների շրջանից մինչև մեր օրերը: Այն սերտորեն առնչվում է հայ ժողովրդի պատմությանը, կենդանի օրինակներով ցույց է տալիս բառերի նոր ծնվող և մեռած իմաստները, ինչպես նաև սխալներից եկող ապօրինի այն ձևերը, որոնք անարդարացիորեն օրինավոր ժամանգների տեղ են զբաղում լեզվում:

Գիրքը կարող է ծառայել նաև որպես օժանդակ ձեռնարկ միջնակարգ դպրոցի բարձր դասարանցիների աշակերտների, բուհերի բանասիրական և պատմության ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաև ուսուցիչների, դասախոսների և բոլոր այն անձանց համար, որոնք կցանկանան հարստացնել իրենց գիտելիքները մայրենիից և այլ լեզուներից:

Գրքի տպագրությունը հովանավորել են Տիգրանուհի Գովեսիյանը և նրա որդիներ Կարապետ ու Սաթևոս Խաչեղյանները:

4602020100
Ս 0003(01)-2004

ՊՄՂ 81.27

ISBN 99930-2-867-3

© Սկրտչյան Ն.
© «Ձանգակ-97»

*Յուրափանջյուր բառի պարզամասնությունը մի ճանապարհորդություն է դեպի
սեպյուր, դա էիք պարսեությունն է:*

ՎԱՐՆԱՆԻ

*Ամեն ինչ անհնում, կապարժում է ԲԱՌԵՐԻ մզբույս ու մզբույսով, ամեն ինչ կարելի է
միայնի ու դրեկի ԲԱՌԵՐԻ ժեզ, երբ միայն կապարժանում է ինչի ու միայնակի այդ ԲԱՌԵՐԻ:
Մաղամ դը Մտալ*

*Անյուն և պարսեությունն համար մի սպիտակ է, այն էլ հնարան, ինչպես մարտու
դասարանն է իր ունիքներով ու զանգով, երբ դրան պետք է, արտաքին, անսովորական
կերպան պարսեություն կամ համարանով մեայտորդներով:*

Գ. Ղափանցյան

1. ԶՐՈՒՅՑ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՈՒ ԳՐԿԵՑ ԱՅՈՒ ԳԻՐԸ

Մարդու պահանջները բավարարող ամենազարմանահրաշ երևույթը լեզուն է՝ մշտադուրդոգ և անփոխարինելի: Ամիշելի ժամանակներից դառնալով մարդու ուղեկիցը՝ լեզուն հիմնական հաղորդակցության միջոց է մուսն նաև այսօր՝ ատոմի, լազերների, ռոբոտների, համակարգիչների տիեզերական դարում: Տեխնիկան անընդհատ համալրում է մեր բառապաշարը նորանոր հասկացություններով ու բառերով: Յուրաքանչյուր գյուղի հետ ծնվում են նորանոր բառեր: Եթե որևէ ժողովուրդը առօրյայում սկսում է գործածել մետրո, կինո, րեճզին, ատոմ, տանկեր, տրոլեյբուս, հիփփո, ռադիո և այլ նման բառեր, ապա դրանք թույլ են տալիս որոշել, թե տվյալ բառերն օգտագործող ժողովուրդն ինչպիսի մակարդակի վրա է գտնվում և որ դառում է ապրում: Իհարկե, բառերը միայն չեն ավելանում լեզվում, այլև աստիճանաբար մոռացվում են: Այսօր ոչ ոք չի ասում արդեն՝ մեկ վտավան տարածություն, քանի որ գործածական է մետրը (կամ կիլոմետրը): Ոչ ոք այսօր չի հասկանա **հաճելի է ծայր վանդոսի** կամ **ոչ հաճո** (սեյ բեզ խոսս փանաքիմնաց և տրոսլ անծիս և կամ պատարանաց աղազալ գրաբարյան ձևերը և կամ մեր տատիկների բառապաշարից՝ շվուտի օրը (փետրվարի 28-ն է) և այլ «հայերեն» խոսքերը: Ինչո՞ւ: Որովհետև այսպիսի ռեճերն ու բառերն աստիճանաբար մեր առօրեական բառապաշարից դուրս են մղվել: Այս իմաստով բառերը նաև յուրաքանչյուր ժողովուրդի պատմությունն են: Եթե այդպես է, ուրեմն մարդկության պատմությունն էլ պատմությունն է նաև բառերի՝ մասին: Այո: Չէ՞ որ մարդն է տվել իրեն շրջապատող առարկաների ու երևույթների անունները. այդ անուններից էլ գոյացել է լեզուն՝ հաղորդակցվելու, բացատրվելու, խորհելու, սովորելու, ասելու, սիրելու, հորդորելու միջոցը: Որևէ քաղաքակիրթ երկրի քաղաքի փողոցներով անցնելիս ստիպված ես հանդիպել ցուցանակների, գովազդների, կոչերի, հայտարարությունների՝ **բառեր, բանկ, կինո, մետրո, ֆոտո, բար, փոստ, կաֆե, պողոտա, օֆիս, ռեկլամ, բյուրո, վարսավիրանոց, կոմիսիոն, բուկինիստ, պոլիլինիկա, օպերա, շուկա, կրկես, նպարեղեն, կրպակ, բուֆետ** և այլն: Նման ցուցանակները ժամանակակից քաղաքի համայնապատկերի անհրաժեշտ բաղկացուցիչներն են: Սակայն ի՞նչ գիտենք մենք նրանց մասին: Եթե բոլոր այս բառերը պատմության թելադրանքով են հայտնվել ցուցանակներին, ապա նրանք «ծննդյան» թվականներ են ունենալու: Այսպես օրինակ՝ **օպերան** չէր կարող **կրկես**-ից առաջ ծնվել, և ոչ էլ **տրամվայ**-ն ու **տրոլեյբուս**-ը՝ **կաֆե**-ից ու **սայլ**-ից առաջ. բացի որ առանց **էլեկտրականության** անհնար է նրանց գոյությունը: Շատ լավ: Բայց ո՞վ այդպես կոչեց դրանք: Եվ ճի՞շտ են արդյոք անվանել այդպես: Ինչպե՞ս են կոչը կողքի հայտնվել միևնույն առարկայի համար երկու-երեք անուններ: Դրանցից ո՞րն է գտարյուն հայերենը: **Կոֆե** ըմպելու համար պիտի **կաֆե**՞ մտնել, իսկ **Նրանցից** ո՞րն է գտարյուն համար **սրճարա**՞ն: Եվ կամ ինչո՞ւ ենք նախընտրում **շուկան** **բազար**-ից. ինչո՞ւ ենք խուսափում **բազար**-ը գործածելուց, մինչդեռ **շուկա**-ն համարում ենք «մերը»՝ հայկական: Չէ՞ որ **շուկա**-ն էլ մերը չի եղել, և ոչ էլ **շուկան** **շուկա** է նշանակել: Եվ հետո **բազար**-ն էլ նույնն է վաճառա բառի հետ, այսինքն՝ երկուսն էլ նույն ակունքներից են սկիզբ առել, բայց ղեզերելով այլևայլ լեզուներում՝ նրանցից մեկը՝ **բազար**-ը, ու չէ հանգրվանել մեր խոսակցականում, և այս իսկ պատճառով էլ նա «խորթ» զավակ է և «մերը» չէ, իսկ **վաճառ**-ը մերն է միայն վաղեմության, առաջնության իրավունքով: Ո՞վ է պարզաբանելու այս կամ այն բառի «մերը» կամ օտար լինելը: Լեզվաբաննե՞րը: Լեզվաբանության օգնությամբ: Օ՞, այդ **լեզվաբանությունը**. նա էլ կարող է պեղել պատմությունը և երբեմն ավելի հեռու գնալ, քան կարող են կամ զորու են **հնագիտու-**

թյունն ու պատմությունը: Նա պեղում է լեզվի շերտերը՝ պարզաբանելու համար այս կամ այն բառի ծագումը, ազգակցությունը այլ լեզուների բառերին և այսպիսով վերականգնում է որևէ ժողովրդի հազարավոր տարիների անցած ուղին, նրա դրացիական հայրաբերությունները հարևան ժողովուրդների հետ: Լեզվաբանության շնորհիվ է, որ այսօր մենք կարողանում ենք խոսել Չնդկաստանից մինչև Պորտուգալիա և Իսլանդիա ընկած տարածքում ցրված ժողովուրդների՝ մեկ ընդհանուր մորից ծնված լինելու մասին: Այնուամենայնիվ, դժվար կլիներ **լեզվաբանության** համար բառերի «ջունգլիներում» կողմնորոշվելը. եթե չլիներ նրա կողքին նորից մեծություն **ստուգաբանություն**: Առանց նրա խորհուրդների դժվար թե կարողանար **լեզվաբանությունը** մեծ-մեծակ պարզաբանել բառերի ծագումը: Այսօր ինչպե՞ս պիտի գլխի ընկնեինք **վերսե**, **թե** ինչ է նշանակում **Չայաստան**, **Պարսկաստան**, **Չոնկաստան**, **Ռուսաստան**, **Աբխազիա** և նման **ստան**-ով ավարտվող տեղանունների՝ — **ստան** մասը: Սիա այստեղ իր օգնությունն է առաջարկում **ստուգաբանությունը**՝ պարզելով հայերեն վերիոսկյա տեղանունների — **ստան** մասնիկի ազգական լինելը ռուսերենի **стан, стоят, стоянка, стой** բառերին (որոնց հիմնական նշանակությունն է «մնալ, կանգնել, կանգնելու, մնալու տեղ»), ռուսի և հայերենի կապը ռուսերենի հետ: Իհարկե, այսպես հեշտ չի ավարտվում ամեն ինչ, առավել ևս լեզվաբանության մեջ: Դեռևս մնում է պարզել, թե ինչպիսի ազգական կապերի արդյունք են այդ մնամությունները. մա՞րդ լեզվից (ոնցեվոպակա՞ն նախալեզվից) մնացած ժառանգության արդյունք են դրանք, թե՞ մեկը մյուսից է փոխ առել ինչ-որ ժամանակ հարևանության ընթացքում: Եթե այդպես է, ապա ո՞ր դարում, որտե՞ր... Սպասեք, կարծես մենք շեղվեցինք Մուտքի խոսքից և արդեն բառերի կենսագրությունն ենք պատմում:

Ուրեմն, ի՞նչ նպատակներ է հետապնդում այս գիրքը. պատմել հայերեն լեզվի անբավական մասը դարձած մի քանի հարյուր բառերի ճակատագրի մասին՝ ցույց տալով նրանց ծագումը, նրանց բուն հայերեն կամ օտար լինելը, առաջնորդել ընթերցողին դեպի լեզվի ակունքները և այսպիսով մարտնչի պահպանելու և չօտարացնելու համար տալ անհրաժեշտ գիտելիքներ:

2. ԸՈՒ ԼԵԶՈՒՆ ԿԱՄ ԶԱՆԻ՞ ԼԵԶՈՒ Է ՊԵՏՔ ՍԱՐԳՈՒՆ

«Քանի լեզու գիտես՝ այնքան մարդ ես»,— ասում է հայկական ժողովրդական ասացվածքը: Լեզուների իմացությունը անհրաժեշտ է մարդու, սակայն քանի՞սը: Նույնիսկ քարի դարում մարդը չէր կարող բավարարվել մեկ լեզվի իմացությամբ: Չէ՞ որ նա պիտի բացատրվեր հարևան ցեղերի հետ, և այստեղ ձեռքերի ու շարժումների մեկ լեզուն՝ նրան հազիվ թե բավարարեր: Մարդկության զարգացման հետ մեծացավ նաև օտար լեզուներ սովորելու անհրաժեշտությունը և ոչ միայն սովորելու, դրանց տիրապետելու, այլև դրանք ուսումնասիրելու անհրաժեշտությունը: Դիմ աշխարհում, միջին դարերում և մեր ժամանակներում հայտնի են բազմաթիվ լեզուների տիրապետող մարդիկ: Դիմ Միջագետքում մնամ մարդկանց անվանում էին **թարգմաններ**, որից էլ՝ հայերենի **թարգման, թարգմանիչ, թարգմանել** բառերը: Միջագետքյան մշակույթից այս բառը, ճանապարհորդելով լեզվից լեզու, եվրոպական ժողովուրդներին հասավ **դրագոման** ձևով: Միջին դարերում մեծ **դրագոմանների** կամ **թարգմանների** համբավ ունեին հայ քարավանատերերը: Լեհասիա քարավանապետներ խոսում էին եվրոպական և ասիական մի քանի լեզուներով: Նրանցից մեկն մասին գրել է ֆրանսիացի հայտնի գիտնական Ֆ. Մակլերը, որին վկայակոչելով՝ Դ. Աճառյանը նշում է նրա՝ 98 լեզուների գիտակ լինելու մասին: Պատմում են, որ

Պոստոսի բազավոր Միհրդատ Պոստացին գիտեր իր բազավորության ներքո գտնվող կովկասյան շատ լեզուներ: Գուցե սա չափազանցություն թվար, եթե մեր ժամանակներում պոլիգլոտ (բազմալեզու) անձնավորությունների կամ լեզվաբանների օրինակներ չունենային: Այսպես, օրինակ միջազգային լեզուներ հորինողներից մեկն էր Ի. Շլայերը, որն իր հնարած լեզուն անվանեց վոլապուկ՝ «աշխարհ» և թե՛ «լեզու» բառերից: Նա գիտեր 65 լեզու: Իսկ մեր օրերում ՄԱԿ-ի քարտուղարության տեղաբնակարան Ջորջ Շմիդտը խոսում է աշխարհի բոլոր եվրոպական և սլավոնական, սեմական, օւրոբական, իսպանական, հնդարիական, գերմանական, հին և ճոր եբրայական, աֆրիկյան շուրջ 69 լեզուներով, ինչպես նաև տիրապետում է արևմտահայերենին ու արևելահայերենին: Բայց ոչ բոլորին է բնությունն օժտել լեզուներ սովորելու ունակություններով: Միս այս պատճառով էլ լեզվաբաններն սկսեցին միջազգային լեզու հորինել՝ խոչընդոտները վերացնելու գեղատակով: Դանդես եկան վոլապուկը, բեյսիկ-էնգլիշը, էսպերանտոն, որ լեի բժիշկ Ջամենհոֆի մտահոգացման արդյունքն էր: Ամենատարածված այս միջազգային լեզվով էսպերանտոյով, «խոսում էին» (այսինքն՝ գիտեին) աշխարհում ընդամենը կես միլիոն մարդ: Իսկ դա շատ աննշան թիվ էր, եթե նկատի ունենանք երկրագնդի վեց միլիարդից ավելի բնակչությունը: Ուրեմն ժողովուրդների միջև գոյություն ունեցող լեզվական պատռելը չվերացավ՝ արհեստական միջազգային լեզու ստեղծելով: Իսկ ո՞րն է ելքը:

Լեզուներ սովորել: Չէ՛ որ միջոցներ և ժամանակ է պետք լեզվից լեզու գրավակություն բարձրանելու համար, և դրանք չէին ծախսվի, եթե մարդիկ լեզուներ իմանային: Իսկ քանի՞ լեզու է պետք մարդուն մեր օրերում: Որքան շատ՝ այնքան լավ: Ուրեմն՝ իմաստուն է հայ ժողովրդական ասացվածքը. «Քանի լեզու գիտես՝ այնքան մարդ ես»:

3. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ

Հայերենն աշխարհի հարուստ բառապաշար ունեցող լեզուներից մեկն է, որի բառերի ծագման հարցով զբաղվել են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի բազմաթիվ լեզվաբաններ: Հայերենը նման է մեծ ջանտեղի, որոնք որքան հեռվից են գալիս, այնքան շատ վտակներ են բնդողնում: Հայերեն իր կազմավորման և զարգացման ընթացքում չվիվել է բազմաթիվ լեզուների հետ, և զարմանալի չէ, որ նրա բառապաշարում առկա են փոխառյալ բազմաթիվ բառեր: Դրանք մեծ մասն այսօր արդեն գոյություն չունի այն լեզուներում, որոնցից հայերենը փոխ է առել:

Հայերենին անցած հարևան լեզուների բառերը ճանաչելու համար անհրաժեշտ է ոչ միայն ներկա հարևանների լեզուները գիտենալ, այլև հին հարևանների, որոնց լեզուներն արդեն մեռած են, այսինքն՝ այդ լեզուներով խոսող ժողովուրդներն այլև չկան: Նման հիմարանյալ լեզուներից են աքքադերենը (որի բարբառները կամ տարատեսակներն են աուրերենը և քարեկերենը), խուիերենը, խեթերենը, էլամերենը, արամեերենը և այլն, որոնց իմացությունը հնարավորություն է տալիս մեզ պարզել հայերենի բառազանձի շատ բառերի արդեն մրազմած իմաստները: Միս թե ինչու մենք հաճախ ենք դիմելու անցյալին, Հին Արևելքի քաղաքակրթություններին, որոնց հետ հազարավոր թեկնով՝ անբավականիորեն կապված է մի ժողովրդի պատմությունը: Որպեսզի ճանապարհորդները դեպի հայ ժողովրդի անցյալը, անպայման պիտի անցնենք հարևան երկրներով և հատկապես Տավրոսից հարավ, Եփրատից արևմուտք ու հարավ, Արաքսից հարավ հին-հին ճամփաներով, անհեղ իրադարձությունների ակամատեսների միջոցով՝ հասնելու համար մեր պատմության ու մեր լեզվի ակունքներին:

Այս ճամփաների արժեքը շատ լավ է գնահատել Ամենայն հայոց բանաստեղծը՝ Գ. Թումանյանը՝ գրելով իր նշանավոր քառյուղը.

Դեյ ճամփաներ, ճամփաներ... Ովքե՞ր անցան ձեզանով...

Ինչի՞նչ ասես, որ չեն տեսել այդ ճանապարհները. թանկարժեք իրեր, համեմունքներ, մետաքս, զարդեղեն, անկերներ և ելուզակների ավելիք արշավանքներ, ժողովուրդների մեծ գաղթեր: Եվ ամեն մի քարավանին ու արշավանքի հետ նա հետքեր էին մնում հայերենում՝ բառեր, բառեր, բառեր... Ուրեմն, բառերը նաև պատմություն են: Իսկ պատմական Հայաստանի տարածքով կամ նրա մոտով որքա՞ն մեծ ճանապարհներ էին անցնում Դարեհի Արցախյան մեծ ճանապարհը, որը, սկսվելով Չինաստանի խորքերից, Հայաստանի վրայով հասնում էր Եվրոպայի մատույցները, Հռոմեական մեծ ճանապարհը, որը, սկսվելով Հռոմից, ձգվում էր Հայաստանի վրայով՝ Պարսկաստան և ավելի հեռու, Մետաքսի մեծ ճանապարհը և սրանց հետ միասին ավելի պակաս հայտնի այլ ճանապարհներ, որոնք էլ հենց պատմություն են հիմա:

4. ԼԵԶՈՒՆ ՈՐՊԵՍ ԱՆՅՅԱԼԻ ԲԱՆԱԼԻ

— Դու սիրո՞ւմ ես ճանապարհորդել:— հարցրի մի անգամ ընկերոջս:

— Այն էլ ինչպե՞ս. ինձ համար ճանապարհորդելը գերազույն հաճույք է,— պատասխանեց նա,— սակայն միշտ ինձ ինչ—որ բան խանգարում է...

— Իսկ եթե ես առաջարկեմ այնպիսի մի ճանապարհորդություն, որ քեզ ոչ մի բան չխանգարի՞:

— Իսկ ո՞ր կառաջարկեիր, հա՛, երկի դեպի ապագա՞ն:

— Ոչ քե՛ դեպի ապագան, այլ դեպի անցյալը. չկարողացար ճիշտ կոսիել:— Զարուակեցի ես:

— Ինչո՞ւ հատկապես դեպի անցյալը, եթե դեպի ապագան է ձգտում մարդկությանը:

— Դեպի անցյալը, ուր մեր արձատներն են, դեպի հայ ժողովրդի ու նրա հարևանների անցյալը:

— Այդ դեպքում արժե, բայց ինչպե՞ս պիտի գնանք այդ անցյալը, որտե՞ղ են խորդրավոր անցյալի բանալիները, ինչպե՞ս պիտի բարձրացնենք պատմության թանձր վարձադրոյները, որոնց ետևում ողբերգություններ ու զարտիքներ կան ծածկված: Կարո՞ղ ենք գտնել այդ դռների ոսկյա բանալիները:

— Այո, սիրելիս, անցյալի զարտիքները բանալիները գիտությունն է տալիս մարդկանց: Եվ դեռ ոչ բոլոր ժողովուրդներն են բացված մարդկության առջև: Դու լսե՞լ ես «մեռած» լեզուների մասին: Այդ լեզուները անհամար զարտիքներ են թաքցնում իրենց մեջ: Դուս այդ զարտիքները բացող բանալիներն են մեզ պետք, և դրանք շատ— շատ են: Դու գիտե՞ս, թե ինչպես էին կոչում Փոքր Ասիա թերակղզին հին հույները:

— Այո, Անատոլիա, այսինքն՝ Արևելք:

— Ճիշտ է, բայց նաև՝ ժողովուրդների աղբաճոց: Ինչո՞ւ: Թերևս նրանք իրավացի էին, որովհետև աշխարհի ոչ մի տարածքում այնքան ժողովուրդներ միմյանց չեն փոխարինել, որքան Փոքր Ասիայում: Փոքր Ասիա թերակղզու երեք կողմերը ծովերն են ողողում, իսկ նրա չորրորդ կողմը, որտեղից արևն է ծագում, Հայաստանն է՝ Արմենիան: Զարմանալիորեն ողբերգական է եղել այս թերակղզու ժողովուրդների ճակատագիրը, այդ թվում՝ նաև հայերիը: Եթե միայն թվարկել փորձե՞նք այստեղ ապրած ու անհետա-

ցած ժողովուրդների անունները, ապա մի անբողջ պարբերություն կլինի: Այն դեպքում, երբ, սանձը, եզրկատուի նման իրն պետության տարածքում հինգ հազար տարվա մեզ ծանոթ պատմության ընթացքում հերթափոխել են ընդամենը երկու—երեք ժողովուրդներ՝ հին եզիպտացիք՝ դալտները, և արաբները: Մինչդեռ մեզ հայտնի փոքրասիական ժողովուրդների ցուցակը կազմելիս դժվար թե կարողանանք լրիվ հիշատակել բոլորին: Իսկ ո՞վ կզգնի մեզ իմանալու այդ ժողովուրդների անունները: Միայն սեպագիր արձանագրությունները, որոնք սփռված են Կապադոկիայից մինչև Չայաստան ու Միջագետքից մինչև Պարսկաստան ընկած տարածքներում: Եվ այսպես՝

5. ՀԱԶԱՐԱՍՅԱԿՆԵՐ ԱՄԵՊԱԶԵՎ ԵՆԱՆՆԵՐԻ ՏԱԿ

Սեպագիր խեթերեն արձանագրություններից իմանում ենք, որ Անատոլիայում մ.թ.ա. 2—1 հազարամյակներում բնակվում էին խաթեր, խեթեր, կասկեր, հայասացիներ, լուվացիներ, պալայացիներ, կիզուվատնացիներ, խուռիներ, արայացիներ, միտանիներ, գիմնրներ, մուշկեր, բաբելացիներ, արծավացիներ, նաիրի երկրների ժողովուրդներ և ավելի ուշ (հուճահռոմեական արշավների համաձայն)՝ փոյուզացիներ, տրոյացիներ, պոնտացիներ, պաֆլագոնացիներ, լիդիացիներ, լիկիացիներ, գաղարացիներ, բուբալացիներ, քրակացիներ, ճաներ, հույներ (քյուզանդացիներ) և այլն, իսկ միջին դարերից (11—14-րդ դարից) նաև Միջին Ասիայից եկած սելջուկ-թուրքեր, օղուզ-սամանակա՝ թոչվորական ցեղեր, որոնք հետագայում կամաք-կամաք ոչնչացրին տեղաբնակներին կամ բռնի թուրքացրին: Եվ այսպես, Անատոլիայի ժողովուրդներից և ոչ մեկն լեզուն այսօր այս տարածքում չի հնչում:

Իսկպես, բոլոր այդ հիշատակած ժողովուրդների լեզուներն էլ մեռել են, և Անատոլիան իզուր չի կռչվել նաև ժողովուրդների գերեզմանոց: Այսօր, սակայն, այդ գերեզմանոցի վրա մի ցուցանակ և կանգուն, վրան գրված **Թուրքիա**: Իհարկե, սա տապանագիր չէ, բայց սաես հնչում է որպես տապանագրերի տապանագիր, զի ժողովուրդների գերեզմանների վրա է հիմնված...

Ժամանակակից Հռոմի կենտրոնում նետի պես ուղիղ մի փողոց է դեպի **Կոլոսեոն** տանում: Այնտեղ հսկայական պատի վրա Հռոմի աշխարհակալական քարտեզներն են քանդակված: Այս քարե փաստաթղթերը ամենագոր ժամանակի առջև դեռ կանգուն են մնում: Նրանք ոչ միայն վկայներ են Հռոմի նվաճող զենքի սահմանների, այլև Հայաստանի սահմանների: Այդ պատի վրա հավասարաբան ճշան է գրված երկու անունների միջև: Քարտեզի եզրուղիական մասի վրա գրված է **Roma**՝ Հռոմ, իսկ Փոքր Ասիա թերակղզու վրա, մինչև Պարսկաստան ընկած տարածքում, գրված է **Armenia**, այսինքն՝ Հայաստան:

Որքան էլ թուրք պատմաբանները ճգնեն հերքել Հայաստանի գոյությունը Հայկական **լեռնաշխարհում**՝ «Նորագյուտ» փաստերով նեգատիվական պատմություն մատուցելով մարդկությանը, անգոր են այս հարցում: Հռոմի քարե քարտեզներից, սեպագիր կալված սալիկներից, Բեիխատուհի քարձուներից **Հայաստան** անունը ջնջել չեն կարող...

Հռոմին ձեռնոց նետող Հայաստանը, **«Կամուրջներ չհանդուրժող Արաքսը»** ակնածանքով են լցրել հպարտ Հռոմին ներբողներ ծնող պատմաբանների սիրտը: **Հռոմը Ներոնի ձեռքով քառ է դրել հայոց Տրդատ թագավորի զլխին**, սեռ դրամների վրա գրելու գնով՝ **Armenia Capta**. Պատմությունը միշտ էլ **արյամբ է գրվել**, բայց դարաշրջանը զենքի անունով է կոչվում. այն բնութագրվել է որպես **քարի դար, բրոնզի դար, երկաթի դար**... Իսկ իման արդեն շատ է դժվարացել գործը...

Ո՞ր դարում ենք մենք: Ինչի՞ դար պիտի անվանենք մեր ժամանակները, երբ մար-

դիկ սպանում են միմյանց ամեն ինչով՝ վառողով, լազերով, գազով, մանրէներով, առտով... Իսկ մենք չե՞նք շեղվում արդյոք մեր նյութից: Ո՞չ: Հասկանալու համար, թե որտեղ ես դու գտնվում, ստիպված ես նայել և՛ ետ, և՛ առաջ:

6. ՀԱՎ ԱԲԱՍԻ ԳԻՏԱՓՈՐԶԸ ԿԱՍ ՈՐՆ Ե ԱՃԻԱՐՀԻ ԱՌԱՏԻՆ ԼԵԶՈՒՆ

Մարդկությանը հին դարերից սկսած հուզել է այն հարցը, թե որ լեզուն է ամենահինը կամ «աստվածատուրը», կամ մինչև Բաբելոնի աշտարակաշինությունը ինչ լեզու(ներ) են խոսել մարդիկ, իսկ հետո քանի լեզու է առաջացել, և որոնք են այդ լեզուները: Այս տեսակետից շատ հետաքրքրական է 17—րդ դարի հայ պատմիչ Ջաբարի-Ա Մարկավազի «Պատմագրության» մեջ գետեղված գրույցը Շահ Աբասի կատարած փորձի մասին: Նա գրում է, որ Շահ Աբասը ոչ միայն զորավար և քազավոր է եղել, այլև հետաքրքրվել է զանազան գրույցներով ու պատմություններով, հանելուկների լուծմամբ, կատակներով ու հավատների քննությամբ: Իր ավագանու հետ նա մեկ անգամ այսպիսի գրույցների ժամանակ քննարկում էր այն հարցը, թե որն է աշխարհի ամենաճոխ լեզուն, և որն է արդյոք եղել Աստուտ տված լեզուն Արամին: Նրան շրջապատող ավագանին միակարծիք չէր այս հարցում: Ոմանք եմթարում էին, որ Արամի լեզուն եթովպերենն էր, ոմանք էլ եմթարում էին, որ հրեաների լեզուն էր, այսինքն՝ եբրայերենը և այլն, և այլն: Այս բոլորը լսելուց հետո Շահ Աբասը մտածեց երկար և, կանչելով Լալա բեկ իշխանին, կայացրեց այսպիսի վճիռ. «Հավաքիր Ալբասիանու գտնվող բոլոր ազգերի ծծելու ճամուկներին, որոնք դեռևս չեն խոսում ծնողների լեզուն, փակիր մի սենյակում: Խստիվ պատվիրի ծնողներին բնավ իրենց երեխաների հետ չխոսել և անգամ հայացքով չձգտալ: Միայն նրանք թող կուրծք տան իրենց զավակներին, լողացնեն, խնամեն և գիշերները քնեն իրենց երեխաների հետ, սակայն ցերեկները զատեցեք մայրերից երեխաներին: Երբ այս երեխաները խոսել կսկսեն, մենք կիմանանք, թե որն էր այն լեզուն, որ Աստված տվել էր Արամին»: Լալա բեկը կատարեց շահի հրամանը. Սպահանում գտավ 7 քրիստոնյա ժողովուրդներ՝ հայ, հույն, ասորի, լատին, վրացի, բոջա և 13 այլազգի երեխաներ: Հուրջ երկու տարի ներքինների հսկողության տակ այս երեխաները մեկուսացվեցին արտաքին աշխարհից և իրենց մայրերից, որպեսզի ոչ մի բան չլսեն ու չսովորեն ծնողների խոսած լեզուներով: Իհարկե, այս երեխաները միմյանց հետ խաղալիս ինչ—որ բացակաչություններ անում էին, միմյանց հետ կրկում ու լալիս, սակայն միասնական հասկանալի ոչ մի բան նրանք չէին կարողանում արտասանել և, ինչպես Ջաբարի-Ա Մարկավազն է ասում. «Եւ յետ տալոյ միոյ արձակեցին լեզու յօրաօրս. և անա և ոչ մի էր լեզուացն, այլ խճական և բեկբեկ» (Եվ մեկ տարի անց քազվեցին նրանց հողավոր լեզուները, բայց լեզուներից ոչ մեկը չէր, այլ քարքարոսական և կտորատված): Հասիի կողմից սահմանված պայմանաժամը երբ լրացավ, ավագանու հետ միասին Շահ Աբասը եկավ փորձի արդյունքները տեսնելու: Նա կրկնապես քազել փակ սենյակը և ցույց տալ երեխաներին: Նա իր հետ բերել էր չամիչ և հրամայեց դա լցնել երեխաների առջև: Երեխաները աղաղակով և գոռում—գոչյունով վրա ընկան չամիչին և միմյանց քաշքշելով, ճվարով, ճջարով սկսեցին ուտել: Մարկավազի խոսքերով ասած՝ շահը լսեց «զիմսական խոսա ճոցա» և, հիասթափված փորձի արդյունքից, հրամայեց կտորոքել բոլոր երեխաներին մինչև վերջինը, որպեսզի «զի մի անճացի քարբառոյ այր» (որպեսզի չքազանա այդ լեզուն): Լալա բեկը, ավելի մարդասեր գտնվելով, այդ դաժան հրամանը չի կատարում և թաքնում

հանձնում է երեսնամեկ իրենց ծնողներին, որպեսզի նրանք կարողանան սովորել իրենց մայրենի լեզուն և վերադառնան իրենց ժողովրդի գիրկը:

Չաքարիա Մարկավազը գրում է, որ այս դեպքը պատմողը Հավուց Թառի վարդապետ Մարկոսն է եղել, իսկ նրա հորեղբայրը՝ այդ մանուկներից մեկը, որը հետագայում սովորել է մայրենի լեզուն:

Այս կենդանի գիտափորձը ապացույց է այն բանի, որ լեզուն ի վերուստ չի տրված, այլ ստեղծված է մարդու կողմից: Այլապես նորածին երեխաները առանց ծնողների օգնության էլ պիտի սովորեին լեզու, և բոլոր ժողովուրդները պիտի խոսեին մեկ լեզվով:

7. ԶՐՈՒՅՅՆԵՐ ԼԵԶՎԻ ԾԱԳՄԱԸ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՍԻՆ

Մարդկությանը հուզող հարցերի թվին է պատկանում լեզվի առաջացման հարցը, որի ծագման վերաբերյալ բազմաթիվ գիտնականների կողմից բազմապիսի վարկածներ են առաջ քաշվել:

Հին աշխարհի ժողովուրդների մոտ այն կարծիքն էր ստեղծված, որ Աստված է լեզուն տվել մարդուն: Այդ նույն տեսությունն էլ արժանագրված է Մուրբ գրքում՝ Աստվածաշնչում: Սակայն հետազայուն այդ տեսակետի վրա սկսեցին կասկածել, քանի որ մարդկանց մի մասը մյուսին չէր կարողանում հասկանալ: Հարց է ծագում, եթե Աստված է ստեղծել լեզուն, ապա ինչո՞ւ բոլորի համար ընդհանուր մի լեզու չի տվել:

Իհարկե, Աստվածաշունչը պատրաստել է պատասխան այս հակասության պատճառաբանության համար: Աստվածաշունչը տարբեր լեզուների գոյությունը պատճառաբանում է դարձյալ աստվածային միջամտությանը, քանի որ մարդիկ հանդգնել էին ընդվզել Աստուծո դեմ՝ սկսելով Բաբելոնի աշտարակաշինությունը: Աստված էլ մտածեց խափանել այն՝ փոխելով նրանց լեզուները:

Բայց մարդկային տրամաբանությունը չէր կարող հաշտվել նման հիմնավորման հետ և որոնում էր լեզուների և լեզվի ծագման, նրանց ստեղծման հնարավոր պատճառները: Եվ ահա հայտնվեցին նորանոր տեսություններ: Ո՞նանց կարծիքով լեզուն մարդու բնածին հատկություններից մեկն էր, որի անհրաժեշտությունը ուներ նա, ինչպես ունեյու և խմելու պահանջն էր: Այս դեպքում էլ առաջանում էին այլ հակասություններ: Եթե այդպես է, ապա ինչո՞ւ ծնվելուց կամ որոշ տարիքի հասնելուց հետո մարդը ինքնաբերաբար չէր կարողանում սովորել լեզու, այլ այն ձեռք էր բերում ժամանակի ընթացքում: Բացի այդ, լեզվաբաններից ոմանք էլ այն տեսությունն էին առաջ քաշում, թե լեզուն առաջացել է հիմնականում բնածայնական երևույթների ընդօրինակումից, այսինքն՝ մարդը բառեր է հնարել շրջապատից (սառ ծայնարկությունների նմանությամբ՝ պատճենելով կենդանական աշխարհի ու բույսերի երևույթները արձուկը, ճիչերը կամ նկարագրելով դրանք: Իհարկե, այս կարգի բառեր բոլոր լեզուներում էլ կան, ինչպես, օրինակ՝ կկու, ագռավ, խրիվից, ծիվ-ծիվ, մկկոց, շշուց, թշշոց, բխկոց, վայել, ճոռոց, շոխիղ և այլն: Սակայն ինչպե՞ս պիտի բացատրվեր այս դեպքում այնպիսի բառերի առաջացումը, որպիսիք են՝ ես, դու, նա, հայր, քույր, տուն, սև և այլն:

Ինչ խոսք, այստեղ կա ճշմարտության ինչ-որ մաս, սակայն նման բառերը ուզածը լեզվի բառապաշարում մի քանի տասնյակից այն կողմ չեն կարող անցնել:

Ո՞նանք էլ գտնում էին, որ լեզուն հիմնականում առարկայի և նրա անվանման միջև եղած կապի դրսևորման արդյունք է: Բայց այս դեպքում էլ հարկ էր առաջանում պատասխանել, ինչո՞ւ մի լեզվով ջուրը ջուր է, մյուս լեզվում՝ վոդա, երրորդում՝ աքուա,

չորրորդում՝ մու, մայ, հինգերորդում՝ վասսեր, վեցերորդում՝ աք, յոթերորդում՝ օ և այլն: Օրինակ՝ ի՞նչ կապ կարող է լինել առարկայի ու նրա անվանման միջև, երբ միևնույն հնչողությունն ունեցող բառերի հանդիպում ենք աշխարհի տարբեր լեզուներում, որոնք տարբեր իմաստներ ունեն: Նման բառեր քիչ չեն նաև հայերենում, օրինակ՝ այր-ը և՛ «տղամարդն» է, և՛ «քարայրը», կետ նշանակում է և՛ «կետ ձուկ», և՛ «պիտեղ», և՛ «միջակետ», փող նշանակում է և՛ «դրամ», և՛ «խողովակ», և՛ «շեփոր», վկա նշանակում է և՛ «վեճ, կռիվ», և՛ «կրճ, ճան» և այլն:

Ընդհակառակը, բոլոր լեզուներում էլ նկատվում է միևնույն բառի տարբեր իմաստներով հանդես գալու երևույթը, ինչպես ունենք արևելահայերենում՝ վեր զալ՝ «ցած իջնել», իսկ արևմտահայ բարբառներում՝ «վեր բարձրանալ», կամ գրաբարում՝ պարապել՝ «զբաղվել», արդի հայերենում պարապ-ը նաև ձեռք է բերել «անզբաղ, դատարկ» նշանակությունները: Տարբեր լեզուներում միևնույն հնչողությունն ունեցող բառերն ունենում են բոլորովին տարբեր կամ հակառակ նշանակություններ, ինչպես, օրինակ՝ չէ հայերեն՝ «ոչ», չինարեն՝ «այո», ճափ հայերեն՝ «առաջ», գերմաներեն՝ «հետո», նա հայերեն՝ «նա», ամերիկյան չինանտել լեզվով՝ «ես» և այլն:

Ամփոփելով լեզվի ծագման վերաբերյալ եղած ենթադրությունները՝ կարելի է, կոպիտ ձևով ընդհանուր հայտարարի բերելով բոլորը, ասել, որ յուրաքանչյուր տեսակետի մեջ էլ կա ճշմարտություն, որովհետև լեզուն չէր կարող լինել բնածին և չէր կարող առաջանալ վերը նշված միայն մի պայմանի առկայությամբ, այլ թերևս հիշյալ բոլոր գործոնների առկայությամբ, քանի որ լեզուն արդյունք է երկարուծիկ դարձրելի մարդու գոյության: Ուստի բառերի առաջացման և լեզվի զարգացման պատմության մեջ դեր են խաղացել և՛ նմանածայնությունները (կամ բնածայնությունները), և՛ մանկական թրթուղանքները, և՛ առարկաների հատկանիշները, նրանց ինչ մյուսից բարկացած լինելը, և՛ պատահական անվանումները: Օրինակ՝ հայերենում արմիղորն սկսեցին անվանել լուխկ, որը հայերեն բառ է և նշանակում է «ողորկ, կլորիկ, փայլուն», այսինքն՝ նկատի առնելով առարկայի միայն արտաքին հատկանիշը:

Պատմության ընթացքում մարդը հնարել է նորանոր գործիքներ, առարկաներ՝ միաժամանակ կատարելագործելով հմերը, ճանաչելով նոր երևույթներ և մարդկանց միջև ստեղծված սոցիալական հարաբերությունները, հնարել է դրանք արտահայտող բառեր, դարձվածքներ: Այս տեսակետից յուրաքանչյուր կենդանի լեզվի արդի վիճակն ավելի է կատարյալ ու ճիշտ, քան նախորդ դարերից: Լեզուն մարդու մարդացման պատմությունն է, նրա անցած դարերի պատմությունը, բայց, այնուամենայնիվ, ո՞վ է հորինել լեզուն...

8. Ո՞Վ Է ՀՈՐԻՆԵԼ ԼԵԶՈՒՆ

Լեզվի ծագման, նրա կատարելագործման հարցերը ընճելիս չպետք է մոռանալ նաև անհատների դերը: Անհատներն են հորինում օրորոցայինները, մանկավան թրթուղանքները (մանուկների հեղինակակցությամբ), հանգուցյալների վրա սավող ողբերը, աշխատանքային երգերը, ծաղրական խաղիկները, վիճակահանության քառյակները (զանգույնումները) և այլն: Թերևս, այս երևույթի առաջին նկատողները եղել են Միջագետքի ամենաախին զրավոր լեզուն հորինող ռումեթները, նրանց անընդհատ սեպագիր սալիկների վրա հիշատակում են էնե սալ՝ «կանացի լեզու» (կանանց լեզվով) արտահայտությունը:

Այսու էլ գյուտարարներն իրենց ստեղծած նոր առարկային, գործիքին, դեղամիջոցին, զգեստին, նյութին տալիս են նոր անվանում՝ նախորդներից տարբերելու համար:

Տվյալ առարկայի անվանումը, եթե դուր է գալիս հասարակությանը, ընդունվում է և ձեռք է բերում ապրելու իրավունք: Բայց պատահում է նաև հավատարմը, և ճոր բառը հասարակության կողմից չի որդեգրվում, գոյության ուղեգիր չի ստանում (անբարեոհունչ կամ երկար լինելու, դժվարըմբռնելի կամ մեկ այլ բառի հետ շփոթվելու, ոչ արտոժայտ լինելու պատճառով): Արևմտահայերենում, որպես **օպերա** և **բալետ** բառերի հայերեն համարժեքներ ստեղծեցին **երգիճն**, **պարիճն** բառերը, սակայն դրանք չտարածվեցին:

Միս մի օրինակ նման լեզու ստեղծող անհատների մասին, որ պատմում է ֆրանսիացի **Օ. Տաբերնըն** իր «Լեզվաբանություն» գրքում՝ բաղելով իր հայրենակից ճարտարապետ **Վիկտոր Ուրնոյի** հուշերից մի դիպված:

Վիկտոր Ուրնոն երկար ժամանակ ապրել էր Գարավային Ամերիկայի բոտոկուրոս ցեղի մեջ, և ահա թե ինչ իրողության է նա ականատես եղել. «Երբ մենք հանդիպում էինք ճանապարհին որևէ ճոր առարկայի, մեզ ընկերակցող վայրենիներից մեկը բարձրաձայն ասում էր **մի բառ**՝ հանկարծական գաղափարից մղված, մյուսները ծիծաղով և գոռոցոցներով կրկնում էին այդ բառը, որով ընդունվում էր այն ընդհանուրի կողմից: Բոտոկուրոսները, ձիուն տեսնելով, նրան տվին **կրպեյուն**»՝ «զլուն—ատամներ» անունը, եզին՝ **պոկեկրի**՝ «ոտըը ճղված», էչին՝ **մոդ—յունն—օրոն**՝ «երկարականց կենդանի» անունը և այլն:

Նման ուղի են անցել նաև այսօրվա լեզուները, նրանց բարբառները: Ու թեև անհատներն են հորինում լեզուն, բայց դա պիտի հավանություն գտնի մյուսների կողմից: Դասարակության հավանությանն արժանազատ բառերն են միայն ապրում մարդկանց շուրթերին. լեզու և խոսք կերտելու գործում մեծ դեր ունեն **բանաստեղծները**, այսինքն՝ նախկին **քերթողները**:

Բանաստեղծ նախ նշանակում է **խոսք**, **բառ ստեղծող** և ապա՝ **գրող**՝ հանգավոր կամ չափածո ոտանավոր հորինող...

Այսօր շատ տվորական են դարձել **Նաիրի երկիր**, **Նաիրյան արև**, **Նաիրի աշխարհ**, **Նաիրուհի** բառերը Գայաստան և հայուհի հասկացությունների համար: Սակայն ընդամենը մի քանի տասնամյակ առաջ էր, որ մընջաղի անուրջներում դեզերող մի բանաստեղծ ահով լեցուն սրտով գոչեց.

Շողա, պայծառ Նաիրի... (Վ. Տերյան):

Առաջին անգամ... և ընդմիջտ մնաց այն մեր լեզվում: Դարձյալ առաջինը նա գործածեց **Նաիրուհի** բառը մի հայուհու ծոնված բանաստեղծության մեջ. «Բարակիրան Նաիրուհին ինձ ժպտաց...»: Շուրջ հազար տարի առաջ Նարեկացին ստեղծեց ծիծաղախիտ բառը՝ մուծելով հայկազյան բառազանձի մեջ և նման հարյուրավոր այլ բառեր. կերտում են ու կերտում նորանոր բառեր լեզվի դարբինները՝ դարձնելով այն հայոց սեփականություն: Այստեղ մենք խոսեցինք միայն մեկ—երկու դեպքերի մասին, երբ հասարակությունը հավանություն է տվել անհատների ստեղծած բառերին: Բայց չէ՞ որ նման օրինակները հազարավոր են ու տասնյակ հազարավոր: Եթե ծովը կաթիլներից է գոյացել, ապա լեզուն էլ՝ բառերից:

9. ՍԱՆԿԱԿԱՆ ԵՎ «ԲԱՆԱՆԱՅԻՆ» ԼԵԶՈՒ

Ինչպես որ աշխարհում չկա լեզու առանց բարբառի, այնպես էլ՝ առանց մանկական լեզվի: Զարնամախին այն է, որ մանկական լեզուն հորինում են ոչ միայն մանուկները, այլև մեծերը: Մանուկները թրթուլախոսում են, իսկ մեծերը՝ լրացնում: Բո-

լոր ազգերի երեխաներն էլ դա անում են միմյանցից անկախ՝ միմյանց հետ չպայմանավորված: Առարկաները ստանում են հեշտ արտասանելի հնչյուններից (ավելի միջոտ վանկերից) կազմված անվանումներ, որպիսիք են՝ **տոտո**՝ «ոտք», **թաթա**՝ «ծեք», **թրր**՝ «գագան», **կակա**՝ «քաղցրավենիք, աղանդեր» և այլն: Ինչպես նկատում ենք, վանկերը կրկնված են, և նույնիսկ որոշ տառեր գիտակցորեն վեր են ածվում մանկական լեզվի հնչյունը՝ վերոհիշյալների համարանությամբ, ինչպես, օրինակ՝ **տատի**—ն («տատիկ») դառնում է **տատա**, **լողանալ**—ը՝ **չոփչոփ** և այլն: Միմյանցից անտեղյակ, անկախաբար երեխաները հորինում են իրենց անհրաժեշտ առաջին բառերը, որպիսիք են՝ **մա** կամ **մամա**, **պա** կամ **պապա**, **տա** կամ **տատա**, **տիտի**՝ «նստեղ», **ճուճու**՝ «ճուտիկ, հավ», և այստեղ վիճելու հարկ էլ չկա, թե դրանք փոխառյալ՝ բառեր են, թե՞ սեփական:

Ուտի, սանկրիտում հանդիպող **մա**՝ «մայրիկ» բառը, կա և՛ հունարենում, և՛ հայերենում: Իսկ **մամա** կամ **մամ**, **մամի**՝ «մեծ մայր, մանկաբարձ», կա և՛ հունարենում, և՛ չինարենում, և՛ շումերերենում, և՛ պարսկերենում (նաև լատիներենում, ռուսերենում, էսթերենում և այլն):

Գիտնականներից ոմանք կրկնական, կրկնարմատ կազմություններ ունեցող բառերն անվանում են «բանամային»: Քանի որ նմանօրինակ բառեր շատ ունի շումերերենը, շատ հաճախ այն անվանում են «բանամային լեզու»: Օրինակ՝ շումերերենում **գալ** նշանակում է «մեծ», իսկ **գալ—գալ**՝ «մեծեր», բառացի՝ «մեծ—մեծ», **կուս** նշանակում է «երկիր», իսկ **կուս—կուս**՝ «երկրներ», բառացի՝ «երկիր—երկիր»: Արմատների և բառերի կրկնությունը հայերենում նույնպես հոգնակության գաղափար է արտահայտում: Եթե մենք ասում ենք **խումը**, հասկանում ենք «բազմություն՝ իրերի, մարդկանց», իսկ երբ ասում ենք **խումք—խումք**, ապա հասկանում ենք «շատ, խմբերով», կամ **փունց—փունց**՝ «շատ, փնջերով» և այլն: Որոշ լեզվաբանների կարծիքով՝ բանաստեղծում մեծ միջոցը (արմատակրկնությունը) պարզունակ է և հատուկ է ավելի ոչ բաղաբանիկ ժողովուրդների մտածելակերպին: Բայց մի՞թե կարելի է համաձայնել նման պարզունակ եզրակացության հետ:

10. ԻՆՉՊԵՆ ՆԵՎԵՑԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

(Այս մասին տես նաև Թե ԻՆՉՊԵՆ Թե ԳՆԱՍՐ ԳՆԵՎԱՆՆ Ե ԸՆՏՐՈՒՄ ԱՆՈՒՆ)

Թողի երկիրն իմ հայրենի,
Անահ անցա Արար ու Դիմի,
Դասա մինչև Զինումաչին,
Տեսա երկրի ծայրը վերջին...

Վ. Տերյան

Ինչպե՞ս թե, եթե խոսքը հույների երկրի մասին է, ապա նրանց զբաղեցրած տարածքը պիտի կոչվի Գունաստան, եթե հաբեշների մասին է՝ Դաբեշստան, եթե վրացիների մասին է՝ Վրաստան կամ Վիրք, եթե սառիների մասին է՝ Ասորեստան կամ **Ասորիք** և այլն: Սակայն «կանոնավոր» կամ «օրինական» համարվող իշատակված անունների կողքին տեսնում ենք նաև քաղաքիկ ոչ օրինավոր, գարտուղի ճանապարհով ստեղծված անուններ, որոնց հիմքում ընկած են աշխարհագրա-



կան կողմերի, վայրերի, ցեղերի նահապետների անունները: Այսպես, օրինակ՝ **Հայաստանը** հաճախ անվանում են **Թորգոման տուն**, որպես թե Թորգոմ նահապետի անունով, իրականում՝ **Togarama, Tegarama** երկրի անունից: **Օսմանցիներ** և **սելջուկներ** են անվանում թուրքերին **Օսման** և **Սելջուկ** ցեղապետերի անունով, իսկ արաբներին՝ ըստ Աստվածաշնչի, **հազարացիների**՝ **Հազար** աղախնից սերվելու պատճառով և այլն:

Հարևան ժողովրդի զբաղեցրած տարածքը կամ այդ ժողովրդին անվանել են աշխարհագրորեն իրենցից հարավ, հյուսիս, արևելք, արևմուտք գտնվելու պատճառով: Այսպես, օրինակ՝ հիշատակենք **Արևելք** կոչված երկրների անունները: **Տապոնացիներն** իրենց երկիրն անվանում են **Նիպպոն**, սակայն ավելի մեծ տարածուն գտել է **Տապոնիա** անվանումը, որ չիմարեն է: Չիմարենում այն հիշում է **ժապլոն ժա**՝ «արև» և **պոն** «ելք» բառերից, քանի որ **Տապոնիան** Չիմաստանից արևելք է ընկած: Այլ ժողովուրդներ

ունեն **Ջեպան**, **Յեպոն**, **Տապոնիա**, **Յապոնիա**՝ ժ չունենալու պատճառով: Ներկայումս Իրանի արևելյան նահանգներից է **խորասանը**, որ պարսիկների կողմից տրված անվանում է և կազմված է **խոր**՝ «արև» և **ասան**՝ «ելնող» բառերից: Հունաստանից արևելք ընկած **Փոքր Ասիա** թերակղզին հայտնի է նաև **Անատոլիա** անվանմամբ, որը պարզապես հույների կողմից տրված մի անուն է և նշանակում է **արևելք** (ներկայումս այնտեղ հաստատված թուրքերը ձգտում են **Անատոլիան** տրուգաբանել)՝ որպես թուրքերեն բառ՝ նեճգափոխելով նրա բաղադրիչները՝ որպես **անա**՝ «մայր», **ոլլու**՝ «լի» եզրերից կազմված մի բառ, որն ակնհայտ անհեթեթուն է (ո՞ր երկիրը լեցուն չէ մայրերով):

Գերմանիայից բացի գոյություն ունի գերմանացիներով բնակեցված ևս մի պետություն՝ **Ավստրիան**, որի հիմքում դարձյալ **oster**՝ «արևելյան» կամ **ost**՝ «արևելք» և **ich**՝ «պետություն, թագավորություն» բառերն են ընկած: Նման անուն այս տարածատացավ **Գերմանիայի** նկատմամբ **արևելք** կամ **հարավ-արևելք** ընկած լինելու պատճառով. գերմանացիք այն անվանում էին **Osterrich** կամ **Osterrreich**, որը ուշ շրջանի լատիներենով դարձավ **Austria**՝ Աուստրիա կամ Ավստրիա:

Ասան կամ **Աավանտի երկրներ** են անվանում Միջերկրական ծովի արևելյան լեռների գտնվող կամ նրանց հարակից մի շարք երկրներ, որպիսիք են **Սիրիան**, **Լիանան**, **Պաղեստինը**, **Իսրայելը**, **Թուրքիան** և **Եգիպտոսը** լայն առումով, իսկ նեղ առումով՝ **Սիրիան** ու **Լիբանանը**: Ծագում է **Ֆրանսերենի** **levant**, իտալերեն **levante**՝ «արևելք» բառից: Այս երկրներն ունեն նաև **Մերձավոր Արևելք** անվանումը՝ ի տարբություն մյուս արևելյան երկրների, որոնք այս երկրների համեմատությամբ ավելի հեռու են գտնվում **Եվրոպայից**:

Խոսքը տանք տրամաբանությամբ: Եթե կարելի է հարևան երկրին տալ **Արևելյան** ու **Արևելք** անունը՝ մեզանից արևելք ընկած լինելու պատճառով, ապա ինչո՞ւ չպիտի կոչել **Արևմտյան** կամ **Արևմուտք** մեզանից արևմուտք գտնվելու և **Հարավային** ու **Հյուսիսային**՝ մեզանից հարավ կամ հյուսիս գտնվելու պատճառով: Եվ ասի

այսպես է ծնունդ առել **Մարդիքի երկրներ** կամ **Մարդիք** անվանումը՝ որպես **Աֆրիկայի** արևմուտքում գտնվող երկրների անուն, որ տրվել է արաբների կողմից՝ Արաբական խալիֆայության ծայր արևմուտքում գտնվելու պատճառով: Այն ծագում է արաբերենի **դարբ**՝ «արևմուտք», որից՝ **Մարդիք**՝ «արևմտյան» ձևից:

Հողագնդի հիմնգեորդ մայրցամաքի անվանումը՝ **Ավստրալիա**, նոր է մոտ երկու հարյուր տարվա պատմությամբ: Այն ծագում է լատիներենի **australis**՝ «հարավային» բառից: Բայց այս մայրցամաքը հայտնագործման օրից այդպես չի անվանվել: 1606 թվականին հոլանդացի ծովագնացներ Վ. Յանզոնը և ապա՝ **L. Տորեսը** իրենց հայրենիքի պատվին անվանեցին այն **Նոր Հոլանդիա**: Սակայն 1770թ-ին անգլիացի **Ջ. Կուկը**, հայտնագործելով այս ցամաքի արևելյան ափերը, համարեց այն բրիտանական: Հետագա տասնամյակներում այստեղ ամրապնդվեց անգլիական գաղութատիրությունը: Բնակամաբար, մայրցամաքի նոր տերերը նոր անվանում տվեցին այս երկրին: Եվ քանի որ այս երկիրը հողագնդի հարավային մասում էր գտնվում, ուստի և անվանվեց **Ավստրալիա**՝ «հարավային»:

Իսկ ինչպե՞ս առաջացավ հողագնդի վեցերորդ՝ վերջին մայրցամաքի անվանումը՝ **Անտարկտիդա**—ն: Որպեսզի հասկանանք այս բառի նշանակությունը, պիտի նայի հյուսիս Տայենք: Հյուսիսը ընդունված է անվանել **Արկտիդա**, այս հասկացության մեջ ընդգրկվում է Հյուսիսային սառուցյալ օվկիանոսն իր կղզիներով, ծովերով: Իսկ ի՞նչ է նշանակում **Արկտիկա**: Այն ծագում է հունարեն **arktos**՝ «արջ» բառից, որով նկատի է առնվել ծայրագույն հյուսիսային տարածությունների արջերով բնակված լինելու հանգամանքը, ուստի **Արկտիկա**—ն ընկածում է որպես **Արջերի երկիր**: Իսկ **Անտարկտիդա** նոր բառը կազմվել է հունարենի **անտի**՝ «հակա, հակառակ» բառի հավելումով, որով նկատի է առնվել հարավային մայրցամաքի **հյուսիսի**՝ **Արկտիկայի** նկատմամբ «հակառակ» կողմում գտնվելու հանգամանքը, այսինքն **Անտարկտիդա**՝ «արջերի երկրի հակառակը» կամ **Հակաարջաերկիր**, **Հակադիր արջերի երկիր**, ինչպես ընդունված է անվանել **Անտարկտիդան**՝ իրեն հարող կղզիներով:

11. ԳՈՒՅՆԵՐԻՅ ՍՏԵՂԾՎԱԾ ՏԵՂԱՆՈՒՆԵՐ. ԵՐԿՐՆԵՐ, ԳԵՏԵՐ, ԾՈՎԵՐ, ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐ

Մարդուն շրջապատող առարկաները տարբեր գույներ ունեն: Ուստի, մարդուն հատուկ է շրջապատող առարկաների գույների համեմատությունը: Երբ խոսում է այս կամ այն առարկայի մասին, նշում է. «Այս ջուրը սև է, ծերը՝ կաթնագույն, այս հողը՝ ջեկ է, այն ողկույզները՝ ոսկեգույն, այս սարը կապույտ է, այն՝ սպիտակ»: Եվ ասի ծովում են տեղանունները՝ **Սևուր**, **Կաթնադուր**, **Շիկակաթու**, **Ոսկեպազ**, **Կապուտասար**, **Սպիտակ** և այլն: Եթե այսօր թարգմանենք աշխարհի քարտեզի վրա եղած տեղանունները, ապա հազարավորներն իրենց մեջ կունենային հիշյալ գույների անունները և էլ ինչ-որ ածականներ՝ **հին**, **նոր**, **մեծ**, **փոքր**, **վերին**, **ներքին**, **բարձր**, **ցածր** և այլն:

Ականք գետերից: Արգենտինայում գետերից մեկը ստացել է **Ռիո Նեգրո** անունը, որը նշանակում է **Սև գետ**, **Սիզեր** գետ կա նաև Աֆրիկայում. այս երկու անունների մեջ **նիզեր**՝ «սև» ածականն է: Չիմաստանում **Յանցզի** գետ կա, որ թարգմանաբար նշանակում է «կապույտ»: **Կապույտ** է կոչվում նաև Նեղոսի վտակներից մեկը: Նույն Չիմաստանում երկրորդ մեծ գետը անվանվել է **Խուանիս**, որ նշանակում է «դեղին»: Միջին Ասիա-



յուն կա Սարը Սու գետը, որը նույնպես բարգնանվում է **Ղեղին ջուր կամ Ենկ ջուր**։ Փոքր Ասիայում պատմական **Գայլ** գետի վտակներից մեկն անվանվում է ներկայումս **Եշիլ Ըրմաք**՝ Կանաչ գետ, իսկ պատմական **Հալիս** գետը՝ **Քրզըլ Ըրմաք**՝ Կարմիր գետ։ Սևա և բուրդ հիմնական գույները, սակայն սա դեռ ամենը չէ։ Արգենտինայում ունենք **Լա Պլատա** գետամուն, որ նշանակում է «արծաթ կամ արծաթյա», հնարավոր է, որ **Լեմայի** վտակներից մեկը, որ կոչվում է **Ալտան**, ծագում է բուրբախան **ալթուն** «ոսկի» բառից։

Հապա ծովերը։ Ծովերը նույնպես ետ չեն մնում գետերից, և բուրդ հիմնական գույների ամուճով ծովեր կան մեր մոլորակի տարբեր մասերում. **Սպիտակ**՝ Կոլա թերակղզուց հարավ, **Սև**՝ ՆԱՅՄ–ի, Թուրքիայի, Ռումինիայի ու Բուլղարիայի միջև, **Կարմիր**՝ Արաբական թերակղզու և Աֆրիկայի միջև, **Ղեղին**՝ Չինաստանի և Կորեայի միջև և այլն։ Չկա **Գալուստը**, որովհետև ծովն ինքնին ենթադրվում է կապույտ գույնով և ոչ՝ այլ։ Եճարտության դեմ չմեղանջելու համար ասենք, որ Սև ծովը հույների մոտ ինուճ կոչվել է **Պոնտոս Աքսաֆոս**՝ «խաժ, կապտականաչ, մուգ գորշ», որ հայերենում գրվել է **Եվքսոստոս**՝ Պոնտոս։ Խորանալով պատմության մեջ՝ գտնում ենք բազմաթիվ երկրանուններ, որոնց հիմքում նույնպես գույներն են։ Սևա Աֆրիկա աշխարհամասի **Մավրիտանիա** երկրի անունը, ծագում է հունարենի *mavros*՝ «սև» և տեղանվանակերտ –*tania* ածանցից, այսինքն՝ **Մավրիտանիա**՝ Սևերի երկիր։ Աֆրիկայի **Նիգերիա** երկրի անվանման հիմքում ընկած է լատիներեն *negro*՝ «սև» բառը, այսինքն՝ **Նիգերիա** (իսկ տեղանվանակերտ ածանց է)՝ **Սևերի երկիր**, ինքն նույն արձատից էլ առաջացել է **Նեգր**՝ «սև» բառը։

Եգիպտոսից հարավ ընկած երկիրը արաբների կողմից կոչվեց **Սուդան**, որն արաբերեն բառ է և նշանակում է «սևեր»։ Գենց մաշկի թխության, սևության պատճառով էլ ստացել էր **Եթովպիա** երկիրը իր անունը, որն ուներ նաև **Հաբեշտան** անվանումը։ **Եթովպիա**–ն ծագում է հունարենի *Այթիպիա*, *Այթրոպա*՝ «այրված դեմքերով մարդկանց երկիր» արտասայությունից։ Կարծյալ հունարենի *melas*՝ «սև», «թափափա» և *nesos*՝ «կղզի» բառերից է կազմվել սևամորթ բնակիչներ ունեցող խաղաղովկիանոսյան կղզիների անունը, որ կոչում ենք **Սելանեզիա** կամ **Սելանեզյան կղզիներ**։

Չպիտի կարծել, որ միայն սև գույնն է այսպես միատեսակ իշխում ժողովուրդների ու երկրների անուններում։ Սևա և սպիտակը։ **Բելոռուսիա**՝ **Բելոօրսկ** անվան հիմքում ուսերեն **белый**՝ «սպիտակ» բառն է ընկած։ Որ տրվել է ուսներից ավելի սպիտակ մագեր և մաշկ ունեցող ցեղերի տարածքին որպես **սպիտակ ուսների երկիր** հասկացություն։

Գույներից առաջացած ժողովուրդների անունների թվին է պատկանում նաև **ռուս** ժողովրդի անունը, որից էլ՝ երկրի անունը՝ **Ռուսիա**, հայերեն՝ **Ռուսաստան**։ Այս ժողովրդի մասին առաջին գրավոր հիշատակությունը 10–րդ դարից է միայն և ծագում է հին պավոնական **Русь** կամ **русьи**՝ «շել, շիկաներ» բառից։ **Русь** բառի տակ հասկանում էին և ժողովրդին, և նրա զբաղեցրած տարածքը։ Եճարտության դեմ չմեղանջելու համար նշենք, որ նախքան ռուսներին այսպես անվանելը արաբական և լատինական աղբյուրները նորմաններին ևս այսպես են քնուրպագել։ Ռուսների եր-

կիրը ավելի ուշ՝ 1517 թվականից, սկսում են անվանել նաև **Россия**։ Լատինական աղբյուրներում կա նաև Rhuithenia անվանումը։ Աշխարհի ամենամեծ կղզին՝ **Գրենլանդիան**, իր անունը ստացել է նորմաններին գրեն «կանաչ» և լանդ՝ «երկիր» բառերից և –իա տեղանվանակերտ ածանցից։ **Լոնդոնի Գրինվիչ** բաղամասի անվան մեջ գատվում են գրին՝ «կանաչ» և րիչ՝ «ծոց» բառերը։ Գրենլանդիայի **Գրյունվալդ** քաղաքի անվան մեջ գտնում ենք գրյուն «կանաչ» և վալդ՝ «անտառ» բառերը և այլն, և այլն։

12. «ԵՐԱԿԱՆԵՐԻ» ԵՐԿԻՐԸ

Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող երկու մեծ գետերը՝ **Եփրատը և Դիլպատը** կամ **Տիգրիսը**, ընթանալով հարավ, թափվում են **Պարսից ծոց**։ Նրանք բարեբեր հովիտներում շատ հին ժամանակներից է մարդը կանգ առել, այստեղ էլ բուսահավաքչական զբաղմունքից անցնելու ամենաշակույթային, որի համար զույգ գետերը ստեղծել էին բուրդ անհրաժեշտ պայմանները։ Այս զույգ գետերի միջև ընկած տարածքում էլ ճակարկվել են առաջին պետությունները։ Դրանց ամենահինը **Շումերն** է, ապա՝ **Աքքադը**, **Աշուրը** (կամ հայկական վականություն՝ **Ասորեստանը**), **Բաբելոնը**։ Գույներն այս տարածքը կոչում էին **Mesopotamia**, հայերը՝ **Նիգեզիա**։ Եվ քանի որ **Միջագետք** ասելով հասկանում էին հիմնականում գետերի հարթավայրային մասը, ապա այդ անվան ընդգրկած տարածքից Հայաստանը դուրս էր մնում։ Բայց և այնպես, Հայաստանն էլ ուներ իր հարավում մի քիչ հարթավայրային **Միջագետք**, որն ընդունված է կոչել **Միջագետք Հայոց**՝ ի տարբերություն **Միջագետք Ասորդոց**։



Միջին դարերում, խալիֆայության ժամանակ, Միջագետքը սկսեցին անվանել **Իրադ, Իրագ, Էրաք, Իրաք** (հայկական աղբյուրներում գտնում ենք նաև **երադ, Ըրագ, Ըրաք, Էրադ, Իրակ** մեծերը) կամ պարզապես՝ **Աշխարի Իրադաց** կամ **Իրադյան Տուն**, Կիրակոս Կանծակեցու մոտ հանդիպում է նաև **Աշխարի Էրադ** ձևը։ Որտեղի՞ց հայտնվեց այս հորջորջումը։

Լեզվաբանները գտնում են, որ **Իրաք**–ը արդյունք է իրանական *rak*՝ երակ բառի արաբական արտասանության։ Իսկ ինչո՞ւ **երակ** (իմիջիպալոց, հայերեն երակ բառն էլ է ծագում իրանական *rak*–ից)։ Ինչպես հայտնի է, ոռոգման ցանցը ակապակյան չափերի էր հասել Միջագետքում, և ենթադրում են, որ բազմաթիվ ջրանցքների պատճառով էլ Միջագետքը սկսեց կոչվել **երակների երկիր**՝ **Իրաք**։ Որոշ լեզվաբաններ կարծում են, որ Իրաքը կարող էր ծագել արաբերենի *araqa*՝ «քրտինք» բառից՝ ամառն շոգերին մեծ չափերի գուրջիացումները նկատի ունենալով (իմիջիպալոց **արաղ**՝ «օրի») բառը նույնպես ծագում է արաբերեն *araqa*՝ «քրտինք» բառից, քանի որ օրին ստացվում էր գուրջիացմամբ)։ Ոմանք էլ կարծում են, որ Իրաքը ծագում է պարսկերենի «ցածր» բառից՝ Պարսկաստանի նկատմամբ ցածր գտնվելու պատճառով։

3336



13. ԱՆՎԱՅԻՆԵՒԻԷ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԻ ՎԵՑՅԱԿ ԱՆՈՒՆԵՐ

Մեր թվարկության 5–10–րդ դարերն ընկած ժամանակամիջոցում Զնդկաստանի հյուսիս–արևմուտքից վաչկատուն ժողովուրդներից մեկը սկսեց արտագաղթը անցնելով հարևան երկրներ: Աստիճանաբար հարևան երկրներից էլ նրանց երթը շարունակվեց մինչև Եվրոպայի ծայրը՝ Իսպանիա և Պորտուգալիա, ուր արդեն 10–րդ դարում հիշատակվում են նրանց: Երանց խոսում են հնդկերենի մի բարբառով, սակայն տարբեր երկրներում՝ տարբեր բառապաշարով: Այլևայլ լեզուների հետ շփվելով՝ այս ժողովուրդն աստիճանաբար մոռացել է իր մայրենի լեզվի բառերից շատերը՝ փոխարինելով դրանք հանգրվանած կամ ապաստան գտած երկրի լեզվի բառերով: Այս ժողովուրդն իրեն անվանում է **ռոմ**, լո՞մ՝ «մարդ», սակայն մյուս ժողովուրդներն, անտեսելով այս, անվանում են նրանց յուրովի. նույն Զնդկաստանում մյուս ժողովուրդները նրանց անվանում են **լիխարներ**, **նատեր**, **Միջին Ասիայում՝ լյուլիներ**, **մազանգներ**, **ջուլիներ**, Իրանում՝ **դարաչիներ**, Թուրքիայում՝ **չինգեններ**, մյուսրուբներ (հնմ. հայերենի **մթրուք–ը**), Ռուսաստանում **պարան–ներ**, Ֆրանսիայում, Անգլիայում՝ **gipsy՝ ջիպսիներ**, իսկ Դայաստանում՝ **գնչուներ** կամ **բոշաներ** (ինիջիալոց, հնարավոր է, որ բոշաները և գնչուները տարբեր ժողովուրդներ են, որի մասին տես **բոշա** բառի մասին գրույցում): Իսկ ինչպե՞ս ծնվեց **գնչու–ն**:

Տարբացին, խոսելով թվատ մարդկանց մասին, ասում է. «Ի **գնչուտ** և ի **լեզուատ** արանց» (Գնչուտ և լեզվից պակաս մարդկանց մեջ): «Դայաստանուրքում» նույնպես գտնում ենք նման բացատրություն. «Ի **լեզուատ** և ի **գնչուտ** և ի **կակազուտ մարդկանե**» (Լեզվից պակաս, գնչուտ և կակազող մարդկանցից), որոնց հետ գրեթե նույնն էին Ասգիստրոսի, Երզնկացու, Վարդան Բարձրաբերդու մեկնաբանություններում գործածվող **գնչու–ի** «կակազ, թվատ, թորով» բացատրությունները: Գայերենն ուներ **գնչել**՝ «խոնկորի, խոզի ճուտի ծայն հանել» բառը, որը գործածվում էր նաև «կակազել, թվատի պես խոսել, մաքուր չարտասանել, աղավաղել» նշանակությամբ: Այն **չ–մչ–ել, փ–մչ–ել, խ–մչ–ել, ք–մչ–ել, կ–մչ–ել, կա–մչ–ել** բնածայնակների համարանունայնքը կազմված **բնածայնական** ծագում ունեցող բառերից է: Ուրեմն, հայերը **գնչու** կոչեցին հայերենն աղավաղող, մաքուր չխոսող բախառական այս ժողովուրդին, որին երբեմն նույնացնում են հայ բոշաների հետ, որոնց թերևս ավելի հին պատմություն ունեն, քան **ցիգանները**: Ի դեպ, հայերը **գնչու–ի** հետ հավասար օգտագործում են նաև **ցիգան–ը**, ավելին, կազմել են նաև **ցիգանություն**՝ «կծծիություն, ժլատություն, գծուծություն», **ցիգանամալ**՝ «գծուծամալ, կծծիամալ, ժլատամալ» ձևերը:

14. ԲՈՇԱ

18–րդ դարի պատմիչ Աբրահամ Երևանցին նկարագրում է մի որվազ Երևանի Կոնդ թողամասի քրիստոնյա բոշաների կազմակերպած ինքնապաշտպանությունից՝ ընդդեմ օսմանուրդների: Չաջարիա Սարկավազի պատմության մեջ դարձյալ հանդիպում ենք «Ե. նոքա կալան այր մի ազգաւ քօշայ» արտահայտությանը: Բազմաթիվ ասույթներ և դարձվածքներ կան **բոշաներին** բնութագրող, ինչպես՝ «բոշան փաշա չի դառնա», «բոշա է, մարդ չի», «բոշայություն մի անի», «մաղ ծախող բոշա», «ցիգան բոշա» և այլն:

Հաճախ Դայաստանի տարածքում ապրող և իրենց մայրենի լեզվից զատ նաև

հայերեն խոսող այս ժողովուրդին նույնացնում են Զնդկաստանից դուրս եկած բախառական **գնչուների** հետ (ցիգան, չինգեն, ջիպսի), որը ճիշտ չէ: Թեև նրանց լեզվում կան մի շարք բառեր, որոնք հիշեցնում են հնդեվրոպական արմատներ, որով հիմքեր կան կապելու նրանց Զնդկաստանից դուրս եկած գնչուների հետ, սակայն, ըստ երևույթին, ոչ թե այդ ժողովուրդի, այլ մեկ ուրիշ՝ ավելի վաղ հայերենից կորցրած ժողովուրդի հատվածն են նրանք: **Ամուսին** հասկացության համար նրանք գործածում են **մանու** բառը, որը հավանաբար նույնն է հնդեվրոպական լեզուների **man**, անգլերենում **մեմ**՝ «մարդ» բառի հետ:

Իսկ որտեղի՞ց կարող է առաջանալ **բոշա** անվանումը: Մեզ թվում է, դա կարող էր սեմական լեզուներից անցնել հայերենին, օրինակ՝ աքքադերենում՝ **բիս**, ասորերենում՝ **բաս**՝ «հոտած». սա շատ սովորական երևույթ է, երբ հարևան ժողովուրդները արհամարհական մակդիրով են կոչում մշակույթով ավելի ցածր գտնվող հարևաններից:

Բոշաների մեծ մասը իր մայրենի լեզուն համարում է հայերենը, իսկ որպես ծածկալեզու օգտագործում է հին մայրենի լեզուն: Բոշաների մեծ մասը կորցրել է իր լեզուն և ծուլվել հայ ժողովուրդին:

15. ՀԱԳԱՐԱՑԻ

Ռ՛վ չի հիշում հայ ժողովուրդի մեծ զավակի՝ Գևորգ Մարզպետունու երդման խոսքերը. «Մինչև վերջին հազարացին չհալածոմ, չեմ վերադառնա իմ հարազատների մոտ»: Բայց ինչո՞ւ հանկարծ **հազարացի**, քանի որ հայերը կոչվում էին **արաբների** դեմ: Ինչպես ասվել է, **արաբներին** հայերը անվանում էին **տաճիկներ** ու հանկարծ նաև **հազարացիներ**: Այո: Աստվածաշնչի ավանդության համաձայն՝ հայր Աբրահամի կինը՝ խեթացի Սառան, ամուլ էր: Նա ուներ մի աղախին՝ Ազար կամ Զազար անունով, որը ազգությամբ եգիպտացի էր: Սառան թույլատրեց ամուսնուհի Աբրահամին, մերժեմալ **Հազարին**, որից էլ **Հազարը** զավակ ունեցավ: Այս արարքն էլ ստորացուցիչ համբավ տարածեց **Հազարի** և նրա զավակից առաջացած սերունդների մասին: Աշխարհի մյուս ժողովուրդները արաբներին համարեցին **հազարացիներ**՝ աղախին Հազարից սերված լինելու պատճառով: Այստեղից էլ՝ ռուսերենում տարածված **арапы** (ազարկա)՝ «վատահամբավ, բոզ» արտահայտությունը: Հազարից ծնված զավակին էլ Եհովայի պահանջով անվանեցին **Իսմայել**՝ «Աստված անու է»:

16. ԻՍՄԱՅԵԼԻ ՍԵՐՈՒՆԴ ԵՎ ԱՂԱԽՆԱԿԵՒՆ

Երբ հղիացած Հազարը Սառայի վրեժխնդրությունից փախչում էր անապատով, նրան հայտնվեց **Եհովայի** իրշտակը և հորդորեց վերադառնալ տերերի մոտ: Միաժամանակ նա գզուշացրեց երեխայի արու զավակ լինելը: Նա կազմակերպեց որդուն անվանել **Իսմայել**՝ «Աստված լսում է»: Ուրեմն, քանի որ Հազարն իր որդուն տվեց **Իսմայել** անունը, այս պատճառով արաբներին սկսեցին նաև **Իսմայելի սերունդ**, **իսմայելացի** կոչել: Անվանում են նաև **Իսմայելի ազգ**, **Իսմայելի ցեղ**, **Իսմայելի սերունդ**, **իսմայելազան**, **իսմայելական** և այլն: Հայ պատմիչներն ու ժամանակագիրները գործածում են նաև **աղախնածին** անվանարկիչ բառը՝ նկատի ունենալով արաբների՝ աղախին Հազարից ծագելու հանգամանքը: Օրինակ՝ Սամուել Անեցու շարունակողը՝ Մտեփանոս Եպիսկոպոսը, գրում է. «Աղախնածին որդոցն Հազարու», որով նկատի ունի արաբներին:

17. ՍԱՐԱԿԻՆՈՍՆԵՐ, ՍԱՐԱՑԻՆՆԵՐ

Արաբներին բացի արաբ, տաճիկ, հազարացի, Իսմայելի ազգ հորջորջումներից, տրվում են նաև **սարակինոս** կամ **սարացին** անվանումները: Այս անվանումները ծագեցին հարևան երբայերենի ու ասորերենի **սարակ**՝ «գող» բառից, արաբների՝ ավագակարարո, թալանչի, ասպատակ ժողովուրդ լինելու պատճառով: Հռոմեացիները և հույները իրենց հնչմամբ դարձրին **սարակ**–ը **սարակինոս**, իսկ լատիներեն օ–ն բառի որ հնչում էր նաև **ց**, այստեղից էլ **սարացին** հնչապատկերը (համեմատիր **կիկեբոն** և **ցիցերոն**, **կրկես** և **ցիրկ**):

18. ԵՐԿԻՐ, ՈՐ ԽՈՍԱՑԱՅՎԱԾ Է... ԻՆՉՊԵՐՍ ԱՆՎԱՆԵԼ

Աստվածաշնչից հայտնի է, որ կա մի երկիր **Ավետյաց** անվամբ, որ, զրաբարից թարգմանելով, կնշանակի «խոստացված»: Իսկ ինչո՞ւ: **Ավետյաց երկիր** սկսեցին կոչել մինչև Եփրատ գետն ընկած տարածքը, որ խոստացավ պարզեղև Աստված Աբրահամի սերունդներին: Ծննդոց գրքում բազմիցս հիշատակվում է այս խոստացված երկիրը, ինչպես նաև երբայեցիների ուղղված թրջում: «Հավատովք պանդխտեցեալ երկիրն **աւետեաց**» (Հավատով պանդխտեց խոստացված երկիրը): Ուրեմն, **աւետ** արմատը «խոսք» է նշանակում, այլապես խոստացված երկիրը չէր թարգմանվի **ավետեաց**:

Հետագայում **աւետ** արմատից հայերենում նոր իմաստներ կազմվեցին, որպիսիք են **աւետիք** կամ **աւետիս**՝ «բարի լուր, ուրախալի լուր», **Աւետարան**՝ «բարի լուր ավետող գիրք», **աւետաբեր**՝ «բարի, ուրախալի լուր բերող» և այլն: Քանի որ Եհովան էր երջանկություն խոստացել իրենաներին **Ավետյաց** երկրում, ուստի բոլոր լեզուներում այդ արտահայտությունը ստացավ «բաղձալի, ցանկալի, երջանիկ» նշանակությունը: Օրինակ՝ Արևմտահայաստանը հայերիս համար մի **ավետյաց** երկիր է մնում:

Ավետ բառը հայերենին է անցել աքքադերենից, ուր հնչում էր այն **awet** ձևով, օրինակ՝ **awet šarim** նշանակում է «թագավորի խոսք», ավելի ուշ շրջանում բարելացիները սկսեցին հնչել այդ բառը **ամատ** և **արատ**, քանի որ հայերենում աքքադերենի ավելի հին արտասանությամբ է բառս փոխ առնվել, ուստի սա այն ապացույցներից մեկն է, որ հայերը անմիջական շփման մեջ էին գտնվում աքքադացիների հետ՝ դեռևս երկրորդ հազարամյակից առաջ (մ.թ.ա.):

19. ԵՐԿԻՐ, ՈՐ ԶԿԱ ՈՉ ՄԻ ՏԵՂ

Երջանիկ երկրների մասին մարդիկ շատ են երազել: Աշխարհի բոլոր ժողովուրդներն էլ ունեն գրույցներ և հեքիաթներ երջանիկ երկրի մասին: Ժամանակին ժողովուրդների բառապաշարում տարածվեց **ուտոպիա** բառը, որը, կարելի է ասել, թունաս Մորի «զավակն» էր: Նա իր գրքում նկարագրում է մի երկիր, որը գոյություն չունի, ապագայի այդ երկիրը և նրա հասարակարգը նա կոչեց **Ուտոպիա**, որ լատիներեն ժխտական ու մասնիկից և **ուտոպոս**՝ «երկիր» բառերից է կազմված (նաև տեղանվանակերտ –իա ածանցից): **Ուտոպիան** այլաբանորեն գործածում ենք նաև «ցնորք, երազանք» նշանակություններով, օրինակ՝ «Հավասարությունն ու ազատությունը **ուտոպիա** են դարձրել»:

20. ԷԼԴՈՐԱՂՈՒ ԱՆԳՈ ՈՍԿԵ ԵՐԿԻՐ

Էլդորադո երկրի մասին առասպելը լայն տարածում ստացավ հատկապես Ամերիկայի հայտնագործումից հետո: **Էլդորադոն** ենթադրվում է ինչ–որ տեղ Ամերիկայում, ուր անբավ զանձեր, ոսկի և հարստություն կար: Այս առասպելական երկրի ամուրը հետագայում գրականության մեջ սկսեց օգտագործվել որպես անբավ հարստության հոմանիչ: Այնուամենայնիվ, այն երկիրը, որը կոչվում է **Նուրիա**, եղել է ոսկի արտահանող մի երկիր, որի պատճառով է իր ամուրը ստացել:

21. ՄԻՆՉԵՎ ԶԱՆԻՐ ԱՆՈՒՆ ԿԱՐՈՂ Է ԿՐԵԼ ՄԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ... «ՎԱԶՈՂ» ԿԱՄ, ԵԹԵ ԿՈՒՋԵԹ, «ՀՈՍՈՂ» ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Բազմաթիվ ժողովուրդների անվանումներ այսօր արդյունք են հարևանների տված բնութագրման: Նման հարևանից հարևանիս տրված անվանումներից է նաև **տաճիկ**–ը, որից էլ **Տաճկաստան**՝ «տաճիկների երկիր» երկրանունը: Նախ **տաճիկ** բառի նշանակության մասին զրաբարում: Այն բազմիցս օգտագործվում է «վազկան, արագաշարժ, սուրացող» նշանակություններով: Օրինակ՝ «տաճիկ ուղտ», **երկվարս տաճիկ**, «տաճիկ ծի» արտահայտություններն օգտագործվում են նաև որպես համազոր նշանակություններ «արաբական ծի», «արագազանց ուղտ» արտահայտություններին: Այս բառը ծագում է պախլաբերենի **tax** «վազել, հոսել» արմատից, որի զուգահեռն ենք գտնում ռուսերենում (**течь**) ձևով, գեոդերենում **taxait**: Պարսկերենում **asp** i **taz** (**tazi**) նշանակում էր «արաբական ծի»: Պախլավները, պարսիկները հենց այդպես էլ **tazi** (հայերեն **տաճիկ**) սկսեցին անվանել արաբներին՝ նրանց արագավազ, հարահոս, քոչվորական կյանքի համար: Հիշեցնենք, որ թագի որսորդական շան անունն էլ հենց «վազող» է նշանակում: Հայ հին մատենագրության մեջ և՛ արաբն էր կոչվում **տաճիկ**, և՛ նրանց զբաղեցրած երկիրը՝ **Տաճիկ**, **Սահմանս տաճկազ**:

Երբ արաբներն ընդունեցին իսլամական կրոնը, **տաճիկ** բառն սկսեց ձեռք բերել նոր իմաստ՝ «մահմեդական», որից էլ **տաճկաբան**՝ «ընդունել մահմեդական կրոն», **տաճկացնել**՝ «իսլամացնել, հավատափոխ անել, հավատից հանել»: Այսպես էր վիճակը մինչև 10–րդ դարը: 11–րդ դարում պատմության երկնակամարում հայտնվեցին «արագավազ» այլ ցեղեր՝ սելջուկներ, թաթարներ, մոնղոլներ, թուրքեր, որոնց նույնպես մեր պատմիչներն սկսեցին անվանել **տաճիկներ**, քանի որ սրանք ևս ընդունել էին մահմեդականություն: Այս **տաճիկների** հետ չփոթելու համար արաբներին սկսեցին անվանել **հազարացիներ** և **արաբներ**... Իսկ մախիկն՝ **տաճիկ** բառը ստացավ **թուրք**, իսկ նրանց երկիրը՝ **Տաճկաստան** **Թուրքիա** անունը: Հայ իրականության մեջ **տաճիկ**–



րեն ոչ թե «արաբերեն», այլ «թուրքերեն» նշանակությամբ էր օգտագործվում: Թուրքական անգրոթյունների պատճառով **տաճիկ** բառը ձեռք է բերում նաև «անգուք, սաղիստ, մարդասպան, ջարդարար» նշանակությունները: «ՇՐ, մարդ չե՛ս, տաճի՛կ ես»,— ասում են անգուք, վատ արարք գործողին: Սկսեցին օգտագործել նաև **Տաճկահայաստան** «Թուրքիայում գտնվող Հայաստան», **տաճկահայ բարբառներ**, **տաճկախոս** և այլ արտահայտություններ: Եվ այսպես, **տաճիկ** «արագավազ, արաբ» արտահայտությունը կորցրեց իր նախկին իմաստը՝ ձեռք բերելով ճորդ պատմության մեջ և աշխարհի ճարտեզի վրա տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների պատճառով:

22. ԱՄԱԶՈՆՈՒԿԻՆԵՐԸ՝ «ՄԻԱՍՏԻՆԵՆԵՐՐ», ԹԵ՞ «ՈՒԺԵՂ ՍԱՅՐԵՐ»

Չին Հունաստանի պատմությունից և հույն հեղինակների երկերից աշխարհը ժառանգել է **ամազոն** կամ **ամազոնուհի** բառերը: «Ամազոնը» բառարանները բարգձմանում են monomaxson՝ «միաստիճ», amaxsos՝ «անստիճ»: Առասպելական քառանյակ այս ցեղը որպես թե բնակվելիս է եղել Հարավային Ռուսաստանի տափաստաններից մինչև Կասպգոլվիկա ընկած տարածքներում: Ամազոնները հայտնի են եղել իրենց խիզախությամբ և ռազմատենչությամբ: Պատճում են, որ նրանք մեկ ստիճը (աջը) կտրում էին նետ արձակելու հարմարության համար (կամ խարանձում էին): Որպեսզի իրենց իշխանությունը տղամարդկանց չփոխանցվի, նրանք սերունդն ապահովելուց հետո ոչնչացնում էին տղամարդկանց կամ զավակներ էին ծնում պատահական հանդիպումներից: Պատճում են, որ Տրոյական պատերազմին մասնակցում էին նաև **ամազոնները**: Եվսերիոսի «Քրոնիկոնի» հայերեն թարգմանության մեջ հանդիպում ենք նաև **ամոզինք**, **համազունք** գրչություններին: «Տոնակատարանում» **համազոնների** երկիրը տեղավորված է **Սկյութիայի** և **Գերմանիայի** միջև: «Սկյութա կողմն հիւսիսոյ է մինչ ի Գերման և ի Համազունս, որ կոչի Կանանց աշխարհ»:

Ամազոն բառի ծագման վերաբերյալ կա նաև հետևյալ տեսակետը, որը թերևս ավելի է հիմնավորված: Շուներական արժանագրություններում ama նշանակում է «մայր», azzu՝ «հզոր, մեծ», հետևաբար amazzu՝ «հզոր մայրեր»:

Սեր օրերում ձի հեծնելու կանացի շորն անվանում են **ամազոն**, **ամազոնկա**: Երանց պատվին է կոչված նաև Հարավային Ամերիկայի ամենամեծ գետը՝ **Ամազոնը**:

23. ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՈՒԷ՝ ԱՍՏՈՒ ՊԱՏԿԵՐՈՎ ԿԱՍ ԻՆՉՈ՞՞ ԶԱԿՈՎԲԸ ԴԱՐՁԱԿ ԻՍՐԱՅԷԼ

Մենք արդեն շեշտել ենք այն իրողությունը, որ մի ժողովուրդ կամ ազգ կարող է ունենալ մեկից ավելի անուններ, ինչպես արաբներին էր. ահա և հրեաներին: Ինչպես շատ ժողովուրդներ, այնպես էլ հրեաները կոչվում էին իրենց նախնիների անվամբ: Եվ ահա Իսրայելի ժողովուրդը իր նախնիներից մեկի **Յակոբի** կամ **Յակով** իր անվամբ կոչվում էր **Յակոբի ազգ**, որ թարգմանաբար «կրունկ» է նշանակում, իսկ փոխաբերական իմաստով՝ «խարող», քանի որ եբրայերենում **խարել** նշանակում է «մեկի զարշապարը բռնել, կրունկը բռնել»: Իհարկե, նման անուն կրելը այնքան էլ պատվավոր չէր, և թերևս այս պատճառով նույն **Ծննդոց** գրքում գտնում ենք այն պատասխանը, թե ինչու եբրայեցիները **Յակոբ**–ի փոխարեն պիտի **Իսրայել** կոչվեին: Հա-

կորը, բաժանվելով իր եղբորից՝ **Եսալից**, իր գերդաստանը ուղարկում է այլ վայր և հանդիպում է միայնակ ու անծանոթ մի մարդու, որի հետ գտնեմարտում է մինչև արշավույս: Հակորը չի կարողանում հաղթել անծանոթին, քանի որ նա իր ամուլացիլը զիստի մոտ բռնել էր և խնդրում է թողնել իրեն, որ գնա, իսկ անծանոթը հարցնում է նրա անունը: Ի՞նչ անալով, որ անունը **Յակովը** է, ասում է. «Յայսմ հետև ոչ կոչեսցեն գառուն ըն Յակոբ, այլ **Իսրայել** եղիցի անուն թո. զի ժուժկալեցեր ընդ Աստուծու և ընդ մարդկան գորաւոր լիցիդ» (Այսուհետև թեզ Հակոր թող չկոչես, այլ Իսրայել թող լինի ըս անունը, որովհետև Աստծո հետ ամուր մնացիր և մարդկանց հետ ուժեղ կլինես):

Այսպես ուրեմն, Իսրայելը Աստծո կողմից տրված անուն է, որ «աստվածամարտ» նշանակությամբ է ընկալվում (սարա և էլ եբրայերեն բառերից): Այստեղից էլ՝ **Իսրայելի ազգ, իսրայելացիներ, Իսրայելի պետություն** և նման արտասպառությունները: 1946 թվականից հրեաների պետությունը պաշտոնապես կոչվում է **Իսրայել**:

24. ԵԲՐԱՅԵՅԻՆ «ԱՅՆԱՓԱՅԻՆՆ» Է, ԻՍԿ «ԾԱՅՐԱՄԱՍԱՅԻՆՆԵՐԸ» ՈՎԹԵ՞Ր ԵՆ

Պատմաբանների և լեզվաբանների կարծիքով՝ մի քանի հազարամյակ մեր թվարկությունից առաջ Միջագետքում և Եփրատ գետից արևմուտք բնակվում էին սեմական լեզվով խոսող ժողովուրդներ: Դրանցից էին աքքադացիները, ասուրաբաբելացիները, արամեացիները, քանանացիները, ամորեացիները, փյունիկեցիները, ուգարիթցիները, հրեաները և այլն: Եվ քանի որ սեմական լեզուներով խոսող ժողովուրդի (կամ ցեղերի) մի մասը Եփրատ գետից արևմուտք էր գտնվում, նրանց էլ սկսեցին անվանել **այնկողմնայիններ**: Մեծական լեզվով դա հնչում է **եբեթ** (աքքադերենում՝ eber), ուրեմն **եբերայա**՝ «այնափային, այնկողմնային», որից էլ՝ հայերենի **եբրայեցի**–ն, որի տակ հասկանում ենք հրեաներին կամ հրեական ցեղերին: Ահա այսօր **եբրայեցի** նշանակում է **այնափային, այնկողմնային**: Բայց սա հավանակա՞նք քան է: Միանգամայն: Ահա և մեկ այլ ժողովուրդի անուն, որն իրեն անվանում է **ծայրամասային**: Արժանո՞ւմ եք: Չեք զարմանա, եթե ամեն ինչ հերթականությամբ պատմենք: Ռուսաստանում կենտրոնից հարավ, այսինքն՝ հեռու ապրողների սկսեցին անվանել **օկրաինի** **украина**, որտեղից էլ **Ուկրաինա**՝ «Չայրամասային» անունը: Այսօր արդեն սովորական են **ուկրաիններն**, **ուկրաինացի**, **Ուկրաինա** անունները, որոնք «ծայրամասերն», «ծայրամասացի», «ծայրամասատան» են նշանակում: Ի դեպ, **Украина** կա նաև Հարավսլավիայում՝ Սերբիայում: Այն պարզապես կոչվում է **Крaина**:

25. ԶԱՆՈՒԴԻ, ՏՆՈՒՐ ԵՎ ՀՐԵԱՅ, ՍԻ՞ՊԵՆ ՆՈՒՅՆ ԲԱՆՆ Է

Մինչդեռ հարևանները հրեաներին անվանում են **եբրայեցի**, իրենք իրենց այլ ձևով են կոչում: Իրենց ցեղերից մեկի անունով նրանք կոչում էին իրենց յուրապա, նույնը ասորիների մոտ հնչում էր **իիուդայա** կամ **յուդայա**, արամեացիները՝ **յիուդայե**, արաբները՝ **յաիուդի**, պարսիկները՝ **ջահուդ**, կամ **ջուիուդ**, հույները՝ **իիուդայուս**:

Իսկ որտեղի՞ց՝ առաջացավ հայերենի **հրեայ** անունը: Սրա պատասխանը կարող է տալ մեկ այլ ժողովուրդի անուն, դարձյալ Հայաստանի հարևան, որոնց հայերը **մարտր** են անվանում, երկիրը՝ **Մարաստան**, սակայն հույները և այլք **մարացիներ** կամ **մեդացիներ** են ասում: Ինչպես տեսնում ենք, դ հնչյունը հայերենում վեր է ած-

վել Բ-ի, որտեղից էլ մադ կամ մեղ ժողովրդի անունը հայերենում դարձել է մար: Եւսյն ձևով էլ իհուդայե կամ եհուդեայ ձևը պարսկերենից փոխ առնված հնչյունն է, քանի որ յախուղ ձևը պարսկերենում դարձել է զիուղ (հմմ. ճապոնիա և Յապոնիա): Ուրեմն, իսկապես հուդեա-ի դ-ն, վերածվելով Բ-ի, լինում է հուրեա, որից էլ հրեա:

26. ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐՆ ԻՆՉՈ՞՞՞ ՊԻՏԻ ԽՈՍԵՒՆ ՀՈՒՆԱՐԵՆ

Հին Հունաստանում (բայց ինչո՞ւ միայն հին) բարբարոս անվամբ էին կոչում ոչ հույներին, այլ օտար ազգերին, որոնց հունարեն խոսել չգիտեին: Ջարմանակի բան: Ինչո՞ւ էր հույներին թվում, որ անպայման իրենց լեզուն պարտավոր էին գիտենալ բոլոր մյուս ժողովուրդները, բայց երբեք հավանաբար նրանք հակառակը չէին փորձել մտածել, այսինքն նրանց չէր հետաքրքրում հարևան ժողովուրդների լեզուն սովորելը, որպեսզի հեշտապարտ հարևանների հետ հաղորդակցվել: Եվ այսպես, հույներից բարբարոս մակդիրն անցավ նաև աշխարհի մյուս ժողովուրդներին (և՛ արևմուտքի, և՛ արևելքի), և նույնիսկ նրանից կազմվեցին նորանոր բառեր՝ բարբարոսություն՝ «վայրենություն, դաժանություն, գազանաբարություն, անգթություն, ջարդարարություն», բարբարոսաբար՝ «վայրենաբար, դաժանորեն, անգթորեն, գազանաբար» և այլն:

Բայց ինչպե՞ս առաջացավ այդ բառը: Լեզվաբանների կարծիքով՝ նրա հիմքում ընկած է հնդեվրոպական արմատ, ինչպես ցույց է տալիս սանսկրիտի (հին հնդկերենի) barbaras՝ «կալակզ» բառը, որի զուգահեռ է դիտվում նաև սլովակերենի bat-bati՝ «բռբռալ»-ը: Այստեղ կարելի է հիշել նաև հայերենի բարբառ կամ բարբառել-ը, որոնց հիմքում բառ-ն է:

Սակայն չափի մոռանալ նաև հայերենի մի շարք արևմտյան բարբառներում պահպանված բարբարիկ կամ բարբար՝ «վայրենի, անկիրթ, գազանաբար, անբաղքավարի» բառի գոյության մասին ևս, որը կարող էր առաջանալ և՛ հունարենի բարբարոս-ից՝ դեռ զցելով հունարենի -ոս ածանցը, և՛ անկախաբար քրքրադերենի (ասուրաբարեղենի) barbarras՝ «վայրենի, գազան, գայլ, օտարական» բառից, որից էլ հավանաբար ծագում է հունարենի բարբարոս-ը և ոչ թե «կալակզ» barbaras արմատից, որի մեջ «չի գիտակցվում» «վայրենի, անզուր, վայրենաբար, ջարդարար» նշանակությունները:

27. ԲՅՈՒԳԱՆՂԱՅԻՆ ՀՈՒՅՆ Է, ԹԵ՞ ՀՈՈՍԵԱՅԻ

Հայ ժողովրդի մոտ տարածված «հոռմեացիներ» արտահայտությունը ո՞ւմ է վերաբերում: Եթե նման հարցով դիմենք որևէ մեկին, ապա կհետևի տրամաբանական պատասխան. «Եթե Հոռմից է կամ Հոռմեական կայսրությունից, ապա հոռմեացի է»: Սակայն պարզվում է, որ այդպես չէ: Հայերս սխալմամբ ներկայումս Հոռոմ կամ Ուռոմ ենք անվանում ոչ թե իհն հոռմեացիներին, այլ Մորերին, որոնք հույներ են: Միա թե ինչպես է կատարվել այդ սխալը: Այժմյան Խատանրուլ քաղաքի տեղում մ.թ.ա. 658 թվականին հույն Բյուզանդ բազմվորը հիմնել է քաղաք՝ կոչելով այն Բյուզանդիոն: Այս քաղաքի անվամբ էլ ճանաչվել է ողջ Անատոլիան որպես պետություն: Հոռմեական Կոստանդին բազմվորը 329 թվականին Հոռմեական կայսրության մայրաքաղաք դարձրեց Բյուզանդիոնը՝ վերանվանելով այն Կոստանդնուպոլիս: Հոռմեական կայսրությունը, նվաճելով Անատոլիան, այն կցեց իրեն և ստեղծեց մեծ Հոռմեական կայսրությունը, որի

անունով էլ ճանաչվել սկսեցին նրա մեջ ապրող բոլոր ժողովուրդները: Հետագայում 395 թ., Հոռմեական կայսրությունը բաժանվեց երկու մասի՝ Արևմտյան Հոռմեական կայսրություն՝ Հոռմ կենտրոնով, և Արևելյան Բյուզանդիոն կամ Կոստանդնուպոլիս կենտրոնով, որի բնակիչները հիմնականում հույներ էին: Հայ ժողովուրդն առաջվա նման շարունակեց հոռոմներ, հոռմեացիներ, ուռոմներ անվանել Բյուզանդիայի բնակիչներին, իսկ Բյուզանդիան՝ Հոռոմաց տուն, Գաառոն հոռոմաց, Հոռոմք՝ ի տարբերություն մյուս Հոռմի, որի հետ չչփոթելու համար թողեց նրան Հոռմ անունը:

Հայաստանում տարածված խոշոր հատերով սև կամ կարմիր բուրբ կոչվում է ուռուժի բուրբ, հավանաբար բյուզանդական ծագում ունենալու պատճառով:

28. ԵԹԵ ԵՎՐՈՊԱՅԻ Է, ՄԻԵՎՆՈՒՅՆ Է, ՖՐԱՆԿ Է...

Ֆրանկներ, ֆրանկացի, ֆրանկի գյուղ արտահայտություններով հայերը սովոր են անվանել լուսավորչական կրոնից հրաժարված և կաթոլիկություն ընդունած հայերին: Բայց ինչպե՞ս «կալակ» ֆրանկ-ը, որ ֆրանսիացի է նշանակում, նման հայերին:

Խաչակրաց արշավանքից հետո Կիլիկիայում տարածվեցին եվրոպական երկրներից Հիսուսի գերեզմանն «ազատելու» եկած արկածախնդիր զինվորները, որոնց մեջ թեև կային այլևայլ լեզուներով խոսող զանազան ազգությունների ներկայացուցիչներ, սակայն հայերը բոլորին անվտիտ կոչում էին ֆրանկներ: Եվ այսպես, «եվրոպացի» հասկացությանը համարժեք դարձավ ֆրանկ-ը: Եվ այսպես, «եվրոպացի» ներմուծված ֆրանշապիկները սկսեցին անվանել ֆիրենկ շապիկ, կողպեցները՝ ֆիրենկի կամ ֆրանկի, որով հասկանում էին ոչ թե ֆրանսիականը, այլ եվրոպականը: Ուրեմն, ֆրանկ նախապես եվրոպացի է նշանակում, հետո միայն կաթոլիկ:

29. ԵԹԵ ՏԵՆՈՎԱՅԻ Է, ՈՒՐԵՍՆ ՍԱՏԱՆԱ Է...

Միջին դարերից հայ մատենագրության մեջ տարածվեց ջենեվիկ կամ ճենեվիկ՝ «խորամանկ, խարդախ, խաբեբա, սրիկա» բառը, որ ծագում էր ջենովեզ՝ «ջենովացի» իտալերեն բառից: Առևտրական գործարքներով ջենովացիները շփվել էին Դրիմի ծովափնյա հայ գաղութների և սևծովյան առափնյա բնակավայրերի հայոց հետ, որոնք էլ այդպես սկսեցին անվանել խորամանկ ջենովացիներին, իսկ հետագայում նաև՝ ընդհանրապես ամեն տեսակ սրիկաներին ու խաբեբաներին: Սիվրիիիսարի բարբառում պահպանվել է «ջենեվիկ կլլամնի»՝ «սատանայի է նման» արտահայտությունը (երբեմն նաև՝ ջենեվիկ կիպի՝ «սատանայի պես») և այլն:

30. ԲԱՐԲԱՐԻ ԱՆՈՒՆ ԷՆ ԴՈ՞՞՞՞ ԼԻՆԻ ԵՎ ԿԱՏ

«ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ»

Բարբելոնի աշտարակաշինություն, բարբելոնյան խառնաշփոթություն, բարբելոնյան գերություն, Սեծ Բարբելոն և նման բազմաթիվ արտահայտություններ մտել են մշակարի բոլոր ժողովուրդների բառակաշարի մեջ: Սևեղ Բարբելոնը դարեր շարունակ մահ ու ավեր էր պիտում հարևան ժողովուրդների երկրներում, ուստի և նրա անունը սարսափ էր տարածում մարդկանց վրա: Ասորեստանի հետ միասին Բարբ-

լոճն է եղել **Նաիրի** երկրի ղյուսերին թշնամին. իզուր չի հիշում մեծ բանաստեղծը այդ երկու ոսոխներին.

Բաբելոնն է եղել մեր այսոյանը, տե՛ս,
Ամհետ կորել, անցել է չար մշուշի պես:
Ասորիքն է եղել մեր թշնամին, ահա,
Դաշտ է տեղը, և չկա քար քարի վրա:
Վ. Տերյան

Մի՞թե Բաբելոնի արյունոտ թագավոր Նաբուգոդոնոսը չէր, որ կործանելով Երուսաղեմը՝ զերեց հրեաներին: Եվ հրեաները խարանեցին այդ քաղաքը «Մեծն Բաբելոն» մայր պոռնկաց և գարշելաց» ցուցանակով: Երեմիա մարգարեն կարդաց նրա կործանումը հյուսիսից եկող ժողովուրդների կողմից, որոնց թվում հիշում է նաև «Արարատյան թագավորությունը» և «Ասքանազյան զուկողը»: Եվ այսպես, Բաբելոնը կործանվեց: Բայց չէ՞ որ այն ստացել էր իր անունը աստվածների սրբատեղի լինելուց: Աքքադերեն (կամ բաբելերեն, նաև ասուրերեն) Babilu կազմված է bab՝ «դուռ» և ilu՝ «աստված» բառերից, ուստի Բաբելոն նշանակում է «Աստծո դուռ»: Ի դեպ, հիշեցնենք, որ դուռ բառով միայն այս քաղաքը չէ, որ կոչվել է այլև **Բաբ** էլ **Մանդեթ** նշանակում է «Արցունքի դուռ» (կամ «Արցունքի դարպաս»), որ Արաքսի և Եթովպիայի միջև ընկած նեղուցն է: Թուրքերի կողմից Կոստանդուպոլիսը կոչվեց **Բաքը Ալի**՝ «Բարձրագույն դուռ»՝ նկատի ունենալով նախապես թագավորական պալատը: Բայց սա բոլորը չէ, կործանված Բաբելոնի տեղում Աստված պարզեց մեկ այլ քաղաք, որն այդպես էլ կոչվեց՝ «Աստվածատուր»: Այդ մասին հաջորդ գրույցում:

Ի դեպ, գրաբարում ևս հանդիպում ենք **Դուռն Արբունի** կամ պարզապես **դուռ** արտահայտությանը՝ «արբունիք», «պալատ» նշանակություններով, օրինակ, «Բողոք ի դուռն կարոյային» (Բողոքում էին արբունիքին):

31. «ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ» ԶԱՂԱԶԸ ԵՎ ՄՅՈՒՄ «ԱՍՏՎԱԾԱՅԻՆՆԵՐԸ»

Եվ այսպես, հյուսիսից եկած ժողովուրդները՝ սկյութները, սակերը, կործանեցին Բաբելոնը, որի տեղում առժամանակ միայն ավերակներ էին, և շնագայլեր էին ոռնում նրանց մեջ, ինչպես գուշակել էին մարգարեները: Սակայն երկար ժամանակ չէր կարող մնալ գեղեցիկ և հարմարավետ քաղաքի տեղը ամայի լինել. նրա տեղում նորից սկսեցին մարդիկ բնակվել, և այն նորից շենացավ: Միջին դարերում Արաբական խալիֆայությունը (762 թվականից) Մանսուր երկրորդ Աբբասյան խալիֆի ժամանակ այն դարձրեց իր մայրաքաղաքը՝ ընդգծելու համար մայրաքաղաքի աստվածապետական (թեոկրատական) իշխանությունը: Քաղաքին տրվեց հին պարսկերեն հորդրոքմանը **Բագդադ** անունը, որ կազմված էր **բագ**՝ «աստված» (ի դեպ, սա նույն ռուսական **бог** բառն է) և **դադ**՝ «տրված» բառերից: Դետագայում իրանական արտասանությունը, արաբախոս ժողովուրդների կողմից աղավաղվելով, դարձավ **Բաղդադ**:

Եթե թարգմանենք **Բագդադ**–**Բաղդադ**–ը հայերեն, կստացվի **Աստվածատուր**: Իհարկե, Բաբելոնը կամ Բագդադը միակ աստվածային քաղաքները չեն. մնան

անվանումներ աշխարհի շատ բնակավայրեր ունեն, որոնցից մի քանիսն էլ Դալաստանում են:

32. ՄՅՈՒՄ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐՆԵՐԸ

Դեբանոսական Դալաստանում, երբ բազմաստվածությունն էր իշխում, Արածանի գետի ձախ ափին՝ Նապտ լեռան ստորոտում, բազմաթիվ աստվածների նվիրված տաճարներ կամ մեհյաններ կային, որի պատճառով երբեմն պատմիչները ավանդ կոչում էին Դիցավան: Իրանական ազդեցության ուժեղացման ժամանակաշրջանում սկսեցին ավանդ կոչել **Բագավան**, որ կազմված էր պաղիավերեն **բագ**՝ «աստված» և **ավան**՝ «մեծ բնակավայր» բառերից:

Այդպես նախագի Արշարունից գավառի հայտնի սրբավայրերից մեկը, որ Ախուրյանի ափին էր գտնվում, երվանդ 2–րդ թագավորը դարձրեց կուռքերի պաշտամունքային կենտրոն՝ Արմավիրից այնտեղ տանելով աստվածների արձանիկները: Ավանը ստացավ **Բագարան** անունը՝ պաղիավերենի **բագ** և **արան**՝ «դաշտ» բառերից, ոմանց կարծիքով՝ – արան՝ «տեղ» ածանցով, այսինքն՝ «աստվածների տեղ»:

33. ՉՆԱԾԻԱՐՇԻԿ

Դայ ժողովուրդը շատ է սիրում չնաշխարհիկ բառը, այն գործածում է ամենուրեք որևէ առարկայի արտակարգ, գերազանց, չտեսնված լինելը որակելու և, նույնիսկ, որևէ երևույթի ոչ սովորական լինելը ընդգծելու նպատակով: Օրինակ՝ «Այս ինչը չնաշխարհիկ մայն ունի», «Նա օժտված է չնաշխարհիկ գեղեցկությամբ», «Նա չնաշխարհիկ մի հարսնացու է ընտրել» կամ պարզապես՝ «Չնաշխարհիկ է»:

Ոմանք կարծում են, որ այս բառը կազմված է **Չին** (Չինաստան) և **աշխարհիկ** բառերից, որով բառն ընկալվում է՝ «Չինաստան աշխարհից»: Իսկ ինչո՞ւ: Որովհետև վաղ անցյալում Չինաստանից, Դնդկաչինից, Դնդկաստանից ներմուծում էին զարմանահարչ և գեղեցիկ ապրանքներ՝ ճենապակյա իրեր, մետաղյա գործվածքներ, բանկարժեք ակնեղեն և այլն, և ժողովրդի մոտ այն կարծիք էր ստեղծվել, որ ամենավաղ բաները Չին աշխարհից են, հետևաբար չնաշխարհիկ են:

Սակայն լեզվաբաններից շատերը գտնում են, որ չնաշխարհիկ բառը չէր կարող Չին–աշխարհիկ ձևից առաջանալ, քանի որ մեր մատենագրության մեջ Չինաստանը գրվում է **ճենաց** աշխարհի ձևով և ոչ թե՛ Չինաց: Դետևաբար չնաշխարհիկ–ի փոխարեն պիտի ունենայինք **ճենաշխարհիկ** և ոչ այլ կերպ: Եթե այս ձևը բացակայում է, ապա **չնաշխարհիկ**–ը ծագում է ինչ–որ մեկ այլ հիմքից:

Մեր կարծիքով՝ այս հիմնավորումը առարկություն է վերցնում երկու պատճառներով: Նախ, ընդհանուր հայերենում և նրա բազմաթիվ բարբառներում Չինաստանը հանդիպում է և՛ **ճենաստան**, և՛ **ճենաց** աշխարհի ինչնամբ, ինչպես նաև՝ Չինաստան. այնուհետև չնաշխարհիկ բառի–իկ ածանցը իրանական լեզուներում և հայերենում, կցվելով երկրանուններին, ցույց է տալիս այսինչ կամ այնինչ երկրից լինելը, ինչպես ունենք հնդիկ (Դինու երկրից), պարսիկ (Պարս երկրից), խալիչիկ կամ հարաշիկ (Դարաշ երկրից), տաճիկ և այլն: Դետևաբար **ճենաշխարհիկ**–ն է դարձել **չնաշխարհիկ** և ոչ թե **ոչ–աշխարհիկ**:

34. ՈՎՔԵՐ ԵՒՆ ԷՏՐՈՒՄԱԿՆԵՐԸ, ԵՎ ԻՆՉՊԵՄ Է ՕԳՆՈՒՄ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ

Հոմերոսի «Իլիական»-ից բոլորն արդեն գիտեն Տրոյական մեծ պատերազմի մասին, երբ «ամենագեղեցիկ կնոջը» ուղղված մակագրությամբ խնձորից պատերազմ սկսվեց, և իսպառ կործանվեց տրոյացիների պետությունը: Այնուհետև պատմությունը լուռ է, նրանք մասին ոչ մի պատմաբանի այլևս տեղեկություններ չի տալիս: Իսկ ինչ եղան տրոյացիք: Մի՞թե մինչև վերջին մարդը ողջ ժողովուրդը ոչնչացավ Տրոյա քաղաքի ու պետության կործանման հետ միասին:

Այս մասին մենք ոչինչ չէինք կարող իմանալ, եթե լեզվաբանությունը, որը պատմության բազմաթիվ գաղտնիքներ բացող բանալի է, չբացահայտեր այն:

Լեզվաբանությունն իր առջև խնդիր էր դրել պարզել խորհրդավոր մի ժողովրդի՝ տրոյականների գաղտնիքը, որոնք, հին ժամանակներից ի վեր հայտնվելով Իտալիայում, աստիճանաբար միջին դարերում անհետացան պատմության ասպարեզից: Նրանց խորհրդավոր լեզուն, պատմությունը մնացին հանելուկային և արդեն մի քանի հարյուրամյակ բազմաթիվ վեճերի, խորհրդածությունների տեղիք են տալիս: Որոշ գիտնականներ կարողացան առանձին անդրերի, շիրիմների վրա եղած արձանագրությունների չնորհիվ ինչ-որ կառուցումներ անել տրոյականների լեզվի, պատմության գաղտնի ծալքերը բացելու ուղղությամբ, սակայն հիմնական բանալին մնում էր անհայտ:

Դեռևս անցյալ դարերում որոշ գիտնականներ այն կոահուճն էին արել, որ տրոյականները Իտալիա են եկել Արևելքից, հնարավոր է, նաև Փոքր Ասիայից: Ավելի համարձակները ենթադրում էին, որ դրանք տրոյացիներն են, որովհետև նրանց Իտալիա գալու և Տրոյայի կործանման ժամանակները մոտավորապես համընկնում էին: Որքան էլ ստույգ ու ճշմարտանման լիներ ենթադրությունը, դրան հավաստյալու համար անհրաժեշտ էին նախ և առաջ փաստեր: Ահա 50-ական թթ., նախկինում կուտակված փաստերին ավելացնելով նորերը, բուլղար գիտնական Գեորգիևը ապացուցեց, որ իրոք տրոյականները տրոյացիների հետնորդներն են եղել: Բանն այն է, որ հա խեթերների օգնությամբ և իտալական բիլինգվաների (երկլեզվյան արձանագրությունների) շնորհիվ վերծանեց բազմաթիվ տրոյականներն արձանագրություններ: Եւ ճշտեց նաև տրոյական բառի առաջացումը Տրոյա հատուկ անունից՝ Լ-տրոյական՝ «տրոյացի» ձևից, որը զուտ իտալական կազմության բառ էր:

Պատմությունը պահել էր Հոմերի ու Իտալիայի պատմության մեջ շատ նշանավոր դեմքերի անուններ, որոնք ծագումով տրոյականներ էին:

Հայտնի գրականության ու արվեստի հովանավոր Մեկենասը ծագումով նույնպես տրոյակ էր, ինչպես նաև Վերածննդի մեծ պոետ Դանթեն:

Տրոյականներն բառերից այսօր աշխարհի բազմաթիվ լեզուներում հնչում է սպորտը-ը, սակայն քչերը գիտեն այդ մասին:

Եվ այսպես, Տրոյայի կործանումից շուրջ 3000 տարի անց լեզվաբանությունը օգնեց պատմությանը՝ գտնելու տրոյացիների կորած հետքերը:

Հաստատվեցին բազմաթիվ պատմիչների վկայությունները և ապա գիտնականների ենթադրությունները տրոյականների տրոյական ծագման վերաբերյալ: Եվ այս դեպքում, երբ քվում էր, թե անհայտության թողով էր ծածկված հազարավոր տարիներով մեզանից գաղտնի մի ժողովրդի պատմությունը, հառնեց մարդկության առջև շնորհիվ մի գիտության, որ կոչվում է լեզվաբանություն:

35. ՈՎՔԵՐ ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐ ԶԵԻՆ, ԴԱՐՁԱՆ ԿԵԹԱՆՈՍՆԵՐ, ԻՍԿ ՈՉ ԱՐԱԲՆԵՐԸ՝ ԱՃԱՄՆԵՐ

Պարսիկներն իրենց արևմտյան հարևաններին՝ քոչվոր արաբներին, անվանում էին **թագի**՝ «հոսող, վազող, գնացող» (կամ հայերեն՝ տաճիկ), իսկ արաբները՝

Ինչպե՞ս էին նրանք անվանում պարսիկներին: Արաբներն իրենց արևելյան հարևաններին սկսեցին անվանել **ագամ** – **աջամ**՝ «օտար, օտարական, ոչ արաբ, ոչ մաքուր արաբերեն խոսող»: Այնուհետև **աջամ** հորջորջումը նրանք սկսեցին տալ ընդհանրապես բոլոր մյուս ոչ արաբ ժողովուրդներին, իրեն «ոչ կրթված, ոչ հմուտ, ոչ ազնիվ» ցույց տալով, որ նրանք արաբներից ցածր աստիճանի վրա են գտնվում: Արևմտահայ բարբարոսներում **անձնի գործ**՝ «ոչ հմուտ, անմակարդակ աշխատանք» է նշանակում: Պայ իրականության մեջ սկսեցին **իրան** կամ **Պարսկաստան** հասկացությունների փոխարեն գործածել Ամենստանը-ը, իսկ Պարսկաստանից եկած որևէ ընտանիքի համար՝ **Ամենյան** մակդիրը՝ նշելու համար նրանց **Ամենստանից** եկած լինելը:

Նույն կերպ էին վարվում նաև եբրայեցիները, որոնք ոչ հեռաներին անվանում էին **եթանոսներ**, այսինքն՝ **եթբանոս**՝ «այլազգի, օտար»: Սա հունարեն **ethnos**՝ «ժողովուրդ, ցեղ» բառն է, որը ասորերենում և եբրայերենում «այլազգ» նշանակությունն ստացավ, իսկ հայերենում՝ «ոչ քրիստոնյա, կռապաշտ», և այսպես՝ «ցեղ» հասկացությունը, ճանապարհորդելով ասորերենով և եբրայերենով, մեր լեզվում դարձավ «կռապաշտ, ոչ քրիստոնյա»:

36. «ՆԵՏՈՂԱՑ ԱԶԳԸ»

Միջնադարյան հայ պատմիչների բառապաշարում հայտնվեց **նետողաց ազգ** արտահայտությունը, որով նրանք սկսեցին բնութագրել արևելքից Հայաստան ներխուժած ժողովուրդներին և հատկապես՝ մոնղոլներին, որոնք հմուտ նետածիգներ էին: Նման բնութագրման համար ամեն հիմքեր ունեին հայերը, որովհետև նրանց նետերը ավելի կատարյալ աղեղներից էին արձակվում և թռչում էին ավելի հեռու, շնորհիվ ուղտի աղիքներից պատրաստված աղեղների լարերի: Ինչպես ասում են, մակատանարտերում դրության տեր էին մոնղոլները, բանի որ նրանց նետածիգներն անհասանելի տարածությունից կարողանում էին հարված հասցնել, մինչև հայերի ավանգարդի նետընկեց տարածության մոտենալը: Եվ ահա նվաճողներին այս առավելության համար էլ կոչեցին **նետողաց ազգ**: Ահա մի օրինակ 13-րդ դարի Յոհան Բանհամայի «ժամանակագրությունից».
«Եւ ո՞վ կարէ պատմել զնեղուփնես և զտառապանս, զոր էինս մեզ յանողոմ ազգէն **նետողաց**» (Եւ ո՞վ կարող է պատմել այդ նեղություններն ու տառապանքները, որ մեզ հասան անողորմ **նետողների** ազգից): Իսկ մյուս պատմիչներն ուղղակի հավասարության նշան են դնում **մոնղոլ** և **նետարձակ** բառերի միջև. ահա բազմիցս հանդիպող նախադասություններից մեկը.
«**Մոնղոլք**, որ է ազգ **նետողաց**» (Մոնղոլները, որ նետողների ազգն է):

37. ԵԹԵ ԹԱՐԳԱՆՆԵՐ ՍԱՄԻՍԸ՝ ԵՐԿԿՈՂՍԱՆԻ ԿԱՍ ԵՐԿԿՈՐՅԱԿ

Ամեն մի նոր փաստ՝ Հայաստանի հին պատմությանը նվիրված, խոսում է խորեմա-ցու «Հայրց պատմության» հավաստիության մասին: Հայկի Բաբելոնից գաղթելու վար-

կածը հաստատվում է նաև Հայկական լեռնաշխարհում սեմական ծագում ունեցող տեղանուններով, որոնցից է նաև **Մասիս** լեռան անունը: Ինչպես գիտենք, **Արարատ** անունը մինչև Մոր ժամանակները գրեթե չի գործածվել, և մեր Նոյի տապանն ընդունող գազաբը կոչվել է **Մասիս**: Այն սեմական լեզվից է գալիս՝ *mašiš*, և նշանակում է «երկկողմանի»: Միանգամայն հարմար անուն էրկզագաթ մեր հսկայի համար, որը եզակի է իր կենցածքով ողջ աշխարհում: Աքքադերենում ունենք նաև *maš*՝ «երկկողմանի» բառը Մուսյն արձատից: Իսկ այլ զուգահեռներին գիտենք, որ *աքք*, *ձ-իմ* հայերենում համապատասխանում է հայերեն *ս-ն*, ինչպես ունենք *աքք*, *šallur*՝ հայ. **սալոր** (նաև **շլոր**):

38. ԴԻՍԱՑԻ ԿԱՍ ԱՌՏԵՎԻ ԱԶԳԵՐԸ

Գրաբարից ավանդված ունենք **Կաղմեա** տուն կամ հունականացված հնչմամբ՝ **Կաղմոսի** տուն երկրի անունը, որ մտնում էր Մեծ Հայքի կազմի մեջ: **Կաղմի** տունը գտնվում էր Հայաստանի հարավում, որին սահմանակից էր Ասորեստանը: Ինչպես տեղեկանում ենք *Խորենացու* «Հայոց պատմությունից», Հայկի և Բելի կռիվ ժամանակ **Կաղմոսի** տունը Հայաստանի կազմում էր, այլպես Բելի դեպի Հայաստան կատարած արշավանքի մասին առաջինը **Կաղմեա** տան ղեկավարը չէր իմանա և այդ մասին չէր հայտնի Հայկին, եթե իրեն չհամարեր **Հայքի** մաս:

Խոսքը տանք *Խորենացուն*. «Ապա զօրածուրով լինի ի վերայ նորա Տիտանեանն Բէլ ամրոյսիս հետեւակ զօրաց, գայ հասանէ ի հիւսիսի, յերկիրն **Արարաղայ**, մերձ ի **Տունն Կաղմեայ**» (Այն ժամանակ Տիտանյան Բելը գործ է ժողովում նրա դեմ և հետևակ զորքի բազմությամբ գալիս հասնում է *Խոսիսի*՝ Արարաղի երկիրը, **Կաղմ-ի** (կամ **Կաղմոսի**) տան մոտերքը):

Որտեղի՞ց ծագեց **Կաղմեայ** (կամ **Կաղմոսի**) երկիր արտահայտությունը: Աքքադական արձանագրություններում, արձանեքենում *qadim* բառը նշանակում է «դեմի, դիմացի, առջևի»: Ուրեմն ի՞նչ, **Կաղմեայ** տունը **Դիմացի տո՛ւն** է: Այո:

Դեպի Ուրարտու տանող ճանապարհին առաջին հանդիպող երկիրն էր այս տարածքը, որն էլ հենց այդպես՝ **Առջևի, Առաջին, Դիմացի** անունը ստացավ: Հետագայում այն Մեծ Հայքի՝ Հայաստանի կազմում էր և կրում էր **Կաղմեայ** տուն անունը, ինչպես ունենք այդ համաբանությամբ՝ **Թորգոմա տուն, Սասնա տուն** և այլն:

39. ԻՆՉԻՅՑ Է ՍՍԱՅՎՈՒՄ ՍԱՐԻՆ-Ը, ԵՎ ՈՐՏԵՂԻՅՑ Է ՍԱԽՐԻ ԵՐԿԻՐԸ

— Ինչպե՛ս պիտի տեսնենք նախնադարյան մարդկանց քարանձավը.— հարցրեց Արտակը ջուկատավարին:

— Իհարկե, ոչ էլեկտրականությամբ, այլ **մարխ-ով**, որով լուսավորում էին իրենց կացարանները մեր նախնիները.— պատասխանեց ջուկատավարը (թերթից):

Այո, դեռևս մեկ-երկու սերունդ է անցել այն օրից, երբ քնակարաններում վառվող **ծրագի, լամպի, մարխի** փոխարեն հայտնվեց էլեկտրական լամպը: Սակայն հին սերունդը լավ է հիշում ինչպիսի գոռուությամբ էին տան մեծերը պահում—պահպանում դյուրավատ փայտի կտորները՝ **մարխ-ը**:

Ինչի՞ց են ստանում **մարխ-ը**՝ դյուրավատ փայտը, որի մասին գրաբարյան մատյանները թողել են հետաքրքիր տեղեկություններ: Որոշ մատյաններում **մարխ-ը** գրված է **մախր** ձևով և, ի հիասթափություն ընթերցողների, ասենք, որ ուղիղ ձևը հենց

այս է: Որոշ բարբառներում, ինչպես Հաճձենի, Թիֆլիսի, **մախր** հնչում է, և ճույնիսկ **Պաճրնի**, Չեթուռնի բարբառներում էլ գտնում ենք **մոխր** ձևով (նրանք ա—ն արտասանում են օ—ի պես), իսկ Սվեդիայում հնչում էին **միուխր**: Անցյալ դարում Թիֆլիսիում իրականացված Ա. Քիշմիշյանի «Նախագիտելիք քուսաբանության» գրքում գտնում ենք միայն **մախր** հնչապատկերը: **Մախրի** կամ **մախրենի** ծառը պատկանում է եղևնիների ընտանիքին, ոճանք այն համարում են *picca orientalis*, ոճանք էլ՝ *pinus picca*, պարսկերեն *merx*, քրդերեն՝ *merx*, որից ստանում էին յուղոտ, ձյուրի ման առատ խեծ ունեցող դյուրավատ փայտ: Իսկ որտեղի՞ց է ծագում այս բառը: Աքքադական արձանագրություններում խոսվում է Միջագետքից իյուսիս գտնվող մի երկրի մասին, որն անվանում են նրանք **Mexri**—**Մեխրի** կամ **երկիր մեխրի ծառերի** (*Mat GIS Mexri*), ճիշտ այնպես, ինչպես *Լիբանան* էին կոչում **Մայրիների** երկիր այնուհետև **հսկա մայրի ծառերի** պատճառով (*Mat GIS Lebanon*):

Ենթադրվում է, որ չամ (չամ—ի ծառ) բառն էլ **Շամ**—համասկու տեղանունից է ծագել, որն օգտագործվում է որպես **մարխ-ին** համարժեք մի բառ:

40. ՄՅՈՒՄ ԱՓԻՑ ԵՍ, ՈՒՐԵՄՆ ԱՍՈՅԱՆ ԵՍ

«Աւաղիկ ախոյան ելանեն», «Ի ձեռս ախոյան թշամոյն», «ախոյենացա...»:

Գրաբարում **հակառակորդ** հասկացության համար գործածում էին մի շարք բառեր, ինչպես օրինակ՝ **նոսիս, թշամի, ախոյան, դիմակաց** և այլն: Այս համարժեքներից հասկանալի են միայն **հակառակորդ** և **դիմակաց** բառերը, իսկ մյուս երեքը չեն բացատրվում հայերենով: Քննենք դրանցից **ախոյան-ը**: Հանդիպում է նաև *խնթան* գրությունը: Եթե այն բառից հանում ենք նրա —յան կամ —եան ածանցը, ապա մնում է **ախո** արմատը, որը հայերենի միջոցներով չի բացատրվում: Ի՞նչ է նշանակում **ախո**:

Այս բառը փորձել են բացատրել բազմաթիվ լեզվաբաններ, սակայն բոլոր ստուգաբանություններն էլ մնում են շատ թեական:

Բառիս իմաստը հասկանալու բանալին տալիս է Միջագետքի հին հարևանների լեզուն՝ աքքադերենը, ուր գտնում ենք նույն ձևս բառը, որն ուներ *axu*՝ «կողմ, ափ, բև» նշանակությունները, օրինակ՝ *axi Purattim*՝ «Եփրատի ափը, կողմը», *axi dinim*՝ «օրենքի կողմը»: Ոչ միայն կողմը, այլև հենց աքքադերենում էլ արդեն նա ստացել է «ախոյան, հակառակորդ» նշանակությունները. ուս ձևս «թշամուտ ասող» է թարգմանվում և ոչ՝ «կողմի ասող», *šar mata axitim*՝ «թշամական, ոսկի երկրի բազալիր»: Սա ապացուցվում է նաև մի շարք այնպիսի նախադասություններով, որոնց մեջ *axu*—ն փոխարինում է *bar-bar-ra*՝ «բարբարոս, օտար, վայրենի» և *nakru*՝ «թշամի» բառերին:

Ուրեմն, **ախոյան** նախապես նշանակել է «այն կողմի, այնափային, հակառակ կողմի», հետագայում՝ «հակառակորդ»: Այս պատճառով էլ **ախոյան** բառը համարժեք է **հակառակորդին** և հաճախ է նրա փոխարեն գործածվում:

41. ԻՆՉՊԵՄ ԿՈՂՍՆՈՐՈՇԿԵԼ ՍԻՊԵ ԵՏԵԿԸ ՀՅՈՒՄԻՍՆ Է (ԿՈՂՍՆՈՐՈՇԿԵԼ, ԲԱՅՑ ԻՆՉՊԵՄ)

Եթե հեշտ է թվում այս հարցը մոտիկ տարածությունների իմաստով, ինչպես, ասենք՝ **կողմ կող կամ կողք** բառից, դեմ, **դիմաց՝ դեմ կամ դեք** բառից, **եսև՝ ետ** (կամ **յետև՝ յետ**) բառից և այլն, ապա ինչպե՛ս պիտի անվաներ մարդը աշխարհագրական լայնություններից **իյուսիս** ու **հարավ** և այլն:

Լեզվաբանների համար մինչև հիմա էլ պարզ չէ, թե ինչպես են առաջացել **հյուսիս** ու **հարավ** բառերը հայերենում:

Հյուսիս հասկացության իմաստով միջնադարի հայ մտածող Ամանիա Շիրակացին օգտագործում է **ապախտար** պարսկերեն բառը, որը կազմված է **apak** «ետև» և **tara** «կողմ» բառերից, որով ստացվում է «ետևի կողմ»: Ներկայումս պարսիկներն ասում են **baxtar**: Բայց մի՞թե տրամաբանական է այսպիսի մեկնաբանությունը: Բնականաբար, մտան անվանման համար ինչ-որ հիմքեր պիտի լինեին: Սիս այստեղ մեզ օգնության է հասնում պատմությունը: Չէ՞ որ պարսիկները պաշտում էին **Միհրին արևին**, որի համար աղոթելիս կանգնում էին դեմքերը դեպի հարավ: Այս իսկ պատճառով էլ **հյուսիսը** լինում էր «Յետևի կողմ»:

Դարավը կարող էր նաև աջ կողմում հայտնվել, ինչպես որ արաբերենում **եմն** երկիրն են անվանում: Այս երկրի անունը ծագում է **yamin** «աջ» հասկացությունից, քանի որ աղոթելիս դեպի **արևելք** նայող արաբի համար **աջ** կողմում էր մնում **հարավը**, այսինքն **եմն**–ը: Իմիջիայոցը, «երզուն» հասկացությունն էլ **եմին** է կոչվում, քանի որ երզվելիս արաբները բարձրացնում էին իրենց **աջ** ձեռքը:

Հայոց լեզվում «հարավ» իմաստը սկսեցին արտահայտել **կեսօրվա կողմ** ձևով, որին գրաբարում համապատասխանում էր **միջօրեայ**–ը: Այսպես՝ Մ. Խորենացին գրում է. «**Միջօրեայ կողմանէ**», որով հասկանում ենք **հարավը**, քանի որ **միջօրեին** **կեսօրին**, արևը լինում է հարավում:

42. «ԳԼԽԻ ՎԵՐԵՎԻ ՃԱՍՓԱ» ԿԱՍ ԶԵՆԻՊ

«Արևը հասել է զենիթին», «զենիթային հրանոթ» և նման այլ արտահայտություններն այսօր շատ սովորական են մեր առօրյա խոսակցություններում: Սակայն բավական է մի պահ մտածենք, թե ինչու պիտի հրանոթը «զենիթային» կոչվի (կամ մարտկոցը), դեպի վեր կրակող հրանոթի մարտիկները՝ «զենիթայինները»: Ստորումները մեզ կստիպեն որոնումներ կատարել բառարաններում, լեզուներից նմուշներ գրքերում՝ հարցի պատասխանը գտնելու նպատակով: Պատասխանը տալիս է մեզ արաբերենը: Արաբերենում **samt** (ar ras) «գլխի վերևի կողմ կամ ծածկված» էր նշանակում, որը հին ֆրանսերենում դարձավ **ceint** կամ **zenith**, որից էլ նվազական մյուս լեզուներին և ռուսերենին անցավ: Ինչպես ռուսերենում, այնպես էլ հայերենում **զենիթ** նշանակում է «գագաթնակետ», հետևաբար **զենիթային գնդացի** կամ **հրանոթ** փոխաբերաբար կոչվում էին «դեպի երկինք կրակող հրանոթները», որտեղից էլ **զենիթայիններ**: «դեպի երկինք կրակողներ» կամ «դեպի երկինք կրակող հրանոթայիններ» արտահայտությունները: Նա իր փառքի **զենիթին էր հասել**՝ արտահայտությունը նշանակում էր՝ «նա իր փառքի գագաթնակետին էր հասել» և ոչ թե «գլխի վերևի ճանապարհին»: Եվ այսպես, արաբերենի **samte**–ն, **զենիթ** դարձած, մտավ հայերենի բառապաշարի մեջ:

Որպեսզի պակասավոր չլինի մեր գրույցը արաբերեն **samt**–ի մասին, հիշեցնենք, որ արդի խոսակցական լեզվում և բազմաթիվ բարբառներում գործածվում է անմիջապես արաբերենից կամ պարսկերենի և թուրքերենի միջնորոշյալ փոխ առնված **samt**–**սամթ** «կողմ, դիրք, հարմարավետություն» բառը: Օրինակ՝ «Չարկ, սամթով ես գարկում, սամթով տղա ես», կամ «**սամթ** ու հիզան չկա», «հենց սամթին է եղավ» և այլն:

43. ՍՈՒՂՈՎԱՆ ՆԱԵՎ ԲԵՍԱՐԱԲԻԱ, ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ...

Իհարկե, իրավունքը ոչ մի գործ չունի այստեղ, ում ինչպես հարմար է թվում, այնպես էլ անվանում է որևէ երկիր կամ այնտեղ բնակվողներին և վերջ: Այսպես, Ռուսիայում գետերից մեկը կոչում էին **Մուղովա**, որի շրջակայքում ապրողներին էլ կոչեցին **մուղովացիներ**, իսկ աստիճանաբար նրանց տարածքն էլ՝ **Մուղովա**, **Մուղավիա**: Միջին դարերում, երբ թուրքերի տիրապետության տակ անցավ այս երկիրը, ունանք անվանեցին այն **Կարա Բոզլաս**: Ավելի շատ նրան «կապավ» մեկ այլ տիրապալի անուն, որը Կալախիայի իշխանն էր. և նրան ճանաչում էին **Բասար Արա** անունով: Եվ այստեղից էլ՝ **Բեսարաբիա** անվանումը, որը ոչ մի կապ չունի այնտեղ բնակվող ժողովրդի կամ ազգային պատկանելության և լեզվի հետ:

44. ՍՍՐԱ ԵՐԿԻՐԸ ԻՆՉՈՒ՞՞՞՞՞ ՊԻՏԻ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԼԻՆԵՐ

Հայկական ժողովրդական էպոսում՝ «Սասնա ծռերում», հիշատակվում են **Սարա** երկիր, **Սարա** հող և **Սարա Մելիք**: Գիտնականներից զբաղեցրել է այն միտքը, թե ինչու հայոց թշնամին էպոսում որևէ մտիկ երկիր չէ, այլ հեռավոր **Եգիպտոս**: Եթե էպոսը արաբական արշավանքների ազդեցության տակ է հորինվել, ապա ի՞նչ գործ ունի այստեղ **Եգիպտոսը**, որին թուրքերը կամ մյուս հարևան ժողովուրդները **Սարը** են անվանում: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ **Սարա** երկիրը ոչ թե Եգիպտոսն է, այլ մեկ ուրիշը, և այն էլ պետք է, որ Հայաստանին մոտիկ ինչ-որ երկիր լինի: Եվ ապա էպոսի անձնանուններից շատերը (Մենեբեթիմ, Սանասար, Ծովինար, Բաղդասար և այլն) ավելի վաղ մերձեցումների արդյունք են ենթադրում, հավանաբար, աքքադական շրջանից: Մեզ թվում է, էպոսի **Սարա** երկրի անունը նույնպես աքքադական շրջանից եկող մի տեղանուն է և կապ չունի Եգիպտոսի հետ:

Աքքադական արձանագրություններում ունենք **Misir** (Միծիր) երկրանունը, որը նշանակում է «սահման»: Հայ ժողովուրդը երբեք թշնամաբար տրամարկված չի եղել երևել Եգիպտացիների նկատմամբ, և, հետևաբար, **Սարա** երկիրը պիտի որոնել այստեղ՝ Հայկական լեռնաշխարհի հարևանությամբ, որը կարող էր իսկապես լինել «սահմանային» և մեկ երկիր՝ Միծրա–Մարա անվամբ: Խոր հնավանդություն է թուրքում մեր էպոսից, որ պիտի լիներ աքքադական շրջանից եկող, երբ մեր լեռնաշխարհի ժողովուրդները անկախության համար անզիջուն պայքար էին մղում հարևան նվաճողների դեմ:

45. ՈՐՏԵ՞՞՞՞՞ ԳԵՆԵՆԸ, ԵՎ ՈՐՏԵ՞՞՞՞՞ ՏՃԱՆԴԱՍԸ

Աստվածաշնչի միջոցով աշխարհի շատ ժողովուրդների բառապաշարում հայտնվել է երբայական **գեեն** կամ **գեհեն** բառը: Հայերը գործածում են «**գեհենի** բաժին դառնաս», «**գեհենական** հրի բաժին դառնաս», «**գեհենի** անշեջ հուրը թեզ», «**գեհենի** դատաստան», «**գեհենական** տանջանքներ կրեցիք», «**գեհենի** անշեջ հնոց», «**գեհենի** կամ **գեհենական** դժոխք» արտահայտությունները: Որտե՞ղ էր գտնվում այդ **գեհենը**: **Գեհենը** երուսաղեմի պատերի կամ մի ձոր էր, որ երբայերենում հիշում էր **կեեննոմ**, այսինքն՝ «**Եեննոմի** անդունդ, վիհ»: Նախապես այս ձորը գրոսայգի էր, ուր **Մողոց** աստծո պատվին կառուցված տաճարն էր գտնվում: Այս տաճարում իս-

ոայելացիները իրենց որդիներին ողջակեզ անելու օրենք սահմանեցին: Ահա ողջակեզնան համար անշեջ հուրն այստեղ վառվում էր անդադար: Յովսիա բազավորը կործանեց այդ տաճարը, որպեսզի տեղը սրբավայրի վերածվի, նա իրանայեց քաղաքի աղտոտությունները լցնել այդտեղ: Դրանից հետո գեհ հիմնոնը կամ գեհինը դարձավ ավելի շուտ գարշանքի, զզվանքի կամ աննկարագրելի տառապանքների խորհրդանիշ: Ահա այստեղից էլ **գեհինակալը**՝ «անտանելի, դժոխային», իսկ **գեհին**՝ «դժոխք» փոխաբերական արտահայտությունները:

Յրանսերնուն **գեհին-ից** նույնիսկ առաջացել է **գեհներ**՝ «նեղություն» բառը: Երկրորդ անգամ այս նույն բառը հայերենը փոխ է առել արդեն արաբական և բուրքական նվաճումների ժամանակ՝ որպես մի նոր բառ՝ **ջեհնեմ**, **ջեհնելեմ**, **ջհաննամ**, **ջհանդամ** ձևերով, որը գիտակցվում էր որպես «դժոխք» կամ «կորստյան, ամենա լի՛նելու, ոչնչանալու վայր»: Չայերենն է ստեղծել **ջհանդանել**, **ջհանդամը** գնալ բայական ձևերը: Օրինակ՝ «**ջհանդամեց** գնաց, մեկ էլ նրա երեսը չտեսանք», «**ջհանդամիր**, չքվիր աչքիս առաջից» և այլն:

Ջհանդամ ձևը առաջացել է արաբերենում, քանի որ արաբերենում **գ**-երը հնչում են **ջ**, ինչպես, օրինակ՝ գազար-ի փոխարեն՝ **ջազար**, ուստի և **գեհիննուն**-ը դարձավ մեր բարբառներում **ջեհնելեմ** կամ **ջհանդամ**:

46. ԶԱՂԱԶԱՅԻ ԵՍ, ԵՆԱՆԱԿՈՒՄ Է՝ «ՍԱՐԱԳԻՑ» ԵՍ ԿԱՍ «ԿԵՐԻ ՊԱՀԵՍԻՑ»

Եթե այսօր որևէ մեկը հարցնի, թե ինչ է նշանակում **քաղաք**, ապա պատասխանը կարող է միայն ծիծաղը լինել:

— Ինչպե՞ս թե, քաղաքը մեծ բնակավայր է, որտեղ շատ-շատ մարդիկ են ապրում, գործարաններում են աշխատում, տրամվայներով, տրոլեյբուսներով, ավտոբուսներով են երթնելու և այլն:

Պատասխանից անբավարար՝ ոճանք կշարունակեն որոնումները, իսկ մտորումները կհանգեցնեն հետևյալ հարցին. «Բայ և այնպես, ո՞վ առաջինը մտածեց այդպես կոչել **քաղաքը**: Բայց միայն **քաղաք**, չէ՞՝ որ հայերն օգտագործել են **քաղաք** իմաստով մակ կերտ-ը (օրինակ՝ Տիգրանակերտ, Մանավազակերտ), շատ-ը (օրինակ՝ Արտաշատ, Աշտիշատ), ապատ-ը (օր.: Վաղարշապատ, Ղազարապատ), շեն-ը (օրինակ՝ Շակաշեն, Չայկաշեն, Վերնաշեն) և այլն: Սակայն սրանցից և ոչ մեկը անկախաբար **քաղաք** իմաստով չի գործածվել, այլ միայն՝ բարոյություններում:

Մասնագետները կարծում են, որ հայերենի **քաղաք**-ը, որից և վրացերենի **քալաքի**-ն (օր.: Մխալքալաքի՝ «նոր քաղաք»), ծագում է քրեթալերենի **kalak**՝ «կանաչ զանգվածի պահեստարան, մարազ, ցանկապատած տեղ» բառից:

— Այ թե՛ք բան: Դե արի ու հավատա, որ եթե թե՛ք գովում են **քաղաքավարի** քս, ստացվում է՝



«մարազավարի» կամ «սիլոսի պահեստում մեծացածի պես քս»: Անհեթեթություն չի ստացվում:

Սակայն: Ավելի անհեթեթ է **քաղաքականություն** բառը, որը հունարեն **պոլիտիկա**՝ «քաղաքային, քաղաքական» բառի թարգմանությունն է և ընկալվում է «դիվանագիտություն» հասկացությամբ և ոչ **քաղաքային** հատուկ վարվեցողության նշանակությամբ: Այստեղից էլ՝ **քաղաքագետը**՝ ոչ թե **քաղաքի** գիտակ անձը, այլ դիվանագետն ու պետական հարաբերություններին իրազեկ անձը, դրանց մեջ ճիշտ մանրակր ու նպաստավոր հանգամանքներից օգտվել կարողացող պետական գործիչը:

Իսկ **քաղաքական** հանցագործը, դա ոչ թե քաղաքի դեմ գործող անձն է, այլ տիրող կարգերի զաղաքարխտության դեմ գնացող, այլ համոզումների տեր անձը: Իսկ ինչո՞ւ ոչ **պետական**, այլ **քաղաքական** հանցագործ: Որովհետև Չին Գունաստանում յուրաքանչյուր **պոլիս** (այսինքն՝ **քաղաք**) մի պետություն էր, ուստի **քաղաքին** դեմ գնալն էլ հավասարազոր էր **պետությանը** դեմ գնալուն:

Չեցն գրաբարում **քաղաք**-ը դեռևս այսօրվա **քաղաք** հասկացությամբ չի օգտագործվել, այլ **պատմեչ**, **ամրություն**, **պարսպավոր**, **պարսպած բնակավայր**: Օրինակ բերեց եղիշ պատմիչից մի հատված, ուր պատմվում է պարսից զորավորի Չայաստան ներխուժելու և այնտեղ բանակ դնելու մասին, որը պաշտպանելու համար կառուցվում է **քաղաք**. «Եւ անդէն ի գաւառն գտեղի առեալ նորա, բանակ բոլորէր, փոս հատանէր, պատմէշ կանգնէր, շերտաւոր փակէր, ամրացուցանէր իբրև **զքաղաք** ամենայն պատրաստութեամբ» (5, ԼԳ): Ահա թարգմանությունը. «Այնտեղ՝ գավառում, կանգ առնելով բանակ է դնում, փոս փորում, պատմեչ շինում, ցցապատերով փակում և ամեն պատրաստությամբ ամրացնում է ինչպես **քաղաք**»: Փավստոսի «Բիւզանդարան պատմութիւն»-ում նույնպես գտնում ենք **քաղաք**-ին տրվող նման բացատրություններ. «Խորիէր ևա (Մուշեղ) ընդ իշխանս Յունաց և նոքօք ընդ կայսերն, թե պարտ է նոցա **քաղաք** մի շինել յերկիրն Չայոց, ի մի մի գաւառսն, որ մին մի **քաղաքս**, որ երկուս երկուս ամուր պարսպաւորս զօրանիտս հաստատել ընդ ամենայն երկիրն Չայոց» (5, ԼԳ): Թարգմանությունը. «Եւսև (Մուշեղ) էր խորհում հունական իշխանների հետ և նրանք էլ կայսեր հետ, թե պետք է իրենք Չայաստանում մի քաղաք շինեն. յուրաքանչյուր գավառում մեկական **քաղաքներ**, երկուական ամուր պարսպավորներ զորքի նստավայր հաստատել ողջ Չայոց երկրում»:

Ինչպես տեսանք, **քաղաք**-ը գրաբարում ուներ «ամրացված, պարսպված բնակավայր» նշանակությունը, մինչդեռ քրեթալերենում՝ «մարազ, պահեստ»:

Նման իմաստային զարգացում են ունեցել նաև այլ լեզուների «քաղաք» հասկացությունները: Ռուսերենի **город** բառը ծագում է հին **град** ձևից, իսկ նույն արմատից էլ ունենք «չրջափակել, արգելափակել» բայը, ինչպես նաև **преграда**՝ «արգելք, խոչընդոտ» և վերջապես **орогод**՝ «բանջարանոց» բառերը:

47. Ո՞Վ Է ԾԻՆԱԿԱՆՆԸ. ԾԵՆ, ԾԵՆՔ, ԾԻՆԵԼ

Երբ ընթերցում ենք մեր պատմահոր «Չայոց պատմությունը», հանդիպում ենք հետևյալ տողերին. «Քաղաքաց, **շինից**, դաստակերտաց» (Բ,7): Իսկ Բուզանդի մոտ. «Թողոր զքաղաքն, և եկեալ բնակէր ի միում շինաց»:

Այս նախադասությունները հուշում են մեզ, որ հինգերորդ դարում **չեն** բառն ուներ «գյուղ, ավան, բնակավայր» նշանակությունը, այս իմաստը հաստատվում է նաև շի-

ճական «գլուղացի, գեղջուկ» բառը, որ կազմված է շեն-ից: Սակայն նույն գրաբարում արդեն մենք հանդիպում ենք շեն-ի ուրիշ իմաստային զարգացումների և, որպիսիք են «Մինչդեռ շեն էր երուսաղեն» (Ջաք. է, 7), «Ձէշն երկիրն ամենայն թափուր և աւեռակ թողոր» («Ղեռ շեն են եկեղեցիք»), այս նախադասություններում շեն-ն ունի «բարեկարգ, կենդանությանը լի, մարդաբնակ, բարզավաճ, կանգուն» նշանակությունները:

Այսօր էլ առօրյայում ասում ենք՝ «շեն մնացեք», «շեն մարդիկ են», Վ. Փափագյանը սիրում էր ամեն պատեհ առիթով օգտագործել շենջող-ը:

Շեն-ից այսօր ածանցված ունենք շինություն և շենք՝ «կառույց», շինարարություն, շինարար, շինվածք և այլ բարդված ձևերը:

Դնարավոր է, որ այս շեն-ը լինի սկյութներից հայերին անցած բառերից մեկը, ինչպես տեղեկանում ենք Ստրաբոնի թողած տեղեկություններից: Նա պատմում է, թե ինչպես սակերը (սկյութների հետ Անդրկովկասում հաստատված ցեղախմբերից մեկը) Դայաստանում տիրացան ամենաբարեբր հողերից մեկին Քուռ-Արաքսի գետամիջուրն և այն անվանեցին Սակասն (սա, իհարկե, հունական տառադարձությանը է զրկված, քանի որ հունարենում բացակայում է շ հնչյունը): Մինչդեռ նույնը հայկական աղբյուրներում՝ «Աշխարհացոյցում», ունենք շակաշն տառադարձությանը: Դյուքըմանը և մյուս մասնագետները գտնում են, որ շեն-ը իրանական šyana բառից է ծագում: Բայց մի՞թե միայն շեն-ը: Սկյութա-սակական լեզուներից հայերենին բազմաթիվ այլ բառեր են անցել, որոնցից էլ նաև կոթ-ը, որի մասին կխոսենք հաջորդ գրույցում:

48. ԿՈՌ-ԵՐԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Երկար ժամանակ հայագիտության մեջ առեղծվածային էր մնում Սյունիքում տարածված կոթ բաղադրիչով տեղանունների ստուգաբանությունը: Ինչպես հայտնի է, Սյունիքում ունենք Անգեղակոթ, Բռնակոթ, Կոթեր, Կոթերք, Կոթավանք, Կոթի և Կոթ տեղանունները, որոնք Դայաստանի մյուս տարածքներում չեն հանդիպում: Եղել են կոթ բառի ստուգաբանության փորձեր, որոնք սակայն հեռու են եղել իրենց համոզիչ հիմնավորումներից: Ինչպես մենք հիշատակեցինք շեն բառի ստուգաբանության զրույցում, կոթ բառն էլ կապ ունի սկյութա-սակական ցեղախմբերի Դայաստանում հաստատվելու փաստի հետ: Ինչպես հունական պատմիչներն են վկայություններ թողել, Բակտրիցից այդ ցեղերը Դայաստան են եկել, և մի մասը հիմնավորվել է Դայաստանում ծուլվելով հայ ժողովրդի հետ: Բնակամբար, նրանք իրենց «հետքերը» պետք է թողնեին ամենաշատը տեղանուններում: Այդպես էլ կա: Կոթ բառի զուգահեռներ ենք գտնում պահպանված հեռավոր Բակտրիայում և Գնդկաստանի հյուսիսում, որտեղ նույնպես կոթ ձևով առկա է այն բազմաթիվ տեղանուններում: Կոթ իրանական լեզուներից փոշտուում, աֆղաներենում նշանակում է «գլուղակ, շեն, ավան, ամրոց»: Բազմաթիվ տեղանունների բաղադրիչ է kot-ը, ինչպես Puštunkot, Kalurkot, Tarinkot, Buronkot: Ջուղայեցի վաճառականներից Գ. Տեր-Դավթյանը այդ բառը գիտեր ջոթ ձևով, որ թողել է Դիշա-սակարանում. «Սապանո ծախեցի ինկլիզի Քոթուն» (էջ 288): Իսկ հնդկերենում կոթ նշանակում է «բերդ, ամրացված կետ, պահեստարան, առևտրական կենտրոն»: Այս նշանակությունները հետագայում բառի կրած իմաստային զարգացման արդյունք են:

49. «ԲՈՒՈՐԻ ԻՏԵՎԱՆԸ» ԿԱՍ ԻՆՉՊԵՍ ԵԿԵՂԵՑԻՆ ԳԱՐՁԱԿ ՀՅՈՒՐԱՆՑ

Դիմզերորդ դարից սկսած մեր մատենագրության մեջ գործածվում է պանդուկ բառը՝ «իջևան, անցորդների օթևան» նշանակությամբ: Օրինակ՝ «Եղեալ գնա ի վերայ գրաստու իւրոյ ած գնա ի պանդուկի մի» (Իր գրաստի վրա նրան դրած բերեց նա մի պանդուկի մեջ):

Այս բառը իր զուգահեռն ունի նաև արաբերենում funduk (ֆունդուկ) հնչմամբ, որից հայերը փոխ են առել երկրորդ անգամ ֆնդուկ ձևով, իհարկե 12-րդ դարից առաջ, քանի որ ֆնդուկ-ի փոխարեն ունենք առանց ֆ-ի փնդուկ ձևը: Իսկ ո՞վ է ումից վերցրել այս բառը, հայերն արաբների՞ց, թե՞ ընդհակառակը: Ոչ այս, ոչ այն: Երկուսի համար էլ փոխատու այն լեզուն է, որով բացատրվում է բառը: Այն հունարենից է գալիս, ուր pandokeion նշանակում է «ամենաընկալ» կամ «ամենի ընդունաբան» pan՝ «բոլոր, համա-» և dekomai՝ «ընդունել» բառերից, ինչպես ունենք դարձյալ հունարենից pantheon՝ «բոլոր, ամբողջ աստվածներից» pan՝ «պան» և teon՝ «աստված» բառերից, որ հայերեն բարգձանվում են դիցակաճառ, ամենադից: Գնեց պանդուկ բառն էլ հունարենում Նախապես «եկեղեցի» է նշանակել: Օրինակ՝ «Տարա մտ գնա ի պանդուկի մի պանդուկի եկեղեցի բարգձանի» (Տարալ նրան մի պանդուկի մեջ դրեց. պանդուկի եկեղեցի է թարգմանվում): Զե՞ որ տաճարն էլ բոլորին ընդունող Աստծո տուն էր:

Ներկայումս պանդուկ բառը, նրա հետ էլ պանդուկապետ, պանդուկապան և նման ձևերը ավելի շատ գործածվում են արևմտահայերենում, իսկ արևելահայերենում հիմնականում հյուրանոց-ը, որ ռուսերենի гостиница (սա էլ գերմաներենի Gast՝ «հյուր» բառից է ծագում) բառի թարգմանությանը է ստեղծված:

50. ՊԱՂԱՏԸ ՀՈՍՄԻՑ ՄԻՆՉԵԿ Ո՞Ր Է ՀԱՍԵԼ

Դավանաբար այսօր աշխարհում չկա մի լեզու, որը չօգտագործի պալատ բառը: Ուսական ցարերն ունեին Ամառային ու Չմռային պալատներ: Անգլիայում գոյություն ունի Դամայքների պալատ, Լորդերի պալատ: Ֆրանսիական թագավորների Լուվրի պալատը վեր է ածվել բանգարանի: Թագավորները, առանց բացառության, բնակվում էին շքեղ պալատներում: Պալատ բառը գերազանցապես գործածվել է «ապարանք, արքունիք թագավորանիստ և շքեղ կառույց» նշանակությամբ: Մեր օրերում ևս, երբ ցանկանում են ընդգծել որևէ մեկի ունեցած շքեղ տունը, ասում են. «Տուն հո չէ, պալատներ է սարքել»: Բայց և այնպես շարունակում ենք անվանել Գրասպաստ կամ Գրքերի պալատ, Չափ ու կշիռ պալատ, Ձիթապալատ, Շախմատային պալատ, Պիոներական պալատ (կամ Պիոներների պալատ), Երիտասարդական պալատ (և նման այլ արտահայտություններով) կոչել այն շենքը, որը հատկացված է որևէ կարևոր նպատակի: Մինչդեռ պալատ բառը ծագում է Դոմի Palation բլուրի անունից, մի քաղամասի անունից, որտեղ շքեղ առանձնատներ էին պատրաստել հռոմեական կայսրերը՝ Կեսարը, Ներոնը, Օկտավիանոսը, Տիբերիոսը և այլք: Եթե եվեթրիս Կեսարացին գրում է, որ «Սկասմա կայսրն ի Պաղատան», ապա նրա թե՛ նկատի ունի նրա ապարանքը, այլ և այն վայրը, որը կոչվում էր Պալատն կամ Պաղատն: Այս բլրի վրա մեկը մյուսից շքեղ և ճաշակով հռոմեական կայսրերը կառուցել էին տվել իրենց ապարանքները, որի պատճառով ժողովուրդը Պալատին՝ յան կամ Պալատի առանձնատներ ասելիս պատկերացնում էր միայն և միայն շքեղ

կառույցներ, ապարանքներ և արքունիք: Ուստի պալատ հասկացության վերածվեցին հետագայում նաև Պալատիոնյան բլուրից շատ հեռու կամ որևէ տեղում կառուցված արքունիքները, ապարանքները, ոչ հասարակ, շքեղ շենքերը:

51. ՍԱ ՓՈՂՈՅ Ե ԵՎ ՈՉ ՇՈՒԿԱ...

Սեկ անգամ ականջալուր եղա փողոցում թաղային միլիցիոների դիտողությանը, որը, զայրանալով լավաչ վաճառող մի կնոջ վրա, ասաց.

— Այստեղ շուկա չէ, սա փողոց է, հասկացիր, լավաչը փողոցում չեն վաճառում, այլ շուկայում, տար շուկա:

Ես ժպտացի և դեպի վայրից հեռացա խորհրդածելով, թե ինչպես են դարերը փոխում բառերի իմաստները կամ ավելի ճիշտ՝ կյանքը: Եթե ասորերեն իմանար (կամ արամեերեն) միլիցիոները, ապա կհասկանար, որ ինքն իրեն փաստորեն հակասում է, երբ փողոցից շուկա է հրավիրում լավաչ վաճառողին: Չէ՛ որ ինքը փաստորեն ասում է փողոցը փողոց չէ, որովհետև արամեերենում *šuka*, աքքադերենում *suqa*, արաբերենում *suk* նշանակում է հենց «փողոց»: Այսինքն՝ նա առաջարկում էր լավաչը փողոցից դարձյալ փողոց տանել: Գետագայում, աստիճանաբար իր նախկին նշանակությունից հեռանալով, շուկան ձեռք բերեց «վաճառահրապարակ, ամուժախի վայր» նշանակությունները: Նախապես առևտուրը կատարվում էր հենց փողոցներում կամ լայն փողոցում, որն էլ հենց հրապարակի դեր էր կատարում: Եվ այսպես, աստիճանաբար մտացության մատուցեց բառիս բուն նշանակությունը: Գենց գրաբարում հանդիպում ենք շուկա բառի գործածությանը ոչ փողոց նշանակությամբ կամ փողոցի հետ կողք կողքի: Օրինակ՝ Ուտայեցից գրում է. «Սա սպանալի Շուկայ փողոցին Անտիոբայ» (Սա սպանվեց Անտիոբի Շուկա փողոցում, այսինքն վաճառատների փողոցում):

52. ԵԹԵ ԿՐՊԱԿ Է, ՊԻՏԻ «ԼԱՎ ԶԵՎԱՎՈՐՎԱԾ» ԼԻՆԻ

Պահլավերենի *kerp*՝ «մարմին, ձև, կերպ» բառը հայերենում օգտագործվել է մի քանի նշանակություններով: Օրինակ՝ «Մի կերպ ազատվեցի շատախոսից» (մի հնարով, մի ձևով): Թունանյանի «Թագավորն ու չարչին» ստեղծագործության մեջ կարդում ենք.

Չարչու կերպ մտած, ինչպես վիշապ օձ,
Անցնում էր ինքը՝ Շահ Աբաս արքան:

Այստեղ՝ «տարագ, կերպարանք»: Գրաբարում **ծառայի կերպ, կանացի կերպ, կերպիվ վիշապ, բարեշուք կերպից, կերպ մարդոյ** և նման ձևերում դարձյալ «ձև, տեսք, կերպարանք» իմաստներն են տիրում:

Ունենք նաև **կերպարանք**՝ «դեմք, արտաքին տեսք, նկարագիր, պատկեր» նշանակություններով, գրաբարից **կերպս կերպս**՝ «զանազան, այլնայլ ձևերով, տեսքով» կամ **կերպարանել**՝ «ձևավորել, տեսք տալ, հարդարել» և այլն: Այս բոլորն անհրաժեշտ է իմանալ, որպեսզի խնդրո առարկա բառն էլ հասկանանք: Չէ՛ որ հայերենում մենք ունենք մի բառ՝ **կրպակ**՝ «խանութ, փողոցի խանութ» նշանակությամբ, որը արյունակից է կերպ-ի հետ:

Ոչ, թյուրիմացություն չկա, և ազգակցությունն իսկապես երկուսի միջև առկա է: Բանն այն է, որ այս կրպակ բառը հայերենը դարձյալ պահլավերենից է փոխ առել,

իսկ հայտնի է, որ պահլավերենի *kurba* կամ *kuiba* ձևերն էլ ծագում են իրանական *kurba*՝ «ձևավորված, կերպավորված, տեսքի բերված» բառից: Այսինքն՝ հայերենի **կրպակ** (կամ և **կուրպակ, կողպակ** գրչությունները, որոնք էլ հավանաբար ծագում են *kuiba* տարբերակից) բառի հիմքն է կազմում **կերպ, կրպ** արմատը: Իսկ ինչո՞ւ խանութը հանկարծ կոչվեց **կրպ-ակ**: Որովհետև վաճառողները գեղեցիկ դասավորում և տեսքի էին բերում վաճառատներին հաճախորդներից գրավիչ դարձնելու համար: Այստեղից էլ գեղեցիկներն ապահավեցավ հա-kerapta՝ «լավ ձևավորված» բառը, ինչպես նաև ամսակրիտի *kerp*՝ «կերպարանք, գեղեցկություն», իսկ լատիներենում՝ *corpus*՝ «մարմին» զուգահեռները:

Գետաքերությունից գերծ չէ բերել այստեղ միջնադարյան լեզվաբաններից Գ. Տաբևադու «ստուգաբանության» փորձը: Նա կարծում էր՝ **կուրպակը** (կրպակի տարբերակն է) առաջացել է **գող** և **բակ** բառերից, որովհետև վաճառողը «գող» է և «գրկող», «վաճառ այն կոչի բնակությունն նոցա կողբակ»: Իհարկե, այստեղ մենք գործ ունենք այսպես ասած ժողովրդական կեղծ ստուգաբանության հետ, ուր հաշվի չեն առնված հնչյունական օրենքները և պատմական իրողությունը:

53. ԱՆԱՏՈՍԻՎ ԵՎ... ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՍ ԼԵԶՈՒ ՍԱՐՍԻ ՍԱՍԵՐԻՑ

ՀԱՐՎԻՐ ԿՂՊԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴԱՐՉՎԱԾ(Ք)ՆԵՐ

Նոր բառերի կերտման զանազան միջոցներ գիտեն աշխարհի լեզուները: Բառակերտման ասպարեզում մեծ դեր ունեն մարմնի մասերը: Մարմնի մասերի անունները որևէ բայի հարադրությամբ ստեղծում են նոր իմաստներ: Նման կապակցություններից առաջանում են դարձված(ք)ներ, որոնք կորցրել են շարահյուսական նշանակությունը և ձեռք են բերել իմաստային ամբողջական միավորի արժեք: Մարմնի մասերից հատկապես նոր իմաստներ կերտողների դերում հանդես են գալիս **ճակատը, գլուխը, սիրտը, ձեռքը (ձեռք), ոտը (ոտը), աչքը, բերանը, լեզուն, քիթը, ականջը, կողը, երեսը, քիկունքը, մատը** և այլն: Դայերենն այս կարգի հարադիրներով կերտված բառերի մեծ պաշար ունի: Որոշ դեպքում այս հարադիրները, կորցնելով իրենց անկախությունը, միածուլվել են կազմելով կցական բարդություններ: Միայն **գլուխ** բառով կազմված հարադիրների և բարդությունների թիվը անցնում է 300-ից: Դե, ինքներդ դատեցեք, եթե մեկ մարմնի մասից կազմված բառերի թիվը անցնում է 300-ից, ապա որքա՞ն նոր բառեր են կազմվում մարմնի բոլոր մասերի անուններից միասին վերցրած: Ստորև կերբենք ամենատարածված և ամենագործածական արտահայտություններից օրինակներ:

54. ԳՆՈՒՄ

Գլուխ բառի օգնությամբ կազմվել են հետևյալ արտահայտությունները.

- Գլուխ բերել** – ավարտել, վերացնել, կատարել:
- Գլուխ տանել** – ծանոթացնել:
- Գլուխ տալ** – հարգանք մատուցել, բարևել, ողջունել:
- Գլուխ գովել** – պարծենալ:
- Գլուխ եղել** – հավատացնել, խաբել, միամտացնել, մոլորեցնել:
- Գլուխ դնել** – մի բանի հետամուտ լինել, նվիրվել, գրավել:

Գլուխ հանել – հասկանալ, ավարտել, հասնել վերջին, ավարտին:
Գլուխ ցավեցնել – ծանծուրույթ պատճառով:
Գլուխ ծնծել – լալ, ողբալ, զղջալ:
Գլուխ ծռել – աղաչել, խոնարհվել մեկի առաջ, խնդրել:
Գլուխ բռնել – չաշխատել, ձևացնել:
Գլուխ պահել – 1. մի կերպ ապրել, գոյությունը պահել, 2. աշխատանքում թերա-
 նալ, ձևացնել լուրջ աշխատող:
Գլուխ կախել – ամաչել:
Գլուխ ուտել – մահվան պատճառ դառնալ, մեկին մահվան հասցնել կամ
 սպանել:
Գլուխ կտորել – 1. շատ մտածել, տանջվել որևէ հարցի լուծման համար, առեղծ-
 վածի բացահայտման համար չարչարվել, 2. մեկի գլուխը քարոզել:
Գլուխը կորցնել – չփորձել, անելանելի վիճակի մեջ ընկնել:
Գլուխը կապել – 1. հիմարացնել մեկին, 2. ամուսնացնել, 3. որևէ շորով գլուխը
 կապել և այլն:

55. «ՁԵՌՔ» ԲԱՌԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ...

Ձեռքը լեզվի հետ զուգակցված մեր մտքերն է արտահայտում: Երբեմն օտար-
 ների կամ այլախոսների հետ բացատրվելու ամենահիմնական, ամփոխարինելի
 միջոցը **ձեռքն** է: Սակայն այդ մասին չէ, որ կուզենայինք հիշեցնել: Դին սերունդի
 մարդկանց մոտ մինչև հիմա էլ գործածական է «մի ձեռք շոր եմ առել» կամ «մի
 ձեռք տեղաշոր գցեցի, մի ձեռք էլ առա՞մք»: Նման արտահայտություններում
ձեռք–ը իր ուղղակի նշանակությամբ չի գործածվում, այլ փոխաբերական «կոմպ-
 լեկտ, սպասք, համալիր» իմաստներով: **Ձեռք**–ը գործածվում է նաև «անգամ, մեկ
 անգամ» նշանակություններով, և զարմանալիորեն կապ կա շուներերենից
 հարևան ժողովուրդներին, արքադերենից խեթերենին անցած **ձս**–**ձեռք** «անգամ»
 արտահայտությունների իմաստների միջև: 3 **ձս** նշանակում է «երեք անգամ»: Այս
 նշանակություններից զատ **ձեռք**–ը հայերենում, հարադիրների հետ միասին, եր-
 բեմն նաև անկախաբար, արտահայտում է 300–ից ավելի նշանակություններ,
 որոնցից ամենատարածվածներն են.

Ձեռք քաշել – 1. հրաժարվել, 2. ստորագրել:
Ձեռք առնել – ծաղրել (կամ ձեռ առնել):
Ձեռք բերել – գտնել, ճարել, հայթայթել:
Ձեռք մեկնել – օգնել, օժանդակել:
Ձեռք խնդրել – ամուսնության առաջարկություն անել:
Ձեռքը բաց – առատաձեռն (հենց առատաձեռն արտահայտությունն էլ նույն
 նշանակությունն ունի):
Ձեռքը թեթև – բարեհաջող:
Ձեռքը կարճ – աղքատ:
Ձեռքը երկար – ունևոր, ուժեղ, համարձակ (նաև զող):
Ուրիշի ձեռքին նայել – ակնկալել մեկի նյութական օգնությունը:
Ձեռքից գալ – ի վիճակի լինել:
Ձեռքերը լվանալ – հրաժարվել, մի կողմ քաշվել:
Ձեռքից գնալ (ձեռից գնալ) – շարքից դուրս գալ, ելնել օրինավոր մարդկանց
 շարքերից, մաշվել, հյուժովել, փչանալ, անհուսալի դառնալ և այլն:

Ձեռք տալ – 1. դիպչել, 2. ձեռքով բարևել, 3. թեթևակի դիպչել, որևէ բան
 վերցնել:
Ձեռքի տակ ունենալ – որևէ պահածո, իր, ուտեստեղեն կամ առարկա ունե-
 նալ պատրաստի պահած:
Ձեռնտու – մատչելի արժեքով, հարմար:
Ձեռներեց – նախաձեռնող, հմարամիտ:
Ձեռնպահ – չեզոք, ուրիշի գործերին չխանավող:
Ձեռնարկել – սկսել որևէ բան, որևէ գործ կամ աշխատանք (նաև ձեռնամուխ
 լինել):
Ձեռնունայն – դատարկ ձեռքով:
Ձեռնադրել – օծել:
Ձեռակերտ – մարդկային համճարի կամ ստեղծագործության արդյունք (կամ
 հակառակը՝ անձեռակերտ):
Ձեռաց – իսկույն և այլն, և այլն:

56. ԱՉՔ ԿԱՍ ԱԿՆ

Դայերենի **այք** և **ակն** բառերի և նրանց հարադրվողներից կազմված բարդու-
 թյունների թիվը անցնում է 400–ից: Եթե հաշվի առնենք, որ հարադիրներից շատերն
 էլ ունեն մի քանի նշանակություն, ապա կստացվի այնպիսի մի թիվ, որը գերազան-
 ցում է 2000–ը, ստորև բերենք ամենաշատ տարածված և ամենագործածական ար-
 տահայտությունները.

Այք բացել (կամ այք բանալ) – 1. աչքերը բացել, գիտակցել, հասկանալ, հա-
 ստունաալ:
Այք ածել – շուրջը նայել, որոնել, դիտել, զննել:
Այքը բռնել – 1. հավանել, դուր գալ, 2. չար աչքով տալ:
Այքը պաղել – հյուր նախագուշակել:
Այք չունենալ – 1. չհավանել, 2. ուրիշի ունեցվածքը կամ որևէ բան չցանկա-
 նալ:
Այքի զարնել – նկատվել, զանազանվել:
Այքի լույս թափել – շատ կարողալ, գրել, մանրակրկիտ և հոգեմաշ աշխա-
 տանք տանել:
Այքին թող (կամ մոխիր) փչել – խաբել:
Այքի սուրճան թոցնել – վարպետ գող լինել:
Այքից հանել – անտեսել, զգվել, ծանծրանալ, հրաժարվել, նաև մեկի սերը,
 հակումը մի բանի նկատմամբ վերացնել:
Այքը մազ բուսնել – երկար սպասել:
Այքի որոզ կտորել – վախեցնել (մի քիչ քնել):
Այքի փուշը դառնալ – ատելի դառնալ:
Այքը ջուր իջնել – շատ երկար սպասել:
Այքով տալ – չար աչքով վնաս պատճառել:
Այք գոցել – չտեսնելու տալ:
Այքով այք չունենալ – աստիկ առել:
Այքի անցկացնել – թեթևակի նայել, կարողալ և այլն:

57. ԲԵՐԱՆ

Բերան անել – 1. հիշատակել, 2. անգիր անել:
Բերնի զույն իմանալ – կարծիքը, մտադրությունը իմանալ:
Ափ ի բերան – զարմացած:
Բերան ծռել – խնդրել:
Բերան փակել – կաշառել, լռեցնել:
Բերանը ճոռթած – զագրախոս, ցինիկ:
Բերանն ընկնել – դառնալ բամբասանքի առարկա:
Բացբերան (բերանը բաց) – ոչ զաղտնապահ և այլն:

58. ԼԵՉՈՒ

Լեզուն կարծ – մեղավոր, անհամարձակ:
Լեզուն երկար – քիչուներով և իրավացի:
Լեզու հանել – աղաչել, խնդրել:
Լեզու բռնել – կռվի ժամանակ հակառակորդի կողմից գերել մեկին:
Լեզուն բերնուն չտեղավորել – զաղտնապահությունից զուրկ լինել և այլն:

59. ԶԻՐ

Քիթ խոթել (ուրիշի գործերի մեջ) – խառնվել իրեն չպատկանող գործերի մեջ:
Քիթ կախել – տխրել:
Քթից բերել (նաև քթից հանել) – վրեժ լուծել, հանդիմանել:
Քթին չքսել – իր ճաշակից ցածր համարել:
Քիթ ու մուտք անել – մեկին արհամարհել, հետը չխոսել և այլն:

60. ՈՏՔ

Ոտքի տակ փորել – մեկի նկատմամբ դավեր նյութել:
Ոտքը ոտքին զցել – հանգստանալ, ծուլանալ:
Ոտից զլուխ – ամբողջովին, համակ:
Ոտներն ընկնել – աղաչել, խնդրել:
Ոտները ձգել – մեռնել:
Ոտնձգություն անել – մեկի իրավունքների սահմանն անցնել և այլն:

61. ՍԻՐՏ

Սիրտ առնել – համարձակվել:
Սիրտ տալ – քաջալերել:
Սիրտը տեղից հանել – վախեցնել:
Սիրտը շահել – մեկի համակրանքը շահել:
Սիրտ չունենալ – տրամադրություն չունենալ և այլն:

62. ՃԱԿԱՏ

Ճակատը բաց – պարզերես:
Ճակատ տալ – պայքարել, դիմադրել, համառությամբ գործը զլուխ բերել և այլն (Դիշենք նաև ճակատամարտը):

63. ԱԿԱՆՏ

Ականջ չկախել – ուշադրություն չդարձնել:
Ականջի ետև զցել – հետաձգել, ամուշադրության մատնել:
Ականջը կախ, ականջը դիմք – հանգիստ:

64. ԹԵ ԻՆՉՊԵՍ ԽՈՍՐ Է ԿԵՐՏԿՈՒՄ ԵՎ ԶԱՐԻՑ

Քարից մարդն առաջին գործիքներն է պատրաստել: Քարից երկանք, աղորիք, սանդ, գուշ, քրատար խողովակ, նստարան, տուն, պարիսպ, սալահատակ, սահմանացույց, կորոզ և անգամ արհեստական թել է պատրաստել մարդը: Բայց ի՞նչ գործ ունի քարը լեզվի հետ: Այո, քարը մասնակցում է նաև խոսք կերտելուն: Խոսենք փաստերով:

Գայթակության քար արտահայտությունը մտել է աշխարհի շատ լեզուների բառապաշարի մեջ, որն օգտագործվում է «սայթաքելու, վրիպումի, մոլորվելու, սխալվելու» նշանակությամբ: Կոմունիզմի գաղափարը **գայթակության քար** դարձավ շատ ժողովուրդների համար: Դայերենը բազմաթիվ արտահայտություններ ունի քար-ով կերտված, որոնցից մեկն է մի քանիսը:

Կտուրը քար զցել (կամ քարը կտուրը զցել) արտահայտությունը նշանակում է «մի բան ակնարկել, մի բան հասկացնել, մի բան հիշեցնել, անուղղակի ձևով ակնարկել մի բան և շեղել զրույցի ընթացքը»: «Կուժը ես չեմ կոտրել, զուր իմ կտուրը քար մի զցիլ», «Նա իմ կտուրն է քար զցում, յանի թե ես եմ գողացել իրենց հավերքը» (Ա. Ամատունի, Դայոց բառ ու բան, էջ 376–377): «Դու ինձ ուղիղն ասա, խոսքը կտուրը մի զցիր, ո՞վ կերավ շոկոլադը»:

Քարը քարին դնել՝ «կառուցել, շենացնել» արտահայտությունն օգտագործվում է նաև փխտական եղանակով՝ **քարը քարին չդնել** ձևով, որի իմաստն է «ոչինչ չանել»:

Կա նաև քարը քարի վրա չթողնել՝ «ավերել, քար ու քանդ անել» նշանակությամբ: Դիշենք Իսահակյանի «Էլ ինչո՞ւ ես քարը թողնում քարի վրա, քար աշխարհ» տողերը:

Կա նաև քարը պարտեզ զցել (նետել) արտահայտությունը, որը նշանակում է «ակնարկել, հիշեցնել, վիրավորել, հանդիմանել անուղղակի ձևով»: «Ինչո՞ւ ես քարը իմ պարտեզը զցում, գտիր քո թշնամուն, քարը սխալ պարտեզ ես նետում»:

Սրանք դեռ ոչինչ, կա նաև **փեշի քարը թափել** արտահայտությունը, որ որոշ բարբառներում գործածական է **փեշի քարերը վեր ածել** կամ **փեշի քարերը վեր թափել** ձևով. նշանակում է՝ «հրաժարվել իր բռնած դիրքից, չհամատեղ, անիմաստ համառությունից ետ դառնալ, լսել դիմացինի խորհուրդը», ըստ որում, այս արտահայտություններով ոչ միայն կանանց են դիմում, այլև տղամարդկանց, և ոչ ոք չի վիրավորվում, որ իրեն փեշ ունեցող են անվանում, օրինակ՝ «Այ տղա, դու արի քարը փեշիցդ վեր ածա, գետը գնալ մի» (Գ. ճուղուրյան, Մոռացված աշխարհ, Ա, 115):

Դապա զլուխը քարը արտահայտությունը, որ որոշ բարբառներում **զլուխը քարը տալ, զլուխը քարով տալ, զլուխը քարին տալ** ձևով է գործածվում, ունի «պատժել

սխալի համար» նշանակությունը, որը հիմնականում արհամարհական վերաբերմունքի դեպքում է գործածվում: Եվ այսպես, **քարը** ոչ միայն գայթակղում է, այլև լեզու է ստեղծում:

65. ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Մարդը մտածել է անուններ տալ ոչ միայն իրեն շրջապատող բույսերին, կենդանիներին, գետերին, ասրերին, այլև իր զավակներին: Իսկ ինչպես՝ ս ծագեցին անձերին տրվող անունները: Եթե շներին, ոչխարներին, կովերին միմյանցից զանազանելու համար տալիս էին Ենկլիկ, Թուխիկ, Սուսկ, Թմրլիկ անունները, ապա ինչո՞ւ չէր կարելի նույն մակերևույթով զանազանել մարդկանց: Եվ այս իսկ պատճառով էլ նույն անուններից շատերը տրվեցին նաև մարդկանց: Այսպես, օրինակ՝ մի երեխա մյուսներից ավելի բույս մաշկի գույն ուներ՝ կոչեցին Թուխիկ, եթե մի աղջնակ շատ պայծառ հայացք կամ աչքեր ուներ, նրան կոչեցին Պայծառ, մեկը, որ ավելի անաչկուտ էր ու համեստ, կոչեցին Դամեստ և այլն. իսկ տղաներից շատերին անվանեցին Եզնակ (կամ Եզնիկ), Կորյուն, Ցլիկ և այլն, որպեսզի մեծանալով նրանք այդ կենդանիների նման ուժեղ լինեն:

Անձնանունների մի խումբն էլ առաջացել է ծնողների ցանկություններից, դրանք բարի կամեցողություններ են իրենց երեխաների ապագան բախտավոր, երջանիկ տեսնելու նկատառումներով: Այստեղ նաև տեսնում ենք հավապաշարուններով մարդուն, որի կառնիքով՝ մարդուն տրվող անունը ինչ-որ չափով կարող է նրա ճակատագրում դեր խաղալ, ուստի ստեղծվեցին Երջանիկ (ի դեպ, հույները նույնպես դնում էին այդ անունը՝ Մակարիոս, Մակար, իտալացիք՝ Ֆելիքս՝ ֆելիչե՝ «եբրացակություն» բառից), Նահապետ, որպեսզի այդ անունը կրողը մի նոր տոհմի առաջնորդ դառնար, Ազատ, որպեսզի անկախ, ոչ դքի մեքակա չլիներ և այլն: Դայերեն Փավստուն էլ ծագում է լատիներեն *Faustos*-ից:

Պատկարազային հասարակության մեջ անուններն էլ կրում էին դասակարգային ծագման կնիքը: Դասարակ ժողովրդից դիրքով բարձր գտնվողները ցանկանում էին տարբերվել նաև անուններով: Ազնվականները, բարձրաստիճան անձինք իրենց անուններին սկսեցին ավելացնել **վեսնությունն** ու ազնվականությունը ընդգծող մակերիքներ: Այդ մակերիքները պաշտոնի, զբաղեցրած դիրքի (հոր, պապի), երբեմն նաև մասնագիտության, արհեստի, զբաղմունքի անուններն էին, որ «կայցուն» էին ազգանուններին, տոհմանուններին: Օրինակ՝ պարզ ազգանունների կողքին հայտնվում են **մելիք, տեր, ամիր, աղա, շահ, խան**, պաշտոն նշանակող այլ բառեր, և ծնվում են **Մելիք-Չովհաննիսյան, Տեր-Դավորյան, Ամիր-Ավագյան, Մուրադխանյան, Նույնիսկ Աղախանյան, Ամիրխանյան, Շահ-Արմեն** և այլ նման ազգանուններ, որպեսզի, օրինակ, սովորական Դովհաննիսյանից մելիքության պաշտոնի հասածները **Մելիք-Չովհաննիսյանները**, տարբերվեն: Նույն ձևով էլ պաշտոն բնութագրող բաղադրիչներ ունեցող ազգանունները՝ **Տեր-Դավորյանները, Մուրադխանյանները** և այլն, տարբերվեն սովորական Դավորյաններից, Մուրադյաններից:

Մեծ տարածում են գտել նաև թագավորների կողմից սիրված կաշտոնյաների տոհմի արտոնյալ կացությունը բնութագրող ազգանունները, որպիսիք են՝ **Շահագիզյան**՝ «շահին սիրելի, շահին բանակազին», **Շահվերդյան**՝ «շահից շնորհված, շահից տրված», **Շահպարտյան**՝ «շահի պարոններից» կամ «շահի համար պարոնության արժանի» ցեղից և այլն, **Աղաջանյան**՝ «աղայի հոգի ունեցող» և այլն:

Մի խումբ ազգանուններ էլ առաջացել են արհեստներով զբաղվող գերդաստաններ

րին բնութագրելուց, որպիսիք են՝ Բրուտյան, Մազմանյան, Նալբանդյան, Դերծիկյան, Դուլիկյան, Դարբինյան, Լալուտյան, Ներկարարյան, Լուսարարյան, Ժամկոչյան, Քոչյան, Կոչկարարյան, Դացագործյան, Մեղվապանյան, Դպիրյան, Վարդապետյան և այլն:

Ինչպես Դ. Աճառյանն է ընդգծում, **օտար անունների մեծ սիրահարը քարձր** դասակարգն է, իբրև փայլի և նորածնության հետևորդ՝ ետ չմնալու նպատակով տիրապետող ազգից, նրա նիստուկացից, սովորություններից, նրա խոսած լեզվից ու նրա կրած անձնանուններից: Եվ այսպես, իրանական Արշակունյաց դինաստիայի տիրապետության ժամանակ արդիական էր դարձել իրանական-պարսկական անուններ կրելը, քրիստոնեության մուտքից հետո՝ աստվածաշնչական, եբրայական և աստ-հունական անունները, որպիսիք են՝ Պետրոս, Պողոս, Գևորգ, Կիրակոս, Ատեփան, Անաստաս, Ազապի և այլն՝ հունարենից, եղիչ, Արշամ, Գաղիշ՝ ասորերենից, Շուշան, Սամուել, Դանիել, Իսրայել, Սերոբ, Մարիամ, Չաքարիա, Ազարիա, Գերսամ և այլն՝ եբրայերենից:

Դայ ժողովրդի պատմության յուրօրինակ ընթացքով է պայմանավորված նրա անձնանունների և ազգանունների մեջ մի քանի շերտերի գոյությունը:

Այսօրվա Սուրենները թեթև զարմանա, որ իրենց անունը «այնքան էլ հայկական չէ», քանի որ այն իրանական փոխառություն է, սակայն ներկայումս ոչ մի պարսիկ Սուրեն անունը չի կրում, որովհետև իսլամն ընդունելուց հետո Իրանում տարածում գտան արաբական անձնանունները: Այսպես, մոռացության մատուցվեցին Իրանում բուն իրանական ծագում ունեցող անձնանունները՝ տեղի տալով իսլամական ծագում ունեցողներին: Ուստի հայ Սուրենները թող չզարմանան, որ այդ անունը թեև Իրանում չկա, սակայն շատ առատորեն տարածված է Մոնղոլիայում, և այնտեղ կարծում են այն բնիկ մոնղոլական: Մոնղոլներն էլ, հայերն էլ փոխ են առել այն պաղիավերենից:

Այլ հարց է, թե ինչպես յուրաքանչյուր լեզու միևնույն անունը տարբեր ձևով է «ընկալում»՝ հնչյուն է փոխ առնված բառը իր լեզվի արտասանական կանոններով: Այս իսկ պատճառով էլ շատ հայեր կրում են միևնույն անվան ֆրանսիական տարբերակը, ինչպես, ասենք, **Դավորի** փոխարեն **Ժակ** և այլն, երբեմն նույնիսկ առանց գիտակցելու՝ ընկալելով դրանք որպես բոլորովին նոր անուններ: Մեր բալուռ է եղելու եղբայրներից մեկը կրում էր **Ժակ** անունը, իսկ երբ ծնվեց փոքր եղբայրը, նրան էլ պապի հիշատակին կոչեցին **Դավոր**: Քրիստոնեության մուտքից հետ միասին սեմական ծագում ունեցող բազմաթիվ անձնանուններ տարածվեցին Քրիստոսի հավատքն ընդունած ժողովուրդների մեջ: Սեմական ծագում ունեցող անունների մեծ մասը եբրայական հորոշրջամբ էին, իսկ մի մասն էլ՝ հունական, քանի որ շատ ժողովուրդներ Աստվածաշունչը թարգմանել էին հունական օրինակից:

Ժողովուրդները անձնանունները փոխ են առնում մեծ մասամբ կենդանի մերձեցումների ժամանակ, սակայն երբեմն, հարևանի լեզուն չհասնալով, անունը փոխ է առնվում հոլովված ձևով, ոչ թե ուղիղ: Սկս մի քանի օրինակներ: **Լոռիա-Մելիքով** հայերի մոտ տարածված ձևը ոչ այլ ինչ է, եթե ոչ Լոռի տեղանվան **սեռական հոլովը** վրացերեն, որով որոշ անունն ընկալվում է «Լոռու Մելիքյան» նշանակությամբ (իսկ մելիք-ն էլ նշանակում էր «կառավարող», այսինքն՝ Լոռիի կառավարիչ): Որպես ուղիղ ձև է ընկալվում նաև հայերի մոտ մեծ տարածում գտած **Վարանցով** ազգանունը: Թեև Վարանցովը ռուսերենում ազգանուն է, սակայն հայոց մոտ ընկալվում է անվան ձևով: Այնքան մեծ էր երեխաներին ապագայում փոխառաբա փորձելի փառքին հասած տեսնելու ծնողների ցանկությունը, որ զանգվածորեն դնում էին զավակների վրա Վարանցով անուն-ազգանունը: Անուն-ազգանուններ էին նաև **Ֆրունզե, Ֆրունզիկ, Զապան, Շահումյան** անունները:

Երբ պարսկական թագավոր Արշակը իր եղբորը՝ Վաղարշակին, հայոց գահին թագնեցրեց, արքունական պաշտոնների մեծ մասը աստիճանաբար անցան պարսիկների կամ պարսկական ծագում ունեցող տոհմերի ձեռքը: Հայկական անձնանունները տեղի տվին պարսկականների առջև, սակայն ոչ բոլոր անուններն էին տրվում հասարակ մահկանացուներին: Այսպես, օրինակ՝ Արշակ հատուկ անունը կրել են հերթականությամբ պարթևական 31 թագավորներ՝ Դարեհը, Տրդատը, Արտավազը, Բակուրը, Վաղարշը և այլն: Այսինքն՝ Արշակ բառը, արդեն կորցնելով իր նախկին իմաստը, ձեռք է բերել «թագավոր, արքա» նշանակությունը: Այդ իսկ պատճառով էլ հայ մատենագրության մեջ հայ թագավորներից բացի այլ անձանց տրվող Արշակ անվան չենք հանդիպում: Միայն վերջին դարերում է, որ Արշակ անվամբ հասարակական կոչելի կոչելի կապարակ մահկանացուներին ևս, երբ արդեն չկային իսկական Արշակները կամ Արշակունիները:

66. ԵՁԵ ԹԱՐԳՍԱՆՎԵՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ...

Երբեմն մեր պատահիներն ու աղջիկները մեծանալով սկսում են դժգոհել իրենց տրված անուններից: Նրանք ֆիլմերի, կարդացած գրքերի ազդեցության տակ սկսում են հրաժարվել իրենց անուններից և ծանրթեղի խնդրում են (անգամ հայտարարություն են տալիս՝ պաշտոնական ձևով զազում արձանագրելով), որ իրենք այլևս Վարդուշ կամ Վարդիշաղ, Շաղիկ, Անթառան, Մանուշակ, Ջնրուխա, Ջաքել չեն, այլ Ռոզալիա (կամ Ռոզալի), Ֆլորա, Վիոլետ, Եսմերալդա (կամ Էսմա), Բելա (կամ Իզաբելա):

Նրանք հին հայկական կամ արդեն հայացած անուններից հրաժարվում են և ընտրում են **Վիոլետա** եվրոպական տարբերակը՝ առանց գիտակցելու, որ այն նույն Մանուշակն է և նույնիսկ փոքրացուցիչ «իկ» ածանցով նշանակում է Մանուշակիկ, երբ իրենք վաղուց արդեն Մանուշակ են և ոչ Մանուշակիկ:

Կամ հայացած **Ջաքել** անվան տերերը և եվրոպականացված **Բելաները** երբեք չեն կասկածում, երկի, որ իրենք կրում են միևնույն անվան **Իզաբելա**—ի տարբեր կենները: Նմանապես **Մարգոներն** ու **Ռիտաները** չեն կասկածում, որ իրենք **Մարգարիտա**—ի երկու կեսերն են...

Կամ հրաժարվելով «հայացած» **Ջնրուխա** տատիկի պատվին տրված անունից, ընտրելով եվրոպական **Եսմերալդան** (կամ **Էսման**)՝ երբեք անվանակիրները չեն կասկածում, որ ծագմամբ դրանք երկուսն էլ թանկարժեք զմրուխտ քար են նշանակել, և մեկը մյուսից ոչ մի բանով ավելի չէ:

Կամ հայկական **Վարդուշ**, **Վարդուխի**, **Վարդիշաղ** անունից հրաժարվող և **Ռոզա**, **Ռոզալիա**, **Ռոզետտա** անունները ընտրողները չեն կասկածում, որ եվրոպական Վարդի տարբերակները ավելի բուրավետ և շքեղ չեն, քան հայկականները:

67. ԻՆՉՊԵՄ ԵՆ «ԵՐԿԱՐՈՒՄ» ԱՆՈՒՆՆԵՐԸ, ԵՎ ՈՐ ԱՆՈՒՄ Ե ԸՆԿԵԿԱՆ՝ ԵՐԿԱՐԸ, ԹԵ՞ ԿԱՐՃԸ

Ինչպես հայտնի է, աշխարհի տարբեր ժողովուրդների մոտ անուն և մակամուն ունենալով պարտադիր անհրաժեշտություն է: Սակայն մի տարբերությամբ՝ որոշ ժողովուրդներ ու ցեղեր սիրում են կրել լավոնիկ, կարծ, մինչև մեկ վանկից կամ երկու հնչյուններից կազմված անուններ, ինչպես, օրինակ՝ չինացիները կամ

վիետնամցիները և նրանց հարևան մյուս ժողովուրդները, որոնց մոտ հանդիպում ենք Լի, Պո, Գո, Սո, Սի, Թի, Հո, Շի և այլ ձևերի, իսկ լրիվ հայրանված և ազգանվան հետ միասին, Լի Թայ Պո, Հո Շի Մին, Գո Սո ժո և այլն, երեք վանկից ոչ ավելի: Մինչդեռ կան ազգեր, որոնց մոտ ավելի հարգի են անվան—ազգանվան երկար ձևերը, քանի որ միայն այդ կերպ կարելի է ներկայացնել **հոր, պապի, ազգի, ծննդավայրի, զբաղմունքի, կոչման** և այլն, **անձի կենսագրության կարևոր կամ ներկայանալի կողմերը**: Երբեմն նման կենսագրություն—անունները մի քանի տող էին կազմում և կամ ամբողջ մի էջ. այսպես, օրինակ՝ նման երկար անուն—ազգանունները շատ հատկանշական էին հատկապես **արաբների** համար, որովհետև Իբրահիմի որդի Հասանը պիտի կոչվեր Հասան իբն Իբրահիմ, իսկ մյուս Հասանների հետ չչփոքելու համար պիտի ճշվեր նաև ծննդավայրը՝ Հասան իբն Իբրահիմ էլ Բասր, իսկ Բասրայում էլ կարող էին շատ Հասաններ լինել նույն հայրանվամբ, ուստի հարկ էր առաջանում հայրանվան և ծննդավայրի կողքին ավելացնել նաև նրանց տոհմին տրված ինչ—որ մակամուն՝ Հասան իբն Իբրահիմ էլ Բասրի Մախլաս՝ «վերջին», կամ Մազլում՝ «հեզիկ, բարի», Մախթում՝ «կնքված», Մուկրասի՝ «ուխտ գնացած» և այլն:

Սրանց ավելանում են նաև այդ անձնավորությունների որդիների անունները՝ «հայր այսինչի» հորոջոջմամբ, որով լինում է Հասան իբն Իբրահիմ էլ Բասրայի Մազլում արու Մուսթաֆա արու Ալի արու Սոմադ արու Վահաբ և այլն:

Այդ պատմիչ իբն Խալիբանի հիշատակած խորասանի ընդերքից մեկի անունը մոտ 5 տող է կազմում, ահա այն ամբողջությամբ՝ **Ալ Ամիր Թոթայայա Բին Արի Սահիլ Սուալիմ Բին Ամր Բին Ալ Հուսեյն Բին Ռաբիա Բին Խալիդ Բին Ասիր Ալ Խայր Բին Կուրայի Բին Հիլալ Բին Մալամ Բին Մաալբա Բին Վալի Բին Մաան Բին Մալիբ Անսար Բին Արճան Ալ—բահիլի Բին Մաադ Բին Կասյ Ալբան Բին Մուդար Բին Նիզար Բին Սուադ Ալ Բադիլի**:

Նման երկար անունների մեծ սիրահար են նաև իսպանացիները: Նրանց այս երկար անվանման վնասակարության մասին է հորինված հետևյալ զրույցը: Հարավային Ամերիկայում իսպանացիներից մեկը մոլորվում է ճանապարհին, և վրա է հասնում գիշերը: Հասնելով մոտակա մի բնակավայր՝ նա թակում է մի տան դուռ և խնդրում է գիշերելու տեղ: Տանտերը լինում է անգլիացի և, լուսամուտը բացելով, հարցնում է.

- Ո՞վ է:
- Հետևում է պատասխանը.
- Ֆերնանդո—Դելլուս—Անտոնու—Սերվանտես—Դելլուս—Մինկոս—Մանթակուզենո—Դելլուս—Անտիխոնոս:
- Անգլիացին, սարսափած անունների առատությունից, պատասխանում է.
- Այդքան մարդու համար մեր տունը փոքր է,— և փակում է պատուհանը:

68. ԼԱԿՈՆԻԶՍԸ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Յուրաքանչյուր ժողովուրդ, մեկը մյուսից անկախ, հանգել է այն մտքին, որ ավելի գործնակա են կարճ անունները, իսկ եթե այդպիսիք չկան, ապա հարմար էլք է համարվել երկար անունների կրճատ արտասանությունը: Ի թիվս այլ ժողովուրդների՝ հայերն էլ ժամանակ և էներգիա խնայելու նկատառումով կրճատել են իրենց անձնանունները, ինչպես, օրինակ՝ Մարո, (Մարիամից), Կարո (Կարոպետից), Հայրո (Հայրապետից), Կրպո (Կարապետից), Հարո (Հարությունից), Կարո (Հոդակա-

թից), Վարդ (Վաղարշակից), Գայան (Գայանեից), Սարո (Սարիբեկից), Տիգո (Տիգրավուհի) և այլն:

Հայոց մոտ այնքան է տարածված անունների կրճատ արտասանությունը, որ կրճատված ձևերն էլ ընկալվում են իբրև ինքնուրույն կամ անկախ անուններ, այսինքն ոմանց անվանում են պարզապես Կարո, Մարո, Սաքո՝ առանց գիտակցելու դրանց կրճատված լինելը Կարապետ, Մարիամ, Հարություն, Սարգիս ձևերից:

Ուսական իրականության մեջ նույնպես մեծ տարածում ունեն անձնանունների կրճատումները, օրինակ՝ **Александр**-ը դառնում է **Алеша, Саня, Алексей, Леша, Саша** և այլն:

69. ՆՈՐ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԾՆՈՒՄԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԻ ԺՅՈՒՆԻՑ ԿԵՆՏՐՈՆ

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո մեր երկրում առաջացան բազմաթիվ նոր անուններ. փորձեցք հիշատակել դրանցից մի քանիսը:

Ի հիշատակ կոմունիստական գաղափարախոսության վարդապետ Կարլ Մարքսի և նրա գաղափարներն առաջին անգամ կյանքում կիրառող Լենինի՝ երկու անունների սինթեզումից ծնվեց Կառլեն-ը (Կառլ-Լեն), Վլադիմիր Իլյիչ Լենինի անվան, հայրանվան և ազգանվան սինթեզումից ծնվեց Վիուլեն կամ Վիլեն (Վ-ի-ու-լեն կամ Վի-լեն) անձնանունը: Մարքսի և Լենինի ազգանուններից 30-ական թվականներին սինթեզվեց նաև մեկ այլ անուն՝ Մառլեն (Մար-լեն): Ի տարբերություն Կառլեն-ի, որը միայն արական անուն է, այստեղ ստեղծվեց նաև իգական տարբերակը՝ իգական անվանակերտ – ածանցի հավելմամբ՝ Մառլենա:

Կանանց իրավունքների հավասարության գաղափարը ստիպեց մտածել մի սրամիտ միջոց, քանի որ անպատշաճ կլիներ աղջիկներին էլ կոչել Լենին (ինչպես տղաները ստացան հնարավորություն Լենիկ, Լենինի անուն-ազգանուն կրելու), այդ հաճույքից և իրավունքից օգտվելու համար ստեղծվեց Նինել իգական ձևը, որ Լենինի անվան հակառակ ընթերցումն էր:

Եթե հեղափոխության մեծ առաջնորդի անունը և ազգանունը (նաև կեղծանունը) կարելի էր դարձնել անձնանուն, ապա ինչո՞ւ է չէր կարելի նաև նրա հայրանունն օգտագործել: Եվ ահա հայոց մոտ սկսեցին հայտնվել Իլյիչ-ները, որ Լենինի հայրանունն էր և ծագում էր ռուսական Իլյա անվան սեռական ձևից (չէ՞ որ հայերը արդեն փորձ ունեին ռուսական ազգանունները որպես անուններ օգտագործելու):

Կոմունիստական գաղափարախոսության 4 մեծ առաջնորդների անուններից, ավելի ծիշտ նրանց ազգանունների սկզբնատառերից ստեղծվեց Մելս արական անունը (Մ-է-Լ-Ս. Մարքս-Էնգելս-Լենին-Ստալին), նաև նրա փառաքնականը՝ Մելսիկ, ինչպես նաև իգականը՝ Մելսիկոյա՝ իգակամակերտ – դա ածանցի հավելմամբ: Հայոց մոտ ստեղծվեց նաև Լենորոշ կամ Լենորուշ արական անունը՝ լենինյան որոշ կապակցությունից, որը դարձավ Լենորուշ հայկական Հայկուշ, Վարդուշ, Ազգուշ, Սիրուշ, Վերգուշ և նման բառերի համարաբանությամբ: Լենսերը լենինյան սերունդ բառերի հապավումն էր, իսկ Վոլխիկը առաջին բոլշևիկյան հիդրոկայանի՝ Վոլխով գետի պատվին տրվեց:

Ինչ-որ մի տեղ էլ կանայք ունեն առավելություն, կա մի անձնանուն, որ միայն կանայք են կրում, և տղաներն այն կրելու հնարավորությունից զրկված են: Ուրվաճառ իգական անունը ստեղծվել է բավական բարդ միացություններից՝ Ողագ Լյուր-

սեմբուրգ անվան Ու առաջին վանկից, Կլարա Ցետկին անվան առաջին Կլա տառերից և Նադեժդա Կոնստանտինովնա անվան առաջին նա վանկերի միացությունից: Եվ այսպես, երեք նշանավոր կին հեղափոխականների անվան հավերժացումն է Ուոլաննա-ն:

Ոչ միայն հայերի, այլև խՍՀՄ-ի շատ ժողովուրդների մոտ մեծ տարածում է գտել նաև Կիմ անունը, որը ոչ թե հեղափոխականների անունից, այլ կազմակերպության անվանման հապավումից է գոյացել (Կոմունիստիչեսկի) Ինտերնացիոնալ Մոլոդյոժի):

Մեծ տարածում ունի հայոց մոտ նաև մյուս հեղափոխական գործիչների, քաղաքացիական կռիվների հերոսների անունների գործածությունը՝ **Ֆրունզիկ, Գայ, Չապան** (Ֆրունզե, Չապան և այլն, որոնց դարձյալ ազգանուններ են՝ վերածված անունների):

Լայնորեն գործածություն է ստացել Կամո-ն, որ հեղափոխության լեզվերդար ասպետ Սիմոն Տեր-Պետրոսյանի կեղծանունն էր և ծագում է նրա ռուսերեն կրուն՝ «ո՞ւ»-ի դերանվան սխալ արտասանությունից:

70. ՍԱՐԳԸ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Իրեն շրջապատող կենդանական և բուսական աշխարհն աստիճանաբար ճանաչելով՝ մարդը ոչ միայն կարողանում է օգտակարն անօգտակարից զանազանել, այլև դատարան դրանք՝ դրանցից ավելի խելացիորեն օգտվելու համար: Ինչպես բույսերը, այնպես էլ կենդանիները միմյանցից տարբերելու համար մարդը սրանց տալիս է անվանումներ: Բնականաբար, անվանման մեջ նախ և առաջ նկատի էին ամուլում կենդանու արտաքին տարբերակիչ գծերը մյուսների համեմատությամբ: Ինքնին կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներին տրվող անվանումները հարստացնում էին լեզուն հայրուրավոր նոր բառերով: Երբեմն միևնույն կենդանուն կամ բույսին տարբեր բարբառներում տարբեր անուններ են տրված լինում, որով կրկնակի կամ եռակի մեծանում է հոմանիշների թիվը տվյալ լեզուում:

Իհարկե, «թռչուն», «սողուն», «որոճող», «կենդակավոր», «կաթնասուն», «գիշակեր», «խտանաբարակ», «ընտանի», «գրաստ», «հեծկան», «լվկան» և այլ նման ընդհանուր, լայն ստորաբաժանումների հետ կատարվում էին նաև ավելի նեղ ու կոնկրետ ստորաբաժանումներ: Այսպես, օրինակ՝ իրանական խմբի պամիրյան լեզուներից մի քանիսում, մուսցաներենում գոլակ նշանակում է կով և եգ: Իսկ հայերենում և ռուսերենում, որոնց նույնպես հնդեվրոպական լեզուներ են, կով և կորով գործածական են միայն «կով» հասկացության համար, իսկ «եգ»-ի համար համապատասխանաբար գործածական են եգ, վոլ արտահայտությունները:

Հայերենում մինչև մեկ տարեկան խոշոր եղջերավոր կենդանու ծագման համար տարբերակման կոչվում է հորք, սակայն մեկ տարեկանից բարձր եզն արդեն երինջ է, իսկ որձը՝ արջու, հաջորդ տարի նրանց համապատասխանաբար դառնում են կով և եգ (ցուլ): Սակայն մեզ համար դեռևս մութ է մնում մնա՞նք բառերի մեծ մասի ծագումը: Եթե հայերեն կով-ը հնդեվրոպական gaw բառից է առաջացել, ապա չի կարելի ստել, որ ռուսերենում էլ, որպես հնդեվրոպական լեզու, պիտի **корова**-ն նույն gaw-ից ծագեր: Կարող էր այդ կենդանու համար արտաքին բնորոշ մի հատկանիշը դառնալ այդ կենդանու համար անուն, և այդպես էլ եղել է. ռուսական

корова բառը ծագում է հ.-ե. kar- «եղջյուր» բառից և -ve ածանցից, որով ողջ բառը ընկալվում է որպես «եղջերավոր»:

71. ԻՆՉՈՒՒ ԵՆ ՍՐՅՈՒՄ ԲԱՌԵՐԸ, ԿԱՍ ՊԱՊԿԱ՞, ԹԵ՞ ԹՈՒԹԱԿ, ՈՐՐՆ Ե «ՀԱՅԵՐԵՆԸ»

Ապացուցված ճշմարտություն է, որ ժողովուրդները միմյանցից փոխ են առնում հատկապես այն կենդանիների անունները, որոնք իրենց բնակության վայրերում չեն լինում: Սա հաստատվում է նաև հայերենի տվյալներով: Հայերենում արմատավորվել են Հայկական լեռնաշխարհի ոչ բնորոշ կենդանիների և թռչունների բազմաթիվ անուններ, որպիսիք են՝ փիղ, ուղտ, ջայլամ, սիրամարգ, ընձուղտ, թութակ, պապկա կամ պապա, կոկորդիլոս, բենեմուլք, դլփիկ և այլն: Դրանք բնականաբար փոխ են առնված ոչ ինտավոր ժողովուրդներից, այլ հարևան ժողովուրդների լեզուներից, որի պատճառով միևնույն կենդանու համար հայերենում երբեմն «հայտնվել» են երկու անուններ՝ տարբեր հնչմամբ: Չետազայում այդ երկու հոմանիշներից մեկը, որն ավելի շուտ է «հայացել», որպես հայերեն բառ պայքարում է մյուսի դեմ՝ աշխատելով ապահովել իր գոյության մենաշնորհը. նման բառերից են հայերենի պապկան և թութակը: Նրանք «հավասար» իրավունքներ ունենին, և հանկարծ նրանցից մեկը «օտարի» տեղ է դրվում և սկսում է հալածվել... Խոսքը տանք միջնադարյան բանաստեղծներից: Նահապետ Թուրակի երգածներն է եղել մի յար ունեակ, որ թութակի պես ասող-խոսող լիներ.

Զիս պիտեր ասուն-խոսուն, զինչ պապկայ հաւերն իմաստուն:

Իսկ մեկ ուրիշ բանաստեղծ՝ Հովհաննես Թլկուրացին, գերադասել է պապկա-ի փոխարեն գործածել թութակ բառը՝ իր սիրեցյալ էակի թութակի պես քաղցրալեզու լինելը նկարագրելիս.

Աղէկ պատկեր բոլոր և գեղեցիկ ես,
Բերանդ շաքարով ի ի թութակ լեզու ես...

Պապկա (Պապա) և թութակ, ո՞րն է հայերեն: Առաջին բառը հայերենը ստացել է սեմական լեզուներից՝ ասորերենից, ուր կա papga, papaga, կամ արաբերենից, ուր կա babqa բառը, որտեղից հավանաբար փոխանցվել է նաև եվրոպական բազմաթիվ լեզուներ, ինչպես գերմ. Papagei, հոլ. papagaai, իսպ. papagayo, իտալերեն papagallo և ռուսերեն nonyař: Ինչպես արդեն նկատեցիք, երկրորդը՝ թութակ ձևով, պարսկերենից է, ուր գտնում ենք totak՝ «թութակ» և «սրինգ, շվի, բլուլ» նշանակությամբ, ինչպես որ հայերենի բարբառներում է (Ադա, մե թութակդ քեր ածա):

Եվ այսպես, այսօր թութակը՝ որպես «հայերեն» բառ, օտարում է պապկա-ին՝ իր համար ապահովելով գործունեության մենաշնորհ ասպարեզ, մինչդեռ բնիկ լինելու իրավունքը ավելի շատ ուներ պապկա-ն, դեռևս հինգերորդ դարից հայերենում տեղ գտած լինելու իրավունքով, և ոչ թե թութակը, բայց ո՞վ է իրավունք հարցնողը, երբ խոսքը ընդամենը թռչունների մասին է:

72. «ՀԱԿԵԼՅԱԼ» ԿՋՈԿ ԿԵՆԴԱՆԻՆ ԿԱՍ ԻՆՉԸ ԵՎ ՈՒԴՏԸ ՍԻԱՍԻՆ

Ինչպես նշել ենք, Հայկական լեռնաշխարհի ոչ բնորոշ կենդանիների անունները հայերը ստիպված էին վերցնել այնպես, ինչպես իրենց «մատուցում» էին հարևան լեզուները, և կամ իրենք էին հորինում դրանք՝ մատնանշելով կենդանու արտաքին մի հատկանիշ: Օրինակ՝ Սիխայի Ասորու «ժամանակագրության» մեջ հանդիպում ենք զուրափ կամ զուրափայ կենդանու նկարագրությանը. «Զուրափ է մի, որ է կենդանի խայտ, առաջըն բարձր, ի չափ գունձի», որը փոխառություն է արաբերենից: Արաբերենում zurafa «ընձուղտ» (կամ surrafa) ծագում է zarf «ավելանալ, հավելվում» արմատից՝ վիզը մյուս կենդանիներից արտասովոր երկար լինելու պատճառով: Արաբերենից են փոխ առել նաև մեզ հարևան ասորիները՝ zumara, քուրքերը՝ zumara, եվրոպական լեզուները՝ ֆրանսերենը՝ giraffe, գերմաներենը՝ Giraffe, իտալերենը՝ giraffa, իսպաներենը, պորտուգալերենը՝ girafa, անգլերենը՝ girafe, ռուսները՝ жираф և այլն, հին ֆրանս.՝ giraffe: Մինչդեռ հայերենը, թերևս ստեղծելով հունարենի camelopardalie-ընձուղտ բառին, ստեղծել է ընձուղտ ձևը, այսինքն՝ ուղտի և ինձի նմանություն ունեցող կենդանի (նկատի է առնված ուղտի բարձրությունը և ինձի խայտավոր մորթին):



73. ՈՒԴՏԱՀԱԿ (ԻԾՏՐՄՈՒԴ) ԿԱՍ «ԴԱԺԱՆ» ԹՈՉՈՒՆԸ՝ ՏԱՅՆԱՍ

Գրաբարում (Սուրբ գրքի մեջ) բազմիցս օգտագործված ենք գտնում ջայլամը, որը ենթադրվում է որպես արաբական փոխառություն: Արաբերենում գտնում ենք zalim՝ «արու ջայլամ», հոգնակի՝ zaliman, zalimա ձևերը սակայն անբացատրելի է մնում լեզվաբանորեն գ-ի փոխվելը ց-ի: Ինչո՞ւ ջայլամ և ոչ զայլամ: Մեզ թվում է, բացատրությունը շատ պարզ է դա գ և ց տառերի նմանության պատճառով է, որ զայլամ-ն ընթերցվել է ջայլամ: Սակայն գրաբարում բազմաթիվ մեկնիչներ (Վանական, Տաթևացի և այլն) օգտագործում են նաև իշտրմուղ, իշտրմուղու բառը ջայլամը բացատրելիս: Արանից եզրակացվում է, որ հայոց համար ավելի հասկանալի իշտրմուղ-ն էր: Այն պարսկերենից է անցել հայերենին և կազմված է šatur, ustur՝ «ուղտ» և mury՝ «թռչուն» (ինչպես սիրամարգի մեջ) բառերից, որը թարգմանաբար նշանակում է ուղտահավ՝ իշտրմուղ սպասվող ձևի փոխարեն:

Բայց ինչ-որ բան է նշանակում էր ջայլամ անո՞ւղը: Այո: Այն ծագում է արաբերենի շուր արմատից, որ «ճնշել, նեղել, անգույթ լինել» իմաստներն ունի, և որից էլ՝ արաբերենի zalim՝ «անգույթ, դաժան, բռնակալ, ճնշող», zulum (հայերեն՝ զուլում)՝ «անտանելի, դաժան, բռնություն, արնահեղություն, անգորություն» բառերը: Հավանաբար նկատի է առնվել այս թռչունի հարձակողական, անզիջում բնավորությունը:

74. ՍԿՅՈՒՌԸ ԿԱՍ «ՊՈՉՈՎ ՍՏԿԵՐ ԱՆՈՂ» ԿԵՆԴԱՆԻՆ

Բնականաբար հայերենում գործածվում են նաև Դայաստանի կենդանական աշխարհին հատուկ անվանումներ, որոնք սակայն հայերեն չեն և վերցված են հարևան ժողովուրդների լեզվից: Նման բառերի թվին է պատկանում սկյուռ—ը: Այն հայերենով չես բացատրի, մանավանդ նրա զուգահեռն ենք գտնում հունարենում, ուր գտնում ենք skiuros: Բառը բարդ է և կազմված է skia՝ «շուք, ստվեր» և ura՝ «ազի, պոչ» եզրերից: Այսինքն՝ «ազոյվ ստվեր անող»: Դեռ չէ և հասկանալ, թե ինչու նման անուն է դրվել այս կենդանու վրա. նրա թավամազ ազին միշտ գլխի վրա է հովանու նման, ուստի և այն տպավորություն է ստացվում, թե նա պոչով ստվեր է անում իր վրա: **Ավիուրոս** բառի ոս— անանցը հայերենը դեմ է նետել, ինչպես և հունարենից կատարած շատ այլ փոխառությունների ժամանակ է այդպես վարվում:

75. ԻՆՉ Է ՀՐԵՇ ԵՎ ԻՆՉՈՒՐ ԿՐԵՇԱՎՈՐ-Ը ՀՐԵՇԱՅԻՆ ՉԷ

Այսօր սովորական են դարձել մեր լեզվում **հրեշավոր հանցագործություններ, հրեշավոր մտքեր, հրեշային դիմագծեր** և նման շատ այլ արտահայտություններ, որոնց մեջ հրեշային նշանակում է «ֆանտաստիկ, չտեսնված, չլսված, անլուր, այլանդակ, սովորականից դուրս տգեղ»՝ իր ինքնուրուն ունենալով գրաբարյան **հրեշ** բառը: Գրաբարում այս բառով արտահայտել են մի անծանոթ կենդանի և, որպես բացատրություն հայ ընթերցողների համար, գտնում ենք «ցուցանք, այլանդակ խառնակ կենդանի» բացատրությունը: Առաջինը Ք. Պատկանյանը, խոսելով «Աշխարհացույցում» գործածվող այս բառի մասին, ուր հրեշ (կա նաև հրեշ էրե) է գրված, ենթադրեց, որ խոսքը արաբերենի hariš կամ hiriš՝ «ռնգեղջյուրի» մասին է, որը արաբերենում էլ ոչ միայն ռնգեղջյուր, այլև «մի եղջյուրանի խառնագազան» նշանակությամբ էր օգտագործվում:

Չէ՞ որ Դայաստանի կենդանական աշխարհին ոչ հատուկ բազմաթիվ կենդանիների անվանումներ հայերենը վերցրել է (կամ ինչպես ընդունված է լեզվաբանության մեջ ասել, «փոխ է առել») հարևան լեզուներից: Տվյալ դեպքում արաբերենից նույնպես շատ բառեր, որպիսիք են **ջայլամ—ը, քիմսահ—ը** «կոկորդիլոս», **գուրափա—ն** «ընձուղտ», **պարալա—ն** «թուրակ» և այլն, հետևաբար նաև **հրեշ—ը** նախապես մի արտակարգ, առասպելական կենդանու՝ ռնգեղջյուրի իմաստով և ապա՝ ընդհանրապես հրեշավոր, ֆանտաստիկ երևույթներ որակելու համար է գործածվել: Երբ այսօր ասում ենք **հրեշավոր արարք** (է գործել թուրքը), ապա պատկերացնում ենք «ոչ մարդկային, անսովոր, ֆանտաստիկ, գազանաբարո», բայց ոչ «ռնգեղջյուրային»:

76. ԿՈՎՈՐԴԻՆՈՍ, ԲԱՅՅ ՈՉ ԿՈՎՈՐԴԻ ՀԱՍԱՐ

Լեզվից լեզու կատարվող փոխառությունների մեջ անմեամեծ բաժինը տվյալ գոտում բացակայող բուսամուկների, կենդանիների, անծանոթ իրերի և վարչական տերմինների անվանումներին է ընկնում:

Դայաստանի կենդանական աշխարհին անծանոթ երեք տասնյակից ավելի կեն-

դանիների անուններ կան փոխառյալ, որոնց մի մասը պարսկերենից ու սեմական լեզուներից է, իսկ մյուս մասը՝ հունարենից: Նման բառերից է կոկորդիլոս—ը, որը հունարենում հնչում է krokodilos (արդեն նկատեցինք, որ սա նման է ռուսերենի **крокодил—ին**), որը նշանակում է «բրքուկից, շաֆրանից խորշող» (grocus՝ «բրքում» և dilos՝ «խորշել, զգվել» բառերից):

Հունարենի կոկորդիլոս—ը ենթարկվեց հայերենում որոշ հնչյունական տեղաշարժերի և դարձավ կոկորդիլոս, որով, կարծես թե, այս բառը ինչ—որ «հայերեն տեսք» էր ստանում և իմաստավորվում, քանի որ անհասկանալի հունարեն ձևի փոխարեն **կոկորդիլոս—ի** մեջ կարելի էր որսալ **կոկորդ** բառը, ինչը կարծես թե հուշում էր այդ կենդանու մեծ կոկորդ կամ մեծ երախ ունենալու մասին: Դիչեցման կարգով ասենք, որ գրեթե նույն ձևով հունարենի organon—օրգանոնը, որը, հայերենում վերաիմաստավորվելով, վեր ածվեց երգեհոնի, կարծես թե «հուշում» էր տվյալ առարկայի ինչ նպատակի ծառայելու մասին:

77. ՓԱՍԻԱՆՆ ՈՒԼԻ՝ ԱՐԴՅՈՔ ՀԱՅՐԵՆԻՔ

Գրաբարից մեզ ժառանգություն է հասել **փասեան** կամ **փասիան**՝ «խայտարեղ տ փետուրներով թռչնի» անունը, որ հունարենի **fasianos**— ֆասիանոս բառից է ստառադարձված (հայերն այդ ժամանակ **Ֆ** տառ չունեին և նրա փոխարեն գրում էին ֆի): Պետե է խոստովանել, որ ֆասիանոս—ը ոչ թե թռչնի անուն է, այլ Ռիոն գետի, որի ափերին հսկայական երամներով շրջում էին թռչունները: Թանի որ Ռիոն—ը հունարենում Ֆասիոս—ն էր, ուստի և թռչուններն էլ կոչվեցին ֆասեանոս՝ «ֆասիյան, ֆասիական»: Դայերի համար ֆասիս—ը փասիս էր, ուստի ֆասեանոս—ն էլ դարձավ փասեան—փասիան: Ռուսերենում այն դարձել է **фазан**:

78. ՎԻՌ, ՎԻՌՆԱՐԻ ԵՎ ԻՇԱՅԾՅԱՍ

Ո՞վ չի զմայլվել Տերյանի նշանավոր բանաստեղծությամբ, ուր, դիմելով սիրեցյալին, բանաստեղծը նրան համեմատում է վիթի հետ.

Լինեի չոբան սարերում հեռու,
Գայիր, անցնելի վրանիս մոտով,
Իրար նայելից անուշ կարոտով...
Քնցուշ ժպտայինք հանկարծ իրարու:
Գնայիր աղբյուրն ու ետ դառնայիր,
Թեթև, որպես վիթ, ելնեիր ձորից...

Ո՞ր բանաստեղծը չի համեմատել օրիորդական հեզաճկուն քայլեր եղնիկի, այծյամի, քարայծի ակնբարթային, բայց նազելի ընթացքի հետ.

եղնիկի պես սարերով եկար ու անցար...— երգում է նաև գուսանը...

Եվ այսպես, հայերենում **վիթ** նշանակում է «վայրի այծյամ, բերև քարայծ», որոշ մատյաններում ունենք նաև Վիր, Վիրոն հնչապատկերը (իչեմք այստեղ արաբերենում ամլակ yaddan—ուադան «վայրի ոչխար, քարայծ» զուգահեռը): Միջնադարյան որոշ գրիչներ գործածում են նաև **վթիկ**՝ «այծյամի ծագուկ» կամ **վութն**՝ «փոքր եղջերու» ձևերը: «Վարդ հարանցուն» հանդիպում ենք. «Տեսանե՛ս զփոքրիկ **վթիկն**, որոնեակ...»



Գիշերները, որ —են մասնիկը փորացուցիչ նշանակություն է տալիս բառերին պարսկերենում, և հավանաբար նրա այդ նշանակությունը գիտակցվել է նաև հայերենում, այլապես մենք պահլավերենից փոխ առած մի շարք հատուկ անուններում, ինչպես Կարեն, Սուրեն, Վազգեն, Գուրգեն, Խորեն և այլն, չէինք գիտակցի դրանց փաղաքշակա՛ն առունները: Օրինակ **Գուրգեն** նշանակում է «գայլուկ» գայլիկ իրանական ցուց «գայլ» բառից —եռ մասնիկով:

Բայց լեզուն երբեմն այնպիսի անակնկալներ է մատուցում, որ հավատալը չի գալիս: Այսբան բանաստեղծական **Վիթ** բառից

կերտվում է հանկարծ մի բառ կցելով նրան **խար**—ը «էջը»: Դայերենի վիթխարի բառը, Ալիշանի կարծիքով, կազմված է վիթ «այծյամ» և խար «էջ» եզրերից, ինչպես ունենք համաբարանությանը նաև **իշայծյամ** էլ և այծյամ բառերից (էշի և այծյամի խառնուրդ) նշանակությամբ: «Նոր հայկազյան բառարանի» հեղինակները կարծում են, որ **վիթխարի**— պարսկերենի պթե խարի «անճոռնի էջ» բառերից է ծագում:

79. ԿԱՊ ՈՒՆԻ՞ ԱՐԴՅՈՋ ԱՅՍՕՐԿԱ ՂԱԶԸ ՀՈՈՍԻ ՍԱԳԻ ՀԵՏ

Շատերը գիտեն հանրահայտ առակը, թե ինչպես սագերը հպարտանում էին, որ իրենց նախնիներն են փրկել Դոմոնը: Թե որքանով մեր ժամանակների սագերը հպարտանալու հիմքեր ունեն, դա արդեն առակագիրների քծիծաղին է արժանացել վաղուց, սակայն հպարտության այդ առիթի մասին չէ մեր այս գրույցը, այլ լեզվաբանական:

Լեզվաբանները գտնում են, որ հայերենի սագ բառը իսկապես կապ ունի հնդեվրոպական լեզուներից մի քանիսում առկա նույն նշանակության բառերի հետ, որպիսիք են եկեղեցական—պալոմոսկան gasi, նոր պարսկերենի gaz, ռուսերենի гусь և թուրքական լեզուներին անցած դազ ձևերի հետ: Բայց ի՞նչ է դուրս գալիս, հայերենը «շրջվել» է և նման չէ նախածին, որ, ենթադրում են, պիտի լինե՞ր՝ gans, gas: Երկրորդ անգամ հայերենը փոխ է առել միջին պարսկերենից դազ ձևով, և երբեմն բարբառներում գերակշռող հենց այս դազ—ն է: Օրինակ «Ղազի ձենով երգում էիր»: «Ղազը քեզ օրինակ, միամիտ մարդ է: Դե ասա դազի տեղ են դրել, էլի»:

Եվ այսպես, հայերենի սագ—ը նույնպես կապ ունի Դոմոնի սագերի հետ, ինչպես և պարսկերենի դազ—ը կամ ռուսերենի гусь—ը:



80. «ԵՍ ԶԵԶ ԶԵՍ ՀԱՍԿԱՆՈՒՄ» ԿԵՆԴԱՆԻՆ

Երբ անգլիացիները հաստատվեցին Ավստրալիայում, այնտեղ հանդիպեցին եվրոպայում չգտնվող բազմաթիվ անծանոթ կենդանիների և բույսերի: Թերթերն ու պարերեականները սիրով էին տպագրում ուր նոր աշխարհի մասին ակամատեսների ուղարկված տեղեկությունները: Մի անգլիացի «Լոնդոն Թայմս» քերթին ուղարկեց տարօրինակ մի կենդանու մասին տեղեկություններ գրելով, որ նա որովայնի մտա պատապարում է պարկի մեջ իր ձագուկին և «բայլում» է ցատկոտելով՝ հենված հզոր աղջի և ետևի ոտքերի վրա: Նա, նկարելով այդ կենդանուն և կցելով նրան այս տեղեկությունները, մոտեցավ տեղաբնակներին՝ իմանալու կենդանու տրվող անունը: Նա անգլերենով հարցրեց տեղաբնիկներին. «Ի՞նչ է այս կենդանու անունը»: Ինքը չգիտեր բնիկների լեզուն, իսկ նրանք՝ անգլերեն: Ուստի նրանք պատասխանեցին **կենգուրու**: Անգլիացին կարծեց, թե դա կենդանու անունն է, և այդպես էլ մակագրելով նկարի տակ՝ ուղարկեց «Լոնդոն Թայմս»—ին: Այս նկարի հետ կենդանու անունն էլ արագորեն տարածվեց ողջ եվրոպայում և ապա՝ աշխարհով մեկ: Գազամանոցները լցվեցին **կենգուրուներով**: Երբ լեզվաբանները ուսումնասիրեցին տեղացիների լեզուն, պարզվեց, որ **կենգուրու** ոչ թե կենդանու անունն է, այլ նշանակում է «Քեզ չեմ հասկանում»: Արդեն ուշ էր այդ սխալն ուղղելու համար: Դայերը այդ կենդանուն ազգելագ անվանեցին:



81. ՍԻՐԱՄԱՐԳԸ՝ ՍԱՐԳԱԳԵՏԻՆ ՍԻՐՈՂ

«Աշխարհացույցում» կարդում ենք. «Ենաստան ունի և սիրամարգ շատ և քրքուն անբավ», Աստվածաշնչում՝ «Կապկաց սիրամարգաց», և այսպես ողջ զորաբարյան մատենագրության մեջ... Ի՞նչ է նշանակում սիրամարգ... «Նոր հայկազյան բառարանի» հեղինակները փորձում էին բացատրել բառը այսպես՝ «Սիրամարգ—որ սիրել գնարգ կամ ճենել գնարգս»: Ուրեմն մարգ սիրող թռչուն: Իսկ մի՞ թե կան նաև մարգեր չսիրող թռչուններ... Ինչո՞ւ միայն այս մեկը պիտի կոչվեր այդպես...

Եվ ահա լեզվաբանները լուծեցին կնճիղը... 2՞ «Որ հայերենն ունի նաև լորամարգ կամ լորամարգի, որ չի նշանակում «մարգերի լոր» այլ՝ լոր թռչուն: Ապացո՞ւյց: Խնդրեմ: Իրանական լեզուներում **մուրց** նշանակում է թռչուն, սամսկրիտում՝ **մըրգա**: Միջին Ասիայում կա մի գետ, որ կոչվում է Մուրգաբ: Գետն այդ անունն է ստացել ասիերեն շատ թռչունների հավաքելու պատճառով: 2՞ որ պարսկերենում **մուրգ** նշանակում է «թռչուն», իսկ **աբ**՝ «ջուր», հետևաբար՝ **մուրգ—աբ**՝ «թռչունների ջուր, գետ»: Ուրեմն հայերենն էլ մյուս պարսկերեն բառերի հետ **մարգ**՝ «թռչուն» բառը ստացել է պահլավներից: Շատ լավ, եթե սիրամարգի երկրորդ եզրը **մարգ**՝ «թռչուն» բառն է, ապա ի՞նչ է նշանակում առաջին եզրի սիր—ը: Սե՞ր: Սիրո՞ թռչուն... թվում է, թե ճիշտ լուծումը գտել ենք, բայց դա միայն առաջին հայացքից է այդպես թվում...



Ինչպես մյուս դեպքերում, թերևս և այս անգամ էլ, չէ՞ր կարող պատահել, որ անունն էլ առարկայի հետ Հայաստան հասներ: Չէ՞ որ սիրամարդը հեռու երկրներից է բերվել Հայաստան: Եվ հայկական ավանդությունը սիրամարդի հայրենիքը համարում է ճենաստանը, ինչպես զրույցի սկզբում հիշատակեցինք, և Չինաստանն անվանվում է սիրամարդատերերկիր: Միս և հարցի լուծման բանալին: Չէ՞ որ ճենաստանից բացի հայ գրականության մեջ գործածվել է նաև սին-ը (փոխառյալ), հիշենք դար-ի-սեն, դար-ի-սենիկ՝ «չինական փայտ» (դարչին), նաև ապելսին՝ «չինական խնձոր» բառերը, որոնց մեջ սին կամ սեն նշանակում է

Չինաստան: Հետևաբար սիրամարդը մեզ է հասել աղավաղված, այն պիտի լիներ սինամարդ «չինական թռչուն»: Այս կարծիքի ճշտությունը հաստատվում է նաև բարբառներում պահպանված զուգահեռներով, այսպես՝ Ալաշկերտում՝ սինամհաֆք, Մուշում՝ սինամարք, Վանում՝ սինամախաֆք, Բաղնջում՝ սինամն-խաֆք և այլն, որոնց մեջ մարդ-ը փոխարինված է հոմանիշ հավք՝ «թռչուն, հավ» բառով: Իսահակյանը գրում է. «Սինամ հավի թևեր ունին, թռչիմ մտող, մայրիկ ջան»:

82. ԿԱՊԻՒԿ, ՌԵ՞ ԱՊՈՒԶԱՅ

Հայաստանի կենդանական աշխարհին ոչ բնորոշ կենդանիների անուններից շատերը եկել են հայերեն տարրեր միջնորդություններով: Եվ հաճախ էլ այս հոմանիշները պայքարում են միմյանց հետ հայերենում արմատավորվելու համար: Նման բառերից են կապիկ-ը, ապուզնա-ն և մեյուն-ը: Կապիկ անունը հավանաբար հայերենին է անցել պահլավերենից, ուր հնչում է kapi և բազմիցս գործածվում է հիմնգերոդ դարի մատենագրության մեջ, ընդ որում նաև Աստվածաշնչում: Իսկ ապուզնա-ն (ապուզնայ) ավելի նմազ չափով է օգտագործվում «Ոսկեփորիկում» կամ Միխայի Ասրու «Յայսմաուրբի» էջերում: Օրինակ՝ Միխայի Ասրուի հիշատակում է. «Տուք մեզ ամի ամի 300 սև ծառայ և 50 ապուզնայ և զուրպիտ մի» («Մեզ տվեց ամեն տարի 300 սև ծառա, 50 կապիկ և մեկ ընծառույ»): Վարդան Այգեկցու առակներից տեղեկանում ենք, որ ապուզնայը կապիկի նույնանիշն է, քանի որ վերջինս նա բացատրում է առաջինի օգնությամբ. «Կապիկն, որ է ապուզնայն, սովորություն ունի...» և այլն:

Պետք է նկատել, որ երկու բառերն էլ հայերենն իրանական աշխարհից է ստացել, Պարսկաստանի միջոցով և **обезьяна** բառը ստացել ուսուերենը: Պարսկերենն ունի abuzna, buzina, puzina, արաբերենը՝ abuzinna, թերևս նախ սանսկրիտի kapi ձևից պահլավերեն են օգտվել՝ դարձնելով kapiк, պարսիկները՝ kabi, ասորիները՝ qupa, հին եգիպտացիները՝ kephi, հույները՝ kebos-kepos և այլն: Ջարմանալի չէ, սակայն, որ իշխողը եղավ մեր լեզվում կապիկ-ը, նույնը կատարվեց պապակի «թութակ» բառի հետ, որը «չղիմացավ» իրենից շուրջ հազար տարի հետո հայերենի մեջ մուտք գործած **թութակ**-ի մրցակցությանը և ասպարեզից հեռացավ:

83. «ԹՎՓՈՂՈՂ ԲՎՈՒՐԸ» ԵՎ ԿԱՏՈՒՆ

Աշխարհի լեզուներում հանդիպում են բառեր, որոնք իրենց հնչմամբ գրեթե չեն տարբերվում, սակայն դրանց փոխառյալ լինելու հարցը կասկածներ է հարուցում: Ամանավանդ թեք տվյալ լեզուները չեն պատկանում միևնույն լեզվաընտանիքին և կամ գատված են միմյանցից տարածքով:

Նման «թափառող» բառերից է բազմաթիվ ցեղակից և ոչ ցեղակից լեզուներում մեծ տարածում գտած կատու բառը, որը գոյություն ունի շուրջ մի քանի տասնյակ լեզուներում: Այսպես, օրինակ՝ հունարեն katta, kata, xata, լատիներեն katus, kattus, ֆրանսերեն, գերմաներեն՝ katze, հոլանդերեն kat, katte, շվեդերեն՝ katta, katt, հարավսլավերեն՝ kotuka, բուլղարերեն kotka, ռուսերեն кот, кошка, ուկրաիներեն кат, ішталітерեն kate, հայերեն կատու:

Ինչպես նկատեցիք, այստեղ ներկայացված էին միայն հնդեվրոպական ընտանիքի լեզուները: Իսկ մյուս լեզվաընտանիքներում:

Սեմականներից արաբերենում kitt, ասորերենում kattu, նոր ասորերենում katu: Ֆիննա-ուգրական լեզուներից ֆիններենում kissa, kattii, տստոներենում kash, kat, փոյալերենում kotasis, օստյակերենում kati, վոզուլերենում kadi, kiska: Թուրքական լեզվախմբի լեզուներից թուրքերենում և արդրեջաներենում kedі: Կովկասյան լեզվաընտանիքի լեզուներից վրացերենում kata, katuni, ավարերենում ketu, keta, արազերենում kittu, ֆա, ինգուչերենում getu, տաբասերենում gadu, kadu և այլն:

Ո՞վ է ումից վերցրել: Համեմատական դպրոցի ներկայացուցիչները կարծում են, որ այս բառը պիտի հնդեվրոպական ծագում ունենա, քանի որ առաջացել է զա! «ցնկնել» արմատից: Այս արմատն է մատնում ռուսերենում պահպանված котичья՝ «ցնկնել» բառը, սերբերենում kot՝ «թութխ», kati՝ «ցնկնել», լատիներենում katulus՝ «ծագուկ», «լակոտ» և այլն, որոնք ցույց են տալիս, որ հնդեվրոպական նախալեզվում katos-ը ընդհանրապես ընտանի կենդանիների ծագուկ էր նշանակում, սակայն հետագայում հատկացվեց միայն կատվի ծագին: Թվում է, թե ամեն ինչ իր տեղում է: Սակայն ի՞նչ է ասում կենդանաբանությունը: Կատու գոյություն ունե՞ր այն տարածքում, որտեղ հնդեվրոպական ցեղեր էին բնակվում:

Ոմանք կարծում են ոչ: Ենթադրում են, որ նախապես կատուն բնակվել է Եգիպտոսում (ու բերվել էր Լուրիական անապատից թերևս), և kedis անվանումով նա արդեն հիշատակվում է գրավոր արդյուրներում: Նշանակում է, կատուն կարող էր հնդեվրոպացիներին սեմական ժողովուրդներից անցնել:

Իսկ ի՞նչ ճանապարհով է կատուն անցել հայերենին: Հինգերորդ դարի գրականության մեջ նրա փոխառված ավելի շատ օգտագործվում է կուզ-ը (նկատենք, որ կուզ-ը անկ է նաև կզաքիս, կզակն՝ «կատվի այջեր» բառերում): Սակայն այս անվանումը նույնպես կարող է սեմական աշխարհից լինել, որովհետև kuzu ձևով այն հիշատակվում է նաև ասորերենում՝ «կզաքիս, լուսան» նշանակությամբ և ասորերենում quza՝ «կատու, կուզ» նշանակությամբ, և ասորերենն էլ համարվում է փոխառություն իրանական մի ձևից, որ պիտի ունենար kuz հնչյունը:

Եվ այսպես, մենք բավական երկար թափառեցինք այդ կենդանու հետևից, սակայն առանց լուծելու նրա հայերենից հարցը: Միս հենց այդ դժվարության պատճառով էլ (բառերի հայրենիքը որոշելու) լեզվաբանները հորինել են «թափառող բառեր» արտահայտությունը:

Չայերեն նապաստակ բառն ավանդված է մի բանի գրչություններով, ինչպես լապաստակ, լապստրակ, լապստրակ և այլն: Եթե հարկ լինի գտնել ուղիղ ձևը, պիտի սկսել բառի իմաստից և բառի հիմքում ընկած արմատից: Բառը իրանական կամ պահլավական ծագում ունի, քանի որ նրա հիմքում պահլավերենի apastan (upa-stha) ապաստան բառն է ընկած: Իսկ գիտե՞ք գրաբարում ինչ նշանակություն ունենա ապաստան-ը՝ «վատահություն»: Ուզո՞ւմ եք համոզվել: Դիմենք Աստվածաշնչին, «Ապաստան լինիցի ի մարմին բազկի» (Մարմինը բազկին վատահիր), «Մի՛ լինիր ապաստան յինչս թո» (Մի՛ վատահիր թո ունեցվածքին): Եվ այսպես, քանի որ apastha նշանակում է «վատահող», նույնը հակառակ իմաստ կարտահայտի ո՞ր ժխտական մասնիկով՝ ո՞ր apastha-նապաստակ: Իսկ հայերենն ու պահլավերենը սովոր են բառերին գոյականակերտ –ակ ածանցները կցել, ուստի և naapastha-ն դարձել է նապաստակ՝ «չվատահող, անվատահ» կենդանի, որը միանգամայն ճիշտ մակդիր է վախկոտ այս կենդանու համար:

85. ԱՐԴՅՈՔ ՄԻԱՅՆ ՀԱՅՈՒՅ ԱՅԾԵՐՆ ԷԻՆ ԲԱՐԿԱՅՎՈՏ

Տարօրինակ է, բայց իրողություն, որ հայերը փոխանակ ասելու՝ բարկացած ես կամ գայրացած ես, ասում են. «Այծերդ եկե՛լ են» (բարբառներում էծերդ էկա՞ն): Բնական է, որ գայրույթը մեղանալու կամ բարկությունն անցնելու հասկացությունն էլ պիտի արտահայտվի գալուն հակառակ հակառակ գնալ, փախչել, դառնալ, անցնել բայերով, ինչպես, օրինակ այծերդ գնացին (կամ էծերդ գնացին), էծերդ փախան (Թբիլիսի), էծերդ դուրս թան (Երևան, Դարաբաղ) կամ էծերդ անցան: Թբիլիսիի բարբառն ունի նաև էծերդ հավաքել, էծերդ մոտ անել, էծերդ մոտ լինել, որոնք նույնպես նշանակում են «բարկանալ, գայրանալ, թքվել»:

Այս բոլորը վկայում են, որ այծ կամ էծ բառը (իսկ այծեր կամ էծեր նշանակում է հավանաբար «շատ, անչափ բարկություն») հավասարազոր է «գայրույթ, բարկություն, ջղայնություն» հասկացություններին:

Բայց այստեղ բնականում մի հարց է բարձրանում: Ընտանի կենդանիների մեջ մի՞թե այծերն են այդքան բարկացկոտ և իրենց վարքագծով տարբեր: Չէ՞ որ չեն հնազանդվում և խոզերը, և՛ էշերը, և՛ նույնիսկ կովերը, բայց երբեք չենք ասում խոզերը եկան, էշերը եկան կամ կովերը եկան: Ուրեմն ի՞նչ առանձնահատուկ, մյուսներից տարբերվող վարքագիծ կա այծերի մեջ, որ տեղից տա նման եզրակացության: Որոշ լեզվաբաններ ենթադրում են, որ այծերը, լինելով բարկացկոտ կենդանիներ, հաճախ են դեպի սարերը փախել, որտեղից էլ վաստակել են նման հեղինակություն:

Բայց այս բոլորը ինչ–որ տեղ անհամոզիչ է հնչում, քանի որ ուրիշ ոչ մի լեզվում նման արտահայտություն չի նկատվում: Ուրեմն մնում է հարցնել. «Միայն հայո՞ց այծերն էին բարկացկոտ»:

Թերևս այստեղ մենք գործ ունենք լեզվաբանական այն երևույթի հետ, որ կոչվում է բաղարկություն (կոնտամինացիա), երբ միմյանց հետ շփոթվում են երկու՝ իմաստով տարբեր, բայց հնչմամբ նման բառերը (տես նաև ցեխ): Այստեղ օգնության է գալիս մեզ աքքադերենը, ուր գտնում ենք օջջ–էծծ «գայրույթ, բարկություն» բառը, օրինակ ilu Nergal օջջ նշանակում է «Եներգալ աստվածը բարկացած է»: Չնարավոր է, որ հայերենը մյուս աքքադերեն բառերի հետ փոխ է առել նաև էծծ–ը, որ, հնչմամբ նման լինելով այծ–էծ–ին, զանազանվելու համար նրանից ստացել է –եր հոգնակիակերտը:

86. ԻՆՉՊԵՆ Է ՄԱՐԴԸ ԴԱՌՆՈՒՄ ԸԿՎՈՒԹՅԱՆ ՆՈՒՍԱԾ

Անգլիական մեծ դիվանագետ Լլոյդ Ջորջը կյանքի վերջին տարիներին գրեց հուշեր, որոնց մեջ բավական սրտաբացորեն պատմում է մի շարք քաղաքական իրադարձությունների անդրուկիսյան կողմի գաղտնիքները: Նման «գաղտնիքներից» մեկն էլ բացվում է մի գլխում, որը վերնագրված է՝ «Չայաստանը մեր զոհն է»: Այստեղ անկեղծորեն դիվանագետը պատմում է Բեռլինի վեհաժողովում իմպերիալիստական տերությունների զոհ դարձած Չայկական հարցի մասին: Այստեղ անգլիական դիվանագիտությունը Չայկական հարցը լծեցնելու փոխարեն սուլթանական

Թուրքիայից ստանում է Կիպրոսում բազաներ ունենալու իրավունք, որով **քավության նոխազ** էր դառնում Չայկական հարցը: Քավության նոխազ... Ինչո՞ւ նոխազը պիտի կյանքով հատուցի մեկ ուրիշի մեղքի համար... Սրա պատասխանը շատ հին պատմություն է, դրա ակունքներին հասնելու համար քրիստոնեության և ավելի ճիշտ հեթանոսության կանոններից մի քիչ տեղեկություն տանք: Սուրբ գիրքը պատմում է Աբրահամի անզավակ լինելու մասին, որին Աստված խոստացավ ծեր հասակում մի որդի նվիրել: Սակայն Աբրահամը երդվեց մատաղ անել այդ որդուն իր Աստծուն: Իր խոստման համաձայն, երբ Աբրահամը պատրաստվում էր իր որդուն զոհել, Աստված, ընդունած համարելով զոհաբերությունը, փոխարենը մատաղացու մի գառ տվեց: Այսինքն՝ մարդկային զոհը փոխարինվեց կենդանականով: Եվ այսպես, հեթանոսական շրջանից սկսած՝ մորդիկ մտածոցին աստվածների բարկությունը մեղմելու համար նվիրատվություններ, զոհաբերություններ կատարել: Եվ իրատվությունները կարող էին լինել քամաթերքներ և կենդանիներ, նայած հանցանքի, մեղքի չափի: Զոհաբերվող կենդանիներն էլ պիտի լինեին դեռևս անմեղ և արու: Այն կարող էր լինել ոչխարի, տավարի արուն, և ավելի հաճախ դա լինում էր ներիմ հոտի առաջնորդ այծը, որին հայերը **նոխազ** էին անվանում: Ինչո՞ւ **նոխազ**...

Եզվաբանները ապացուցում են, որ **նոխազ**-ը իրանական բառ է և ծագում է *nox* «առաջին» և *az* «այծ» բառերից, այսինքն՝ **նոխազ**—**նոխասայծ**—**նոխազ**՝ «հոտի առջևից գնացող այծ, առաջնորդ այծ», և ահա մարդու մեղքերը քավելու համար պիտի զոհվեր կամ ողջակիզվեր անենաարժեքավոր՝ ների այծը դա՛ **նոխազ**: Ահա այստեղից էլ **քավության նոխազ**՝ «քավության գոհ» արտահայտությունը: Քավության նոխազի դերում երբեմն կարող է նաև մարդը լինել... Սա փոխաբերաբար գործ է անվում այն դեպքում, երբ մեկի շահերի կամ հանցանքի պատճառով տուժում է մի երրորդ անմեղ մարդ, ասում ենք. «Նա դարձավ այսինչի համար **քավության նոխազ**»:

87. ԵՔԵ ԻՍԱԱԿԻ ՌԻՇԸ, ԹԵ ՌԻՐ ԿԱՐՈՂ Է ՀԱՍՆԵԼ ԻՐ ԲՈՒՐԸ

Աշխարհի բազմաթիվ լեզուներում այսօր սովորական է դարձել **բյուրո** բառը: Հաճախ է հանդիպում **բյուրո**-ն զանազան հիմնարկների և բաժինների ցուցանակներում, դռների վրա՝ Սեբեմագրական **բյուրո**, Կոնստրուկտորային **բյուրո**, Ուղևորությունների **բյուրո**, Թատրան **բյուրո**, Տեղեկատու **բյուրո**, ինչպես նաև Կենսակոմի **բյուրո**, Քաղկոմի **բյուրո**, ԼԿԵԲ **բյուրո** և այլն: Եթե այսօր մեկն ասում է **բյուրոն** տե՛ս երեք ժամ, ապա այս դեպքում արդեն հասկանում ենք **բյուրոկրատների** միատը և ոչ թե **բյուրոն**: Եթե մեկն ասում է՝ մտի՛ր **բյուրո** և պարզիր հարցը, ապա այս դեպքում արդեն խոսքը այն սենյակի մասին է, ուր տեղավորված է կազմակերպության ղեկավար մարմինը կամ նրա ընտրանին: Իսկ եթե մեկն ընթերցի ֆրանսիական միջնադարյան գրականության մուշեմերից մի հատված և հանկարծ այնտեղ հանդիպի այսպիսի արտահայտության՝ «Սեղանին գեղեցիկ մի **բյուրո** էր փռված», անշուշտ կզարմանա: Կզարմանա և կմտածի, որ այստեղ ինչ-որ **բյուրո**ի մացուցություն կա: Ո՛չ, այստեղ **բյուրո**ի մացուցություն չկա, բայց այստեղից է սկսվում **բյուրո** բառի կենսագրությունը:

Նախապես ֆրանսերենում **բյուրո** էին անվանում ուղտի բրդից գործված ծածկոցը: Ապա սկսեցին **բյուրո** անվանել այն սեղանը, որ նման ուղտի բրդից ծածկոց ուներ: Եվ քանի որ նման ծածկոցները հատուկ էին դատարանների, զբաժնակների սեղաններին, ապա աստիճանաբար նման սենյակներն էլ **բյուրոյի սենյակներ** կոչ-

վեցին: Եվ այսպես, այն սենյակները, որտեղ միտեր, ժողովներ, բժնարկումներ, գրագրություններ, խորհրդակցություններ էին անցկացվում, կոչվեցին **բյուրոներ**, և այսպես, ուղտի բրդը դարձավ սեղան, սենյակ, միստ և ղեկավար մարմին: Եվ ահա այսօր մեզ համար անկասկած գործ ենք անում՝ **բյուրոն որոշեց, հարցը մտքին բյուրո, բյուրո ընտրեցին** և այլ արտահայտություններ, որոնց մեջ արդեն վարդը «չի նկատվում» հսկա կենդանու՝ ուղտի բրդը:

88. ԵՇԻՆ ՆՍՏԵԼ ՄԵԿ ԱՍՈՒ Է, ԻՋՆԵԼԸ՝ ԵՐԿՈՒ... ԱՈՒԿ, ԽԱՅՏԱՈՒԿ, ԱՆԱՈՒԿ ԵՎ...ՊԱՆԱՐԱԿԵԼ

Իմաստով միմյանցից հեռու, բայց ծագմանը «ազգակից» բառերի թվին կարելի է դասել վերոհիշյալ երեք ոչ պարզ կազմություն ունեցող բառերը: Որպեսզի ճշտենք նրանց իմաստային զարգացման ընթացքը, հարկ է, որ սկսենք **առակ**-ից:

Առակ-ը բարդ բառ է՝ **առ** նախդիրից և **ակ**-(ն)՝ «աչք» բառից: Իսկ **առ** նախդիրը զրաբարուն բազմաթիվ նշանակություններ ուներ, որոնցից մեկն էլ «առջևն» էր: Ուստի **առակ**-ն նշանակում էր «աչքի առջև», այսինքն՝ աչքի կամ աչքերի առջև դրված բան, օրինակ: Այս պատճառով էլ **առակ**-ն **ն** **օրինակ**-ը գործ են անվել կողք կողքի, ինչպես՝ «Որ է **առակ օրինակի**» կամ «**առակ օրինակի** տեսողաց»: Ներսես Լամբրոնացին գրում է. «Որպես **առակն** աննեքեան զարմացմամբ հային» (ինչպես **առակի** (օրինակի) վրա բոլորը զարմանքով են նայում): Եվ այսպես, **առակ**-ը աստիճանաբար ցուցադրական առարկա, դիտելու առարկա կամ օրինակի համար դրված մի իր նշանակությունից դարձավ «զրույց», «բարոյախոսություն» որևէ երևույթի մասին, որևէ դիվավածի մասին, քանի որ բերվող օրինակները հիմնականում վատ օրինակներ էին, կյանքի բացասական երևույթները անբարոյականության, օրինազանցության, դաժանության, անբարեխղճության, զողության, սպանության և այլն, որոնք էլ ծաղր ու ծանակի էին ենթարկվում իրապարակայնորեն: Այդ իսկ պատճառով էլ **առակ** բառի կողքին սկսեցին հայտնվել **ծանակ**-ը, **խայտառակ**-ը, **նշավակ**-ը, **պախարակ**-ը, **ծաղր**-ը, որոնց մասին կպատմենք հաջորդ գրույցներում:

Եվ այսպես, **առակ**-ը աստիճանաբար առարկայական հասկացությունից վեր անվեց վերագակյան «պատկեր, օրինակ, պատմություն, զրույց, խրատ, բարոյախոսություն» նշանակության, քանի որ սովորություն էր օրինազանցներին պարտադիր կերպով իրապարակում, փողոցներում ի ցույց դնելը, շրջեցնելը, որպեսզի ժողովուրդը գերծ մնա վատ արարքներից:

Եվ այսպես, առաջացավ **առակ**՝ «զրույց, բարոյական խրատ, բարոյախոսություն, ի ցույց տրվող պատմություն» հասկացությունը, որից էն մինչև **առած**-ը մնում էր մի քայլ: Գրաբարյան **առ առակէ շրջեցուցանի**ն արտահայտությունը արդյունք էր այն իրողության, որ հանցագործին ի ցույց էին դնում որպես վատ օրինակ այլոց դատախարակելու, նույն սխալից մյուսներին գերծ պահելու նպատակով:

Քանի որ **առակի** համար մարդուն իրապարակ-



ներում պտտեցնելը ամորալի երևույթ էր, այս հանգամանքն էլ հավանաբար հիմք ծառայեց **առակամք** նոր բառի առաջացման համար, որ նշանակում էր «սեռական գործարաններ»: Իհարկե, այսբանով չի վերջանում **առակ**-ի դերը նոր բառեր կազմելու հարցում: Չէ՞ որ նրանցից ունենք նաև կազմված **խայտառակություն**-ը, նաև **առակ խայտառակություն** ոճը: Այստեղ նոր է մեզ համար **խայտ**-ը: **խայտ**-ը հայերենում ունի «նշան, պիտակ, գույնզգույն նախշ, խալեր, կետեր» նշանակությունը: Այսպես, օրինակ Սևանի ձկնեխի մեկի անունը կարծրախայտ է: Կարծիր պտուղն ունենալու պատճառով: Ուրեմն **առակ**-ից առաջ **խայտ**-ը կցելով կազմվում են **խայտ-առակ** և ապա **խայտ-առակել**, **խայտ-առակություն** բառերը: Սա կապված էր այն երևույթի հետ, որ հանցանք կամ զանցանք կատարողին հրապարակային նշավակման ենթարկելու համար դեմքին մուր էին քսում: Այստեղից էլ **անվանը մուր քել**, **անունը մրտուել**, **սևացնել** արտահայտությունները: **խայտառակվողին** հաճախ նստեցնում էին էշի վրա և կապկպում, որպեսզի հեշտ լինի փողոցներով նրան շրջեցնելը: Միա այստեղից էլ **էշին նստեցնել**, **էշի վրա դնել** արտահայտությունները: Միա և վկայությունը: Նշենք մեկը մանր ժամանակագրություններում գրի առնված ակնատեսների վկայություններից. «Ջիրահիմ քեին և զկանաչազուխ մօլլայ մի ի յէ հեծոյց և ի մէջ քաղաքին այնպէս **խայտառակ** շրջեցոյց դապալով» (Իրահիմ քեիյան կանաչազուխ մի մոլլայի նստեցրեց էշին և այդպես քաղաքի մեջ **խայտառակ** շրջեցրեց մունետիկոյ):

89. ԵՔԵ ՉՏԵՍԵՎԱԾ ԲԱՆ ԵՍ ԱՆՈՒՄ ԱՆԱՌԱԿ ԵՍ...

Այժմ **անառակ** արտահայտության մասին: Արդի հայերենում **անառակ** ընկալվում է «անամոր, անկարգ, անբարոյական, շնացող, պոռնիկ» նշանակություններով: Օրինակ՝ **Նրա անառակ վարքը անտանելի էր արդեն**: Անգամ գրաբարում գործածվում էր «**անառակ** կեանք կոչեցանք» կամ «**յանառակ** կանանք և **յարագ**, այսինքն՝ **անառակ** գիտակցվում է «անօրինական, լկտի, օրինակից դուրս, կարգից դուրս, ոչ սովորական» նշանակություններով: Միա և **անառակ ձևից՝ անառակություն** «անբարոյականություն, ոչ շիտակ կյանք, անամոթություն» լայն հասկացությունը:

90. ԱՎԱՆԱԿԸ ՍԵԾԱՆՈՒՄ ԵՃ Ե ԴԱՌՆՈՒՄ, ԻՍԿ ԻՆՉՈ՞Ր ԵՆ ԱՍՈՒՄ, ԵՃ ԿԵՐԵԼ ԻՆ՝ ՍՏՐՈՒԿ ՍԵՆՁԱՅԵԼ ԻՆ...

Գրաբարում **մտրուկ** նշանակում էր «քուռակ, իշու ծագ, ավանակ, իշուկ»: Միա Սուրբ զբոսն գործածված մի նախարասություն. «էշս քսան և **մտրուկն** տասն», որն հաստատում է **մտրուկ**-ի «ջահել, մատղաշ էշ» նշանակությունը: Սակայն հայտնի չէ հայերենում **մտրուկ**-ի ծագումը: Ի՞նչ է այն նախապես նշանակել: Այսպես, օրինակ՝ մենք գիտենք, որ **ավանակ** բառը, որն այժմ ընկալվում է միայն «էշ, հիմար» նշանակություններով (հիշեցնենք, որ **հիմար** բառն արաբերենում ևս «էշ, ապուշ» է նշանակում), նախկինում նշանակում էր միայն «ծագ իշու, ծիու, եղնիկի», սա կարող էր վկայել պաղպաղեղը, ուր yavan կամ yavan նշանակում էր «ջահել, երիտասարդ, մատղաշ», որից էլ փաղաքշական **yuvanak** ձևը, ինչը դարձել է հայերենի համար հիմք: Սրանից հայերենում ունենք **յուանակ** կամ **յուանակ**, իսկ արդի գրականում նաև **ավանակ**: Այս բառի հետ նույնն է **ջիվան**-ը՝ «մատղաշ, թարմ, երիտասարդ», օրինակ՝ Մուկաց բարբառում մինչև հիմա էլ **ջրվան** նշանակում է «քուռակ, մատղաշ

էշ» և ոչ թե «դեռատի»: Սակայն հետագայում **ավանակ**-ը գործ է ածվում ոչ «վիճր էշ, ծագուկ» նշանակություններով, այլ էշ-ի:

Այսպես էլ **մտրուկ**-ի ծագումն է: Այն թեպետ այժմ գործ է ածվում «ջահել, մատղաշ էշ» նշանակություններով, սակայն իմաստային առումով նախապես այլ իմաստ է ունենցել: Այսպես, արաբերենում պահպանվել է mtruk՝ «բաց քողած, արծակ» (նաև mtr՝ «արագ քայլով զնայ»), որով կոչել են էշերի քուռակներին (կամ ձիերի քուռակներին նույնպես)՝ նկատի ունենալով նրանց դեռևս բեռ կրելուց, աշխատանքից ազատ լինելու հանգամանքը:

Եվ այսպես, այս **մտրուկ** բառի հին նշանակության հիման վրա է առաջացել թրի-լիսիի բարբառի «էշ կերել ին՝ մտրուկ մենձացել» ասացվածքը, որ պիտի ընկալել «էշի նման կերել են, սանձարձակ, ազատ մեծացել» նշանակությամբ:

Հայերենի բարբառները փոխ են առել նաև **ջիվան ձևը**, որ շատ գործածական է **ջահել-ջիվան** արտահայտությանը կամ **ջիվան յար ջան**, **ջիվան րոյիղ մատաղ** և այլ ձևերում: Եթե այսօր մեկը դիմում է իր սիրելի անձնավորությանն ու ասում **ջիվան յար ջան** (ինչպես «Անուշ»-ում է ասվում), ապա ոչ ոք չի վիրավորվում, որ իրեն ավանակ են ասում, քանզի **ջիվան**-ը չի ընկալվում հայերենի հին **յուանակ** (կամ **յուանակ**) նշանակությամբ, այլ՝ իր նոր՝ «ջահել, մատղաշ, մատաղ, երիտասարդ» նշանակություններով:

91. ԴԻՍԱԿԱՎԱՆԴԵՄ, ԹԵ՞ ՍԱՍԻԱՐԱՅՈՒԹՅՈՒՆ

Ո՞վ չի հիշում Ե. Չարենցի «Կապկազ թմանաչա»-ն, ուր փաշան, ծաղրածու **Դարային** դիմելով, ասում է. «Ի՞նչ մասխարա»՝ «չուն ծաղրածու»: Նա այս բառը ժողովրդական խոսակցական լեզվից է առել: Հայերենի բազմաթիվ բարբառներ գործածում են **մասխարա**, **մասխարայություն** անել, **մասխարա ըլնել** արտահայտությունները, ինչպես, օրինակ թրիլիսիի բարբառում՝ «**Մասխարեն** մարդ չի սպանի», «Ուրիշին մասխարա գցողը իրա գլխին կըկատարի» կամ «Ինչ քյանդորբազ՝ առանց **մասխարի**» և այլն: Մասխարա բառը հայերենին է անցել արաբերենից, որի արմատն է saxira՝ «ծաղրել, ծեռ առնել», որից գոյականակերտ —ma ածանցով masxara՝ «ծաղրող, ծեռ առնող, ծաղրածու»:

Միջնադարյան «Դովհանեն և Այշա» պոեմում հանդիպում ենք **մասխարա** ձևին.

— Բա, սևավոր ծուռ մասխարա...

Իմիջիպալոց ասենք, որ հայերենը հարևան սեմական լեզուներից է ժառանգել նաև **ծաղր** բառը, հավանաբար ասորերենից (արամեերենից), ուր արաբերենի saxira-ն արտասանվում էր **ծաղրա**: Այս արմատից էլ՝ **ծաղրել**, **ծաղր ատել**, **ծաղր առնել**, **ծաղրած** և ապա **ծաղրածու**: Խորհուրդ էր տրվում մարդկանց թերությունները չծաղրել. «Մի լինիր **ծաղրածու** և կատակերգակ»: Բանի որ **ծաղրածուները** դիմակների օգնությամբ էին կատարում իրենց հեգնանքներն ու հուպանքները, ապա աստիճանաբար մաս-



խարա բառը սկսեց գիտակցվել որպես այն առարկան, որը ծաղրի նյութն էր և ծաղրողը էր: Սիս այստեղից էլ մասխարա սկսեց նշանակել **ծաղրի առարկա** (համեմատիր հայերենի **ծաղրի առարկա դառնալ** արտահայտությունը):

Ղիմակ և **ղիմակահանդես**: Եվ քանի որ արաբների հետ ավելի մերձավոր շփում ունեին իսպանացիներն ու ֆրանսիացիները, արաբերեն *mascara* «ղիմակ» բառն սկսեցին օգտագործել **ղիմակահանդեսների** և **պարահանդեսների** իմաստով *mascarada* ձևով: Ֆրանսիայում այն սկսեց հիշել *masquerad* ձևով: *Mascarad*-ը եվրոպայում տարածվել սկսեց 16-րդ դարից. նույնիսկ լեզվաբանները գտել են, թե առաջին անգամ որ բավականից է գործածվել այն. դա 1587 թվականն է: Ռուսերենի և եվրոպական լեզուների միջնորդությամբ **մասխարա** բառը «ղիմակահանդես» նոր նշանակությամբ երրորդ անգամ փայտորեն արձևակերպեց հայերենի բառասպաշարի մեջ, և այն գործածելիս մենք չենք էլ գիտակցում, որ արյունակիցներ են **ծաղր**-ը, **մասխարա**-ն և **մասկարա**-ը:

92. ԳԵՐԱԴՂԱՍԵԼԻ Է ՍՐՈՏԿԵՐԸ, ԹԵ՞ ԾԱՆԱԿԻ ԵՆԹԱՐԿԿԵԼԸ

Ո՞վ չի հիշում Գ. Թունանյանի հայտնի տողերը «Մարո» պոեմից.

Դե, դուրս կորիք տնիցս,
Մրտեցիր անունս...

Անունը մոռոնել, անունը սևացնել, պատվին մուր քսել, պատիվը սևացնել արտահայտությունները գալիս են շատ վաղ ժամանակներից, ինչպես և խայտառակել, պախարակել, առակ և ծանակ անել կամ ծաղր ու ծանակի ենթարկել արտահայտությունները...

Գրաբարը շատ է սիրում կողք կողքի գործածել իմաստով միմյանց մոտ բառեր, ինչպես, օրինակ՝ **մարտ պատերազմի**, **սուր սուսերի**, **առակ օրինակի** և այլն: Եվ ահա որպեսզի հասկանանք, թե ինչ է նշանակում **ծանակ** բառը, բավական է, որ գիտենք նրա կողքին դրվող **առակ**–ի նշանակությունը, ինչպես, ասենք, հետևյալ արտահայտության մեջ. «Ձի մի **ծանակ** և **առակ** լինիցիմ» (Որպեսզի չլինե՞ք **ծանակ** և **առակ**), «Սռակ և **ծանակ** արար» (Սռակ և **ծանակ** արեց): Զե՞ որ **ծանակ**–ը հանդիպում է նաև **ծաղր**–ի հետ: Շատ ենք օգտագործում մենք նաև այսօր **ծաղր** ու **ծանակի ենթարկել**, **ծաղր** ու **ծանակ անել** արտահայտությունները նույնպես: Իսկ ինչպե՞ս են քաղցամանում բառարանները **ծանակ**–ը՝ «խաղք, խայտառակ, խայտառակություն», **ծանակել**՝ «խայտառակել»: քայց ինչպե՞ս առաջացավ այս բառը: Գ. Անանյանի «Չայերենի արմատական բառարանում» այս բառի ծագման մասին չկա որոշակի ոչինչ: Որպեսզի ստուգաբանենք **ծանակ**–ը, մենք պիտի վերադառնանք մեր զրույցի սկզբում մեքենաված տողերին, ուր խոսվում էր **մուր**–ի մասին: Զե՞ որ **խայտառակել** նշանակել է դեմքին **մուր** նշաններ անել: Լույսը չե՞ն **դեմքին մուր քսել** կամ **պատվին մուր քսել** արտահայտություններն էլ: Գուցե և **ծանակ**–ն էլ մրի կամ սևացնելու հետ է կապված: Այո: Զե՞ որ արաբերենն ունի *sanağ* «մուր» բառը, որ կարող էր հուշել **ծանակ**–ի սեմական ծագում ունենալը, եթե ոչ արաբերենից, քանի որ *sanağ*–ից պիտի բանական կամ **առաջ** ունենայինք և ոչ **ծանակ**, իսկ արամեերենից և կամ ասորական արաբացիներից կարող էինք **ծանակ**–ը ժառանգել, որովհետև արաբերենի *s*–ի փոխարեն նրանք հնչում են *š*, ինչպես ունենք **ծաղր**–ը, որը արաբերենում *saxira* ձևով է վկայված: Զետևարար լիովին համապատասխան են նաև **ծանակն** ու *sanağ*–ը:

Ղարություն և արվեստ

93. ԿԱՎԻՑ ՍԱՐԴ ԵՆՎԵՑ, ԲԱՅՑ ԵՎ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ...

Բոլոր ղարոցականներն էլ գիտեն այսօր հրեական զրույցը, թե ինչպես Աստված հողից **մարդ** ստեղծեց: Եվ լսել են, անշուշտ, որ հանգուցյալներից շիրիմ իջեցնելիս մի բուռ հող են նետում՝ ասելով.

— Դող էիր՝ հող դառնաս...

Ինչո՞ւ պաշտվեց **հողը**: Լա էր կյանք տալիս բույսերին ու մարդուն. այստեղից էլ՝ երկրի պաշտման, մեր օրերում՝ **երկրագոյե**՝ «պաշտել հողը», բառացի՝ «երկիրը, հողը համբուրել» արտահայտությունը:

Առավելապես հողն ու կավը պաշտվել են **Միջագետքում**: Զե՞ որ **Միջագետքը** զուրկ էր օգտակար հանածոներից ու անտառներից: Անգամ **քար** չկար: Այստեղ տունը պատրաստում էին **կավից**, իսկ եթե ծղուտներից, ապա դարձյալ սվաղում էին **կավով**: Բոլոր անանդեոները, թոնիրները, կրակարանները, պարիսպները պատրաստում էին **կավից**: **Կավով** էին սվաղում և հարդարում բնակարանների հատակը, ներքին պատերն ու տանիքը: Եվ քանի որ թոթի գյուտը դեռ չէր արված (և ոչ էլ պապիրուսի կամ մազաղաթի), ուստի մարդու գրելու ջանկարները դարձյալ հանդիպեց **կավին**: Կավից մարդը պատրաստեց սալիկներ, վրան պատկերներ, պատկերազանք և ապա գրեք դաջեց: Եվ քանի որ կավն այս սալիկները փխրում էին, երկար չէին դիմանում, մարդը մտածեց թրծել դրանք անանդեոնի մման, և նրա գյուտը պատկերն հաջողությամբ: Կավն սալիկներն ապրեցին անվթար, դարեր, դարեր...

Այս գյուտը մեզանից շուրջ 6 հազար տարի առաջ էր: Դա կատարվեց Շումերում, Միջագետքի հարավում, այստեղից էլ ընդօրինակեցին այդ գյուտը արքայացիները, ասորեստանցիները, քարեյացիները, քիայնացիները, էլամացիները և այլն: Ինչպե՞ս էին կոչվում այդ կավե սալիկները, սա շատ կարևոր է, այնպես մենք չենք հասկանա, թե ինչպես ստեղծվեցին **ղալիր**, **ղարատուն** (հիմա՞ դպրոց), **ղարոցական**, **ղարություն** բառերը: Մարդն առանց **ղարության** ինչի՞՞ է մնան: Իզուր չէր երգում մեր բանաստեղծ Չարեմը:

Եվ ղարությունն են մեր երգում ես,
Գեղեցկությունը **ղարության** վես:

Միջագետքում չկար ուրիշ հարմար շինանյութ, շումերները հղացան կավից պատրաստած սալիկների վրա գրելու միտքը: Նրանք կավից գանազան չափերի սալիկներ պատրաստեցին, որոնց վրա եղեգյա գրչով նշաններ դաջեցին, և ահա այդ գրված սալիկները նրանք ամվանում էին դուր կամ **դուպ**: Եթե **դուպի** վրա նյութ չէր տեղավորվում, ապա նրանք շարունակությունը գրում էին մեկ այլ **դուպի** վրա և այսպես երրորդի, չորրորդի, հինգերորդի... ջսանբորդի վրա: Երբ ավարտվում էր **դուպի** էջը, **դուպարը** կամ **դուպարը** զգուշացնում էր. «Շարունակությունը տես հաջորդ էջում կամ հաջորդ **դուպի** վրա»: Եվ այսպես տարիներ շարունակ **դուպարների** տանը սովորում էին սեպագիր նշանները մանուկ հասակից՝ դառնալու համար պալատական գրագիրներ, թարգմաններ, գուշակներ, տաճարների քուրմեր, քախտ տնօրինողներ՝ **զրուրներ**:

Արամեական շրջանում **դուպարներին** սկսեցին անվանել **ղալիրներ** (այսինքն **դուպ**–ի–ներ), որոնցից էլ այս բառը անցավ պարսիկներին, էլամացիներին, պարթևներին: Իրանական տեղ ցույց տվող –**թա**ն անանգով պարսկերենում կազմ-

վեց **Դեբիրե**սբան բառը: Հայերը նույնպես այս բառը **դպիր** ձևով են օգտագործում, որը հիմք է տալիս ենթադրելու, որ այն հայերենին պարսկերենի միջոցով է փոխանցվել: Հայերը **դպիր**-ից կազմել են **ատենադպիր**՝ «քարտուղար, արձանագրող», **դպրանոց**՝ «**դպիր** կատարատելու տեղ», որը հետագայում դարձավ **դպրոց** կամ **դպրատուն**՝ «դպիրների տուն» (**դպիր** վարժեցնելու տեղ): Եթե առաջ նման **դպրանոց**ներում կամ **դպրատներում** միայն **դպիրներ**՝ գրագիրներ էին վարժեցնում, ապա ներկայումս մասսայաբար բոլորին են այնտեղ սովորեցնում գրել-կարդալ, ուստի **դպրոցը** արդեն նոր առումով է մեզ ներկայանում, արդեն որպես կրթության օջախ և մարդու գոյության ամենաանհրաժեշտ ուսումնաստության և դաստիարակության վայր: **Դպրոց** բառից կազմվել են նաև **դպրություն**՝ «գիր ու մատենագրություն, հոգևոր մշակույթ, կրթություն, դիվան», **դպրապետ**՝ «ատենադպիր, վարժապետ, դպրոցի տնօրեն», **դպրոցական**՝ «աշակերտ, դպրոցում սովորող, դպրոցավարտ, դպրոցի տարիքի» և այլ բառեր:

94. ԱՌԱՆՅ ԿՆԻՔԻ ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՍ ԱՆԵԼ

«Առանց **կնիքի** ոչ մի փաստաթուղթ վավերական չի համարվում»: «Ում **կնիք** են վստահում, նա էլ **իշխանության** ներկայացուցիչ է»: «Հեղափոխությունն իր **կնիքը** դրեց բոլոր արվեստագետների ստեղծագործության վրա»: «Նրա անունը ժողովուրդը **Պուլոզ Մուկուչ կնիքեց**» և այլ արտահայտություններ այսօր սովորական են հայերենում: **Կնիք**-ից է ստեղծվել նույնիսկ կրոնական **կնունք** բառը, որով կոչվում է քրիստոնյա մկրտելու, հաստատելու օժտը:

Բառարանները **կնք**-ել բայի նշանակությունները թվելիս գրում են՝ «դրոշմել, տպել, պատճենել, դաջել, հետք թողնել, հաստատել», հետևաբար **կնիքը**՝ «տպող, պատճենող, դաջող, դրոշմող, հետք թողնող» գործիքն է: Իսկ որտե՞ղ և ե՞րբ ստեղծվեց այն: Ի՞նչ հանգամանքներ ստիպեցին մարդուն մտածել **կնիք** ստեղծելու մասին, ո՞ր լեզուն կարող է մեզ բանալի տալ դեպի **կնիք**-ի ակունքները ճանապարհորդելիս:

Եվ անհ մենք նորից ստիպված ենք ուղևորվել դեպի Միջագետք, դեպի Շուսների և Աքքադի քաղաքակրթությունները, որտեղ առաջին անգամ հանդիպում ենք **կնիք** բառի գործածությանը: Այս, դուք ժամանակն եք հարցնում: Խնդրեն, չորս և կես հազարամյակ մեզանից առաջ գործածվում էր **խոսու** բառը քաղաքներում՝ սեպագիր արձանագրություններում: Մենք արդեն խոսել ենք **դպիր** բառի առաջացման մասին, և դուք գիտեք, ուր Շուսներում և Աքքադում գրում էին կավե սալիկների վրա: Իսկ եթե թագավորական հրամանն է գրվում, քանի՞ օրինակ և քանի՞ անգամ պետք էր արտագրել միևնույն հրամանագիրը: Իսկ չէ՞ որ այդքան գրագծեր **դուպատրներ**՝ **դպիրներ** չկային: Եվ ահա մարդկային միտքը հորինեց գլանաձև **կնիքը**՝ **խոսու**-ը, որը, թաց կավե սալիկի վրայով գլորվելով, թողնում էր այնտեղ իր վրա փորագրված գրերն ու նկարները: Այս ձևով դաջված, որոշման սալիկն էլ նեց կոչվում էր **کانک**՝ «կնքված»: **Կունուկը** սկսեցին պատրաստել նաև դրամների հման՝ կղոր, բռնիչով: Եվ քանի որ հեշտ էր այն կրել հետը, մարդիկ թելով կապում էին **կնիքները** գոտուց և կամ կախում վզից: Ամենից շատ այս բանը տարածվեց հին աշխարհի վաճառականների՝ **թանգարների** մոտ, որոնք դրամական մեծ գործարքներ էին կատարում, ապառիկ ապրանքներ էին գնում և վաճառում, որոնց մասին անհրաժեշտ «փաստաթղթերը» հարկ էր «ստորագրել»: Մինչդեռ **թանգարները** գրել-կարդալ չգիտեին, և այստեղ նրանց օգնության էր գալիս **կնիքը**, որի վրա նստապես գրված էր տվյալ **թանգարի** անուն-ազգանունը, որ քաղաքից լինելը: Նման **թանգարների** մասնագիտու-

թյունը փոխանցվում էր որոշ գրդի, ամբողջ տոնին, որի պատճառով մենք այսօր գիտենք մի քանի հարյուրամյակ հարատևող առևտրական տների անունները, ինչպես **Էգիրի**, **Մուրաշուի տները** և այլն:

Շատ անգամ **կնիքի** փոխարինել է նաև **եղունգը, մատը**: Դրանք ոչ մասնագետ վկաներն էին **կնիք** չունեցողների, որոնք թաց կավի վրա թողնում էին իրենց մատ-նահետքերը (կամ եղունգահետքերը) կամ, ինչպես քաջադասցիներն էին ասում, **ճապուտները** (սօք):

Մեզ են հասել հազարավոր ապառիկ տրված ապրանքների «ստացականներ» (մատուլիայի **Կանեչ** քաղաքից, **Էրլայից**, **Սիփարից**, **Աշուրից** և այլն, ուր գրված են ապրանքն ապառիկ ստացողների և գործարքին վկա գտնվող անձանց անունները՝ հանապարհատից ստորագրություններով:

Չնստապատիվ **կնիքներ** գետեղեցին անասինների վրա: Եվ այդ սովորությունը հարատևեց գրեթե մինչև 20-րդ դար՝ մինչև մասսայական գրել-կարդալու ուսուցման տարածվելը: Մենք Բուզանդ պատմիչի վկայությունն ունենք, որ պարսկական Շապուհ կրում էր **վարագազիր** մատանի: Իսկ շատ իշխաններ և մելիքներ մատանու վրա ունեին իրենց անվան և ազգանվան սկզբնատառերը:

Կնիք-ի ճանապարհորդությունը այսքանով չի սպառվում...այն հայերենի միջնորդությամբ, ինչպես լեզվաբաններն են ապացուցում, անցավ նաև ռուսերենին, ուր «кнѣга» բառը գործածվում է հենց իր նախնական «տպված»-ք նշանակությամբ:

95. Ո՞Վ Է ՎԱՐԺԱՊԵՏԸ, ԵՎ Ո՞Վ՝ ՎԱՐԴԱՊԵՏԸ

Ներկայումս **ուսուցիչ** բառի փոխարեն եթե մեկն օգտագործի **վարժապետ**-ը, ապա նրա խոսքը կստանա արհամարհական երանգ և հավանաբար ոմանց համար կինչի վիրավորական: Մակայն այդպես չէր մեզանից մեկ և կես հազար տարի առաջ: Եթե գրում էին. «Ի ձեռն Մահակայ և Մեսրոպայ **վարժապետացն**» (Մահակ և Մեսրոպ **վարժապետների** միջոցով), ապա ամենադրական առումով նկատելի ունեին նրանց ուսուցչի դերը: Այս իսկ առումով էլ **վարժարան** նշանակում էր **դպրոց**, այն տեղը, ուր **վարժեցնում** էին, կրթում աշակերտներին (այս իմաստով գործածվում էին նաև **վարժանոց, վարժք** բառերը): Վարժարանները լինում էին հետնորական, երաժշտական, ըմբիշների, հոգևոր, իմաստասիրական, մարզիկների, ծիերի և այլն:

Վարժ-ը ծագում է պախլավերենի varz՝ «գիտություն, աշխատություն, գործ, փորձ, վարժություն, մարզաճք» բառից: Գրաբարում ասում էին. «Քրիստի վարժարանի վարժը գնոսա» (Մարզում էր նրանց ինչպես **վարժարանում**) և այլն: Այստեղից էլ **մանկավարժ**, **մանկավարժություն**՝ «մանուկների դաստիարակ, կրթող», «մանկավարժություն, մանկադաստիարակություն» բառերը: Լեզվաբան է. Բենվեդիստը գտավ, որ **վարժ** բառի հետ ծագումով նույն արմատից է նաև **վարդ**-ը, որից ունեցն **վարդապետ, վարդապետություն, վարդապետել, վարդապետարան, վարդապետանոց** և այլ բառերը: Ուստի **վարդապետը** «ուսուցիչ, դաստիարակ, հրահանգիչ, կրթող» նշանակություններով էր գործածվում, իսկ **վարդապետարան** կամ **վարդապետանոց**՝ «դպրոց, կրթարան, ճեմարան» նշանակություններով: Օրինակ՝ «Արիստարուղոս **վարդապետ** Պտղոմեայ արքայի» (Արիստարուղոսը Պտղոմեոս արքայի ուսուցիչն էր): **Վարդապետ օրինաց** էր կոչվում կրոնական օրենքներ ուսուցանող անձը: Եվ այսպես, **վարդապետ** մեր օրերում գիտակցվում է միայն կրոնական կամ ուսմունքի ուսուցիչ առումով, իսկ **վարժապետը** սովորական: Այստեղից էլ **վարդապետություն** բառի «ուսմունք» նշանակությունը. «Մարքսի և Էնգելսի **վարդապետությունը** որդեգրվեց պրոլետարիա-

տի կողմից»: Եվ այսպես, ինչպես մարզ և մարդ (պետ) բառերն էին անցել հայերենից երկու անգամ, այնպես էլ վարձապետը և վարդապետը՝ առաջինը պաշտական ազդեցության շրջանում, ուր հնչում էին varh, և մյուսը՝ միջին պարսկերենի, ուր հնչում էին vard:

96. ԴԱՍԱԿ-Ն ԴԱՍԻՎԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍԵՃ

— Գայանե, գիտե՞ս մ նորությունը, այսօր մեր դասարանի դաստիարակ նշանակեցին հայոց լեզվի ուսուցիչ Արշակունուն:

— Ի՞նչ ուրախանալու բան է, որ ավետիս ես տալիս, օրական մի դաստա տետրակ ուղղորդ ժամանակ կգտնի՞ մեր դաստիարակության համար.— դժգոհ պատասխանեց Աննան («Պիոներ կանչ» թերթից):

Ընթերցելով այս տողերը՝ ես ամփոջպես ուշադրություն դարձրի դաստա-դաստիարակ, դաստիարակություն, ինչպես նաև դաստիարակել, անդաստիարակ հայերեն բառերին, որոնց կազմության և ծագման վրա առօրյա մեր խոսակցությունների ընթացքում հազիվ թե ուշադրություն ենք դարձնում: Ահա և վերջենքք քննելու համար դաստա և դաստիարակ բառերը և լեզվաբանին հարցնենք. «Դրանց նմանությունը պատահակա՞ն է, թե՞ իսկապես միևնույն արմատից են սերում»: Եզվաբանն անվարան կհաստատի, որ նմանությունը պատահական չէ, և երկուսն էլ նույն արմատից են կերտված: Զգալով, որ մենք պիտի առարկենք, թե դաստա-ն «ծեռքը», ի՞նչ կապ կարող է ունենալ դաստիարակի հետ, լեզվաբանը կշարունակի բացատրել դրանց ծագման ակունքները: Իսկապես դաստա բառը արդի խոսակցականում ունի «կապոց, ծեռ» նշանակությունները և ծագում է պալիավերենի dast «ծեռ» բառից: Նրանով հայերենում շատ բառեր են կազմվել, ինչպես, օրինակ՝ դաստա՝ «բաթ, ծեռ», դաստակերտ՝ «կալվածք, ծեռքով մշակած, խնամած, կերտած, շինած ագարակ, ավան, բնակավայր» (բառացի՝ ծեռակերտ), դաստապան՝ «թրի կոթ», դաստառակ՝ «ծեռքի սրբիչ, անծեռոց» և այլն: Ուրեմն դաստիարակ՝ «բռնող՝ ծե՞ռք»: Այր: Զէ՞ որ կա նաև այդպիսի արտահայտություն. «Ո՛վ է իմ ծեռքից բռնողը»: Նոր պարսկերենն էլ ունի պահպանած դաստ՝ «ծեռք» բառից դաստյար և դաստուբար՝ «օգնականություն, օժանդակություն» բառերը, որոնք բառացիորեն նշանակում են «ծեռք մեկնել, խնամել, տածել, առաջնորդել»:

Դիմ Գայաստանում, ինչպես 5-րդ դարի պատմիչ Փարպեցին է վկայում, ծառաներից զատ ազնվականների երեխաներին դաստիարակների էին հանձնում. «Եվ շատ ի մանր մանկանց նախարարաց որդուցն դաստիարակյօք և ծառայիք» (Եվ նախարարների փոքր որդիներից շատերը դաստիարակվեցին և ծառաներով էին): Ուրեմն դաստիարակները մանուկների կրթող ուսուցիչներն էին, նրանք ծեռք մեկնողները, խորհուրդ տվողները, օժանդակողները, օգնականները, ուստի դաստիարակել նշանակել է «ծեռք մեկնել, օգնել, ծեռքով սնուցել, ղեկավարել», իսկ անդաստիարակ՝ «անղեկավար, անօգնական, անխորհուրդ մեծացած անձ»:

97. ԵԹԵ ՌԻՍՈՒՄՆԱՍԵՐ ԵՄ՝ ՍԱՌԵՍԱՏԻԿՈՍ ԵՍ

Դիմգերորդ դարից հայ գրականությունը սկսում է հարստանալ նաև հունարենից թարգմանած բազմաթիվ ստեղծագործություններով: Բնականաբար, այդ ստեղծագործությունների թարգմանության հետ մեկտեղ հայոց լեզու են մուտք գործում մեծ քանակությամբ հունարեն բառեր, որոնց զգալի մասը մեր լեզվում գործածական է նաև այժմ: Այսօր մաթեմատիկա՝ «գիտություն թվերի և չափերի մասին», մա-

թեմատիկոս՝ «թվերի և չափագրության հարցերով զբաղվող մասնագետ», մաթեմատիկական՝ «չափագիտական, թվաբանական» տերմինները տվորական են մեր լեզվում, սակայն անտվորն այստեղ այն է, որ մենք այդ բառերը չենք օգտագործում դրանց նախկին նշանակություններով: Այս բառերը ծագում են հունարենի mados, madema՝ «ուսում, գիտություն» բառերից, որից էլ madematika՝ «ուսումնասեր», ապա՝ «չափագետ», «ուսումնական, ուսող», madematikus՝ «ուսողություն, չափագիտական գիտություններ»: Եվսերիսի «ժամանակագրության» մեջ է հունարենի մաթեմատիկոս բառի ամենահին վկայությունը հայերենում, ուր այն օգտագործվում է իր հին՝ «ուսումնական, ուսող» նշանակություններով:

98. ԲԱՆՈՆ-Ը ԿԱՆՈՆ-Ի ԲԱՐԵԿԱՍ

Սենք դարձյալ ուղևորվելու ենք դեպի քաղաքակրթության օրրաններից մեկը՝ Միջագետք, դեպի սեմիտների երկիրը, որը համարվում է մի շարք գիտությունների ու արվեստների հայրենիքը: Բացի թվերի վեցնյակների, հաշվարկման (Մաև 12, 24, 12 ժամեր, 12 ամիսներ և այլն) սիստեմի ստեղծումը, շումերներին և սեմիտներին է վերագրվում նաև մի շարք չափերի հասկացության գաղղվաբարը: Շինարարական արվեստի զարգացման հետ միասին ստեղծվեցին նաև գործիքներ, որոնց անունները այդ գործիքների հետ միասին անցան հարևան և ավելի հեռուներում բնակվող ժողովուրդներին: Մի առիթով ասել ենք, որ շինանյութերի արքայությունը ստիպում էր Միջագետքի բնակիչներին ստեղծել անհրաժեշտ գործիքներն ու իրերը ծեռքի տակ եղած նյութերից: Իսկ ինչո՞ւ չպետք է եղեզը դառնար միջագետքցու ամենամոտիկ բարեկամը, որն առատորեն աճում էր ճահճուտներում և գետերի ափերին: Իսկ ինչպե՞ս էր կոչվում եղեզը Միջագետքում: Շումերները անվանում էին այն gin, արքայացիները՝ gannu, որից էլ՝ հայերենի կնիւն (արդի հնչմամբ՝ կնյուն), օրինակ՝ «Բարծնայայց՝ կնիւն առանց քմախոյ» (Կածի՝ կնյունը առանց քրի):

Քանի որ Միջագետքում եղեզը, սեմական ժողովրդի հնչմամբ՝ gannu, օգտագործվում էր որպես ուղիղ ծող կամ որպես զավազան, ապա նա էլ դարձավ ճարտարապետների ծեռքին ուղիղ գիծ քաշելու մի գործիք և ապա՝ չափի միավոր: Իսկ այնուհետև, ինչ որ այդ գործիքի օգնությամբ էր զվճած կամ պատրաստված, սկսեցին անվանել կանոնավ կամ կանոնավոր, իսկ հակառակը՝ անկանոն՝ «ոչ ուղիղ, ոչ կարգին», «կարգից դուրս»:

Աստվածաշնչի թարգմանության հետ միասին, զուցե և հունական Միզոդոմիայի բնակիչների հետ ունեցած շփումների ժամանակ, բառս անցավ նաև եվրոպական ժողովուրդներին՝ canna, լատիներենում դեռևս «եղեզ» է նշանակում, իսկ հունարենում՝ kanon, kanonos՝ «եղեզի ցողուն», ապա՝ «ուղիղ փայտ, ծող, ուղիղ գիծ, քանոն, ճաղ, սահմանագիծ, եկեղեցական կանոն, օրենք»: Այս վերջին նշանակությամբ էլ բառը հետո՝ արաբերենի անցավ գանու ձևով, բուրբերենի՝ «օրենք, ստիվական», վրացերենի՝ կանոնի, ռուսերենի՝ канон՝ «եկեղեցական անավույսան կամ երեկոյան արարու-



դրություն, երգ, աղոթք», նաև «канон» «երեկոյան ժամերգություն, նախատոնակ», որից էլ «канониче» «նախորակին» և «մեռելոց հոգեհանգիստ, մերթով գաթա, տոնական մերթաջուր» և այլն: Տեսե՛ք եղեգ-ից ո՛ր հասանք: Սա դեռ ամենը չէ: Հայերենում բառը երկու ձևով տարածվեց՝ կանոն (նաև կանովն) և քանոն, նաև քանուն: Եվ կանոն-ը, և քանոն-ը հավասարապես գործածվում էին «օրենք, կարգ, կանոն, ուղղություն, ուղիղ գիծ քաշելու գործիք» նշանակությամբ: Այսպես, օրինակ՝ եթե գրաբարում ասվում է «Վարդապետ՝ քանոն հաւատոյ», նշանակում է «Վարդապետն է հավատքի ուղղությունը»: Կամ երբեմն քանոնն ու կանոնը բացատրվում են մեկը մյուսով. «Ահա այս է կանոն, որ է քանոնն և սահման քրիստոնեության հաւատոյս» (Ահա այս է կանոնը, որը նույն քանոնն է և սահմանը քրիստոնեության հավատքի):

Միջին դարերից արդեն սկսեցին սահմանազատել քանոն-ն ու կանոն-ը: Կանոն-ը՝ «կարգ, օրենք, ուղղություն», իսկ քանոն-ը՝ «ծող, ուղիղ գիծ զօնելու հարմարանք» նշանակություններով, ինչպես որ գործածում ենք հիմա: Գրաբարում ունենք «Եթե քանոնն թիր իցե» (Եթե քանոնը ծուռ է, սխալ է) նախադասությունը: Եվ այսպես, նույն բառը կողք կողքի գործածում ենք և տարբեր նշանակություններ ենք տեսնում նրանց մեջ՝ մերթ ք-ով, մերթ կ-ով գրված լինելու պատճառով: Այս երևույթը նկատվում է նաև կամար և քամար գուգախոններում, որոնցից առաջինն ընկալվում է «շինարարության կրագիծ, դրան, լուսամուտի վերին աղեղնաձև մաս», իսկ քամար-ը՝ «զուտի» նշանակությամբ:

99. ՄԻՔԵ ՃԵՍԱՐԱՆԸ ԶԲՈՍԱՎԱՅՐ Է

Ո՛ւմ ծանոթ չեն հայ ժողովրդի ասույթներից՝ «Ձրև գալով չեն սովորում», «Տիտիկ անողն ա մարդ դառնում», «Շալվար պիտի մաշես, որ սովորես» արտահայտությունները: Ո՛վ կարող է առարկել այս դարերում փորձված ճշմարտությունների դեմ: Պարզվում է, որ կա մեկը, որը կարող է հակառակը պնդել, և դա լիսեյ կամ լիցեյ բառն է, որի հայերեն անունն է ճեմարան: Եվ այս հակասությունը պարզելու համար մենք դարձյալ ստիպված ենք ճանապարհորդել դեպի հելլենական դպրությունը, դեպի Չեչլադա: Հին աշխարհի խոշորագույն գիտնականներից մեկը՝ Արիստոտելը, հիմնադրեց մի դպրոց, որ կոչվեց լիկեյ: Իսկ ինչու՞ լիկեյ: Արիստոտելի հիմնած դպրոցը գտնվում էր Ապոլիոնիոս Լիկեյացու տաճարի տարածքում, և այդ տաճարի անունով էլ սկսեցին նրա դպրոցն անվանել լիկեյ: Այս դպրոցում ուսուցումը հիմնականում բանավոր էր և ազատ ունկնդրությամբ: Արիստոտելին ունկնդրելու էին գալիս տարեքն և հասուն մարդիկ՝ առավելության, իսկ կեսօրից հետո՝ ազնվատոհմ երիտասարդությունը: Արիստոտելը ուսուցումը կատարում էր ծառուղիներում ճեմելու ընթացքում: Բնական է, որ հարցեր էին ծագում, և ուսուցիչը բավարարում էր տված հարցերի պատասխանը՝ դարձյալ ճեմելիս: Երբեմն հարց ու պատասխանները վիճաբանության նյութ էին դառնում, և այստեղից էլ ծայր էին առնում եզրակացությունները: Ահա այս լիկեյ բառից էլ եզրույթական լեզուներում տարածվեցին լիցեյ, լիսեյ ձևերը, ինչպես ունենք կիկերոն, ցիցերոն, կրկես, ցիրկ և այլն, իսկ հայերենում ծնվեց ճեմարան՝ «ուսումնարան, դպրոց, բարձր դպրոց» նշանակությամբ: Գեմարանի հիմքում հայերենի ճեմ՝ «պտույտ, քայլվածք» արմատն է, որից էլ գրաբարում ունենք ճեմել կամ ճեմ առնուլ՝ «սիգալով մաս գալ», ճեմելիք՝ «զբոսարան», ապա՝ ճեմարանական, քաճառաճեմ, իմաստաճեմ և այլ ձևեր, ճեմարանի նշանակությամբ գործ է ածվում ճեմականը, որը սակայն տարածում չգտավ: Այսպիսով՝ ճեմարան՝ «զբոսարան, պտույ-

տի վայր»: Ուրեմն ի՞նչ է դուքս գալիս, կարելի է սովորել նաև առա՛նց նստելու: Ո՛վ կարող է առարկել, եթե Արիստոտելը փորձել է այն:

100. ԱՐԶԱՆԸ ԿԱՆԳՆԵՑՆՈ՞ՒՄ ԵՆ, ԹԵ՛ ԳՐՈՒՄ

Ամեն մի դպրոցական այսօր կարող է պատասխանել այն հարցին, թե ինչ է արձանը: Նա կպատասխանի, թե արձանը որևէ նշանակող մարդու կամ հերոսի հիշատակին կանգնեցված քարե կամ բրոնզե կոթող անդրին է: Բայց մի՞ թե ճիշտ կլինի այս պատասխանը: Եթե դիմենք դասական գրաբարի հեղինակներից, ապա կտեսնենք, որ արձան-ը այն ժամանակներում նշանակում էր «գիր, արձանագրություն», այսպես, օրինակ՝ «Արձան փորագրայլ», «Սաղմոս, արձանագիր ի Դաթի», «Դրոշմեցիդ արձան յաիտեմից» և այլն: Քանի որ արձան-ը ուներ «գիր, արձանագրություն» նշանակությունները, ուստի դրանից կազմվեց նաև արձանակել ձևը՝ արձանագրել-ի նշանակությամբ, օրինակ՝ «Ի տերունական գիրս արձանակել»: Իսկ արձանական նշանակում էր ոչ թե «արձանի վերաբերյալ, այլ «դամբանական գիր կամ ճառ»:

Այսօր մենք հին սովորության համաձայն դեռևս ասում ենք՝ «արձանագրել միստում ասվածը», «արձանագրություն կազմել կատարվածի մասին», սակայն մոռանում ենք, որ դրանք թղթի վրա ենք կատարում և ոչ կոթողի, քարի, ժայռերի: Այսինքն՝ մենք թղթագրում ենք և ոչ արձանագրում: Չէ՛ որ հինում, երբ չէր կատարված թղթի գյուտը, թաղաքակրթության ամենահին օրրաններում Շումերում, Աշուրում, Բաբելոնում, Եգիպտոսում, Էլամում, Քիայնայում, Պարսկաստանում թագավորների կատարած գործերը դրոշմում էին հավերժական նյութերի վեճերի կամ քարերի և կալե սալիկների վրա, որի պատճառով էլ այսօր շարունակում ենք հին ձևով ասել՝ արձանագրել, թեև արձանի վրա չենք գրում, այլ թղթի: Արձան ու կոթող չենք կանգնեցնում, այլ միայն շարադրում ենք թղթի վրա, գրի ենք առնում եղելությունը: Չավելտական չէ՛, եթե որևէ հանցագործի հանցանք ենք արձանագրում, ապա հին ընկալմամբ ստացվում է, որ շարագործի համար մենք հիշատակի հավերժացում ենք կատարում նրան արձան ենք կանգնեցնում, մինչդեռ նոր ընկալմամբ՝ միայն թղթի վրա շարադրում ենք նրա արարքները:



101. ԿԱՇԻՆ ՍԱԳԱՂԱԹ Է, ԵՔԵ «ՈՒՈՐԿԱԾ» Է...

Հանրահայտ է, որ յուրաքանչյուր կենդանի ընդամենը մեկ կաշի ունի, ապա քանի՞ անասուն էր պետք մեր Մատենադարանի ողջ մասյանները գրելու համար... Բայց նախ մատյանի մասին: Ի՞նչ է մատենա-ը: Գիրք մագաղաթեայ, նաև քարտես, նաև թուղթ... Ինչպե՞ս ծնվեցին այս բառերը՝ քաղաքակրթության ուղեկիցները:

Միջգետնում կատարված **զրի** գյուտը իր հետ բերեց նաև կավե սալիկների՝ **դուպերի** հայտնագործությունը: Սակայն իր առավելության հետ միասին (որ հավերժական էր և անեղծանելի) թրծած կավե սալիկն ուներ նաև մեծ թերություններ. ծանր էր, շատ տեղ բռնող և շատ տքնություն պահանջող: Բացի այդ, մեկ անգամ էր գործածվում, մինչդեռ **կաշին** գերծ էր այս թերություններից և կարող էր գործածվել մի քանի անգամ, եթե ջնջում էին նրա վրա գրածը: Եվ ահա սեմական ժողովուրդները **զրի** զարգացման պատմության մեջ կատարեցին հաջորդ մեծ քայլը. մշակելով **կաշին** ստեղծեցին **թղթի** նման քարակ և սպիտակ նյութ, որը սակայն կոչեցին **մագալաթ** կամ **մագալատ**: Արամեերենում, եբրայերենում (նաև ասորերենում) **մագալատա**՝ magallata (կամ **մագալտա**, **մակելտո**) նշանակում էր «գալարված, ոլորված», ծաղում է ցլ՝ «ոլորվել, գալարել, ոլորել» արմատից՝ **մա**– գոյականակերտի միջոցով (հիշենք, որ **մա**– ածանցով բառեր սեմական լեզուներից հայերենը շատ փոխառություններ ունի կատարած, ինչպես՝ **մական, մակաղ, մահիճ** (արաբերենի mahağ–ից) և այլն):

Միս և գրաբարում գիտեին այս ստուգաբանությունը, որի համար հաճախ էլ շեշտում էին նրա իմաստը պատկերավոր արտահայտություններում: Օրինակ՝ Եսայի մարգարեի զրցում զգուշացվում է. «Գալարեսցին երկինք՝ իբրև **զմագաղաթ**» (Կգալարվեն երկինքները **մագաղաթի** նման): Հետագայում իր թանկության պատճառով տեղի տվեց **մագալաթը թղթին**, ուստի բազմիցս նրա հետ կողք կողքի հիշատակվում են **թուղթ**–ը, հունական **քարտես**–ը, լատիներենի charta, իտալերենի pergamina կամ carta pecora, հունարենի biblion, գերմաներենի Volumen, liber բառերը և այլն:

102. ԵՄՍՄԱԿԸ ԳԻՐ Է, ԹԵ՞ ԳԻՐԸ

Թերևս այսօրվա **նամակը** բացատրելու հարկ չկա: Այն ծեռագիր (երբեմն նաև մեքենագիր) ծրարված մի գրություն է, ուր շարադրված են ողջույնի, կարոտի զգացումներ, նաև սիրո, ինչպես նաև պետական, վարչական հանձնարարություններ, կարգադրություններ: Գլխավորապես **նամակը** ենթադրվում է փոստի ժառանգություն տեղի հասցված ծրարված գրություն, սակայն ներկայումս գոյություն ունեն նաև նամակի այլ տեսակներ: Եթե նամակն առջև երկու անձերի միջև կատարվող գրագրություն էր, ապա ներկայումս ընդունված է նաև **բաց նամակի** ձևը՝ մամուլում հրապարակվող կոչի, բողոքի և ինչ–ինչ խնդիրներ համրության քննարկմանը ներկայացնելու նպատակով:

Նամակ բառին համարժեք է համարվում նաև **գիր**–ը, **թուղթ**–ը, **քարտեզ**–ը: Միս Ե. Չարենցի կողմից Ա. Բակունցին ուղղված չափածո **նամակի** վերնագիրը՝ «**Թուղթ** Սկսել Բակունցին, գրված Լենինգրադ քաղաքից»: Սակայն **նամակ**–ը միշտ այս նշանակությունը չի ունեցել: Այն պահլավերենի namak ձևից է փոխ առնվել, որն ուներ «գիր, գրություն» նշանակությունը, իսկ հետո՝ «գիր»: Այս է պատճառը, որ պարսիկ մեծ քանաստեղծ Ֆիրդուսին շաեիրի մասին զգած գիրքը անվանեց «**Շահնամե**», այսինքն՝ շաեիրի (մասին) գիրք և ոչ թե շաեիրի նամակ: Միջին պարսկերենում **նամա**–ն արտասանվում է **նամե**: Հայոց մոտ պահպանվել է նաև **զարհամամակ**–ը՝ իշխանական տների հաջորդականության փաստաթուղթը, ուր **նամակ** բառը հենց իր հին՝ «թուղթ, գրություն, գիր» նշանակություններով է գործածված:

103. ԹՈՒՐԹԸ ՏԻՏՆՈՒՄՆ Է ԱՐԴՅՈՔ

Գրաբարում **թուղթ** բառն օգտագործվում էր «թերթ, գրություն, նամակ, գիր, հրովարտակ» նշանակություններով՝ դեռևս **թղթի** գյուտից շատ առաջ: Չէ՛ որ **թղթի** գյուտը Չինաստանում է արվել, սակայն միայն արաբների նվաճումներից հետո նրանց **թուղթ** պատրաստելու տեխնիկան տարածվեց դեպի արևմուտք 9–րդ դարից: Ուրեմն, ինչպե՛ս կարող էր **թղթի** գոյությունից առաջ **թուղթ** հասկացությունը լինել հայոց մոտ: Ոչ, սա թյուրիմացություն է: Թերևս ճիշտ են այստեղ այն լեզվաբանները, որոնք հայերեն **թուղթ** բառի ծագումը կապում են լատիներենի titulus՝ «տիտղոս»–ի հետ, սա էլ հունարենի titos–ն է (ռուսերենի տիտուլ–ը): Հռոմեացիների մոտ նախապես titulus–ը մի տախտակ էր, որի վրա գրում էին գերիների քիվը, ավարի քանակը, գրավված քաղաքների անունները խոշոր տառերով և ամրացնում էին միգակի կամ գավազանի ծայրին: Այստեղից էլ **տիտղոս**՝ «նակագրություն, մականուն, վերնագիր» և ապա՝ «կոչում» նշանակությունները: Լավ, բայց եթե **տիտղոս**–ը լինեցա՛ր է, ինչպե՛ս է նույնը դարձել նաև **թուղթ**:

104. ԶԱՐՏԵԶ, ԶԱՐՏ, ԶԱՐՏՈՒՐԱՐ

Երկրագնդի կամ որևէ երկրի, վայրի, տեղանքի ծովերի, լեռների, գետերի, լճերի տեղադրման պատկերը ցույց տվող գծագիրը ընդունված է անվանել **քարտեզ**: **Քարտեզ** կամ **քարտես** բառը հունարենի xartes «նագաղաթի թերթ, գրություն, նամակ, հրովարտակ» բառից է փոխ առնվել, որն իր հերթին, ենթադրվում է, փոխ է առնվել եգիպտերենից: Հունարենից այն անցել է նաև աշխարհի բազմաթիվ լեզուների, ինչպես՝ լատիներենի՝ charta, իտալերենի՝ carta, ֆրանսերենի՝ carte, գերմաներենի՝ Karte, սլավոնական լեզուներին՝ կարտա, ասորերենին և արաբերենին՝ xartesa, qartas, xarita հնչյուններով:

Հունարենի քարտես–ը հայերենում երկու ձևով պահպանվեց՝ –ես վերջավորությանը՝ **քարտես** կամ **քարտեզ** ձևով, առանց –ես–ի՝ **քարտ** ձևով, որն օգտագործվում էր «թղթի կտոր, թերթիկ, խաղաթուղթ, այցետոմս, հաշվածաման թերթիկ» և այլ նշանակություններով: **Քարտ**–ից ունենք կազմված **այցեքարտ**, **խաղաքարտ**, **քարտաբան** և այլ բաղադրություններ:

Միջնադարում **քարտեզ**–ը ոչ միայն «թուղթ», այլև «նամակ, գիր» նշանակություններ էր օգտագործվում: Միս Մարգիս Անուչևիցի (17–րդ դար) բանաստեղծից մի հատված, որ սիրուհուն դիմելով՝ ասում է. «Բերեալ մատուցին եղևելոյս զսփրալիլ թո **քարտեզ**» (հին՝ զարչելիիս բերին հանձնեցին թո նամակը):

Կիլիկյան թագավորության ժամանակ **քարտեզ**–ը գործածվել է նաև «փող, դրամ, գումար» նշանակությամբ. «Ջտղայք, զոր ի վեց **քարտես** ծախեին» (Մաճուկներին, որոնք վեց դրամի էին վաճառում), «Կամ հատուցեք զկայսերն, կամ տուք **քարտեզ** և արծաթ» (Կամ կայսրին վճարեցեք, կամ տվեք թղթաթղթում և արծաթ):

Մեր լեզվում [այն տարածում ունի նաև հունարենի **խարտուլարիոս**՝ «առեմաղախի, թղթերի կամ գրասենյակի վերակացու» բառից եկող **քարտուլար**–ը: Հայոց մեծ պատմիչ Ազաթանգեղոսը թագավորական պալատում վարել է **քարտուլարի** պաշտոնը, ահա վկայություն այդ մասին. «Աջող **քարտուլար**ն Ազաթանգեղոսն ի դրամն արքունի կարգեալ **քարտուլար**»: Մեր օրերում ևս **քարտուլարը** գրասենյակի գրագրության պատասխանատուն է կամ ժողովի կողմից ընտրված որոշ ժամանակով կամ ժամանակավոր արձանագրություն կազմող կամ որևէ գրություն կազմող անձը, թղթավարը, գրագիրը:

105. ԻՆՉՈ՞ՒՒ ԵՆՔ «ՔԱՌՈՐԴԻ» ՄԵՃ ԳՐՈՒՄ...

Ամեն մի դպրոցական էլ գլխի է ընկնում, որ հայերեն **տետրակ** կամ **տետր** բառերը նման են ռուսերենի **тетрадь**—ին, բայց ինչո՞ւ են նրանք տարբերվում մեկը մյուսից իրենց վերջավորությամբ: Թերևս այդ մասին նրանք չեն խորհել: Պարզ է, որ հայերը **տետր** բառը ռուսերից չեն վերցրել, այլապես պիտի հնչեի՞ն **տետրած**, բացի այդ հայերը մինչև ռուսներին հետ հանդիպելը արդեն մի քանի հարյուրամյակ գործածում էին այդ բառը: Ուրեմն որտեղի՞ց եկավ **տետրակ**—ը: **Տետրա**ս հունարեն բառ է, որ նշանակում է «քառորդ, չորս»՝ **տետրա** «չորս» բառից: Քանի որ մագաղաթյա կաշին ոչ միայն ոլորած կամ գալարած էին գործածում (այդպես կարելի էր ավարտված գիրքը պահել, բայց ոչ գրելու ընթացքում), այլև մեծ տեղ չընկնելու համար **քառածակ** էին անում, այստեղից էլ **տետրա**ս կամ **տետրատ**՝ «քառորդ» արտահայտությունը: Հայերը իրենց սովորության համաձայն փոխառյալ **տետր** կամ **տետեր** բառին ավելացրին գոյականակերտ **-ակ** ածանցը, որով ստեղծվեց **տետրակ**—ը: Իմիջիպալը հունարենից քարգմանված շատ երկիրում **տետրակ** բառի փոխարեն գրված է **քառակ** (Տիմոթեոս Կուզ, 54, 74, 100, 122): Ուրեմն մեր հոգևոր հայրերը, գործածելով **տետր**, **տետրակ** ձևերը, գիտեին նրա հունարեն նշանակությունը, և հետագայում հայերը **տետրակ** սաելով հասկանում էին «գրքույկ, փոքր գիրք», իսկ ավելի նոր հասկացությամբ արդեն այն օգտագործվել սկսեց չգրված կամ գրված թղթերի այն գրքույկի նշանակությամբ, որը ոչ թե քառածակ էր, այսինքն՝ չորս թերթից, այլև կարող էր լինել 12 թերթից, 24 թերթից, 48 թերթից, 96 թերթից և այլն: Ինչպես նկատում եք, էջերի քանակի հիմքում էլ ընկած է 4 թերթը, այսինքն՝ 12 էջ երեք անգամ քառածակն է, 24 թերթանին՝ վեց անգամ քառածակը, 48 թերթանին՝ տասներկու անգամ քառածակը և այլն:

106. ԿԱՐԵԼԻ՞՞ Է «ՔԵՐԹԵԼՈՎ» ԴԱՌՆԱԼ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Մենք արդեն խոսել ենք տարբեր լեզուներում միևնույն հնչումն ունեցող, բայց իմաստով տարբեր բառերի գոյության մասին: Այս կարգի բառերը զգալի թիվ են կազմում նաև հայերենում: Օրինակ **այր**՝ «տղամարդ» և **այր**՝ «բարոյագ», նաև **այր**—ել՝ «վառել» բայի արմատը, **տալ**՝ «մեկին մի բան տալ» և **տալ**՝ «ամուսնու քույր», **գամ**՝ «մեխ, բեռ» և **գամ**՝ «գալ բայի ըղձականի եզակի թվի առաջին դեմքը», նաև **գամ**՝ «անգամ» գրաբարյան ձևը, որ գործածվում է **գամ** մի՝ «մեկ անգամ» իմաստով և այլն, **լամ**՝ «լացեն» և **լամ**՝ «լինդ» և այլն:

Այս կարգի բառերից են նաև հայերենի **քերթել**՝ «քերելով հանել, մաշկել, կաշին պլոկել» և **քերթել**՝ «բանաստեղծություն հորինել, բանաստեղծել», որոնք որոշ լեզվաբաններ փորձում են բխցնել միևնույն **քեր**—ել արմատից (սա էլ՝ հնդեվրոպական *sker* կամ *ker*՝ «կտրել, ճեղքել» արմատից): Թերևս կարելի էր համաձայնվել իիշյալ արմատից միայն առաջին իմաստի **քերթ**—ել՝ «կաշի պլոկել» բխցնելու հետ, սակայն երկրորդ իմաստի՝ «բանաստեղծելու» հետ՝ ոչ: Ինչո՞ւ:

Այստեղ մենք գործ ունենք երկու անկախ, բայց նույնաիունք բառերի հետ, որոնք ծագումով տարբեր արմատներից են: Երկրորդ **քերթել** արմատը եկել է հայերեն միջագետքյան մշակույթից, սեմական աշխարհից, ինչպես եկել են դպրության հետ կապված նաև **գիր**, **գրող**, **կնիք**, **դպիր**, **դպրանոց** և այլ բառեր:

Աբբաղաղներից *egir*՝ «կախարհանքի, թովչանքի բանածև» բառն անցավ արամեացիներին՝ որպես *egirt*, ասորերենին՝ որպես *egarto*՝ «գիր» (ինչպես և հայերենն

ունի **գիր**, **գրող**), «գրվածք» նշանակությամբ: Եվ ահա երկրորդ անգամ հայոց լեզվում *egarto*—*գարտո*—ն՝ «գիրք», դարձավ **քերթ**: Հաճախ էլ գրում էին **քերթել**: Ե. Մկրտչու բառարանը քաջատրում է **քերթա**՝ «գրագիր»: Ահա այս **քերթ** արմատից էլ կազմվեցին հայերենում **քերթած**, **քերթում** կամ **քերթած**՝ «բանաստեղծություն, գրվածք, ստեղծագործություն, պոեմ, շարադրություն», **քերթածուփուն** (կամ **քերթածուփուն**)՝ «վիպասանություն, շարադրություն», **քերթութիւն** (կամ **քերթողութիւն**)՝ «քնարական, չափածո և քերականական, ճարտասանական ստեղծագործություն» և ընդհանրապես «ողջ մատենագրությունը» մեր ժամանակներում, ինչպես Ե. Հարենցն է հասկանում:

Մեր պատմության դառնաշունչ, չար ու խորշակ գիշերում Ռ՞նց է ծաղկել զվարթուն մեր **քերթությունն** հնամայ:

Կամ

Կա Մեծարենց, կա Տերյան, և բազում ուրիշ պոետներ կան, Բայց Թունանյանն է անհաս Արարատը մեր նոր **քերթության**:

Գրաբարում **քերթողը** և՛ բանաստեղծն է, և՛ քերականը, և՛ փիլիսոփան, և՛ ճարտասանը, և՛ պատմիչը, և՛ ընդհանրապես **գիր** ու գրականությանը զբաղվող անծնօր: Իզուր չէ, որ մեր պատմահորը՝ Մովսես Սարգսյան, անվանում էին **Քերթողահայրն Մովսես**, այսինքն՝ «բոլոր բանաստեղծների, գրողների, պատմիչների հայրը»:

Արևմտահայ գրական լեզվում գերադասում են **քերթում** (արդի հնչյամբ՝ **քերթված**)՝ «բանաստեղծություն» բառը գործածել, մինչդեռ արևելահայերենում՝ **բանաստեղծություն**—ը:

Այժմ վերադառնանք **քերթում**, **քերթութիւն**, **քերթող** բառերի (և մյուսը՝ **քերթել**՝ «մաշկել, քերծել») ծագման հարցին: Կարո՞ղ էին արդյոք սրանք ծագել **քերթել**՝ «մաշկազերծել, քերծել, քերել, հանել» արմատից (որպես թե մագաղաթի վրա քերտելով գրելու գործողությունից առաջացած):

Դիցուք հնարավոր էր նման իմաստային անցումով **քերթում**, **քերթութիւն**, **քերթող** բառերի ծագումը **քերթել**—ից, իսկ ինչո՞ւ ոչ *tegrare*—ից, եթե բազմաթիվ դպրության և գրականության առնչվող բառեր հայերենին են անցել Միջագետքի քաղաքակրթությունից, որպիսիք են՝ **գիր**, **դպրություն**, **կնիք**, **մագաղաթ** (ի դեպ, *magalatta* բառի է—ն էլ հայերենում դարձավ *թ*), **այբուբեն**—ը, **այբուբենի** տառերի անվանումները՝ **այբ**, **բեն**, **գիմ**, **դա** և այլն:

107. ԳՐՈՂԸ ԹԵՉ ՏԱՆԻ, ԳԻՐ, Ո՞Վ Է ԳՐԲԱՅԸ...

«Ինչ որ **գրվեց** գրվով, չի քանդվի բրոզով»,— եզրակացրել է հայ ժողովուրդը ելնելով իր դարավոր փորձից: **Գրի** և **գրքի** վերաբերյալ ինչպիսի՞ ակնածություն կա մեր ժողովրդի մեջ: **Գիր**—ը բազմիմաստ բառ է: Գիր նշանակում է և՛ նշանագիր, և՛ տառ, և՛ գրություն, և՛ նամակ, իսկ գոյականակերտ—հոգնակիակերտ ք ածանցի հավելմամբ՝ **գիրք** (բառացի՝ «շատ գրեր»), օրինակ՝ «Ընկալեալ Արշակալ Մեծի գիրն» (Ստացավ Արշակ Մեծի նամակը), «Գրեցին գիր արտերեն» և այլն, այստեղից էլ՝ **ի գիր արկանել, գիր առնել** (անել), **գիր հաստատել, ի գիր անկանիլ, ընդ գրով արկանել** և այլն:

Որոշ լեզվաբանների կարծիքով՝ հայերեն **գիր** բառը ծագում է հնդեվրոպական *wer*՝ «պատմել, քերել, քերթել» արմատից, որը, սակայն, մնում է ոչ այնքան հիմնա-



վորված մի վարկած, ահա թե ինչու: Նախ հնդկավորական լեզուները միմյանցից անջատվել են դեռևս այն ժամանակ, երբ զրի գաղափարն անգամ չի եղել, և երկրորդ՝ Հայաստանը, պատմության բերումով լինելով զրի ու քաղաքակրթության բնօրրաններից մեկի՝ Միջագետքի հարևանը, չէր կարող չկրել նրա ազդեցությունը, ինչպես հաստատում են նաև փաստերը: Այսպես՝ աքքադեերենում՝ egir, ասուրերենում՝ igir նշանակում էր «ձևակերպում, մտածություն, արտահայտություն» (փոխ է առնված շումերերենից), իսկ bel egirru՝ «կախարդական, մոգական բանաձևեր գրող», այսինքն «հմայող»: Հեթանոսական մեհյաններում դպիրների մի մասը այս մասնագիտությամբ էր զբաղվում:

որոնց նմանությամբ էլ սկսեցին **գիր** անել. **գրող** դառնալ նշանակում էր մտածողությունը և Հայաստանում: Միայն թե որտեղից է գալիս մեր ժողովրդի այն խոր ակնածությունը գրողների նկատմամբ, ինչպես նաև այն վախը, որն առաջացավ նրանց մասին ժողովրդի ունեցած պատկերացումից, թե **գրողները** ամենազոր են, նրանք կարող են **գիր** անելով մարդկանց բախտը տնօրինել, գուշակություններ անել և նույնիսկ կանխել սպառվող չարիքը. նրանց **ապագան** տնօրինել և այլն: Միայն այստեղից էլ՝ **ճակատագիր** հասկացությունը: Մեր նախնիները կարծում էին, թե յուրաքանչյուրի **ապագան** նրա **գիրը**, որոշված է նրա **ճակատին**, որն էլ անվանեցին **ճակատագիր**: Եվ թվում էր, թե այդ **գիրը** անեղծանելի է, անբեկանելի, որովհետև ինչ-որ **գիր** անողներն էին նախատեսել, ոչ ոք ի վիճակի չէր այլևս զննել կամ փոխել:

Միայն այսպես **գիր** անողները կամ **գրողները** աստիճանաբար ժողովրդի աչքում մոգական-աստվածային կարողություն ունեցող մարդիկ դարձան և աստվածացվեցին: Քրիստոնեության մուտքից հետո արգելվեց մեհյանների գիր անողներին դիմելը, և մասամբ քրիստոնյաները դադարեցին նրանց մոտ զնալուց, սակայն ոմանք շարունակում էին դիմել ընդհատակյա գրողներին, **գիր** անողներին, եթե ոչ **գիր** անողներին, ապա **գորագեորներին**, այսինքն այն **գիր** անողներին, որոնք ուրիշ **գիր** անողների գրերն էին «բացում, բանդում, ոչնչացնում, համում»: Եվ այսպես, հոսեցին դարեր և ժողովրդի մեջ ծայր առան **գրողների** մասին դարձվածքներ՝ **գրողը քեզ տանի**, **գրողի բաժին դասնա**, **գրող քեզ** (կամ **գրողս քեզ**), **գրողի տարած** կամ պարզապես՝ **գրող** արտահայտությունները:

Այսօր մենք գործածում ենք խոսքի մեջ **գրեթե** «համարյա, համարյա թե» արտահայտությունը, որը ծագում է դարձյալ **գրե թե**, **գրես թե** գրաբարյան ոճից, որոնց հիմքում դարձյալ **գիր**, **գրել** հասկացություններն են: Բանի որ **գրի** և **գրվածի** նկատմամբ մեծ հավատ էր արձանակորվել ժողովրդի մեջ, ուստի և այս հավատքից էլ ծնվեց **գրես թե**՝ «գրի որ» կամ «գրված համարիր», «հաշվիր գրված» արտահայտությունը, որովհետև ինչ որ գրված է համարվում, այն արդեն թվում էր անջնջելի...

108. ԵՁԵ ԱՐՎԵՍԱԳԵՏ ԵՍ, ԱՊԱ ԿԱԽԱՐԴ ԵՍ...

Հայերենի **արվեստ** բառը (գրաբարում **արուեստ**), ենթադրվում է, որ կարող էր ծագել **արիեստ**-ից, սակայն ե՞րբ, եթե գրաբարից սկսած երկուսն էլ կողք կողքի գրված ունենք: Ուրեմն **արուեստ**-ը կարող էր գալ մեկ այլ ակունքից և ոչ **արիեստ**-ից: Եվ իսկապես **արուեստ**-ը «իրաչազորություն, հրաշք ճարտարություն, խաբեական հնարք, արարչազորություն» իմաստներով է գրաբարում օգտագործվում, օրինակ «Որչափ արար Աստուած նշանս և **արուեստս**» (Որքան Աստված նշաններ և հրաչազորություններ արեց) կամ «Եվ երիցին նշանք և **արուեստը** ի վերայ տանն Իսրայելի» (Եվ թող նշաններ և հրաշքներ լինեն Իսրայելի տան վրա): Միայն հարեհի ժայռադրամանի վրա գտնվող երեքլեզվյալ արձանագրության մեջ համոզիպում ենք arustam՝ «հնարամտություն, ճարտարություն, կախարհություն» բառին, որը հենց հայերենի ծագման ակունքն է մատնանշում: Հավանաբար, պարթևների լեզվում կամ հին պարսկերենում այն սովորական մի բառ էր և հետո միայն ծեռք բերեց «ճարտարություն, վարպետություն» նշանակությունները: Եվ այսպես, պաղավերենից հայերենին անցած բառերի բլին փոխի ավելացնել ևս մեկը՝ **արվեստ**-ը: Հաճախ ենք մենք օգտագործում «Նրա կախարհիչ **արվեստ**-ը», ուր փաստորեն կրկնում ենք **կախարհ** բառը:


109. Ո՞Վ Է ԹՈՎԸ, ԵՁԵ ԿԱԽԱՐԴԵՆ ԵՆ ԵՐԱ ԳՈՐԾԱԿԻՑԸ

Թովիչ ես դու, ծով կապուտաչ,
 Քո թովչանքով ո՞վ չի գերվել.
 Եվ բարկությանը մեծաշառաչ,
 Եվ ծփանքով գիտես թովել:

Վան-Անիի այս քառատողում ընդգծված բառերը կարող ենք այլ հոմանիշներով փոխարինել. այսպես, **թովիչ**-ը՝ հրապուրիչ, կախարհիչ, հմայիչ, դյուբիչ, **թովչանք**-ը՝ հրապուրանք, կախարհանք, հմայք, դյուբանք, **թովել**-ը՝ հրապուրել, կախարհել, դյուբել, հմայել համարժեքներով բացատրել: Բայց մնում է անբացատրելի ընդգծված բառերի արձանատկան մասը՝ **թով**-ը: Ի՞նչ է **թով**-ը: Ի՞նչ վտակներով է եկել հայերենի բառապաշարի մեջ: Գուցե փորձե՞նք թերթել մեր հարուստ մատենագրությունը: Բայց այդքան հարուստ մատենագրության մեջ միայն մեկ անգամ է գործածվում **թով** բառը՝ «Կանոնագիրք հայոց» գրքում: Հայոց եկեղեցին նգովյալ է համարում **կախարհներին** և **թովերին**. «Եթե ոք **թով** իցե կամ **կախարհ** իցե նգովյալ երիցի»: Միայն այս նախադասությունն էլ օգնում է մեզ պարզելու, թե ինչ մասնագիտություն է այդ **թով**-ի մասնագիտությունը կամ արհեստը (գուցե ճիշտ կլիներ **արվեստ** անվանել): Հենց այս նախադասությունից էլ պարզվում է, որ **թով**-ն իր մասնագիտությամբ հավասարազոր է **կախարհ**-ի հետ, որի պատճառով էլ հավասարապես երկու այս արհեստով զբաղվողներին նույն պատժին է արժանացնում հայոց եկեղեցին իր նգովյալով: Իսկ ո՞ր լեզվից է անցել այս **թով**-ը հայերենին: Պարզվում է, որ այն հայերենով չի բացատրվում: Հենց սա է պատճառն է դարձել, որ նա դառնա լեզվաբանական մարզանքի առարկա (է **թոթով** բառից, էլ **թիվ**-ից, էլ հունարենից և այլն): Մինչդեռ գաղտնիքի բանալին տալիս են մեր հարևան Միջագետքի ժողովուրդները: Ընդերքերի և աքքադացիների մոտ **կախարհություն**ը զբաղվողների մի շարք մասնագիտություններ կային. դրանցից մեկն էլ **թովի** արհեստն էր: Սեպագիր

արծանագրություններում գրվում էր այն Կու ձևով (հիշենք, որ ուրարտական արծանագրություններում ծով բառն էլ գրվում էր շու ձևով): Ուրեմն թովչին անվանում էին Կու Ե՛ «թով մարդ», իսկ Կ՛ նաև «թովչանքի բանածև, կախարհաց» և Կ՛-տ՛՛ «անծծ, նգվը»:

110. ԵՐԲ ՈՉ ԲՈՒՈՐ ՆՈՏԱՆԵՐՆ ԵՆ ՆԿԱԳՈՒՄ



Մամուլում սովորական է դարձել «նոտաներ փոխանակել», «բողոքի նոտա հանձնել», «այսինչ կառավարությունը նոտա է տվել այսինչ հարցի կապակցությամբ» և կամ «այսինչ կառավարությունը պատասխան է տվել այսինչ կառավարության նոտային» արտահայտությունները: Դիվանագիտության բառարանը մտած այս բառը **Նոտա**-ն, ծագում է իտալերենի nota՝ «ծայնանիշ, երաժշտական հնչյունի նշան» բառից: Նոտաները հորինվեցին միայն երաժշտական երկերը գրի առնելու նպատակով: Լատիներենից nota-ն անցավ բազմաթիվ եվրոպական և ոչ եվրոպական լեզուների և մտավ նաև հայերենի բառապաշարի մեջ: Թեև հայերենը ստեղծեց սեփական ծայնանիշ տերմինը, սակայն **Նոտա**-ն շարունակում է իր գոյությունը և ասպարեզը չի զիջում ծայնանիշ-ին: Ի դեպ, դիվանագիտության մեջ **նոտաները** լինում են **գրավոր** և **բանավոր**: Nota կամ note բառը հիմք է դարձել շատ նոր բառերի ստեղծման համար, ինչպես՝ **բլոկնոտ**՝ «նշումների գրքույկ» կամ **նոտաբենե**՝ «լավ նկատիր» արտահայտության համար, որը կրճատ գրվում էր՝ N.B. (notabene) գրության կամ նամակի որևէ տեղը ուշադրության առարկա դարձնելու նպատակով:

Բայց հայ իրականության մեջ եվրոպական **nota** բառը բացի **Նոտա** (կամ **Նոտ**-ից, որ ունենք **բլոկնոտ** բառում) ձևից տառադարձվեց նաև **Նոթ** ձևով: Օրինակ՝ արևմտահայ գրական լեզվում սկսեցին օգտագործել **Նոթատետր**՝ «բլոկ-նոտ» նշանակությամբ, **Նոթեր**՝ «հուշեր», **Նոթ ընել**՝ «նշումներ կատարել», իսկ **Նոտա**՝ «ծայնանիշ» բառն էլ սկսեցին տառադարձել **Նոթա**: Եվ այսպես, որպես առանձին բառեր այսօր հայերենում գիտակցվում են **Նոթերի** գիրք՝ «հուշերի գիրք», **Նոթեր**՝ «հուշեր», **բլոկնոտ**՝ «նշումների տետրակ», **Նոտա**՝ «ծայնանիշ» և **Նոտա**՝ «դիվանագիտական հայտագիր, հայտարարություն» բառերը, որոնց բլուրդի մայրն է լատիներենի nota-ն:

111. ՆՈՏԱՐԻՈՒՄ, ՆՈՏԱՐ, ՆՈՏՐ ԳԻՐ, ՆՈՏՐ ԳՐԵԼ

Առանց **Նոտարիոսի** մեր կյանքը պատկերացնել դժվար է: Միշտ էլ առօրյայում կարիք ենք զգում ինչ-որ փաստաթղթերի կամ վավերագրերի, որոնք սակայն մեկ հատ են, մեկ օրինակից, ինչպես, ասենք, **ծննդյան վկայական**, **հատուության աստեստատ**, **ավարտական վկայական**, **ամուսնության վկայական**, **դիպլոմ**, **թեկնածուա-**

կան կամ **դոկտորական դիսերտացիայի դիպլոմ** և այլն, և դրանք չի կարելի կցել ինչ-որ գործի, այլ դրանք հաստատված օրինակները միայն: Սիս հենց այստեղ է, որ կարիք ենք զգում մենք **Նոտար(իոսի)** ծառայությանը: Ո՛վ է **Նոտար(իոսը)**, պետության կողմից հատուկ լիազորված վստահելի մի անձ, որ հաստատում է վերոհիշյալ կարգի փաստաթղթերի իսկությունը և տալիս է իր կողմից կնիքով վավերացված տվյալ փաստաթղթերի պատճենները: **Նոտար(իոս)** բառը գրաբարում գործածվում էր **Նոտար** ձևով: Այն փոխ է առնվել հունարենի notarius-ից, որ նշանակում էր «բարտուղար, գրագիր»: Այսպես էին կոչվում արդուհի կամ եկեղեցական գրագիրներն ու դպիրները: **Նոտար**-ից հայերենը կազմեց **Նոտարել** կամ **Նոտրել**, որ նշանակում է **Նոտարի** պես գրել, նշել, արագ գրել, որից էլ՝ հայերենի **Նոտարել**, որ բառացի նշանակում է «արագագրել, արագ նշել» և **Նոտր գիր**՝ «արագ գրվող գրության ձև, տառեր»: Արտագրող **գրիչներից** մեկը հետևյալ **հիշատակարանն** է թողել Վարդան Պատմիչի քնագիրն արտագրելուց հետո. «Ես՝ Ղազար արեղայա, բոլոր գրեցի մինչ ի հոս: **Նոտր** ուսայ (այնուհետև), **Նոտր** գրեցի»: Մեծուհեցին նույնպես նշում է. «Փափագվամք **Նոտրեցանք**»: Նոտր գիրը **երկաթագրի** համեմատ ավելի արագ էր գրվում, սակայն այս գրի ձևը հունարենի կամ լատիներենի **Նոտարիոս** տերմինի հետ ոչ մի կապ չուներ: Հայերենում միայն գիտակցվում էր այն «արագ գրվող նշանակող» առումով: Իսկ մեր օրերի հասկացողությամբ **Նոտար**-ը ոչ մի կապ չունի գրաբարյան **Նոտար-Նոտր** բառի հետ, այլ միայն ծագումնաբանորեն է հաստատում նրա ժառանգը լինելը:

112. ՉԵՆ ՎԻՐԱՎՈՐՎԻ ԱՐԴՅՈՒՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՆԳԱՍՆԵՐԸ...

Պատահեց, որ իր դպրոցն էր բացել **Ակադեմիսի** այգում, չէր էլ կասկածում, որ հետագայում պիտի իր այդ անվամբ կոչեն գիտությանը նվիրված ամենազգեցնող գիտությունների **ակադեմիան**: Հայերենի սահմանները վտանգված համարողները **ակադեմիա** բառը փոխարինում են **կաճառ**-ով, որը թեև գրաբարում շատ էր գործածվում, սակայն նոր սերնդի համար հեշտ է թվում **ակադեմիա** ասելը, քան ավելի կարճ **կաճառ**-ը: Իհարկե, գործածվում է նաև **ակադեմիա** բառի փոխարեն **ամուսնների կաճառ** արտահայտությունը, որը թարգմանություն է ֆրանսերենի Pantheon des immortels արտահայտության: Ուրեմն ի՞նչ է նշանակում նախապես **կաճառ**-ը: Ը՛վ՛ որ հնում **ակադեմիա** կամ **կաճառ** գոյություն չի ունեցել, ուրեմն ինչպե՞ս կարող էր **կաճառ**-ը այսօրվա նշանակությամբ գործածվել: Իսկապես դիտողությունը տրամաբանական է: Գրաբարյան տեքստերում **կաճառ**-ը գործածվում է «իրապարակ, համախմբության վայր, հավաքատեղի, խումբ, ատյան, հանդես, հույլ» նշանակություններով: Օրինակ՝ կաղանկատվածի պատմիչը գրում է. «Բազմախումբը **կաճառով** մտան է Գարդման գաւառ» (Բազմաքանակ բազմությունը (քանակի մասին է խոսքը) Գարդման գավառ է մտնում) կամ **կաճառք աստեղաց** նշանակում է «աստղերի հավաք, հույլ», «Քաղաքացն **կաճառք** (քաղաքների հավաքատեղիները կամ իրապարակները և այլն)»: Կար նաև **կաճառել** բայը՝ «միավորել, մերծեմալ» նշանակությամբ՝ «**կաճառելով** ընդ միմեանս» (միմյանց հետ միավորելով, միաբանելով) և այլն:

Գտնում ենք այս բառը քաղաքներում՝ kashar՝ «հանգուցել, միավորել, հավաքել», օրինակ՝ shabab...kusur՝ «միավորեց գործը...»: Սա չորս հազար տարի մեզանից առաջ...

113. ԱՊԱՀԱՐՁԱՆ, ԹԵ՞ ԳԻՐ ԿԱՍ ԹՈՒՂԹ ԱՐՁԱԿԱՆ

Շնորհիվ **Աստվածաշնչի**, որ մարդկության գրավոր ամենաինն հուշարձաններից մեկն է, մենք տեղեկություններ ենք ստանում շատ հարցերի պատասխանների մասին: Այսպես, օրինակ՝ Մատթեոսի Ավետարանում կարդում ենք. «Որ արձակ զկին իւր, տացե՛ց նա **զարձակմանն**» (Ով իր կնոջն է արձակում, պիտի տա նրա արձակման գիրը), իսկ երկրորդ օրինաց գրքում կարդում ենք. «Ո՞ր է թուրք **ապահարզանի**»: Սրանից հետևում է, որ **ապահարզանի թուրք** կամ **արձակման թուրք (զիր)** արտահայտությունները համարժեք են:

Ապահարզան՝ «ամուսնալուծումը», ոմանք ենթադրում էին **հարս** բառից, իբրև թե **պա-հարս-ան** ձևից, մինչդեռ վերևի երկու համարժեք ձևերի քննությունը մեղծում է այդ ենթադրական ստուգաբանությունը: Հայ մատենագրության մեջ **ապահարզան**-ը ավանդված է նաև **ապահարսան** գրությամբ, որը և հեշտացնում է հարցի լուծումը: Իրանական լեզուներում մենք գտնում ենք մեր բառի զուգահեռը: Օրինակ Ավետարանի լեզվում *hardzana*՝ «արձակել, բաց թողնել», մանիքեերենում *hors, hirz*՝ «թղ, ձգիր», իսկ հայերենում **արձակել** բառահեռների առկայությունը, այնպես էլ (**ապա**) **հարզան**՝ «արձակել, ազատել, բաց թողնել» և **արձակել**՝ «բաց թողնել, ազատել» զուգահեռները միևնույն հնչյունական օրենքներն են հաստատում, որ իրենք կազմում **զ** ունեցող ձևերը, օրինակ՝ **մարզել**, **ապահարզան** փոխառյալ են, մինչդեռ **ծ** ունեցող ձևերը, ինչպես **մարծել**, **արձակել**, հայկական են: Ի՞նչ է փոխվել հազարամյակների ընթացքում: Եթե հնում **ապահարզանը**՝ «արձակումը» կարող էր միայն տղամարդը տալ, ապա մեր երկրի օրենքներով (քանի որ իրավաբանորեն կինն էլ հավասար է տղամարդուն) նույն բանը կարող է կատարել նաև կինը:

114. ԶԵԿՈՒՅՅԵԼ ԵՆՈՒՄԿՈՒՄ Է ԳԱԼ ՀԱՅՏԵԼ, ՀԱՂՈՐԴԵԼ, ԾԱՆՈՒՅԵԼ, ԻՐԱԶԵԿ ՊԱՀԵԼ

Հայերենի **զալ** բայի հրամայականը լինում է **արի, եկ**, իսկ երբեմն էլ՝ երկուսը միասին **արել**: Օրինակ. «Արել այգին մեր»:

Եկ արմատից հայերենում բազմաթիվ բառեր են կազմվել, որոնք թեև ազգակից են ու արյունակից, սակայն բոլորովին իրար չեն «ծանաչում», քանի որ աշխատում են տարբեր մասնագիտություններով և տարբեր ոլորտներում: Այսպես, օրինակ՝ **եկա-մուտ** բառը՝ «շահույթ»՝ նշանակությանը է օգտագործվում, իր հիմքում ունի **եկ** և **մուտ** արմատները, սակայն նա անտեղյակ է իրեն արյունակից **իրազել** (իր-ա-զ-ել՝ «իրողությունների տեղյակ»), **զեկուցում** (զ-եկ-ոյց-ում), **նորել** (նոր-ել), **երթնել** (երթ-և-ել), **եկվոր** (եկ-ու-որ), **անել** (ան-ել՝ «չհասունացած խմոր») բառերի գոյությանը: Սրանք բոլորն էլ միմյանց հետ կապված են եկ արմատով, սակայն նախնական նշանակություններից շատ են հեռացել: Նրանց մոտիկ, հարազատ լինելու վկան **եկ** արմատն է: Այսպես, օրինակ՝ եթե **երթնել** (երթալ և գալ), **նորել** (նոր եկած) և **եկուոր** (եկվոր՝ «եկած»), մասամբ էլ՝ **անել** (չեկած, շիտունացած խմոր) բառերի մեջ **եկ** (եկած) արմատի նշանակությունը չի մթազնել, ապա նույնը չի կարելի ասել **զեկույց** (զ-եկ-ոյց)՝ «եկածի բացատրություն, եկածի հաղորդում, եկածի ծանուցում, ազդ», **զեկուցում** (զ-եկ-ոյց-ում) և **զեկուցել** բառերի մասին ևս, որոնցում արդեն չի գիտակցվում «զալու» իմաստը, մասնավորապես որ **զ**-ն ծուլվել է ասես **եկ**-ի հետ: Արդի հայերենի բառարաններում **զեկույց**, **զեկուցում**, **զեկուցագիր**, **զեկուցանել**, **զեկուցել**, **զեկուցող** և այլն արդեն գիտական կամ պաշտոնական հաղորդում կատարելու, հաշվետու լինե-

լու, իրազել պահելու նշանակություններով են օգտագործվում, ինչպես նաև **իրազել** բառը (իր-ա-զ-ել), որը բնավ արդեն **եկ**-ի հետ կապ չունի և նշանակում է «լավատեղյակ, որևէ բանի քաջ ծանոթ, գիտակ» և օգտագործվում է նաև **իրազել պահել**, **իրազել դառնալ**, **իրազել լինել**, **իրազել դարձնել** հարադրված ձևերով:

115. «ՊԱՏԻՎ» ԱՍՏԾՈՒ ՎԱՐՁԸ Ո՞ՒՄ Է ՏՐՎՈՒՄ

Այսօրվա խոսակցական լեզվում որպես շատ սովորական բառ հնչում է մի բառ, որ վրայ գրաբարում: Խոսքը **պատվավճար**-ի մասին է, որն այլ կերպ անվանում ենք նաև **հոնորար**: Օրինակ՝ «Որքա՞ն **հոնորար** են տալու զրքիդ համար», «Այսօր **հոնորար** են տալու, գնացեք ստացեք ձեր **հոնորարները**», կամ «Եթե մեկ մամուլին հարյուր ռուբլի **հոնորար** էլ գրեք, միևնույն է, ես չեմ դառնա ձեր զաղափարախոսը» և այլ նման արտահայտություններում **հոնորար** բառը գործ է ածվում «հեղինակների, բանաստեղծների, գրողների, լրագրողների, գրականության ու արվեստի ճակատի մշակների տրվող վարձի, վճարի» նշանակությամբ: Երբեմն **հոնորար** ենք ասում բժշկներին, փաստաբաններին, գիտության ասպարեզում աշխատողներին տրվող վարձատրությանը նույնպես:

Բայց ե՞րբ և ինչպե՞ս անձայն ու լուռ մուտք գործեց այս բառը հայերենի ակտիվ բառապաշարի մեջ: Միզուցե ռուսերենի միջոցորոշյալ՝ մը այն անցավ հայերենին: Հավանաբար այդ: Թերևս և եվրոպական լեզուների՞ց, սակայն ո՞ր: **Հոնորար**-ը շատ է հին, այն լատիներեն բառ է: Honor (is) նշանակում էր «պատիվ, արժանապատվություն, հարգանք» (սա էլ ավելի հին *honos* ձևից է ծագում): *Honos* անվանը Հին Հռոմում կա նաև մի հեթանոսական աստված՝ պատվի, արժանապատվության աստվածը, որի տաճարը գտնվում էր Հռոմի հարավային դարպասի՝ *Porta Capena*-ի դիմաց: Հին Հռոմում ընդհանրապես որևէ աշխատանքի կամ ծառայության համար տրվող կամավոր վարձը, վճարը կոչվում էր *honorarium*, որը ծառայողի մեծարանքը ընկալվում է «կամավոր վարձ, նվեր, պարգև, պատվավճար, հարգանքի վարձ»: Մեր օրերում եթե մեկին գիտական աստիճան է տրվում առանց դիսերտացիա ներկայացնելու, ապա դա կոչվում է *Honoris Gausa*՝ «պատվի համար»: Հոնորարը եվրոպական լեզուների փոխանցվեց միայն մտավոր աշխատանքի մշակների՝ արվեստագետներին, փաստաբաններին, բժշկներին, գրականության, բանաստեղծության և գիտության ասպարեզի աշխատողներին տրվող վճարի նշանակությամբ, օրինակ՝ ֆրանսերեն *honneur*, անգլերեն *honour*՝ «պատիվ, մեծարանք, հարգանք», որտեղից էլ այսօրվա հայերենի **հոնորար**-ը: Ուսերենում այն հնչում է **гонораp** ձևով: Շատ է տարածված նաև **человек с гонором**՝ «պատվամոլ մարդ, արժանապատվությամբ անձ, պատվախնդիր» նշանակություններով:

116. ԲՈՒՈՐ ՍՈՒՄԱՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆ, ԹԵ՞ ԹԱՆԳԱՐԱՆ ԿԱՍ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՄ

Հին Հունաստանում հավատում էին, որ գեղեցիկ արվեստների հովանավորները մուսաներն էին: Նրանք կարծում էին, որ ինը **մուսաներ** կամ **մուզաները** ներշնչում են երաժշտությամբ, նկարչությամբ, ճարտարապետությամբ, քերականությամբ, բանաստեղծությամբ և գիտությամբ զբաղվողներին: Այստեղից էլ՝ հին հայերենին անցած **մուսա** կամ **մուզա**՝ «գեղարվեստների դիցուհի» բառը, որը գործածում ենք

ներշնչանքով կամ ոգևորությամբ աշխատող կամ խոսող մարդկանց որակելու համար ասելով. «Նրա մուսան եկել է»: Արդեն մի քանի հազարամյակ բանաստեղծները երախտագիտության և շնորհակալության խոսքեր են ծնունդ իրենց մուսաներին անվանելով նրանց իրենց հոգու դիցուհի, ներշնչանքի աղբյուր, անմահ էակ, մտերմուհի, սիրուհի, քույր և այլն: Չարենցը իր մուսային պատկերացնում է նախ «հասարակ աղջկա» տեսքով «գծիճ օրերում».

Նախ՝ աղջիկ էիր դու մի հասարակ...

Սակայն պայքարի ամենավճռական տարիներին նույն այդ դիցուհին նրան մի այլ կերպարանքով է ներկայանում՝ «շնորհալից այգին ընդառաջ», «ծեռքին պայքարի շեփոր», «անդարծ տրված արևոտ կնոջ տեսքով».

Վերադարձել ես դու կրկին ասի
Անջափ դժվարին մի ճանապարհով,
Չեռքիդ ծանրածույլ մի քնար պահած ...

Այս մուսաների համար արդեն մեր թվարկությունից առաջ 4-րդ դարում (332 թ.) հույները Ալեքսանդրիայում կառուցեցին Մուսեյոն (museion)՝ «Մուսաների բնակարան», որը հանդիսանում էր արվեստների և գիտության կենտրոն: Այն միասնամանակ և՛ գիտնականների հավաքատեղի էր, և՛ ակադեմիա, և՛ տեխնիկական կենտրոն, և՛ հանրակացարան, և՛ դպրոց, և՛ գրադարան, և՛ թանգարան, ուր պահվում էր նաև Ալեքսանդր Մեծի արևիկաձևը: Musee բառը եվրոպական լեզուներին անցավ «թանգարան» նշանակությամբ, որը հետագայում կառիներնում հնչում էր museom, ֆրանսերենում musee, ռուսերենում музей, նաև «երաժշտություն» նշանակությամբ musique՝ մուզիկա ձևով, որ գիտեն ոչ միայն եվրոպական լեզուները, այլև թուրքերենը, որ երաժիշտ-երգչախմբերին անվանում են musik, ռուսերեն՝ музыка՝ «երաժշտություն»:

Այսպիսով՝ հուն. muza՝ «արվեստների դիցուհի» բառը վերածվեց **թանգարանի և երաժշտության մուզեյ և մուզիկա** ձևերով:

117. ՍԱԿՉՈՒԵՅԸ ՆՈՒՅՆԸ Է ԱՐԴՅՈՔ ԴԱՍԲԱՐԱՆԻ ՀԵՏ

Լեզվի շենքը անթիվ-անհամար արյուններից է կազմված: Նրա արտաքին կողմը և ներքին կահավորումը խախտվում է, եթե հանենք նրանից թեկուզ մի արյուն, թեկուզ մի առարկայի անվանում, մի հասկացություն, որ յուրացրել է ժողովուրդը օտարներից կամ հարևաններից դարերի ընթացքում: Չայերենում գործածական էր **դամբան** բառը՝ «գերեզման» նշանակությամբ, սակայն այն տարրերվում էր **գերեզման** և **չիրիմ** բառերից, որոնք ավելի գործածվում էին սովորական գերեզմանի նշանակությամբ, մինչդեռ առաջինը ոչ սովորական, այլ ավելի շքեղ և շինությանը հանդերձ, հանգստարանի իմաստով: Ենթադրվում է, որ **դամբան**–ը կամ **դամբարան**–ը բնիկ հայերեն է, այսինքն՝ հնդեվրոպական ծագմամբ բառ է հ.–b. dambh «փորել» արմատից:

Դամբան–ից կազմված ունենք նաև **դամբանական**՝ «գերեզմանի վրա խոսք, ճառ, տխուր խոսք, ողբերգական ճառ»: **Դամբան**–ից են կազմված նաև **դամբարան**, **դամբանակ**, **դամբարանի**՝ «մեռելը թաղել» բառերը:

Սակայն 20-րդ դարի առաջին կեսին հայերենում սկսեցին գործածել **մավզոլեյ** ռուսերենից վերցրած ձևը՝ **դամբարանի** կամ **դամբանի** նշանակությամբ: Օրինակ «Լենինի մավզոլեյը շինվեց 1924 թ.»:

Մավզոլեյ–ը հունարեն բառ է, որ ծագում է **հալիկանասի** բռնապետ **Մավսոլի** անունից: Թեև նա դաժան էր ժողովրդի հետ, սակայն անհուճորեն սիրում էր նրան **Ալուսեմիսիան** կինը և քույրը, որը և իրականացրեց եղբոր հանցատարանի կառուցումն ու դժվարին աշխատանքը: Մոտ 20 մետր բարձրությամբ, 5000 քառակուսի մետր մակերեսով շինության անունը, որտեղ բաղեցին **Մավսոլիեն**, հետո նաև **Ալուսեմիսիան**, հետագայում սկսեցին անվանել Mausoleum՝ **Մավսոլեում**: Այս բառը լատիներենից անցավ նաև եվրոպական բազմաթիվ այլ լեզուների, ինչպես նաև ռուսերենին: Չին աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը համարվող այս շինության անունը դարձավ ընդհանրապես շքեղ և անվանի, նշանավոր մարդկանց պատվին կառուցված հանգստարանների տրվող հասարակ մի բառ:

118. ԻՆՉՈՒՒ ԹԱՆԳԱՐԱՆ ԵՎ ՈՉ ԹԱՆԿԱՐԱՆ

Բուրդին հայտնի է, թե ինչ է նշանակում այսօր **թանգարան**–ը: Ո՛վ չի այցելում թանգարան՝ մատուցների, մարդկային արվեստի տաճարները, ուր պահվում են քույր ժամանակների անկրկնելի գլուխգործոցները: Բայց մտածե՛լ է արդյոք մեկը, թե ինչու ենք այդ պահոցներն անվանում **թանգարան**: Միայն չե՛նք գրում մենք արդյոք: Չէ՛ որ ավելի ճիշտ կլիներ գրել **թանկարան**, որովհետև իրականում էլ այդպես է. այնտեղ պահպանվում են թանկարժեք իրեր: Բայց հայ մատենագրությունը, որ դարերի պատմություն ունի, երբեք մեզ այդ բառը չի ավանդել **թանկարան** գրությամբ, այլ միշտ՝ **թանգարան**:

Ո՞րն է գաղտնիքը: Այստեղ ոչ մի գաղտնիք չկա. պարզապես մենք գործ ունենք նմանահունչ երկու արմատների հետ, որոնցից մեկը գրվում է կ–ով՝ **թանկ**, մյուսը՝ **գ–ով**՝ **թանգարան**: Իսկ եթե թանգարանի հիմքում ընկած չէ **թանկ** բառը, ապա ի՞նչ կազմություն ունի այն. **թանգարա՞ն**, թե՛ **թանկարան**: Ահա այստեղ է դժվարությունը, որովհետև հայերենը բառեր է կազմում և՛ –ան, և՛ –արան ածանցներով, ինչպես, օրինակ՝ դաս–արան, լս–արան, ծխ–արան, գործ–արան, ինչպես նաև շար–ան, կր–ան, հեծ–ան, հոր–ան և այլն: Ինչպե՛ս վարվել չսխալվելու համար: Ահա այստեղ նորից իր ծառայությունն է մատուցում հայերենից դրացի իրն լեզուների իմացությունը: Բայց Մախ սկսեցք ինձեզորդ դարի հայ գրականություն մեջ որոնումներ կատարելուց, ուր իսկապես հանդիպում ենք, այն էլ բազմիցս, **թանգար** բառի գործածությամբ, ուր այն նշանակում էր «վաճառական», «հարուստ առևտրական, մեծահարուստ»: Օրինակ՝ «Եղև այր **թանգար**՝ արուեստի...» (Նախադասությունը պիտի հասկանալ «Նա վաճառական մարդ էր»): «Ի՛նչ արդարասցի **թանգար** ի մեղաց»՝ «Վաճառականը մեղքերից չի արդարացվի»: «Բացցուց **թանգար**ական վաճառս» նշանակում է՝ «Կրացեք խանութ մեծարժեք առևտրի» և այլն: Յարբունի **թանգար** նշանակում էր «պետական գանձարան, թանկարժեք իրերի պահոց, պահեստ»: Այսպես, ուրեմն, հայերեն **թանգարան**–ը կազմված է ոչ թե –արան, այլ՝ –ան ածանցով **թանգար** բառից: Իսկ ի՞նչ ծագում ունի այն: Այդ բառը գալիս է Չին Արևելքից, Շումերից ու Աքքադից, ուր **թանգար** էին անվանում վաճառականներին, իսկ նրանց խանութը՝ **թանգարան**, որովհետև այն լեցուն էր հեռավոր երկրների չնաշխարհի իրերով: Այս բառը հետագայում անցավ այլևայլ լեզուների բառազանձի մեջ, ինչպես և առորենին և հայերենին: Սեպագիր արձանագրություններում, որոնք գրված են խեթերեն, ասուրաբարեյերեն, էլամերեն, խուշերեն, հայերեն Աստվածաշնչի թարգմանության մեջ նույնպես գտնում ենք **թանգար** գրությունը, որն իրականում պիտի լիներ **թանգար**:

Միջնադարյան հայ մատենագրությունը մարդկության երևել ստեղծած գրական հուշարձանների մեջ իր ուրույն և պատվավոր տեղն ունի: Եզակի գրական երկերի ձեռագրեր է հպարտորեն պահպանում հայ ժողովուրդը իր նշանավոր **Մատենադարանում**: Որքան պայծառ ու համեստ անուններ են այնտեղ հանգչում: Իրենց ամենացորդ նվիրումով կատարած աշխատանքի վարձատրությունը եղել է միայն այն գնահատականը, որ տվել են իրենց իրենց... **ԵՍ՝ տրուպս...** Ի՞նչ է նշանակում **տրուպս**—ը, որ այնպես սիրում էին միջնադարյան մեր բանաստեղծներն ու մատենագիրները, գրիչներն ու բժշկապետները: Բոլորն էլ ինքնանվաստացմամբ գրում էին. «Ես՝ տրուպս ի քերթորաց կամ ի բանասիրաց». նման համետության ամենավերջին այս ինքնագնահատականը սիրելի է եղել և մեծ ևարելացուն, և՛ Մագիստրոսին, և՛ 12—րդ դարի մեծ բժշկապետ Մխիթար Գերացուն, որը գրում է «Ձերմանց մխիթարութիւն» գրքի առաջաբանում. «Ես՝ Մխիթար Գերացի տրուպս ի բժշկաց»: Եվ այսպես, ի՞նչ է **տրուպս**—ը: Այն ծագում է արաբերենից, ուր *luraḥ* բառը նշանակում է «փոշի, հող», այսինքն «ոչնչություն»: **Տրուպս**—ը համարժեք է հայերենի **նվաստ** բառին, ինչպես ստում ենք՝ **ես՝ նվաստս...**

Այլ կերպ էին գնահատում իրենց «խենթ» բանաստեղծները: Նրանք ոչ թե սքոլում, այլ ընդհանրապես, ընդգծում էին իրենց վաստակի դերը: Սայաթ—Նովան հայտարարում էր. «Իմ ջուրն ուրիշ ջրեն է...», իսկ Պուլչինն ասում էր. «Քարծրացրի անձեռակերտ ես հուշարձանն իմ վեռ...»:

Բայց մեր մատենագիրները շատ էին համեստ: Այսօր մարդկությունը որքան շատ է պարտական նման բազմաթիվ **տրուպսների**՝ «հող ու փոշի մարդկանց» թողած պատմական տեղեկությունների և բժշկարանների, գրողների, քերականների և թարգմանիչների, գրիչների վաստակի համար, որոնք բարձրացնում են ոչ միայն իրենց, այլև իրենց ծնող ժողովրդի անունը:

120. ԴԻՎԱՆԻ ՍԱՍՆԱԳԵՏԻՑ ԴԻՎԱՆԱԳԵՏՆ, ՄԻՊԹ
ԴԻՎԱՆԱԳԵՏԸ ԴԻՎԱՆԻ ՍԱՍՆԱԳԵՏՆ Ե...

Արդ հայերենում **դիվանագետ** է կոչվում պետական այն ծառայող, որը զբաղվում է պետության քաղաքական գործերով, որպես պաշտոնական անձ, պետական արտաքին քաղաքական հարաբերությունների կամ իր երկրի և միջազգային հարաբերությունների քաջատեղյակ անձ: Այստեղից էլ **դիվանագիտություն** «պետական քաղաքական կուրսի հետևողական կիրառում» (դիպլոմատիա) բառը: Փոխաբերական առումով **դիվանագետ** լինել նշանակում է «խորամանկ, հեռատես և զգուշավոր մտնեցում ունենալ»: **Դիվանագիտական** քայլ կատարել, **դիվանագիտական** խաղեր խաղալ նույնպես համազոր են խորամանկ և անպակկալ, որովայններով լի վարվելակերպով գործելուն: Եթե թերթերը գրում են. «Չերչիլը ճկուն **դիվանագետ** էր և բրիտանական **դիվանագիտության** հմուտ գիտակը», ապա նկատի ունեն նրա և՛ պետական գործերին քաջատեղյակ լինելը, և՛ մեծ հեռատես ու խորամանկ քաղաքական գործիչ լինելը: **Թայերյանը** մեծ **դիվանագետ** էր: Մի խոսքով՝ **դիվանագետ** մարդ կամ **դիվանագետ անձնավորություն** արտահայտությունը համազոր է «խորամանկ և հեռատես» հասկացությանը:

Այս բոլորը հասկանալի են, բայց ի՞նչ կապ կա (կամ կա՞ արդյոք) **դիվան**՝ «բազմոց» և **դիվանագետ** բառերի միջև: Կարո՞ղ է **դիվանագետը** **դիվանի** մասնագետ լինել: Պարզվում է, որ մասամբ, այո:

Եվ ահա նորից մենք պիտի պատմության քառուղիներով քայլենք ու քայլենք, որպեսզի գտնենք՝ որտեղից է սկիզբ առել այս բառը, ինչպես և երբ է այն հասել հայերենի ծովածավալ բառապաշարին:

Դիվան—ը պահլավերեն բառ է, որտեղ նախապես այն նշանակում էր «արխիվ», այսինքն՝ փաստաթղթերի փաթեթները, գալարները (հիշենք մազադաթ՝ «գալարված, փաթաթված» բառը), հետագայում նաև ժողովածուները (օրենսդրական, բանաստեղծական, վճիռների, արձանագրությունների և այլն), տաղարանները, օրենսգրքերը պահելու տեղ: Արխիվային փաստաթղթերը, արխիվները կոչվեցին **դիվաններ**: Այդտեղից էլ առաջացավ **դիվան** բառի «դատարան» նշանակությունը, քանի որ դատական ատյանը այն շենքեր էր, որտեղ պահվում էին վճիռներն ու արձանագրությունները: Այստեղից էլ **դիվանբաշի**՝ «դատավոր» (բառացի՝ **դիվանի գլխավոր**): Դիշո՞ւմ եք Գ. Թումանյանի տողերը.

Էլ գող փիտ, էլ քաջալ շուն,
Բանը հասավ **դիվանբաշուն**...

Բանի որ ամեն ժողովածու **դիվան** էր, հայ իրականության մեջ էլ մեծ տարածում գտավ **Ֆրիկի դիվանը**, **Արովանի դիվանը**, **Դիվան** հայ միջնադարյան քնարերգության արտահայտությունները: Գրաբարում **դիվանը** միայն **դատարանի** շենքը չէր, այլև ընդհանրապես **դահլիճ**, **գրասենյակ**, **սրահ**, **մատենադարան**, ահա մի քանի օրինակ Սասվածաշնչից. «Մուտ ի դիվան անդր եւ Սիքիա... Եջ ի տուն՝ դպրապետի **դիվանը**»: Գերմաներենում *Kanzlei*՝ «գրասենյակ», «խօսք ի **դիվանի** Տիրաճայ ուրումն» (խոսում էր մի ոմն Տյուրանի **դիվանի** մեջ): Գերմաներենում *Schule*՝ «դպրոց»: Մ. Խորենացին **դիվան**—ը օգտագործում է «մատենադարան» նշանակությամբ: Դայերենը ստեղծել է **դիվանագիր**, **դիվանատուն**, **դիվանդպիր**, **դիվանապան** հասկացությունները:

Եվ այսպես լեզվից լեզու անցնելով՝ **դիվան**—ը նորամոր իմաստներ ստացավ, վրացերենում **դիվանի** կամ **միվանի**՝ «քարտուղար, դիվանդապիր» է նշանակում, ավարերենում՝ «դատ» (հիշենք, որ հայերենի բառարաններում նույնպես **դիվան** գործածվում է «դատ ու դատաստան» նշանակություններով. «Ես քո հախ ու **դիվանը** կտան» կամ «**Դիվան—դատաստան** չկա») և այլն), թուրք. *divan*՝ «նախարար, պաշտոնյա», սերբերենում, ռուսերենում՝ «զախ, բազմոց, դիվան», լեիերենում՝ «ժածկոց», ուկրաիներենում՝ «գորգ», ֆրանսերենում՝ «բազմոց և մարսատուն» և այլն: Եվ այսպես «բազմոց, գահ» նշանակություններից էլ առաջացավ **դիվան**՝ «բազմոց, հանգստատեղի» իմաստը: Դե այժմ ինքներդ դատեցե՞ք կապ կա՞ արդյոք **դիվան**՝ «բազմոց» և **դիվանագետ** բառերի միջև: Եվ մի՞թե **դիվանագետը** **դիվանի** մասնագետը չէ:

121. ԵՄԹ ԳԻՐԹԸ ՍԵԿ ՀԱՏ Է, ԿԱՐՈՂ Ե ԲԻԲԼԻԱ
ԿՈՉԿԵԼ... ԵՎ ԿԱՍ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

Ոչ մեկին այսօր զարմանք չի պատճառում, որ գրադարանը կամ գրքերի պահատեղը կոչվում է *biblioteka*: Իսկ կապ չունի՞ արդյոք այն *Biblia*՝ Քրիստի՝ Սասվածաշունչ բառի հետ: Այն էլ ինչպես, ուղղակի: Բայց որպեսզի հասկանանք՝ այդ կապը ինչպես է եղել, մենք դարձյալ ստիպված ենք ճանապարհորդել դեպի Մերձավոր Արևելքի քաղաքակրթության կենտրոնները:

Այսօր չկա մեկը, որ չիմանա՝ ինչ է **երգեհոնը**, Բախի **երգեհոնի** համար գրած ստեղծագործությունները: Նույնիսկ **երգեհոն** նվագողի համար ստեղծվել է **երգեհոնահար** տերմինը: Իսկ դուք գիտե՞ք, թե ինչ է նշանակում երգեհոն կամ երգեհոնահար: Այս հարցից հետո ձեր միտքը կկտրվի «պատվել» երգ բառի շուրջը, և դուք մտովի կկեսեք առանձնացնել երգեհոն-ից երգը: Իսկ ի՞նչ կմնա այնտեղ... **հո՞նք**: Իսկ ի՞նչ է **հոնք**: Անգո մի բառ: Եվ ընդհանրապես **երգեհոն**—ն ամբողջությամբ մի անգո բառ է, որն այդպիսի «տեսք» է ստացել ժողովրդական (կամ կեղծ) ստուգաբանության հետևանքով՝ հայերենի **երգ** բառի հետ ունեցած նմանության պատճառով: Համոզվել՝ կուզեիք, խնդրեմ, եկեք գնանք գրաբարյան մատյանների միջով և տեսնենք, թե ինչպիսի «տեսք», այսինքն՝ հնչապատկեր ուներ այն գրաբարում, թարգմանվելուց հետո:

Երգեհոն բառն ավանդված է հայերենում նաև **երգիոն**, **օրդանոն**, **դանոն** ձևերով: Այն ծագում է հունարենի organon (օրդանոն)՝ «նվագարան» բառից, որի հիմքում օրցոն՝ «գործ, աշխատանք» բառն է ընկած, այսինքն՝ բառացի organon նշանակում է «գործիք»: Ռոշ մատենագիրներ, իմանալով հունարենի ճիշտ հնչումը, իրենց երկերում աշխատել են տալ հայերեն ճիշտ տառադարձությունը, օրինակ՝ Մամբրե Վերծանողը գրում էր. «Որպես և յերգիոնն»: «Տոնամակ»-ում կամ «Տոնական մատենան»-ում գտնում ենք **որդան** կամ **որդեն** ձևը. «Տնարքե քնարիք և **որդնա**», «Ռուրդ դաշանք»-ում, «Վարդե հարանք»-ում՝ դանոն, իսկ մնացյալ դեպքերում, շվիդիական հայերեն **երգ**-ի հետ, ստացավ այն **երգեհոն** ձևը: Երգեհոնի գյուտը վերագրվում է **Վիդալիսին**. «Վիդալիսո զերգեհոնն սագեաց»... Մատանքը հարկանեալ ի յերգեհոնն, վասն զի նախ զնույն **երգեհոնը** բերանով հնչեցուցանեին, և այն ոչ էր ի պուկս կապարեայ շարեալ, այլ յեղեգնեայ (Վիդալիսոը սարքեց երգեհոնը... Մատենով էին հարվածում երգեհոնին, որովհետև նախկինում նույն երգեհոնը բերանով էին հնչեցնում, և այն կապարե փողերով չէր շարված, այլ եղեգնայ):

Հունարենից բառն անցել է բազմաթիվ լեզուների, ինչպես լատիներենին՝ organum, ֆրանսերենին՝ organ, ռուսերենին՝ орган, արաբերենին՝ օրգան օրգանոս, վրացերենին՝ օրդանոն և այլն: Հունարենի organon՝ «գործիք» նշանակությունից են առաջացել բժշկության մեջ սեռական օրգան, սեռական օրգաններ արտահայտությունները:

124. ԹԱԿԵԼ ՆՇԱՆԱԿՈՒՄ Ե ԾԵԾԵԼ ԻՍԿ ՏՈՒԹԱԿ...

Ամենից դժվարը միայնակ բառերի ծագումը որոշելն է, երբ նրա զուգահեռները որևէ հարևան լեզուներում չենք գտնում: Նման բառերի թվին է պատկանում նաև **ջութակը**: Ռ՛ւմ չի հուզում նրա ծայրը: Արևելյան ավանդությունն ասում է, որ այն ստեղծվել է Արևելքում, թերև Յնդկաստանում: Հայ մատենագրության մեջ առաջին անգամ հիշատակվում է **ջութակ**—ը շուրջ հազար տարի առաջ Գ. Նարեկացու տաղերում՝ «աղեյարմար **ջութակ**» (աղիքից պատրաստված **ջութակ**) ձևով: Իհարկե իտալական կամ եվրոպական ջութակի հետ այն չէր կարող կապ ունենալ, սակայն ընդհանուր բաները շատ էին՝ **աղեղով** նվագելը, **լարային** գործիք լինելը և այլն: Միայն թե հայկական ջութակը ոչ թե կզակի տակ, ալ՛ ծնկի վրա է բռնվել, ինչպես **քամանչա**—ն, որոշ բարբառներում էլ կոչվել է **քեմանի**՝ «աղեղնավոր» արաբերենի kaman՝ «աղեղ» բառից: **Հենց քամանչա** պարսկերեն բառն էլ —չա փոքրացուցիչ ածանցով նշանակում է «աղեղնակ» (—ով նվագվող):

Եզիպտացիները մի տեսակ պանիրուսի վրա էին գրում, որն անվանում էին biblos, bublos՝ **բիբլոս** կամ գրաբարյան տառադարձությամբ՝ **բիբրոս**: **Բիբրոս**—ը (նրա գիտական անվանումն է cyperus papyrus L.) ոչ միայն խսիր և կոպիտ կտավ գործելու բույս էր, այլև կողովի, կոշիկի համար կավ հումք, իսկ դալար վիճակում՝ նաև ուտելի մի բույս, որն օգտագործում էին աղքատները: Միս գրաբարյան գրքերից մի հատված, ուր կա վկայություն նրա՝ որպես պարան, կապ, կեն գործածության. «Վարկատիցեն բիբրոսավ... Ոչ ոք զուճայն աման կնքել, այլ զլի և զպատարուն և զայս **բիբրոսավ**, քանզի ոչ ուրեք գտանի **բիբրոս**, բայց միայն յեզիպտոս» (Վկարկատեն **բիբրոսավ**... որովհետև ոչ ոք դատարկ ամանը չի կնքի, այլ միայն լիքը և լեցունը և այն միայն **բիբրոսով**, որովհետև Եզիպտոսից բացի ոչ մի տեղ **բիբրոս** չի գտնվում): Մա վերցված է հանրահայտ «Ալեքսանդրի պատմությունից»: Եվ այսպես **բիբրոսը** դարձավ նաև **թղթի** համար ամենալավ հումքը, որի վրա գրում էին ոչ միայն Եզիպտոսում, այլև փյունիկյան **Բուբլոս** քաղաքում, որտեղից էլ, ենթադրում են գիտնականները, ծագեց հունական **բիբլիոն**՝ «գիրք» (վիվլիոն, վիվլիոս biblinus՝ «բիբլոսի վրա գրված») բառը: Երբ երբայերենից բարգձմանվեցին **Սուրբ գրքեր** կամ **Սուրբ գիրք**, այդպես էլ կոչեցին այն՝ **Biblia sacra**, իսկ հետագայում՝ **Biblia**, քանի որ այն դարձավ մյուս գրքերից ամենաառաջինը, հիմնականը, զվախվողը, ուստի **գիրք** ասելով, առանց **սուրբ**-ի (այսինքն՝ առանց sacra), հասկանում էին հենց **Աստվածաշունչը**: Եվ այսպես ողջ քրիստոնյա ազգերը գիտեն այդ գիրքը **Biblia** անվանումով, որը պարզապես «գիրք» է նշանակում: Իսկ հայոց հոգևոր հայրերը, ի զանազանում մյուս գրքերի, անվանեցին այն «**Գիրք Աստուածաշունչ**» ինն և նոր կտակարանաց, որից հայերն էլ պարզապես և՛ **Գիրք** են ասում, և՛ **Աստվածաշունչ**՝ «Աստծո շնչով, հոգով գրված», լատիներենում առկա է՝ divinitus inspiratus համարժեքը:

122. ԵԹԵ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ԶՈՒՄԵՆ ՏՆԱՐԸ, ԻՆՉԻ՞ ՎՐԱ ԵՐ ՆՎԱԳՈՒՄ ՏՆԱՐԱԿԱՐԸ

Հայ մատենագրության մեջ բազմիցս ավանդված են **քնարահար**, **ջնարահար**, **տավղահար** բառերը, որոնք բնականաբար առաջացել են այդ գործիքների գոյության պայմաններում, այնպես ինչի՞ վրա պիտի նվագեր **քնարահարը**, եթե չկար **քնարը**:

Մարդկային տրամաբանությունը արձան չի պահանջում, քանզի ինքը անհերքելի և անվախճան է իր գոյությանը:

Երկար տարիներ հայագիտության մեջ այն թյուր կարծիքն էր իշխում, որ հայերենում **ջնար** բառը **քնար**-ից է ծագում, որպես թե **ք**-ի հնչյունափոխմամբ **քնար**—**ջնար** անցումով: Սակայն Գ. Ամառյանի կողմից այս կարծիքը կասկածի ենթարկվեց, քանզի որ միջնադարյան հայ գրականության մեջ (հենց **Աստվածաշունչում** էլ) բազմիցս **քնար**—ը և **ջնար**—ը հիշատակվում էին կողք կողքի, որպես տարբեր նվագարաններ: Այսպես «**փողը և քնարը և ջնարը**» (շեփորներ, քնարներ, ջնարներ), «**ջնարօք**, և **քնարիք** և **օրդնա**» (ջնարով, քնարով և երգեհոնով) կամ «Օրհնեցեք զՏեր սարմուսարանով և ջնարիք» (Օրհնեցեք Տիրոջը սարմուսարանով և **ջնարով**):

Բացի այդ, չկա հայերենում մեկ այլ դեպք ևս, երբ **ք** հնչյունը վեր ածված լիներ **ջ**-ի: Միս մեզ օգնության եկան նաև իսբեթական սեպագիր արձանագրությունները, որտեղ kanirtalla՝ «քնարահար» բառի հետ միասին ավանդված էր նաև zinirtalla՝ «ջնարահարը»: Այսինքն՝ հաստատվում էր հայերեն **ջնար**-ի առանձին նվագարան լինելը և այդ բանի վաղեմի ծագում ունենալը:

Այս բոլորը ի՞նչ կապ ունի մեր **ջութակ**-ի անվան ծագման հետ:

Քանի որ հարևան ոչ մի լեզվում չեն ավանդված **ջութակ**-ի զուգահեռ ձևերը, մեզ մնում է ենթադրություններ անել նրա անվան ծագման վերաբերյալ: Քանի որ մի շարք նվագարանների անվանումները կապված են նրանց **աղեղով** նվագվելու իրողության հետ, չի՞ կարող պատահել, որ նույն հանգամանքն էլ հայերենի հիմքում ընկած լինի: **Ջութակ**-ը առաջարկված է ընկալել **ջով** և **թակ**-ել եզրերից (երեմիա Մեղրեցի), որ **ջով** նշանակում է «մատղաջ ճյուղ, ընձյուղ, ստեղծ», այսինքն՝ քանի որ **աղեղով** է նվագվել, կարող էր այն **ջով**-ը լինել, որից էլ **ջութակ**-ը պիտի կարդալ ոչ թե **ջութակ**, այլ **ջովթակ**, ինչպես **գուսան**-ը՝ ոչ թե **գուսան**, այլ **գովսան**:

125. ՍՐԻՆԳ

Երաժշտական ամենապարզ գործիքները հավանաբար պատրաստվել են **եղեգից**, **եղջյուրից**, **սուկորից**: Ժողովուրդներն այս գյուտը կարող էին կատարել միմյանցից անկախ: Եղեգնյա յուրաքանչյուր հատված, առանց մշակվելու (այսինքն՝ առանց անցքեր բացելու և առանց բրուկի (պիպիչի)) կարող է պարզունակ եղանակներ կանել: Ուստի փողային նվագարանների մեծ մասի ամուրը տարբեր լեզուներում հասված է **եղեգի**, **եղջյուրի** անվան և կամ բնածայնության հետ: Թեև դրանք հնչմամբ կարող են նման չլինել, սակայն իրենց հիմքում ունեն փողային ինչ-որ առարկայի անուն: Այսպես, օրինակ՝ պարսկերեն **սուրնայ** (հայերեն **զուռնա**) նախապես նշանակել է «կոտոշ, եղեգ», բռնոզան «շելփող», ծագում է **բռու**՝ «փող, խողովակ» բառից և այլն:

Չայերենի **չիու**, **չվի** բառերը ծագում են «չվոց» բնածայնությունից, ինչպես և **սուկիչը**՝ «սուկելից», **փողը**՝ «փող, խողովակ» բառից, իսկ **սրի՞նգը**: Չայերենի միջոցներով չի բացատրվում սրինգը: Թերևս մեզ օգնության կզա հունական դիցաբանության մեջ տարածված մի առասպել սրինգի մասին, որը սկիզբ է առել Փոքր Ասիայում:

Անտանների, հովիվների ու հոտերի պաշտպան **Պանը**, որպես բնության հովանավորող աստված, պաշտվում էր ժողովրդի կողմից: Եվ Պանը սիրահարվեց ջքնաղ հավերժահարս **Սիրինքսին**: Չավերժահարսը մերժեց Պանի սերը, ակաբեկված նրա կնոջակներից, փախավ հեռու: Պանը հետապնդում էր **Սիրինքսին** և անա քիչ էր մնում, որ բռնի, երբ գետը փակեց նրանց ճամապարհը: **Սիրինքսը** ձեռքերը մեկնեց դեպի գետը և գետի աստծուց փրկություն աղերսեց: Գետի աստվածը լսեց հավերժահարսի աղաչանքը և նրան դարձրեց եղեգ: Այն պահին, երբ Պանը հասավ **Սիրինքսին** և արդեն ուզում էր բռնել, զրկել սիրած էակին, զրկի մեջ **Սիրինքսի** փոխարեն հայտնվեց մեղմորեն սոսափող մի եղեգ: Պանը շատ տխրեց **Սիրինքսի** համար, սակայն նա անհետացել էր անվերադարձ: Պանը, որպես հիշատակի իր հավերժական սիրու, կտրեց մի քանի եղեգ, և դրանք ղեկով շուրթերին սկսեց նվագել: Իր նվագած եղեգնափողը Պանն անվանեց **Սիրինքս**՝ ի հիշատակ իր սիրուհու: Չայերենում այս բառը դարձավ **սրինգ**, իսկ հունարենում՝ **սուրինգ**:

Սի քիչ էլ լեզվաբանություն

126. ՄԵԿ ԶՐՈՒՅՑ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՄ ԱՆԱՐԿԱՅԻՑ ԵՐԵՎՈՒՅՑ - ...ԸՆԴԿԱԿԱՆԱԿԸ

Լեզվաբանների միջև երկար տարիներ վիճաբանություններ են գնում մի ոչ երկրորդական հարցի շուրջ, այն է՝ բա՞յն է գոյականից առաջ ստեղծվում, թե՞ հակառակը՝ գոյականից է ծնվում բայը:

Որպեսզի հարցադրումը պարզ լինի, այս ոչ այնքան պարզ հարցի վերաբերյալ րեղենք մի օրինակ, ասենք, ունենք **ջուր** գոյականը և **ջրել** բայը. երկուսից ո՞րը կարող էր **առաջինը** ստեղծվել՝ **ջո՞ւրը**, թե՞ **ջրելը**:

— **Ջուրը**.— Կիիմնավորեն ոմանք՝ մտածելով, թե ջրելու գաղափարը կարող էր առաջանալ միայն ջրի առկայության դեպքում: Ուստի **ջրել** բայը **հաջորդում** է **ջուր**-ին, որը հիմք է տալիս համարել **գոյականի** գոյությունը **բայից** առաջ:

Բայց արդո՞ք այդպե՞ս է միշտ: Չէ՞ որ կան բայեր, որոնք չեն հաջորդել գոյականներին, այսինքն՝ չունեն իրենց արմատների գոյականակն ձևերը, ինչպես, օրինակ՝ **մնալ**, **տանել**, **թողնել** և այլն, հետևաբար «անկախ» գոյացություն են: Կան բառեր և արմատներ էլ, որոնք որքան գոյական, նույնքան էլ բայ են, օրինակ՝ **լող**, **ծիմ**, **խաղ**, **նիստ** և այլն:

Կան նաև բայեր, որոնք ծնվել են **ածականներից**, ինչպես, օրինակ՝ **կարմրել**, **սևանալ**, **կանաչել**, **փոքրանալ**, **մեծանալ**, **նվազել**, **կարծրանալ**, **արագանալ**, **դանդաղել** և այլ խոսքի մասերից:

Չետևաբար բայը կարող է ծնվել նաև **առանց գոյականի**, կարող է լինել երևույթի արտահայտություն: Միթե **գնացք** գոյականը **բայից** չի ծնվել կամ **թափք**-ը **թափել**-ից, **վագք**-ը՝ **վազել**-ից, **խոսք**-ը՝ **խոսել**-ից, **հոսք**-ը՝ **հոսել**-ից և այլն: Ուրեմն բառը կարող է ծնվել առարկայից և երևույթից և **հակառակը**, ինչպես ք գոյականակերտ ածանցի օգնությանը **բայերից** կերտված այս **գոյականներն** են ցույց տալիս:

127. ՀԱՍՅԵ ԿԱՄ ԱՅՆ ՍԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՆ Ե ԲԱՅԸ ՂԱՆՈՒՄ ԳՈՅԱԿԱՆ

Եթե այսօր որևէ դպրոցականի հարցնենք, թե ինչ խոսքի մաս է **հասցե** բառը, նա անվարան կպատասխանի՝ **գոյական**:

Իսկ ճի՞շտ է արդյոք նման պատասխանը: Եվ այդ, և՛ ոչ:

— **Ինչո՞ւ**.— Կիարցնի դպրոցականը.— չէ՞ որ այդ բառը հղովվում է և պատասխանում գոյականին տրվող հարցերին, ուստի և գոյական է: Տրամաբանությունը միանգամայն ճիշտ է, սակայն մենք նկատի ունենինք ոչ թե **հասցե** բառի արդի բառային արժեքը, այլ ին՞ն նշանակությունը, երբ նա դեռ գոյական չէր և որպես այդպիսին մեր կողմից չէր էլ գիտակցվում: Նա մաքուր բայ է եղել և այդպիսին էլ է, միայն վերջին 19-րդ և 20-րդ հարյուրամյակներում այն մարդիկ սկսեցին ընկալել նաև որպես գոյական:

Ով գեթ մի քիչ ծանոթ է գրաբարի քերականությանը, ապա կհիշի, որ **հասանեմ** «հասնել» բայը **հաս** արմատից է բաղկացած և ներկայում խոնարհվում էր

հասանեմ, հասանես, հասանէ, իսկ երկրորդ ապառնին, որը սահմանակա՛ն եղանակի ապառնու իմաստ էր դրսևորում, լինում էր հասից, հասցես, հասցէ: Եթե բարձրմանենք այսօրվա հայերենով, ապա կլինի թող հասնեմ, թող հասնես, թող հասնի, կհասնեմ, կհասնես, կհասնի:

Ուրեմն հասցե նշանակում է «(թող) հասնի», «կհասնի», «պիտի հասնի» «հասնելու է»:

Իսկ ինչո՞ւ բայը գոյական դարձավ:

Բանն այն է, որ հնում կանոնավոր փոստային ծառայություն չի եղել: Նամակները մարդիկ ուղարկում էին միմյանց փածառականների, ճանապարհորդների, ուխտավորների միջոցով: Եվ քանի որ նման պատահական մարդկանց միջոցով պիտի գնար նամակը, և առաջին մարդը, որ տանում էր նամակը, պիտի ինքն էլ իր հերթին հանձներ այն մեկ ուրիշի, որը ոչ ուղարկողի հետ էր ծանոթ, ոչ էլ ստացողի հետ, ապա նամակի վրա գրվում էր հասցե՝ «հասնելու է» կամ «թող հասնի» այնինչին, այսինչյանին: Այստեղից էլ նամակի վրա գրված հասցեատիրոջ անունն ու տեղը նշելը պարզապես կոչվեց հասցե, և բայը դարձավ գոյական:

Այստեղ հիշեցնենք, որ գրաբարյան ոչ բոլոր երրորդ դեմքի բայերն են գոյականներ դարձել, օրինակ կեցցեմ— «թող ապրի», «ապրի» բայը առաջվա պես բայի նշանակությամբ էլ ապրում է: Բայց գուցե, գոնեա բայերը դարձել են մակբայ, եղանակավորիչ բառեր:

128. ԲԱՌԵՐԻ ՓՈՒՆԱՐԵՆ՝ ՎԱՆԿԵՐ ՈՒ ՏԱՌԵՐ

Ոմանք կարծում են, որ հապավումները՝ բառերի կրճատված գործածության փաստերը, երևան եկան 19-րդ և 20-րդ դարերում: Սակայն սա թյուրիմացություն է: Մեր ժամանակներում ավելի ու ավելի շատ ենք դիմում հապավումներին, սակայն հնում նույնպես եղել են նման փաստեր: Օրինակ՝ Աստուած բառը գրվում էր միայն ԱԾ ձևով, Բրիստոս՝ ԲՍ, Յիսուս՝ ՅՍ և այլն:

Կրճատում—հապավումները հավասարապես հորինում են և փոքրիկները, և մեծերը: Ո՞վ դպրոցում կամ բակում չի խաղացել խմբակային խաղեր, և ո՞վ չի օգտագործել ՉՄՁ հապավումը՝ խաղը սկսելուց առաջ: Չէ՞ որ խաղը սկսելուց առաջ բոլորը պարտավոր էին կրկնել այդ հապավում—երդումը՝ ՉՄՁ, որը նշանակում էր «Չորից, մորից գոկվեմ» (եթե լինեմ անազնիվ):

Կրճատում—հապավումները լայնորեն գործածում են դպրոցականները, որոնք դպրոցում դասավանդվող առարկաների անվանումները արտասանում են կրճատ, օրինակ. «Այսօր թվաբ—ից ցածր գնահատական ստացա», «Բնագ—ս չեմ սովորել», «Կենդան—ը հոգիս հանեց», «Փրանս—ը շատ է տանջում», «գրակ—ը և քերակ—ը միասին կտվորենք», «ստուգ—ից վայելեցում եմ» և այլն, որոնք

իսկական ձևերը կլինեին թվաբանություն, բնագիտություն, կենդանաբանություն, ֆրանսերեն, գրականություն, քերականություն, ստուգողական և այլն: Սրանք կարելի է անվանել դպրոցական հապավումներ:

Կան հապավումներ էլ, որ գործածում են և՛ դպրոցականները, և՛ մեծահասակները, որի պատճառով դրանց պիտի անվանել ընդհանրական: Այսպես, օրինակ հերթերում հաճախ են դժգոհում անհերթ գնումներ կատարողներից՝ ասելով. «ԽԾԲ—ներին եք անհերթ բաց թողնում»: Ովքեր են այդ ԽԾԲ—ները: Պարզ է խնամի—ծանոթ—բարեկամ—ները: Վաճառողն ասում է. «Պրծ, էլ չկա», որ նշանակում է «պրծավ», «վերջացավ»: «Եսիմ, ճի՛շտ է ասում»՝ «ես ի՞նչ իմանամ» բառերից: «Չաջող, ախպեր ցան»՝ «հաջողություն»—ի փոխարեն, և ց՝ «ցտեսության» փոխարեն:

Մեծ տարածում են գտել նաև թվականներից կազմված հապավումները, որ գործածում են բոլոր տարիքի անձինք, առանց խտրության: Դաշվարկների, թվաբանական գործողությունների ժամանակ օգտագործում ենք եռմեկ, եռերկու, եռերեք... քառմեկ, քառերկու, քառերեք... հիսմեկ, հիսերկու, հիսերեք... յոթմեկ, յոթերկու, յոթերեք... ինմեկ, իներկու, իներեք... և այլն երեսունմեկի, երեսուներկուսի, երեսուներեքի, քառասունմեկի, քառասուներկուսի, քառասուներեքի, հիսունմեկի, հիսուներկուսի, հիսուներեքի, յոթանասունմեկի, յոթանասուներկուսի, յոթանասուներեքի, իննսունմեկի, իննսուներկուսի, իննսուներեքի փոխարեն և այլն:

Իհարկե, գեղեցիկ չէ նման լեզվով հանդես գալը հասարակության մեջ, ուստի պետք է աշխատել ետ վարժվել նման սովորությունից, այլապես մենք ժամանակ չախելու նկատառմամբ մոռանում ենք գլխավորը՝ մեր լեզվի գեղեցկությունը:



129. ՊՍԻԿ Ե ԹԵԵՎ, ՃՍՏԻԿ ԱՅԴ Տ-Ե, ԲԱՅՅ
ԿԵՐՏԱԾՆԵՐԸ՝ ՄԵԾ...

Մենք առիթ ենք ունեցել խոսելու հայերենի մեկ հնչյունից կազմված մասնիկ-բառերի մասին, թե ինչպես **ց**-ն երկն-ը դարձնում է **ցերեկ**, իսկ **այգ**-ը՝ **ցայգ**, և եթե կուզեք՝ **տեսություն**-ն էլ **ցտեսություն**: Նման պատիկ, բայց ճստիկ բառերից մեկն էլ **տ**-ն է, որ բառերին բացասական, ժխտական նշանակություններ է հաղորդում, օրինակ՝ **տգեւ, տգեղ, տմարդի, տկար, տհաճ** և այլն՝ **գեւ, գեղ, մարդի, կար, հաճ** արմատներից:

Նման բառերից է նաև **տքնել**-ը, որ **քնել** բառից է կազմված: Ունենք նույն **քուն** արմատից **տքնություն, տքնաբար, տքնական, տքնողական, տքնասեր, տքնցնել**... որոնց իմաստն է «առանց քնի, անհանգիստ, արթուն մնալով, տառապելով աշխատել»:

Մեր օրերում նույնպես մնում է **տքնությունը** մեր բառապաշարի ամենագործածական բառերի թվում, որի մեջ սակայն մենք որոշ իմաստային երանգներ ենք ավելացրել, այն ընկալվում է «համառ, ամիտնջ աշխատանք, չարաչար աշխատանք, տառապանք» նշանակություններով: Ահա Պուշկինի՝ ղեկաբրիստների ծոնած բանաստեղծությունից մի հատված. «Իզուր չի անցել **տքնությունը** ձեր՝ խավար համբերում հեռու Սիբիրի...»:

130. ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՅՐԱԾ ԽՈՒՌԻԵՐԵՆ ՄԻ ԲԱՌ

Հայկական լեռնաշխարհի հարավում մեր թվականությունից երեք հազար տարի առաջ ապրում էին խուրիները: Նրանց ցեղակից էին նաև փայնացիները: Բնականաբար այս ժողովուրդները ծուլվեցին հայերին, և նրանց լեզվից որոշ բառեր անցան հայերենին: Նման բառերից մեկն է **տի**-ն, որն ունի «մեծ» նշանակությունը: Ծագում է այն խուրիերենի *tea* «շատ, մեծ» բառից: **Տի**-ն պահպանվել է միայն երեք հայերեն բառերի սկզբում, որոնք են **տիկին, տիեզերք, տիր** (եթե չհաշվենք Խարբերդի շրջանում գտնվող մի տեղանուն՝ **Տի քիլար** «Մեծ մարագ», ուր դեռևս նա պահպանում է իր անկախ գոյությունը, ապա կարելի է ասել, որ այն կորցրել էր ինքնուրույն գոյությունը դեռևս գրաբարում): Իսկապես, եթե չունենայինք **կին**-ը, ապա դժվար էր հավատալ **տի-կին**-ի «մեծ կին» և եթե չլիներ **եզերք**-ը, դժվար էր հավատալ **տի-եզերք**-ի «մեծ եզերքի, ողջ աստղաշխարհի» գոյությանը, որովհետև երրորդ՝ **տիր** բառում, արդեն **տի**-ն «աննկատելի» է դարձել: **Տեր**-ը կազմված է **տի**-այր՝ «մեծ մարդ» բառերից: Սա ապացուցվում է հոգնակի **տե-արք**-ի գոյությամբ և եզակի **տե-ամն** (սեռական) և հոգնակի **տե-արց** (սեռական) հոլովների առկայությամբ: Չէ՞ որ այր բառի սեռականն է՝ **ամն**, հոգնակին՝ **արք**, սեռականը՝ **արանց**...

երկմային եակ,
երգազ իմ միակ...
վան-Անի

Է-ով **մանր** ածականից կազմվել է **մանրէ**՝ «մանր եակ, մանր գոյացություն, մանր գոյ» բառը, որի տակ հասկանում ենք մանրադիտակային կենդանիներին, հիվանդության հարուցիչներին, խմորող բակտերիաներին: Այստեղից էլ՝ **մանրէաբան, մանրէազետ, մանրէաբանություն, հնէաբան, հնէաբանություն** հասկացությունները:

Ժխտական **ան**- ածանցի միջոցով ստեղծվել է նաև **անէ**՝ «չեղող, չգո, գոյություն չունեցող» բառը, օրինակ. «**Դա մի երագ էր անէ**» (Դա մի անգո երագ էր), այստեղից էլ՝ **անեանալ**՝ «չքանալ, աներևութանալ, անգո դառնալ», **անություն**՝ «դատարկ տարածություն». է բառից՝ **ական** ածանցով կազմված է նաև **եական** բառը, որն ընկալվում է «ելությունը կազմող, գոյությունը, առկայությունը դրսևորող» նշանակությամբ, որից էլ՝ **բերականական եական** բայ հասկացությունը, օր. հայերենի **եական** բայերն են՝ **եմ, ես, է**:

Սա դեռ բոլորը չէ: Այս մեկտառանոց կամ մեկհնչյունանոց է բառով է կազմված **եպպե**՝ «ելությամբ» բառը, որն օգտագործում ենք նաև «հատկությամբ, հատկանիշով, հիմնական բնավորությամբ» նշանակություններով, օրինակ՝ «Անդրանիկը **եպպե** տարբերվում է մյուս եղբայրներից»:

132. ԲԱՌԵՐԻՑ ԾՆՎԱԾ ԱԾԱՆՑՆԵՐ ԵՎ ԸՆԴԿԱԿԱՌԱԿԸ... ԱԾԱՆՑՆԵՐԻՑ ԾՆՎԱԾ ԲԱՌԵՐ

Լեզուների պատմությունը բազմաթիվ օրինակներ ունի աստիճանաբար մեծող բառերի, որոնք, կորցնելով իրենց բառային անկախ իմաստը, վեր են ածվում բառակերտ միջոցների, այսինքն՝ ածանցների: Այսպես.

ա) 7այերեն **օրն** կամ **օրնք** բառից առաջացավ **որն** ածանցը, որը, ավելանալով բառերի վրա, տալիս է նրանց «պես, մման, ձևով» նշանակությունները: Եթե ատուս ենք **մնգորն**ը, ապա չենք հասկանում «մենք օրենքով» այլ «մենզ ձևով, մենզի պես», **ազահորն** «ազահի մման, ազահի պես», **արագորն** «արագ ձևով, վարպետորն» «վարպետի մման, վարպետի պես» և այլն: Բանի որ **որն**ը բառերից մակբայներ է կազմում, ապա համարվում է մակբայակերտ ածանց:

բ) **Բարք**՝ «սովորություն, կերպ, սնություն, օրենք, եղանակ» բառից է առաջացել մեկ այլ մակբայակերտ ածանց՝ **բար**ը, որ դրվելով մեծ մասամբ գոյականների վերջում՝ կերտում է նրանցից բայերի լրացումներ՝ մակբայներ՝ «ձևով, մման, կերպով» նշանակություններով, ինչպես, օրինակ՝ «**ընկերաբար** կիսեցին խաղալիքները» (այսինքն՝ ընկերոջ մման), «**բարեկամաբար** խորհուրդ տվին մեզ» (բարեկամի մման, բարեկամորեն), «**բշմամաբար** են տրամադրված երկու հարևանները» (բշմամա պես, բշմամա մման), «**անզբաբար** ծեծում էին ստրուկներին» (անզուք ձևով, անզուքի մման) և այլն:

գ) **Վարք**՝ «կյանք, ընթացք, կենցաղի կերպ» գոյականը նույնպես, «թեթևանալով» վերջին գոյականակերտ **ք**-ից և ընդունելով **ի** ածանցը, վերոհիշյալ մակբայակերտ ածանցների շարքն է անցել: Այն բառերը վեր է ածում գործողությունները ինչ-որ առարկայի, գոյականի ձևով, կերպով կատարվելը ցույց տվող լրացումների: Այսպես՝ եթե ատուս ենք՝ նա **բաղաբավարի** մարդ է, ապա հասկանում ենք՝ բաղաբին հատուկ վարվեցողությամբ մարդ է: Իսկ եթե ատուս ենք՝ **գյուղավարի** է խոտում, ապա հասկանում ենք՝ գյուղում ընդունված ձևով, կենցաղով, իսկ եթե ատուս ենք՝ **մարդավարի** եղիր, ապա հասկանում ենք՝ **մարդուն** սազական ձևով, իսկ **ընկերավարի**՝ ընկերոջը պատշաճ կարգով և այլն:

133. ԶԵԹ, ՈՐԻՆ ԶԵՆ ՎՃԱՆԿՈՒ ՂՐԱՍԱՐԿՂՈՒՄ

18-րդ դարի հայ կաթողիկոսներից մեկը՝ Արքահան Կրետացին, թողել է նաև գրական ժառանգություն. նշանավոր են դրանցից «Նաղիր շափի պատմությունը», «Պատմություն Անի քաղաքի» և անձնական «Յիշատակարանը»: «Յիշատակարանը» արժեքավոր է ոչ միայն ամեն օր այնտեղ կատարված գործունեությունով, այլև լեզվաբանական տեսանկյունից, քանի որ նա օգտագործում է հաճախ նաև ժողովրդական արտահայտություններ և բառեր, օրինակ՝ նրա մոտ համոզյալում ենք **բանողչք**, **շինողչք**, **կարողչք**, **ներկողչք** բառերին: Նա գրում է. «Վզի շալին և շալ գոտուն **ներկողչք** են տվել 16 դուրուշ»: Կամ «Ուք կտոր չուխային **կարողչք** 23 դուրուշ»: Իսկ Մ. Բժշկյանը իր «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» գրքում օգտագործում է **օրինչչք**, **թաղմանչք**, **գրչչք**, **կաղանչք**, **տանօրինչք**, որոնք քաղված են Ռաշքովայի հայոց օրենքների հրովարտակից (16-րդ դար): 7այերենի բազմաթիվ այլ բարբառներում նույնպես գտնում ենք **չք**ը՝ մեկ կազմված մաս ուրիշ բառեր, ինչպես **շարողչք**, **գտնողչք**, **ավուրչք**, **թերողչք**, **տանողչք**, **հանողչք** և այլն: Յիշատակված բառերի մեջ համոզիպող **չք** բառը, նոր սերունդը կարծում է,

նույնն է եվրոպական լեզուներից կամ ռուսերենից փոխ առնված «ե»՝ «դրամական վաստարուղք, չեկ» բառի հետ: Մասնավոր դր երկու դեպքում էլ գործ ունենց դրամի, վճարի, վարձի հետ: Մակայն այդ երկու բառերի մմանությունը զուտ պատահական է:

Լեզվաբանության մեջ երկու մմանատունց բառերի շփոթումը կոչվում է **թաղարկություն** (կոմսամիացիա): Եթե կուզեք ճիշտ իմանալ, ապա հայերեն **չք**ը բառ էլ չէ, այլ ածանց: Այդ **չք**ը ածանցից ծնված բառ է: **Չք**ը դասական գրաբարում վերջածանց էր: Միա գրաբարյան մի քանի բառեր, որոնց մեջ դեռևս ածանց է **չք**ը: Գրաբարում **ավնչայք**՝ «բարի լուրի պարզև», դարձել է նախ **ավն-չայ-ք** (ավնչայայք) և ապա **ավնչայք**: **Առիավնչայ-ք**ը՝ «գրավական», դարձել է **առիավնչայք** և այլն: Իսկ ինչո՞ւ: Գրաբարյան այ երկնչյունը հետագայում ասորաոներում կամ ժողովրդի խոսակցական լեզվում դարձել է **-ա** կամ **-է**, **իսրայայք** **-ք**-ից առաջ, ինչպես չուխայք-չուխեք, տղայք-տղեք, փեսայք-փեսեք, երկիսայք-երկիսեք և այլն, հետևաբար **չչայք**-ն էլ վեր է ածվել **չք**-ի:

Այսպես, ուրեմն, մենք այս դեպքում ականատես եղանք ոչ թե բառից առաջացած ածանցի, այլ հակառակ երևույթի՝ ածանցից ծնված բառի հետ, որն ավելի հազվադեպ է պատահում լեզուների պատմության մեջ:

134. ԱԾԱՆՑԻՑ ԾՆՎԱԾ ԵՎՍ ՄԵԿ ԲԱՌ՝ ՈՒԿԻ

«Ընկերուհուս հարցրի, թե ինչպիսին է մեր նոր բժշկուհին, որը թեև նախկինում գեղջկուհի էր եղել, սակայն կթվորուհի քրոջ խորհրդով ուսանել էր Երևանում և աշխատանքի էր անցել մե թաղամասում»: Ոչ միայն այս նախադասության մեջ նկատ ընկերուհի, բժշկուհի, գեղջկուհի, կթվորուհի բառերում, այլև գեջուհի, քրոջուհի, թագուհի, երթվաուհի, եգիպտուհի, ֆրանսուհի, Տիգրանուհի, խմանգասպուհի, Ջարուհի, Սմբատուհի, Տաճատուհի, խոսրովուհի, Վարդուհի և այլ նման բառերում **-ուհի** ածանցը բառերին հաղորդում է իզական իմաստ: Այս ածանցի ծագումը 7. Աճառյանը կապում է իրանական լեզուների հետ: Դասական գրաբարում **-ուհի**-ն երբեք որպես առանձին բառ չի օգտագործվել, այլ միայն որպես իզական գոյականներ կերտող ածանց:

Սակայն այս ածանցին նույնպես (թեև նվազ չափով) վիճակված էր առանձին ինքնուրույն բառ դառնալու բախտը, որի մասին պահպանվել են գրավոր վկայություններ: Նրա ինքնուրույն բառ դառնալու ամենամեծ վկայությունն է 18-րդ դարի հայ կաթողիկոս Արքահան Կրետացու «Պատմություն Նաղիր շափի» երկը, ուր երեք անգամ օգտագործված է **ուհի**-ն որպես գոյական՝ «կին, աղջիկ» նշանակություններով. «Արծակեաց **զուհիքն** իւր» (Իր կանանց ազատեց), «**Ունեաց** տեղն եղեգմեայ» (Կանանց եղեգմեյա կացարանը), «Եվ իւր **ունեացն** տեղն եղեգմեայ»:

Նորագույն գրականության և բանաստեղծության մեջ արդեն շատ ենք հանդիպում անկախ բառի արժեքով **ուհի**-ին. «Բոլոր **ուհի**-ներին հավաքել ես շուրջդ», «Օ, իմ **ուհի** երկնային», և այլն: Մ. Աբեղյանի կազմած «Ժողովրդական խաղիկներ» ժողովածուում հանդիպում ենք հետևյալ քառյակին, ուր տղան դիմում է իր սիրած աղջկան դարձյալ **-ուհի** բառով.

Աղջիկ, դու **ուհի**, **ուհի**,
Իմ նազելի սիրուհի,
Ես՝ մի շքեղ թագավոր,
Դու՝ ինձ համար թագուհի (էջ 278):

Եվ այսպես **ուհի**-ն, որ նախապես բառ է եղել, դարձել է ածանց և ապա՝ նորից բառ:

135. ԱՃԱՆՅՈՒ ՈՐՊԵՍ ԲԱՈ

Նման օրինակներ կան նաև աշխարհի այլ լեզուներում, բերենք դրանցից հանրածանոթ մի բառ: Աշխարհի բազմաթիվ ժողովուրդներ օգտագործում են bus բառը՝ «ավտոբուս» նշանակությամբ: Այն ծագում է լատիներենի omnibus՝ «բոլորին, հանրությանը» բառից (այսինքն՝ նման անվանումն իր հիմքում նկատի ուներ վճարի էժան լինելը, որ ձիակառքերի արժեքի հետ համեմատած՝ մատչելի էր բոլորի համար): Չետագայում, բառը կրճատված գործածվելով, սկսեց հնչել bus ձևով, որն արդեն փաստորեն ոչ թե բառ էր, այլ **աժանց** (չիչենք, որ փոխադրականներից այսօր **ավտո** անվանումը նույնպես բառի կենս է և նշանակում է «ինքը», automobile՝ «ինքը շարժվող»):

Չետագայում, երբ ստեղծվեցին էլեկտրական գծերից օգտվող ավտոբուսներ, հարկ եղավ մյուսներից զանազանելու համար մտածել մի նոր անուն, և ահա ծնվեց trolleybus-ը, որ կազմված է անգլերենի trolley՝ «թավալուկ, գլան» բառից և լատիներենի հոգնակի տրական հոլովի bus աժանցի միացումից: Բայց **տրոլեյբուսի** բախտը բերել է այն չի կրճատվում **ավտոբուսի** պես եվրոպական լեզուներում: Չայերս արտասանում ենք այս բառերը լրիվ **ավտոբուս, տրոլեյբուս** ձևով:

136. ԲԱՈՐ ԿԵՍ ԱՆԿԱՄԲ

Երբ ստեղծվեց ներքին այրման շարժիչով ընթացող մեքենան, անվանվեց այն automobile, որ հունարեն auto՝ «ինքը», mobile՝ «շարժվող» բառերից էր կազմված: Այդ բառի պատճենում է հայերեն **ինքնաշարժը**:

Մակայն հետագայում այդ բառը շատ «երկար» թվաց ժողովուրդներին, և նրանք գիտնականների հորինած բառը կիսեցին և սկսեցին պարզապես կոչել **ավտոմեքենա՝ ավտո**: Արևմտահայերեն խոսակցականում **օթո** հնչումն ստացավ: Եվ այսպես այսօր բոլորս ասում ենք **ավտո՝** հասկանալով **ավտոմոբիլ, ավտոմեքենա**, մինչդեռ դուրս է գալիս անիտեթոլոյուն, քանի որ պարզապես ասում ենք՝ **«ինքը»** և ոչ թե **«ինքնաշարժ»**: Ուրեմն, երբ ասում ենք **ավտո** ես գնել, ստացվում է անիմաստ մի բան, քանի որ իրականում մենք ասում ենք՝ **«ինքը»** ես գնել:

137. ԲԱՈ՝ ԵՐԵՔ ՊԱՇՏՈՆՈՎ

Այսօր աշխարհի բազմաթիվ ժողովուրդների բառապաշարում սովորական բառ է **մետրո**-ն, ինչպես անվանում են մեզ մոտ ընդերկրյա կամ ստորերկրյա արագընթաց գնացքները: Սակայն ծագումնաբանորեն **մետրո**-ն նման փոխադրական միջոցների անվանման համար հաճախ այնքան էլ հարմար չէ. ավելին, անիմաստ է... սակայն մենք շարունակում ենք գործածել այդ անիմաստ բառը: ԽՍՀՄ-ում **մետրոն** կառուցվեց առաջինը Մոսկվայում 30-ական թվականներին, և անգլերենի metropolis-ը՝ «մայրցամաք» բառը կրճատված հարմարեցվեց ընդերկրյա փոխադրական գծերին: Իհարկե, **մետրոպոլիտեն**-ը անգլերեն է, այլ հունարեն, և այդ բառը հայերենում գործածվել է մեկ փառամայակ առաջ: Չունարենում matris՝ «մայր» և polis՝ «քաղաք» բառերի միացումից կազմվել էր **մետրոպոլիս**՝ «մայրաքաղաք», որից էլ **մետրոպոլիտիս**՝ «արքեպիսկոպոս» բառացի այն նշանակում է «մայրաքաղաքացի»):

Ահա հենց այս իմաստով էլ Մխիթար Գոչի «Դատաստանագրքում» գտնում ենք գործածված «Երորդ դասը եկեղեցույ **մետրոպոլիտը**, որը թարգմանին **մայրաքաղաքացի»** (Երորդ շերտը եկեղեցու արքեպիսկոպոսներն են, որոնք թարգմանվում են «մայրաքաղաքացիներ»): Ուրեմն, հունարենի **մետրոպոլիս**-ը, որ նախապես գիտակցվում էր «մայրաքաղաքացի» նշանակությամբ, դարձավ **արքեպիսկոպոս**, և դա էլ բավական չէր **ստորերկրյա փոխադրամիջոց**: Ուրեմն, մի բառ՝ երեք պաշտոնով, լրաց ավելի ճիշտ կլիներ ասել՝ **մետրո**-ն նոր բառ է նոր բովանդակությամբ, քանի որ նրանում չենք գիտակցում ոչ «մայր», ոչ «մայրաքաղաքացի», ոչ «արքեպիսկոպոս», այլ միայն «ընդգետնյա փոխադրամիջոց» իմաստը:

138. ԵՌԵ ԾԱՐԺՎՈՒՄ Է ԵԿԱՐԸ, ԱՊԱ ԿԻՆՈ Է

Չողագնդի բոլոր անկյուններում գիտեն **սինեմա** կամ **կինո** բառերը: Ինչպես նորագույն գյուտերից շատերը, այս դեպքում էլ շարժվող նկարը ցույց տալու սարքի հեղինակները դիմեցին հունարենին՝ հարմար մի անուն գտնելու համար: Եվ ահա հունարենի cinema՝ «շարժվում են» և fotografի «նկար» բառերի արձատներից ստեղծվեց **կինեմատոգրաֆիա**-ն: Բայց քանի որ ժամանակը ամենաթանկ բանն է մարդու համար, ուստի իր իսկ ստեղծած երկար բառը մարդը կրճատեց, և **կինեմատոգրաֆիա**-ի փոխարեն գերադասում է գործածել **կինո**-ն կամ **սինեմա**-ն, որ պարզապես նշանակում է «շարժվում են» (առանց նկարի): Չայերենում (գերազանցապես արևմտահայերենում) թարգմանաբար ստեղծվել է նաև **շարժանկար** բառը, որ պատճենում է վերոհիշյալ հունարեն բառը:

139. «ՀԱՆԳՍՏԻ» ՄԵԿԵԱՆ ԳՐԱԲԱՐՅԱՆ ՍԱՆՏԻԿԸ...

Չայոց լեզվի «վաստակաշատ» մասնակիցներից է **զ**-ն, որը զրաբարում «աշխատում» էր մեծ եռանդով, մի քանի պաշտոններով, բառերի սկզբում միանալով նրանց հաղորդում էր հայցական հոլովի (նաև պատմական և պարտական) նշանակություն, օրինակ՝ «Աստված արար **զերկիր** և **զերկին»** (Աստված ստեղծեց երկիրը և երկինքը), «Տեսի **զքեզ»** (Տեսա թեզ) և այլն: Այս «սովորությունը» պահպանել են մինչև մեր օրերը հայերենի մի շարք բարբառներ և հատկապես Սասնո, Մշո բարբառները, օրինակ՝ «Գերթա **զտուն, զհաց** լէ գուտե, **զգուր** լէ գխմի» (Գուն է տուն, հացն էլ ուտում է, ջուրն էլ խմում է), և այսպես շատ բառեր է «կպած» մնում **զ**-ն, ինչպես «**Ձինջուզինջ** տամ լոզվորչուն...» երգի մեջ և այլն:

Բայց ամենամեծ «դեղը», որ կատարում էր **զ**-ն, բառերի իմաստը **սաստկացնել** էր, ընդգծելը: Դեռ այսօր էլ մենք կողք կողքի օգտագործում ենք բառեր մերո՝ «ընդգծված, սաստկացված **զ**-ով», մերթ առանց **զ**-ի, օրինակ՝ «Առանց արդուգարդի էլ նա գեղեցիկ էր, բայց սովորության համածայն՝ սկսեց **զարդարվել**»: Մենք ակամատես ենք, թե ինչպես **արդ** արձատից **արդուգարդ, զարդարել** բառերն են կազմված, սակայն նույն արձատից ունենք նաև **արդուկ**, առանց **զ**-ի, ինչպես նաև **արթնանալ** և **զարթնել, զարթոնք, եղծել** և գեղծարարություն, իջնել և զիջում և այլն:

Մի շարք բառերի սկզբում այնպես է «կպել» **զ**-ն, որ եթե անջատենք նրանցից այն, մեզ ծանոթ բառերն ճանճանաչելի» կդառնան, ահա նման բառերից մի քանիսը՝ **զառամայալ** (**զ**-առ-ամ-յալ), **զառանցել** (**զ**-առ-անց-ել), **զարտուղի** (**զ**-արտ-ուղի), **զեկույր** (**զ**-եկ-ույր), **զգալ** (**զ**-գալ), **զգեստ** (**զ**-գեստ), **զետեղել** (**զ**-ետեղ-ել), **զետուն** (**զ**- եռ-ուն), **իրագեկ** (**իր**-ա-զ եկ), **անզգամ** (**ան**-զ-գամ) զույնգզույն

(գույն-գ-գույն) և այլն: Որոշ բառերի սկզբի հ-ն «զիջում» է իր տեղը գ-ին, ինչպես, օրինակ՝ **գով** (հով-ից), **գարկ** (հարկ-անել-ից), **գանցանք** (յանց-անք-ից), **գողել** (յող-ել-ից), **գեղում** (հեղ-ում-ից) և այլն:

Եվ այսպես, թեև մեր օրերում «հանգստի» է անցել **գ-ն** և այլևս չի մասնակցում նոր բառեր կերտելու աշխատանքներին, սակայն նրա կերտած բառերն այնքան շատ են, որ մենք նրա վատասակը մեր լեզվի մեջ երբեք չենք կարող մոռանալ: **Զ-ի** վատասակը հասկանալու համար բավական է հիշեցնել հետևյալը. եթե հիշյալ բառերից հանենք նրան, ապա այդ բառերը կդադարեն գոյություն ունենալուց: Սհա դրանցից մի քանիսը առանց **գ-ի** առանյալ (զառանյալի փոխարեն), առանցել (զառանցելի փոխարեն), եկույց (զեկույցի փոխարեն), ետեղել (զետեղելի փոխարեն) և այլն:

140. ԻՆՉ Է ՄԻ-Ն, ԿԱՍ ԶԱՆԻ՞ ԻՍԱՍ ԿԱՐՈՂ Է ՈՒՆԵՆԱԼ ԲԱՐԸ

Եթե մի խումբ մարդկանց հարց տանք՝ ինչ է մի-ն, ապա, անկասկած, հաջորդելու են իրարմեջ պատասխաններ: Ոմանք պնդելու են, թե մի-ն **թվական** է, ոմանք՝ **անորոշ հոգ**, ոմանք՝ **անորոշ դերանուն**, ոմանք՝ **հորդորական մասնիկ**, ոմանք էլ՝ **արգելական, ժխտական մասնիկ, նուտայի անվանում**, և բոլորն էլ կլինեն իրավացի: Իսկ վերջապես, կարո՞ղ է մնան բան պատահել, որ ասենք՝ չորս տարբեր կարծիքներից չորսն էլ իրավացի լինեն: Գուցե մեկը, այնուամենայնիվ, նրանցից ավելի՞ է իրավացի, քան մյուսը: Պատասխանների իրավացիությունը կարելի է ստուգել միայն **խոսքի մեջ**, ուստի դիմենք խոսքին:

«Այսօր անձրև է, սիրելիս, առանց անձրևանոցի մի՛ գնա», «Մի՛ առարկիր, մի խոսիր այդպես» նախադասություններում մի-ն **արգելական** բառ է, որովհետև արտասանվում է շեշտով և դրվում է բայերից առաջ:

«Մի գայիր, մի տեսնեիր, մի խորհուրդ տայիր, ի՞նչ կլիներ, անգութ»: «Չո չէիր մտածի. «Մի գնա՛ն ընկերոջս մոտ, մի լսե՛ն նրա գանգատները»», «Մի տես, ինչ ծիրան է, է», այս նախադասություններում մի-ն **հորդորական** է կամ **վերաբերական**, որովհետև արտասանվում է հորդորով, մեղմ հանդիմանական երանգով, առանց հրամայական շեշտի:

«Մի կապոց կանաչի վերցրեց, մի ուրբի տվեց». այս նախադասության մեջ մի-ն **թվական** արժեք ունի, հետևաբար, օգտագործված է մեկ թվականի նշանակությամբ: «Լինում է, չի լինում, ժամանակով մի թագավոր է լինում, մի վեզիր ու մի աղջիկ է ունենում». պարզ է, որ այստեղ **խոսքը** ինչ-որ թագավորի, ինչ-որ վեզիրի, ինչ-որ աղջկա մասին է և մի-ն արտահայտում է **անորոշ դերանվան** կամ **անորոշ հոգի իմաստ**:

Մի-ն եվրոպական նուտագրության երրորդ ծայրանիշի անվանումն է: Այստեղ մի-ն յոթ նուտաներից երրորդի անվանումն է:

«Մի մարդ եկավ, մի բան հարցրեց ու գնաց», դարձյալ **անորոշություն** և ոչ «մեկ» նշանակությամբ, ուստի այստեղ ևս մի-ն **անորոշ հոգ** է:

Արևմտահայ գրական լեզվում և մի շարք բարբառներում **անորոշ հոգի մի-ն** գրվում է **մը** ձևով՝ բան մը ասավ, բան մը չտեսավ, իսկ Շիրակի, Կարնո բարբառներում՝ **ըմ** ձևով՝ բանըմ չըսած՝ նեղենաս կը:

141. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԾՆԿՈՒՄ ՆՈՒՅՆԱՆՈՒՄ ԲԱՌԵՐԸ, ՅԵՄ՝ «ՏԻՂՄ» ԵՎ ՅԵՄ՝ «ԱՐՏԱԳՐԱՍԱՍ»

Չայերեն **ցեխ**՝ «տիղմ, կավի, հողի շաղպա» բառը գծածական է եղել դասական գրարարի ժամանակներից սկսած և կենդանի է առ այսօր թե՛ բարբառներում, թե՛ գրական լեզվում: Սակայն նորագույն բառարաններում և արդի մամուլում այսօր կարելի է հանդիպել **ցեխ** բառի նաև այլ նշանակությանը, որը թեև հնչմամբ նույնն է հայերեն **ցեխ**-ի հետ, սակայն ծագմամբ գալիս է այլ լեզուներից՝ ռուսերենի միջնորդությամբ գերմաներենից: Այսպես, օրինակ՝ եթե կարդում եք «Բացվել է կահույցի նոր **ցեխ**», «Գործարանի **ցեխերը** լուսավոր են», «Ոչ մի **ցեխ** մյուսից հետո չի մնում», «Մեր ցեխը մրցում է հարևան ցեխի հետ» և այլն, ապա հասկանում ենք ոչ թե «տիղմ», այլ «բաժին, մասնաճյուղ, արտադրամաս, առանձնացված մի տեղ գործարանում կամ արտադրության մեջ»: Բայց այս նշանակությունները նոր են: Եթե մեզ հետաքրքրում է տվյալ բառի ծագումը, ապա մենք պիտի շրջագայության մեկնենք դեպի միջնադարյան Գերմանիա, որտեղից առաջացել է մեզ հետաքրքրող **ցեխ**-ը: Գերմաներենում այսօր էլ Zeche ցեխն նշանակում է «խնջույք, կերուխում», «հաշիվ (կերուխումի)», «համբարություն, արհեստակցություն», «հանք, հանքահոր», իսկ ցեխեն Zecheո բայական ձևը նշանակում է «կերուխում անել», Zeche՝ «թեֆչի, ցուփ», ցեխգենոսե Zechgenosse՝ «բաժակի ընկեր, բաժակակից»: Իսկ ինչպե՞ս կատարվեց այս նշանակություններից անցումը դեպի արդի **ցեխ**՝ «բաժանմունք, մասնաճյուղ, առանձնացված աշխատավայր» նշանակությունները: Շատ պարզ, միմյանց հետ կերուխում, խնջույք սարքողներն նաև միմյանց հետ աշխատողներ էին, որոնք կազմում էին արհեստակցություններ, համբարություններ, և ահա այստեղից էլ համբարությունների, ընկերակցությանը արտադրողների արտադրավայրը (թեկուզ և հանքավայրը, հանքահորը) սկսեց կոչվել ցեխ և այս վերջին նշանակությամբ էլ անցավ ռուսերենին, որտեղից էլ հայերենին: Բնականաբար, ոչ ռուսերենում և ոչ էլ հայերենում **ցեխ** բառի նախկին նշանակությունը՝ «խնջույք, կերուխում», չի գիտակցվում: Սհա և նույնաիունչ, բայց իմաստով տարբեր բառերի առաջացման ուղիներից մեկը, որի մասին պատմեցինք այստեղ:

142. ԵՁԵ ՉԵԶՈՐ ԵՍ, ՈՒՐԵՄՆ ՈՉ ԱՅՍ ԵՍ, ՈՉ ԱՅՆ, ԿԱՍ ՄԵՎ ԲԱՌՈՒՄ ՀԻՆԳ ԱՆՈՒՄ

Որպեսզի հասկանաք, թե ինչ կազմություն ունի հայերեն **չեզոք** բառը, հարկ է, որ իմանանք նրա գրությունը գրաբարում: Գրաբարում գրում էին **չեզոք**, որովհետև այս իհնգ տառանոց բառը հինգ միավորներից կամ հինգ բառերից էր կազմված: Չե՞ք հավատում: Ապա տեսեք: Առաջինը չ՝ ժխտական մասնիկն է, երկրորդը է-ն **եմ** էական բայի եզակի երրորդ դեմքը, երրորդը **զ** նախդիրը, որ հայցական հոլովում դրված բառերին որոշյալ իմաստ էր հաղորդում, չորրորդը ռ արաբերական դերանունն է, որը գործածվում էր հարցական և անորոշ նշանակություններով, ինչնեք Արտաշես թագավորի կարոտախտով լեցուն արտասախտությունը՝ «Ռ՛տայր ինձ գծու՛ր ծխամի՛ն» և Չ. Սենկևիչի «Յո՛ւ երթաս» (Դեպի ո՛ւր ես գնում) վեպը, ուր յո-ն կազմված է ի՛ «դեպի» և ո՛ «ուր» բառերից և հինգերորդը՝ ք-ն, գոյականակերտ անձանց է: Եվ այսպես, ահա հինգ տառանի մի բառ, որի ամեն մի տառը մի բառի արժեք ունի: Եվ այսպես՝ **չեզոք**-ը ստեղծվեց հունարան դպրոցի քերականների

կողմից որպես թարգմանություն հունարենի *udeteron*՝ «երկուսից ոչ մեկը, ոչ այս, ոչ այն», և լատիներենի *neutrum* բառի: Արդեն հազար հինգ հարյուր տարի է, ինչ այն ծառայում է մեզ տարբեր նշանակություններով: Երբ ասում ենք՝ «ևս չեզոք է», հասկանում ենք՝ «ոչ մի կողմից չէ», «ևս չեզոքություն է պահպանում» «ևս ոչ մեկին կողմնակցություն չի անում», չեզոք գոտի, չեզոք պետություն, չեզոք մասնիկներ, չեզոք տարրեր, չեզոքբանալ, չեզոքացում և նման բազմաթիվ այլ հասկացություններ շարունակում են կազմվել հայ քերականների հնարամիտ, լեզվաշինարարի մեծ արվեստով ստեղծած բառի շնորհիվ:

143. ՆՈՒՅՆ ԲԱՈՐ ԵՐԵՔ ՏԱՐԱԶՈՎ

Հայերեն **հարկ**՝ «պետք, անհրաժեշտություն, կարիք, տուրք, պահանջ» բազմիմաստ բառը մեր օրերն է հասել նաև տարբեր տարազներով, տարբեր քարացած վիճակներով: Արևելահայերենում **բացառական** հոլովածևում է գործածվում, որը լինում է **ի-հարկ-է** (ներկայումս գրում ենք **իհարկն**), արևմտահայերենում **գործիական** հոլովածևում, որը լինում է **հարկավ** և վերջապես երկուսն էլ՝ «անհրաժեշտաբար» նշանակությամբ և **հարկավոր** տեսքով (տարազով), որը հավասարապես օգտագործում են և արևմտահայերենում, և արևելահայերենում:

144. «ՄԱՇՎԱԾ» ԲԱՈՒՐ ԵՎ ԲԱՈՒՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Մաշվում են կյանքում ոչ միայն զգեստները, կոշիկները, առտմին գործածության իրերը, այլև բառերը: Այսօր օգտագործելով **դրամ** բառը՝ մենք չենք էլ կասկածում, որ այն մեզ է փոխանցվել քերականորեն, լեզվից լեզու, բավական «մաշված» վիճակում: Լեզվաբանները գտնում են, որ այն ծագում է հունական **դրախմն (drachme)**՝ «փոքրիկ քաշ» բառից, որն էլ ծագում էր **բուս, բուսն** մեջ վերցված ցուպիկների չափի հասկացությունից: Այն Հին աշխարհում փոխանցվել է արաբերենին *dirham* դիրհամ ձևով, ուր արդեն մաշված ենք տեսնում բառավերջի **-e**-ն: Իսկ իրանական լեզուներից պարսկերենին է հասել բառս նաև մեկ հնչյուն մեջտեղից կորցրած *diram* ձևով: Հավանաբար պահլավերենն ու հայերենը ստացել են **դրամ** ձևը միևնույն ակունքից, և կամ հայերենը պահլավերենից է փոխ առել այսօրվա **դրամ**-ը:

Եվ այսպես, բառերը կարող են մաշվել և՛ վերջից, և՛ մեջտեղից, և՛ սկզբից զանազան պատճառներով և ոչ այնքան «շատ» գործածվելուց: Կան բառեր, որոնք մաշվելով, նվազելով հասել են մի տառի և կամեզ առել այդ խլյակի վրա: Մինչև այդ օրինակին հասնելը դարձյալ դիմենք Ամենայն հայոց բանաստեղծին՝ «Հեյ ճամփաներ, ճամփաներ, անդարձ ու ինն ճամփաներ» քառյակի տողերին, ուր դասական գրաբարի **ճամապարհ-ը** ամճամաչելիորեն տեսքը կորցրած է ներկայանում մեզ: Այսպես մաշված է մեզ հասել նաև **ջաղագ-ը ջրաղագ-ից** և այլն:

— Խորհում ես դու են մեծ խոսքը, որ տի ասես աշխարհիցին...

Այստեղ հեղինակը **պիտի** հարկադրական եղանակիչի փոխարեն գործածում է նրա կեսը՝ **-տի-ն**, որը վերցրել է մայրենի բարբառից բանաստեղծության ոտքը (ռիթմը) մեկ վանկով կրճատելու նպատակով: Բանն այն է, որ նույն **պիտի-ն** այլ բարբառներում էլ է կոտորակված օգտագործվում: Արևմտյան մի շարք բարբառներում այն պահպանվել է միայն առաջին մասով՝ **պի-ն** ձևով: Օրինակ՝ հունգարահայերը ասում էին. «Տերը **պի** օրինն ձեզ», «Պի լավանար»:

Նույն ձևով է հարկադրականը կազմում նաև երգնկայի բարբառը՝ «Պի լեսն»: Ավելի

է առաջ զնում այս բառի նվազումը որոշ բարբառներում, մինչև որ նրանից մնում է մեկ հնչյուն **տ-** կամ **պ-**: Այսպես, «**Սասնա ծռեք**» էպոսի պատմությունը հանդիպում ենք. «Տերբան, Սասնա բաղաք թալնեն, բերեն բեզեր...», այսինքն՝ «**պիտի** երթա...»: Կան «**Տասեն**, տի գովեն հանդուք հաթունին», այսինքն՝ «**պիտի** ասեն» և այլն:

Դարձյալ արևմտահայ բարբառներում հանդիպում ենք **պինն** կամ **բինն**, **բընն**, այսինքն՝ «**պիտի** ամի»: «Հազար կըսեն մըներ, ամա միքը դըրեր է, նե, **բընն**»: Եվ այսպես, **պիտի** բառից մնացին նախ վանկեր, ապա աստ: Խեղճ **պիտի**, բայց արյոյր՝ մնան բախտի միայն **պիտի-ն** է արժանացել: Իհարկն ոչ, բազմաթիվ բառերից մենք այժմ միայն մասնիկներ ունենք: Այսպես է կ-ն հայերենի պայմանական եղանակիչը, որի մի քիչ ավելի «ամբողջական» վիճակը **կու, կը, կի, գո** ձևով պահպանել են մի շարք բարբառներ: Թե նախապես ինչ «տեսք» է ունեցել այս մասնիկը գրաբարում **կա՞մ, կենա՞մ գո՞ր, կա՞ր**... առայժմ միասնական կարծիքի չեն լեզվաբանները: Բայց մենք սիրով դեռ գործածում ենք երազներին և ցանկություններին պայմանականություն տվող այս մասնիկը... **Կուզեի** լինել չորան սարերում... **Կուզե՞ս** լինիմ վշտի ցողեր... **Կուզե՞ս, նազելիս**...

145. ՄԻԱԿ ԲԱՈՐ, ՈՐԻ ՄԵՏ ԱՊՐՈՒՄ Է ՄԵՌԱԾ ՄԻ ԽՆՍՔ

Մեծ սիրահար Քուչակը իր ընտրյալին զովելու համար ինչպիսի համեմատություններ ասես, որ չի կատարել... Նրա ամենասիրած համեմատություններից մեկն էլ **մորճիկը** կամ **մորճուկն** է, երբ ասում է.

— Հայ իմ սերկկի **մորճիկ** (Այ իմ դալար սերկկեմի), կամ

— Հայ մեր մահալի **մորճուկ** (Այ մեր թաղի մատղաշ ծառ) և կամ

— Հայ իմ մազդ ուռի **մորճիկ** (Այ իմ մազդ դալար ուռի):

Ներկայումս թեև բանաստեղծները քիչ են դիմում **մորճիկ-ին**, սակայն կա մի բառ, որն առանց **մորճ-**ի անիմաստ է պատկերացնել, դա **ծխամորճ-ն** է, որը թերևս ծնվել է այն տարիներին, երբ մահանում էր իրեն ծնունդ տվող **մորճ-ը**: Ը՛է՛ որ ծխելը Ամերիկյան պիտմագործելուց հետո տարածվեց, այդ իսկ պատճառով **ծխամորճ** բառն էլ չէր կարող հին պատմություն ունենալ: Դուք կռահում եք արդեն նրա կազմությունը **ծխել** և **մորճ**՝ «դալար ճյուղ, ոտտ, զավազան, ճիպոտ» բառերից: Ուրեմն, **ծխամորճ-ը**՝ «ծխելու ոտտ, ճյուղ, ճիպոտ» այն միակ բառն է, որի մեջ շարունակում է ապրել ու հարատևել մահացած **մորճ-ը**, այլ կերպ չհիղել-ը, որ նույնպես առաջացել է **ճիպոտ** բառից (հիշենք Ամենայն հայոց վարպետի «Համբերանքի չիղուխը», որ Օհան ամու անբաժան ուղեկիցն էր):

146. ԵՌԵ ԶԱՆ-Ը ԱՅՅԵՐԵՆ Է, ԱՊԱ ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԱՅՆ

Բարձրաստիճան հոգևորականներին և հատկապես եպիսկոպոսին հայերը դիմում են **սրբազան** մակդիրով: Սրբազան նշանակում է «սրբություն դարձած, մաքուր, անարատ, նվիրական, վսեմ»: Նրա առաջին մասը՝ **սուրբ-ը**, հասկանալի է, սակայն ի՞նչ է **զան-ը**: Այս **զան-ը** գտնում ենք նաև մի շարք այլ հայերեն բառերի մեջ, որպիսիք են **զան-ազան**, **ճշմարտազան**, **կուռազան**, **փաղազան**, **այլազան**, **զարմանազան**, **հրաշազան**, **բազմազան**, **հիզան**, **որզան** և այլն: Գուցե այ՛ս բառերն

օգնեն մեզ իրենց ունեցած **զան** մասով պարզելու այդ **զան**-ի նշանակությունը: Այսպես, **զանազան** նշանակում է «տարբեր, այլ ձևով», այլազան «այլ կերպ», ճշմարտազան «ճշմարիտ ձևով»: Բազմազան «բազմակերպ, բազում ձևերով», զարմանազան «զարմանալի ձևով», կուռազան «կռվի միջոցով, կռվով», հրաշազան «հրաշակերպ, հրաշքի պես» և այլն: Ուրեմն, **զան**-ը նշանակում է «կերպ, ձև, տեսակ»: Եվ իսկապես, **զան**-ը իր զուգահեռն ունի պարսկերենում, ավելի ճիշտ՝ պարսկերենն էլ, հայերենն էլ ժառանգել են այն ավելի հին իրանական *zana*՝ «կերպ, տեսակ» բառից: Սոգդիերենում պահպանվել է նաև *zanaak*՝ «տեսակ» ածանցված ձևը, որը գտնում ենք նաև հայերենի գեղազանակ, զանազանակ բառերում: Ուրեմն, սրբազան՝ սրբի ձևով, սրբակերպով:

147. ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ԵՍ, ՈՒՐԵՄՆ «ԿԱՊՎՈՒՄ» ԵՍ

Բժշկության մեջ լայնորեն գործածվում են վարակ, վարակել կամ վարակվել բառերը, որոնք գիտակցվում են «որևէ հիվանդության բացիլներ ընդունելու» նշանակությամբ: Մինչդեռ հին պատկերացմամբ՝ վարակ-ը կամ վարակ-վելը «հիվանդությանը բռնվելն» է կամ «հիվանդությանը կաշկանդվելը, կապվելը»: Զէ՞ որ գրաբարում վարակ-ը օգտագործվում էր դեռևս «համգույց, կապ, ուստ» նշանակություններով, ինչպես, օրինակ՝ «Տամայր զվարակն կապանաց արծակել» (ձգում էր կապանքների հանգույցն արծակել), «Որպես վարակեալ ինչ շղթայիւք» (Շղթաներով ասես կապված լիներ), իսկ այնուհետև՝ «Ցավոք վարակեալ» (Ցավերով կապված), «Մեղաք վարակմամբ» (Մեղքերի կապով) և այլ ոճերը հասցրին մեր ժամանակների իմաստին վարակ-ել՝ «կապվել», նաև «ընդունել որևէ հիվանդության բացիլներ, փոխանցվել հիվանդությանը»:

148. ԱՄԲՈՂՏԸ ՄԱՍԻ ԱՆՎԱՄԲ

Ո՞վ չի հիշում Չարենցի ասպետին, որ պատմում էր Սուրբ քաղաքից վերադառնալը. «Ասպետի լաթեր էր հագին»: Գապա Քուչակի խորհուրդները. «Քանի՞ ու քանի՞ ասեն՝ մի կենար դու խամ լաթերով»:

Այսինքն՝ ցանկանում է տեսնել սիրուհուն ոչ հասարակ շորերով: Գայերենի գրեթե բոլոր բարբառներն էլ գործածում են լաթ-ը՝ «շոր, կտոր, զգեստ, հագուստ, հյուսվածքեղեն» նշանակություններով: Բայց եթե վերադառնանք լաթ-ի ծագման պատմությանը, ապա կզուցենք նրա նախնական նշանակությունը պարսկերենում, ուր իս նշանակում է «մաս, կտոր», որից էլ հետագայում՝ «կտավեղեն», սանսկրիտում՝ *lata*՝ «զգեստ, լաթ»: Զէ՞ որ հայերենի արևմտյան խոսվածքներում ևս առում են. «Լաթերս փոխեցի», «Նոր լաթեր պիտի հագնիմ», «Գարսին լաթազու նվեր բերիմ» և այլն, որոնք «շոր» նշանակությամբ են գործածվում: Մինչդեռ, ինչպես հնդարիական լեզուներում, այնպես էլ բուրբ-բաբարակներում *latta*-ն ամբողջ մասն էր, կտորը, ռուսերենը պահել է *латка*՝ «կարկատան, կտորիկ», ինչպես և հայերենի կտոր բառը, որ նախապես որևէ իրի մաս, հատված է նշանակել, հետագայում՝ ձեռք է բերել «զգեստացու, հագուստի համար գործվածք, շոր» նշանակությունները:

Հիշեցնենք, որ ռուսերենում *отрез* «զգեստացու, կտոր» բառի հիմքում նույնպես ընկած է *резать*՝ «կտրել» իմաստը, որով *отрез* նախապես նշանակում էր «կտրված», «կտրվածք, պրկված կտոր»:

Գայերենի բարբառները գիտեն նաև **ճոթեղեն**՝ «կտորեղեն» բառը, որ ծագում է **ճոթ** «ծայր, կտոր» հասկացությունից:

Թուրքական խմբի լեզուներում նույնպես **փարջա**՝ «մետաքայա կտորի մի տեսակ» բառը ծագում է *parca*՝ «կտոր, բեկոր, մաս» բառից:

Եվ այսպես՝ ամբողջի մասից ծնվում են բառեր... Զէ՞ որ շրաքցուն կտրվում էր, անջատվում էր հյուսվածքի մեծ փաթեթից՝ թուփից:

149. ՏԱՐԱԶԸ ՀԱԳՈ՞ՒՄՍ Է, ԹԵ՞ ԶԵՎ

«Նստած էին նրանք բոլորը միատեսակ զինվորական տարազներով», «Նրան միլիցիոների տարազը չէր սազում, և նա գիտեր այդ», «Սկսողի միջազգային ֆեդերացիայի կողմից պարտադիր կերպով ընդունված է **ժյուդոյի** մրցումներն անց կացնել ճապոնական տարազով»: Բերված նախադասություններում օգտագործված **տարազ** բառն ունի «համազգեստ, զգեստ» նշանակությունները: Մինչդեռ գրաբարում նախապես տարազը գործ էր անվում «ձև, կերպ, ոճ, եղանակ, սարք, հնարք, տիպար, կահավորում» և նման այլ բազմաթիվ նշանակություններով: Որպեսզի մեր ասածն օղում անհիմաստ կրակոցի չնմանվի, բերենք գրաբարյան հեղինակներից մի քանի նախադասություններ. «Ի մարտ դիմեն պեւ-պէ տարազովք» (Մարտի են դիմում զանազան ձևերով), «Թէպէտև տարազ բանիս այլապես է» (Թեպետ եղելության հանգամանքն այլ կերպ է), «Տարաքս բնութեանց ճշմարտելովք» (Բնավորությունների տեսակները ճշտելով) և այլն: **Տարազել** բայակնը գործածվում էր «ձևացնել, հորինել, ճարտարել, սարքել, հարմարել» նշանակություններով:

Եթե ծագումն ենք որոնում տարազի, ապա դիմենք հարևան լեզուներին: Այս բառը արաբերենում գտնում ենք *tiraz*՝ «կերպ, ձև, եղանակ» նշանակություններով, ինչպես և պարսկերենում:

Աստիճանաբար **տարազ** բառը միջին դարերում սկսեց ձեռք բերել նաև արդի նշանակությունը: Այսպես, հանդիպում ենք **տարազ**-ագործ բառին, որն օգտագործվում էր «ջուլիակ, կտավագործ, սարքող» նշանակություններով: Ահա և հանդիպում ենք **գործ տարազու** արտահայտությանը, որ նշանակում էր «ճարտար կերտվածք, հորինվածք, գեղեցիկ ոճով սարքված փոստայք»: Եվ աստիճանաբար տարազը ձեռք բերեց այսօրվա նշանակությունը, ինչպես հետևյալ նախադասությունն է ցույց տալիս. «Զգեցաւ աշխարհական տարազ» (Գազալ աշխարհական ոճով, կամ Գազալ աշխարհական հագուստ): Ահա ևս մի նախադասության մեջ հանդիպում ենք արևելյան **տարազիլք** (արևելյան ոճով, կերպով կամ արևելյան հագուստով) արտահայտությանը, որն ընկալվում է երկակի: Նույնպիսի ճանապարհ է անցել (իհարկե՝ իմաստային) եվրոպական լեզուներից ռուսերենին հասած **форма** բառը, որն ունի «ձև» նշանակությունը, իսկ հետո ստացավ նաև «համազգեստ», ինչպես նաև «կաղապար» նշանակությունները:



Պարզվում է, որ շատ բաներ գործածությունից խուճանում են, ինչպես երկար գործածված հազուստներ: Եթե այսօր մեկը **շուկա** գնա և սակարկելուն ասի ոչ թե **բազար** եմ անում, այլ՝ **վաճառ** եմ անում, ապա ծիծաղելի կացության մեջ կընկնի, որովհետև արդեն այդ արտահայտությունը խուճանցել է... Դայերը **վաճառ** բառը «առևտուր, ապրանք, սակարկություն, շուկա, եկամուտ, զանազան, վաճառատեղի» նշանակություններով էին օգտագործում գրաբարում, որը պահպանվեցին **vaiaġ** «շուկա» բառից եր վերցված: **Վաճառ**-ից էր կազմված **վաճառական**-ը, բառացի՝ շուկայական, այսինքն՝ առևտրական: Ուրեմն **վաճառական**-ը ոչ միայն վաճառում էր, այլև գնում: «Տեղի **վաճառի** արարին զտաճարն» (Շուկա դարձրին տաճարը), «Որդիքն Իսրայելի **վաճառականք քո**» (Իսրայելի որդիներն են քո վաճառականները), նման բազմաթիվ առիթներով գրաբարում գործածվում են **վաճառ** և **վաճառական**, **վաճառել**, **վաճառատեղի**, **մսավաճառ**, **զինվաճառ**, **հատավաճառ**, **կաղամբավաճառ**, **աղավենվաճառ**, **ծիրանվաճառ**, **ժամավաճառ**, **շահավաճառ**, **ոչխարավաճառ**, բառերը: Դայերենի բազմաթիվ բարբառներում սակայն ավելի մեծ տարածում ունի **բազար**-ը, որ մուտք է գործել նաև այսօրվա մեր խոսակցականի մեջ: **Բազար**-ը բախանցել է նաև եվրոպական բազմաթիվ լեզուներ և ռուսերեն **базар** ձևով: Դայերենի բարբառներում խոսակցական առօրյա լեզվում գործածական է **բազար անել** (ոչ թե **վաճառ** անել կամ **շուկա** անել)՝ «սակարկել», **բազար մի անի**՝ «մի սակարկիր», «մի վիճիր», **բազար սարքել**՝ «աղմկուտ, անկարգ վայրի վերածել»՝ փոխաբերական արտահայտությունները: Նույնիսկ առած կա. «Խելքը **բազարում** չես ծխում»: Քուչակն ասում է. «Երթամ **բազարկան** եղնիմ» (Գնամ վաճառական դեմնամ): Ժողովրդական հեքիաթներում հիմնական հերոսներից է **բազրկանը** կամ **բազրգանը**: «Մե հարուստ **բազրգան** է եղըմ», — սկսվում են հեքիաթները: Պիտի ասել, որ պահլավական **վաճառ**-ի հարազատ եղբայրն է **բազար**-ը (պարսկերենում այդպես էր հնչում), որը միջին պարսկերենից երկրորդ անգամ փոխ է առել հայերենը և որից էլ **բազրգան**-վաճառականը, որ կենդանի է նաև **Բեզիրկանյան** ազգանվան մեջ:

150. ՏԱԲՈՒ ԵՎ ԷՎՖԵՄԻԶՍ

Լեզվաբանության մեջ ընդունված է **տարու** կոչել որևէ առարկայի, երևույթի անունը տալու արգելքը: Լեզվաբանները նշում են, որ **տարու** բառն առաջացել է Պոլինեզիայի բնիկների լեզվից, ta՝ «մշել, առանձնացնել» և bu «ամբողջ» բառերից. այսինքն tabu «հատուկ նշված, ամբողջից առանձնացված, արգելված, սուրբ»:

Ինչպես արդեն նշել ենք, հնում սնտոհապաշտության պայմաններում, մոգական մեծ ուժ էր վերագրվում խոսքին, բառերին: Ուստի և մարդուն թվում էր, թե վրանգի կարող է ենթարկել իր անձը և կամ իր գործը, եթե տա որոշ վտանգավոր կենդանիների իսկական անունները, ինչպես օձի, արջի, վագրի, գայլի և այլն: Ուստի խուսափելով նրանց իրական անուններից՝ ստեղծում էին այլաբանական անուններ: Օրինակ ռուսները արջին անվանում են **медведь** (**мед**—**ед**՝ «մեղրակեր»), սակայն դա նույնպես նրան տրված բազմաթիվ այլաբանական անուններից մեկն է, որպիսիք են եղել **хозяин** «տեր», **мохнач** «բրդուտ, փրչոտ», **лесник** «անտառապան», **косолапый** «ծուռթաթ», **топтыгин** «բիբիացնող» և «փնթփնթան», **хозяин** «տեր, տիրակալ» և այլն:

Օձին նույնպես խուսափել են **уж** կոչելուց, և ռուսները նրան անվանել են **змея**, ինչը **земля** «հող» բառից է ծագում: Լատիներենում նույնպես anguis-ի կողքին առաջացավ **serpens**-ը՝ «սողուն», որը նման է գերմանական Slango (նորվո՝ Schläng) «սողացող» և հայերենի սողուն ընդհանուր սողացողներին տրվող անվանման հետ:

151. ԱՅՆՏԵՂ, ՈՒՐ ՈՏՔՈՎ ԵՆ ԳՆՈՒՄ ԹԱԳԱՎՈՐՆԵՐՆ
ԱՆԳԱՍ ԵՎ ԱՅՐ ՊԱՏՃԱՌՈՎ ԷԼ՝ ՈՏԱՅ
ՃԱՆԱՊԱՐՀ...

Աշխարհի բոլոր լեզուներում էլ անհրաժեշտություն է դարձել որոշ անպատշաճ և զեռնիկ, մերկապարանոց արտահայտությունները բարեկիրթ, նուրբ և զեղեցիկ կամ այլաբանական բառերով փոխարինելը: Այս երևույթը անվանվում է **էվֆեմիզմ** (իունարեն euphemeo՝ «խոսում եմ բարեկիրթ»):

Բժշկության մեջ մեծ տարածում ունի **գործողություն** կատարել արտահայտությունը **վիրահատել**-ի փոխարեն: Ավելի հաճախ է գործածվում **հեռացնել** արտահայտությունը **վիրահատելի** փոխարեն, օրինակ **կույր աղին հեռացնել**, **աչքը հեռացնել**—**հանել**-ի փոխարեն և այլն:

Ժողովրդի մոտ լայն տարածում ունի նաև **սիրտը ետ տալ**, **սիրտը վեր բերել** արտահայտությունները **փսխել**-ի փոխարեն, **մտքափոխ**, **պատճառավոր**, **երկուհոգիս**, **փեշը կարճացած** արտահայտությունները՝ **հոյի** բառի փոխարեն և այլն:

Անպատշաճ արտահայտությունները բարեկիրթներով փոխարինելու դաստիարակությունը տարվում է մանկական հասակից: Դրա ապացույցն են սեռական օրգանների (գործարանների) մանկական բառակերտումները, որոնք լայնորեն գործածվում են նաև մեծերի կողմից, այսպես անպատշաճ ու—ին փոխարինելու են գալիս **տուտուկ**, **հետույք**, **նստուկ**, **ոմակ**, **հետև**, ինչպես և կ—ին **պուպուկ**, **բամ** և այլն:

Բոլոր ժողովուրդներն էլ ունեն բնական կարիքները հոգալու տեղի համար այլաբանական անվանումներ: Դայերեն ասում են՝ **ոտաց ճանապարհ**, **արտաքնոց**, **պետքարան (գործարան)**, իսկ ավելի մեծ տարածում է ստացել **ֆրանսերենի toilette** (toille) բառի պատճենունը՝ **զուգարան**-ը ք—ի փոխարեն: Եվուպական լեզուներում տարածված արտահայտություն էլ **այն տեղը, ուր ոտքով է գնում թագավորն անգամ**, որի ավելի լակոնիկ ձևն է հայերեն **ոտաց ճանապարհ**-ը:

Մեծ տարածում ունեն նաև ներքմաշորերի այլաբանական անվանումները **ոտաշոր**, **փոխան**, **սպիտակեղեն** և այլն:

Նման բարեկիրթ արտահայտությունները խոր չեն եղել նաև Դին Արևելքի ժողովուրդների բառապաշարին: Խեթական սեպագիր արձանագրություններում բազավորների մահվան մասին գործ էր անվում **աստված դարձավ**՝ dingirlišmšch kišat արտահայտությունը, իսկ մահվան սգո արարողությունը այլաբանորեն անվանում էին **մեծ վիշտ** (šalliš waštaš): Դայոց մոտ գրաբարում տարածված էր **փոխեցավ առ ստեղծած**, **հանգեալ ի տեր**, **զհոգին ավանդաբար**, ոչ ևս է **մեռավ** բառի փոխարեն:

152. ՎՐԻՊԱԿՆԵՐԻՑ ԾՆՎՈՒՄ ԵՆ ԲԱՌԵՐ

Վեներտիկի Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Աբբան ոչ միայն շատ արժեքավոր ուսումնասիրությունների հեղինակ է, այլև հայերեն առաջին մեծ բառարանի ստեղծողը: Այդ «Հին հայկազյան բառազրթի» առաջին հատորը լույս ընծայվեց նրա մահվան օրերին, իսկ երկրորդ հատորը՝ մահվանից հետո երայտապարտ աշակերտների և գրչակիցների ջանքերով: Պետք է խոստովանել, որ հեշտ չէր նման մեծ բառարանի կազմմանը ձեռնամուխ լինելը, քանի որ գործ ուներ նա հիմնականում դեռևս մեծ մասամբ չիրատարակված ձեռագիր մատյանների հետ: Իսկ ձեռագիր մատյանները մեզ էին հասել դարերի արհավիրքների միջով՝ վնասված, լի թերություններով տեսնելով արյուն ու մահ, տարերային աղետներ, աքսոր-գերություն, խոնավ նկուղներ ու քաքսուղներ, քրիեղեղ ու կիզիչ արեգակ, որի պատճառով շատ էջեր կամ տողեր դարձել էին անընթեռնելի կամ խուճապուծից հագիվ ընթերցվող: Սրանց պիտի ավելացնել նաև գրիչ-արտագրողների երբեմն ոչ գրագետ լինելու հանգամանքը և ուղղագրական կանոններն անտեսելու, իրենց բարբարային արտասանությանը բառը տառադարձելու հանգամանքները և: Միս քե ինչու շատ բառեր մեզ են հասել անկասկած գրությանը, և դուրս մղելով ճիշտ ուղղագրության ձևերը, բաղաբացիության իրավունք են ձեռք բերել: Սակայն այստեղ խոսքը վրիպակներից առաջացած բառերի մասին է, ուստի հիշատակենք դրանցից մի քանիսը:

153. ԾԱԳԱՆԱԿ

Մխիթար Աբբան ձեռագիր բառարաններում, բժշկարաններում հանդիպեց միևնույն բառի տասնյակից ավել տառադարձումների և աշխատեց դրանցից կռահել ուղիղ ձևը, որը պիտի մտցներ բառարանի մեջ: Միս այդ ձևերը՝ **շահնդակ**, **շահտանան**, **շահնդանի**, **շատանայ**, **աստանե**, **աշադանակ**, **շաղդանակ**, **շարգանակ** և **շագանակ**: Երան թվաք, թե այս բոլոր բառերն էլ նույն կաստան, կաշտան նշանակությանը են օգտագործված և, ամենաբարեհուսելը նրանց մեջ համարելով **շագանակ**-ը, մուծեց իր բառարանի մեջ: Հետագայում պարզվեց, որ **շագանակ**-ը նույնպես սխալ ձևերից մեկն էր, և ուղիղը պիտի լիներ **շահդանակ**-ը, այսինքն՝ «շահի սերմ», արքայական հատիկ, մեծ սերմ» նշանակությանը, սակայն կանեփի սերմի, կանեփի հունդի իմաստով: Եվ այսպես բառարանների մեջ մտավ մի վրիպակ անգո բառ՝ **շագանակ** ձևով, որը սակայն չուներ այդ իմաստը, այլ միայն «կանեփահատ, կանեփի սերմ» նշանակությունները:



Արդի հայերենի բառարանները տալիս են **շերամ** բառի հետևյալ բացատրությունը՝ «մետաքսի որդ», սակայն, թերթելով մինչև 18-րդ դարը տպագրված բառարանները կամ մատյանները, դուք չեք կարող գտնել այդպիսի բառ, այլ միայն **շերաս** կամ **շերաս**: Այսպես, օրինակ դասական գրաբարի «Վեցօրեայք» (Բարսեղ Կեսարացու) դավանաբանական ուսումնասիրության մեջ կարդում ենք. «Յայնմ գեռոյ, որ կոչի շերաս, այսինքն կերպասաբեր»: Այսպես են գրված և այլ երկերում, որոնք ունեն միայն **շերաս** կամ **շերաս** գրությունները (բառապատկեր): Իսկ որտեղի՞ց հայտնվեց **շերամ**-ը: Չէ՞ որ **շերամ**-ը հեռավոր Զինաստանից կամ ավելի հեռու մի երկրից է ներմուծվել Գայաստան, ուրեմն, նրա անվանումն էլ պիտի որոնել այն հին լեզուներում, որոնցից տարածվել են մետաքսարդոն ու նրա անունը: Գիտնականները գտնում են, որ **շերաս**-ը գտնվում է հունարենում և սերոս՝ «շերամ մետաքսե թել, հյուսված կտոր» բառի հետ նույնն է, որը սեր ազգի անվան սեռական հոլովի ձևով է, լատիներենում սերոս՝ «շերամ» ձևով, որոնք անկասկած կապ ունեն կորեական սիր՝ «մետաքս» բառի հետ. կա և **սերիկուս**՝ «շինական ապրանք» բառը: Այս բառն էլ թերևս մի անհետացած ժողովրդի լեզվից է տարածվել (օրինակ՝ մանչու ժողովրդի սիրոգե բառից), սակայն հայերենին փոխանցող օղակը, հավանաբար, հունարենը չէր կարող լինել: Այսպես հունարենից պիտի ունենայինք սերոս և ոչ **շերաս**, հունարենում չ հնչյունի բացակայության պատճառով: Ավելի հավանական է նրա փոխառությունը ասորերենի **շերայա**՝ «մետաքսեղեն» բառից, ուր -այա-ն անանգ է, **շեր**-ը՝ արմատ, որը նույնպես լինի չի ծածկում հայերեն ձևը: Բայց մենք շեղվում ենք մեր նյութից: Ինչպե՞ս **շերաս**-ը դարձավ **շերամ**, չէ՞ որ նույնիսկ ժողովրդական խաղիկներում այն դեռևս **շերաս** ձևով գոյություն ունի (20-րդ դար), սիսա Ակնի հարս տանելու խաղիկներում գտնում ենք. «Առավոտուն կելիս, գրկածող մանչ է, հագածող **շերաս**, վերան կանաչ է»: Չէ՞ որ հայերենի մի շարք մարբառներում նույնպես պահպանվել է **շերաս** ձևը, ինչպես Ակնում, Խարբերդում: Եվ ահա արևմտահայ բանաստեղծ Մ.Մեծարենցը, որ Բինկյան գյուղից է, փորձում է «հաշտեցնել» երկու ձևերը միմյանց հետ. առաջինը **շերաս**-ը, իր մանկության օրերից հարազատ դարձած արտասանությունն էր, որ հակասում էր դպրոցում և բառարաններում տեղ գտած **շերամ**-ին: Իսկ ինչպե՞ս էր բառարաններ մուտք գործել սխալ **շերամ**-ը:



Մխիթար Աբբան, ձեռագրերից երբ դուրս էր գրում բառեր, գտավ այս բառը մի այնպիսի նախադասության մեջ, որի վրա քուք էր դրված **շերաս**, այս պատճառով էլ նա **շերաս**-ը սխալ ընթերցեց՝ **շերամ**: Այսպես էլ մուծելով իր բառարանի մեջ՝ այն անմազարի տվեց այդ սխալ ձևին: Նրա բառարանից **շերամ**-ը անցավ մի բառարանների և դասագրքերի մեջ. ուսումնականները երկու և կես դար է արդեն այս սխալն են ստիպում սովորել դպրոցներում:

Ո՛վ կարող է այսօր ստիպել որևէ մեկին արտասանել **շերաս՝** շերամ–ի փոխարեն, երբ ամենուրեք **շերամ** ձևով գիտեն **հոնդիկ որդի՛ն՝ մետաքսի որդին**:

Ահա այս հակասությունն էր փորձում լուծել Մ. Մեծարենցը իր «Շերամին Ենթը» բանաստեղծության մեջ. ուր հավասարապես օգտագործում է իրեն հարազատ **շերաս–ը** դպրոցական դասագրքերից և բառարաններից սերտած **շերամ–ի** հետ.

Ըսթափանքի ժամն է պշրոտ, փափկամարմին **շերաս–ին**...

Սեկ փաղփի մեջ կը նույնանան **շերամ**, տերև ու լուսին:

Ոչ, չենք կարող վերադառնալ **շերաս** ձևին, **շերամ–ը** այնպես է մուտք գործել մեր լեզվի մեջ, որ նույնիսկ դարձել է հատուկ անուն: Նշանավոր հայ գուսաններից մեկն իրեն անվանում էր **աշուղ Շերամ՝** ի պատիվ իրաջագործ, ամենամուրթ հյուսվածքներ արարող **շերամի**:

155. ԳՉԻ՞Ր, ԹԵ՞ ԳՐԻՉ

Միջնադարյան հայ գրիչներից շատերը ձեռագրերն արտագրելիս երբեմն հանդիպում էին բառերի, որոնց ծանոթ չէին կամ պարզապես չէին հասկանում դրանց իմաստը: Նման անծանոթ բառերը համարելով վրիպակներ՝ նրանք կամ կատարում էին «շտկումներ», կամ էլ արտագրում էին ենթադրաբար՝ չհասկանալով, որ աղավաղում են իրենց անծանոթ, սակայն միշտ բառը: Ահա Լեւոնյանը պատմում է, թե ինչպես Մխիթար Աբբայի կողմից անմեագիր է տրվել և մի վրիպակ–բառի, որն է **գջիր–ը** «շաղափ, ծակիչ» նշանակությամբ: Այս վրիպակը հանդիպում է «Հայսմավուրքում»՝ հետևյալ նախադասության մեջ, ուր տրված է բառը գործիական հոլովով. «Արևին գտուր Արքիպաս ի գուբն մինչև ցգօտին. և տարան մանկունս ի դպրոցաց, որ երկաթի **գջօք** ծակոտեցին զգագաթս և ապա քարկոծեցին» (Սուրբ Արքիպասին զգեցին մինչև գտուր գուբի մեջ և դպրոցից մանուկներին տարան, որոնք երկաթե **գջիրներով** ծակոտեցին զլուխը և ապա քարկոծեցին): Մխիթար Աբբան ուղիղ ձևը բառիս համարեց **գջիր–ը** և մուծեց իր բառարանի մեջ, մինչդեռ սա մի անգո բառ էր և պիտի լիներ ոչ թե **գջիր**, այլ **գրիչ** (գործիականը՝ **գրչօք**), ինչ չկուսեց նա: Եվ այսպես, նա թաղաքացիական իրավունք տվեց **գջիր** բառին, որը, բնականաբար, լինելով արհեստական մի ձև, բարեբախտաբար մեծ տարածում չգտավ գրականության մեջ:

156. ԹՅՈՒՐԻՒՍԱՅՈՒՐԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ԲԱՌԵՐ

Թյուրիմացություններից ոչ միայն անխտրժ պատմություններ են ծնվում, այլև բառեր: Այս հարցում համոզվելու համար դիմենք պատմությանը: Պատմությունն ասում է, որ թյուրիմացաբար ծնված բառերը կարող են լինել թաղաքների, բնակավայրերի, առարկաների, կենդանիների ու բույսերի անուններ: Ահա դրանցից մի քանիսի մասին:

157. ԹՅՈՒՐԻՒՍԱՅՈՒՐԹՅՈՒՆԸ՝ ԲԱՂԱԹԻ ԱՆՈՒՍ

1453 թվականին սուլթան Ֆաթիի Մսհունդի զորքերը մտնեցին էյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսին, որին ժողովուրդը պարզապես Պոլիս «քաղաք» էր կոչում: Շրջակա բնակավայրերի ժողովուրդը մայրաքաղաքի պարիսպներից ներս պատսպարվելու հույսով թողնում էր տուն ու կայք և փախչում

քաղաք: Նման դեպի քաղաք փախչող հույներին, երբ թուրքերը հարցնում էին, թե ուր են գնում, պատասխանը լինում էր **իս տին պոլիս՝** «դեպի քաղաք»: Բնականաբար, հույները թուրքերեն չգիտեին և ենթադրեցին, թե հարցնում են. «Ո՛ւր եք գնում»: Հույները պատասխանեցին **ստին պոլի՝** «քաղաքի մեջ»: Թուրքերը, ստանալով պատասխանը, ենթադրեցին, որ դա երևացող քաղաքի անունն է և մի քիչ աղավաղելով այն՝ **Ստինպոլին**, դարձրին **Իսթանբուլ**, **Իսթամբուլ**: Եվ այսպես, աշխարհի քարտեզների վրա Կոստանդնուպոլիս անվումից հետո փոխարենը հայտնվեց **Իսթանբուլ** անգո անունը:

158. ՆՈՐ ԲԱ՛Ր ԵՔ ՌԷԶՈՒՄ ՍՏԵՂԵԼ, ԱՂԱՎԱԴՆԵՅԵՐ ՆՇԱՆԱՎՈՐ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Այսօրվա կիրենտետիկայի և մաթեմատիկայի մասնագետներին շատ ծանոթ տերմին է **ալգորիթմ–ը**, որը հատկապես մեծ կիրառություն է ստանում հաշվողական տեխնիկայի ասպարեզում: **Ալգորիթմները** մաթեմատիկական այն բառը հասկացություններն են, որոնք չեն սահմանվում պարզ հասկացությունների միջոցով, այլ վերաբարկվում են փորձից: Այս տերմինի առաջացումը նույնպես կապված է թյուրիմացության հետ և գալիս է 9–րդ դարի նշանավոր արաբ պոետ, գիտնական **Ա–խորեզմի** անվան աղավաղումից: **Ալխորեզմի** նշանակում է «խորեզմից»: Աստիճեղեն լեզվով գրված միջնադարյան մի տրակտատում նրա անունը Ալ–խորեզմի գրելու փոխարեն դարձրել են աղավաղված Algorithmi **Ալգորիթմի**, որից էլ ներկայումս գործածվող **ալգորիթմ** տերմինը:

159. ԱՅՆ ՍԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԲԱՅԹԱՐ–Ը ԴԱՐՉԱԿ ՊԱՅՏԱՐ, ԻԱԿ ԶՈՆՆԵՂԵԿ–Ը՝ ԶՈՆՏ

Հայաստանի ծիարությունյան բարձր մակարդակի և հայկական ծիերի Հին Արևելքում ունեցած համրակ մասին գրել են շատերը: Բավական է հիշեցնել, որ դրամական հարկերի հետ մեկտեղ Հայաստանը (Ստրաբոնի վկայությամբ) տարեկան 20000 քուռակ էր ուղարկում պարսից թագավորին՝ Միհր աստծո տոների գոհաբերության համար: Նշանավոր էր նաև հայոց այրուծին՝ հեծելազորը, որը մասնակցում էր պարսիկների կողմում բշմամիների դեմ նրանց մղած կռիվներին: Այս բոլորը հիմք է տալիս ենթադրելու, որ հայերը ծիեր խնամելու, բուծելու և բժշկելու մեծ փորձ ունեին: Նրանց վարդուց հայտնի էր նաև ծի պայտելու արհեստը: «Պայտ» հասկացողության համար հայերենում օգտագործվել են լուսին, իսկ «պայտել» իմաստով լուսնել բառը, որոնք վկայված են Լաստիվերցու մոտ և «Բժշկարան ծիոյ» միջնադարյան ձեռնարկում: Օրինակ. «Կան ոմանք մի, որ գրաստն լուսնել տան, երբ առավոտյան» (Բժշկարան ծիոյ, 38,85): Իհարկե, **լուսին** բառի «պայտ» իմաստն առաջացավ պայտի լուսանմուտքյան պատճառով: Իսկ ինչպե՛ս ծնվեց **պայտ–ը**: Այն հայերենում գոյություն չի ունեցել մինչև արաբական արշավանքները Հայաստան: Ուրեմն, ենթադրվում է, որ հայերենը, արաբերենից վերցնելով քայթար՝ «ծիու թժիշկ և պայտող» բառը, նախ միջին հայերենի կանոններով սկսել է արտասանել **պայտար**՝ խլացնելով ձայնեթ բ–ն, ինչպես նաև կատարել է եվրոպական բարոն–ը պարոն դարձնելու: Ապա մի քանի սերունդ անց ժողովուրդը մտածել է, որ **պայտար–ը** հավանաբար կազմված է **պայտ** և **արող** (անող) եզրերից (ինչպես, ասենք՝ տնարար, խոհարար և այլն), և դեռ նետելով

ար-ը ստեղծել է անգո պայտ-ը: Մինչդեռ արաբերենում բայթար նշանակում էր «պատռել, ճեղքել» նկատի ունենալով բժշկի վիրահատելու ունակությունները:

Եույն այս ձևով էլ ռուսերենին է փոխանցվել հոլանդերենից աղավաղված **зонт**-ը կամ **зонт**-իկը: Գոլանդերենում, երբ հնարվեց անձրևանոց-ը կամ արևակալ-ը, կոչեցին այն zonnedecke՝ «արևը ծածկող»: Այն ռուսերենում սկսեցին հնչել **зонтик**՝ մտածելով, թե վերջին **-իկ**-ը անվանակերտ կամ փոքրացուցիչ մասնիկ է, ինչպես դա ունի ռուսերենը **ротик, шарик** և այլ բազմաթիվ բառերում, ուստի և զոնտը անջատվեց որպես արմատական բառ՝ ստանալով անկախ բառի իրավունքը (համեմատիր գերմ. Teller – ռուսերեն тарелки):

160. «ՇՐՏՎԱԾ» ԲԱՌԵՐ ԿԱՍ ԻՆՉՊԵՍ ԶԵԿ-Ը ՄԱՍ ԶԵԿ (Այս մասին տե՛ս նաև սագո՞ղագ (Ֆ79) բառի տակ)

Պարզվում է, որ բառերը կարող են ապրել նաև «չրջված»:

Աշխարհի տարբեր լեզուներում հանդիպում ենք այդպիսի շրջված բառերի: Գրանցից մեկը գտնում ենք լատիներենում, որը, հուևարենից վերցնելով morfe «ձև» բառը, այն «շրջել» է և դարձրել forma: Լատիներենից էլ այս forma–ն անցավ զանազան այլ լեզուների և ռուսերենին, ուր 1. **форма** նշանակում էր 1. «ձև», 2. «համազգեստ», 3. «կաղապար»: Նշարտության դեմ չմեղադրելու համար ասենք, որ հուևարենի morfe–ն չմոռացվեց, և այն էլ իրեն հերթին անցավ շատ լեզուների, այդ թվում նաև ռուսերենին, որպես քերականական տերմին: Morfe–ից ունենք morfologia – **морфология** «ձևաբանություն» տերմինը և ոչ **формология**, բայց և չմոռացվեց այդ **форма**–ն՝ «ձև, կերպ, կաղապար, տեսք, համազգեստ», և նրանից էլ **формализм, формула, формалист, формирование** բառերը:

161. ՈՒՆԿԻ-ՆՈՒԿԻ

Որպես չափի միավոր Գին աշխարհում տարածում գտավ լատիներենի uncia–ն, որ լիտրի տասներկուերորդ մասն էր: Իտալներենում oncia: Գայերենը ընդունեց այդ բառը երեք տարբեր հնչապատկերներով: Օրինակ՝ «Երկու ունկի հաց, որ է երկու ունձայ», «Չուճիմ մի կշիռ ունկի» և այլն: Քանի որ այս բառը անցել էր նաև Գայաստանին հարևան մյուս լեզուներին, ինչպես, օրինակ՝ ասորերենին **nugia** ձևով, այստեղից երկրորդ անգամ (թերև նորրորդ անգամ, քանի որ **ունկի**–ից բացի ունենք նաև **ունձայ** ձևը լատիներենից) հայերենը վերցրել է այն **ունկի, նուկ, նուկի** «շրջված» ձևով:

Կարելի է ասել, որ հենց այս «զլիվկայր» ձևն էլ ամենամեծ տարածումն է գտել զանազան բարբառներում, ինչպես այդ վկայում են բազմաթիվ առածներն ու ժողովրդական խաղիկները. «Կճուճիս մեջ **ունկի** մի եղ» կամ «**Նուկի**–ն պակաս է», «Ես ավուր ամոթ **ունկի** մի, վաղվան դիտր մի»: Կամ

Երբանք Պղտտի գեղ,
Առենք **ունկի** մեղ...

Ազգակից և արյունակից բառեր

162. «ԱՐԴ» ԲԱՌԻ 100 ԱԶԳԱԿԱՆՆԵՐԸ

Շատ անգամ մեծ գերդաստանների շառավիղները միմյանց այնքան դժվար են ճանաչում, որ հարկ է լինում իին սերնդի մարդկացից վկաներ բերել: Թեև որոշ չափով նույնը կարող ենք ասել նաև բառերի ազգակցության մասին, սակայն այստեղ արդեն վկաներ անհրաժեշտ չեն, քանի որ ազգակից բառերը միմյանց շատ հեշտությամբ են ճանաչում: Միայն թե նրանց ազգակցական կապի մասին պետք է «հիշեցնել»: Այսպես, օրինակ, եթե մենք ասենք, որ **արդարություն** և **արդուկ** բառերը միմյանց ազգական են, զավեշտ կքվա: Սակայն ես կարող եմ նրանց ազգակից դարձյալ մի քանի բառեր բերել, որոնք որոշ տարազներով «քողարկված» են առայժմ, ահա դրանցից մի քանիսը՝ **մակարդակ, խորհանարդ, զարդարանք, արդուկ, հարդարել, արդյոք** և այլն, սակայն, դեմ նետելով նրանց «հավելագարդեղ», կտեսնենք, որ այս բոլորն էլ ծագում են նույն արդ՝ «ձև, կարգ, կարգավոր, շնորհ, զարդ, շիտակ, շիտակություն» արմատից: Այսպես **արդարություն, արդարանակ, արդարաբան, արդարաբաշխ, արդարագործ, արդարադատություն, արդարալույս, արդարաքնին, արդարացուցիչ, արդարև** և նման բազմաթիվ բառերի մեջ «շիտակություն, կարգ» իմաստն է ընկած: Իսկ կա՞լք **արդուկ**–ի հետ: Խնդրեմ: **Արդուկ** նշանակում է «շիտակացմող, շտկող ձևի բերող, կոկող, ձև տվող»: Նրան մոտ են նաև **արդուկել, կամ արդել**՝ «շտկել, ձևի բերել, կոկել», որից **արդիւնք**՝ «վերջնական ձև», «վերջնական տեսք, ավարտված գործ», այստեղից էլ **հարդարանք**, որ հիմուն գրվում էր **յարդարանք** ձևով, որ «կարգավորում, զգեստավորում, սարքավորում, վերջնական ձև, տեսք» և **զ** նախդիրով՝ **զարդ, զարդարանք, զարդարել** և այլն, իրենց հիմքում ունեն «ձև հորինվածք, շքեղ տեսք, գեղեցիկ դասավորվածություն» և այլն: Այսպես, **արդ**–ի արյունակից ազգականների թիվն անցնում է 100–ից, որոնցից մենք հազիվ կեսը հիշատակեցինք:

Օրինական հարց կարող է բարձրանալ. «Իսկ ինչո՞ւ ենք և **հարթուկ** գրում: Նա ազգակա՞ն է **արդ** արմատին և հետևաբար՝ **արդուկին**: Ոչ: **Հարթուկ**–ի արմատն է **հարթ**–ը իր «հարթել, ողորկել կոկել» նշանակություններով: Ուստի, **հարթուկ** գրելը նույնպես ճիշտ է, քանի որ այս դեպքում նկատի է առնվել նրա **հարթող**, ինչպես արդուկի դեպքում **ձև տալու** գործողությունը:

163. ՄԻ ԲԱՌ, ՈՐ ԿԱՐՈՂ Է ԶՈՒ ԱԾԵԼ, ԵՎԱԳԵԼ, ՍԱՓՐԵԼ ԵՎ ԵԱԵԿ... ՀԱԾԱՆԱԿ ՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԴԱՌԱԼ

Խոսքը հայերենի **ած** բազմիմաստ արմատի մասին է, որը «Նոր հայկազյան բառարանի» մեջ ունի 15–ից ավելի նշանակություն:

Ինչպես, օրինակ՝ «հանել, ելնել, շարժել, վարել, ասել, հարվածել, լցնել» և այլն: Իհարկե, հիշյալ նշանակությունների մեծ մասը նա ստանում է, երբ կողքից «օգնում» է նաև մեկ ուրիշ բառ, օրինակ՝ **ածել**՝ «հանել, ծու ածել, նվազել, լցնել» (հրամայականը՝ **ածա, ածիր**). պարզ ձևերը գործածվում են հետազայում **ջուր ածել, ծու ածել, ծայն ածել** նման հարադրություններով: Միա այստեղ ակամատես ենք

լինում **ճոր** բառերի առաջացման «ամենարմական ընթացքին», թե ինչպես են առաջանում բարդ բառերը կամ ածանցավորները: Փաստորեն միմյանց հաջորդող բառերի միացումից ծնվում են ճոր բառեր: Այսպես՝ ածել զմտավ կամ մտավ ածել-ը դարձավ **մտածել**, խորհուրդ ածել-ը՝ **խորհրդածել**, ներս ածել-ը՝ **ներածել**, արտաքս ածել-ը՝ **արտածել**, վեր ածել-ը՝ **վերածել**, գործ ածել-ը՝ **գործածել**, հարու ածել-ը՝ **հարվածել**, ի ածել-ը՝ **յածել** (հածել) և այլն:

Վերոհիշյալ բարդությունների մեծ մասը գործածվում է նաև **-ություն** գոյականակերտ ածանցի հավելմամբ, ինչպես **ներածություն**, **հոգածություն**, **գործածություն**, **մտածություն**, **արտածություն**, **ակնածություն** և այլն: Ու ածանցի «օգնությամբ» կազմվել են **ածու**՝ «մարդ», **նուազածու**՝ «նվազող, երաժիշտ», **կատարածու**՝ «դասական որդուաններն ի կատար ածող», **ծաղրածու**՝ «խեղկատակ», **հոգածու**՝ «խնամակալ», **ծեռնածու**՝ «աճապարար», **թեկնածու** և այլն: Վերջինիս մասին առանձին գրույց է տրվում:

Ածել բառից է կազմված նաև **ածելի**՝ «սպիրվելու գործիք» բառը:

Ածան՝ «շատ ածող հավ», **ածիկ**՝ «նիշատա, մատ», **ածեր**՝ «նորատունկ այգի» և վերջապես, եթե կուզեք, նաև այսօրվա ռազմական **հածանավ**-ը նույնպես **ած** բառի հարազատ ժառանգն է: 2՛ է՛ որ գրաբարում շատ գործածական ոճերից էր **յածել-ը** (ի ածել-ից)՝ «շրջել, տարուբերվել, մտն գալ, դեզերել», օրինակ՝ **յածունմ, յածող, յածաչու, յածողական, յածուն, յածանք** և այլն: Եվ ահա այս **յած** ձևից էլ ծնվեց **յածանավ**-ը, որը այժմ գրվում է **հածանավ**՝ «ռազմական նավ, որ արագընթաց է, զինված թեղանործներով և պահակություն է առնում ջրերում»: Ահա թե ինչպես են «արյունակիցներ» դառնում **ածող հավն** ու **հածանավը**:

164. ԲՈՒՈՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՆ ԵՆ ԹԻԿՈՒՆԹԻՑ ՄՈՏԵՆՈՒՄ...

Այսօր հազարավոր, տասնյակ հազարավոր **թեկնածու**-ներ կան՝ զանազան զիտությունների, դեպուտատության, դափնեկրության, շախմատի թագի և այլն, և այլն: Ուստի, շատ սովորական խոսակցություն է. «Ե՛րբ ես պաշտպանելու **թեկնածուականը** կամ «Գիտությունների **թեկնածու**՞ն ես, թե՛՞ դոկտոր» և կամ «Մինչև **թեկնածուականը** հաշված օրեր են մնում» և այլն: Այս դեռ ոչինչ, իսկ որ ասում են. «2Ե՛ս ամուսնանում, ի՞նչ է, հարձար **թեկնածու** չկա՞» կամ «Նրա **թեկնածուն** շատ հարմար է և՛ տարիքով, և՛ բնավորությամբ» և այլն, և այլն: Թվում է, թե այստեղ արտառոց ոչինչ չկա, **թեկնածուն** **թեկնածու** է, էլի, բայց... Այո: Դուք, որքան հասկացա, արդեն սկսում եք մտածել. «Թեկնածուն **թեկնածու** է, սակայն ի՞նչ գործ ունի այստեղ **թիկունք**»: 2՛ է՛ որ այն կազմված է **թեկն**՝ «թիկունք» և **ած**-ու եզրերից: Մենք արդեն **ած**-ի մասին խոսել ենք, թե ինչպես այդ բազմիմաստ բառը իրենից առաջ և հետո եղող հարևաններին իրեն միացնելու սովորություն ունի: Այսպես զավթելով հարևաններին հարյուր բառ է ստեղծել: Օրինակ՝ **ակն ածել**՝ «պատկառել, հարգել, զգուշանալ», որից էլ **ակնածություն**՝ «պատկառանք, հարգանք», **ծեռն ածել**՝ «ծեռնով շարժումներ անել», դարձել է **ծեռնածու**՝ «աճապարար», «հմայող, դյուք» և այլն: Նույնպիսի վիճակում է եղել (այսինքն **ած**-ի հարևանության մեջ) նաև **թեկն** (գրվում էր նաև **թեկն**)՝ «թիկունք, կոնակ, բեկերն ուտելով հանդերձ» բառը: Այսպես, եթե գրաբարում ասում էին. «2Ի՞շխանի **թեկն ածել**» (ի՞շխան դառնալու և ձգտում, բառացի թիկունք, քնն է մեկնում), «2Զաւագութեան **թեկն ածել**», «2վարդապետի **թեկն ածել**», «2զափի **թեկն ածել**» ոճերը նշանակում էին՝ «ավազության, վարդապետության, զա-

լի հավակնորդ է, ձգտող է, հետաձուլ է, նկրտող է, ցանկացող է»: Եվ այսպես՝ **թեկն** և **ածել** բառերի միացումից **-ու** ածանցի օգնությամբ ծնվեց արդի **թեկնածու**-ն, որն ընկալվում է «մի բանի հավակնություն ունեցող, հետաձուլ եղող և անգամ **ընտր-ված կարծակալոր, արժանացած, երբ ասում ենք. «Ո՛վ է քո **թեկնածուն**»** (սիրածը, սիրուն արժանացածը, ընտրյալը): Բայց չմոռանանք, որ գրաբարում **թեկն ածել**-ը նաև «պաշտպանել, հոգալ, օգնել» նշանակություններն էլ ուներ. ուստի, ոչ թե «թիկունքից եկող», այլ «թիկունքը մեկնող, պարող, սատարողն» է **թեկնածուն**:

Թեկնածու նշանակությամբ եվրոպական լեզուներն և ռուսերենը գործածում են (լատիներենի candidatus «ճերմակավոր, սպիտակազգեստ» բառը: Մերեսս պատմիչը գործածում է այդ բառը որպես հունական պալատական մի պաշտոնի անուն. «Մտախոս սպաթար ի մեջ ամենայն սպաթարաց և **կանխտառն**»: Գտնում ընդունված էր սպիտակ տոգա հագնել ի նշան **թեկնածուի** անկեղծ, մաքուր լինելու (togā candidi), որտեղից էլ **կանդիդատ**՝ «ճերմակավոր» տերմինը, այսինքն՝ փիկունքին սպիտակ տոգա գցած, ճերմակավոր:

165. ԱՍԱ՛Ր ՈՎ Է ԸՆԿԵՐԴ, ԱՍԵՄ՛ ՈՎ ԵՍ ԴՈՒ...՝

Աշխարհի տարբեր ժողովուրդների մոտ կան բազմաթիվ բառեր, որոնք կերտված են միևնույն լեզվամտածողությամբ: Սակայն կան նաև միևնույն լեզվաբնութագրի պատկանող լեզուներ, որոնք նույն առարկային տրվող անունները լեզվամտածողության բոլորովին այլ տեսանկյուն են ներկայացնում: Այս առիթով քննենք ինչպես հայերենի, այնպես էլ մի շարք այլ լեզուների մեջ ամենագործածական ընկեր հասկացության ծագումը: Նախ հայերենի **ընկեր**-ի մասին:

Բազմաթիվ լեզվաբանական ուսումնասիրություններում, քերականության դասագրքերում ստուգաբանվում է հայերենի **ընկեր**-ը՝ որպես **ընդ**՝ «միասին» և **կեր**՝ «ուտել», «ուտող» եզրերից գոյացած բարդություն: Իհարև, պատճառաբանված է **ընդ**-ի վերածվելը **ըն**-ի, չէ՛ որ **դ**-ն, հանդիպելով պայթական **կ**-ին (**կեր**-ի), չի հնչում, «մարում է» (քանի որ երկու պայթական հնչյուններ ղժվարությամբ են միմյանց մոտ հնչում): Ի՞նչ խոսք, նման բացատրությունը զուտ լեզվաբանական է կամ լեզվաբանական տրամաբանությամբ է ներկայացված, մինչդեռ իմաստային կողմը անտեսված է: Այսինքն այստեղ չկա սովորական տրամաբանությունը: Ինչո՞ւ **ընկերը**՝ «միասին ուտողն է»: Տարբեր ընտանիքներից ելած մտրոկի մտերմանալով ինչու պիտի անպայման միասին ուտող դառնային: 2՛՛ որ հիմնականը մտերմների համար ուտելը չէր կարող լինել: Քննենք դա հայերենի և մյուս լեզուների օրինակներով: Գրաբարում **ընկեր** բառի բազմաթիվ գործածությունները (իմաստային առումով) քննելով «Նոր հայկազան բառարանի» հեղինակները բացատրում են, թե ինչ է իրենից ներկայացնում այն՝ «**զուգական, գործակից, մերձավոր, հավասարակից, սրտակից, բարեկամ, զոլվող, կցորդ, բաժանորդ, համախոս և համանման ինչ**» (զիրք Ա, էջ 779-780): 2՛վա ոչ մի անկարկ միասին ուտելու մասին և չէր էլ կարող լինել, քանի որ **ընկեր** բառը ճիշտ չի ստուգաբանվում: Այստեղ **կեր**-ը ոչ մի կապ չունի «ուտել» բառի հետ: Այն պարսկերենի **ker** բառն է, որ նշանակում է «գործ, արարք, անել»: Դավանաբար այս իրանական բառը հայերենը երկու անգամ է փոխ առել. մեկը պահլավերենից, մյուսը՝ միջին պարսկերենից, որովհետև **ker**-ի դիմաց մենք ունենք մերթ **կար**, մերթ **կեր** (համախ գրվում է **կեր**): Որ այս **կեր**-ը կապ չունի **կեր**՝ «ուտելիք» բառի հետ, զգուշացրել է տաղանդաշատ Գևորգ Դպիրը:

1. Ուրեմն, գրաբարից ունենք **կամակար**՝ «կամքն անող», **համարակար**

«հաշվարար», յետևյալը՝ «հուշագիր, մուրհակ, խոստումնագիր», զենակար՝ «վնասակար», հենց վնասակար՝ «վնաս գործող, անող», օգտակար՝ «օգուտ տվող, անող» ձևերը:

2. **Գանձակեր**՝ «համոզող, ուսուցանող», աղօթկեր՝ «աղոթող, աղոթք անող», խոհակեր՝ «խոհարար, ճաշ եփող» (չէ՞ որ ունենք նաև խոհագործ, խոհարար), պատկեր՝ «նկար, արված դեմից» և հետևաբար, նաև ընկեր՝ «միասին աշխատող, միասին գործող, գործակից, զույգ մտերիմ» և ոչ թե «միասին ուտող»:

Իզուր չի ասված. «Անա՛ ով է ընկերո, ասեմ՛ դու ով ես»:

Աշխարհի բոլոր լեզուներում էլ ընկեր հասկացությունը «գործակից կամ գաղափարակից, մտերիմ, մերձավոր հոգով կամ շահով» նշանակություններից է առաջացել և ոչ ուտելու: Ահա օրինակներ. լատիներենում socius և ընկեր է, ընկերակից, նաև proximus alter հունարենում etairos, eteros, plesios, ֆրանսերենում camerade՝ «աշխատանքային, ուսանողական և համատեղ բնակվող ընկեր», իսկ companion՝ «կյանքի և զբաղմունքների ընկեր», cophe՝ «մտերիմ, մոտիկ, նախընտրված ընկեր, դասընկեր», արաբերենում rafiq նույնն է հայերենի Ռաֆիկ-ի հետ՝ «մտերիմ», գերմաներենում Genosse, որ ծագում է genissen՝ «վայելել, օգտվել, առավելություն ունենալ», ge-noz՝ «օգտակար անասուն» ըմբռնումից, որը տրվում էր «հավասար արտոներ ունեցող անասուններին», նաև եվրոպական լեզուներում լատիներենից անցած camerad՝ «ընկեր, բարեկամ», որ ծագում է լատիներենի camera՝ «կամար, սենյակ» և hat՝ «սենյակում գտնվող, կամարի տակ համատեղ ապրող, բնակվող» բառից: Թուրքական լեզուներում yoldaş (յոլդաշ)՝ յոլ՝ «ճանապարհ» և դաշ՝ «մտերիմ, բարեկամ, կից» բառերից, այսինքն՝ «ճանապարհակից», ռուսերենում товарищ՝ «ապրանքի գործակից», товар՝ «ապրանք» բառից:

Կա մի բացառիկ օրինակ, ուշ լատիներենի companion բառն առաջացավ comi՝ «հետ» և panis՝ «հաց» բառերից, որ դարձավ ֆրանսերենում compagnon, անգլերենում companion, գերմաներենում Kompanie:

166. ԱՉԳԱԿԻՑ ԿԱՄ ԱՐՅՈՒՆԱԿԻՑ ԲԱՌԵՐ ԶՈՒՅՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ



Գնդկատանից մինչև Պորտուգալիա և Իսլանդիա տարածված են նույն մորից ծնված բույր լեզուները: Այսօրվա ռուսերենում, պարսկերենում և հայերենում քիչ չեն հեռավոր մայր լեզվից ժառանգած բառերը, որոնց ապացուցում են այս լեզուների քույրեր լինելը: Բերենը հայերենում պահպանված դայակ, դայլ (դալ) և դիել բառերը, որոնց զուգահեռները կան նաև հնդեվրոպական մյուս քույր լեզուներում:

Դայակ (գրաբարում դայակ)՝ «ստնտու կինն է, որը կաթով կամ կորձով սնուցում է երեխային, այսինքն՝ ծծնայրը»: Դայակ-ից են կազմվել նաև դայեկ-աբար, դայեկ-որդի, դայեկ-ատոհմ, դայեկ-որեն և այլ ձևեր: Գրաբարում դայակ էր կոչվում ոչ միայն

ծծնայրն ու կաթով սնուցող կինը, այլև այն տղամարդը՝ մանկածու խնամակալը, որին հանձնված էր թագավորական կամ իշխանական տոհմի ժառանգների խնամքն ու դաստիարակությունը: Օրինակ՝ «Շնորհի ամներ իրում դայեկին Բաստայ» (Իր դայակ Բաստին շնորհեց): Այստեղից էլ՝ դայակ-ել նշանակում էր ոչ միայն կաթով կերակրել, այլև խնամել, հոգալ, զուրգուրալ, հոգեպես սնուցանել և դաստիարակել: Ահա և հարևան լեզուների զուգահեռները. աֆրաներենում dayi՝ «մայր», պարսկերենում daya, պահլավերենում dayak. գնչուերենում dale, dai dei՝ «մայր», քրդերենում da, di, dia՝ «մայր», սանսկրիտում dhayati՝ «ծնում է», շվեդերենում dia՝ «ծծել», հարավսլավերենում doja՝ «ծծել», ռուսերենում доярка, доить՝ «կթել», «կթող, կթվորոտի»: Եվ այսպես, ազգակիցներ և արյունակիցներ դարձան հայերեն դայակ, դայեկ-ել և ռուսերեն доярка՝ «կթող, կթվորոտի», доить՝ «կթել» բառերը: Բայց սա բոլորը չէ: Գայերենը պահպանել է նաև դայլ կամ դալ՝ «մոր առաջին կաթը», ինչպես նաև դիել՝ «ծիծ ուտել, ծծել» բառերը, որոնք իրենց հիմքով նույնպես միանում են դայակի հետ:


167. ՄԵՐ ԱՅՏԵՐԸ «ԱՐՅՈՒՆԱԿԻՑ» ԵՆ ԱՎՅԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Ով չգիտե Սողոմոն Իմաստունի երգ երգոցի հետևյալ տողերը. «Իբրև զվեղև նռան մա այտը թո» (Անես նռան վեղև լինեն թո այտերը): Իհարկե, այտ բառը բացատրելու կարիքը չունի: Երբեմն զերպատում ենք այտ-ի կամ այտ-երի փոխարեն գործածել թշեր, թուշ բառերը: Այտ արձատից հայերենն ունի կազմած այտոց կամ այ-տոյց՝ «ուռուցք», այտումն՝ «ուռուցք», այտումն՝ «ուռել», այտումն կամ այտուցում՝ «ուռչում», այտչել, այտուցանել՝ «ուռչել» և այլն: Քանի որ այտ-ը դեմքի «ուռած, ցցված, փքված» մասն է, այտտեղից էլ նրա զարգացումը: Մարմնի որևէ մասի ուռչելն արդեն անվանում էին այտուցվել կամ այտնուլ. օրինակ՝ Մխիթար Գեղացի բժշկապետն ասում է. «Ի յոտներն այտոց ընկնի» (Ոտների վրա ուռուցք ելնի, «Այտումն ի մարմնի ունի» (Մարմնի վրա այտուցում ունի) և այլն: Իմաստի այսպիսի զարգացումն ստեղծեց նաև ի յայտ գալ արտահայտությունը՝ «հայտնվել, երևալ, ցցուն դառնալ, նշմարվել» նշանակություններով, որն այժմ հնչում ենք ի հայտ գալ կամ հայտնի դառնալ, հայտնվել ձևով: Այստեղից էլ՝ հայտնի՝ «երևելի, ակնառու, նշանավոր», և այս բառերից հետո արդեն մի քայլ է մինչև ի այտ արարել կամ արդի հնչյունը՝ հայտարարել՝ «երևացող դարձել, ցցուն դարձնել» բառը, որից էլ՝ հայտարարությունը: Եվ այսպես, մեզ համար շատ անսպասելի «արյունակիցներ» դարձան այտ և հայտարարություն բառերը:

168. ԵՐԵՔ ԱՉԳԱԿԱՆՆԵՐԻ՝ ԱՏՈՄԻ, ՏՈՄՍԻ, ՏՈՍԱՐԻ ՍԱՍԻՆ

Գայերեն տոմս՝ «թղթի կտոր, զրբույկ, տետրակ, երկտող», տոմսակ՝ «երկտողիկ, կինոյի կամ որևէ ներկայացման մուտքի, ավտորուսի, գնացքի երթևեկության կտրոն» և այլն: Տոմս-ով են կազմված նաև հրավիրատոմս, տոմսավաճառ, բաժնետոմս և այլ բառերը: Իսկ որտեղից է «եկել» տոմս-ը: Գունարենում ունենք տոմոս՝ «զովածքի, մագաղաթի կտոր, զրբի մաս, հատոր, քնդուկ» նշանակություններով: Դուք արդեն նկատում եք մնամություն հունարեն տոմոս և ռուսերեն том՝ «հատոր, մաս, բաժին» բառերի միջև, և դա ճիշտ է, միայն ռուսերենը չի սիրում հունարենի -os վերջավորու-

թյունները, դրանք նա դեն է գցում, օրինակ՝ հունարենի Homeros-ը հայերենում մնում է որպես **Հոմերոս**, իսկ ռուսերենում որպես **Гомер**, և սա ոչ միայն Հոմերոսի դեպքում, այլև մյուս անձնանունների: Եվ այսպես, վերադառնանք հայերենի **տոմոս**-ին, հունարենի tomos-ը հայերենում դարձավ նախ **տոմիս**, ապա **տոմ**, սակայն մի շարք հունարենից բարձրանված երկերում գտնում ենք նաև **տոմ** ձևով, ինչպես ռուսերենում է: Օրինակ՝ Տիմոթեոս Կուզի «**Հակաճառության**» բարձրանության մեջ 5 անգամ գտնում ենք **տոմս**-ի փոխարեն **տոմ** ձևը. «Յառաջնում **տոմին**» (Առաջին հատորում կամ Առաջին մասում), «Ամենայն եւթ **տոմիս**» (Բոլոր յոթ հատորներում կամ մասերում) և այլն: Հունարենի նույն **տոմ** արմատից կազմված բառ է tomarioti «տոմար» բառը, որ նախապես ուներ «բաժանում, հատված, վավերագիր, հատոր» նշանակությունները: Հայերենում դարձավ այն **տոմար**, **տոմար**, **տոմար**, **տավմար**, **տավմար**, **տոմար** և դարձյալ «հատված, հատոր, մաս, գիրք, մատյան, կոնդակ, գլուխ, վավերագիր, օրացույցի հաշիվ» նշանակություններով: Օրինակ՝ «Յերես **տոմարս** արար» (Երեք հատորի բաժանեց), «Ի մեր անխաղաց **տոմարն**» (ըստ մեր անշարժ **տոմարի**), «**Տոմար** ազգին երթայեցուց» (Երթայական ազգի ժամանակագրությանը) և այլն: **Տոմարը** անցել է նաև պարսկերենին, ասորերենին, արաբերենին՝ tumar «գալարված թուղթ» նշանակությամբ, իսկ վրացերենին **տոմարի** ձևով «նյութերի ցանկ, ընդօրինակություն» նշանակություններով:



Զարմանալին այն է, որ այսօրվա ֆիզիկայի և քիմիայի ուսումնասիրություններում **ատոմ** հասկացությունը նույնպես ծագում է վերոհիշյալ հունարենի tomos-ից a-միտական նախածանցով, որը նշանակում է «անբաժանելի, անմասնատելի»: Չէ՞ որ հին հունական փիլիսոփաների պատկերացմամբ նյութի անենափոքրիկ մասնիկներն այլևս «անբաժանելի» էին: Այսօր, երբ գիտությունը գտել է **ատոմ**-ը ճեղքելու միջոցը և նրանից կորզում է հսկայական էներգիա, այլևս ատոմը չի ընկալվում էին՝ «անբաժանելի», այլ նոր՝ «իյուլե, տարրական մասնիկ» նշանակություններով:

Օպերայից մինչև կոոպերատիվ և օպերացիա

Ինչպես հայտնի է, եվրոպական լեզուների շատ բառեր հայերենը վերցնում է ռուսերենից միջնորդավորված, ուստի շատ հաճախ նման փոխառությունների ծագման կամ արմատի նախնական իմաստի որոշման տեսանկյունից հայախոսն արդեն անզոր է լինում ռուսերենի միջոցներով դրանք «վերծանել»:

Բազմաթիվ ազգակից բառեր թվում են «անկախ» արմատներից կազմված. մասնավաճ, երբ դրանք կյանքի տարբեր ոլորտներին են վերաբերում, մինչդեռ, երբ պրպտում ենք ու հայտնաբերում դրանց արմատների նույնությունը, այլևս կասկածի տեղիք չի մնում նրանց ազգականներ լինելու հարցում: Որպես ավաված օրինակ վերցնենք կյանքի տարբեր ոլորտներից 3 բառ՝ **օպերա**, **կոոպերատիվ** և **օպերացիա**:

169. ա) ՕՊԵՐԱ <ԱՃԱԽՈՒՄ ԵՆ ՇԱՍԵՐԸ ԵՎ ԳԻՏԵՆ ԲԱԶՄԱԹԻՎ ԵՆԱՆԱԿՈՐ ԿՈՍՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՕՊԵՐԱՆԵՐ

Նախապես լատիներենում opus կամ operis նշանակում էր «աշխատանք, գործ», որի պատճառով էլ կոմպոզիտորները իրենց երկերն անվանում են opus: Միջին դարերում, երբ Իտալիայում ձևավորվեցին երաժշտության և երգով ուղեկցվող ներկայացումների հիմնական սկզբունքները, սկսեցին դրանք անվանվել opera «աշխատանք», որտեղից էլ օպերա բառն անցավ եվրոպական և մյուս ժողովուրդների բառապաշարին:

170. բ) ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ ՕՊԵՐԱ ՉԷ, ԲԱՅՅ ՆՐԱ ԲԱՐԵԿԱՍՆ Է

Թերևս **օպերա**-ից ավելի ուշ տարածվեց և նրանից անկախ գործածություն ստացավ **կոոպերացիա** բառը ու նրանից կազմված **կոոպերատիվ**, **կոոպերատոր** բառերը, որոնք հիմքում դարձյալ գտնում ենք cooperare՝ «համատեղ աշխատել, համատեղ գործել, համաձայն անել» բառը: Այսպիսով՝ **կոոպերատիվը**, եթե բարձրանեց, կլինի՝ համաաշխատանք, բայց թույրն է հարազատ օպերայի:

171. գ) ՕՊԵՐԱՑԻԱՅԻ ԳՆԱԼԸ ՕՊԵՐԱ ԳՆԱԼԸ ՉԷ, ԲԱՅՅ... ԻՆՉ Է

Բժիշկը խորհուրդ է տալիս **օպերացիա** անել կամ **օպերացիոն** սենյակ գնալ և նման արտահայտությունները մեր լեզվում դարձել են սովորական: Երբեմն **օպերացիա** բառը գործածվում է նաև ռազմական ամփոփագրերում և կամ նախապես խնամքով կազմված մի խնդրի իրականացման իմաստով: Հատկապես հետախուզության ասպարեզում **օպերացիա** կատարել նշանակում է իրականացնել նախօրոք պլանավորված, մտածված գործողությունները: Եվ ի՞նչ եք կարծում, պատահակա՞ն է արդյոք այս բառի նմանությունը **և օպերա**-ին: Այ՛ն: **Օպերացիա**-ն ևս **օպերա**-ի հարազատ թույրն է, որովհետև նրա հիմքում նույնպես operis՝ «գործողություն» բառն է ընկած, դրա համար էլ որպես հայերեն համարժեքներ գործածում ենք **վիրահատել**, **գործողություն ընել** (արևմտահայերենում) բառերը:

172. ԱԶԳԱԿԻՑ ԲԱՌԵՐ ԿՈՅՄ՝ «ԿՈՂՍ» <ԻՍԻՔԻՑ

Ժողովրդական խաղիկներից մեկում, որը տարածված է Այունիքում, հանդիպում ենք հետևյալ տողերին.

Կընտիմ տեղըս հարթ ա,
Չորք կուսըս գյուլ ու վարթ ա... կամ
Բաղես չորք կուսը լոխ վարթ ա...

Կասկած չի կարող լինել, որ խաղիկներում հանդիպող **չորք կուս**-ը նշանակում է «չորս կողմ», այսինքն՝ այս կուս-ը գրաբարյան **կոյս**՝ «կողմ» բառն է Գորիսի բարբա-

ոյ արտասանությամբ: Ղարաբաղյան խմբի բարբառներում նույնպես գործածական են եկուս՝ «այսկողմ», Ջուղայի բարբառում՝ նեկուս՝ «ներս», Թիֆլիսի բարբառում՝ «Ասծու կույս կողմանե» ձևերը, որոնցից, հատկապես վերջինում, բառի որ կույս բառի «կողմ» նշանակությունը մոռացվել է, նրա կողքին կրկնակի տեղ է գրավել կողմանե՝ «կողմից» բառը, որը եթե «հայերեն» թարգմանենք, կստացվի՝ Աստուծու կողմից:

Գրաբարից ավանդված, մասամբ մինչև հիմա էլ գործածական **քառակուսի, կուսակալ, յայսկոյս, յայնկոյս, կուսակցական, մեկուսի, մեկուսանալ, չորեքկուսի, երեքկուսի, ծովակոյս, աստուածակոյս, յես կոյս** բառերն «ազգակից» են իրենց մեջ ունենալով ընդհանուր մի մաս, դա կոյս՝ «կողմ» բառն է: Առերևույթ կարող էր թվալ, թե ոչ մի կապ չի կարող լինել այսօրվա **քառակուսի՝ «չորս կողմանի»** բառի և **մեկուսից՝ «անջատող, առանձնացնող, բաժանող, զատող», կուսակցական՝ «կողմնակից, որևէ կողմի կամ գաղափարի պաշտպան», մեկուսանալ՝ «առանձնանալ, զատվել, մենանալ», կուսակալ՝ «կողմնակալ», այսինքն՝ «Պատմական Հայաստանի չորս կողմերից մեկի փոխարքա, րոշչի, պաշտպան» բառերի միջև:**

Այսօր **կոյս**–ը «կողմ» նշանակությամբ գործածությունից դուրս է մղվել, հավանաբար, երկու պատճառներով, մաքի հայերենում ես նրա մեկ շարք համարժեքները, ինչպես **ուղղություն, դի, կող, կողմ, քև, երես, կուս, էջ** և ապա կա նաև մի նույնատիպ **կոյս** ևս, որ նշանակում է «անարատ, անբծ, մաքուր», ինչպես գործածում ենք **կույս աղբիկ, կուսական անտառ, կուսական լեռներ** և այլ արտահայտությունների մեջ, որոնք տեղիք են տալիս երկու **կոյս**–երի շփոթության:

173. ՏԱՐԱՎ՝ «ՆԵՏՎԱԾ», ԻՍԿ ՄԱՏՐԱՍ՝ «ՆԵՐՔԵԿ ԳՅՎԱԾ»

Քաղաքակիրթ աշխարհն այսօր ամենուրեք գործածում է բազմաթիվ արաբերեն բառեր, որոնց մի մասը, ինչ խոսք, բավական հնչյունափոխված կամ աղավաղված ձևով: Միա դրանցից մի քանիսը:

Եթե մեկն ափ ոռւսերեն **матрац**՝ «ներքնակ» բառը, ինչպես նաև հայերենում ու եվրոպական բազմաթիվ լեզուներում տեղ գտած **տարաք**՝ «դատարկ աման» բառերը «ազգակից» են, ոչ ոք չի հավատա, քանի որ արտաքնապես (ինչնամբ և բովանդակությամբ) դրանք ոչ մի ընդհանուր բան չունեն: Մինչդեռ փաստ է, որ երկուսն էլ կազմված են նույն արմատից: Արաբերենում **tarah** նշանակում է «ճեղքված, նետվող»: Այսպես սկսեցին կոչել այն ամանները, որոնց պարունակությունը գործածելուց հետո նետվում էին դեմ և կամ գործածվում այլ նպատակներով:

Բայց ի՞նչ գործ ունի այստեղ «ներքնակ» **матрац**–ը՝ այն ո՞վ է դեմ գցում:

Ոռւսերենին **матрац** բառն անցել է ֆրանսերենից, ուր այն ունի **matress** հինգումը, սա էլ իր հերթին փոխ է ամենված արաբերենի **al matrah**՝ «բան գցելու տեղ» բառից (որի հիմքում վերոհիշյալ **tarah** «ճեղքել» բայն է դարձյալ): Եվ այսպես, **տարաք**–ն և **մատրաք**–ը ազգակցական կապերի մեջ են, ինչպես հաստատում է լեզվաբանությունը:

174. ԱՊՄԻՐԱԼ ԵՎ ԱՄԻՐ

Հայոց պատմությունից բոլորին հայտնի է **ամիր** բառը (գրվում է նաև **ամիրայ**), որ նշանակում էր «իշխան, հրամանատար, կուսակալ, նախարար, տեր», այն ծագում է արաբերենի **amara**՝ «հրամայող», **imr**՝ «հրաման» բառից: Նրանից են կազմված **ամիրայություն, ամիրապատար**՝ «գործի հրամանատար» բառերը նույնպես:

Միջին դարերում, երբ արաբներն իշխում էին ոչ միայն եվրոպական երկրների մի

մասին, այլև գիտության և ռազմական արվեստի ապարեզներում, մեծ ազդեցություն ձեռք բերեց արաբերենը եվրոպական լեզուների մեջ: Կատարվեցին քազմաթիվ արաբերեն փոխառություններ. դրանց թվում էր նաև **ադմիրալ**՝ **admiral** բառը, որն «ազգակից» է մեր **ամիր**–ին: Այն ծագում է արաբերենի **amir al bahr** ձևից, որ նշանակում էր «ծովի տեսուչ, զլխավոր», հետագայում վերջին բառը՝ **bahr**՝ «ծով», դուրս է մնացել դարձվածքից, և առաջացել է միրալ, ապա՝ ադմիրալ (**amiral**–**admiral**)՝ «ծովակալ» բառը: Հայերենում պատճենմամբ ստեղծվել է **ծովակալ**–ը՝ «ծովերի վրա իշխող» նշանակությամբ:

175. ԿԱՐՈՂ Ե ԳԱՎԱԶԱՆ-Ը ԿՈՎ-Ի, ԳԱՎ-Ի ԱԶԳԱԿԻՅԸ ԼԻՆԵԼ

Մենք մի քանի անգամ ենք առիթ ունեցել խոսելու «ազգակից» բառերի մասին: Այսօր շատ «հայեցի» հնչող **գավազան**՝ «ձեռնամախտ, ցուպ, անասուն վարելու ցուպ, թագավորի մական» բառի մեջ **գավ** արմատը գալիս է պահլավերենից, ուր ցավ նշանակում է «կով, եզ» իսկ **ազան**–ը՝ **az**–ar՝ «վարել, բշել»: Պահլավերեն է բառը նաև պարսկերենում **gavzan, gavaz** ձևով: Հայերենում **գավազան**–ը, որ նախապես անասուններ արածեցնողների խթանը կամ ցուպն է եղել, հետագայում գործածվել է թագավորական մականի և, նույնիսկ, ցեղի ցուցակի նշանակությամբ: Եվ այսպես, կապ կա՝, արդյոք, **գավազանի** և **գավ**՝ «ջրի կամ գինու փարչ» բառի հետ, ի՞նչ կապ կարող է լինել **կովի, եզի** և **գինու փարչի** միջև: Մի տաղի մեջ և «**Հայասնակորում**» հիշատակվում է **գավը**. «Շուտով հասեալ **գավը** ու կըրայն» կամ «Բերեալ նոցա սեղան և գինի, զոր կերան, արքին և յազեցան. և ընդ առաստոն յարուցեալ տեսիլ **գզակն** և զսեղանսն լի նոյն բարութեամբ» (Նրանց սեղան բերին և գինի, որ կերան, հարքեցին և հազեցան, առափոյսան ելնելով տեսան **գավեր**–ը և սեղանները նույն բարիքներով լի): Այս տեքստերից պարզվում է, որ **գավը** գինու և ջրի անոթ է, սակայն մեկ այլ տեքստից (Թլկուրանցի) Քաջ Լիպարիտին նվիրված քրեատեղծությունից, տեղեկանում ենք, որ **գավը** նաև շեփոր, գալարափող է. «Հարին գփող պատերազմին գպուկն ու զնաֆիրն, զգավ հարկան» (Պատերազմի փող հնչեցրին փողն ու սրինգը, **գավ** հնչեցրին):

Այս ի՞նչ է դուրս գալիս, **գավը** և՛ անոթ է, և շեփոր: Այո: Միա թե ինչու: Գևորգ Դ-ի թագատրում է, որ գինու և ջրի անոթները պատրաստվում էին արծաթի եզի կամ կովի տեքսով, որտեղից էլ նրանց **gav**՝ «կով, եզ» անվանումը: Իսկ շեփորի **գավ** անվանումն էլ գալիս է հենց դրանից, որ գալարափողը եզի կտուղի ձևով էր պատրաստված: Ապացույց: Խնդրեն: Միա Աստվածաշնչի թարգմանությունը, ուր **եղջյուր** և **սրվակ** բառերը որպես «անոթ» են գործածվում. «Լից եղջիր թո յուղով»: Միա թե ինչպես ազգակցներ դարձան **գավ** և **գավազան** բառերը...

176. ԻՇԱՊԱՆՆԵՐԸ ԽԱՐԱԶԱՆՈՒՄ ԵՆ, ԲԱՅՑ ...

Խարազանել կարող է խարազան ունեցողը միայն: Բայց ի՞նչ է **խարազան**–ը... **խարազանել** բառի համար բոլոր բառարաններն էլ տալիս են «նտրակել, ծաղկել, հարվածել, խարազանով հարվածել» նշանակությունները: Ուե՛մն, **խարազանել**–ը կազմված է **խարազան**–ից, իսկ ի՞նչ է **խարազան**–ը: Այս բառի բացատրությունը հայտնի էր դեռևս մեր միջնադարյան գիտնականներին: Նրանք գրում էին. «Խարազան,

որ է վարիչ իշոյ» կամ «խարազան՝ իշավար ասի պարսիկ լեզուով»: Միս և բառի բանալին, որ պիտի փնտրել պարսկերենում: Իսկապես, չէ՞ որ մենք արդեն հանդիպել ենք նախորդ գրույցում մնամի գաղազան-ին, որ գալվ և ազ-ան եզրերից էր կազմված: Եթե այդպես է, ապա խարազան բառի մեջ էլ մենք արդեն գիտենք ազ-ան-ի նշանակությունը՝ վարել, ուստի մնում է պարզել, թե ինչ է բառի առաջին մասը՝ խար-ը (xar): Դա նույնպես հայտնի բառ է, խար՝ xar իրանական լեզուներում նշանակում է «էշ, ավանակ, գրաստ», հետևաբար ամբողջությամբ խարազան-ը նշանակում էր «էշ վարելիք», ինչպես գաղազան-ը՝ «կովի, եզի վարելիք»:

Իհարկե, խարազան-ը միայն էշերին հարվածելու ճիպտոր կամ մտրակը չէր, ոչ էլ գաղազան-ը՝ միայն կովերի: Միս «վարց հարանցից» մի հատված, ուր ասված է. «Առ խարազանն զայն և զբիր և զմա ցեղալ արածես զխոզս» (Վերցրու այն խարազանը և բիրը և զմա խոզեր արածի: Ուրեմն, ժամանակի ընթացքում ինչպես խարազան-ը, այնպես էլ գաղազան-ը մասնավոր կենդանիների վարիչ լինելուց դադարեցին և ձեռք բերեցին ընդհանրապես բոլոր կենդանիների մշելու, խթանելու գործիքի նշանակությունը:

Իսկ գաղազան-ը կաթողիկոսի, թագավորի ձեռքին դարձավ մարդկանց վրա իշխելու խորհրդանիշ, նրանց հովվելու գործիք, քանի որ նրանց համարում էին հավատացյալների հոտի հովիվ: Իմաստի հետագա զարգացմամբ խարազանը բառը հայերենում օգտագործվում է այժմ «մտրակել, անխնա հարվածել նշանակությամբ»:

177. ՊՏՈՒՂՆ ԻՆՔՆ Է ԱՍՈՒՄ, ՈՐ ԵՐԿՐԻՑ ԼԻՆԵԼ... ԻՆՉՈՒՄ Է ԾԻՐԱՆԸ «ԱՅՅԱՎԱԿԱՆ»

Ինչպես արդեն խոսել ենք մեկ առիթով, կան բույսեր, որոնք պարզապես անուն չունեն և կոչվում են իրենց հայրենիքի անունով կամ ավելի ճիշտ՝ այն երկրի անվամբ, որտեղից եվրոպացիները ծանոթացել են նրա հետ: Նման պտուղներից են ապելսինը՝ «չինական խնձոր», փորթոլոսը՝ «պորտուգալական» (նարինջ), մսղոը՝ «եգիպտական» (եգիպտացորեն), ռուսերեն՝ персик՝ «պարսկական» (դեղձ), гречка՝ «առինձ», греческий орех՝ «ընկույզ» կամ ծիրան-ը՝ որպես prunus armeniaca՝ «հայկական սալոր», որի մասին, ինչպես ասում են, արժե խոսել մի քիչ ավելի հանգամանալից: Ծիրանի անվանումը մի ամբողջ պատմություն է և հայ ժողովրդի, նրա հայրենիքի վաղեմության վկայականը, որի մասին էլ կուզեինք խոսել: Ինչպես հայ ժողովրդի անունն է տարածվել ողջ աշխարհում՝ արմանի, և հայ ժողովրդի հայրենիքը՝ որպես Armenia, այնպես էլ բազմաթիվ բուսատեսակներ գիտական և բուսաբանական ձեռնարկներում մնում են որպես «արմանիական» armeniaca, առ այսօր: Նման բույսերից են չամանը (Cymonum armenicum), տուղտը, ինչպես նաև ծիրանը, որի մասին ամենահին վկայությունները գտնում ենք աքքադական արձանագրություններում:



Աքքադացիները, հավանաբար, առաջին անգամ Հայաստանից ստացան ծիրանը, և քանի որ Հայաստանը նրանց համար Armanu երկիր էր կոչվում, ուստի ծիրանն էլ կոչեցին armanu «արմանիական»: Աքքադացիներից հետո դարձյալ սեմական ժողովուրդներից արամեացիները (ասորիները) ավանդույթի համաձայն սկսեցին կոչել ծիրանը hazzura armanaja՝ «հայկական խնձոր», որոնցից էլ արաբները tuffah al-armani՝ «հայկական խնձոր»: Իսկ եվրոպական աշխարհը ծիրանի անունը վերցրեց հռոմեացիներից, որոնք Հայաստան եկան մ.թ.ա. 1-ին դարում: Հռոմեացիները, ըստ ավանդույթի, սեմիտների մնամ ծիրանը սկսեցին կոչել prunus armeniaca՝ «հայկական սալոր» կամ պարզապես armenicum՝ «հայկական», իտալացիք նույնպես, հռոմեացիներից ժառանգելով, այս բույսի անունը կոչեցին arnellino, որն արվավաղված ձևով հիմքում դեռևս պահպանում է մեր երկրի անունը՝ Armana-ն: Եվ այսպես, այս բույսը կարող է վկայել, որ մ.թ.ա. 3-րդ հազարամյակում Հայաստանը գոյություն ուներ Armanu ձևով, այլապես ինքն է երկրի անվամբ չէր կոչվի armanu:

178. ՇԱՄՊԻՆԻՈՆ

— Մենք չամպինոն սուևեր ենք անցնում: Երևի հյուրերի համար այդ չամպինոն Կուևերից ձվով կերակուր պատրաստեցինք: Շամպինոն սուևերի անցնման վերաբերյալ գրականություն կա, և եթե դուք էլ կամենաք որանցից անցնել, խնդրեն, կարող ենք օգնել.— ասաց իմ վաղեմի բարեկամը և հրաժեշտ տվեց:

Ես, բաժանվելով նրանից, սկսեցի խորիել, թե ինչպես հաճախ մենք չենք գիտակցում փոխ առնված բառի իսկական նշանակությունը: Շամպինոն սուևը: Ի՞նչ անհեթեթություն: Փաստորեն մենք երկու անգամ միմյանց ետևից ասում ենք սուևկ սուևկ, մեկը՝ ֆրանսերեն, մյուսը՝ հայերեն: Այսինքն չամպինոն ֆրանսերեն նշանակում է «սուևկ» և ոչ թե սնկի տեսակ, ինչպես ընկալվում է մեզ մոտ: Դետևաբար, երբ մենք ասում ենք չամպինոն սուևկ, ստացվում է սուևկ սուևկ: Իսկ ինչպե՞ս է այս անհեթեթությունը մտել մեր խոսակցականի մեջ: Պարզվում է, որ սնկի ջերմոցային մշակման եղանակը տարածվել է եվրոպայում Ֆրանսիայից, և ահա սնկի այդ տեսակն էլ սկսել են անվանել չամպինոն, որ պարզապես սուևկ է նշանակում և ոչ թե նրա տեսակներից մեկը:

179. ԵՎ ՇԱՄՊԱՅՆԸ ՀՈՍՈՒՄ ԵՐ ՏՐԻ ՆԱԱՆ...

Գրականության մեջ խիստ տարածված այս արտահայտությունը պարզվում է, որ ճիշտ չէ, որովհետև չամպայնը չէր կարող հոսել, քանի որ այն զինի չէր, այլ գյուղ: Աշխարհում տարածված մի շարք զինիների տեսակների մշակման գաղտնիքը պատկանել է ֆրանսիացիներին, ինչպես, օրինակ՝ բորոտ և չամպայն զինիներին է: Ֆրանսիայում Շամպայն անունով մի բնակավայր կար, որտեղ էլ մշակվեց չհանգստացած մաճառից ամմիջապես զինի ստանալու տեխնոլոգիան (այսինքն զազով): Միս և այս բնակավայրի անունն էլ «կապվ» զինու այդ տեսակին, որը եթե բարձրանենք, կլինի գյուղ, չեն, ավան: Եվ այսպես, չամպայն նշանակում էր գյուղ, ավան, չեն, բայց մենք խումն ենք:

Հանախ ենք վկա լինում վիճարանությունների, թե այս կամ այն առարկաներին տրվող անուններից որն է «հայերեն», և որը՝ օտար: Հերթական գնումներից մեկի ժամանակ գնորդներից մեկը դիմեց վաճառողին.

— Խնդրեմ, իմն երեք կիլոգրամ **ապելսին** տվե՛ք:

— Դուք նախ սովորեցե՛ք հայերեն խոսել, որպեսզի կարողանաք ճիշտ անվանել Ձեր ուզածը:

— Կներեք, հարգելի վաճառող, այդ պտուղը հայերեն անուն չունի:

— Ինչպե՞ս քե չունի,— զարմացած մյուս գնորդները.— հապա **Մարինջ**—ը ի՞նչ է:

— **Մարինջ**—ն էլ հայերեն չէ,— պատասխանեց մի ուսանող: Այն չէր էլ կարող հայերեն լինել, քանի որ Մարինջը Հայաստանում չի աճել:

Տիրեց լուռություն, քանզի պատճառաբանությունը հիմնավորված էր: Եվ ավարձ լավեց մի ուրախ բացակամչություն.

— Գտա, գտա, թերևս հայերեն է **փորթազալ**—ը, մենք արտասահման արպես կըսեինք:

— Ի՞նչ **փորթազալ**, ի՞նչ **ապելսին**, միայն **Մարինջ**—ն է հայերենը, —անդեցին ոմանք...

Որպեսզի ստուգենք, թե կարծիքներից որն է հիմնավոր, պիտի դիմենք դարձյալ **ասպետ ստուգարանությանը**: Ահա թե ինչ է ասում նա այս մասին.

— **Մարինջ**—ը ծագում է Հնդկաստանից: Հին հնդկերենում՝ սանկրիտում, **Մագա** նշանակում էր «պղինձ», իսկ **րանգա** «գույն, երանգ», այսինքն՝ **Մագարանգա**՝ «պղնձագույն»: Հետագայում բառն «ամփոփվեց», դարձավ **Մարանգա**: Այս հնչունով փոխանցվեց այն Իրան, Միջին Ասիա, իսկ միջին դարերում արաբների միջոցով նաև այլ ժողովուրդների: Ասկայն, քանի որ արաբները գ—ն հնչում էին որպես ջ, ուստի **Մարանգա**—ն դարձավ **Մարանջ**: Այս հնչմամբ նա մուտք գործեց տարբեր լեզուների մեջ, ինչպես, օրինակ՝ աֆղաներենում՝ **Մարանջ**, բելուջերենում՝ **Մարունջ**, **Մարինջ**, քրդերենում՝ **Մարինջ**, վրացերենում՝ **Մարինջի**, հինդուստերենում՝ **Մարանջի**, հունարենում՝ **Մարան**—սինոս, իտալերենում՝ **արանջիո**, ֆրանսերենում՝ **օրանժ**, իսպաներենում՝ **Մարանժա/արանժա** և այլն:

Ասկայն պորտուգալացիներն ու իսպանացիները, երբ հասան մինչև Հինաստան, այնտեղից իրենց հետ Եվրոպա բերեցին մարնջի կտորները, և տարածվեց այն նոր անվամբ, որպես **ապելսին**: **Ապելսին**—ը ծագում է **ապելսին**՝ «չինական խնձոր» բառերից: Ասկայն այս պտուղը արագորեն **Պորտուգալիայից** սկսեց տարածվել Միջերկրական ավազանի զանազան ժողովուրդների մեջ՝ ստանալով արդեն մի նոր անվանում՝ **փորթազալ**, այսինքն՝ **պորտուգալական** (ինչպես որ ունենք ռուսերենում **персики**՝ «դեղձ»՝ Պարսկաստանից, թուրքերենում՝ misir՝ «եգիպտացորեն»)՝ եգիպտոսից լինելու պատճառով:

Կերպարանավոր մեր զրույցի սկզբում ծագած վեճին՝ պիտի պնդենք, որ հիշյալ երեք անվանումներից ավելի «հայերեն» է **Մարինջը**, ավագության իրավունքով, քանի որ մյուս անվանումները արդյունք են ավելի ուշ ժամանակների փոխառության, երբ **Մարինջը** վաղուց արդեն «հայացել» էր նույնիսկ կազմելով նոր բառեր՝ **Մարնջագույն**, **Մարնջեմի**, **Մարինջի** և այլն: Մինչդեռ երբեք մենք չենք գործածի **փորթազալագույն**, **փորթազալեմի** կամ **ապելսինագույն** և **ապելսինեմի** ձևերը:

Ուրեմն, գոյության իրավունքը և առաջնությունը մնում է միայն **Մարնջի**՝ վաղեմիության և «հայացած» լինելու պատճառով:

Աշակերտական, ուսանողական կյանքն այսօր առանց **ռետինի** հազիվ թե հնարավոր լինի: Իսկ հազարավոր նախազօղո ինստիտուտները, ինչպե՞ս պիտի այխտատեն նրանք: Իսկ ինչպե՞ս պիտի «բայլեին» միլիոնավոր ավտոմեքենաները առանց **ռետինե դողերի** կամ առանց **ռեզինե** կոշիկների: Իսկ քիմիական սարքե՞րը, ճկվող խողովակները, ջետակները, զսպանակները: Ինչպե՞ս արաջացան **ռետին** և **ռեզին** բառերը, նո՛ւյնն են արդյոք դրանք: Իսկ **կաուչուկը** կարելի՞ է դրանց վիտալորեն օգտագործել:

Բացում ենք միջնադարյան գրքերը և, ո՛վ զարմանք, կարդում ենք այնտեղ **ռետն**, **ռետին** (երբեմն էլ **ռետինն**, **ռետ**, **ռատինն**)՝ որպես «խճե՛», որ հոսում էր ծառից, որպես ծյուր կամ խունկ և բալասան, դեռ: Բժշկաբանները համեմարարում են. «Առ դեղ **ռետին**», «**ռետին**, որ է սպեղանի», «**ռետին** համաօրեն քաղցր դեղոյ անուն է, զոր շարքաք ասեն», այստեղից էլ՝ «**ռետինական** մաղթանօք» (քաղցր մաղթանքներով) արտահայտությունը: Նույնիսկ «**ռետական** գթով ցող քաղցրութան մեզ ցողեսցեք» արտահայտությունը տաղերում:

Ռետինի հայերենին է անցել, հավանաբար, Աստվածաշնչի թարգմանությամբ, հունարենի հրետինե—ից, որից նաև լատիներենին, իտալերենին՝ *recina*, արաբերենին՝ *retinağ*, պարսկերենին՝ *ratayan* ձևով:

Ասկայն մնում է չլուծված, թե ինչ ծագում ունի այն: Հնդեվրոպական է, թե՞ ծագում է մեկ այլ լեզվից:

Ռետինի նոր նշանակությունը հայերենում կապված է արդեն **կաուչուկի** գյուտի հետ, որը նույնպես «ծառի արտասուք» էր նշանակում, որը սակայն ոչ թե որպես բուժիչ դեղ, այլ որպես առածոական իրերի հունք էր գիտատվում: Եվ ահա քնական **կաուչուկի** թանկության պատճառով ստեղծվեցին արհեստական **կաուչուկի** ստացման տարբեր եղանակներ, արհեստական այս խճեծերից պատրաստված իրերն էլ սկսեցին անվանել **կաուչուկե** կամ **ռետինե** (ռուսերենում՝ **ռեզին**) ձևը գալիս է եվրոպական լեզուներից, որոնք էլ իրենց հերթին այդ ձևն ստացել են լատիներենից), երբեմն նաև ռուսերենի ազդեցությամբ՝ **ռեզինե**: Ահա և Երևանի **ռետինե** իրերի գործարանը, որ ոչ թե բուժիչ բալասան ու խունկ է արտադրում, այլ ինքներկ կասեք, թե ինչ: Արևմտահայերենում ստեղծեցին համարժեք բառը՝ **ծգախճե՛**, որը սակայն հազվադեպ է օգտագործվում:

182. «ԱՆՍԱՀՆՈՒԹԱՆ» ԾԱՌԸ ԵՎ ՈՒՍՏԱՅԻՆԻՍ ՍՊԻՐՏ

Թվկուրանցին իր նազելուն ասում է. «Նշտարենի ծառ ես ծաղկեալ»: Աս միջնադարյան բժշկաբաններում հանդիպող **Նշդարի**, **Ուշդարենի**, **Նշտարենի** ծառն է, որ Աճառյան արձանագրում է իր «Հայերենի արմատական բառարանում» որպես «անստույգ ծառ»: Որոշ մասնագետներն այս ծառը նույնանուն են **Ուժուժ**, **ստուժ**, **ծինկարի**, **կարպենու** կամ **պողիյի** հետ:

Այսքան տարբեր ծառատեսակներ: Բայց ի՞նչը կարող է տալ լուծման բանալին... Պարզվում է, որ գաղտնիքը կարող է լուծել պարսկերենը կամ, ավելի ստույգ, պահլավերենը, որն իրանական հին լեզուներից է: Նախ սկսենք **դար**—ից, որն այս բառի մեջտեղում կամ վերջում է հանդես գալիս, այն պարսկերենի (կամ իրանական) ժար՝ «դեղ» բառն է, նաև ունենք **դար չին**՝ «չինական փայտ» (կամ **դար ի ճնճիկ**): Իսկ բառի առաջին մասը պահլավերենի *anoša*՝ «անձաի» բառն է, որով *anošdar/inošdar*

թարգմանվում է «անմահական դեղ»: Պարսկերենում հնչում է այն *nastar*, փուշտում *nostar*, այլ կերպ լատիներեն այս բառն անվանում են *Pinus exselsa*, ռուսերենում **бессмертное зелье** կամ **нашатырь**: Այն անվանել են նաև «կյանքի ծառ»: Եվ այսպես, իր բուժիչ խեճահյութի պատճառով այն համարվեց անենարուժիչ ծառ, որպես բուժիչ բալասան օգտագործվող մածուկը կոչվեց **անուշադր**: Այս խեճից է նաև **нашатырный спирт**՝ «նաշադրի սպիրտը», որ ոչ այլ ինչ է, եթե ոչ «անմահության սպիրտ կամ ոգի»:

183. «ՍԵՏԸ ԹԱՔՆՎԱԾ» ՊՏՈՒՂԸ



Չայոց լեզվի զարդանիշներ բացող գանձարանում՝ «Չայերենի արժատական բառարանում», **ընկույզ**–ի մասին կարդում ենք. «Բառս գտնվում է Առաջավոր Ասիայի շատ լեզուների մեջ... Բայց այս ձևերից ոչ մեկը չի կարող հայերենի մայր համարվել: Ընդհակառակը, շատերը կարող են բացատրվել հայերենով»: Չայտնի է, որ հայերենի մի շարք բարբառներ այս բառն ունեն նաև առանց **ըն**–մասնիկի՝ **գուզ** ձևով (Ալաշկերտ), **գոզ** (Վան), **գիզ** (Մոկս), ինչպես պարսկերենում էլ **goz**, քրդերենում **guz** և այլն: Սիս և իրանական լեզուներն էլ տալիս են բառիս ստուգաբանությունը: Իրանական լեզուներից Ավեստայի լեզվում հանդիպում ենք **gaoz**՝ «ծածկել, թաքցնել», որից **gyoz**՝ «ծածկույթ, պատրաստ» (*a+gauza արմատից) բառին, որն էլ հենց «մատուցում» է բառիս իմաստը: Գրաբարում **ըն**–մասնիկը (որ նույնն է հնդեվրոպական *in՝ «մեջ») բառի հետ, ունի «մեջ» նշանակությունը, որը, միանալով **գոյզ**–ին, դարձել է **ընգոյզ**՝ «մեջը թաքցված», «ներսում ծածկված»: Սա հաստատում են մի շարք բարբառներ, օրինակ՝ Շատախում **գյոզ** են անվանում միջուկը, իսկ ընկույզը՝ կորյով:

184. ՄԱԿԱՐՈՆԸ՝ ԵՐՁԱՆԻԿՆԵՐԻ ԿԵՐԱԿՈՒՐ

Մակարոնը համարվում է իտալացիների ազգային կերակուր, որի պատճառով էլ հաճախ են նրանց **մակարոնակերներ** անվանում: Բայց **մակարոն**ն ասում է, որ ինքն այլ երկրից է ծագում: Չին հույները այլուրով կամ խմորով պատրաստված մի ճաշատեսակ ունեին, որն անվանում էին **մակարիա**: Պետք է նշել, որ այս ճաշանվանման և **Մակարիոս** հատուկ անվան միջև գոյություն ունի ուղղակի կապ. երկուսն էլ նշանակում են «երջանիկ, երանելի»: Պետք է ենթադրել, որ նման անվանման արժանանալու համար այս կերակրատեսակը որոշ հիմքեր ունեցել է այն շատ համեղ է թվացել հույներին, այլապես, ինչո՞ւ պիտի այդպես կոչվեր: Չույներից այդ կերակրատեսակի անվանումը անցել է իտալացիներին, որոնք նույնպես խմորից կամ **լապչայից** պատրաստված կերակրի մի տեսակն անվանում էին **մակարոնի**:

Մինչև եվրոպական լեզուների միջոցով այդ կերակրատեսակի անվանը ծանոթանալը հայերը և օգտագործում էին մակարոնի և լապչայի նման խմորից պատրաստված կերակուրներ: Տարբեր բարբառներում պահպանվել են այդ ուտելիքների անվանումները, որոշ բարբառներում՝ **երիշտա**, **արիշտա** (կամ

երիշտա), իսկ որոշ բարբառներում էլ՝ **ըռշտա**, **ըըռշտա** հնչմամբ: Այս բառը գտնում ենք հարևան պարսիկների և արաբների մոտ, բայց ո՞րն է եղել նրանցից հորինողը: Նորին մեծություն ստուգաբանությունը ասում է՝ բառի հայրենիքը Պարսկաստանը պիտի լինի, քանի որ իրանական լեզուներում **rešta**՝ «թել» նշանակությունն ունի, ուստի խմորը թելանման կտրվածք ունենալու պատճառով պարզապես կոչվել է **«թելավոր»**: Բացի այս, հայերենը սովորություն ունի ր, ո–ով սկսվող բառերից առաջ **ե** կամ **ա** հավելել: Ի դեպ, Չայաստանից հարավ, Չյուսիսային Միջագետքի ասորա–արաբական բարբառներում պահպանված ենք գտնում **ռաշաթա**–ն, որը պատրաստվում էր որպես մակարոնանման և կերակուր կաթով հունցած խմորով: Ավելորդ չէ հիշեցնել հայոց **ըռշտայի** պատրաստման բաղադրատոմսը. խմորին խառնվում է ձու, կաթ և մածուց, որպեսզի համեղ լինի և սննդարար:

Իտալացիները, այնուամենայնիվ, խմորակերներ են, և եթե **մակարոնը** իրենց ազգայինը չէ, ապա **սպագետտին** և **վերմիչելը** հո իրենցն է: Սիս այս մասին է մեր հաջորդ գրույցը:

185. ԿՈՒՏԵՒՆՆԸ ԱՐԴՅՈՐ ԿԵՐՄԻՇԵԼ, ԵՌԵ ՀԱՍԿԱՆԱՅԻՆԸ ԻՏԱԼԵՐԵՆ

Խոսքն իրական **ճիճուկ** մասին չէ, այլ խմորից պատրաստված որդանման խմորաթելերի կամ նուրբ **երիշտայի**, որին իտալացիք անվանում են **վերմիչելո**: **Վերմիչելո** բառացի նշանակում է «ճրճվիկներ, որդյակներ»: Թելանման նուրբ մակարոնն այսպես կոչվեց իր հիմքում ունենալով լատիներենի **verme**՝ «որդ, ճիճու» բառը (նույնն է իտալերենի **heta**) և **չելի** փոքրացուցիչ (=իկ) մասնիկը: Ռուսերենում **վերմիչելոն** դարձավ **вермишель**, որից էլ փոխ է առել հայերենը:

Չարք է առաջանում. «Եթե հասկանայինք իտալերեն, կուտեի՞մք, արդյոք, ճիճվիկներից պատրաստված կերակուրը»: Արևմտահայերենում հորինեցին ավելի գեղեցիկ մի բառ՝ **թելահյուս** (բառացի խմորաթել), որպես համարժեք **վերմիչելի**:

186. ԻՆՉՈՒՒ Է ԱՂԸ ԱԴՎՈՐ

Աղը ոչ միայն հայոց, այլև աշխարհի մյուս ժողովուրդների մոտ մեծ հարգանք է վայելել: Աղով երզվել են, ուխտ են արել, աղ ու հացով բարեկամներին են դիմավորել: Վատ մարդկանց անաղուհաց են անվանել, մատաղն առանց օրհնված աղի անընդունելի է համարվել: Աղը հարգել են նույնիսկ սրբություն չճանաչող մարդիկ՝ ավազակները, ինչպես զորաբարում էին շեշտում: «Անազակքն գիտեն պատել զդաշինս աղ և հացի»: Աղի մասին առանձեր, ասացվածքներ, զրույցներ ու հեքիաթներ են հյուսվել: Իսկ ինչո՞ւ: Որովհետև աղն է եղել ուտելիքներին համ տվողը, հացը, կերակուրը առանց աղի չի կարելի պատկերացնել: Դապա մյուս մթերքները, որ նախատեսված են երկար ժամանակ պահելու համար, թթու դրած բանջարեղենները և այլն: Սիս ալստեղից էլ թևավոր այնպիսի արտահայտություններ, որպիսիք են «Լրազարափարախտությունս աղն (ությունը) է պակասում», «Ռբքան աղ է պետք նրան ճանաչելու համար»: «Կամ աղն է պակաս, կամ մաղը» և այլն, և այլն:

Եվ ահա, քանի որ մարդու կյանքը անուշացնող, համեղացնող այս պարզագույն նյութը աղը, անփոխարինելի ուղեկիցն է եղել մարդու, նրա հետ են կապվել նաև մի շարք արտահայտություններ, որոնք թվում է, թե բոլորովին կապ չունեն աղ կամ աղի հասկացությունների հետ, և եթե կուզեք, բոլորովին հակառակ նշանակություններ են արտահայտում: Այսպես, հայերենում աղվոր նշանակում է «անուշ, գեղեցիկ, հաճելի», որն օգտագործում է հանելուկներում նաև Շնորհալիք. «Կոյս մի կար աղուտը պե՛ր» (Կար մի կույս հանձնի, անուշ պե՛րով), իսկ ներկայումս բոլոր արևմտաար բարբառները նույնպես գիտեն այս բառը, որ ծագում է աղ արմատից: Եվ ահա, ոչ միայն աղուտը, այլև աղու: «Քաղցր, անուշ»: Միջնադարյան լեզվաբաններն ու բանաստեղծները ենթադրում էին, որ աղանքի բառն էլ պիտի որ աղից ծագած լինի: Սիս և գրում է Գ. Նարեկացին. «Աղու աղանքի» կամ «Աղուն քաղցր ասի. որպես եւ է աղանքին քաղցր ի տես»:

Որպեսզի համոզվենք իմաստի նման անցման հարցում, հարկ է հիշեցնել, թե ինչպես ռուսերենում ևս соль բառից առաջացել է солод՝ «ածիկ, մատ», և ապա՝ сладкий՝ «քաղցր, անուշ», сладости՝ «քաղցրավենիքներ» և այլն:

187. ՈՐ ԿՈՂՄՆ Է ՏԱՆՈՒՄ ՍԵՃ ԱՈՒՏՆՈՐԴԸ, ԵՎ ՈՐԻՐ՝ ԱՏԱԿԻՅԸ

Թվում է, թե մնաց հարցադրումը անիմաստ է, քանզի առաջնորդը հենց այն անձնավորությունն է, որ միայն առաջ պիտի տանի: Բոլոր բառարաններում առաջնորդ բառի դիմաց դրված է «ուղեցույց, առաջազմաց, առաջատար, գլխավոր, վարիչ, թագավոր, իշխան, ուսուցիչ, մեկնիչ», և հենց այս նշանակություններով էլ զրաբարում գտնում ենք գործածված բազմիցս. «Նոխազ առաջնորդ հօտի», «Առաջնորդ կենաց... առաջնորդես մեզ (Կյանքի առաջնորդ... մեզ առաջնորդիր)» և այլն:

Բայց իսկապե՞ս առաջ են տանում մեզ առաջնորդները: Գրաբարը զրի է առնվել 5-րդ դարից, մինչդեռ դրանից շատ-շատ առաջ այս բառը գոյություն է ունեցել, և ոչ այն իմաստով, ինչ զրաբարում, այլ մի քիչ այլ: Բառը կազմված է առաջին հիմքից, -որդ ածանցից: Սակայն առաջին-ն էլ իր հերթին բարկացած է ա՞՞՞ «դեպի» և աջ-ին՝ «ձախից հակառակ կողմը» բառերից: Դետաբար, առաջնորդ-ը ոչ թե «ուղիղ», այլ դեպի աջ

տանող անձնավորությունն է դուրս գալիս: Այսպես, ունենք հաջողվել, հաջողություն բառերը, որ կազմված են ի-աջ-ող-յաջող՝ «դեպի աջ գնացող» իմաստի զարգացմամբ:

Դենց այստեղ է, որ մենք կուզեինք հիշեցնել հին ժողովուրդների մի պատկերացման մասին: Ըստ այն ժամանակների պատկերացման ծախ-ը «ոչ ճիշտ, ոչ ուղիղ, ոչ հաջող» կողմն էր, որից էլ՝ ծախտորը, ծախտությունը, ծախ գնալ, ծախտորվել արտահայտությունները, իսկ աջ-ը՝ ընդհակառակը, «ուղիղ, հաջողակ, ճիշտ, իրավացի, արևակալ» կողմն էր, որի պատճառով էլ դեպի աջ տանող անձը՝ առաջ-նորդը, «ուղիղություն տվող, ճիշտ տանող, դեկավար անձն» էր: Զէ՛՛ որ ամեն ինչ անող մարդու և՛ ծեռն էր, իսկ ով ծախ-ով էր գործ անում, նա ծախիկ էր և ի ծնե ծախտակ:

Քանի որ խոսք բացվեց աջ բառի մասին, ապա նրա միջոցով կազմված բառերի մեջ հիշատակության են արժանի աջակից-ը՝ «օգնական, նիզակակից, գործակից», որից էլ աջակցել՝ «օժանդակել», աջակցություն՝ «օժանդակություն» բառերը, որոնց մեջ զրեթե մոռացության է մատնվել աջ բառի բուն նշանակությունը և փոխարինվել է այն «օժանդակություն» իմաստով: Աջակից լինել մեկին նշանակում էր աջը հենարան դարձնել մեկին կամ դառնալ նրա գործակիցը, օգնականը:

188. ԻՆՉՊԵՆ Է, ՈՐ ՎԱՐՏԻԹԸ ԵՎԾԿՈՒՄ Է... ԵՎԵԿ ԳՆՈՒՄԸ

Ներկա սերունդը տվոր է անդրավարտից բառի տակ հասկանալ «արտաքին վարտիքը», «զրքի վարտիքը», մինչդեռ այն լեզուն պահպալեռնը, որից փոխ է առել հայերենը այս բառը, գիտե որպես «միջին կամ ներքին վարտից»: Այս բանը հուշում է ինքը՝ պահպալեռնի andar՝ «ներքին» բառը, որին կցված է նաև var-ի՝ «ծածկոց» բառը, որով andarvarտի լինում է «ներքնավարտից»: Բայց ինչպե՞ս պատճառ, որ հայոց մոտ այն դարձավ արտաքին տարատ: Զէ՛՛ որ հայերը հիմնալի տիրապետում էին պահպալեռնին և պարսկերենին: Սիս թե ինչու՞մ է բանը: Երբ հայերը փոխ առան անդրավարտից-ը, հասկանում էին այն ճիշտ՝ պարսիկների նման, որի ապացույցն են հենց Աստվածաշնչի հետևյալ երկու հատվածները. «Արասցես նոցա անդրավարտիս կտալիս ծածկել գառականս մարմնոց իւրոց» (Նրա՞նց համար կտալիս անդրավարտիքներ կչինես մարմնի ամոռույքը ծածկելու համար), «Անդրավարտիս կտալիս զգեցցի ի վերայ մարմնոյ իւրոյ» (Կտալիս անդրավարտիքը իր մարմնի վրա թող հազնի): Իսկ ինչպե՞ս կատարվեց իմաստի փոփոխությունը: Բանն այն է, որ պարսիկները անդրավարտիքի վրայից հազնում էին դարձյալ ինչ-որ զգեստներ, որի պատճառով վարտից-ը մնում էր հանդերձների ներքևում կամ միջին մասում, որտեղից էլ նրա անվանումը: Իսկ քանի որ հայերը անդրավարտից-ը հազնում էին ներքնավարտիքի վրայից, ապա առանց պարսկերենի նշանակությունն ընթերցելու, այն գիտակցվեց որպես «արտաքին տարատ» (արևելահայերենում՝ ելյուրպական տարատ, արևմտահայերենում՝ ասիական տարատ) նշանակություններով:

Նույն իրանական վարտ՝ «ծածկոց» բառից է առաջացել նաև սարավարտ՝ «գլխի ծածկոց» բառը, որը հայերենում դարձավ սաղավարտ (զրվում է նաև սաղավարտ), պարսկերենի sar՝ «զուլխ» և var (ի)՝ «ծածկոց» բառերից (sar-ը հայերենում դարձել է sal, որին ավելանալով varտ-ը՝ դարձել salvar, ապա՝ սաղավարտ): Դետաբարն թաղիք է կամ քսաքան գլխանոցը փոխարինվեց մարտերում պղնձե, մետաղե գլխարկներով կամ բարակներով, և արդեն հիմնականում սաղավարտ բառը նշանակում էր «մարտական մետաղյա թասակ», այլապես չէին ասի. «Սաղավարտ պղնձի ի զուլխ նորա» և այլն:

Լեզվաբանները գտնում են, որ բարբառային **չավար** ձևը իրանական **չավար** «սրունքները ծածկող» բառից է առաջ եկել, որ հնչում էր **չարվար**:

189. ՎԱՐՍԱՎԻՐԱՆՈՅՈՒՄ ՎԱՐՄ ԵՆ «ՎԵՐ ԱՆՈՒՄ», ԹԵ՞...

Ով չի առնչվել **վարսավիրանոցների** հետ, ով չի ուղղել մտովի հաճախ սխալ (կամ գուցե ավելի ճիշտ) գրված «**վարսավիրանոց**» ցուցանակները: Թանի որ մեր զրույցը լեզվաբանական է, ուստի հարցը լեզվաբանորեն էլ դնում ենք: Ինչպե՞ս է ընկալվում այդ ցուցանակը՝ «վարսը վեր անելու վա՛ր», թե՞... որովհետև **վարսավիր** բառի երկու մասերն էլ **վարսը** և **վերը**, շատերի կողմից ընկալվում են որպես «հայերեն» բառեր, մինչդեռ այդ արտաբույստ է թվում, և՛ **վարս**–ը՝ «մազ, գես», և՛ **վերը** իրանական բառեր են, և հայերենը փոխ է առել դրանք պարսկերենից կամ պահլավերենից: Բառի վերջին կեսը՝ *vira*–ն (արդի պարսկերենում՝ *bira*) նշանակում է «պատրաստող, շինող, հարդարող», որով **վարսավիր** նշանակում է «վարս պատրաստող, հարդարող, շինող, ուստի սխալ է **վարսավեր** կամ **վարսավերանոց** գրելը: Իրանական լեզուների **վիրա** բառը հայերենը գիտե նաև մեկ այլ փոխառության մեջ, որի մասին է մեր հաջորդ զրույցը **ռահվիրա**:

190. Ո՛Վ Է ՈՒՎՎԻՐԱՆ՝ ՃԱՆԱՊԱՐՎՈՐՂԸ, ԹԵ՞ ՎԱՐՊԵՏԸ

Գրաբարում **ռահ** (պարսկերեն *rah*՝ «ճամփա») բառը բազմիցս օգտագործվում է. «**Ռահիլը** լուսոյ յի յերկինս ելեք» (Լուսո ճամփով երկինք բարձրացեք), «**ռահ** արքունամեն» և այլն: Բանաստեղծական վերամբարձ ոճում և գերադասությունը տրվում է **ռահ**–ին, հատկապես նրանով կազմված **ռահվիրա**՝ «ճամապարի բացող, պատրաստող, առաջագնաց» բառին: Այսօր սիրված արտահայտություններ են՝ «Աբովյանը հայ նոր գրականության **ռահվիրան** է» կամ «Ես՝ նոր կյանքի **ռահահորդն ու ռահվիրան**»: Ինչպես արդեն կոստեցիք, **ռահվիրա** բառի մեջ **վիրան** նույն **վարսավիր** բառի կազմում գտնվող **վիր** բառն է, որն ունի «պատրաստող, հարդարող, շինող, բացող» նշանակությունները: Նոր պարսկերենում այն հնչում է *vira* կամ *bira*: Եվ այսպես, **ռահվիրան** կարող է արդյոք **ճամապարի հորդող** և **ռահահորդ** համարվել: Այդ կամ ոչ, միևնույնն է. մեզ հետաքրքրողը **վարսավիր** և **ռահվիրա** բառերի «ազգակցական» կապերն էին, որը և ջանափնք ցույց տալ: Իսկ նո՛ւյնն է, արդյոք, **ռահահորդը ռահվիրայի** և **ճամապարիտրի** հետ:

191. ՏԱՏԱԳՈՎԸ ՆԵՐԲՈՂԱՍԱՅՆ Է, ԻՍԿ ՍԵՉ ՄՈՏ՝ ՊԱՇՏՊԱՆԸ. ՓԱՏԱՎԵՐԱՆՈՒ ԱՌԱՆՑ ՕՐՎԵՐԳԻ

«Արդի հայերենի բացատրական բառարանում» **ջատագով** կամ «Իզուր ես **ջատագովում** ընկերոջը» և այլ մեծ արտահայտություններում հանդիպող **ջատագով** բառի մեջ հեռավոր ձևով որսում ենք ասես միայն **գով**՝ «գովել» եզրը, սակայն առաջին մասը՝ **ջատը** կամ **ջատա**–ն, հայերիս համար մնում է անհասկանալի: Եվ դա պատահական չէ: Ջատագովը փոխառություն է պահլավերենից ու թեև մեզ չի հասել պահլավերեն գրականությամբ, սակայն իրանական մյուս ցույր լեզուներում Ավեստայի լեզվում, պարսկերենում գտնում ենք այդ բառի առանձին «մասերը»:

Ավեստայի *yata* կամ *jata* նշանակում էր «օրինեթ, աղոթք, ներող, փառաբանու-

թյուն», որն ասվում էր աստծուն ուղղված ամենօրյա աղոթքում *yata ahu Vairya*՝ «Օրինենք թեզ, Տեր»: Իսկ բառի երկրորդ եզրը **գովը**, ամկա է նաև հայերենում **գովը**, **գովասանք**, **գովել** ձևերում: Պահլավերենում հնչում էր *yatagov* «պաշտպան, փաստաբան», իին պարսկերենում *yafsan gub* «ասել, հայտնել» նշանակությամբ: Այս **գով** կամ **գով** բառը հանդիպում է նաև մի շարք իրանական բարդ բառերում, ինչպես *raštgov*՝ «ճշմարտախոս», *harzamazgov*՝ «արձակ կամ սանձարձակ խոսող, ընդվարախոս»:

Այսպիսով նախապես **ջատագովն** ընկալվում էր «օրինեթություն, գովք, փառաբանություն առող», որից էլ ինաստի գարգացմամբ՝ «ըրվատող, պաշտպան», ապա նաև «դատապաշտպան, դիմացիմին մեղադրող» նշանակություններով: Միա զարաբայան մի քանի օրինակներ. «Յուվայ **ջատագովք** էին» (Չորի պաշտպաններն էին), «Որ Աստուած **ջատագով** է արդարոյն **ջատագով**» (Ով Աստծուն պաշտպանի և արդարին պաշտպանի) և այլն:

192. ԵՍ ԳՆՈՒՄ ԵՍ ՃԱՄԲԱՐ ՃԱՄՊՐՈՒԿՈՎ ԿԱՍ... ՃԱՄԲԱՐՈՎ

Ճամբար մեկնելու նախօրյակին մայրս ասաց. «Նախօրք ճամպուրկը կպատրաստես, որպեսզի ոչինչ չնոռանաս տանը և գրքերը, և գունավոր մատիտները, և գրիչը, որ շուտ–շուտ նամակներ գրես»:

Ես, իհարկե, այն ժամանակ չէի կասկածում, որ **ճամպուրկը ճամբար** գնալ նշանակում է **ճամբարով ճամբար** գնալ և ոչինչ դրանից պակաս: Ինչպե՞ս թե, սա ի՞նչ անհամ կատակ է»,— կմտածի ընթերցողը: Բայց շտապեմք: Նորին ստուգաբանության հետ մեկնենք պատմության ոլորապատկտ ճամապարհներով դեպի իրանական լեզուների ակունքները, դեպի պահլավերենը, որից մենք շատ բառեր ենք վերցրել: Իհարկե ոչ հարկադրաբար, այլ ստիպված և ակամա, պատմության քերտումով: Չայերը պահլավերի հետ շատ մերձեցան հատկապես Վաղարշակ թագավորի օրոք, որը պարսկերեն Արշակ թագավորի եղբայրն էր և նրա օգնությամբ էլ նստեց հայոց գառի վրա: Ամբողջ հայոց արքունիքը լցվեց պարթևներով: Թագավորների մտերիմները, կամանոցը, զինվորականները, պալատականները, պաշտոնյաները աստիճանաբար նրա ազգակցներից և ցեղակիցներից նշանակվեցին: Բնականաբար, մեծապաշտաններում պահլավերեն բազմաթիվ բառեր մուտք գործեցին հայոց լեզվի մեջ: Միա, այս մերձեցումների ընթացքում հայերենին անցան քառերի թվում են նաև **ճամբար**–ը և **ճամպուրկ**–ը: Նրանք արյունակիցներ են կամ ավելի ճիշտ՝ երկվորյակներ:

Աստվածաշնչում արդեն **ճամբար**–ը օգտագործված է «բանակ, բանակատեղի» նշանակություններով: Պահլավերենը գիտե բառը «չրջանակ» նշանակությամբ: Պարսկերենը նաև «կապ, երկաթյա օղակ, տակառի շրջանակ» և այլն, որից թուրքական լեզուների զոնբեր՝ «երկաթյա օղակ»: Չայերենի բարբառներն էլ ունեն **ճամբարակ**՝ «ճուպակ, երկաթյա շոթա, փոկ», որով գուրբանը խարդափայ են կարպուլ: Պահլավերենում *čambar*՝ **ճամբար**–ը նշանակում էր նաև «զվիսի ակա, վզնոց, կամացի վզկապ» և այլն: *Manjalk*–ը նույնպես փոխաբերում էին **գումարտակ** կամ **ճամբար** բառերով: Սակայն այստեղ հարց է առաջանում. «Ի՞նչ կապ կարող է լինել **զվիսակապի**, **բանակի**, **ճամբարի** միջև: Բանն այն է, որ հնում, երբ զորքերը հանգստանում էին մարտից առաջ և կամ հեռավոր երթի էին դուրս գալիս, իրենց վրանները դասավորում էին **շրջանամու** թշնամու հանկարծակի գրոհի դեպքում կուռ պաշտպանություն ապահովելու նպատակով: Միա վրանների մեծ **շրջանամու** դասավորությունը սկսեցին

194. ՀԵՆՐԻԿ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐ

Ինչպես մարդիկ, այնպես էլ բառերը կարող են հեռավոր ազգականներ ունենալ, այսինքն, միևնույն տոհմից սերված լինելով, կարող են նրանց նույնիսկ գաղափար չունենալ միմյանց գոյության մասին, և միայն ազգանվան հիմքում ընկած արմատը (բառը) կարող է հուշել նրանց երբեմնի հարազատության մասին կամ արյունակցական կապի մասին: Եվ այսպես, անցնելով քաղցրեղի փողոցներով, կարողում ենք պարենային խանութների ցուցափեղկերում դրված պահածոների վրա **консерва**, իսկ քիչ այն կողմ՝ մի մեծ շինության վրա, ուր ելունուտ են անում բազմաթիվ երիտասարդներ իրենց երաժշտական գործիքներով, և որտեղից զանազան գործիքների հնչյուններ են լսվում, կարողում ենք կոնսերվատորիա: Ի՞նչ կապ կարող է լինել կոնսերվի, այսինքն պահածոյի և կոնսերվատորիայի՝ երաժշտանոցի միջև: Պարզվում է, որ կապը շատ անմիջական է, թեև թվում է, թե երկու բառերի արմատների մեծամասնությունը կարող է պատահական լինել: Սակայն ոչ, այստեղ պատահականություն չկա, այս երկու բառերի մեջ միևնույն ցեղի կամ պապի «արյուն» է հոսում: Չե՞ք հավատում, զոնենք նրանց «տոհմաձառը», և դուք այս հարցում կհամոզվեք: **կոնսերվատորիա** բառի հիմքում ընկած է լատիներեն conservo՝ «պահպանել, պահել» բառը: Միջին դարերում Իտալիայում որքանոցները կոչվում էին conservatorio, մինչև 16-17-րդ դարերը այնտեղ պահվող երեխաներին հիմնականում արհեստներ էին սովորեցնում: Սակայն հետագայում 17-րդ դարից սկսած, այս որքանոցներում սկսեցին ուսուցանել նաև երաժշտություն և աստիճանաբար conservatorio՝ որքանոց-օթևանները ձեռք բերեցին երաժշտանոցների համբավ: Ովքեր իրենց երեխաներին ցանկանում էին երաժշտական կրթություն տալ, բերում էին կոնսերվատորիա: Եվ այսպես, 18-րդ դարում կոնսերվատորիաներից դուրս եկան բազմաթիվ երաժիշտներ ու երգահան-կոմպոզիտորներ: Իտալիայի օրինակով կոնսերվատորիաներ հիմնադրվեցին նաև Ֆրանսիայում, օրինակ՝ Փարիզում 1793 թ. հեղափոխության



ժամանակ, և այլուր՝ ավելի ուշ: Եվ այսպես, conservatorio բառի մասին կանանկական կոնսերվատորների կուսակցության անունը, որոնք վարում են պահպանողական քաղաքականություն, այսինքն նրանք պահպանողականներ են, ուրեմն, այս բառն էլ է ազգական որքանոցին և կամ երաժշտանոցին: Իսկ ո՞ր մնաց կոնսերվա՝ «պահածո» բառը, ե՞րբ ծնվեց այն, և ո՞րտեղ է նրա հայրենիքը: 18-րդ դարի ֆրանսիական բնախոյզ Գեյ-Լյուսակը առաջինն էր, որ միտք արտահայտեց ուսեստեղների երկարատև պահպանման հնարավորության մասին, եթե մախպես եռացված, այսինքն

Լատիներենի conservo արմատից է ծագում նաև անգլիական կոնսերվատորների կուսակցության անունը, որոնք վարում են պահպանողական քաղաքականություն, այսինքն նրանք պահպանողականներ են, ուրեմն, այս բառն էլ է ազգական որքանոցին և կամ երաժշտանոցին: Իսկ ո՞ր մնաց կոնսերվա՝ «պահածո» բառը, ե՞րբ ծնվեց այն, և ո՞րտեղ է նրա հայրենիքը: 18-րդ դարի ֆրանսիական բնախոյզ Գեյ-Լյուսակը առաջինն էր, որ միտք արտահայտեց ուսեստեղների երկարատև պահպանման հնարավորության մասին, եթե մախպես եռացված, այսինքն

ճամբար անվանել, քանի որ վրաններն ասես շրջանակի, օղակի, կապի մեջ էին անված, որի պատճառով էլ պատկերավոր **ճամբար** արտահայտությունն առաջացավ: Չեղազայում, այսինքն արդեն մեր օրերում, սկսեցին **ճամբար** անվանել նաև մանկական, դպրոցական վրանների տեղը: Այս բոլորը հասկանալի էր, բայց ի՞նչ կապ կարող է լինել **ճամբար**-ի և **ճամպրուկ**-ի միջև:

Միջին դարերում զանազան հեղինակներ սկսեցին օգտագործել **ճամբրայ** բառը «ծրար, բողջա», «ճամփորդական կամ սովվի պարկ» նշանակությամբ, ինչպես իտալացի հայագետ Ռիվոլան է օգտագործում 16-րդ դարում. «ճամպրուկ-ճամբի պաշար կամ նրա ծրարը, որ և **ճամբրայ**», իսկ «Հայսմավորքում» զոնում ենք. «...Մազեայ մախպես իրեանց... և **զճամպրուկ** նոցա» և այլն: Եվ քանի որ միջին հայերենում ուղղագրության կանոնները գրաբարի նման խիստ շրջանակների մեջ չէին, ապա յուրաքանչյուր գրիչ գրում էր իր բարբառի ազդեցության տակ կամ իր իմացածի պես, որից էլ աստիճանաբար տարածում գտավ **ճամպրուկ** ձևը՝ նաև որոշ չափով իմաստափոխված: Այսինքն «ճամփորդական **պայուսակ**» նշանակությամբ, որը ասկայն **ճամբար**-ի հարազատ երկվորյակն էր:

Եվ այսպես, մենք ողջ **ճամբար**ն այսօր կարող ենք տեղավորել մեր **ճամպրուկ**-ում, որովհետև նա գրվում է պ-ով և ոչ ք-ով, որի պատճառով «չի երևում» նրանց արյունակցներ լինելը:

193. ՕՐԻՆ ԱՍԵՆ, ԹԵ՞ ԱՖԵՐԻՍ ԿԱՍ ԻՆՉՈ՞՞Ւ ԵՆՈՒՅՆ ԵՍԻՐԵՐ ԶԵՎՈՎ

Գրաբարում **օրին** արմատից ունենք **օրհնութիւն, օրհնել, օրհնած** և այլն ձևեր, որոնց իմաստը պարզ է յուրաքանչյուրին «բարեմարդել, զովաբանել, փառաբանել, աղոթել» (որևէ մեկին կամ աստծուն): «Եկեալ են **օրին** ասել եկեղեցիդ» (Եկել են այդ եկեղեցուն բարեմարդելու):

Ինչպես լեզվաբաններն են պարզել, հայերեն **օրին** արմատը ծագում է պահլավերենի րո՝ «սիրել, հարգել, զովել, աղոթել» արմատից, որին հավելված է սկզբից a-ն: Չէ՞ որ գրաբարում գրվում էր **արհնել**, իսկ հայտնի է, որ հայերենի ր-ն «տվողություն» ունի մյուս հնչյուններից «առաջ ընկնելու», այս իսկ պատճառով էլ թեև **afirin-am-ը** պիտի հայերենում հնչեր **ափրին** (չէ որ այն ժամանակ **ֆ-ն** չկար հայերեն այբուբենում), սակայն, ր-ն, առաջ ընկնելով հարևան հնչյուններից, դարձրեց այդ բառը **արհն**-ել, իսկ հետո էլ **ալ-**ի օ ղառնալու պատճառով, գոյացավ **օրհնել**-ը: Բայց պահլավերենից էլ իրանական մյուս լեզուները փոխ առան այս բառը և սկսեցին հնչել **afirin** «զովեստ, աղոթք», ինչպես պարսկերենն ունի, որից էլ հայերենի բազմաթիվ բարբառներ և թուրքերենը վերցրին այս բառն արդեն **afeirin**, **afeirim** ձևով: Ժողովուրդն արտասանում է **աֆարին**, **աֆերին**: Արևմտահայ գրողներից շատերը գործածում են **աֆերին**-ը «կեցցես, ապրես» նշանակությամբ, սակայն խորք չէ այն գործածելը նաև արևելահայ բարբառներում և արևելահայ զրական լեզվում: Այսպես, օրհնել, Գ. Քոչարյան ունի. «Ապրիս, տղա, **աֆարին**, դատի լավ սերտել ես» կամ Եփրատագաղթի մոտ. «**Աֆերին**, սիրեցի պարզախոսությունը, **աֆերին**»:

Եվ այսպես, նույն բառը երբեմն երկրորդ անգամ հայտնվում է որևէ լեզվում մեկ այլ կերպարանքով կամ տարազով, այն աստիճանի փոխակերպված, որ բոլորովին նոր կամ անծանոթ բառի տեղ է դրվում: Ահա այսպիսի օրհնակի ապացույց են հանդիսանում հենց հայերենի հին **օրհնել** և նոր փոխառություն **աֆերին** բառերը, որոնք միևնույն բառն են՝ տարբեր տարազների մեջ:

մանրագրերով, խմորող, ցեխող էակներից գերծ կերակուրները փակվեին, պահվեին որևէ աճողի մեջ: Եվ ահա 1804 թվականին Ֆրանսիացի խոհարար Ալպարտը առաջինը, մետաղյա և ապակյա առանձնուրում տարբեր ուտելիքներ փակելով (հերմետիկ), եռացրեց և պահեց որոշ ժամանակ: Նրա փորձը հաջողվեց և տարածվեց Ֆրանսիայում, ապա՝ Եվրոպայում՝ ստանալով conserve «պահածո» անունը: Նոր բառի հիմքում, ինչպես տեսնում ենք, դարձյալ լատիներենի conservo «պահպանել, պահել» արմատն է, որը հեռավոր կապ անգամ չունի երաժշտության և անգլիացի կուսակցականների քաղաքական գծի հետ: Իհարկե պահածո ստանալու կամ պատրաստելու պրոցեսն էլ սկսեցին անվանել conservation՝ կոնսերվացիոն կամ պահածոյացում, որով մենք կարող էինք վերջացնել մեր այս գրույրը. եթե գրականության մեջ, զրքերում և մամուլում հայտնված չլինե՞ր հիշյալ բառերի և մեկ ազգականը՝ conservation՝ կոնսերվացիան, որը ուտեստեղենի կամ երաժշտության հետ նույնպես առնչություն չունի: Այսօրվա հասկացողությանը կոնսերվացիա է կոչվում որևէ շինարարության դարարեցումը, ընդհատումը և բժշկության մեջ որևէ կենդանի մարմնի մասի սառեցումը որոշ ջերմաստիճանի տակ:

195. ԲՐԵՎԿԱՆ ՀԱՆՅԱԳՈՐԾԸ ԶՈՒՐԱՅԻ ՄՈՏ ՊԻՏԻ ԼԻՆԻ

Ասորերենից հայերենը փոխ է առել **բուրայ**, **քրայ** կամ **քրե** բառը, որ նշանակում է «հալոց, հնոց»: Կերքին **քրե** մեզ առաջացել է **քրայ**-ից ավելի ուշ շրջանում, քանի որ գրաբարյան —այ՛ երկբարբառը միջին հայերենում սկսել էր արտասանվել —է, ինչպես ունենք **նանայ—նանե**, **միջոբայ—միջօրե**, **հրեայերեն—հրեերեն** և այլն. հետևաբար, նաև **քրայ—քրե**: **Քրայ**—ներում կամ **քրե**—ներում (գրում էին նաև **բուրայ**) մետաղ էին ձուլում և զտում էին մյուս տարրերից: Մեծ **քրե**—ները գտնվում էին հանքահորերում, այսինքն՝ հանքերին անմիջապես մոտ, և այդ հալոց—հնոցները մերթ անվանվում էին **քրեական**, մերթ **մետաղը**: Օրինակ՝ Ագաթանգեղոսը վկայում է, թե ինչպես սուրբ Ներսեսը կարգադրեց. «Դարձցին ամենայն դատապարտեալք, որք ի **քրեական** մետաղս իցեն» (Որ վերադառնան բոլոր դատապարտվածները, որոնք հանքերի **քուրաներում** են) կամ «Լուծանել հրամայէր զվալանաւորան, և որք ի **քրեական** մետաղս են» (Դրամայեց արձակել կալանավորներին, որոնք հանքերի **քուրաներում** էին):

Ահա, ինչպես կոտանւմ եք, ծանրամեղ հանցագործներին, եղենագործներին հնում դատապարտում էին մետաղահանքերի հալոցներում, մետաղածուլարաններում **քրեներում** աշխատելու: Այս աշխատանքը համարվում էր ամենածանրը, քանի որ նման **քուրաներում** աշխատանքը պրիմիտիվ միջոցներով էին կատարվում, այն էլ մի քանի հազար աստիճանի հասնող ջերմության տակ: Այստեղից էլ **քրեական** պատժաչափ, **քրեական** պատիժ, **քրեական** հանցանք, **քրեական** դատապարտյալ, **քրեական** մեղք հասկացությունները:

Ներկայումս **քրեական** հանցագործ արտահայտությունը հավասարազոր է **ռեցիդիվիստին**, **քրեական օրենսգրքը**—ը հանցագործությունների պատժաչափը սահմանող օրենսգրքին և այլն, սակայն եթե մի պահ հիշե՞ք բառի ծագումը, ապա



կարելի է ժպտալ, որ **քրեական հանցագործ**—ը նշանակում է վառարանի կամ հնոցի հանցագործ, **քրեական օրենսգիրք**—ը՝ վառարանի կամ հալոցի օրենսգիրք և այլն: Ռուսերենում **քրեական** բառի համարժեքն է **уголовный**, որ **голова** բառից է, այսինքն՝ «զուլխ կտորող, սպանող»:

196. ԱՐՄՈՐԱՎԱՄՅՐՆ ԷԼ ՄԵՏԱՂ ԼԻՆԻ ԵՎ ՂԱՆԱ ԿՉԻ ՉԱՐԴ՝ ՄԵՂԱԼԻՈՆ ԿԱՍ ՄԵՂԱԼ

Բոլոր դպրոցականներն էլ այսօր կարող են սահմանել ինչ բան է **մետաղը**, և կարող են քվարկել քսանից ավել անուններ՝ երկաթ, պղինձ, արծաթ, ոսկի, անագ, արծիճ, կապար և այլ հանքանյութեր, որոնք **մետաղներ** են կոչվում: **Մետաղը** հունարեն բառ է՝ **metallon**-ից, նշանակում է **հանք, բուլք**, այն տեղը, ուր հանում են և հալում հանքանյութը: Եվ քանի որ **մետաղներ** հանելու, ծուլելու աշխատանքները հնում խիստ պարզունակ էին, ոչ կատարելագործված և սարսափելի դժվար, ուստի դրանք կատարել էին տալիս դատապարտյալներին, գերի ընկածներին: Այդ իսկ առումով էլ **մետաղ** կամ **մետաղը** հասկացությունը գիտակցվում էր նախ որպես **տաժանավայր, պատժավայր** և ապա միայն՝ հանքավայր և մետաղածուլարան: «Թուրք դաշանց» զրքում կարդում ենք. «Դարձցին ամենայն դատապարտեալք, որք ի քրեական մետաղս իցեն» (Կերադարձվեն թող բոլոր դատապարտյալները, որ մետաղածուլարաններում են): Խորենացու «Հայոց պատմության» մեջ կարդում ենք թեոդոս Կայսեր կատարած բարեգործությունների մասին, թե ինչպես ուղղակիառ հողերակալներին արքայապարտյալներից ազատել տվեց. «Դարձոց զամենայն հարս սուրբս, որք յաղագ ուղղակիառութան արտասահմանեալ էին ի **մետաղս**» (Այստեղ արտասահմանեալ նշանակում է «արտաքսված, վտարված»): Կամ «Արտասահման եղեն ի **մետաղս** մշտնջենաւորս» (Վտարվեցին **մետաղահանքերը** հավերժաբար) և այլն: Նկատում ենք, որ **մետաղ** բառի հետ միասին օգտագործվում է **քրեականը**, որի մասին ասածնի զույգ ունենք:

Մետաղ բառից է ծագում նաև **մեղալիոնը** կամ կրճատ՝ **մեղալը**: **Մեղալիոնը** ոսկյա ծուլված կամ դրվագված զարդանկարներով կամ դիմանկարներով, կլոր, մկան, հաճախ շրջալով, վզին կրելու կամ զարդանախշ և ծեփածո, փորագիր խճանկարն է, երբեմն նաև մասուց կրելու տուփիկը:

Իսկ **մեղալը** որևէ նշանավոր իրադարձության կամ նշանավոր գործիչներից նվիրված մեկ կամ երկու երեսանի մետաղյա թանկարժեք պատկերազարդ դրվագված զարդանախշ պետական նշան է, որ կրում են նաև ժապավենով կրծքին, պարանոցին: Առաջին անգամ այն թողարկվել է Իտալիայում 14-րդ դարում, ապա՝ մյուս երկրներում: Որպես պարզև՝ **մեղալն** առաջին անգամ սահմանել է շվեդական Ռուստավ Աղոլֆ թագավորը՝ սպանների պարզևատրելու համար, 17-րդ դարում, իսկ 18-րդ դարում նաև Լեհաստանում, Ֆրանսիայում, Պրուսիայում և ապա՝ Ռուսաստանում: Հայոց մտտ առաջինը **մեղալ** թողարկել են Մխիթարյան միաբանները:

197. «ԳԻՆԱԿԱՆ ՓԱՅՏԸ» ՈՐՊԵՍ ՀԱՍԵՍՈՒՆԸ, ՆՈՒՅՆ ԻՆՔԸ՝ ԴԱՐ Ի ՃԵՆԻԿ ԿԱՍ ԿԻՆԱՍՈՆ, ԵՐԲԵՍՆ՝ ԿԱՍԻՍՈՆ

Չայ հին մատենագրության մեջ ավանդված են բազմաթիվ համեմունքների անուններ, որոնցից դարչինը—ը մի քանի գրություններով՝ դար ի ճենիկ, դարսենիկ, դարիսեն, դարսենի, և վերջապես դարչին: Իսկույն նկատվում է, որ միևնույն բառը կոխ է առնվել մի քանի անգամ տարբեր լեզուներից. պահլավերենից (դար ի ճենիկ), արաբերենից (դար ի սենիկ և այլն), միջին պարսկերենից և բուրբերենից (դարչին) և այլն, բառացի այն նշանակում է «չինական փայտ»՝ Չինաստանից ներմուծվելու պատճառով: Լայնորեն օգտագործվել է դարչինը նաև միջնադարյան բժշկության մեջ: Դարչինն այնքան է «հայացել», որ նրանից կազմվել է դարչնագույն բառը, որպես համարժեք շագանակագույնի կամ կինամոնագույնի: Ի դեպ, կինամոնի մասին քիչ հետո:

198. ԶԱՌԱՆՅԵԼ ՏԿՈՂ ԵՎ ԳԱՂՏԻՔՆԵՐԸ ՍԱՏՆՈՂ ԲՈՒՅԱԸ՝ ԿԻՆԱՍՈՆԸ

«Աշխարհագրոյցում», Աստվածաշնչում և միջնադարյան բժշկարաններում հանդիպում ենք կինամոն բառին, որի արժանիքների մասին Մխիթարը Երեմիայի մեկնությունում հետևյալ ձևով է նշում. «Մի ի խառնուածոցն ինկոց կինամոնն է պտուղ բանջարոյ, որ և գտանի ի Տնորիս հայոց և յայլ աշխարհ, և ոչ միայն անուշահոտ է, այլ գոյ և գիտական գորութիւն ի նմա. զի ընդ քուն խոսել տայ և յայտն գծածուկս սրտի» (Խունկերից մեկը կինամոնն է բանջարի պտուղը, որ հայկական Տնորիցում է լինում և այլ երկրներում. ոչ միայն անուշահոտ է, այլ և նրանում գիտական գորություն կա, քանի որ խոսեցնում է քնի մեջ և սրտի գաղտնիքներն է բացում):

Չերողոսի վկայությամբ՝ կինամոնը—ը կամ կինամոնը—ը ծագում է եբրայերենի կինմամոն ձևից, իսկ սա էլ փյունիկյան լեզվից է վերցված: Դավամաբար, սեմական ծագումը ճիշտ է, քանի որ արամեերենում կինմամա բարդ բառ է կինու՝ «եղեգ», ամու՝ «ընտիր» բառերից, որով բնորոշվել է այս բույսը որպես բարձր արժանիքներով օժտված եղեգ:

Երբեմն և այլ բացատրություն են տալիս, ինչպես տեղեկանում ենք կասիմոն, կասիա, կասի՝ «խնկեղեգ» բառի բացատրության մեջ: Եսայի Նշեցին գրում է. «Կասիայն ասէն. և նա մանրուածու խունկ է», իսկ «Նոր հայկազյան բառարանի» հեղինակները գտնում են, որ կինամոնը ամուն է «նաև ի դաշտին կինամմա, վասն որոյ և կինամոնն ասի»:

199. ՆԵՂՈՍԻ ՇՈՒՇԱԸ՝ ՆՈՒՆՈՒՖԱՐ

Սայրը կանչում է արջկան. «Նունուֆար, Նունիկ, շուտ արի»: Դայկակա՛ն է կանացի այս անունը: Այո: Այնքան հայկական, որ Նունիկը, թվում է, նրա կրճատ ձևն է, մինչդեռ այն կարող էր գոյանալ նաև Նունէ—ից:

Միջնադարյան բժշկարաններում նկարագրվում է Նունուֆար ծաղիկը այսպես. «Իբր շուշանն ի ջուրս բժշկութիւն ցաւոց, զոր նունուֆար կոչեն» (որպես ցավեր բուժող ջրերի միջի շուշանը, որ նունուֆար են անվանում): Ուրեմն, Նունուֆարը կամ այլ ձեռագրերում համդիպող նունոֆարը, նելուֆարը, միլուֆարը ջրաշուշանն է կամ հարսնամատը (սպիտակ), այգածաղիկը և կամ կոկոզը (վերջինս նաև կալա է կոչվում):

Տախապես հայերենի նունուֆարը կամ նունոֆարը հնչել է նելուֆար և միլուֆար, և դրանք ծագում են միլուֆար ձևից: Բառասկզբի Գ—ի ազդեցությամբ նրանից հետո գտնվող լ—ն ամռանմանվել է նրան և վեր ածվել Գ—ի, իսկ ի ծայնավորն էլ հաջորդ ու—ի ազդեցությամբ վեր է ածվել ու—ի, և ահա արդյունքը միլուֆարը դարձել է նունուֆար: Բայց ինչո՞ւ նունուֆարն է միլուֆարից և ոչ հակառակը: Ճիշտ է տրամաբանված և ժամանակին է տրված հարցը: Բանն այն է, որ միլուֆար բառը նշանակում էր «Նեղոսի շուշան», Նիլ՝ «Նեղոս» և ֆար՝ «շուշան» բառերից, ուստի և չէր կարող միլուֆարը նունուֆարից լինել, այլ միայն հակառակը:

Չին Եգիպտոսի բնակիչները իրենց գետն անվանում էին Մահալ կամ Մամալ, որ նշանակում էր «ջուր»: Գույներն ընկալեցին այն միլ ձևով, որն էլ «խուճացրին» իրենց —ս անանցը կցելով (որից՝ հայերենի Նեղոսը—ը), սակայն միլուֆար բառում դեռևս մնում է միլ կարճ ձևը:



200. ԻՆՉՊԵ՛Ս ԱՆՎԱՆԵԼ ԳՐԱԽՏԸ... ԾԱՌԱՍԱՄՆ՝ ԹԵ՛ ԶԱՆԿԱՊԱՍԱԾ...

Սուրբ գրքում Աստծուն է վերագրվում դրախտի ստեղծումը, որը արդար մարդկանց երանության այգին էր: Այս իսկ կապակցությամբ է ասված «ՏՆկեաց Աստուած դրախտն յեղեմ» (ՏՆկեց Աստված դրախտը Եղեմում): Բայց չէ՞ որ դրախտ պահլավերենում, իրանական լեզուներում հենց նշանակում էր «ծառ»: Ուրեմն, այս բառը պահլավերեն ու պարսերեն էին բերել իրենց հետ Չայոց երկիրը: Մինչև Աստվածաշնչի բարգմանությունը դրախտ—ը գործածվում էր հայոց մեջ հենց նախկին ծառ նշանակությամբ էլ, և դրանից հետո էլ, օրինակ, դրախտ նունենաց նշանակում էր «նոնեմիների ծառաստան», կամ մեկ այլ նախադասության մեջ՝ «Կարք հարանցում», «Ի դաշտ մի մեծ, որ լի էր բարձրագույն դրախտիք» (Մի մեծ դաշտում, որ բազմազան ծառերով էր լցված): Իհարկե, դրախտ արմատից հայերենում բազմաթիվ այլ բառեր էլ կազմվեցին, ինչպես՝ դրախտային՝ «ամհոգ, փափուկ, հեշտալից», դրախտաբուղի, դրախտապան, դրախտատունկ, դրախտաճուռ և այլն: Սակայն դրախտ իմաստով եբրայերենում և ասորերենում գտնում ենք Աղեմ, Աղին կամ Եղեմ բառերը, որոնք բարգմանաբար գործածվում են նաև հայերենում (ինչպես տեսանք վերևում բերված նախադասության մեջ և այլուր): Տախապես սեմական այս բառը՝ aden, edem, edem, հավանաբար, «դաշտ» է նշանակել, ինչպես ցույց է տալիս ասորերենի idin «դաշտ» բառը: Այս արմատը նաև «փափկություն, զրգանք, հեշտություն» էր նշանակում և հենց այս իմաստից էլ Եղեմի «դրախտ» նշանակությունը: Դայերենում Եղեմային, Եղեմական, Եղեմածին, Եղեմաբուղիս,

եղեմահիւս, եղեմեան և այլ ձևերի հիմքում **եղեմն** է, որ փափուկ, հեշտ և անոդ կյանքի իմաստն է արտահայտում, այս իսկ առումով էլ ասում ենք **դրախտ փափկության կամ դրախտ եղեմային (եղեմական)**:

Եվրոպական շատ լեզուներում սկսեցին **դրախտ** նշանակությամբ գործածել **պարտեզ** բառը, որը նույնպես իրանական ծագում ունի և կազմված է pairi «շուրջը», diz, daeza «պատվարած», բառացի «շուրջը դիզած» (հիշենք ռուսական **огород** «ցանկապատած»): Այս բառը պարսկերենից (պահլավերենից) անցել է ասուրերենին paradis, ասորերենին pades, եբրայերենին pades, արաբերենին fir-dus, որից էլ **Ֆիրդուսի** «դրախտաբանկ», և եբրայերենից էլ եվրոպական մյուս լեզուներին՝ լատին. Paradis, գերման. Paradies, իտալ. paradiso, ֆրանս. paradis և այլն: Քսենոփոնը վկայում է, որ «Այն այգիները, որոնք **պարտեզ** են կոչվում, լքված են բոլոր այն գեղեցիկ և լավ բաներով, որ երկիրը արտադրել կարող է»: Բայց զարմանալի բաներ են կատարվում լեզուներում: Իրանական լեզուներից **դրախտը** և **պարտեզը** անցել են այլ լեզուներին որպես **դրախտ** հասկացողություն, մինչդեռ պարսկերենը իր համար հորինել է մեկ այլ բառ՝ **դրախտ** նշանակությամբ, որ հնչում է **բեհիշթ** behišt, իսկ **դրախտային** նշանակությամբ ասվում է **բեհիշթի** behišt: Դենց այս բառն էլ մեր միջնադարյան բանաստեղծներն օգտագործել են իրենց սիրո տաղերում.

Աղվոր, իմ հազար աղվոր,
Դրախտին բեհիշթի խնծոր:

201. ԲՆԱԿՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՅՐԵՆ Է, ԲԱՅՑ ԱՆՈՒԸ՝ ՏԱԶՂԵՂ, ՊՂՊԵՂ, ԲԻԲԱՐ

Չայ հին գրականության մեջ **տաքղեղ** բառը հայտնվում է բավական ուշ՝ 15-րդ դարից: Զաքարիա Մարկավազի մոտ տրվում է այս բացատրությամբ՝ «**պղպեղ**, որ **տաքղեղ**»: Ենթադրվում է, որ այս բառը կազմվել է մասամբ թուրքերենի isot (is+ot) «տաք խոտ» բառի պատճենմամբ: Իսկ մինչ այդ հայերը գիտեին **տաքղեղ պղպեղ** կամ **պղպիղ** անվամբ: Նույնիսկ գիտեին նրա հայերենիցը. երբ շեշտում էին. «Չնդկային աշխարհն, ուստի գային **պղպեղ** և մետաքս»: Եվ իսկապես **պղպեղի** հայերենիցը համարվում է Չնդկաստանը, որտեղ այն ուներ քիլո հնչումը: Բառն անցավ հավանաբար այդ հնչմամբ պաղլավերենին, որից էլ հայերենին դառնալով **պղպեղ** կամ **պղպիղ**, սանսկրիտին pippali, պարսկերենին pīpīl, արաբերենին fulful, վրացերենին pipili, հունարենին pēperē, լատիներենին pipere, անգլերենին pepper, հոլանդերենին peper, թուրքերենին biber և այլն: Եվ ահա թուրքերենից **բիբար** ձևով նորից վերահաստատվեց բառը բարբառներում՝ թողնելով գրական **պղպեղ** ձևի համար միայն հատիկավոր սև **տաքղեղի** գիտակցումը, իսկ կանաչ տաքղեղի իմաստով և **տաքղեղ** է գործածվում, և **բիբարը**: Կանաչ և թույլ կծու **տաքղեղի** մի տեսակի համար գործածվում է **ծիծակ** բառը, որը փոխ է առնված վրացերենից, ուր պարզապես cicaki նշանակում է **տաքղեղ**:

Եվ ահա սկսվում է վիճաբանությունը, թե որն է սրանցից հայկականը՝ պատճենված **տաքղեղը**, մեզ երկար ուղեկցած **պղպեղը**, թե՛...

202. ԲԱԿԱԼԵԱՅՈՒՄ ԲԱԿԱ, ԳԱՍՏՐՈՆՈՍՈՒՄ՝ ԱՏԱՄՈՔՍԻ ԲԱՆԵՐ, ԻՍԿ ՆՊԱՐԵԴԵՆԻ ԵՎ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԽԱՆՈՒԹԵՐՈՒՄ ԻՆՉ...

Բնականաբար, յուրաքանչյուր առարկայի, իրի, մթերքի համար առանձնացված, մասնագիտացված խանութներ գոյություն ունեն, և ոչ ոք չի կարող մտածել, որ լրագրերի կրպակում հանքային ջրեր և հացի խանութում կոճակներ կարող են վաճառել: Բայց ի՞նչ պիտի վաճառեն **բակլայ**երում. ինչպե՞ս է հայտնվել այս բառը մեր խանութների ճակատին և մեր խոսակցական լեզվում:

Գրավոր վկայությունների համաձայն **բակլան** հայերին ծանոթ է միջին դարերից: Այն լրուր ցման պատիճավոր բույս է և լրուր ցման էլ օգտագործվում է և դալար կանաչ պատիճներով, և՛ հատունացած հատիկների ձևով: **Բակլա** անվանումը հայերը փոխ են առել արաբերից, արաբերենում baqla կամ baqla, ծագում է baq «բույս, արոտ, խոտ, բուսե՛նլ» արմատից, այսինքն՝ հիմնական իմաստը կանաչ, դալար, որի պատճառով էլ այդ բույսի վաճառքով զբաղվողներին սկսեցին անվանել baqqa՝ **բակկալ** (բարբառային ձևով **բախկալ**): Բնականաբար, **բակկալ**–ները **բակլա**–յի հետ միասին վաճառում էին նաև այլ տեսակի կանաչներ և, ինչու չէ, նաև ընդդեմները:

Իսլամի տարածման հետ միասին արաբերեն bakla–ն տարածվեց շատ լեզուներում՝ պարսկերենում bakla, քրդերենում bacla, թուրքերենում bakla, իսկ թուրք–թաթարական լեզուների միջոցով էլ անցավ բակլայան ժողովուրդներին բուլղարներին, սերբերին, ալբանացիներին՝ bakla ձևով: Եվ այսպես ռուսերենում արդեն կանաչիների խանութն սկսեցին անվանել **бакалейный** կամ **бакалея**, իսկ վաճառողին՝ **бакалейщик**: Եվ ահա ռուսերենից երկրորդ անգամ հայերեն մուտք գործեց **բակլայեյա** բառը որպես նպարեղենի, մթերքների խանութ: Ի դեպ, այժմ **բակլայե**–նում կարող եք գնել ավելի շատ այլ մթերքներ, քան **բակլա**:

Քանի որ խոսք եղավ **նպարի** և **պարենի** մասին, ապա խոսենք նաև նրանց «կենսագրության» հիշարժան պահերից: Ի՞նչ եք կարծում, քանի՞ քայլ է **պարենից** մինչև **նպար**: **Նպար** կամ **նպարակ** գրաբարում գործ է ածվում «պարեն, պաշար, ուտելիք» նշանակություններով: Սիա Ստվածաշնչից մի հատված. «Տասն ջորիս նպարակավորս պաշարաբարծս» (Տասը ջորիներ **նպար** և պաշար կրողներ): **Նպարը** կամ **նպարակը** սեմական աշխարհից պիտի անցած լինի հայերենին, հնարավոր է դեռևս արքայական շրջանում և կամ արամեական: Գտնում ենք արքայերենում nepar, nepertu «պաշար, ապրուստ» բառը, որն էլ իր հերթին ծագում է epu «ապուր, ապրուստ» բառից: Դուք արդեն գլխի եք ընկնում, որ արքայերեն epu–ից կարող էր ծագել նաև հայերենի **ապուր**–ը, և չեք սխալվում: Բայց մենք դառնանք **նպար**–ին: Դենց այս բառից էլ ստեղծվել է **նպարեղեն**–ը և **նպարեղենի** խանութ ցուցանակ: Եվ այսպես, մեզ համար պարզվեց նաև **ապուր** և **նպար** բառերի «ազգայնություն» հարցը, իսկ եթե զտել ենք **ապուրը**, ապա պարզ է դառնում նաև **ապրել**–ի նշանակությունը, այսինքն **ապրել** կարող է **ապուր** կամ **ապրուստ** ունեցողը: Մենք կխոսենք նաև **պաշար**, **պարեն**, **թոշակ**, **ռոճիկ** բառերի ծագման և ռուսերենից եկած մի ցուցանակի՝ **զատարոնոմի** մասին ևս:

203. ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆԸ՝ ԳԱՍՏՐՈՆՈՍ, ՈՌՃԻԿ ԵՎ ԹՈՇԱԿ

Չէ՞ որ մթերային խանութները կոչվում են նաև այլ կերպ՝ **гастрономия** կամ հայացրած՝ **գաստրոնոմ**: Ինչպե՞ս առաջացավ այս բառ-ցուցանակը: Այն ծագում է հունարենի *gaster*՝ «ստամոքս» բառից, որին ավելացվել է *-nomia* ածանցը: Այսինքն բառն ամբողջությամբ ընկալվում է «ստամոքսի համար մթերքների վայր»: Ի դեպ, հունարենի *gaster* բառից նաև ստամոքսի հիվանդության անվանում՝ *gastrit*:

Միա ժամանակն է, որ խոսենք նաև վերևում հիշատակված **ռոճիկ**-ի և **թռչակ**-ի մասին ևս: Ի դեպ, **ռոճիկ**-ը իրանական *ruzi*՝ «օր, օրական» բառից է ծագում: Ռոճիկ ներկայումս նշանակում է աշխատավարձ, որ տրվում է ոչ թե ամեն օր, այլ ամիսը մեկ անգամ: Այսինքն՝ նախկին օրվա վարձը կամ օրապահիկը ներկայումս ընկալվում է «ամսվա վարձ» նշանակությամբ: Որոշ բարբառներում **ռոճիկ** է կոչվում նաև **սուճուխ-սիճոքը**: Պետք է նշել, որ **թռչակ**-ը նույնպես պահպանվելուց փոխառյալ բառ է, որ զբաբարում գործածվել է «ծամփի պաշար, պարեն, կերակուր» նշանակություններով, մինչդեռ ներկայումս անաշխատունակներին, ծերերին, ուսանողներին և այլոց տրվող դրամն է և ոչ կերակուրն ու պարենը: Միա մեր կենցաղում գործածվող **թռչակառու** բառի մասին, որ **թռչակ**-ից է:

204. «ՍԻՐՈ ԾԱՌԻ» (ԿԱՍ ԱՐԳԱՎԱՆԻ) ՀԱԶԱՐ ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐԱՅԱ ԳԱՂՏՆԻԹԸ ԵՎ ԿԱՍ ԻՆՉՊԵՍ ԱՆՀԻՄՆ ԶՐՊԱՐՏԿԵԼ Ե ՍԱԹԵՆԻԿ ՏԻԿԻՆԸ

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ կա մի հատված, որ շատ իրարամերձ կարծիքների է տեղից տվել: Խոսքը **թվեյաց երգերից** մի քառատողի մասին է, ուր հետևյալն է պատմվում տիկին **Սաթենիկի** տենչանքի մասին.

Տենչայ, ասեն, Սաթենիկ տիկին,
Տենչանս զարտախուր խաւարտ
Եվ զտից խաւարծի
Ի բարծիցն Արգաւանայ:

Եթե թարգմանենք այսօրվա հայերենի, կունենանք բավական կցկտուր մի խոսք, որն էլ հենց տեղից է տվել բազմաթիվ ենթադրությունների.

Ասում են, տենչում է Սաթենիկ տիկինը
Տենչանքներ՝ զարտախուր խավարտ
Եվ զտից խավարածի
Արգավանի բարծերից:

Ինչի՞ համար քառյակը հայերենի չվերածվեց:
Ենթադրություններից ավելի հավանականը պիտի համարել Պոլ դե Լազարդի կարծիքը, որն այս հատվածը նոր պարսկերենով ընթերցեց, զարտախուր-ը՝ *zardaxar-zarda*՝ «դեղին, ոսկի» և *xvar*՝ «հուր, արև», այսինքն՝ ոսկե հուր, թեևս ճիշտ էր նաև, որ խաւարտ և խաւարծի՝ «բողբոջ, ծիլ, մարդաշ ճյուղ», զտից՝ պարսկերեն *div*՝

«մոխրագույն», ի բարծիցն՝ պարսկ. *barza*՝ «ճյուղ»-ից, իսկ Արգաւանը՝ պարսկ. *argevan*, արաբ. *arjvan* ոչ թե հատուկ անուն է, այլ բույսի, որ հայերեն **արճվան** են ասում կամ **լսնտորի**, լուսնատերևի կամ **հուղայածառ** (լատին. *Cercis L.*, ռուս. **дуграния**, անգլ. *Judas-tree, redbud*, ֆրանս. *gainier m., arbre m. debJudee*: Այս ծառի մասին գիտեին շատ վաղ ժամանակներից: 16-րդ դարի բժշկապետ Անիդրովյաթ Ամասիացին գրում է. «Արճուան-Պահար տրախտի տանն, էրդեան, արդաւանն և թէ իր ծաղկն շարապ չինան, զգիկն խումարութիւն ասանի»:

Մի խոսքով Արևելքում և Արևմուտքում այս ծառին վերագրում էին հնայական հատկություններ, և իզուր չէին նրան «սիրո ծառ» անվանում կամ **հուղայածառ**: Սաթենիկն էլ ուրեմն. «Տենչում էր իրաբորք բողբոջներ, մոխրագույն ծիլեր արճավանի (արգավանի) ճյուղերից»:

Նման մեկնությունը, թվում է, ազատում է Սաթենիկին Արգավանի ենթադրյալ սիրուց՝ թողնելով միայն տենչանքի փաստը դեպի «սիրո ծառը»:

205. ՏՈՍԱՏԻ, ՊՈՍԻԴՈՐԻ, ՈՎԿԵԽՆՉՈՐԻ ԵՎ ՊՈՍԱԳԱՅԻ՝ ԸՐԹՆԵՐԿԻ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ

Արևելյան կիսագնդի, կամ ինչպես ընդունված է ասել, Հին աշխարհի բնակիչները Ամերիկայի հայտնագործումից հետո ծանոթացան մի շարք նոր պտուղների, բույսերի ու մրգերի հետ, որոնք այնպես մտան կենցաղի մեջ, որ առանց այդ բույսերի այսօր չի կարելի պատկերացնել մեր գոյությունը: Նոր աշխարհի՝ Ամերիկայի պարզևած բույսերից են **կարտոֆիլը (կաթաքսես)**, **պոմիդորը (տոմատես)**, **ծխախոտը**, **եգիպտացորենը**, **գետնախնձորը**, **շոկոլատը** և այլն, որոնցից հատկապես անփոխարինելի են **կարտոֆիլն** ու **պոմիդորը**:

Մենք կզրուցենք **պոմիդորի** և **տոմատի** մասին: Վերջինս ծագում է Ամերիկայի հին բնիկներից մեկի՝ *ացտեկների* լեզվից, ուր **տոմատ** էր կոչվում հենց թարմ **պոմիդորը**, իսկ **տոմատը**՝ նրանից պատրաստված հյութը և ոչ թե մածուկը, ինչպես այսօր է ընկալվում: **Տոմատի** նման ածանցներ ունեն նաև **չոքոկատը (շոկոլադ)** և **կակաոսը (կակաո)**: Իսկ ինչպե՞ս առաջացավ **պոմիդոր** բառը, որը *ացտեկները* չգիտեին: Երբ իսպանացիները թարմ **պոմիդորները**, այսինքն՝ **տոմատը** բերեցին եվրոպա, Իսպանիա և արցունիքում հյուրասիրեցին պալատականներին, այս նոր բույսի համից գոհ մարդիկ այն անվանեցին **պոմի-դ-օրո** (լատիներեն **պոմոն**՝ «խնձոր» և **օրո**՝ «ոսկի» բառերից)՝ «ոսկե խնձոր»։ Եվ այսպես եվրոպայում տարածվեց **պոմիդորը**՝ նոր կնքված անվամբ, բայց չմոռացվեց նաև նրա հին անունը՝ **տոմատը**, որը կպավ նրա մածուկին: Իսկ որտեղից՞ **լոլիկը**: Հայերը որոշեցին իրենց լեզվով անվանել նորամուտ կուլտուրան և կոչեցին այն **լոլիկ**: **Լոլիկ** բառը հայերենի զանազանում գոյություն ուներ վաղուց և նշանակում էր «կլորիկ, ողորկ, կոկիկ» և արտաքին հատկանիշների զուգորդմամբ **պոմիդորը** ստացավ այս անունը: Այժմ նկատվում է նրա ժողովրդականացումը: Իսկ թե ասպագայում կարո՞ղ է գործածությունից դուրս մղել **պոմիդորին**, հայտնի չէ:

Իսկ ի՞նչ կապ ունի **պոմիդորի** հետ **պոմադան**, շտապանքը ասել: Բանի որ լատիներենում **պոմոն** և ֆրանսերենում **պոմն** նշանակում էր «խնձոր» և հին ժողովուրդների մոտ խնձորը հրաշագործ ու բուժիչ մրգերի թվին էր պատկանում, ինչպես և հայերիս մոտ. հիշենք, որ խնձորը «անմահական» է կոչվում, սկսեցին նրանից բուժիչ քսուք պատրաստել, և կոչեցին դա իտալացից **պոմմատա**, ֆրանսիացից **պոմմադ**: Իսկ հետագայում **պոմադա** սկսեցին անվանել և բուժիչ

քուրքը, և՛ խոհանոցային մածուկը, ընդ որում նաև ոչ խմնորային ծագում ունեցողները, և շրթներկը: Եվ ահա հայերս, այստեղ էլ ցուցաբերելով ձեր լեզվի անաղարտության խանդավառությունը, հորինեցինք շրթներկը:

206. ՄԱՂԱՂԱՆՈՍ

Հայերենում առկա են մեկից ավելի անուններ կրող բույսեր, որոնց թվին է պատկանում նաև կարոս—ը կամ քրևս—ը կամ նույն ինքը ազատքեղ—ը, գոռոզխոտը, քամազը: Այն կոչվում է նաև քարի կարոս, կարոս մակեդոնի և վերջապես մաղաղանոս: Արաբական բժշկարաններում այն հայտնի է Մագդունիս Ռունի անվանմամբ, այսինքն Մագդունիս հունական (հույնի):

Ենթադրվում է, որ Մերձավոր Արևելքի ժողովուրդներին մաղաղանոս անունը հայտնի է դարձել Ալեքսանդր Մակեդոնացու դեպի Արևելք կատարած արշավանքներից հետո, երբ 3—րդ դարում (մ.թ.ա) նրա զորքի հետ և նվաճումներից հետո տասնյակ հազարավոր մակեդոնացիներ ղեկավար պաշտոններ ստացան բանակում և կառավարության մեջ, իսկ հետագայում այնքան բազմացան, որ հիմնեցին Միջագետքի բարեբեր մասում նաև իրենց առանձին պետությունը Միզդունիան: Հենց այս ժամանակներից էլ արաբների և հարևան մյուս ժողովուրդների բառապաշարում հայտնվում է մագդունիս—ը կամ մագեդոնոս—ը, որ նախապես տրվել է կարոսի մի տեսակին, հավանաբար մակեդոնացիների կողմից բերված և կամ սիրված լինելու պատճառով և ապա, մի քիչ փոխվելով, դարձել է հայերենում մաղաղանոս, մաղաղանոս: Նախապես թեև ընկալվել է այդ բույսը Արևելքի ժողովուրդների կողմից որպես «մակեդոնական» տրվելով կարոսի այդ բերված տեսակին, սակայն հետագայում տարածվել է որպես անվանում բոլոր մյուս տեսակների վրա էլ՝ դուրս մղելով գործածությունից ազատքեղ, գոռոզխոտ, քրևս, կարոս, քամազ ևնրերը:

207. ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՅԵՐԵՆԻՆՆ Է, ԲԱՅՑ ԿԻՏՐՈՆ, ԹԵ՛ ԼԻՍՈՆ

Արևմտյան գրական լեզվում և նրա ազդեցության տակ նաև արևելահայերենում բավական տարածված էր կիտրոն բառի գործածությունը՝ «լիմոն» նշանակությամբ: Կիտրոնը հունարենից է անցել հայերենին և լատիներենին՝ citron ձևով: Այստեղից էլ՝ citrus ցիտրուս, ցիտրուսային բույսեր արտահայտությունը, որի տակ հասկանում ենք ոչ միայն կիտրոնը, նարինջը, այլև մերձարևադարձային մյուս բույսերը: Կիտրոն նշանակությամբ հայերենում միջին դարերից սկսում են օգտագործել նաև լիմոնը (նաև լեմոն, լեմուն): Առաջին անգամ հանդիպում ենք լիմոնին միջնադարյան գյուղատնտեսական հանրագիտարանում «Գիրք վաստակոց»—ում: Ծագումը: Դժվար է ասել, պարսկերենի՞, թե՛ արաբերենի միջնորդությամբ է այն անցել հայերենին: Ներկայումս ծանրության նմարը թեքվում է դեպի կիտրոնը՝ երկրորդ տեղը մղելով լիմոնը:

208. ԲՈՒԼՈՆ ԿԱՍ ԲՈՒՆԱՆ ԴԱՌՆՈՒՄ Է ԿԱՀՎԵ, ԿԱՖԱ, ՂԱՅՖԵ, ՂԱՅՖԱ, ԿՈՖԵ, ԱՊԱ՛ ԱՌԻՐՃ

ԶԵ՛ ՈՐ ՄԵՆԸ ՈՒՐԻՇ Ե...՝

Հարեշտանի կամ Եթովպիայի Կաֆա քաղաքում սուրճի հուճեղը անվանում էին Բուճո կամ Բուննա, իսկ նրանից դուրս՝ Արաբական թերակղզում և այլուր այս հատիկները տարածվեցին սրճի հայրենիքի անունով կաֆա, ղայֆա, ղայֆա, կաֆա և այլ հնչյուններով (իսկ գիտականորեն կոչվեց այն coffee):

Կարլ Լիննեյի մեղրով թյուրիմացաբար սուրճի հայրենիքը անվանվեց Եմենը (այսինքն՝ Արաբիան), իսկ նրա պատահական հայտնաբերողն էլ բնականաբար պիտի արաբ լիներ, որը, որպես թե մոլորվելով անապատում, սնվել էր սուրճի հատիկներով և այլն, և այլն: Սակայն իրականում սրճի հատիկների հրաշագործ հատկության հայտնաբերման պատիվը պատկանում է կաֆացի հովիվ Կմեդդին: Նա այժեռ արածեցնելիս նկատում է, որ սրճի թփուտներից օգտվող այծերն իրենց շատ աշխույժ են պահում, քան մյուսները: Եվ ահա այսպես այս հրաշագործ հատիկների՝ հուճեղի համբավը Կաֆայի նահանգից 9—րդ դարից սկսած տարածվեց դեպի Եմեն և հարևան երկրները: 16—րդ դարում սրճի համբավը հասավ նաև Կոստանդուպոլիս կամ բուրքական հորջորջմամբ՝ Իսթանբուլ, և բավական արագ մտավ նրա գործածությունը բնակչության կենցաղի մեջ: Սուրճը դարձավ ազգային ըմպելիք, և մինչև այսօր էլ ղայֆեն երբ դառն են եփում, անվանում են բուրքական կոֆե: Սուրճի տեսակներից մեկը կամ լավագույնը կոչվում է մոկկո՝ Եթովպիայի Մոխտ կամ Մոկկո նավահանգստի անունով, որտեղից սկսվեց նրա արտահանությունը: Շուտով սուրճի հրաշագործ հատկությունը արժանացավ բժիշկների և գիտականների ուշադրությանը, և նրանից սկսեցին ատանալ մի նյութ, որ կոչեցին կոֆեին:

Այս բոլորը լավ: Բայց որտեղի՞ց առաջացավ հայերեն սուրճ—ը, որ չենք գտնում մեզ ծանոթ կամ հարևան և ոչ մի լեզվում: Եվ չարժե իսկ այն որոնել այլևայլ լեզուներում, որովհետև այդ բառը իրականում գոյություն չի ունեցել, այլ հորինված է անգղ արմատից: Սուրճ բառը պիտի դասել հայերենի բնածայնական ծագում ունեցող բառերի թվին, որպիսիք բավական սովոր թիվ են կազմում, ինչպես օրինակ՝ կոսովել—ից ազատվ, ճռալ—ից՝ ճռիկ՝ «ծորիկ», շվկալ—ից՝ շվի, շնջալ—ից՝ շշուճ, մոմալ—ից՝ մոմոֆ, ֆսալ—ից՝ ֆստոց և այլն:

Սուրճ բառը, ինչպես վկայում է Գ. Աճառյանը, հորինել են արևմտահայ գրողները, որոնք կողմնակից էին օտար բառածրեցից հայերենը մաքրագործելու և սեփական միջոցներով այն հարստացնելու ուղուն: Պատմում են նաև, որ դպրոցի տնօրենը դասամիջոցի զանգից հետո մտնում է դասարան և տեսնում է, որ ուսուցիչը իր տեղում չէ: Հարցնում է աշակերտներին.

— Ո՛ւր է ձեր վարժապետը:

Մեկը պատասխանում է.

— Հոն դաիվե կխմե կոր:

— Հայերեն ինչու՞ չես խոսիր, դաիվե բուրքերեն է:

— Պարոն տնօրեն, դաիվեին հայերենը չկա:

— Ինչպես չկա,— անակնկալի եկած պատասխանում է տնօրենը,— հապա սուրճը ի՞նչ է:



— Ատ ուրկե՞ ելավ:

— Է, որ զայն կըմպես, այդ ծայնը չէլա՞ր:

Ատրճ բառի ծագումը կապված է այն ըմպելու ժամանակ առաջացող փխրոժավուր ծայնի հետ:

209. ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆԹՈՎ Է ԹԵՅ-Ը «ՀԱՅԵՐԵՆ»

Թեյի հայրենիքն են համարում Չյուսիսարևելյան Չնդկաստանի Ասսանը, Չինաստանի Յունանի լեռներն ու հայնան կղզին, որոնք վայրի վիճակում է ունեն թեյի մեծ տարածություններ: Ո՛վ արեք **թեյի** գյուտը: Ավանդությունները մի քանիսն են: Դեռևս մեր թվարկությունից առաջ 2737 թվականին չինական կայսր Չեն Լունգի համար մի ծառի տակ ջուր էին եռացնում, և հանկարծ եռացող ջրի մեջ մի քանի տերևներ են ընկնում: Եռացող ջրից հաճելի բուրմունք է տարածվում, և կայսրն ու նրա մտերիմները կարծես առույզանում են ու հանգստանում այդ պատահական տերևների թուրքը ըմպելով: Կայսրը կարգադրում է տարածել այս տերևների գործածությունը ժողովրդի մեջ: Մեկ այլ ավանդության համաձայն՝ թեյը գործածելու սովորությունը Կոսյուվա կայսեր որդի Բադիստ Խարմա արքայազնից է սկսվել, նա Բուդդայի ուսմունքը Չինաստանում քարոզելու մեկնելիս երդվում է յոթ տարի արթուն մնալ: Սակայն երեք տարի անց քիչ է մնում, որ դրժի իր երդումը, որովհետև ուժասպառ և հոգնած մարմինը ջուրն էր պահանջում: Մտածմունքի մեջ նա, նստած ծառի տակ, պատահաբար մի քանի տերև է զգում բերանն ու ծամում, քիչ անց նա իրեն զարմանալիորեն առույզ ու աշխտյծ է զգում, և այսպիսով սկիզբ է դրվում թեյի գործածությանը: Թեյի անվանումը չինարեն է, սակայն Չինաստանի հյուսիսային քարքառներում արտասանվում է այն **տցայ**, իսկ հարավային բարբառներում **տցեյ** (կամ **տայ** և **տեյ**): Նշանակում է «մատղաշ տերևիկ», և քանի որ երկու ծանապարհով էլ տարածվել է **թեյի-չայի** գործածությունը աշխարհում, այդ իսկ պատճառով էլ եվրոպայի ժողովուրդները գիտեն **թեա**, **թե**, **թեյ**, **թայ** հնչմամբ, իսկ Չինաստանի հյուսիսից ծանոթացած ժողովուրդներն էլ գիտեն **չայ**, **ցայ** հնչմամբ:

Չաճախ ենք միմյանց դիտողություն անում այս կամ այն բառի փոխարեն հայերեն համարժեքներն օգտագործելու համար: Չականալի է, որ Չայաստանում **թեյ** չի



հայկազան լեզուի» գրքում (1769) արժանագրված է և՛ **չայը**, և՛ **թեյը**: Իբրև զրական հայերեն գրքերն ու բառարանները ներմուծեցին **թեյ**-ը, իսկ Պարսկաստանի և Ռուսաստանի վրայով հայոց բարբառներ մուտք գործեց Չինաստանի հյուսիսային բարբառների **չայը**: Որի՞ն տալ առավելությունը, երբ ոչ մեկն էլ «մերը» չէ: Այնուամենայնիվ, առավելությունը **թեյի** կողմն է, առաջնության իրավունքով նա է տեղ գրավել մեր լեզվում, և այսօր ահա այդ առավելությամբ էլ նա հինք ունի մերժելու **չայի** մուտքը հայերենի մեջ:

210. ԵՌԵ ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ՍԵՊԱԳՐԵՐԸ, ՈՒՐԵՄՆ ԸՆԴՂԱՄԸ ՀԱՅՎԱԿԱՆ Է

Շաղգամ կամ շալղամ բառը առկա է հայերենում, պարսկերենում, արաբերենում (saigam) և բուրբերենում դարձյալ շալղամ ձևով: Ո՛վ է ունից փոխ առել այս բառը, մնում է հարցական: Մի շարք լեզվաբաններ ենթադրում են, որ բառը պարսկերենից է անցել հայերենին և մյուս հարևան լեզուներին, իսկ ոմանք էլ, ինչպես Ղևոնդ Ալիշանը, ընդհակառակը բոլորի սկզբնաղբյուրը հայերենն են համարում: Ինչպե՞ս պակացուցել առաջին կամ նրան հակառակ կարծիքները: Ամենագորեղ պապացույցը բառի բացատրվելն է այն լեզվով, որտեղ այն կազմվել է: Եթե պարսկերեն ծագում ունի, ապա պիտի «բացատրվի» այն պարսկերեն բառերով, եթե հայերեն է, ապա հայերենի արմատներով կամ ածանցներով:

Սակայն այս բառը չի մեկնվում ոչ մեկ, ոչ մյուս լեզուներով: Գուցե շաղգամի ծագումը այսպես էլ անհայտ կամ վիճելի մնար, եթե դարձյալ Չայաստանին հարևան մեռած սեպագիր լեզվի արձանագրություններում չհանդիպեինք մի շատ շահեկան վկայության: Աքքադացիները (ասորեստանցիներն ու քաբեյացիները) գիտեին այն օթաթ armannu «արմանիական (հայկական) քաղցր բույս» հորդորմամբ: Թվում է, մենք պիտի հավասանք այս վկայությանը, և Ղևոնդ Ալիշանի կարծիքը այս բույսի հայկական ծագում ունենալու վերաբերյալ համարենք միանգամայն հավաստի: Զանգի դարձյալ մի քանի բույսեր, ինչպես ծիրանը, անամուխը, ուրբը, նուռը, սալորը, չամանը, տուղտը, նույնպես վկայված են որպես «արմանիական» բույսեր, և գիտական աշխարհը մինչև այժմ էլ դրանք ճանաչում է որպես այդպիսին:

211. ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆԹՈՎ ՍԵՔՍԻՎԱՅԻ ՅՈՐԵՆԸ՝ ԵԳԻՊՏԱՅՈՐԵՆ

Պատմական անադրարություն էր Նոր աշխարհը Ամերիկա կոչելը, և սա բավական չէր, Նոր աշխարհի եվրոպա բերված բազմաթիվ բուսանուններ իրենց անուններով չտարածվեցին:

Եվրոպան ստացավ բազմաթիվ բույսեր, որպիսիք են **պոմիդորը**, **կարտոֆիլը**, **ծխախոտը**, **արևածաղիկը**, **եգիպտացորենը** և այլն:

Ի դեպ, վերջինս միայն հայերենում է այդպես կոչվում: Իր հայրենիքում այն կոչվել է **մաիս**: Եվրոպացիների մեծ մասը գերմանացիները, ֆրանսիացիները և այլն այդպես էլ կոչում են **մաիս**, սակայն նման ձևով այժմ ոչ մի հայ չի կոչում այդ բույսը, այլ **եգիպտացորեն**: Ճիշտ է, արևմտահայերենում փորձեր արվեցին հայացված **մաից**, **մաիծ**, **մայծ** ձևերը ժողովրդականացնելու, սակայն ապարդյուն:

Լայնորեն տարածվեց **եգիպտացորենը** մոռացության մատնելով նրա բուն անվանումը: Իսկ եգիպտոսն այստեղ ի՞նչ կապ ունի:

Բանն այն է, որ Մեքսիկայից է **Կուբայից**, երբ առաջին անգամ **մախը** բերին Եվրոպա, որոշեցին արդյունքի հասնելու համար ընտրել իր բնակիչմայական պայմաններով Միջին Ամերիկային մոտիկ մի վայր, որը **եգիպտոսն** էր: Ահա այս երկրից էլ **մախի** սերմերը տարածվեցին շրջակա հարևան երկրները իրենց հետ տանելով նոր երկրի անունը՝ **Մսըը**: Չէ՞ որ **Մսըը** եգիպտոսի անունն էր, ուստի բույսն էլ ընկալվեց որպես «**եգիպտոսի, եգիպտական**»: Թեև հայերն էլ գիտեին Եգիպտոսը որպես **Մսըը** (իիշեք **Մարա Մելիքը**), սակայն Թուրքիայում ապրող հայերը **մսըը**-ի հետ գրական ճանապարհով սովորեցին գործածել **եգիպտացորեն**-ը: Եվ այսպես անարդարությունը հաղթանակեց:

Եվ սա առաջին դեպքը չէր: Բազմաթիվ բուսանուններ նման բախտի են արժանացել: Թվե՞նք, **Նարինջ**-ը դարձավ **ապելսին** կամ **փորթազա**, **Ֆինիկ**-ը կամ **փյունիկ**-ը՝ **խուրճա** և այլն:

212. ԻՆՉ Է ԽՍՈՐԸ՝ ԳԻՆԻ՞, ԹԵ՞ ԽՍՈՐ, ԿԱՍ ԻՆՉՊԵՍ ԾՆՎԵՑԻՆ ԽՍԻՉՔՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ...

Ո՛վ չի ըմպում **օղի, գինի, բարկօղի (կոնյակ), շամպայն** և այլն... Նաև **լրիվ չխմորված գինի՝ մաճառ**: Բայց ինչպե՞ս են ծնվել այդ անունները, մտածե՛լ է որևէ մեկը այս մասին: Ինչո՞ւ **մաճառ**, ինչո՞ւ **արաղ** կամ **օղի** և ոչ այլ կերպ: Չէ՞ որ **մաճառ** նշանակությամբ հայերենն ունի նաև **խազմուզ**, իսկ ռուսերենը՝ **молодое вино**, այսինքն մատղաշ գինի...

Մաճառ-ի ամենահին վկայությունը գտնում ենք 15-րդ դարի ամենագարգազած հայ մտավորականներից մեկի՝ Գ. Տաթևացու մոտ, որ գրում էր. «Խաղող էր և եղև **քաղցու** և **մաճառ**, և **գինի**, և **քացախ**»: Այս նույն բառը բացատրվում է նաև նրանից երկու հարյուրամյակ հետո ապրած Երեմիա Մեղրեցու բառարանում ևս **մաճառ**՝ «խակակուք գինի» ձևով: Նրա մոտ գտնում ենք նաև **մատոխիչ**՝ «խազմուզ» քիչ աղավաղված բացատրությունները: Ինչպե՞ս որոշել **մաճառ**-ի ծագումը, թեև այն գործածում են նաև կովկասյան լեզուներն ու վրացերենը **մաճառի** ձևով, սակայն վճռական խոսքը պատկանելու է միայն այն լեզվին, որը կկարողանա «բարգձմանել» **մաճառ**-ի իմաստը:

Չէ՞ որ Սուրբ գրքում գործածական **ցքի**՝ «օղի» բառը այսօր մեզ համար պարզ է դառնում միայն շնորհիվ աքթադերենի, ուր առկա է շօզս՝ «մաքուր, ջինջ, պարզ» բառը, որով իմանում ենք, որ **օղին** այդպես կարող էր կոչվել թուրված, հստակ, ջինջ, պարզ դառնալուց հետո միայն: Բազմիցս Սուրբ գրքում ունենք **ցքի**-ն, ինչպես «Արքեպարուբ ոչ ի գինույ և ոչ ի **ցքույ**», «Գինի և **ցքի**»: Քանի որ խոսք բացվեց **գինու** մասին, ապա իիշեցնենք, որ այն կապ ունի հնդեվրոպական լեզուներում առկա ռուսերենի, լատիներենի vinum, իսպաներենի vino, ֆրանսերենի vin բառերի հետ, ինչպես նաև արաբերենի, եթովպերենի wain ձևերի հետ:

Ենթադրվում է, որ **օղի**-ն նույնպես հնդեվրոպական ծագում պիտի ունենա, թեև սա անակորիտի օլ՝ «ոգելից խմիչք»-ից, թեև կարող էր ծագել alu (անզլ., գերմ. Ale ձևով)՝ «զարեղուր» բառից, իսկ ժողովրդական **արաղ**-ը արաբերենի araq՝ «քրտինք» ձևից է գոյացել:

Այս բոլորը շատ դեպքերում եթե համոզիչ է թվում, այնուամենայնիվ ինչ-որ տեղերում անհավանական, սակայն հայերենի **խմոր**՝ «թթմոր, ջրով շաղած

այլուր» բառի անցած իմաստային փոխակերպման ուղին մատնանշելով՝ ընթերցողին ցույց կտանք, թե իսկապես ինչպիսի անհավատալի կերպարանափոխումներ և իմաստային անցումներ կարող են ունենալ բառերը (լեզվից լեզու: Այսպես ուրեմն, մեզ հարևան սեռական ժողովուրդների լեզվում գոյություն ունի xmr՝ «պճպճալ» արմատը, որից արամեերենում առաջացավ xmirra (խմիրա)՝ «խմոր» բառը: Այս արմատի հիմնական նշանակությունն էր «խմորել, թթվեցնել, հասունացնել», և հենց այս նշանակությամբ էլ հայերենին է անցել խմորել բայը, իսկ **խմոր** գոյականական ձևը նախապես ունեցել է ոչ թե ջրով շաղախված այլուր, այլ «հասունացած, թթված, խմորված» (կամ «խմորող») նշանակությունները: Ահա գրաբարից մի քանի հատվածներ. «Փոքր մի **խմոր** գլանեմայն գանգուածն խմորել» (Աի քիչ **խմորը** ամբողջ զանգվածն է թթվեցնում կամ հասունացնում) (Սուրբ գիրք) կամ **խմորուն** հաց նշանակում էր «թթմորով հասունացրած հաց կամ **մայա**-ով (դոճով) պատրաստված հաց»: Ահա, դարձյալ Սուրբ գրքից. «Մի ուտիցեք ընդ նմա **խմորուն**» (Նրա հետ **խմորված** մի կերեք) կամ «Ոչ **խմորուն**, այլ **քաղաքը** հացիս» (Ոչ հասունացված թթմորով, թթվեցրած, այլ **քաղաքը** հացով, այսինքն՝ անթթմոր հացով) և այլն:

Ահա արաբերենում լայնորեն այս և՛ արմատից կազմված ձևեր կան, ինչպես xamara՝ «թթվեցնել, խմորել», որից էլ՝ ictimar՝ «խմորի բարձրացում, խմորում», xamir՝ «թթմորով հաց» և այլն: Եվ ահա այս **թթվեցնելու** (այսինքն **խմորելու**) նշանակությունից էլ հետագայում առաջացավ արաբերենի xamr՝ «գինի» (քառացի՝ «խմորված, թթված, հասունացած»), xamra՝ «հարեբող», xamra՝ «հարքած», xamar՝ «խումար, հարբելուց հետո հիվանդագին վիճակը», xamaral՝ «գինու կրպակ», որ հայերենին է անցել նաև **ամարաթ, համարաթ** ձևով, xamarar՝ «գինեվաճառ» և այլն և նույնիսկ xamiri՝ «գինեգույն, կարմրավուն», որ բառացի է «թմորագույն» է նշանակում: Եվ այսպես նախապես **խմոր**-ը ոչ թե այսօրվա **խմոր** էր, այլ թթմորը և գինին, ինչպես պահպանվել է նրա այս նշանակությունները արաբերենում:

213. ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻՑ ԾՆՎԱԾ ՊԻՏԱԿԱՆԵՐ

Չանախ ենք օգտագործում խոսակցության մեջ: «Աշտարակը գերադասում են Օշակահից, իսկ դու Մեղրածորն ու Գառնին, Այգեշատն ու Գետաշենը, Վերնաշենն ու Դվինը, Նախիրն ու Չայաստանը, Ախթառարն ու Անին, Կասպուրականն ու Արարատը հավասարապես հարգում են և չգիտես նախապատվությունը որին տաս»: Բանավոր խոսքի մեջ թեև չակերտներ չեն երևում, և այնքան էլ հստակ չի գիտակցվում, թե խոսքն այստեղ քաղաքների՞, թե՞ այդ քաղաքներում արտադրվող խմիչքների մասին է, բայց գրավոր խոսքում, երբ հիշյալ անունները չակերտների մեջ են, ապա հասկանալի է, որ խոսքը տվյալ վայրերի խմիչքներին է վերաբերում: Իսկիչքները վայրերի անունով կոչելը ժողովուրդների պրակտիկայում վաղուց է տեղ գտել, այսպես՝ **կոնյակը** Ֆրանսիայի Կոնյակ բնակավայրից, **խերեսը**՝ իսպանական Խերեսից, **մաղդերան**՝ Մաղդերա կղզու անունից, **մալազան**՝ Մալազայից, **պորտուկենը**՝ պորտուգալական Պորտո քաղաքի և վե՛ն «գինի» բառերի միացումից և այլն:

Իսկ որքա՞ն հանքային ջրեր են վաճառվում հանքերը պիտակների վերածածկ: Թվենք թեևս Չայաստանում տարածվածները՝ **Ջերմուկ, Արզնի, Լիճք, Սևան, Դիլիջան, Արարատ, Գանքավան, Բժնի** և այլն:

214. ԻՍԿ ԿՏՈՐԵԴԵՆՆԵՐՆ՝ ԻՐԵՆՑ ԾՆՆՂԱԿԱՅՐԻ ԱՆՈՒՆՈՎ

Մենք միայն խմիչքների պիտակների մասին խոսեցինք, սակայն հին դարերից սկսած մինչև մեր օրերը զգեստների համար բերվող կտորեղենը կոչվում էր պատրաստված տեղի անունով: Այսպես, Աստվածաշնչում կարդում ենք «Զեզեցար սնդուս» (Եզեկիել, ԺԶ 10), երբեմն նաև սնդու ձևով է հանդիպում: Ի՞նչ է **սնդու** կամ **սնդուս**: Պիլիմոսի վկայությամբ (ինչպես և մյուս անտիկ հեղինակների մոտ) Ինդոս գետի ավազանի բնակիչներն իրենց անվանել են **սինդեր**, և հավանաբար այստեղից էլ պահպանվեցին, պարսիկների միջոցով մյուս ժողովուրդներին է փոխանցվել: **սնդուս** *sindus*՝ «սինդական» նուրբ կերպասի անունը: Եվ դարձյալ Հնդկաստանի **չալ** քաղաքի անունից բրդյա գործվածքների անվանումը տարածվեց: Ու թեև այս արտադրանքի հետ մրցում էին նրանից ոչ պակաս հայտնի **Քաշմիրի** և **Լահորի** շալեղեններն էլ, սակայն սրանց արդեն ասում էին **Լահորի շալ** կամ **Քաշմիրի շալ**: Ու դարձյալ Անգլիայի Բոստոն քաղաքի կերպասները **Բոստոն** անունով հայտնի դարձան, իսկ Շոտլանդիայի Շեվիոտ լեռների անունից **շեվիոտ** կերպասը, վանդակավոր նախշազարդերով կտորները էլ Շոտլանդիայի անունով **շոտլանդկա** կոչվեցին:

Իսկ Նոր աշխարհը՝ Ամերիկան, ինչպե՞ս կարող էր նաև մյուս երկրներից, մանավանդ որ նեգրերի ստրկական աշխատանքով ստացված էժան բամբակի հումք ունենալ: Բամբակյա սպիտակեղենով ողողեց Եվրոպան ու Մերձավոր Արևելքը, որը կոչվեց **ամերիկան**:

Պայ միջնադարյան քանաստեղծներն օգտագործում են բազմաթիվ բանկարծք կտորեղենների անվանումներ, որոնցից շատերի ծագումն արդեն պարուրված է ամհայտության քողով: Այսպես, օրինակ, Քուչակն ասում է. «Հագեր ես **քեմիա կապա...**», նույնը «Տաղ վասն ազռալին» քանաստեղծության մեջ կարդում ենք. «Ակուան է հագել **աբլա** ու **քեմիա**, ի մեջքն է կապել ոսկի **հայասայ**... Անշուշտ այստեղ Կամախում արտադրվող տարազի մասին է խոսքը, սակայն զայթակղիչ **Հայասա** գոտու մասին ասել, թե Հայասա երկրանունից է գալիս, շատ անհիմն կարող է թվալ: Ունենք նաև **Տարապուլուզ** գոտի (Տարաբլուս քաղաքի անունից), **Մանիա**՝ Փոքր Ասիայի Մանուսա քաղաքի անունից: **Հալաբի** Հալեպ քաղաքի անունից և այլն: Իտալական Բոլոնիա քաղաքի անունից է **բալոնկա**–ն, իսկ **պանամա** ամառային ծղոտախյուս գլխարկը տարածվել է Պանամա ամերիկյան փոքրիկ երկրից:

Իհարկե, պատմության մեջ մնացել են նաև մի շարք տարազներ հնարողների անվամբ, այսպես, օրինակ՝ Փարիզի Կոմունան արյան մեջ խեղդող գեներալ **Գալիֆեի**՝ անդրավարտիքի ձևով կարված գինվորական անդրավարտիքները անվանում ենք ոչ այլ կերպ, քան **գալիֆե**: Մակինտոշի հնարած անցրածցիկ թիկնոցը, որը ներսի կողմից հատուկ ռետինախեծով էր պատած, կոչում ենք ոչ այլ կերպ, քան **մակինտոշ**: Ֆրանսիական Թուլ քաղաքի անունից է **տուլ (Тюль)** շղարշանման նուրբ գործվածքի անվանումը: Պաղպաղակի **պլումբիր** տեսակի անունը ֆրանսիական քաղաք Plombur–ից է ծագում:

Անհայտ ժամանակներից սկսած մարդկությանը հայտնի են եղել թանկարժեք քարերի անուններ, որոնք կոչվել են հանքավայրի կամ վաճառատեղի անվամբ: Այսպես, օրինակ՝ հայկական նշանակող բյուրեղապակու հանքերը կոչվում էին Ալն վանի կամ Վանական, Լեռնային Բարաշխանից արդյունահանված ակնեղենը կոչվում

էր հենց քաղաշխան (Հիչենք Այաթ–Նովայի խոսքերը. «Լալ ու քաղաշխան իս ինձ համա»): Ծովագույն կամ կապտավուն ակնեղենի մի տեսակն էլ կոչվում էր քարչիչ կամ քարսիս՝ փոքրասիական Թարսուս տեղանվան անվամբ (Աստվածաշնչում «Ալանս Թարշալ – Թարսայ» (Երեմ. ԺԹ, 2, Եզեկ. Ա 16 Երզ. Ե.14), նույն Աստվածաշնչում հանդիպում ենք թանկարժեք կարմիր կամ արմազույն ակնեղենի անվանմանը, որ լիդիական Սարդիս քաղաքի անվամբ կոչվել է սարդիոն (Ելից. ԻԸ17, Եզեկ. ԻԸ, 13 և այլն):

215. ՈՐՏԵՂԻ Է ԸՈՍԿԻԶԲԸ, ԱՊԱԿԻ, ԵՎ ՈՐՏԵՂԻՑ ԾՆՎԵՑԻՆ ՃԵՆԱՊԱԿԻՆ, ՀԱՆՃԱՊԱԿԻՆ, ԶԻՆԻՆ ՈՒ ՖԱՐՖՈՒՐԸ

Ենթադրվում է, որ հայերեն **ապակի** բառը պարսկերենի ապկունե (ար+կունե՝ «ջրագույն») բառից է փոխ առնվել: Կարելի է առարկել, թե այդ դեպքում ինչու հայերենում **ապկինե** կամ **ապկունե** չունենք, այլ միայն **ապակի**: Գուցե այն սեմական լեզուներից է եկել, մանավանդ որ ապակու գյուտը սեմական ժողովուրդներից մեկին փյունիկեցիներին է վերագրվում:

Եթե այսօր **ապակի** նշանակում է հենց ապակի կամ թափանցիկ նյութ, ապա միջնադարում ավելի շատ գործածվում էր «բաժակ, գավաթ, շիշ, սրվակ» նշանակություններով, օրինակ. «Եւ **ապակին** ի ծեռին և արկեալ գինի» (Զեքուսն Բաժաղը մեջը գինի լցրած), «Թէ **յապակի** պիտակ ջուր արկեալ յարեու ունեցիս» (Եթե ունես շիշ մեջ սպիտակ ջուր լցրած արկի դեմ): Այսինքն՝ նյութի անունով կոչվեց անոթը, ինչպես **պղինձ** ենք անվանում պղնձյա կաթսան: Եվ այսպես, փոխվել են ժամանակները, բարբերել և բառերի նշանակությունները:

216. ԻՆՉՊԵՍ ԾՆՎԵՑ ԾԵՆԱՊԱԿԻ-Ն ԵՎ ԶԻՆԻ-Ն

Միջնադարյան հայ գրականության մեջ Հինաստանը հայտնի է ճեմաստան կամ Աշխարհ **ճեմաջ**, **ճեմաջ երկիր** ձևերով: Հինացից հռչակված էին իրենց սպիտակ կավից պատրաստած գեղահրաշ ամաններով, որոնք խիզախ վաճառականները ներմուծում էին նաև **Հայաստան**, դրանց մեջ մտտ սկսեցին անվանել **ճեմապակի**, այսինքն՝ **ճեմական** (չինական) ապակի էր տարբերություն տեղական կլիտի անա–նեղենի և ավազից ու բորակից ստացվող թափանցիկ **ապակու**: Արևելյան մեր մյուս հարևանները՝ պարսիկները, աֆղանները, թուրքերը, պարզապես **ճեմապակու** անվանում են չինի՝ «չինական»: «Մասունցի Դավիթ» էպոսում ենք **չինի** աչքեր արտահայտությունը, որ կարող է ընկալվել «գեղահրաշ, ամանան, հրաշալի» նշանակություններով, քանի որ ինչ որ Հին աշխարհից էր գալիս, այն անճան էր:

217. ՀԱՆՃԱՊԱԿԻՆ ՈՐՏԵՂԻՑ ԵՎԿ ՖԱՐՖՈՒՐԻ ՀԵՏ

Հախճապակին զրաբարում գրվում էր **յախճապակի**, և փաստորեն այս բառի տակ հասկանում էին նույն **ճեմապակին** միայն գերազանցապես տեղում պատրաստված: **Յախճապակի** էին անվանում նախապես «խճաքարերով բանված ապակին մոզահիւան, այսինքն՝ բառն ստորգաբանում են **յ–յախճ–ապակի** կամ

յա-խճ-ապակի, այսինքն **խճա-ապակի**: Եվ իսկապես ունենք միջնադարից վկայություններ «Չյատակս տանն յախճապակաւ կճոյ ծեփեաց» (Տան հատակը հախճապակով մարմարի պատեց): Ուշ միջնադարից գործածվում է նաև **ֆարֆուր**, **ֆարֆոր** բառը, օրինակ՝ 18-րդ դարի հայ կաթողիկոս Աբրահամ Կրտաճցին «Չիշատակարանում» գրում է. «Տասը **ֆարֆուր** ֆիլճան դահվեի»: Արդի գրականության մեջ **ճենապակին** և **հախճապակին** շփոթվել են, և ոմանք կարծում են, թե դրանք նույն **ֆարֆորի** անվանումները չեն, այլ մեկը՝ **ապակու**, մյուսը՝ **ֆարֆորի**: Քայքային պես մետաղե վերևի նախադասության մեջ, **հախճապակին** նաև այսօրվա **մետախի** իմաստով է գործածվել, այլապես հատակը հնարավոր չէր ապակիով հարդարել:

218. ԲՅՈՒԻՆԵՂՎՊԱԿԻՆ ԿՐԻՍՏԱԼԻ ՀԱՅԵՐԵՆՆ Է

Երկայուն ո՞ւմ տանը չկա որևէ իր՝ սավոր, ջահ, ամոթ, մոխրաման, բաժակ և այլն, որոնք իրենց ծիածանազույն արտացոլյով հիացնում են մեզ: Բյուրեղապակի ստանալու գաղտնիքը հնում հայտնի չէր մարդկանց, այն գտնում էին միայն բնական կտորների ձևով: Կային նաև կուտակումներ՝ **բյուրեղի** հանքավայրեր: Նման հանքավայրերը հայտնի էին նաև Չայաստանում: Օրինակ 6-րդ դարից մեզ հասած «Աշխարհացոյցը» տալիս է հետևյալ տեղեկությունը. «Ունի Չորրորդ Չայք բերդս և՛ գետս, և՛ լեռինս, և՛ **բյուրեղ**»: Չայաստանի **բյուրեղի** ամենամեծ հանքերից մեկն էլ գտնվում էր Տավրոսի լեռների ծայրամասում՝ Եփրատի գետանցի մոտ, իսկ մյուսը՝ Վան քաղաքից ոչ հեռու, որի պատճառով էլ կոչվում էր **Ալև Վանա** կամ **Վանակն**: Աստվածաշնչում **բյուրեղ**–ը բազմիցս հիշատակվում է մյուս բանկարծ քարերի հետ հավասարապես:

Նույնիսկ նրանով զարդարում էին աստվածների արձանիկները կամ կերտում էին դրանք անրողական **բյուրեղի**: Ահա Մ. Խորենացու վկայությունը Բարշամինի կուռքի կազմության վերաբերյալ. «Գտնեալ անդ գԲարշամինայ պատկերն, գոր ի փղոսկրոյ և ի **բյուրեղ**է կազմեալ էր արծաթով» (Այնտեղ Բարշամինի արձանը գտավ, որ փղոսկրից, **բյուրեղից** արծաթով էր սարքված (Խորենացի, Գիրք Բ, 13):

Բյուրեղ բառը ծագում է հունարենի բերուլլոս, բերուլլիոն (berulios, berullion), լատիներեն՝ բերիլլուս (berillus) բառից, որն աստիճանաբար դուրս մղեց գործածությունից ընդհանրապես բանկարծեք քար նշանակող **ակն**՝ «աչք» (այսինքն աչքի պես շողացող) բառը: Նոր ժամանակներում, երբ արդեն կենցաղում հայտնվեցին արհեստական ձևով պատրաստված **բյուրեղյա** իրերը, մեր լեզուն կերտեց **բյուրեղապակի** բառը՝ որպես համարժեք kristal, **хрусталъ** բառերին:

219. ԻՆՉՈՒՐ Է «ՀԱՅԿԱԿԱՆ» ԼԱՎԱՇ-Ը

Պարսկաստանում **լավաշ**–ն անվանվում է «հայկական հաց» (nuni armani): Աշխարհն այսօր ճանաչում է **լավաշ**–ը որպես «հայկական» հաց: Այս բառը մտել է նույնիսկ ռուսերեն խոսակցական լեզվի բառապաշարի մեջ, և երբ թվարկում են էկզոտիզմները (կլորիտ ստեղծող բառեր), ապա ի թիվս այլ ժողովուրդներից վերցված փոխառյալ բառերի (տես «Իզվեստիա», 1986թ. նոյեմբեր, «Իմ լեզուն իմ բարեկամն է» հոդվածը), անպայման նշվում է նաև հայոց **լավաշ**–ը: Բայց ի՞նչ է նշանակում **լավաշ**: Ինչպես **խմոր**–ի մասին (կամ **գինու**) զրույցում պատմեցինք, բառի մեկ լեզվից մեկ այլ լեզու տեղափոխվելու պատճառով շատ անգամ տեղի է

ունենում նաև իմաստային փոփոխություն: Այսպես է տեղի ունեցել նաև հայոց **լավաշ**–ի հետ: Այն հայերեն չէ: Չայերը վերցրել են **լավաշ**–ը իրենց սեմական հարևաններից, արամեացիներից և կամ ավելի վաղ նրանց նախորդներից՝ արքադացիներից, որոնց լեզվում **laš** նշանակում էր «խմոր»:

Չայերենին անցնելով **laš**–ն դարձավ լոշ, իսկ ավելի վաղ, քանի որ **o**–ն հնչում էր ա, ինչպես ունենք **ար**, բայց հետո՝ **օր**, **ազուտ**, ապա՝ **օգուտ** և այլն, այն հավանաբար երկբարբառի առձյանն հետևանքով **լավաշ** սպասված ձևի փոխարեն նդել էր **լաւաշ** և ապա միջին դարերի հայերենի հնչյունափոխման կանոնների հիման վրա դարձել է **լօշ**: Սակայն ըստ երկուսիցն հետազայում, երբ Չայաստանի հարավի ասորիների մեծ մասը հայացավ, և հարևան ժողովուրդներն էլ հայերից սովորեցին բարակ հաց թխելը, ուստի և **լավաշ** կամ **լօշ** անվանումն էլ գիտակցվեց որպես հայերեն բառ է:

Այստեղ տեղին է հիշատակել նաև **թոնիր** բառը, որը նույնպես Միջագետքի սեմիտներից է հայերենին փոխանցվել (և բնականաբար **լավաշ**–ը թխել հնարավոր է միայն **թոնիր**–ում), որի պատճառով էլ անհետացած հայոց հարևանների լեզվի այս բառերը հայերենի միջոցով է աշխարհն իմացել: Եվ այսպես **լավաշ**–ը կոչվում է «**հայկական հաց**», մինչդեռ այն **խմոր** է... այն էլ ոչ հայկական: Բայց արժե կոչել **լավաշ**–ը հայկական, քանի որ դարերի խորքից հնադարյան այս քաղաքակրթության նվաճումը հայոց շնորհիվ է հասել մարդկությանը:

220. ՀՐՈՒԲԵԿԿԻ ԳՅՈՒՏԸ ԿԱՍ ԻՆՉՊԵՍ ԾԱՌԵՐԻՆ ՃՅՈՒԴԵՐՆ ԵՆ ՕԳՆՈՒՄ, ԼԵԶԿԻՆ՝ ԲԱՐԲԱՈՆԵՐԸ...

Ճյուղերն անհրաժեշտություն են ծառերի կամ բույսերի համար, իսկ քարբառերը... Պատասխանելու համար այս հարցին հարկ է, որ դիմենք մեր լեզվի պատմությանը:

Այսպես, օրինակ՝ անցնում ենք մեր քաղաքների փողոցով և կարդում ի թիվս խառնուրդների վրա եղած ցուցանակների նաև **հրուշակեղենի** խանութ կամ պարզապես **հրուշակ**: Բնականաբար այդ խառնուրդն աշխատողն էլ պիտի կոչվի **հրուշակավաճառ**, իսկ նրա վաճառած քաղցրավորներն էլ պատրաստող անձը՝ **հրուշակագործ**: Չասկանալու համար, թե այս բառը երբ և որտեղից հայտնվեց հայերենում, պիտի դիմենք գրաբար մատյաններին, սակայն գրաբարյան տեքստերում մենք այս բառին չենք հանդիպում: Մինչդեռ բազմաթիվ արևելյան կամ հարավարևելյան քարբառներում այն շատ գործածական բառ է. Նոր Ջուղայում ասում են **խրուշակ**, **խտրուշակ**, Ազուլիսում՝ **հրշակ**, Բուրդուրում՝ **հուրշակ** և այլն: Նաղաշ Չովմաթանն իր տաղերից մեկում ունի այս բառը.

Ձենեք թագալ գառն ու շիշակ,
Եփեք եղածու և **հարուշակ**:

Իսկ ո՞ր լեզվից է հայերենին անցել այս բառը, և ի՞նչ էր նշանակում **հրուշակ**–ը: Այս բառը թեև առիթ չի եղել գրաբարում հիշատակելու համար, սակայն շատ հին փոխառություն է պահպանելներից, քանի որ այս բառը հաստատում է նրա՝ **ալ** վերջավորությունը: Պահպանվեցնում այն հնչում էր **afrošak** և ուներ «հալվա» նշանակությունը, մինչդեռ ավելի ուշ շրջանի պարսկերենում առկա է նույն բառը **faruš** ձևով և նշանակում է «այլուրով, կարագով, մեղրով պատրաստված

քաղցրավենիք», ուստի մեր բառն ավելի հին փոխառություն է, քան պարսկերենի farušan-ն:

Եվ այսպես, մենք թողնում ենք պատասխանը ընթերցողներին, պե՛տք են արդյոք բարբառները լեզուներից: Չէ՞ որ 1910 թվականին Փարիզում Նադաշ Դովնաթանի **տաղերը** հրատարակելիս Չոպանյանը, անտեղյակ լինելով **հարուշակ** բառի գոյության մասին հայերենում, փորձում է «ուղղել» այն **հարիսա** ձևով: Եվ սա կատարում է ոչ պատահական մի անճամպորություն, այն մեծն Չոպանյանը: Դետազայում, երբ գրի առնվեցին բարբառներում գոյություն ունեցող **հրուշակ**, **հուրշակ** (Բուրդուրի բարբառ) ձևերը, իմացվեց նաև, որ Նադաշի **հարուշակ**-ն էլ անտեղի է կասկածի ենթարկվել, և մնաց **հրուշակը**, այն ոչ **հարիսա**-ն:

221. ԸԱՔԱՐ

Շատ սովորական և շատ «հայկական» բառերից մեկն է **շաքար**-ը: «Շաքարով կտրեցի խտրը, խնամի», «Շաքար է, հո մարդ չի», «Շաքար բնավորություն ունի» և այլ ժողովրդական ասույթներից կարելի է ենթադրել, որ **շաքարը** շատ հարգված, անզոհ մի նյութ էր մարդկանց համար: Իսկ ինչպե՞ս ծագեց այդ բառը, ինչո՞ւ **շաքար** և ոչ այլ կերպ: Գտնելու համար այս բառի հայրենիքը մենք պիտի դարձյալ ճանապարհորդենք լեզուների միջով: Եվ այս անգամ մեզ ուղիները տանում են դեպի Գնդկաստան, դեպի հնդեվրոպական հին լեզուներից մեկը սանսկրիտը: Ահա անհիշելի ժամանակներից Գնդկաշինում, Գնդկաստանում փարթաձորեն ածուռ էր եղել և չգիտեն, որ իր համբավը պիտի տարածվի ողջ հողագնդում: Եվ անհիշելի ժամանակներից էլ մարդիկ սիրեցին եղեգի քաղցրահամ հյութը և սովորեցին նրանից մզել այդ անուշ հյութը, որ մինչև 20 տոկոս շաքար էր պարունակում: Այդ հյութը կոչվում էր çarkara կամ sakkhara, որը հետագայում տրվեց նաև հյութից խտացված, բյուրեղացած նյութին: Այս նյութին տրվող անունը փոխանցվեց լեզվից լեզու և հասավ հայերենին **շաքար** ձևով: Ենթադրում են, որ կարող էր այս բառը սանսկրիտին անցնել հնդկաշինյան ինչ-որ լեզվից: Ուրեմն sakkhara կամ sarkara նշանակում էր «սիճ, խճավազ», որից «շաքարավազ»: Պարսկերենում այն հնչում էր šakar, որից հայերեն **շաքար**-ը:

222. ԱՆԵՓ Է, ԲԱՅՑ ՍԻՐՈՎ ԵՆՔ ՈՒՏՈՒՄ ՀՈՒՄ ՄԻԱԸ

Քաղաքակիրթ աշխարհում այսօր էլ կան ուտեստներ, որոնք գերադասում ենք ուտել առանց եփելու: Դենց այդպես էլ կոչվում է չամանով, տաքեղեղով և այլ համեմունքներով սվաղված, չորացրած միսը **ապուխտ**: Օրինակ՝ գրաբարում «**ապխտեցին** խրեանց **ապուխտս**» (ապխտեցին իրենց համար **ապուխտներ**) արտահայտությունից տեղեկանում ենք, որ այդ բառը գործածական էր հայոց մեջ հինգերորդ դարում (և մինչև մեր օրերը): Մեր օրերում հաճախ փոխարինում են այն թուրքերենից փոխառյալ **բաստուրմա** (կամ **պաստուրմա**) բառով, որովհետև **ապուխտի** իմաստն արդեն չի ընկալվում:

Իսկ ինչո՞ւ, որովհետև բառը իրանական ծագում ունի և կազմված է a՝ «ոչ, ան, չ» ժխտականից և puxta՝ «եփված, եփած» բառից, որով **apuxt** նշանակում է «չեփած, ոչ եփված, անեփ»: Բայց հետագայում, մասամբ բառի իմաստը չընկալվելու, մասամբ էլ չորացրած միսը աղելու միջոցով պահվելու պատճառով **ապխտելն** ստացավ «աղել, չորացնել» նշանակությունը: Օրինակ՝ **ապխտած տառելիս** նշանակում է

«աղած, չորացրած ձուկ կամ տառելիս» և ոչ թե «անեփ»: Թբիլիսիի բարբառում **ապուխտ օքմին** նշանակում է «չոր մարդ»:

223. ԾՆՈՒՆԴՈՎ ԱՍԵՐԻԿԱՑԻ, ԱՆՎԱՍԲ ԻՐԱՆԻՑ՝ ԱԳԻԲՈՂԻՆ

Ո՞վ իր մանկական տարիքում չի ճաշակել **աղիքուղին** եգիպտացորենի պայթեցված հատիկները, որոնք ծիրանի ծաղիկների նման բազմում են և ասես ծաղիկ հասակ են հիշեցնում... Որտեղի՞ց եկավ այս անվանումը **աղի-քուղի**: Նման մտում **մաթոի** կամ **եգիպտացորենի** հայրենիքից չի եկել:

Ո՞վ առաջինը կոչեց **աղի-քուղի**, գուցե մի մանու՞կ: Դնարավոր է, որ բառը ստեղծել են Պարսկաստանում, քանի որ այն իրանական բառ է և փուշտու (աֆղանի) լեզվում էլ՝ adu-badu, «ուռած-փչած» է նշանակում: Իր արմատներով **աղի-քուղին** հնդեվրոպական բառ է, քույր լեզուներում պահպանվել են զուգահեռները, օրինակ՝ սանսկրիտում budbuda՝ «պղպակ», անգլերենում bud՝ «կոկոն», շվեդերենում put՝ «ուռուցք», հայերենում պուտ՝ «քտիկ, կաթիլ» և այլն:

Ինչպես չափել ժամանակը... ինչպես հաշվել...

224. ԻՆՉՊԵՍ ԱՆՎԱՆԵԼ ՕՐԿԱ ՊԱՎԵՐԸ ԿԱՍ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ՄԵՉ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳԱԼԻՍ Ց-Ն՝ «ՄԻՆՉԵԿ» -Ը

Աստվածաշունչն ասում է. «Կոչեաց Աստուած **գլոյսն տիւ, և գիտարըն** կոչեաց **գիշեր** (Աստված **լույսն** անվանեց **տիվ** և **խավարը** կոչեց **գիշեր**):

Բայց մի՞թե միայն **տիվ** էր կոչվում օրվա լուսավոր մասը, հապա **ցերեկը**: Իսկ մինչև օրվա լույսն ընկած մա՛րը, կեսօրը, միջօրեն ինչպե՞ս պիտի անվանեին ժողովուրդները, այս մասին լռում է **Աստվածաշունչը**: «Եւ եղև երեկոյ, և եղև վարդոյայն, օր մի».— շարունակում է **գիրքը**: Օրը գրվում էր նաև **ար** ձևով, որից էլ մնացել է **օր ավուր**՝ «օրեցօր», «օր օրի» արտահայտությունը: Եվ այսպես, մարդը, կարիք զգալով օրվա պահերը միմյանցից բաժանելու, ստեղծել է նաև դրանց անունները՝ **լուսաբաց**, **արևածագ**, **վերջալույս**, **աղջամուղջ**, **արևամուտ**, իսկ դրանց միջև ընկած պահը **միջօրե** կամ **կեսօր**: Գիշերվա պահերն էին **երեկո**, **վերջալույս**, **ընկողմանելու ժամ**, **կեսգիշեր**, **հավախուս**, **այգ**:

Դիմ Բաբելոնում ցերեկվա և գիշերվա ժամերը ունեին 12-ական բաժանումներ, հետևաբար յուրաքանչյուր 12 պահի համար 12 ամուռ:

Մակայն նման փոքր բաժանումները այնքան էլ գործնական չէին և ավելի շատ աստղաբաշխական գիտական նշանակություն ունեին, ուստի ժողովրդի մոտ ստեղծվեցին ավելի գործնական անվանումներ՝ **ցերեկ**՝ ամբողջ լուսավոր օրվա համար և **ցայգ**՝ մինչև լուսաբաց ընկած ժամերի համար:

Ինչպես նկատում ենք, երկու բառերն էլ կազմված են հայերեն ց՝ «մինչև» նշանակություն ունեցող նախդիր-մասնիկի օգնությամբ: Այս մասնիկ-բառի օգնությամբ հայերենը բազմաթիվ բառեր ունի կազմած, որոնցից են **ցմահ**՝ «մինչև

մահ, հավերժ», **ցտեսություն**՝ «մինչև հանդիպումը» և այլն: Եվ այսպես, հայերեն **երկ** կամ **երեկո** (գրվում է նաև **երէկ, երկուն, երեկուն, երեկոյն, իրիկուն, իրկուն**) բառի վրա, որն ունեն «երեկո» նշանակությունը, ավելացվեց **ց**-ն, և ահա պատրաստ էր արդեն **ցերեկ**—ը, «մինչև երեկո», այսինքն «օր» հասկացության համար: Նույն ձևով էլ ստեղծվեց **ցայգ**—ը **այգ**—ից, որն ունեն «առավոտ, լուսաբաց» նշանակությունները: Հետևաբար, **ցայգ** բառով հասկացվում էր **երեկոյից** մինչև **այգաբաց** ընկած ժամանակահատվածը, այսինքն **գիշերը**:

225. ԱՂԱՍԱՍՈՒԹ

Հայերենում **Աղամ** նախահոր անվամբ կազմված բազմաթիվ բառերի կարելի է հանդիպել, ինչպես, օրինակ՝ **աղամածին** «Աղամից սերված, մահկանացու, մարդ», **աղամորդի** «Աղամի գավակ, մարդ, երկրային արարած, մահկանացու», **աղամական** «Աղամին հատուկ, մարդկային», **աղամային**, նույնպես **աղամայինը** «աղամորդիներ, մահկանացուներ, նաև սեռական գործարարներ», **աղամազգեստ** «մերկ, Աղամի պե՛ս՝ անզգեստ», **աղամակամ մեղք**՝ «անմեղելի արարք, անուղղելի մեղք», **աղամաղող** «սարսափ, սաստիկ վախ, սարսուռ» և այլն:

Բայց արդյո՞ք կսպ ունի **Աղամ** նախահոր հետ նաև հայերենի **աղամամուք** «թանձր խավար, խիստ մուք, սաստիկ խավար» բառը, որոշ բարբառներում, ըստ Յ. Անառյանի «Գավառական բառարանի», «առավոտյան դե՛մ և արշալույսից առաջ տիրող մուքը կամ պարզապես գիշերային թանձր խավարը»: Օրինակ՝ «Դեռ **աղամամուք** չէր կոխել...» (Պ. Պռոշյան, Սոս և Վարդիթեր), **արամամուքը** նույնպես փորձում են կապել Աղամի անվան հետ, սակայն անհիմն ձևով, որովհետև չկա մի ավանդություն, որով կապվեր բառն Աղամի և մուքի հետ: Ուրե՛նք ի՞նչ կա կարող է լինել Աղամի և մուքի միջև, որից առաջացած լիներ **աղամամուք** արտահայտությունը: «Եվդոկիայի հայոց գավառաբարբառը» գրքի հեղինակ Յ. Գազանճյանը, անդրադառնալով խնդրո ռառարկա այս բառին, բացատրում է այսպես. «**աղամ**—ամուք — ամուռան դե՛մ տիրող խոր մթութինը, որ այս անունն առած է աւանդութենէ մը, զոր յիշող չկայ հիմայ» (էջ 19): Իսկ արդյո՞ք կա մի ավանդություն, որ պատմի Աղամի հետ կատարված մի դեպքի մասին գիշերային խավարում կամ արշալույսին մոտ, որը եթե մոռացվել է հայերի կողմից, պահումն է կլիներ գոնե քրիստոնեություն ընդունած մյուս ազգերի մոտ: Ոչ, չկա:

Իսկ ինչպե՛ս կարող էր առաջանալ այդ բառը՝ Աղամի հետ չունենալով ոչ մի ամուշություն:

Պարզապես **աղամ** բառը սեմական լեզուներից հայերենի կատարած փոխառություններից մեկն է, որ նշանակում է «սև, մուք, մուգ»: Այն **damu, adammu, damu** ձևով գտնում ենք և աքքադերենում, եբրայերենում, և արաբերենում՝ **adham** «սև, մուգ ազոսվազույն»: Այդ իմաստով պահպանված է այն մի քանի բարբառներում, օրինակ՝ Ակնում **աղեմ** խաղող՝ «մուգ կարմիր խաղող» նշանակություն ունի, հետևաբար **աղամ**—ամուք նշանակել է «սև, թանձր, սաստիկ, խիստ մուք» և ոչ թե Աղամի մուք:

226. ԻՆՉԸ ԿԱՐԵԼԻ Ե ԿԱՇԿԵԼ ՏԱՐԻՆԵՐԻ ՍԿԻԶԲ

Մենք սովոր ենք լսել ավագ սերնդի մարդկանց բերանից. «Ես ծնվել եմ **ժամքի** տարումը», «Ես հարս գնացի **սովի** տարին», «Աղջիկս ավարտեց ինստիտուտը

Գերմանու **կովի** ժամանակ» և այլ արտահայտություններ, որոնց մեջ ժամանակը հաշվվում է ինչ—որ նշանավոր դեպքից: Նման նշանավոր դեպքեր են համարվել նաև թագավորների գահակալության տարիները, ինչպես **Նիկոլի թվին, Նիկոլի ժամանակ, ցարի օրը**, նաև մեծ վարդապետությունների սկիզբը, ինչպես Քրիստոսից առաջ, Մահմեդից հետո և այլն: Հունաստանում եղել է նաև **օլիմպիադաների** հիման վրա թվական և այլն: Սակայն ամեն դպրոցական գիտե, որ ամենից շատ գործածում ենք **վանքում մեր էրայից առաջ** կամ **մեր էրայից հետո** (նաև մ.թ.ա., մ.թ., մ.թ.հ.) արտահայտությունները, որոնց մեջ գործածվող **էրա** բառը ծագում է լատիներեն **aera** «թիվ» բառից: Սակայն ոմանք մեկնաբանում են այսպես՝ **ab exsordio regni Augusti** «Օգոստոսի գահակալության սկզբից», որով ստացվում է, որ **էրա**—ն լատիներեն երեք բառերի սկզբնատառերից է կազմված և ոչ թե թիվ, թվական է նշանակում:

227. ԻՆՉ Ե ԵՆԱՆԱԿՈՒՄ ԿՇՈՒԵԼ, ԵԹԵ ԿՇԻՈՒԸ «ՉՈՂ» Ե

Նոր սերունդը **կշեռք** ասելով հասկանում է միայն այսօրվա մեխանիկական կամ գապանակավոր հարմարանքները, որոնցով չափում են կամ որոշում մյուսերի, իրենից քաշը: Բայց չէ՞ որ հնում առարկաների քաշը չափելու մեխանիկական սարքերը չեն եղել, իսկ ինչպե՛ս և ինչով էին որոշում վաճառվող մյուսերի քանակը և ինչպե՛ս էին առուժախը կատարում: Եթե չլինեին գրավոր վկայարանները, ապա մենք չէինք էլ հավատա, որ հայերեն **կշեռք, կշիռ** բառերը նախապես ունեցել են «ձող, լծակ» նշանակությունները: Գե՛ք հավատում, ապա ինչնեցեք, թե ինչպե՛ս էին հնում պատրաստում պարզագույն **կշեռքները**: Զողը կամ լծակը մեջտեղից ծակելով՝ այն բռնելու համար կապ էին անցկացնում, իսկ լծակի կամ ձողի ծայրերից կախ էին տալիս զոգավոր **նժարներ**: Երբ զոգավորություններից մեկի մեջ որևէ իր էր դրվում, ապա **նժարը** իջնում էր ցած, հակառակ **նժարին** դրվում էին կշռաքարերը, մինչև չափվող իրի քաշը որոշվելը: Հայաստանը հավանաբար կշռող այս սարքին ծանոթացել է Միջագետքի **թանգարների** միջոցով, ինչպես անվանում էին **վաճառականներին** այնտեղ (իսկ հայերի մոտ **թանգար** հնչումն ստացավ, որից էլ **թանգարան, թանգարի** խանութ կամ տուն բառը, որի մասին գրույցը կարողա՛վ **թանգար** բառի մասին):



Թանի որ Միջագետքում նախ **շումերները**, ապա **աքքադացիները** (ասորեստանցիները և բաբելացիները) **ձող** կամ **լծակը** կոչում էին **կիշուր, կիշինմու**, այստեղից էլ հայերենին փոխանցվելով՝ այդ բառը **կշիռ** անվանվեց: Որպեսզի համոզվենք այս հարցում, ապա դիմենք մեր մատենագրության ամենահին վկայարաններին, գուցե և կրկին Աստվածաշնչին, քանի որ նրա ամեն մի բառը կարելի է ստուգել տարբեր լեզուներով բարձրամակար համարժեք նշանակությունների հետ: Աստվածաշնչում գտնում ենք **կշիռ** բառի հայերենում ունեցած

«Լծակ, ծող, ճիգ» նշանակությունները, օրինակ՝ Գորրորդ Թագավորաց գրքում կարդում ենք. «Պատուէր ետ արքայ... պահապանաց կշոյն» (Պատվիրեց արքան կշիռը պահպանողներին, այսինքն դժնապաններին, բարապաններին, բառացի՝ **ծող, լծակ, ճիգը** պահպանողներին): Կան «Առ իցի հանապետ... զբրիս պահապան կշոյն» (Կերցրեց դահճապետը երեք դժնապաններին, բառացի՝ **ծողը, լծակը, ճիգը** պահողներին): Գունարեն բարգձմանությունը այս ձևերի դիմաց **ստաթոնս** «պահապան» համարժեքն ունի: Սիրացի խրատներում հանդիպում ենք հետևյալ պատկերավոր արտահայտությանը. «Հավաքի բարիքները թո շտեմարանում, և այն կվրկի թեզ բոլոր չարախարհքներից, ինչպես գրախը և **կշոռ ճիգակը** թեզ հետ թշնամու դեմ կճակատի»: **Լիզակ կշոյն** պիտի ստանալան «ճիգակի կոթ, ճիգակի լծակ»:

Եվ այսպես, նոր սերունդը որպեսզի հասկանա, թե ինչ է նշանակում **կշի պահապան**, պիտի գաղափար ունենա դարպասների, դռների փակելու հարմարանքների մասին: Գնում դարպասները, բերդերի դռները փակում էին մեծ գերանների, ծողերի, լծակների, ճիգերի օգնությամբ, որոնք կամ սողնակների ձևով, կամ լինգերի ձևով դեմ էին դրվում դռներին, այս պատճառով էլ **դժնապանները** կամ **բարապանները** կոչվում էին **կշի պահապաններ** (բառացի՝ **կշիռը, ծողը** պահապանողներ):

Գետազայում տեխնիկայի զարգացման հետևանքով ստեղծվեցին երկաթյա փականքներ, որոնք եկան փոխարինելու պարզունակ **կշիներին**, սակայն **կշիների** կամ **կշեռների** անվանումը մնաց միայն այն սարքերի վրա, որոնք ծառայում էին մարմինների, նյութերի քաշը որոշելուն:

Թեև մեր օրերում երևան են եկել զսպանակավոր, էլեկտրական, էլեկտրոնային նորագույն կշռող սարքեր, սակայն մենք հին սովորության համաձայն շարունակում ենք դրանք անվանել **կշեռներ**, իսկ նյութի քաշը, ծանրության չափը որոշելը՝ **կշեռ**, թեև **կշեռ** նշանակում էր «լծակով, ծողով ճոճել», և **կշիռ** որոշողը վաղուց արդեն **լծակը** է:

Գերմաներենում Waage կամ Wage նույնպես նախապես «կշռածո, ծող» էր կոչվում, որն հետագայում «կշիռ» և ապա «կշեռ» դարձավ:

228. ԱՆԴՈՐԱԳԻՐ - ANDURAR

Եթե փորձենք **անդորրագիր** բառը որոնել դասական հայ մատենագիրների մոտ, ապա մեր աշխատանքն անօգուտ կանցնի: Այսօր բոլորն էլ կարող են ասել **անդորրագիր** նշանակում է «վճարած տուրքի, հարկի ընկալագիր», սակայն ոչ բոլորին է հայտնի, թե ինչ է նշանակել այդ բառի արմատը՝ **անդորր**–ը, և ինչու է նա գրվում երկու **ր**–ով, այն դեպքում, երբ հայերենը կրկնակ բաղաձայններ չի հանդուրժում:

Անդորր–ը դասական հայերենում ընկալվում էր «հանգիստ, ազատ» նշանակություններով, **անդորրիչ**՝ հանգստացուցիչ, ազատող», **անդորր**–ություն «հանգստություն, ազատություն» և այլն: Իսկ ի՞նչ ծագում ունի այդ **անդորր**–ը: Այն հանդիպում է աքքադական արձանագրություններում andurar–անդուրար ձևով (աքքադացիները **ու**–ն և **օ**–ն գրում էին **ու** նշանով), որը թերևս նույնպես հնչում էր **անդորր** ձևով և ուներ «ազատ, հանգիստ» նշանակությունները: Օրինակ՝ հարկից ազատված շրջանները անվանում էին **անդուրար**:

Այսպիսով **անդորրագիր**ն ընկալվում է որպես «հարկից, տուրքից ազատ լինելու ապացուցող փաստաթուղթ»:

229. ՀՈՐԵՆՅԱՆ

Այժմ ամեն մեկը կարող է բացատրել, որ **հորեյան**–ը նշանակում է «տարելից, տարեդարձ» կամ պարզապես «տարեդարձի տոն, տոնակատարություն»: Բայց որքան ծիծաղելի է այդ անվանման նախնական նշանակությունը այսօրվա ունեցած իմաստի կողքին, այս բանում համոզվելու համար պիտի ճանապարհորդե՞նք դեպի Կին Արևելք: **Հորեյան**–ը (գրաբարում **յորելի, յորելեան**) ծագում է սեմական լեզուներից, այսպես, օրինակ եբրայերենում **յորելի** նշանակում է «խոյ», բանաձևերնուն և աքքադերենում «ոչխար»: Եբրայեցիները իրենց թողության տարեդարձը նշում էին 50 տարին մեկ կազմ: Այդ տոնը ազգարարելու համար հնչեցնում էին փողեր և շեփորներ, որոնք շինված էին ոչ այլ ինչից, քան ոչխարի կամ խոյի եղջյուրներից: Գնեց այդ տոնակատարություններն էլ ժամանակի ընթացքում սկսեցին կոչվել «Լեյերե հայրել», այսինքն «խոյի կոտոշ», իսկ հետագայում պահպանվեց միայն **հայրել** և **յորել** «շեփոր, փող», ապա՝ «հիսնամյակ», «տարելից, տոն» նշանակություններով, քանի որ եղջյուրից պատրաստված փողերով սկսեցին ազգարարել նաև բոլոր տեսակի տոնակատարություններն ու հանդեսները:

Քրիստոնեության մուտքի կամ Աստվածաշնչի թարգմանության հետ միասին **յորելի, յորելի, յորելեան** բառերը կաստմվեցին շատ ժողովուրդների բառապաշարի մեջ եբրայերենից հունարենի միջնորդությամբ (ռուս. юбилей):

Գայերեն **յորելեան**–ը կազմված է **յորել** բառից –եան հայերեն բառակերտով, ինչպես ունենք աքքադերենի **ախու**՝ «հակառակ» բառից՝ **ախոյեան, պասու**՝ «գոր» բառից՝ **պատեան** և այլն:

Գավաճաբար հայերենի բառապաշարում **յորելի**ն բառը գոյություն է ունեցել Աստվածաշնչի թարգմանությունից էլ առաջ, քանի որ այն գործածված ենք գտնում ոչ միայն «հորեյան», այլև իր հին «շեփոր, փող» նշանակությամբ: Օրինակ՝ Աստվածաշնչի Ա Մնացորդաց գրքում (ԺԵ, 28) այն գործածված է փող, ճնճրակազարների հետ միասին. «Հանին գտապանակ ուխտին տեսան հռչակաւ, ծայնիւ, **յորելեան** և փողը, և ծնծղայիւք»:

Դիշյալ նախադասության մեջ եբրայական բնագիրը, ինչպես նաև հունական Յորանաստուհից թարգմանությունը **յորելեան** բառի փոխարեն ունեն **շեփորով** համարժեքը:

230. ԵՌԵ ՕՐԻՈՐԴ Է, ՈՒՐԵՍ ԱԶՆԻԿ ՏՈՒՄԻ ԱՂՏԻԿ Է

Պատմահայր Խորենացին Արտաշես թագավորի ամուսնության ավանդությունը շարադրելիս բազմիցս օգտագործում է **օրիորդ** բառը: Ավանների թագավորը, մերժելով Արտաշեսի խնամախոսությունը, ասում է.

«Եվ ուստի՝ տաճք բաճն Արտաշեսի հազարացի ի հազարացի և թիրս ի թիրսուց ընդ քաջազուլոյ կոյս **օրիորդիս** ալանաց» (Եվ որտեղի՞ց քաջ Արտաշեսը պիտի տա հազարներից հազարներ ու բյուրերից բյուրեր քաջազգի ալանների կույս **օրիորդիս** դիմաց):

Արդի հայերենում **օրիորդ** «հատուկացած, բայց չամուսնացած աղջիկն է»: Օրիորդ կոչականով դիմում ենք ներկայումս ամիստիք բոլոր չամուսնացած աղջիկներին, իզական սեռի տասնամյակից անց ներկայացուցչներին: Օրիորդը հարգալից կոչական է դարձել, ինչպես և **տիկինը**, որոնք սակայն անցալուր տրվում էին միայն ազնվական դասի ներկայացուցչներին: Եթե պատմիչն առանց հատուկ

անունը տալու, ասում էր օրիորդ հայոց, օրիորդ պլանաց, ապա դրանով նկատի ունեն (ինչպես և մենք) արքայի ջրոցը, աղջկան:

Ուրեմն օրիորդ (կամ հին հնչապատկերով **աւրիորդ**) նշանակում էր «թագավորական, իշխանական, ազնվական տոհմի աղջիկ, բարձր տոհմից, ազնվատոհմիկ», իսկ ներկայումս, կոչելով օրիորդ յուրաքանչյուր հանդիպած աղջնակից բարձր տարիքի իզական սեռի ներկայացուցչի, մեծարում ենք նրան հավասարեցնելով ազնվատոհմիկ աղջիկներին:

Աւրիորդ կամ **օրիորդ** բառի ծագումը մնում է չպարզված (որոշ ծեռագրերում գտնում ենք նաև **օրւորդ**, **որիորդ** գրությունները): Ենթադրում են, որ բառի առաջին մասը **աւրի** կամ **որի**, **օրի**, **պետք** է նշանակել «իշխան, տեր, պարոն», իսկ **աւրի-որդ** «մեծազարմի որդի» ...

Հնարավոր էր նման բան: Միանգամայն, քանի որ շուտերեմում նույնպես ունենք այս տիպի զարգացմամբ **барин**՝ «իշխան, տեր, պարոն, բարոն» բառից **барыня**՝ «տիկին, խանում, աղջիկ», **барышня**՝ «օրիորդ» բառերը: Չի բացառվում, որ այն կապ ունի խուփերենի avri կամ evri՝ «տեր, իշխան» բառի հետ, այսինքն **աւրիորդ**՝ «ավրիի, իշխանի որդի»:

231. ՄԻՆՉԵԿ ՈՐ ՏԱՐԻՔԻ ՏՂԱՆ Է ԿՈՉՎՈՒՄ ՊԱՏԱՆԻ

Վահագնի ծնունդը նկարագրելիս խորենացին նրան **պատանեկիկ** է անվանում, որ նշանակում է փոքրիկ **պատանի**: Հայոց Արտաշես արքան պանների դեմ մղած կռիվ ընթացքում գերեվարեց թագաժառանգին: Եղբորն ազատելու հույսով **Քուռ** գետի մյուս ափից Արտաշեսին է դիմում թարգմանիչների օգնությամբ Սաթենիկը.

Թեզ ասեմ, այդ քաջ Արտաշես,
Որ յաղթեցեր քաջ ազգին պլանաց.
Եկ հաւանեաց բանից չաջգեղոյ դստերս պլանաց
Տաւ զպատանիդ:

(Թեզ եմ ասում, քաջ տղամարդ Արտաշես, որ հաղթեցիր քաջ ազգին պլանների, արի լսիր պլանների գեղաչաչա դստեր խոսքերը և տուր այդ **պատանին**):

Քանի՞ տարեկան էր Սաթենիկի եղբայրը, որին **պատանի** է անվանում խորենացին: Այս մասին ակնարկ չկա, բայց քանի որ նա մասնակցում էր կռիվին, ուստի պիտի որ բավական հասուն լիներ: Այժմ հարց է առաջանում, **պատանի** մինչև ո՞ր տարիքի ամեն է համարվում: **Մանուկ** և **երիտասարդ** տարիքների միջև ընկած հասակը չէ՞: Եվ կամ ասենք, կարո՞ւմ ենք «**Պատանի** հանդիսատեսի թատրոն» ցուցանակը և հարց տալիս ինքներս մեզ, մինչև քանի՞ տարեկանների համար է այս թատրոնը: Ի դեպ, **պատանի** բառի ծագումը հայտնի չէ, և միայն արաբերենն ունի նրա զուգահեռ ձևը՝ **fatani**՝ «պատանի, տղա, երիտասարդ մարդ» նշանակությամբ: Ինչպես գիտենք, հայերեն պ հնչյունին արաբերենում համապատասխանում է **ֆ-ն**, ինչպես ունենք նաև **պանդոկ** և արաբերեն **fanuq**: Ըստ արաբերենի՝ **պատանի** տարիքը նաև հասնում է երիտասարդին, իսկ ըստ հայերենի բացատրական բառարանների՝ «արրուների հասակին հասնող դեռահաս տղա, նորահաս քահել տղա», այսինքն 17–18 տարեկանի ոչ անց: Եթե այդպես է, ապա կռիվն մասնավորապես Սաթենիկի եղբայրը պետք է որ քաջ լիներ երիտասարդ ռազմիկների հետ արշավանքի ելնելուց չվախենալու համար, քանի որ չէր լրացել նրա 18 տարին:

ԻՆՉԱԵՆ ԿՈՇԵԼ ԴԱՐԱՉՐՉԱՆԵՐ, ԵՐԵ ՍՊԱՆՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԻՆՅՈՒԼ

232. ՍԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՆՃԱՐԻ «ՉԱՐ ԶԱՎԱԿՆԵՐԻՑ» ՄԵԿԸ ԲԱՐՈՒԹԸ՝ ՎԱՌՈՂ

Մարդկային միտքը որոնում է միշտ իր կարիքների համար հնարքներ, միջոցներ՝ պատասպարվելու, ջեռուցման, երևեկելու, թռչելու և թշնամիներից պաշտպանվելու համար: Բնական է, որ նրա ստեղծած միջոցները, գործիքները պիտի անվանումներ ստանան: Միշտ չէ, որ մարդը բարի մտահղացումներով է հանդես գալիս: Երբեմն նաև չար մտքերն են խլրտում նրա ուղեղում և...

Ծնվում են «չար զավակներ»: Պատերազմական տեսիլիկայի կատարելագործումը և մարդ սպանելու նոր միջոցների ստեղծումը «չար զավակների» ծնունդ կարելի է համարել: Այդ ծնունդներն էլ պետք է, որ իրենց անուններն ունենային: Այսպես, օրինակ՝ **վառողի** գյուտը թեև ենթադրում են, որ կատարվել է Չինաստանում, և նախապես այն հրավառության, զվարճացման նպատակներին է ծառայել, սակայն, դառնալով սպանության զենք, հասել է բոլոր ժողովուրդներին տարբեր անուններով:

Ո՞վ առաջինը այս գյուտը բերեց Հայաստան, հայտնի չէ: Ո՞վ առաջինը կոչեց այն **վառող**, դարձյալ չգիտենք: Պատմությունից հայտնի է, որ բուրդ-թաթարական ցեղերը, չինացիների սովորելով **վառող** պատրաստելու գաղտնիքները, իրենց հետ բերեցին այն դեպի Արևմուտք: Նրանք անվանում էին այդ պայթուցիկ նյութը **barut** — **թարութ**: Մինչև Բալկանյան երկրները տարածված է այդ պայթուցիկը **barut** ձևով: Հայոց Առաքել պատմիչը այդ ձևով էլ գործածում է. «Ոչ էառ հուր, քանզի **թարութ** թռչեալ էր ի մեջ ջուրց ծովուն» (Չկրակվեց, որովհետև **թարութը** ծովի ջրերի մեջ թռչվել էր), «Հրդեհեալ **թարութ** ի վեր էառ գտունն» (Հրդեհվելով **թարութը** տունը ավերեց):

Առաջին անգամ **վառող** ձևով բառն արձանագրված ենք գտնում 1788 թվականին Ս. Պետերբուրգում հրատարակված կելեպատրա Սարաֆյանի «Գիրք, որ կոչի բանալի գիտութեան» զրույն: Իհարկե, այս բառի ստեղծման հարցում երկու հանգամանքներ կարող էին իրենց ծառայությունն առաջարկել: Նախ ժողովրդական ստուգաբանությամբ (այսինքն կեղծ)՝ պայթող նյութը համարվել է «վառ օր» որպես թե «այրվող օր» և ապա պարսկերենից հայերենին անցած մի շարք բառերի համաբանությամբ, ուր պարսկերենի **bar**-ի դիմաց հայերենն ունենում է վ, ինչպես,



օրինակ՝ databara դատավոր, bazar վաճառ, այստեղ էլ «ճիշտ» է համարվել բարութիւնը՝ հիմազ վառօղբը:

Հիշենք նաև բիաինա>վան, բարսամ>վարսամ և այլ ք>վ անցումները:

233. ՄԻՆՉԵԿ ՈՐ ՏԱՐԻՆ Է ԲՈ ՍԱՀՄԱՆԸ, ԵՐԻՏԱՍԱՐԴ

Միջնադարից սկսած հետաքրքրությունը հայերենի երիտասարդ բառի նկատմամբ շատ մեծ է եղել: Բոլոր լեզվաբաններին էլ զայնակղել է մի միտք. «Արդյոք չի՞ կազմված բառս երեք, տաս, արդ մասերից»: Միա այսպես էին «ստուգաբանուն» շատերը, այդ թվում նաև «Նոր հայկազյան բառարանի» հեղինակները: Միջնադարյան մեծ գիտնական Գրիգոր Տաթևացին գրում էր. «Երիտասարդ, որ է երեք տասն ամի»:

Բայց մի՞թե մեր հասկացողությանը երիտասարդը միայն երեք տասնամյակ ապրածն է կամ երեք տասնամյակի հասածը: Չէ՞ որ այս բառը դեռևս զրաբարում պարզաբանվում էր այսպես. «Երիտասարդ զմիջին հասակն անուանէ, որ ոչ կարի ծեր իցէ, և ոչ կարի մանուկ» (Երիտասարդ միջին հասակն է անվանվում, որը ոչ շատ ծեր է և ոչ շատ փոքրիկ): Լամբրոնացին երիտասարդության սկիզբը համարում է «ի գալ երրորդ եօթյան» (երրորդ յոթը լրանալը), այսինքն՝ քսանմեկ տարեկանը: Շատ լավ է եթե սա է երիտասարդության սկիզբը, ապա ոչ ոք նրա ավարտը կամ վերջին սահմանը չի նշում: Բայց մինչև ո՞ր տասնամյակը կյանքի պիտի համարել երիտասարդության տարիք: Չկա հստակ պատասխան, ուստի երիտասարդ հասակը հարաբերական հասկացողություն է և ոչ տարիքային: Ուրեմն բացառվում է խնդրո առարկա բառի մեջ երեք և տաս արմատները որոնելու տրամաբանությունը: Եվ ահա հայագետ Պոլ Լազարը գտավ համոզիչ լուծումը, պարսկերենում րետակ նշանակում է «Երիտասարդ, պատանի», չէ՞ որ հայտնի էր նաև բառի վերջին սարդ մասը, պարսկերեն sard «տարի» էր նշանակում, և այն գտնում ենք նաև մի շարք այլ բարդությունների մեջ, ինչպես, օրինակ՝ նավասարդ՝ «մոր տարի» պարսկերենի navasard «մոր» և սարդ՝ «տարիք» բառերից կամ ավսարդ՝ «պառավ» աւ և սարդ եզերից: Ուրեմն հայերենն իր «սովորության» համաձայն բառակերպի ր-ից առաջ կատարել էր ե-ի հավելումը դարձնելով ռատակ-սարդը՝ երիտակսարդ-երիտասարդ: Նման բառակերպի ե-ի հավելումներ հայերենը կատարել է նաև պարսկերեն բոց- երանգ, րոգ- երակ, րաք-երախ, րասո-երասան բառերում:

234. ԱՎԱՆԸ ՓՈՐՈՂԻՄ ԵՆ, ԹԵ՞ ՆԵՏՈՒՄ

Յուրաքանչյուր բառի ճակատագիր երբեք մնան չէ մյուսներին: Բառերի ծագումը երբեմն այնքան անակնկալ է ու անհավատալի, որ եթե այդ մասին զրավոր վկայություններ պահպանված չլինեին, հազիվ թե մենք հավատայինք բանավոր ավանդություններին կամ մեծահամբավ գիտնականների ենթադրություններին: Օրինակ՝ այսօր բոլորս էլ հասկանում ենք, ական-անետ, ական-ածիգ, ական-որս, ական-ապատել բառերի նշանակությունը, որովհետև նրանց հիմքում ընկած է ական՝ «պայթուցիկ սարք, հարմարանք» բառը: Սակայն ինչպե՞ս է առաջացել հենց ինքը՝ ական-ը: Անշուշտ սա կիստաքրի շատերին: Նախ պատմությունից գիտենք, որ պայթուցիկ նյութերի գործածությունը պատերազմական նպատակներով սկսվում է միայն ուշ միջնադարից, հետևաբար

հայերեն ական բառի ծագումը նույնպես ավելի վաղ լինել չէր կարող: Երբ թերթում ենք հայ մատենագրությունը, պատմիչների երկերը, գրիչների հիշատակարանները, ապա այնտեղ մենք բազմիցս հանդիպում ենք ական հատանել արտահայտությանը, որ նշանակում է «անցք բացել, փոս անել, խոռոչ բացել պարիսպի մեջ, պատռել պարիսպը, քանդել պատը» և այլն: Բայց չէ՞ որ առաջներում պայթուցիկ նյութ չկար, և ական-ը՝ անցքը հատում էին միայն քանդող գործիքներով: Այսպես, ուրեմն, ական նշանակում էր «անցք, փոս, պատռվածք, ճեղք, քաջվածք, խոռոչ»: Բայց ինչպե՞ս դարձավ պայթուցիկ սարք: Վառողի գյուղը հեշտացրեց պարիսպները քանդելու աշխատանքը, և մարդիկ սովորեցին ոչ թե ձեռքի ուժով, այլ պայթուցիկ նյութերի օգնությամբ ական հատել պարիսպներում: Աստիճանաբար մարդիկ մոռացան ական հատելու հին ձևերը և սկսեցին ական անվանել ոչ թե պատռվածքն ու անցքը, այլ հենց ական բացող նյութը, այսինքն՝ կատարվեց իմաստի փոխանցում, պատռվածք, փորվածք առաջացնողը սկսեց կոչվել իր իսկ արդյունքի անվամբ: Եվ այսօր արդեն մոռացած ական բառի հին նշանակությունը՝ մենք այն ընկալում ենք բոլորովին նոր նշանակությամբ: Երբ ատում ենք ական-անետ, հասկանում ենք պայթուցիկը նետող, ոչ թե «պատռվածք նետող», ական-որս նավ՝ «պայթուցիկ սարքեր որսացող», ոչ թե «պատռվածք որսացող, ական-ապատել՝ «պայթուցիկ նյութերով, սարքերով պատել» և ոչ թե «անցքերով, փոսերով, պատռվածքներով պատել» և այլն:

235. ՈՐԻՄԲ-Ը ՈՐԻՄԲԻ ԳՅՈՒՏԻՑ ԱՌԱՏ

Մեր օրերում շատ սովորական է դարձել թերթերում կամ գրականության մեջ հանդիպող ֆուգասային ռումբ, խորագրահ գումբ, ավիացիոն ռումբ և այլ մակդիրներով գործածվող ռումբ բառը, որի հետ էլ՝ ռմբակոծել, ռմբակոծիչ, ռմբակու, ռմբակիր բառերը:

Ու թեև ռումբի գյուղը ուշ ժամանակների տեխնիկայի արդյունք է, սակայն զարմանալի չի լինի, եթե սեսնք, որ այդ անունը մեկ և կես հազարամյակ առաջ գործածական էր զրաբարում, բայց այդ նշանակությամբ: Այսպես, հինգերորդ դարի գրականության մեջ ռումբը «պարսաբարը, կապարի կամ երկաթի գունը և կամ նիզակն» էր, որի համար էլ ռմբավոր էին անվանում «նիզակալից»։ Միջնադարյան գրագիտներից մեկում գտնում ենք. «Թե ռմբով գտնան պայլուն, թե սրով», որն ընկալվում է. «Թե նիզակով զարկես գայլին, թե սրով»: Մխիթարի «Դատաստանագրքում» գտնում ենք. «Ունին նիզակս, որ է ռումբ»:

Այսօրվա ռումբի իմաստի զարգացման ճանապարհին պիտի պատշաճը հատուցել ռմբաբար արտահայտությանը, որով որակում էին նետվող պարսաբարերը. «Մեքենայիք ռմբաբարս հոսելին» (Մեքենայով հոսում էին ռմբաբարերը): Իսկ այնուհետև, քանի որ նիզակ, այսինքն՝ ռումբը, նույնպես նետվող, դեպի թիրախը թռչող զենք էր, ուստի այս հատկանիշն էլ իր հետ բերեց մեր օրերի ռումբ հասկացությանը, որը թեև պայթուցիկ է, սակայն «նետվող» զենք է...

Իսկ որտեղի՞ց է նրա ծագումը: Ենթադրում են, որ կամ արաբերենի՝ rum՝ «նիզակ» բառն է ռումբի հիմքում ընկել, կամ էլ ինչ-որ փոխանցիկ մի բառ հարևան մի լեզվից: Հավանաբար ավելի մեծ տրամաչափի հրազենների՝ թմրամորթների, հրամորթների գյուտից հետո նրանց նետած պայթուցիկ արկերին փոխանցվեց բարանաբարերին տրված անվանումը՝ ռումբը: նկատի ուրեմն նրանց նույնպես հարավանելիս հասած մեծ աղմուկը: Ուրեմն ռումբ անունը արտահայտում է հիմնականում պայթող

այն առարկայի անունը, որ նետվում է դեպի նպատակակետը: Այս բառի բնածայնական ծագում ունենալն է հաստատում նույն հնչյունը նրա զուգահեռի գոյությունը պամիրյան լեզուներից շուգնաներենում: Եռլզաներենում **ռուր** նշանակում է «թխկոց, պայթյուն, որոտ»: Ուրեմն մեր ժամանակներում **ռուր**ն այն է, ինչ պայթում է որոտով, արծուկով, թեև միաժամանակ հասկանում ենք նաև «պայթուցիկ սարք», «ական» նշանակությամբ:

236. ՌՎ ԿԼԲԵՑ ԱՅՍՊԵՍ ՍԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՄ «ՉԱՐ ԶԱՎԱԿԻՆ»

Մարդկային հանճարի այս «չար զավակն» էլ զրեթե հասակակից է վառող-ին: Առաջին անգամ բառս գործածվում է 1796 թվականին լույս ընծայված մի դիվանի մեջ, ուր կարդում ենք. «Ոմանք զատրճանսն վառօտալիս առնին» (Ոմանք **ատրճանակներն** էին վառողով լցնում), «Պատրկակայծ **ատրճանավորաց**» (Պատրույզակայծ **ատրճանավորներին**):

Այնհայտ է, որ բառը կազմված է իրանական լեզվից կատարված փոխառություններից և պարսկերենի կամ պահլավերենի հնչյունական անցումների օրինաչափությունների գիտակցմամբ: Ատր և ճանակ լեզուներից **ատր**-ը իրանական **ատուր**ն է՝ «կրակը», որն ունենք նաև **ատուր**ի թառում, իսկ **ճան**-ը իրանական լեզուների չոն (զան)՝ «զարկող» բառն է, որը այդպես է տառադարձված իրանական լեզուներից փոխառյալ մյուս բառերի համաթարմությամբ. այսպիսով՝ **ատրճանակ** նշանակում է «կրակ զարկող», որպիսիք են **ruzi** – **ռոճիկ**, **dahliz** – **դահլիճ**, **bazar** – **վաճառ**, **tazi** – **տաճիկ** և այլն, ուստի, եթե պարսկերենի կանոններով լինում է բառը **ա- տուրզան-ակ**, ապա հայերենի կանոններով անշուշտ պիտի դառնա **ատրճան-ակ**:

237. ԻՆՉՈՒՒ ԵՆ ԱՍՈՒՄ ԹԻԿՈՒՆԲ ՉՈՒՆԵՍ

Չայերենի՝ պահլավերենից կատարած հազարավոր փոխառություններից մեկն է **փուշտիպան**-ը՝ «թիկնապահ, անձնապահ» նշանակությամբ, որ բազմիցս գործ է ածվել զրաբարում. «Կոչեր առ ինքն զամենայն **փուշտիպան**, համահարզս իւր» (Իր մոտ կանչեց իր բոլոր **փուշտիպաններին**, համահարզներին), «Ետ նմա **փուշտիպան** մի հաւատարիմ» (Տվեց նրան մի հավատարիմ պաշտպան) և այլն: Բառս կազմված է պարսկերենի **pašt**՝ «մեջք» և **paan**, **ban**՝ «պահող» բառերից: Բանի որ պահլավերենում **pašt**-ը հնչում էր **պ-ով**, ուստի հայերենում այն դարձավ **պաշտպան**, իսկ հետագայում՝ Սասանյանների ժամանակ, կրկին փոխ առնվելով, այս բառը դարձավ **փուշտիպան**, քանի որ այդ ժամանակ և հետագա պարսկերենում հնչում էին **pašt**-ը: Ուրեմն և **պաշտպան**-ը, և **փուշտիպան**-ը նախապես նշանակել են «թիկունքը պահող, թիկնապահ»: Պաշտպանը շատ կարևոր դեր ուներ կռվում: Չիչենք, որ հայերենում էլ կան «նա լավ **մեջք** ունի», «նա լավ կամ ածուր **թիկունք** ունի», «**մեջքով** մարդ է», «**թիկունքով** մարդ է» արտահայտությունները, որ համազոր են **պաշտպան**-ին:

238. ԱՍԵՆԱՍՈՏԻԿՆ ՈՒ ՄՏԵՐԻՍԸ ԿԱՐԱՊԵՏՆ Է

Մանկավարտեզում մի երգ էինք երգում. «Եկար ծիծեռնակ՝ գարնան **կարապետ**... Ինչո՞ւ գարնան կարապետ, թե՛րևս ավետաբեր լինելու պատճառով»:

Գրաբարյան մատյաններից դիմելով՝ կզտենք **կարապետ**-ի նշանակությունները՝ «ռահվիրա, ճանապարհ բացող, առաջամարտիկ, առաջընթաց, սուրհանդակ», օրինակ. «Սա է **կարապետ** յաւուր զալետան փրկչին» (Փրկչի զալետյան օրվա սուրհանդակն է սա): Չայոց արուևիքում սակայն շատ կարևոր մի պաշտոն էր վերապահվում **Կարապետ արքային**, որի մասին հիշատակում է Ազաթանգեղոսը: Տրդատ թագավորը Գրիգոր Լուսավորչի երկու որդիներին Քյուզանդիայից Չայաստան բերելը հանձնարարում է երեք բարձրաստիճան անձնավորությունների՝ հայոց սպարապետին՝ Արտավազդին, Աշոցքի գավառի իշխան Տաճատին և երրորդը՝ թագավորի **կարապետ Դատ**-ին: Փաստորեն այստեղ արքայի կարապետը հանդես էր գալիս **թիկնապահ** բառի նախնական և ամենահին նշանակությամբ:

Եզգվարանական մարզաճյուղի զոհ **կարապետը** մերք պարսկերենի **kar**՝ «աշխատանք» և **pati**՝ «պետ» բառերից է ենթադրվել (Լազարո, Մենևիշյան), մերք էլ **կարապետ** կամ **կարավանապետ** բառերից (ԼՅԲ, Տերվիշյան):

Իհարկե, վերոհիշյալ հեղինակները անտեղյակ էին միջագետքյան սեպագիր արձանագրություններին: Աքքադերենում գտնում ենք, թեև մի քիչ այլ հնչյունով, և **qurub** բառը՝ «մտերիմ, մերձավոր, թիկնապահ, պահապան, զինակիր, առաջամարտիկ» նշանակություններով, որի արմատն է սեմական **qarab**, **qurub**, **qereb** (գրբ)՝ «մոտենալ, մոտ» բառը: Այստեղ **կարապետը** կարող ենք փոխարինել **թիկնապահ** բառով: Ուրեմն **կարապետը** նախապես նշանակում էր «մոտիկ, մտերիմ, մերձավոր, վստահելի անձ»: Այս **գրբ** արմատը պահպանվել է նաև արաբերենում, հեշտ է նկատել **aqraba**՝ մերձավոր՝ «մտերիմ-բարեկամներ» բառի մեջ **գրբ** արմատը:

Չետագայում հայերենում **կարապետը** որոշ իմաստային փոփոխություններ է կրել իրեն տրվող բազմաթույթ հանձնարարությունների պատճառով: Այսինքն՝ թագավորը, որպես ամենավստահելի անձ, նրան է հանձնարարել և սուրհանդակի, և առաջամարտիկի, և ավետաբերի, և առաջընթացի պարտականությունները: Կորնական-եկեղեցական զրականության մեջ Քրիստոսի զալուստը ավետող Սկրուչին պարզապես **կարապետ** անվանեցին՝ որպես Չիսուսի զալետյան ավետաբեր, սուրհանդակ, առաջընթաց:

239. ՀՐԱՆՈ՞Ռ, ԹԵ՞ ԹՆԴԱՆՈՌ

Թղճաճոթի կամ հրանճոթի գյուղը համեմատաբար նոր պատմություն է և մի քանի հարյուրամյակից այն կողմ չի անցնում: Ուստի հայ պատմագրության մեջ դուք չեք կարող հանդիպել այդ բառերին՝ ընդհուպ մինչև 18-րդ դարը: Պատերազմական արվեստի մեջ հաստատուն տեղ բռնած այդ զենքերի անվանումները ստիպված էին պատճենելով ստեղծել նաև հայերը (կամ սեփական միջոցներով) կամ փոխ առնելով օտարներից (թուրքերենից՝ թուխ, ռուս.՝ **пушка**) և այլն:

Քանի որ դասական հայերենից ունենիք զորածված **անօթ պատերազմի, անօթ մահուան** և նման այլ կապակցություններ, ուր **անօթ**-ը նշանակում էր ոչ միայն «անամ, պարունակող», այլև «սարք, զործիք», որով վերոհիշյալ բառերն ընկալվում էին «պատերազմի սարք, զործիք», «մահվան նարք, զործիք» նշանակություններով,

ուստի անոթ—ին ավելացրին հուր՝ «կրակ» և ստացվեց **հրանոթ**՝ «կրակի սարք, գործիք», կամ թնդալ՝ «որոտալ» արմատից **թնդ**—ը և ստացվեց **թնդանոթ**՝ «որոտա-
ցող սարք, գործիք» բառը (տե՛ս **անոթ**):

240. ՍՊԱՈԱԶԵՆ

Սպառազինության մրցավազք, **սպառազինվել**, **սպառազինություն** և նման այլ արտահայտություններ այսօր ծանոթ են յուրաքանչյուրին, որովհետև թերթերի էջերում ամեն օր գրեթե կարելի է հանդիպել այդ հարցերի շուրջ տպագրված հաղորդումների ու քննարկումներին:

Ի՞նչ է նշանակում **սպառազինություն**: Այս բառի բարդ լինելը ինքնին նկատելի է, երբ այնտեղից մեզ ծանոթ **զենք**—ը (զենք—ը) անջատում ենք, բայց **ի՞նչ է սպառ**—ը, ինչո՞ւ **սպառ**: Հայերենում **սպառ** նշանակում է «վերջ», որից ի **սպառ**՝ «բոլորովին, մինչև վերջ, ամբողջովին» բայականը՝ **սպառ**—ել, որ նշանակում է «վերջացնել, վատնել, հատցնել», և այլն: Ահա սրանից պարզ է դառնում **սպառազեն**—ի նշանակությունը, որն ընկալվում է «մինչև վերջ զինված, կատարյալ, ամբողջովին, զինված մինչև վերջին հնարավորությունը, մինչև վերջին սահմանը» նշանակություններով: Համեմատոր «մինչև ատամները զինված» արտահայտությունը: Աստվածաշնչում գտնում ենք բազմիցս այս բառից կազմված ձևեր, ինչպես, օր.՝ «հազար—հազար այր **սպառազեն**», «երեք հազար վառելօք **սպառազեն**» «առ դու քեզ **զսպառազինութիւն** նորա» և այլն:

Այս բառը իր գուպախեռն ունի իրանական լեզուներում, ինչպես պահլավերենում, ուր հանդիպում ենք **spar** կամ **spur** բառերին, որ նշանակում են «կատարյալ լրացած, վերջացած»: Այս իսկ պատճառով էլ որոշ լեզվաբաններ այն կարծիքին են, որ հայերեն **սպառ/սպուռ**—ը փոխառություն է պահլավերենից: Մեր կարծիքով, դրանք իրանալեզու սկյութական ցեղերից մնացած ընդհանրություններ են և՛ հայերենի, և՛ իրանականների համար:

Հայերենում գործածական է եղել նաև այս երկու ձևերից բարդված **սպառասպուռ** բառը, որ զործածվում է «կատարյալ» լրիվ նշանակությամբ: Օրինակ՝ նույն Աստվածաշնչում հանդիպում ենք «խնդրեցին **սպառասպուռ** զվրժ արեան» (այսինքն՝ խնդրեցին ի սպառ, կատարյալ, լրիվ, ամբողջովին վրժ):

241. ԻՆՉՊԵՆ «ՆԵՏՎՈՐԸ» ԴԱՐՁԱՎ ԵՎ ԵՎ «ՊԱՅՁՈՂ»

Իրոք շատ հարուստ է զրաբարի գանձարանը, որտեղ մեծ թիվ են կազմում բազմիմաստ բառերը: Այդ պատճառով էլ, երբ նեղն ենք ընկնում, դիմում ենք հոգեպահուստ այդ գանձարանին: Այսպես, օրինակ՝ զրաբարում արկ՝ «նետել, ձգել» (իրանական *harek*) բառից կազմված ունենք շուրջ 50 բարդություններ ու ածանցված բառեր, ինչպես, օրինակ, զլխարկ՝ «զլխին ձգելու բան», վերարկու՝ «կրան զցելու բան», ակնարկ՝ ձեռնարկ, խուզարկու, մեկնարկ, ներարկել, խնկարկել, սակարկել, թվարկել, անվանարկել, գործարկել, բանտարկյալ, խնդրարկու, բանտարկու, յուրարկավոր և այլն: Եվ ահա քսաներորդ դարում այս հանգստի մեկնած բառին անհամոզուսացրին և, օգտվելով նրա հիմնական իմաստից, օգտագործել սկսեցին որպես ռուսերեն **снаряд** բառի համարժեք՝ «իրանորից նետված պայթուցիկ սարք» նշանակությամբ: Այս բառը դարձավ մարդկային չար համեմարի գյուտերից մեկի թարգմանը: Օրինակ՝ բլուրների վրա

սկսեցին պայթել **արկերը**: **Արկերն** ու ականները խլացնում էին հրամանատարի խոսքը: **Արկերն** արդեն ընկնում էին կամրջի և գետանցի վրա:

242. ԶԻՆՎՈՐ-Ը ՍՈՒԴԱՏ-Ը ԶԷ, ՍՈՒԴԱՏ-Ն ԷՆ ՍՈՒԻԴ-Ը ԶԷ

Հայերենի **զինվոր**, **ռազմիկ**, **մարտիկ**, **բանակային** բառերը յուրաքանչյուր դպրոցականի համար էլ հասկանալի են և դժվար թե բացատրության կարիք ունենան: Անկասկած **զինվոր**—ի հիմքում **զեն** կամ **զենք** արմատն է, **ռազմիկ**—ի հիմքում **ռազմ**—ը, **մարտիկ**—ի հիմքում **մարտ**—ը, իսկ **բանակային**—ի հիմքում **բանակ**—ը: Սակայն հայկական ժողովրդական խաղիկներում և բազմաթիվ արևելյան քարաքանդերում առկա է ռուսերենից փոխառյալ **սոլդատ**՝ **солдат** բառը սաղոթք ձևով: Պիտի ասել, որ **սաղոթք**—ը իր ծագմանը ոչ **զինվոր**, ոչ **ռազմիկ**, ոչ **մարտիկ** և ոչ էլ **բանակային** է նշանակում, թեև օգտագործվում է այդ նշանակություններով: Ահա մի քանի հատված Մ. Աբեղյանի «Հայերեն ժողովրդական խաղիկներից», ուր **զինվոր** բառի փոխարեն գտնում ենք **սաղոթք**—ը.

Շիրանի ծառ ծովել ա,	Կամ	Յարիս գրեցին սաղոթք .
Յարս սաղոթք գրվել ա,		Եկավ սաղոթքի թուրքը.
Յար ցան, սաղոթք մի գնա,		Բալաբանները զարկին,
Քո եղնիկը կը մնա:		Կազարմեն սաղոթք լցին:

Բանն այն է, որ ռուսերենն էլ **солдат**—ը փոխ է առել գերմաներենի *Soldat*—ից, որ **զինվոր** նշանակությունից առաջ ուներ «վարձկան, վարձու» նշանակությունները: Ահա թե ինչու: Բյուզանդացի իմպերատոր Կոստանդինը որոշեց վերացնել այն դրամական քառսը, որն ստեղծվել էր նախորդ ինքնակալների կողմից տարբեր քաշերի դրամներ բաց թողնելու պատճառով: Նա հռոմեական բանակում ծառայող վարձկան գերմանացիներին վճարելու նպատակով բաց թողեց ոսկե դրամներ, որոնք անվանեցին *solidus*—ներ, լատիներենի *solidus*՝ «ամուր, հաստատուն, կայուն, հիմնավոր» բառից (նկատի առնելով դրանց ավելի կայուն և հաստատուն մնալու հեռանկարը): Իսկ այս դրամներն ստացող **զինվորներին** սկսեցին անվանել *Soldat*—ներ, որից էլ՝ ռուսերենի **սոլդատ**—ը: Ֆրանսերենում *solde* նշանակում է «րոշակ (զինվորի), վարձկան, զեչք», անգլերենում *soldier*՝ «զինվոր», բայց սա դեռ ամենը չէ:

Ռուս և եվրոպական գրականության ազդեցության տակ հայերեն են թափանցել նաև **սոլիդ մարդ**, **սոլիդ աշխատանք**, **սոլիդ զործ**, **սոլիդ դիրք** և այլ նման արտահայտություններ, որոնք, պարզվում է, ազգականներ են **սոլդատ**—ի հետ: Ինչո՞ւ կամ ինչպե՞ս՝ կհարցնեք դուք: Չէ՞ որ **սոլդատ**—ն էլ ծագում էր լատիներեն *solde*՝ «ամուր, կայուն, հաստատուն, հիմնավոր» բառից, ուրեմն երկուսն էլ արյունակից են, և միայն թե հայերենում **սոլիդ**—ը ձեռք է բերել մի քիչ այլ նշանակություն. **սոլիդ մարդ** ավելի շատ ընկալվում է «լուրջ մարդ, ծանրակշիռ, պատկառազորու մարդ» նշանակություններով:

243. ԱՆԷՐԸ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌԱՏՆՈՐԴՆ Է

Հայկական ժողովրդական եպոսում երկու **Մհերներ** կան՝ **Մեծ Մհերը** և **Փոքր Մհերը**, որոնց անվան ծագման մասին կան տարբեր կարծիքներ, ոմանք ենթադրում են, որ **Մհիր**—ից է առաջացել **Մհեր**—ը:

Սակայն, ինչպես Մ. Խորենացու ժամանակներում գրի առած բանավոր ավանդությունն էր հաղորդում հայերի Բաբելոնից գալու մասին, այնպես էլ լեզվաբանական փաստերը գալիս են հաստատելու այս ավանդության ճիշտ լինելը: **Մհեր** բառը աքքադերենում հնչում է muerr և նշանակում է «ժողովրդի, զորքի առաջնորդ»:

244. ՄԱՐԴՈՒՆ ԼԵԵԼ ՍԵԾԱԿՈՂՈՒԹՅՈՒՆ Է, ԹԵ՛ ԴԱԺԱՆՈՒԹՅՈՒՆ

«Մեր երկիրն ընկավ թշնամական լծի տակ», «Ոչ միայն Հայաստանը, այլև Ռուսաստանը դարձրե շարունակ հեծում էին թաթարական լծի տակ», «Օտարի լուծը շատ ծանր է» և նման արտահայտությունների գրականության մեջ շատ կարելի է հանդիպել: Հայերենի բառարանները տալիս են լուծ բառի մինչև 13 նշանակություններ: Բերենք հիմնականները.

1. Փայտե ձող, սարք, որը հազցնում են եզների վզին կապելով նրանց սայլին, գութանին, արորին, կամին:
2. Հարկադիր, անվճար աշխատանք տիրոջների համար և կեղծբողներից պարտադրված տուրք:
3. Ջույգ, ոչ կենտ:

Մարդու կողմից կատարված գյուտերի մեջ իր կարևոր տեղն ունի նաև **լծի** սարքի ստեղծումը, քաշող կենդանական ուժը իր նպատակներին ծառայեցնելու այս մտահղացումը կարևոր մի տեսակ էր մարդու զարգացման դժվար ու ձիգ ճանապարհին: Սակայն, ինչպես միշտ, այս անգամ էլ լավ գյուտը ծնունդ էր տալիս նպատակների ծառայեցնելու մտահղացումն էլ չուշացավ: Մարդը կենդանու փոխարեն գերի վերցված թշնամիներին սկսեց կապել լծին, այսինքն՝ լծի տակ դրեց կամ **լծեց** և ստիպեց աշխատել: Դա ո՞ր դարում եղավ առաջինը և ո՞ր երկրում դժվար էր ասել, սակայն առաջին գրավոր վկայությունը այս մասին գտնում ենք մեզանից երեք հազար վեց հարյուր տարի առաջ կազմված խեթական օրենսդիր կայսր **Տելիսի** օրենսգրքում՝ «խեթական օրենքներում»:



խեթական օրենքներում խտվում է երկու տեսակի հարկադիր աշխատանքների մասին, որոնցից մեկը կոչվում է luzzi, մյուսը՝ sahan: Այս luzzi—ն շատ է հիշեցնում հայերենի **լուծ** բառը՝ «հարկադիր աշխատանք» նշանակությամբ, ինչպես նաև հնչմամբ,

որն անժխտելի է: Ինչևհետ, Տելիսիումն (1525–1500 մ.թ.ա), խոսելով պալատական խարդավանքներին մասնակցած երեք բարձրաստիճան դավադիրների մասին, պատմում է իր «վեհանճնության» մասին նույնպես. «Երբ ես՝ թագավորս, լսեցի, որ Ֆանուկային, Տախարավալին և Տուրուխշային բերել են, և նրանց դատարանը մահապատիժ է որոշել, ես՝ թագավորս, նրանց գթացի, նրանց **հողազոր** դարձրի, զենքերը նրանց ուսից վերցրի, նրանց **լուծ** տվի»:

Ոմանք այս հայտարարությունն ընդունում են հենց ուղղակի նշանակությամբ՝ անասունների նման նրանց **լծելու**, իսկ ոմանք էլ հարկադիր աշխատեցնելու, այսինքն՝ փոխաբերական իմաստով:

Ինչևէ, եթե նույնիսկ Տելիսիումն դավադիրներին լծել է տվել գութանին և չի սպանել, ապա սա իսկական մեծահուզություն էր նրա ժամանակներում և ոչ թե դաժանություն, բայց և այնպես ստորացուցիչ և նվաստացուցիչ մի վիճակ՝ նման մեծուկ ապրողների համար: Սիս նման իրողություններից էլ ծնվել են **ընդ լուծ արկանել** «լծի տակ գցել», **լուծ** դնել, լծադիր և հարկապահանջ լինել, **լծակից**՝ «միասին բեռ քաշող, ծանրություն կրող», **լծկան**՝ «լուծ կրող անասուն», **լծորդ**՝ «կցորդ», **լծվել** մի գործի և այլ արտահայտություններն ու բառեր:

Պարծը գլորվում էին մեկ մյուսի հետևից, քաղաքակրթվում էր մարդը, սակայն ինչպես տեղեկանում ենք հռոմեական պատմիչների թողած տեղեկություններից, գերվածներին և պատժվածներին **լծի** տակ գցելու սովորությունը չի վերանում: Լատիներենի sup jugum «լծի տակ, լծի տակով» արտահայտությունը այդ սովորությունից է մնացել:

Տակիտոսի տարեգրություններից (15—րդ գիրք, 15) տեղեկանում ենք, որ մ.թ.ա. 62 թվականին **Արշամաշատի** մոտ հայ-պարթևական միացյալ զորքերի կողմից պարտության մատնված հռոմեական զորավար **Պետոսի** զինվորներին հայերն ստիպել են անցնել **լծի տակով** (sup jugum):

Լծի խորհրդանիշն այստեղ պայմանականորեն կատարում էր երեք միգակներով կազմված կամարը: Երկու միգակները խրված էին գետնում, իսկ երրորդը հորիզոնական դիրքով դրված էր նրանց վրա: Ուղղահայաց միգակների խոր բարձրած լինելը ստիպում էր զինվորներին անպայման կռուսակ և «լծի տակով» անցնել: Համեմատելի է այս խորհրդանշական հպատակեցումը «թրի տակով» անցնելու սիմվոլիկ արտահայտության հետ, որ գտնում ենք «Սասնա ծռեր»-ում:

245. ԴԱՅՄԱՆԸ ՈՐՊԵՏ ԵՎԱԳԱՐԱՆ ԿԱՄ ԻՆՉ Է ԴԱՇՆԱՍՈՒՐԸ

Բառերի **երկրորդ** կյանքի մասին առիթ է եղել արդեն խոսելու: Շատ երկար էլ **պիսանին**—ի ստեղծման պատմությունը: Ընդամենը երկու և կես հարյուրամյակ է անցել այն օրից, երբ իտալացի հրիստոֆորին ստեղծեց **դաշնամուրը**: Սպասեցեք: Իսկ որտեղից՞ այս բառը՝ **դաշն** և **ամուր**: Հայերենի զինանոցի՞ց: Շատ լավ: Բայց կապ չունի՞ արդյոք **դաշինք** բառի հետ: Իսկ եթե ունի, **դաշնակահարն** էլ «**դաշինք** խփողն» է: Կա՞ լրջություն այս կատակի մեջ:

Պարզվում է, որ լրջությունն ավելի է, քան թվում է: Հայերենի **դաշն** սեռականը՝ **դաշին**, պահվածիներնի dašn՝ «համաձայնագիր, դաշինք, պայմանավորվածություն»

բառից է ծագում: Այսպես՝ **դաշն կնքել**՝ «համաձայնվել», **դաշնակից**՝ «համաձայնության ընկեր», **դաշնակել**՝ «համաձայնեցնել խազերը, այսինքն՝ հնչյունները», **դաշնավոր**՝ «եղանակի նուտաները (հնչյունները) համաձայնեցված», այստեղից էլ **քաղցրաներդաշնակ**, **անճերդաշնակ**, **մելադաշնակ**, **դաշնադրություն**, **ձեռնադաշնակ**, **դաշնակ** և այլն:

Ահա և մոտենում ենք մեզ հետաքրքրող մասին: Երբ Եվրոպայում ստեղծվեցին ավելի կատարելագործված **պիանոները**, ուժեղ ծայրի համար կոչվեցին *forte* *piano*—**ֆորտե—պիանո** (*կամ piano forte*)՝ «ուժեղ քաղցրահունչ»: Այս բառը, պատճենվելով հայերեն, թարգմանվեց **դաշնամուր**, իսկ **պիանո**—ի համարժեքը արտահայտվեց **դաշնակ** բառով: Արեւմտահայ իրականության մեջ **դաշնակ**—ը գործածվում է նաև **դաշնամուր**—ի փոխարեն: **Դաշնակ** զարնող կամ **դաշնակահար** նշանակում է և **դաշնակ** նվագող, և **դաշնամուր** նվագող, մինչդեռ պիտի լիներ **դաշնամուրահար** **դաշնամուր** նվագողի նշանակությամբ:

Եվ այսպես, **դաշն**՝ «պայման, համաձայնություն» բառը դարձավ նվագարան, միաժամանակ հայ իրականության մեջ կուսակցության անուն **դաշնակցություն** և ներդաշնակություն. ինչպես Չարեմցն է ասում.

Դու ձգտում էիր **դաշնության**. Երբ **անդաշն** էր շուրջը կյանքը, կամ **դաշն** է ոգիդ աշխարհին, այդ մարտին մասնակից ես եթե:

246. ԵՌԵ ՄԵԿԸ «ԿԱՊՎԱԾ» Է, ԱՊԱ ՆԱ ՃՈՐՏ Է

Ֆիշենը «Ինտերնացիոնալի» հայտնի տողերը.

Ելիր, ում կյանքը անիծել է,
Ով **ճորտ** է, մերել է և ստրուկ...

Որտեղ **ճորտ** բառը «իրավագուրկ, ընչագուրկ կամ ստրկական կախման մեջ գտնվող դասակարգի մարդ» է նշանակում: Իսկ ընդհանրապես հայ միջնադարյան գրականության մեջ **ճորտ**—ը «սպասավոր, ծառա, ծիպակ, իշխանին հպատակ» նշանակությամբ է օգտագործվում: Ի դեպ, հայ մատենագրության մեջ **ճորտ** բառն առաջին անգամ գտնում ենք օգտագործված 11—րդ դարում Լարեկացու տաղերում. «Այն **ճորտն** ճոճ էր և ճապուկ» ...

Չետազայում ստեղծվեցին **ճորտատեր**, **ճորտատիրություն**, **ճորտություն**, **ճորտասիրական** հասկացությունները, որոնց բաղադրիչ **ճորտ**—ը «հողատիրոջը կամ իշխանին հարկատու հպատակ» է նշանակում:

Արդյո՞ք կարող ենք գտնել այս բառի ծագման ակունքները: Չարևան հնդեվրոպական լեզուներում չունենք զուգահեռներ, իսկ ոչ հնդեվրոպական լեզուներից միայն աքքադերենն է, որ կարող է տալ այս բառի ծագման բանալին: Բառն աքքադերենում հնչում է **šarrat**, որ նշանակում է «կապված»: Ի՞նչ կապ ունի «կապվածությունը» **ճորտի** հետ: Չէ՞ որ Չին Արևելքում գերեվարում էին մարդկանց նվաճված երկրներից և բերում էին հարկադիր աշխատանքներ կատարել տալու համար: Որպեսզի նրանք չփախչեն, կապկապում էին, և այդպես կապկապված էլ նրանք գերեվարվածները, պատկերված են Բիհիսթունի ժայռի վրա, ինչպես նաև

ասուրաբարեյական բարձրաքանդակներում: Չետաբար, **ճորտ** բառը «կապված, կաշկանդված» նշանակություններով հարատևել է հազարամյակներ և հասել մինչև մեր օրերը:

247. Ո՞Վ Է ՊԱՐՏԻԶԱՆԸ, ԵՎ Ո՞Վ ԳԿԱՐԴԻԱԿԱՆԸ

Սովորական բառ է այսօր հայերենում **պարտիզան**—ը, որից էլ՝ **պարտիզանական** պայքար, **պարտիզանություն**, **պարտիզան** դառնալ, **պարտիզանորեն**, **պարտիզանաբար** ձևերը: Իհարկե, **պարտիզան** այսօր բացատրության կարիք հազվեթե ունենա, որովհետև առաջին դասարանից արդեն աշակերտները ծանոթանում են ժողովրդական այդ հայրենասեր վրիժառուներին, որոնք բջնամու կանոնավոր զորքերի դեմ թերևս ոչ բացահայտ կամ բացահայտ պայքար են ծավալում թիկունքում կամ ընդհատակյա պայքարի ձևով, երբեմն նաև առճակատելով իրենց ոչ կանոնավոր խմբերով հանում հայրենիքի իրենց կյանքն են վտանգում: Բայց ինչո՞ւ **պարտիզան** ենք կոչում նման մարտիկներին: Ինչ—որ բան նշանակո՞ւմ է այս բառը: Ինչպե՞ս առաջացավ այն: Պարտիզան—ը ծագում է ֆրանսերենից, *partisane* կազմված է *partie*՝ «մաս, կողմ, բաժին» արմատից և *isan* ածանցից, ինչպես ունենք կուրտիզան (*courtizane*), որով ամբողջական բառը *partisane* ընկալվում էր «կուսակից, կողմնակից, պաշտպան», օրինակ՝ *ies partisans de la musique italienne*՝ «իտալական երաժշտության կողմնակիցներ (կամ պաշտպաններ)»:

Եվ այսպես, **պարտիզան**—ը, հետագայում տարածվելով եվրոպական այլ լեզուներում, ինչպես նաև ռուսերենում, ձեռք բերեց մի նոր իմաստ՝ ոչ կանոնավոր զորքի մարտիկ, զինվոր, որից էլ՝ **պարտիզանական** պայքար, ջոկատ և այլն: Ահա այս ոչ կանոնավոր զորքի պաշտպանի իմաստից էլ «ծայր առավ» **պարտիզանություն** անել՝ «ինքնազուլիս, անսխտան, անկանոն, առանց հրամանի մի գործ կատարել» նշանակությունը:

248. ԳՎԱՐԴԻԱ, ԳՎԱՐԴԻԱԿԱՆ...

Գվարդիական զորամաս, գվարդիական զունդ, գվարդիական ակնանցետ, հին գվարդիա, կարմիր գվարդիա, կուսակցության աննկուն գվարդիա և այլ արտահայտություններում հանդիպող **գվարդիա** բառը ծագում է ֆրանսերենի *gardie*՝ «թիկնապահ, պաշտպան» բառից: *Gardee*—ն թագավորի թիկնապահն էր, ապա՝ թիկնապահների զունդը, իսկ հետագայում այն զորամասը, որի խնդիրն էր պաշտպանել թագավորին կամ հրամանատարին: Երեկայումս նման կոչումն ավելի շուտ տրվում է որևէ զորամասի որպես պատվավոր մի անվանում և ոչ իրական թագավորի թիկնապահներին, որով հասկանում ենք «քաջ, խիզախ, անվեհեր, նվիրված, անդավաճան, օրինակ ծառայող, հավատարիմ զորամաս» իմաստով:

Սյունիքի ժողովրդական խաղիկներում հանդիպում ենք հետևյալ տողերին.

Կընստիմ տեղըս հարթ ա,
 Չորը կուսըս գյուլ ու վարթ ա...
 Բաղես չորք կուսը լոխ վարթ ա,
 Իմ յարը մին մազար մարթ ա...

Ղարաբաղյան խմբի բարբառներում դեռևս գործածական են **եսկուս**—այսկողմ, **Չուղայի բարբառում** **ճեսկուս**—ճերսը (ճերսի կողմը), Թբիլիսիի բարբառում **Ասուկ կույս կողմանե՛** արտահայտությունները: Կույս բառի «կողմ» նշանակությունը մոռացվել է և նրա կողքին կրկնակի տեղ է գրավել կողմանե բառը՝ դառնալով Ասուկ կույս կողմանե, այսինքն՝ ոչ թե ընկալվում է «Աստու կողմից կողմից» կրկնակիրոն, այլ պարզապես կույսի «կողմ» նշանակությունը չի ընկալվում:

Կասկած չի կարող լինել, որ խաղիկներում հանդիպող **չորք կուս**—ը նշանակում է «չորս կողմ», այսինքն՝ այս կուս—ը գրաբարյան կոյս—կողմ բառն է Գորիսի բարբառի արտասանությամբ: Մենք գրաբարից ունենք ավանդված **քառակուսի, կուսակալ, յայսկոյս, յայնկոյս, կուսակցական, մեկուսի, մեկուսանալ, չորեքկուսի, երեքկուսի, ծովակոյս, աստուածակոյս, յետ կոյս** բառերը, որոնք «ազգակից» են՝ իրենց մեջ ունենալով ընդհանուր կոյս—կողմ բառը: Առերևույթ կարող էր թվալ, թե ոչ մի կապ չի կարող լինել **քառակուսի՝ «չորսկողմանի»** բառի և **մեկուսիչ՝ «անջատող, առանձնացնող, բաժանող, զատող», կուսակցական՝ «առանձնանալ, զատվել, մենանալ», կուսակալ՝ «կողմնակալ»,** այսինքն՝ պատմական Հայաստանի չորս կողմերից մեկի փոխարքա, բղեշխ, պաշտպան բառերի միջև:

Այսօր կոյս «կողմ» բառը գործածությունից դուրս է մղվել հավանաբար երկու պատճառներով. նախ հայերենում առկա են նրա մի շարք համարժեքները, ինչպես ուղղություն, դի. կողմ, կող. թև, երես, կուռ, էջ, և երկրորդ, որ հայերենում առկա է ևս մեկ նույնահունչ կույս բառը, որը նշանակում է «անարատ, անբիծ, մաքուր», ինչպես գործածում ենք կույս աղջիկ, կուսական անտառ, կուսական լեռներ և այլ արտահայտությունների մեջ, որոնք տեղիք են տալիս երկու կոյս—երի շփոթության:

250. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՄԵԾՈՒԹՅՈՒՆ

Պետություն հասկացությունը տարբեր լեզուներում տարբեր ձևով է առաջացել, սակայն նկատվում է նաև ընդհանուր մի օրինաչափություն, որով աստիճանաբար ստեղծվում են նման հասկացությունները: Օրինակ՝ ռուսերենում **государство**՝ «պետություն» հասկացությունը ծագում է **сударь**՝ «պարոն, տեր, իշխան» բառից, իսկ սա էլ **государь**՝ «թագավոր, տեր» բառից, **государство**՝ «տիրություն, իշխանություն, թագավորություն» բառն էլ **господи**՝ «տեր, Աստված», որից՝ **господин**՝ «տեր, պարոն»:

Գերմաներենում Reich՝ «պետություն, տիրություն, թագավորություն» բառը ծագում է reiche՝ «հարուստ, առատ, առատածեռն, շոսյլ» բառից: Հիշեցնենք, որ այս

համաբանությամբ էլ երբեմն հայերս անվանում ենք Արշակունյաց հարստություն՝ հարուստ բառից, որ համարժեք էր հունական pluton, dynastie, լատիներենի divitiæ, potentia, imperium, dynastie բառերին: Ուստի և Եվսեբիոս Կեսարացու «ժամանակագրության» մեջ հիշյալ բառերի արժեքով գրված է. «Ի վախճանել ասորեստանեայց հարստութեան» (Ասորեստանցիների թագավորության վախճանի ժամանակ) (կամ դիմաստիայի, տիրապետության): Գրաբարից սկսած մենք գործածում ենք նաև տերություն (տիրութիւն), հնում գրվում էր տէրութիւն, որ առաջացել է տէր բառից որպես հունարենի kuria, լատիներեն dominatie բառերի համարժեք: Գրաբարում «անկանիլ ընդ տէրությանը այլոց» նշանակում էր «այլոց, օտարների իշխանության տակ ընկնել»: Տէրութիւն, տիրութիւն բառերի հետ միասին սկսեցին գործածել նաև տիրապետութիւն (տէր և պետ—ութիւն բառերից), այսինքն՝ տիրող մեծություն (տիր—ա—պետողութիւն) նշանակությամբ: Իսկ պետ—ութիւն բառի հիմքում ունենք հայերենի պետ՝ «մեծ» արմատը (հիշենք վանեցիների ծե՛տի, թե՛ պետի՝ «փո՛քր է, թե՛ մեծ» արտահայտությունը): Սակայն ծագումնաբանորեն հայերենի պետ—ը գալիս է հնդեվրոպական սանսկրիտի pati՝ «տեր, իշխան» բառից, այսինքն՝ պետութիւն նշանակում էր նախ տեր—ութիւն, իշխան—ութիւն: «Իշխան—ութեանց և պետ—ութեանց հնագանդ լինել»,— կարդում ենք Սուրբ Գրքում: Ուրեմն պետ—ությունը մեծ իշխանությունն է: Պետություն բառին համարժեք գործածում ենք նաև թագ—աւորութիւն—ը՝ թագ—աւոր բառից և իշխան—ութիւն—ը՝ իշխան բառից:

251. ՄՊՈՐՏ ԵՎ ՄՊՈՐՏԱՍԵՆ

Ֆիզիկուլտուրայի և սպորտի զարգացման հետ միասին աշխարհի լեզուներն են մուտք գործում բազմաթիվ սպորտային տերմիններ: Նման բախտից չէր կարող խուսափել նաև հայերենը: Այն նույնպես ծագում է պատճենել եվրոպական մարզական տերմինները: Ասկայն ոչ բոլոր բառերն են հաջող ստացվում: Ուստի որոշ մարզական բառեր մենք վերցնում ենք երբեմն առանց պատճենելու, անվարամ: Նման բառերից են **Սպորտ**-ը, **թենիս**-ը, **ֆուտբոլ**-ը, **հոկեյ**-ը, **օսլի**-ն և այլն: **Սպորտ**-ը վերցվել է անգլերենից, իսկ անգլերենն էլ ֆրանսերենից: Ֆրանսերենում **դիսպորտ** նշանակում էր «զբաղմունք», սակայն ոչ թատրոն, համերգ հաճախելը կամ թրջախաղը, այլ թիավարելը, ծիավարելը և նման ֆիզիկական «զբաղմունքները»: Անգլերենը **դիսպորտ**-ը դարձրեց **սպորտ**, որն անցավ աշխարհի շատ լեզուներին, այդ թվում նաև ռուսերենին, որից էլ հայերենի **սպորտ**-ը: Այս **սպորտ** արմատից է կազմված նաև **սպորտսմեն**-ը՝ անգլերեն *man*՝ «մարդ» բառից, որը «ֆիզիկական զբաղմունքի մարդ» նշանակությամբ է այժմ ընկալվում: **Մարզիկ** բառը նրա հայերեն համարժեքն է:

252. ԵՁԵ ՍԱՐԶԻԿԸ «ՅՈՒՂՎԱԾՆ» Է, ԱՊԱ ՍԱՐԶԻՉՆ ԷԼ ՅՈՒՂԵԼՈՎ ՊԻՏԻ ԶԲԱՂՎ

Մեր օրերում **մարզիկ**, **մարզիչ**, **մարզանք**, **մարզարան**, **մարզաձև**, **մարմնամարզ**, **մարմնամարզություն**, **մարմնամարզիկ**, **մարզել** և **մարզվել** բառերը հնչում են շատ սովորական և կարիք չունեն բացատրության: Բայց բավական է, որ ասենք, թե զբաթարում **մարզիկը** ոչ թե սպորտով մարմնամարզությամբ զբաղվող անձն էր, այլ մարտիկը, վարժեցված զինվորը: **Մարզիկ** բառը գրվում էր նաև **մարծիկ** ձևով, ուստի հարկ կա ամրադրության **մարզ** և **մարծ** արմատների ծագմանը:

Գրաբարյան տեքստերում **մարզել** բառը (նաև նրանով կազմված բոլոր մյուս բառերը) համդիպում են նաև **մարծել** գրությամբ: Օրինակ Եղիշե պատմիչի մոտ միևնույն նախադասության մեջ գտնում ենք և՛ մել, և՛ մյուս գրությունները: Նա գրում է. «Ապա արծակեաց **զմարզիկսն**» (Ապա արծակեց զինվորներին), բառացի պիտի հասկանալ «վարժեցվածներին, կռվի համար, մարտերի համար պատրաստած զինվորներին»: Իսկ ինչո՞ւ գրիչները մերթ մել, մերթ մյուս ձևով էին գրում միևնույն բառը: Նրանք գիտեին, որ **մարզելը** և **մարծելը** տարբերակներ են: Եվ իսկապես իրանական լեզուներում գտնում ենք *marz* արմատը, որ նշանակում է «սրբել, օծել, մաքրել», բայց չէ՞ որ գրեթե նույնպիսի նշանակություններով է գործածվում հայերենի **մարծել**-ը՝ «յուղել, օծել, մարմինը ձերթով կամ ճարպով

տրորել»: Ապացո՞ւյց: Ահա բժշկապետ Մխիթար Գերացու հետևյալ տողերը. «Ուշիկ-ուշիկ զմարմինն **մարծել**» (Կամաց-կամաց մարմինը մարծիր, օծիր): Եվ սիհա պարզվում է, որ **մարզիչը** կամ **մարծիչը** մարտիկի կամ ռափամարտիկի, ըմբիշի մարմինը յուղով օծողն է, ձեթ սրողը՝ **մարծողը**, **մարծվել** կամ **մարզվել** նշանակել է «յուղով օծվել, չփվել և պատրաստվել մարտի, վարժվել», հետևաբար **մարզիկ/մարծիկն** էլ «օծյալ, կրթյալ, վարժեցյալ» անձնավորությունն է, որ էլնելու է մարտի:

Ինչպես միշտ, այս դեպքում էլ առանց լեզվաբանության հնչյունական օրենքների որևէ բան ապացուցելը կլինի ոչ գիտական, ուստի հիշեցնենք, որ տարբերակներից առաջինը **մարզել**-ը, համապատասխանում է իրանական (պաղավաճական) *marz*-ին և հետևաբար փոխառություն է, իսկ երկրորդ տարբերակը՝ **մարծել**-ը, բնիկ հայկական է, որն աստիճանաբար զիջեց դիրքերը «չյուրընկալված» ազգակցին: Ներկայումս մարծելու իմաստով գործածվում է **մերսել**-ը:

253. «ՁԱԳԱՎՈՐԸ ՍԵՈՎԱՎ» ԿԱՍ «ՉՈՐՍԱՆԿՅՈՒՆՎՈՐ» ԽԱՂԻ ՀԱՅՐԵՆԻԲԸ

Այսօր աշխարհում ամենամեծ մասսայականություն վայելող խաղերից մեկն է **շախմատ**-ը, որին հայերը ծանոթ են եղել շատ դարեր առաջ, ինչպես վկայում են պեղումներից հանված շախմատի պարագաները:

Թեև ավանդությունն ասում է, որ այս խաղի հայրենիքը Գնդկաստանն է, սակայն ինչո՞ւ է նրա անվանումը պարսկերեն: Չէ՞ որ **շախմատ** կամ **շահմատ** պարսկերենում նշանակում է «շահը մեռավ», իսկ մի՞թե հնդիկները իրենց հնարած խաղը չէին կոչի իրենց բառերով, ի՞նչ կարիք կար այլ կերպ վարվելու: Այո, հարցադրումը միանգամայն տրամաբանական է, և այս խաղն ունեցել է իր բուն հնդկական անվանումը: Դին հնդկերենում սանսկրիտում, այն անվանեցին **ճատար անկա**՝ «չորս անկյուն»՝ **ճատար**՝ «չորս» **անկա**՝ «անկյուն», և արաբները, արամեացիները այս բառը փոքր-ինչ աղավաղած տարածեցին հարևան և խալիֆաթի տիրապետության տակ ընկած երկրներում: Դայկական աղբյուրներում բառը գրվում էր **ճատարանջ**, **ճատարակ**, **շատարանջ**, **սաթարանջ** (արաբները հնդկերենից և այլ լեզուներից վերցրած բառերի գ-ն արտասանում էին որպես ճ/ջ, ինչպես ունենք **նարանգա** ձկնից **նարանջ** և ասպա՝ հայերեն **ճարից**): Իսկ պարսիկները, ելնելով խաղի հիմնական նպատակից, քանի որ թագավորի պարտությամբ ավարտվում էր խաղը, անվանեցին այն **շահ մատ**՝ «շահի մահ»: Ի դեպ, հիշեցնենք, որ արևմտահայերենում այսօր էլ մերժվում է **շախմատ** հորըջըունը (որը ռուսերենի *шахмат*-ի ազդեցությամբ է մուտք գործել արևելահայերենի մեջ **շահմատ**-ի փոխարեն) և շարունակվում է հին «հայերենացած» **ճատարակ**-ի գործածությունը, բացառված չէ, որ **ճատարակ**-ը ուղղակի **ճատարանկա**-ից է գալիս:

254. ԵՔԵ ՆԱՐԴԻ ԽԱՂԱՍ, ԿՍՈՎՈՐԵՍ <ԱՇՎԵԼ
ՊԱՐՍԿԵՐԵՆ՝ ՄԻՆՉԵՎ ՎԵՑԸ

Ավանդությունը պատմում է, որ **Մարդիկ**-ն ստեղծել են պարսիկները: Պարսկական շահը այդ խաղը ուղարկել է հնդկական թագավորին՝ որպես պարսկական մտքի նվաճում, որին ի պատասխան էլ հնդիկներն ստեղծել են **ճատար անկա-մ** շախմատը: Դառնանք **Մարդիկ**-ին: Այն կոչվում է **Մաև տապիր**:

Ի տարբերություն **շախմատի** պարագաների անվանումների՝ **Մարդի** խաղալիս մեծը խոսում ենք պարսկերեն, օրինակ՝ **գառի վրայի վեց** նշանները և դրանց զուգորդումները պարսկերենով ենք արտասանում, մեկ-ը՝ **յեթ**, երկուս-ը՝ **դու**, երեք-ը՝ **սե**, չորս-ը՝ **ջիար**, հինգ-ը՝ **փանջ**, վեց-ը՝ **շեշ**, շաշ, իսկ զույգ կամ կրկնակի թվերը՝ **դու** կամ **ջուխտ**՝ «զույգ» բառերով՝ **ջուխտ սե**՝ «զույգ երեք», **դու շեշ**՝ «զույգ վեց», **հաթ եք** և այլն:

Եվ այստեղ դուք արդեն հաշվում եք պարսկերեն, սակայն մինչև վեցը, քանի որ խորանարդած զանոթը ունեն միայն վեց միստ և ոչ ավելին:

255. ՄՐՅԱՆԿԸ «ԲՈՒՆՅՔԻ ՊԱՐԳԵՎՆ Է», ԻՍԿ
ՄՐՅՈՒԹՅՈՒՆԸ

Հայերեն **մուրց**՝ «բուռնց» բառի ստուգաբանությամբ զբաղվել են շատ լեզվաբաններ, սակայն քանի որ նրա ծագման կամ կազմության մասին բերած հիմնավորումները անբավարար են համարվում, ուստի այդ պատճառով էլ **մուրց**-ը մնում է «չստուգաբանված» բառերի ցանկում: Պատճառներից մեկն էլ նրա զուգահեռ ձևերի բացակայությունն է հնդեվրոպական կամ հարևան այլ լեզուներում:

Որպեսզի ճիշտ կարողանանք ընկալել այսօր շատ «սովորական» և շատ «խասկանալի» **մրցանակ**, **մրցություն**, **մրցել**, **մրցանակաբաշխություն**, **անմրցելի** բառերի ծագումը, բնականաբար պիտի սկսենք նրանց արմատի **մրց**-ի կամ **մուրց**-ի իմաստը բացահայտելուց: Ի՞նչ է նշանակում **մուրց**:

Պարբարում համդիպում ենք «**մուրց** ամռնին ընդ միմեանս» (միմյանց հետ բուռնցք էին անում) արտահայտությանը և կամ «**մուրցացի** ընդհարեալ» (բուռնցքով հարվածած) ձևերին, որոնց մեջ **մուրց** նշանակում է «բուռնցք, կռուի, մուշտի»:
Մուրց արմատից կազմված բառերն են **մրցանց** կամ **մրցում**, **մրցութիւն**, **մրցողութիւն**, որոնք նշանակում էին նախապես «պայքար, մարտ բուռնցքներով, կռուիներով», այսինքն բոնցքա-մարտ: **Մրցել** նշանակում էր «բուռնցքներով պայքարել, կռվել», բայց հետագայում ոչ միայն



կռուիներով, այլև ամեն տեսակի պայքարը, ընթշամարտը, պատերազմը, մտավոր, արվեստի կարողությունների չափումը **մրցում** էր: Խորենացին գրում էր. «Գայ ի վերայ քո Բէլ սկայիսք **մրցողօց**» (Քեզ վրա է գալիս Բելը հսկա մարտիկներով), այստեղ արդեն **մրցողները** միայն բոնցքամարտիկները չէին, այլ ընդհանրապես կռուիներ, ուժ չափողներ, զորեղներ: Այսպես ահա աստիճանաբար **մրցել**-ը՝ բուռնցքներով կռվելը, վեր ածվեց ընդհանրապես «ուժեղ չափելու, պայքարելով մենամարտելու» հասկացության, ընդ որում արդեն ուժեղ չափում էին ոչ թե կռուիներով, բուռնցքներով, այլև խելքով, արվեստով, հնարամտությամբ, արհեստի վարպետությամբ և **գիտելիքների** իմացությամբ կամ ուժով:

Եվ ահա **մրցարանը**, որ առաջ միայն բոնցքամարտիկների հանդիսավայրն էր, դարձավ ընդհանրապես ամեն տեսակի կարողությունների, ուժի և արվեստի վարպետության պայքարի ասպարեզ:

Այստեղից էլ՝ **մրցանակ** հասկացությունը, որ տրվում էր **բոնցքամարտում** հաղթողին իբրև վարձ, պարգևատրություն: Մինչդեռ հետագայում ամեն տեսակի հաղթողներին տրվող պարգևը կոչվեց **մրցանակ**: Ո՞վ չգիտե **Նորելյան մրցանակ**, **Լենինյան մրցանակ**, **Արամ խաչատրյանի** անվան **մրցանակ** և այլ նման **մրցանակների** և **մրցանակաբաշխությունների** մասին: Ուրեմն բառացի **մրցանակը**՝ «բուռնցքի պարզևն» է, իսկ **մրցանակաբաշխությունը**՝ «բուռնցքի պարզևի բաշխում», մինչդեռ մենք դրանք ընկալում ենք որպես ամեն տեսակի պայքարում հաղթողին տրվող պարգև, վարձատրություն և մեծարում:

256. ԾՆԿԻ ԲԵՐԵՒՆ, ԾՆԿԱԶՈՔ ԱՆԵՒՆ, ԹԵ՞ Ի ԳՈՒՋՍ
<ԱՐԿԱՆԵԼ

Պարբարից մեզ ժառանգություն մնացած բազմաթիվ բարդ բառեր նոր սերնդի համար այլևս այդպիսիք չեն, մանավանդ, եթե նրանց մեջ ինչ-որ հնչյուն արդեն «մաշվել» է: Նման բառերի թվին պիտի դասել հայերենի **ընկճել**-ը, որն ընկալվում է «եմբարկել, հարթել, հնազանդեցնել, զսպել, ծնկի բերել» նշանակություններով: Նա կազմված է **ընդ** և **գուճ** եզրերից: **Ընդ**-ը բազմիմաստ նախադրություն է, որ շատ հայերեն բառերի սկզբում է կցվում, ինչպես, օրինակ՝ **ընդամենը**, **ընդհանուր**, **ընդգրկել** և այլն, իսկ **գուճ** նշանակում է «ծունկ»: Օրինակ, «Ի **գուճս** իջեալ աղաչիին» (Աղաչում էին ծնկաչոք), ի **գուճս** հարկանել (ծնկի բերել), **ընդգճել**-ը աստիճանաբար սկսեցին հնչել **ընգճել** և **ընկճել**, քանի որ երկու «պայթակական» ծայրեղ հնչյունները՝ **դ**-ն և **գ**-ն, միմյանց մոտ հնչելը բավական դժվար էր: Եվ ահա արդեն դասական գրաբարում սաղմոսներում, զտնուն ենք. «Եվ **ընկճեա** զնոսա» (Եվ ծնկեցրու նրանց կամ **ծնկի բեր** նրանց), «Վայ է ինձ, դուստր իմ, **ընկճեցեր** զիս» (Ցավ է ինձ, դուստր իմ, ինձ հաղթեցիր): Եվ այսպես, ի **գուճս** հարկանել կամ **ընկճել** միևնույն է, թե **ծնկաչոք անել** կամ **ծնկի բերել**՝ մեր օրերի խոսակցական արտահայտություններով: Ի դեպ, չենք մկատում, երբ խոսակցական և գրական լեզվում գործ ենք ածում «ծնկաչոք» բառը, երկու անգամ ենք գործածում **ծունկ** բառը, մեկը՝ հայերեն՝ **ծունկ**, մյուսը՝ թուրքերեն **չոք**:

257. «ԲՈՆԵՑԵՔ-Ը» ԴԱՐՉԱԿ ԹԵՆԻՍ, ԲԱՅՑ ԻՆՉԸ՝
ՊԻՆԳ-ՊՈՆԳ

Հայերենը սպորտային կամ մարմնամարզական տերմինների, բառերի մեծ մասը փոխ է առնում ռուսերենի միջոցով կամ ռուսերենից: Նման բառերի նշանակությունը հայոց համար մնում է անըմբռնելի կամ մութ, բացի որ դրանք չեն բացատրվում ռուսերենով: Այս կարգի բառերից է **թեմիս**-ը, որը իր հերթին ռուսերենն էլ վերցրել է ֆրանսերենից: Ֆրանսերենում տեռու նշանակում է «քունցեք, որասցեք»: Սա բացակայություն է, որով դիմում են հակառակորդները միմյանց՝ գնդակին հարվածելիս: Սիս այսպես է առաջացել **թեմիս** խաղի անվանումը: Ի տարբերություն մեծ **թեմիսի**՝ գոյություն ունի նաև **սեղանի թեմիսը**, որն ստացել է մնան անվանում սեղանի վրա խաղացվելու պատճառով: Սեղանի թեմիսը կոչվում է նաև **պինգ-պոնգ**, որը բնածայնության արդյունք է, որպիսին առաջանում է գնդակին հարվածելիս:

258. ՍԱՆԿԿԿԻԿ՝ «ՍԱՀԱԿԻ Ի ՉԵՈՒՆՆ», ԹԵ՞ ԼԱԿ
ՍԱՆԿԻԿ

Ժողովրդական ստուգաբանության ենթարկվում են առավելապես այլալի լեզուներից փոխ առնված այն բառերը, որոնք հնչմամբ նման են սովյալ լեզվի հնչ-որ բառերի: Սիս այս կարգի ժողովրդական ստուգաբանության ենթարկված բառերից մեկը հայերենում:

Բազմաթիվ գեղարվեստական ստեղծագործություններում կարելի է հանդիպել հայերեն **մանկկապիկ** բառի գործածությանը, մոտավորապես այս կարգի նախադասություններում. «Թագաժառանգը գնում էր բազմաթիվ **մանկկապիկների** ուղեկցությամբ» «**Մանկկապիկները**, թագուհու շրջագծեստի քղանցքները բռնած, մտան դաշիվին» և այլն:

«Հայ-ռուսերեն բառարանում» **մանկկապիկի** դիմաց դրված է ռուսերեն **пак** բառը, որը նշանակում է «նաժիշտ, դրանիկ, պալատական ստորին պաշտոնյա»: Գ. Անտայանի «Հայերեն արմատական բառարանում» **մանկկապիկ**-ը բացատրված է «սենեկապան արքայի, արքունի սպասավոր»: «Նոր բառիցը հայկազեան լեզուի» հեղինակները **մանկկապիկ**-ը բացատրում են որպես **մանուկ լավիկ** (Բ հատոր, էջ 205), այսինքն՝ **մանկկապիկ** բառը կարծել են հայերեն **մանուկ**՝ «փոքրիկ երեխա» և **լավիկ** բառերից բաղադրված բարդություն: Մինչդեռ նույն գրքի վերջում, զգալով իրենց սխալը, նրանք ճշտում են այն (Բ հատոր, էջ 1057): Իրականում **մանկկապիկ**-ը հունարեն **մանկկապիտես** կամ **մանկկապիտ** «կաշե փուկով զինված» բառն է, ինչպես անվանում էին կայսեր պահապաններին: Գրիգոր Նարեկացին այս բառը տառադարձել է ճիշտ ձևով և գրել **մանկկապիտ**, բայց, ինչպես նշեցինք, ժողովուրդը, ծանոթ չլինելով այս բառի հունարեն ակունքներին, ընկալել է այն որպես հայերեն **մանկկապիկ**: Գունարեն բառի հիմքում ընկած են լատիներեն **մանուս**՝ «ձեռք» և **կլավա**՝ «մահակ» բառերը, այսինքն՝ «ձեռքին մահակ կորո»: Այսպես էին կոչվում թագավորի սենյակի դռանը կանգնած պահապանները:

259. Ո՞Վ Ե ՍԵՆԵԿԱՊԵՏԸ, ԵԹԵ ՍԵՆՅԱԿԸ ԿԱՆԱՆՈՑ Է

Մենք այսօր շատ սովորական ձևով ենք ընկալում **սենյակ** բառը, որ բառարաններում բացատրվում է հենց «սենյակ, խուց, բնակարանի, տան ներքին բաժանունը» նշանակություններով: **Սենյակ**-ից ունենք կազմված **ննջասենյակ**, **գրասենյակ**, **հյուրասենյակ**, **առանձնասենյակ**, **դասասենյակ**, իսկ գրաբարում նաև **սենեկապան**, **սենեկապետ**, **սենեկիկ** և այլ ձևեր: Բայց ի՞նչ է նշանակում **սենյակ**-ը (կամ **սենեակ**-ը, ինչպես գրաբարում էր գրվում), և ինչպե՞ս այս ձեռք բերեց մեր օրերի նշանակությունը, երբ գրաբարում և դրանից շատ դարեր առաջ **սենեակ**-ը բոլորովին այն նշանակությունը չուներ, ինչ ունի ներկայումս: Գրաբարյան տեսքերում, Սուրբ գրքում **սենեակ**-ը գործածվում էր նաև «կանանոց, շտեմարան, մթերանոց, մառան, պահեստ» նշանակություններով, իսկ որ կարևորն է, նաև «**հարս**, **հարձ**, **սիրուհի**, **կին**» նշանակություններով, որը և դառնում է մեզ համար մի քանակ այս բառի ծագումը հասկանալու համար: Այսպես, օրինակ՝ Ագաթանգեղոսն օգտագործում է «Աստղկան դիցն, **սենեակ** Վահագնի կարգացեալ ըստ յունկանհին, որ ինքն է Ափրոդիտես» (հունականի մծամոթյամբ Աստղիկ դիցուհուն Վահագնի սիրուհին (կամ կինն) են համարում, որն Ափրոդիտեն է): Կամ «Զի կուսանս ուտ պահել զինքեանս որպէս **սենեակքս**-ի» նախադասության մեջ, որ սուրբ Իգմատիոսի թղթերում է հանդիպում, թարգմանաբար կունենանք հետևյալ իմաստը. «Կույսերին սովորեցու իրենց Քրիստոսի կամոսից պես պահել» ... Սիս **սենեակ** բառի այս **կին**, **հարձ**, **սիրուհի** իմաստներն էլ հիմք են ծառայել **սենեկապան**, **սենեկապետ** բառերի կազմման համար, որոնք գործածվում էին «թագավորի կանանոցի պետ», «զանձարանի պետ» և «թիկնապահ» նշանակություններով: Այսպես, «Ներսես էր սիրելի **սենեկապետ** արքային Արշակայ» (Արշակ արքայի սիրելի **սենեկապետ** էր Ներսեսը) կամ «Երեք պատանիք, որ էին **սենեկապետը** նորայ» (Եղիշէ): **Սենեկապաններն** ու **սենեկապետները** թագավորների անենակատահելի անձինք էին, և միայն նրանք մուտք ունեին արքունիքի անենակավորական **կանանոցները** ու **զանձարանները**: Զէ՞ որ մինչև քրիստոնեությունը ընդունելը իսպաթավորներն էլ թագավորներն էլ թագաձակ կանայք և հարձեր (սիրուհիներ) ունեին, որոնց հսկելու համար անհրաժեշտ էին **սենեկապաններ** ու **սենեկապետներ**: Այս անվանումները կարելի է ընկալել նաև «կանանոցի, կանանց պահապաններ» իմաստով և ոչ այսօրվա «**սենյակի** պահապաններ» անունով: Սիս թե ինչու:

Հայերենի **սենեակ** բառի ծագումը առ այսօր մնում է դարերի փոշու տակ սքողված: Բնականաբար, յուրաքանչյուր ոչ լեզվաբանի համար էլ պարզ է, որ **սենեակ**-ը անանցավոր կազմություն ունի, և անանցն է այստեղ **-եակ**-ը, ինչպես ունենք այդ անանցն նաև **քառ-եակ**, **տղ-եակ**, **հնգ-եակ**, **եռ-եակ**, **պատան-եակ** և նման այլ շատ բառերում: Այս իսկ առումով էլ **սենեակ**-ից եթե հանում ենք **-եակ**-ը, ապա մեզ համար անիմաստ մի բառ կամ արմատ է մնում **սեն**-ը, որը հայերենի միջոցներով անհնար է մեկնել... Եվ ահա այստեղ է, որ օգնության է գալիս մեզ մեր հին դարերի հարևանների լեզուն՝ ասորերենը (կամ աքքադերենն ու բաբելերենը), ուր **sin**-ը նշանակում է «կին»: Օրինակ՝ **kima sinoi** նշանակում է «կնոջ նման, կնավարի», կամ **zikar u sinoi**՝ «մարդ ու կին» կամ «տղամարդու և կանացի» (այրական և կանացի): Եվ այսպես, այս վկայությունների լույսի տակ մեր ձևով է մեզ ներկայանում **սեն-եակ** բառի նշանակությունը: Ուրեմն,

այն հիմունքներով նշանակում էր «կանանց բնակարան, կանանոց, կանացի բաժանմունք, նաև ննջարան, նաև գաղտնի տեղ» և ապա ընդհանրապես որևէ «փակ պահանճոց, խուց, փակվող կացարան, մեկուսարան, ներքին բաժանմունք»: Եվ այսպես, այսօրվա **սենյակ** հասկացության մեջ մթազնել է նախնական կանանոցի, կանացի բաժանմունքի նշանակությունը, և նրանում իշխում է ընդհանրապես «փակվող, մեկուսացած բաժանմունք, կացարան» իմաստը, ինչպես որ ընկալում ենք այն մեր օրերում: Եվ այսպես, եթե մի պահ մտածենք **սենյակ** բառի հին ընկալմամբ, ապա **սենյակ** մտնել, **սենյակից** դուրս գալ նախադասությունները պիտի հասկանանք կանանոց մտնել, կանանոցից դուրս գալ առումներով... Համեմատության համար նշենք, որ պարսկերենում էլ կանանոցը կամ տան կանանց հատկացված բաժինը կոչվում է **եղբորու՝** «ներքին, նաև սիրտ»:

260. ԵՁԵ ԱՐԳԵԼՎԱԾ Է, ԱՊԱ ՀԱՐԵՍ Է

Գրականության մեջ գործածվում են հաճախ **կանանոց, հարեմ** բառերը, որոնք նույնական են իրենց իմաստները: Մինչև քրիստոնեություն ընդունելը **կանանոց** ունեին նաև հայոց թագավորները, ուր նրանց հարեմը էին կենում: Մուսուլմանական աշխարհում օրինական բան է համարվում **հարեմ** (կանանոց) ունենալը, սակայն փաստը մնում է փաստ, որ հարեմի կանայք խստիվ հսկողության տակ են գտնվում ներքինիների և կին սպասավորների կողմից: Ի՞նչ լեզվից է գալիս այդ **հարեմ**-ը: Այն իր ծագումով սեմական է և ունի «անջատված, կտրված, զատված» նշանակությունը: Աբբադներում **haram**՝ «զատել, անջատել», արաբերենում՝ **haram**՝ արգելված: Այստեղ կարող է իրավացիորեն հարց ծագել. «Արդյո՞ք կապ կա արաբերեն **հարեմ** և **հարամ** բառերի միջև: Այո, այն էլ ուղղակի:

Մեծ գործածություն ունի այն մեր բանավոր լեզվում և բարբառներում: Ասում ենք. «**Հարամ** լինի կերածդ»: «Երեխայի կերածը հալալ է, հազածը **հարամ**»: «Ծանճը **հարամն** ճաշս» և այլն: Հենց այս նշանակությունն էլ օգնում է հասկանալու նաև **հարեմ** բառի էությունը, տան այն մասը, որ այլոց համար արգելված վայր էր, կոչվեց **հարեմ**:

261. ԲԱՐՈՆԸ՝ ՊԱՐՈՆ ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

Պասական գրաբարում դուք չեք գտնի ոչ **բարոն**, ոչ **պարոն**, ոչ **պարոնայք** և ոչ էլ **արջիկ պարոն** բառերը: 11-րդ դարում միայն հայերենի բառապաշարում հայտնվեց **պարոն** բառը, իսկ նրան ծնունդ տվող **բարոնը՝** ավելի ուշ, հավանաբար 19-րդ դարում: Գրականության մեջ կարելի է հանդիպել հետևյալ տողերին, ուր կողք կողքի գործ են անվում **բարոն** ու **պարոնը** որպես անկախ բառեր. «Բարոն Մյունխաուզենի արկածների մասին զիրքը թարգմանել է **պարոն** թուամայանը»: Հենց նա էլ գրել է «Թմկաբերդի առումը» պոեմը, որն սկսվում է «Հե՛յ, **պարոններ**, ականց արեք թափառական աշուղին» բառերով: Հ. Թումանյանի երկերից ենք իմանում, որ Թիֆլիսի հայոց բարբառում լայն գործածություն ունի նաև **արջիկ պարոն** արտահայտությունը՝ որպես բարձրաստիճան կանանց ուղղված հարգալից արտահայտություն: Բայց ե՞րբ հայտնվեց մայրենի բառապաշարում **պարոնը** և ինչպե՞ս:

11-րդ դարում Կիլիկիայում հայտնվեցին խաչակիրները, որոնք եկել էին Քրիստոսի գերեզմանը անօրեններից ազատելու առաքելությամբ: Իհարկե դա միայն պատրվակ էր Լևանտի երկրները նվաճելու համար: Եվ նրանցից շատերը հաստատվեցին Կիպրոսում, Կիլիկիայում, Սիրիայում խնամհավան կապեր հաստատելով տեղի մեծատոհմիկներին, թագավորական տներին հետ: Այսպես, հայկական Ռուբինյան գահին հայտնվեցին Լուզինյանները և շատ ֆեոդալներ, որոնց կոչում էին **բարոններ, սիրյոններ, պրինցներ**:

Այս խաչակիրներից ֆրանսիացիներից, գերմանացիներից, իտալացիներից ու նկրպական մյուս ժողովուրդներից, զգալի թվով բառեր մտան հայոց բառապաշարի մեջ: Կիլիկյան հայոց լեզվում ֆրանսերեն **baron** կամ իտալերեն **barone** բառը դարձավ **պարոն**, որովհետև ծայրեղ հնչյունները այստեղ խլացնում էին և ընդհակառակը խուլերը ծայրեղացնում: Այսպես **prince** «իշխան» բառն էլ նրանց հնչում էին **բրինծ**, որն, իհարկե, չափի շփոթեց **բրնծի** հետ: Այսպես օրինակ, Հեթում պատմիչը գրում է. «Պարոնն հայոց կալա զՊեմունդ բրինճն Անտիոքայ» (Հայոց **պարոնը** (տեղ) բռնեց Անտիոքի **պրինց** Պեմունդին): Կիլիկյան թագավորությունում **պարոն** բառն ուներ «տեղ իշխան, ազնվական կալվածատեր, բարոն» նշանակությունը, իսկ հետագայում դարձավ միայն հարգալից տիրույթ, որով դիմում են տղամարդկանց: Արևմտահայ բարբառներում գտնում ենք պահպանված **պարոնի** հին նշանակությունը: Սիվրիիսարի մի խաղիկում ասվում է. «Պարոնին տղան չըլլա նե՛. փաշայինը հազըր է...»:

262. ԲՐՈՒՏԱԳՈՐԾ, ԹԵ՞ ԲՐՈՒՏ

Հայերենում արիեստներ և մսսնագիտություն ցույց տվող բառեր են կերտվում – **գործ**, – **արար** բառերի օգնությամբ: Օրինակ խոհարար, շինարար, կովարար, **թաղիքագործ**, **հողագործ**, **զինագործ**, **տակառագործ** և այլն: Կան և մի քանի արիեստների անվանումներ, որոնք զուրկ են վերոհիշյալ բաղադրիչներից: Այսպես, օրինակ **ճոն**՝ «մորթե գլխարկներ կարող», **բրուտ**՝ «կալե ամաններ պատրաստող, խեցեգործ»: Ի՞նչ կարող է նշանակել **բրուտ**-ը: Քանի որ նրա մասնագիտությունը կապված է **կալի** հետ, կապ չունի՞ արդյոք այդ բառը կալի կամ ցեխի հետ: Ի՞նչ կարծիք են լեզվաբանները: Ավաղ, պարզվում է, որ **բրուտը**-ը լեզվաբանական մարզանքների զոհերից մեկն է: Բայց որոնող գտնում է: Պարզվում է, որ այս բառի նշանակությունը պարզելու համար երկու բանալիներ կան: Սեկը հենց հայերենի բարբառներն են և գրաբարյան մի նախադասության **բրտեայ** ածականը և երկրորդը անդրեփարայան խեթական սեպագիր արձանագրություններում հանդիպող **թսրտ** «կալ» բառը:



Հայերենի մի շարք բարբառներում պահպանվել է **բրտին** բառը, որով անվանում

են կալի ազնիվ և ընտիր այն տեսակը, որից ամանեղեն են պատրաստում: Այս մասին վկայություն կա «Գավառական բառարանում» և «Հայոց բառ ու բանում»: Ուրեմն **բրուտ** կամ **բրտին** նշանակում է «կավ», իսկ **բրուտագործ**՝ «կավագործ»: Ժամանակի ընթացքում **բրուտ**—ագործ բառից դեն է նետվել —գործ եզրը, և մարդիկ **բրուտ** ասելով հասկացել են հենց կավագործին: Թեև թվում է, թե անհեթեթություն է կավագործի փոխարեն արհեստավորին կավ անվանելը, սակայն նման օրինակներ կան այլ լեզուներում ևս, հետևաբար մեր զարմանքն անտեղի է: Հիշենք **ճաղաշ** «ճկարիչ», ռուսերենի **бондарь**՝ «տակառագործ» և վերևում հիշատակված **ճուրջ**: Բացի այս հիմնավորումները, մեր ծեռքին կա և ավելի ուժեղ մի հիմք: Դեռևս գրաբարում **բրուտ** հայերեն բառի ածականը (լինում էր **բրտեայ**) գործ է ածվել ոչ թե կավագործ, այլ հենց կավե, կավից նշանակությամբ, ինչպես, օրինակ՝ Չովհան Մամիկոնյան պատմիչի օգտագործած **բրտեայ տապան** արտահայտության մեջ «կավե դագաղ» նշանակությամբ, երբ պատմում է Սուրբ Կարապետի նշխարները հավաքելու և կավե տապանի մեջ դնելու մասին:

Դարձյալ գրաբարում գործածվում է **բրուտ**—ը որպես «կավ» հետևյալ նախադասության մեջ. «Կոտորի՜ն զօրքն որպես անօթս **բրտեայ**» (Կոտորվում էին զորքերը կավե անոթների պես) և ոչ թե **բրուտի** անոթների պես, ինչպես մինչև այժմ սխալ ձևով հասկացվել է **բրուտ**—ը: Ուրեմն **բրտայ** պիտի ընկալել որպես կավե: Այսինքն՝ ածականաբար և ոչ գոյականաբար:

263. ՄՇԱԿԸ ՄՇԱԿՈՒՄ Է, ՈԱՆՉՊԱՐԸ՝ ՏԱՆՏԿՈՒՄ, <ԱՊԱ ԱՇԽԱՏՈՂԸ

Որպեսզի մենք հասնենք վերոհիշյալ բառերի ծագման ակունքներին, հարկ է, որ սկսենք հայերեն **աշխատել** բառից: Գրաբարում **աշխատել** կամ **աշխատ առնել**, **աշխատ լինել** նշանակում էր «հոգնել, չարչարվել, տանջվել», որից էլ՝ **աշխատոփուն**՝ «չարչարանք, գործ, արդյունք», իսկ ավելի ուշ՝ **աշխատանք**: Գրեթե նման զարգացում է անցել նաև հայերենի մշակել բառը, որի հիմքում մշակ բառն է, իսկ սրա հիմքում էլ՝ **շակ**—ը:

Այս մասին քիչ հետո: Հիշենք Ե. Զարենցի «Մաճկալ Սաքոյի պատմությունը», ուր նրա մասին հեղինակն ասում է.

Էդ չոր հացն էլ թե որ չլեր,
Ուրիշի էր մշակ գնում:
Ի՞նչ հիմանք Սաքոն **ռանչկար**,
Թե ինչի կ'ոտիվ անում...

Գրաբարում **մշակ** նշանակում էր «հողագործ, երկրագործ, այգեգործ, վարձկան բանվոր, սպասավոր, ծառա», որից էլ՝ **մշակել**՝ «հողը հերկել, վարել, պարարտացնել, ցանել և աճեցնել», ապա՝ «աշխատել, ծառայել, հղկել, կոկել» (օրինակ՝ «Սկսաս Նոյ այր լինել մշակ երկրի», «Այգեգործն մշակե զայգին», «Մշակել զբարի աւանդը» և այլն): Գետազայում **մշակ** էին անվանում նաև բեռնակիրներին:

Իսկ այժմ քանի որ գյուղատնտեսության մեջ մեքենայացումը իր վրա է վերցրել

հողագործության տանջալից աշխատանքները, ուստի ավելի շատ **մշակել**—ը դարձել է «հղկել, կոկել, զարգացնել» նշանակությամբ գործածվող մի հասկացություն, օրինակ Ա. Խաչատրյանը, **մշակելով** «Երջանկություն» բալետը, ստեղծեց «Գայանեն»: Կամ ստեղծվեց **մշակույթ** հասկացությունը որպես **պուլտրա**—ին համարժեք մի բառ: Ո՞ր մնաց «հողագործը», և տեսեք, թե ինչպես այն դարձավ **կուլտուրա մշակույթ**:

Իսկ եթե իմանալիք որտեղից է ծագում **մշակը**, արաբերենում թաճազ բառը մշանակում է «տառապանք, աշխատություն», որի արմատն է թաճ «ծանր, տառապալից լինել, հոգնեցուցիչ, տաժանելի», այսինքն **մշակը**՝ «ամեն տեսակի տառապալից և տանջալից աշխատանքներ կատարողն էր», ի դեպ, պարսկերենում նույնպես **ռանչկար** — **ranč-bar** «նեղություն կրող» էր նշանակում, որ հետո «հողագործ» իմաստն ստացավ:

264. ԵԹԸ ՃՉՈՒՄ ԵՄ ԿԱՍ ՄՈՒՆԵՏԻԿ ԵՍ, ԿԱՍ ԹԵԿԱՍՈՂ, ԿԱՍ ԱԶՊԱՐԸ

Իհարկե, նոր սերնդի համար զարմանալի է թվում իրենց պապերի կյանքն առանց ռադիոյի: Ինչպե՞ս էին նրանք տեղեկանում նորություններին, տիրակալների կարգադրություններին ու հրամաններին: Հին հայերենում օգտագործվում է **մուճեստիկ** տերմինը, որը նշանակում է «ազդարարող, հայտարարող, ավետող, ավետաբեր»: Թագավորների կարգադրություններն ու հրամանները այս մարդիկ էին ազդարարում ժողովրդին հրապարակներում, փողոցներում և շուկաներում:

Հայերենին այս բառն անցել է հավանաբար արաբերենի միջոցով: **Մուճադի** (muḏadhi) էին կոչվում Նեղոսի ջրերի հորդացումն ազդարարող ամենինք, որոնք նախապես վերահաս վտանգից զգուշացնում էին բնակիչներին: Արաբերենում **ճադա** արմատը նշանակում է «կանչ, ճիչ, կոչ», որը և ընկած է **մուճադի՝ մուճեստիկ** բառի կազմության հիմքում: Այսպիսով muḏadhi «կանչող, ճչացող, բոռացող, աղաղակող» արաբերեն բառը դարձավ հայերենում **մուճեստիկ** և գործածվում է ոչ միայն հայտարարող, այլև «**առաջինը** հայտնող» լրաբեր, ավետաբեր նշանակություններով: Ես՝ **մուճեստիկս**, մեր վառ գալիքի...

Լատիներենից աշխարհի շատ լեզուներին անցած **ռեկլամ** բառը նույնպես ծագում է լատիներենի re-clamo՝ «բարձր կանչում եմ, գոռում եմ, վեր—կոչում» բայից, ուստի մենք հաճախ ասում ենք՝ «իրեն է ռեկլամում»՝ **ազդարարել** կամ **մուճեստիկել** արդեն «հայացած» բառերի փոխարեն:

Պաիվալեներինց հայերենին անցած **ազդ** բառից միջնադարում առաջացավ **ազդարար** կամ **ազդ արար**՝ «ազդ անող», «հայտարարող, կանչող» բառը, ինչպես օրինակ, **փող ազդարար**՝ «հայտարարող շեփոր», իսկ ավելի ուշ Հնդկաստանում հրատարակվեց Մադրասի «**Ազդարար**» լրագիրը (1794—96): Բայց ժողովուրդը նաև օգտագործում էր **ազդարար**—ը **ժամկոչ**—ի նշանակությամբ, այսինքն **ազդարար** էր կոչվում եկեղեցի հրավիրող անձը: Իհարկե, ավելի «նեղ» մասնագիտություն էր **ժամկոչ**—ի, քան **ազդարարի** գիրը: Բայց արի տես, որ այս «նեղ» մասնագիտության հիշատակն ապրում է դեռ **ժամկոչյան** ազգանվան մեջ, մինչդեռ **Ազդարարյաններ** այլևս չկան:

265. ԻՆՉՈՒ Է ՉԱՐԶԻ-Ն «ՄԱՆՐԱՎՎԱՃԱՌ» ԵՎ ՈՉ ՓԵՐԵԶԱԿ-Ը ԿԱՍ ԴԱԼԱԼ-Ը

Յ. Թունանյանի համընթաց «Թագավորն ու չարչին» գրույցում գաղթական հայ կինը կանչում է.

— **Չարչի** ախպեր, **չարչի** ախպեր, սանդ ունի՞ս, էս կողմը բեր...

Բոլոր բառարաններն էլ իրավացիորեն **չարչի** բառը մեկնում են որպես «չրջիկ մանրավաճառ, փերեզակ, շրջող առևտրական»: Այս բառը հայերենին է անցել միջին պարսկերենից, ուր գործածվում էր **čarči-** **չարչի-ն**՝ «մուսուլման, ազդարար, հայտարարող, կանչող» նշանակություններով, ապա՝ «մուշտարի կանչող»: Այս մակամունը մանրավաճառ առևտրականներին «կպավ» այն պատճառով, որ փողոցից փողոց, թաղից թաղ շրջելով նրանք իրենց գալուստն ազդարարում էին գոռալով, այլապես շրջիկ խանութի գալուստը տնային տնտեսուհիները չէին իմանա:

Չայերենում **չարչի** բառը բացի «չրջիկ մանրավաճառից» ստացավ նաև «գծուծ, մանր բաների հետևից ընկնող, մանրախնդիր» նշանակությունը: Այս իմաստով էլ գործածվում են նաև ածանցյալ **չարչիություն**, **չարչիանալ**, **չարչիական**, **չարչիաբար** ձևերը:

Բայց չէ՞ որ հայերենը գիտեր նաև մեկ այլ բառ՝ **փերեզակ-ը** (որը գրվում էր նաև **փորեզակ**, **փորեզեկ**, **փերեզիկ**)՝ «չրջուն մանրավաճառ» նշանակությամբ, որն ավելի հին փոխառություն էր, հավանաբար, պարսկ (պահլավ) գաղթականների հետ Չայաստան բերված, քանի որ պարսկերենում այս բառի՝ **-ակ**, **-իկ**, **-ուկ** ածանցով ձևը բացակայում է և միայն կա *pirzi*՝ «մանր-մուկր առարկաներ» և *pirzi-firš*՝ «մանրավաճառ, փերեզակ» ձևը:

Բայց հայերենում այս երկու բառերից բացի գործածական է նաև երրորդը՝ **դալալ-ը** (կամ **դալլալ**)՝ «մանրավաճառ, փերեզակ» նշանակություններով՝ որը փոխառություն է արաբերենի *dallāl*՝ «մուսուլման, հայտարարող» բառից: **Դալալ-ը** հայերենում ստացավ նաև մի նոր իմաստ՝ «սպեկուլյանտ, վերավաճառող, շահով միջնորդություն անող, բանկաբազար», կազմվեց նաև **դալալություն**՝ «շահախնդիր միջնորդություն, սպեկուլյանտություն, անխիղճ, չափազանցված գներով առևտուր» անող բառը:

266. ԻՆՉՊԵՍ Է ՊԱՏՐԱՍԿՈՒՄ ՏԱՇՏԸ ԿԱՍ ՏԱՇՏԱԿԸ

Կարելի՞ է պատկերացնել որևէ հայկական տուն առանց տաշտի կամ **տաշտակի**: Մեր օրերում **տաշտը** խմոր հունցելու փայտյա կոնքն է, իսկ **տաշտակը**՝ նույնը՝ փոքր չափերով: Սակայն հենց վերջերս կենցաղում հայտնվեցին նաև պլաստիկ նյութերից, մետաղից պատրաստված **տաշտակներ**, որոնք հավանաբար սպազայում կփոխարինեն բոլոր կարգի նախորդ տաշտակներին: Իսկ ինչպիսի՞ն են եղել նախորդ **տաշտերն** ու **տաշտակները**: Գրաբարյան մատենագրության մեջ **տաշտը** ոչ միայն կոնք է, այլև **գավաթ**, **բաժակ**, **սափոր**, **կթոց**, **կողով**, **խնկաման**,

ափս, **սկավառակ** և այլն: Օրինակ՝ Բուզանդը պատմում է, թե ինչպես պարսից արքան, հայոց **Մուշեղ** սպարապետի մեծահոգությունը գնահատելով, որը գերի ընկած նրա կանանոցն անվնաս ետ էր ուղարկել, նկարել է տալիս նրա պատկերը մի **գավաթի** վրա. «Ետ նկարել **զտաշտի** պատկերը զՄուշեղ ճերմակաւն (ծիով) և ի ժամ ուրախութեան ղներ **զտաշտն** առաջի իւր»: Իհարկե այստեղ խոսքը գավաթի և ոչ թե **կոնքի** մասին է: «Իբրև **զտաշտս** խնկոց բուրեն» նախադասության մեջ այն խնկաման է, իսկ **զտաշտսն** պտղով՝ կթոց կամ կողով:

Լեզվաբանները պարզել են, որ **տաշտը** նախապես փայտից փորված տաշված անոթներն էին կոչվում, որոնք կարող էին լինել զանազան չափսերի, և ահա դրանից էլ **տաշտի** մեքե բաժակ, մեքե կոնք կամ կողով հանդես գալը: Իսկ ո՞րն է դրա սակացույցը:

Բանն այն է, որ **տաշտը** պահլավերենից հայերենին անցած բառերից է, իրանական լեզվախմբում *taš* նշանակում է «տաշել» (նույնպես և հայերենում) կամ տաշելով պատրաստել, շինել, որից *tašt*՝ «տաշված», կա նաև *tašidan*՝ «տաշելով շինել» և այլն: Որոշ բարբառներում դարձել է **տաշտ-ը թեշտ**, սակայն կարծես միայն մետաղյա կոնքի նշանակությամբ:

Եվ այսպես այսօր շինում ենք մենք **տաշտ** ու **տաշտակ** անեն նյութից, թեև առանց տաշելու, սակայն հին ձևով անվանում ենք «տաշած»:

267. ԳՈՐԾԻՔԻ ԱՆՈՒՆ ԱՍՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉԻ ՀԱՍԱՐ Է ՍՏԵՂԾՎԱԾ ԻՆՔԸ

«Մարդը գործից ստեղծող կենդանի է».— ասված է վաղուց:

Գործիքների հետ մեր բառապաշարն են գալիս նաև բառեր, որոնք իմաստը հաճախ մեզ համար անորսալի է. այդպիսի գործիքների անուններն ուրեմն «խոսում» են այն լեզվով, որն անվանել է դրանք: Այսօր հայերենում գործածական գործիքներից մի քանիսի անվանումները «չեն խոսում» հայերեն, որպիսիք են՝ **կացինը**, **ուրազը**, **քլունգը** և այլն: Դրանք հայերենի բառապաշարն են թափանցել միջնադարյան մշակույթից (**Շումերից**, **Աքքադից**, **Վշուրից**, **Բաբելոնից**), իսկ այնտեղ էլ, հնարավոր է, մեկ այլ երկրից: Բայց, այնուամենայնիվ, գյուղատնտեսական գործիքների մեծ մասը «խոսում» են սեմական լեզուներով և հատկապես արքայերենով ու արամեերենով (ասորերեն): Գործիքի անունն ասում է, թե ինչ գործողության համար է ստեղծվել ինքը:

Բերենք մի քանի օրինակներ՝

արօր (հարօր) – արք. **hararu**՝ «ակոսել, հերկել» (արորել, հարորել, հերկել)
պարօր՝ «տափան» – արք. **parānu**՝ «փշրել, մանրել» (պարորել, տափանել)
մալօխ, մալուխ՝ «բանջարքաղիկ» – արք. **malāhu**՝ «արմատափան անել»
ցակաւ՝ «տեղի, ճյուղեր կտրող» – արք. **zaqānu**՝ «ծակել, կտրել, հատել»
մանկեւե՝ «արմտից հանող, հորթիչ» – արք. **(ma)naqiru**՝ «քաղել, հանել»
(մանկեւե)

փետատ՝ «քլունգ» – արք. **petu**՝ «բացել, փորել, պոկել» (փետել, պոկել, հանել)
կամն կամ՝ «հասկերը փշրելու գործիք» – արք. **qamu**՝ «սղկել, փշրել» (կամնել)
խոփ՝ «արորի երկաթյա կտրիչը» – արք. **hepu**՝ «խփել, փշրել» (խփել)

սանդ «ծծծիչ, տկիչ» – արք. **samādu, sanādu** «ծծծել, տկել»
 ցաք «հարթիչ, տափան» – արք. **zaqu** «տափանել» (ցաքել, տափանել, հարթել)
 գաշօջ «տևիչ, ճյուղեր հատող» – արք. **gašāšū** «կտրել, հատել» (կշոշել):
 Թվում է, այսբանն էլ բավական է հասկանալու համար այն իրողությունը, որ
 գործիքը իր գործողության անունն է կրում, այսինքն ինչի համար որ ինքն է
 ստեղծվել: Եթե այսօր էլ որևէ գործիք է ստեղծվում, ապա նրա անունն էլ է բխում իր
 գործողությունից, օր: **գրիչ, հարթուկ, բրիչ, սուզանավ, օղանավ, ինքնաշարժ,
 զնացք, շոգեշարժիչ, խցան, հատիչ, թորիչ** և այլն:

Այսբանից հետո էլ որոշ լեզվաբաններ, ելնելով հայերենի հնդեվրոպական
 լեզվաընտանիքին պատկանելու փաստից, ճգնում են հայերենի բոլոր բառերը
 բխեցնել բունագրոսիկ հնչյունական անցումներով անգործ հնդեվրոպական
 արմատներից՝ անտեսելով ճշմարտությունը:

268. ԳՈՐԾԻՔԸ՝ ՄԻՃՈՅ, ՄԻՃՈՅԻ ՄԵՏ՝ ՀԵՂՈՒԿ

Արդի հայերենում **անոթ** բառն ունի «աման կամ սրվակ հեղուկ նյութերի համար»
 բացատրությունը: Մինչդեռ զարաբարում նրա նշանակություններն ավելի լայն էին.
 այն ուներ և՛ «գործիք», և՛ «զենք», և՛ «հագուստ», և՛ «միջոց», և՛ «պարագա», և՛
 «առարկա», և՛ «կահ–կարասի», և՛ «հմարք» նշանակությունները: Համոզվելու
 համար բերենք մի քանի օրինակներ՝ **անօքք պատերազմի** (պատերազմի
 գործիքներ, պարագաներ), **անօթ խարդախության** (խարդախության միջոց, հմար),
անօթ փրկութեան (փրկության միջոց, հմար) և այլն: Ինչպես տեսնում ենք հիշյալ
 նախադասություններում, **անոթ**–ը բազմիմաստ է և միայն «սրվակ, աման»
 նշանակություններով չի գործածվում: Բայց այս բառը ունեցել է Միջագետքի
 լեզուներում վերոհիշյալ բոլոր նշանակությունները, ինչպես վկայում են
 շումերաաքադական արձանագրությունները: Աքքադերենում օտտ նշանակում էր
 «առարկա, գործիք, պարագա, անոթ»: Արդի հայերենը պահպանել է բառիս միայն
 «**անոթ, սրվակ, աման**» նշանակությունը՝ կորցնելով մյուսները, այսինքն
 բառիմաստի նեղացում է կատարվել:

269. ԶԱՄԲՅՈՒՂԸ՝ ՏԱԵՆԸՈՒ ՊԱՐԱԿԱ

Արդի հայերենում **զամբյուղ**–ը «ցանցեկն հյուսված (նախկինում ծառի ճյուղերից,
 այժմ արհեստական այլևայլ նյութերից) ամանն է, որի մեջ միտք կամ
 գրասենյակային պայմաններում ավելորդ թղթեր են նետում: Իհարկե, նախկինում
 թղթի գյուտը չի եղել, և բնականաբար գրասենյակներում էլ զամբյուղներ չէին
 կարող լինել, սակայն միտք միշտ էլ եղել է, և այն տեղափոխելու համար էլ
 ստեղծվել է **զամբյուղ**: Այն հյուսում էին ուռենու դալար ճյուղերից: Զամբյուղը
 Հին Արևելքի ժողովուրդների մոտ ծառայում էր տարբեր նպատակների. քրտնով ոչ
 միայն մրգեր էին կրում, այլև շինարարական աշխատանքներում՝ հող, աղյուս,
 ավազ, կավ, խճ, նաև գործիքներ: **Զամբյուղ** բառը գտնում ենք նաև հայերենի
 հարևան բազմաթիվ այլ լեզուներում, օրինակ՝ պարսկերենում, արաբերենում
 զամբիլ, թուրքերենում՝ զեմբիլ և այլն, սակայն ո՞ր լեզուն կարող է տալ մեզ բանալի

նրա ծագման ակունքները պարզելու համար: Պարզվում է, որ մենք պիտի դիմենք
 ավելի ինձ լեզուներից աքքադերենին, ուր **zabillu** – զաբիլ նշանակում էր
 «կրել, տանել»: Ահա այստեղ արդեն մենք ունենք այսպես ասած այն բանալին, որով
 հնարավոր է թափանցել **զամբյուղ** բառի ստեղծման պատմության մեջ, թեև ոմանց
 համար կարող է դա անհավանական թվալ: Ի՞նչ կապ կարող է լինել «տանել, կրել»
 լրայի և **զամբյուղ** գոյականի միջև: Նախապես աքքադերենում **zabillu** նշանակել է
 «տանելի, կրելի», ապա՝ «տանելիք», ուստի զամբյուղ այժմ գիտակցվում է
 «տանելու աման» և ոչ «տանելի»: Ըրթնային Ե–ից առաջ հայտնվում է ևս մեկ
 շրթնային հնչյուն **m**, և **zabill**–ը դարձել է **zambil**, իսկ Լ–ն հայերենում վեր է ածվել
 ղ–ի. **zabillu**–ի փոխարեն առաջացել է **զամբիլ**:

270. ՖԱԲՐԻԿԱՆ՝ ՃԱՐՏԱՐՆԵՐԻ ԵՎ ՀՄՈՒՏՆԵՐԻ ՏՈՒՆ

Այսօրվա աշխարհի գրեթե բոլոր լեզուներում գործածական բառ է դարձել
Ֆաբրիկա–ն: **Կարի Ֆաբրիկա, կոշիկի Ֆաբրիկա, պղնձածուլական Ֆաբրիկա,**
հարստացուցիչ Ֆաբրիկա և այլն, սովորական են դարձել մեր պահանջների համար:
 Երբեմն գործածում են նաև **գործարան՝ Ֆաբրիկայի** փոխարեն կամ
Ֆաբրիկա–գործարանային, Ֆաբրիկա–խտանոց ձևերը, երբ կողք կողքի լրացնում
 են միմյանց օտար լեզվի **Ֆաբրիկա** և մայրենի լեզվի **գործարան** բառերը: Բայց ի՞նչ
 տարբերություն կա **գործարանի** և **Ֆաբրիկայի** միջև:

Բառարանները **Ֆաբրիկա** բառը բացատրում են այսպես, «արդյունաբերական
 ձեռնարկություն, ուր հումքը վերամշակվում է մեքենական եղանակով»: Բայց
 արդյո՞ք լրիվ է բացատրված **Ֆաբրիկայի** նշանակությունը: Զ՛ե՛ որ ոսկերիչները
 հիմնականում իրենց արտադրանքը պատրաստում են **ձեռքով** և միայն մասամբ,
 որոշ պրոցեսներ կատարվում են մեքենաների օգնությամբ: Սակայն նրանց
 արտադրավայրը թեև երբեմն **գործարան**, սայց ավելի շատ **Ֆաբրիկա** է կոչվում: Եվ
 հավանաբար պիտի **Ֆաբրիկա** կոչվեր և ոչ թե **գործարան**, և ահա թե ինչու:

Լատիներենում **fabre** նշանակում էր «նարտարոհ, վարպետորեն», որից **faber**
 «վարպետ»: Այս բառով էին կոչում ընդհանրապես բոլոր հմուտ մասնագետներին,
 նարտարոհին, լինեին դրանց հյուսն, ճարտաշ, կոշակար, դերձակ և այլն, ինչպես
 Արևելքում **ուստա, վարպետ**: Եվ ահա **fabre**՝ «արվեստորեն, վարպետորեն, հմտորեն»
 նշանակությունից էլ առաջացավ **fabrica**՝ «արվեստ, արհեստ, արհեստանոց,
 գործարան» և **fabricare**՝ «գործել, շինել, ձևակերպել» նշանակությունները:
Ֆաբրիկա ունեցող ամեն էլ տեղաց կոչվել **Ֆաբրիկանտ**, որը կարող էր արդեն ոչ մի
 կապ չունենալ արվեստի հետ:

Չետազայում **Ֆաբրիկայից** դուրս եկած պատրաստի կենսամթերքը (որը ոչ մի
 կապ չուներ թեև արվեստի հետ) սկսեցին անվանել **Ֆաբրիկատ**: Եվ նույնիսկ
 կիսապատրաստ կենսամթերքներն սկսեցին անվանել **կիսաֆաբրիկատներ**
 լատիներեն **fabricat**՝ «պատրաստված, պատրաստի» բառից:

Նոր բառ է **Ֆաբկոմ** **Ֆաբրիկայի կոմիտե**:

Եվսերիոսի «Քրոնիկոնից» (ժամանակագրություն) մեքե տեղեկանում ենք, որ **Չերակեսը** և **Դիոնիսոսը** տիտաններից էին, այսինքն՝ հսկաներից: Լատիներենում գործածում են հունարենից վերցրած **տիտան**–ը՝ titan, բայց հաճախ էլ gigas–ից gigant–ը (գիգանտ–ը): **Տիտան**–ը հույները վերցրել էին իրենց արևելյան հարևաններից, իսկ հրեաները՝ եբրայեցից, Աստվածաշնչում օգտագործում են **ռափայիմ** բառը՝ «հսկա, հսկաներ» նշանակությամբ: Այս **ռափայիմ**–ի սերունդից էին **Քամը**, **Նեբրովը**, նրա թոռ **Բելը**, որ կռվեց **Չայկի** հետ: Այս իմաստով էլ **Բելը** կոչվում է **Տիտանեան**: Տիտանեան էր կոչվում նաև **Պայապիս Քաղեան**, որի դեմ մարտնչեց **Արամը**:

Մ. թ. ա. 8–7–րդ դարերում դեպի Չայկական լեռնաշխարհ արշավեցին կիմերները և ապա սակա–սկյութական ցեղերը: Սեպագիր աղբյուրները գիտեն կիմերներին gimiri՝ **գիմիրի** ձևով, որոնց անունը հայոց մոտ պահպանվել է նաև **Պամիրը** տեղանվան ձևով (Աստվածաշնչում՝ **Գոմեր**): Քանի որ այս ցեղերը նույնպես հսկայամարմին էին, ուստի ժողովուրդների հիշողության մեջ մնացին նրանց որպես **հսկաներ**: Օրինակ՝ վրացիները ասում են **գիմիրի կացի**՝ «հսկա մարդ», որը գիմիրի կամ գիմեր ձևից է ծագում: Իսկ հայ լեզվաբաններից Գ. Ղափանցյանը ապացուցեց, որ հայերենի **հսկա** բառը, որը հիմա է այդպես արտասանվում, գաբաբառում հնչում էր **սկա**, օրինակ՝ «**Ակայք** դիմեցին ի վերայ դից», «**Չայկ** ի մէջ **սկայիցն**», «**Ի** վերայ ամենայն **սկայիցն** և դիցազանց»: **Ակայ**–ից կազմված էր նաև **սկայաբար**, **սկայական**, **սկայազն**, **սկայազօր**, **սկայածն**, **սկայամարտութիւն** և այլ ձևեր, որոնք ծագում են իրանական ցեղերից մեկի՝ **սակերի** անունից: Նրանք նույնպես գիմերներից նման հսկայամարմին էին: Չէ՞ որ խորենացու վկայությամբ **Ռոստամ** զաւն էլ **սազճիզ** էր, այսինքն՝ **սակ** էր:

Ինչպես արդեն նշել ենք **շակաշէն** բառի կապակցությամբ (հունարեն՝ **սակասենե**), այս զավառում բնակություն հաստատողները **սակեր** էին, որոնք ծուլվեցին հայերին: Իրենց իրենց անվանում էին **saka՝ սակա**, որից էլ հայերենի **սկա**–ն: Սա էլ հետագայում հ–ի հավելմամբ դարձավ **հսկա**:

Մի քանի դար անց իրանական ցեղերից մեկը գերիշխանության հասավ մյուսների նկատմամբ, և գահն անցավ **Արշակունիներին**:

Արշակ թագավորը հայոց գահի վրա նստեցրեց՝ եղբորը՝ Վաղարշակին, որն իր հերթին պալատական քոլոր պաշտոններում տեղավորեց իր ազգականներին: Նրա ազգականները՝ պարթևները, նույնպես հսկայամարմին էին և հաղթանդամ: **Պարթևների** հայրենիքը **Կասպից ծովի** հարավ–արևելքն էր՝ **Քախլ** կամ **Քախլ** կենտրոնով: Նրանց անվանում էին նաև **պահլավներ**, որից էլ հայոց **Պահլավունիների** տոհմը: Եվ այսպես նրանց հաղթամարմին արտաքինը մեծ տպավորություն թողեց հայոց վրա: Չայերենում սկսեց ձևավորվել մի քան և՛ **պարթևահասակ** կամ ուղղակի **պարթև**՝ «հաղթանդամ, խոշոր, մարմնեղ, ուժեղ, հսկայական, վիթխարի. մեծ թիկունքով, թիկնեղ» նշանակություններով: Չետագայում այն փոխաբերական իմաստով սկսեցին գործածել նաև ոչ միայն մարդկանց, այլև բնության հսկայական կամ վիթխարի չափսերը բնութագրելու համար: Սիա թե ինչպես է Չայերենը պատկերում հսկա լեռները. «Նայում էին մեզ լեռները **պարթև**»: Նույն **պահլավների** անունից առաջացավ նաև **փահլկան**՝ «հսկա

լծրիչ» նաև «լարախաղաց», «ուժեղ, անվախ, հաղթանդամ» բառը, որ հարևան լեզուներից փոխառնվեց հայերեն՝ որպես նոր բառ:

«Սասունցի Գավիթ» էպոսի հերոս **Չմշկիկ սուլթանի** վիթխարիությունը բնորոշվում է այդ բառով. «Չմշկիկն էլ շատ խորատ **փահլկան** էր», թեև այստեղ գործ ունենք կիմ–հերոսուհու հետ:

272. ՓՇՐՎՈՒՄ Է, ԲԱՅՑ ԴԱՐՉՅԱԼ ԱՆՆՎԱՑ Է

Ո՞վ չի գմայվել **աղամանդի** բյուրեղների փայլով, նրա գույների խաղով: Շատ բարձր է նրա արժեքը: Ինչի՞ համար է այս սպիտակ բյուրեղը կոչվում **աղամանդ**: Արդյոք որևէ բան ասո՞ւմ է այս բառը: Այո, այն փոխ է ամսված հունարենից, հունարենում **damas** կամ **damakso** նշանակում է «ընկճել, նվաճել», **a**–ածանցն ունի «վաճ, չ, ոչ» նշանակությունները, ուրե՛նք **a**–**damantos**՝ «անընկճելի, աննվաճ, անխորտակելի»: Այսպես կոչվեց բյուրեղն իր խիստ կարծրության պատճառով, որը հղկման չէր ենթարկվում: Իհարկե հետագայում սովորեցին այն հղկել իր իսկ բյուրեղների փոշիով: Սակայն այդ մասին չէ մեր խոսակցությանը, այլ թե ինչպես **աղամանդը** կամ **աղամանդե** ածականն ստացավ «խիստ կարծր, անակուռ, կարծրակուռ, անխորտակելի» նշանակությունները, օրինակ՝ «**աղամանդեայ** սիրտ, մարմին, հաւատք» գործածված ենք գտնում Նարեկացու կողմից: Աստվածաշնչում հանդիպում ենք **աղամանդեա պարիսպ** արտահայտությանը, որ փոխաբերաբար նշանակում էր «անխորտակելի, աննվաճ», նմանապես գործածական էին **վե՛մ անդամանդեայ, դրունք անդամանդեայ, զլեառ աղա՛մանդեայ** և այլն: Եվ այսպես՝ **աղամանդ** նշանակում է «աննվաճ, անընկճելի, անխորտակելի»: Դանիել Վարուժանը, խոսելով մարդկային ուղեղների մասին, հետևյալ կերպ է բնութագրում բանաստեղծների մտածողության կենտրոնը. «Ընդդեմ կամ, որոնք **աղամանդներ** են. առանց ուրիշե մը լույս ծծելու լույս կարտաբխեն, անոնք ոչ կը ծռին, ոչ կը զծվին, այլ կը փշրին, բայց չեն մարիր: Անոնք բանաստեղծներու ըղեղներն են»:

Արաբները, հույներից վերցնելով **աղամանդոս** կամ **աղամաս** բառը, սկսեցին աղավաղված այն անվանել **ալմաստ**: Իսկ ռուսները, որոնք հնում ավելի շատ հույների հետ էին շփվում և հույների պես էլ հնչում էին **շողակնի** անունը, մոռացան հունական ձևը: Երբ Աֆանասի Նիկիտինը գրեց «Ճանապարհորդություն երեք ծովերից այն կողմ» հուշագրությունը, այնտեղ օգտագործում է **ալմաճ** ձևը, որն անշուշտ բանավոր ժողովրդական խոսակցությունից եկող բառ էր: Ըստ երևույթին, **ալմաճ**–ը մոռացության մատնեց հունական **աղամաս**–ը: Մինչև 15–րդ դարը եվրոպացիները չէին կարողանում հղկել ալմաստը, որի միջոցը գտել էին հնդիկները: Գուլանդացի Վան Բերկենը գտավ ալմաստն ալմաստով (ալմաստի փոշով) երեսակելու, հղկելու միջոցը: Գղկված ալմաստը կոչվում է բրիլիանտ՝ գերմաներենի, ֆրանսերենի brilliant «փայլուն» բառից: Չայերենում հանդիպում ենք նաև **գոհար, շողակն** ձևերին, որոնք նաև բանավորժբ բարերին տրվող ընդհանուր անվանումներ են:

273. ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ԵՎՊԱՍՏԱԿԸ
 ԹԱԳԱԿՈՐԱԶՆ ԴԱՌՆՈՒՄ,
 ԻՍԿ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆԸ՝ ՀԱՍԱՐԱԿ

Ավելորդ է ասել, որ հայերենի **թագավոր** բառը «թագ ունեցող» է նշանակում: Սակայն հայերս ըստ անհրաժեշտության գործ ենք անում **թագավորի** նշանակությանը նաև **կայսր, արքա, շահ, սուլթան, խան, ցար, մելիք, խալիֆ** բառերը: Այս բառերից յուրաքանչյուրը իր կենսագրությունն ունի: Դրանցից մի մասը նախապես որևէ **թագավորի** անուն է եղել: Այսպես, օրինակ՝ **կայսր** բառը ծագում է հռոմեական **Յուլիոս Կեսար**-ի՝ **Caesar**, անունից: Այլ լեզուներում այն դարձավ **ցեզար**, իսկ ռուսերենում՝ **ցար**: Ենթադրվում է, որ խեթական **լարբարան**՝ «թագավոր» և **թավանանա**՝ «թագուհի» բառերը նույնպես ծագում են հատուկ անուններից:

Կան նաև զավեշտական պահեր լեզուներում, որոնք տրամաբանության հետ անհարիր են: Այսպես, այսօր **король**՝ «թագավոր», **королевство**՝ «թագավորություն» բառերը սկիզբ են առնում գերմաներենի **Kerl** «տղամարդ» բառից, որը հին վերին գերմաներենում հնչում էր **Karol** և ուներ «տղամարդ, կտրիճ, այր» նշանակությունները: Այս անունը կրող ուժեղ այրերից մեկը կոչվում էր **Karolos**, որի անվան մեջ օ-ն տղվելով դարձավ **Karlos**: Նա պատմության մեջ հայտնի դարձավ **Կառլոս Մեծ** անունով, որից հետո եկողներին սլավոնները և ռուսները անխտիր սկսեցին անվանել **կարոլուս-կարոլներ**:

Սա դեռ ոչինչ: Իսկ ի՞նչ կապ կարող էր լինել **король** և **кролик** բառերի միջև: Պարզվում է, որ նման կապ հնարավոր է: Միա թե ինչպես: Ինչպես հայտնի է, գերմաներենում **թագավորին** ասում են **Kunig**: Այս բառին մասն է հնչում լատիներենի **cuniculus**՝ «ճագար»-ը: Միա ժողովրդական ստուգաբանությանը ճագարին սկսեցին անվանել **Kuniglin** և **Kunighase**՝ «թագավորական ճագար», որից էլ այս տրամաբանությանը ստեղծվեց ռուսերենի **кролик** բառը՝ ենթադրվելով **кролик**-ից՝ որպես «թագավորիկ»:

274. ՀԻՆ ԲԱՌԸ ՆՈՐ ՆԵԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԿԱՍ
 ԱՐԲԱՆՅԱԿԸ ՊՏՏՎՈՂՆ Է

Եզնիկը հրեշտակներին մարդկանց **արբանեակն** է համարում: «Ջիրեշտակս՝ **արբանեակս** գիտենք՝ յօգնականութիւն մարդկանց» (Չրեշտակներից նմանաչում ենք որպես մարդկանց օժանդակողներ (սպասավորներ)): **Արբանեակն** նշանակում է «ծառայել, սպասավորել, հետևել, հնազանդվել»: Արբանեակութիւն՝ «ծառայություն, սպասավորություն, պաշտոն, կամակատարություն, հնազանդություն, հպատակություն», որոնք բազմիցս վկայված են դասական գրաբարում: Այսպես՝ «**արբանեակն** և սպասավորել նոցա» (նրանց ծառայել և սպասավորել) և այլն:

Չայերեն **արբանեակ** բառը հնդեվրոպական մայր լեզվից ժառանգված մի բառ է, որի զուգահեռները պահպանված ենք գտնում նաև ասանկրիտում՝ **arbhā**՝ «փոքր, բույլ տղա», ռուսերենում՝ **ребенок**՝ «մանկիկ», **раб**՝ «ծառա, ստրուկ», **раба**՝ «աղախին», «աշխատանք», «աշխատող», գորերենում՝ **arbeits**, գերմաներենում՝

Arbeits՝ «աշխատանք, նեղություն» և սլավոններենում՝ **rabus**՝ «ծառա, սպասավոր» և այլն: Եվ այսպես, **արբանեակներ** համարվեցին նաև երկնային մարմինների շուրջը պտտվող մոլորակները և ապա երկնածիր ուղարկված արհեստական սարքավորումները՝ նկատի ունենալով մարդուն ծառայելու նպատակով նրանց կատարած աշխատանքը կամ կամակատարությունը: Ինչպես Վանի բարբառով կասեին. «**Արբանեակներ** մարդու օգնականներ են»: Կա նաև մի ասացվածք. «Լավ շուն գլուղացու **արբենկն** ի»: Իսկ տիեզերքում պտտվողները առավել ևս անզգահատելի սպասավորներ են մարդկանց համար:

275. ԳՈՒԵՒԿԸ՝ ՓՈՂՈՑԻՑ ԵՎ ՈՉ ՄԻԱՅՆ ՓՈՂՈՑՈՒՄ

Գրաբարում **գոնի** բառն ուներ «փողոց, ճանապարհ, քաղաքանք, տիղմալից, աղբալից վայր, նաև շուկա» նշանակությունները: Օրինակ՝ «Որպես կա **գոնի**—աց կոխեցից գնտա» (Որպես փողոցի կավ նրանց կտորեմ): Մեկ այլ նախադասության մեջ **գոնի**-ի և **փողոց**-ի միջև կարծես թե զանազանություն է տրվում, օրինակ՝ **ի գոնեից** և **ի փողոցաց** (**գոնեից** և **փողոցների**) և այլն: Միա և այս **գոնի** բառից է ստեղծվել **գոնիկ**՝ «փողոցային, ռամիկ, հասարակ, անկիրթ, ոչ քաղաքավարի, կոպիտ» բառը —իկ ածանցով: Այն իրանական լեզուներում և հայերենում, կցվելով տեղ նշանակող բառերին, ցույց է տալիս մարդկանց որտեղից լինել, ինչպես, օրինակ հնդիկ «հնդկաստանցի», պարսիկ՝ «պարսկաստանցի», հաբաշիկ կամ խաֆշիկ «հաբեշտանցի» և այլն: Չետևաբար **գոնիկ**՝ «կեղտոտ փողոցային», «փողոցից, փողոցավարի» է նշանակել, օրինակ, «Մերկացեալ զգետս կրօնաւորութեան, եղև **գոնիկ**» (Կրօնավորի զգետները հանելով դարձավ փողոցային, հասարակ): Երբեմն գրում էին նաև **գոնիկական, գոնի** կամ **գոնի** (որից էլ **գոնի**), **գոնիօրեն** և այլն:



Թովմա Արծրունին խուֆ լեռան բնակիչներին անվանում է **գոնաիք** **ասորոց**, իսկ նրանց լեզուն՝ խրթին և անհետազոտելի՝ նրանց անկիրթ և ռամիկ վիճակը բացատրելու համար:

Ներկայումս **գոնիկ** օգտագործվում է «անտաշ, կոպիտ, անքաղաքավարի, բռի, անկիրթ» նշանակություններով, օրինակ՝ Շիրվանգաղեն օգտագործում է **գոնիկ** շարժումով և **գոնիկ խանութայան** արտահայտությունները: Երբեմն **գոնիկը** հարադրվում է հենց **փողոցային** բառի հետ՝ «**գոնիկ-փողոցային** մեկն է» կամ «**գոնիկությունը** վրայից բափվում է»: Ստեղծվել է նաև գրական մի տերմին՝ **գոնիկաբանություն**, որով բնորոշվում են բարբառային, ոչ գրական արտահայտությունները: **Գոնի** բառը ծագում է աքքադերենի **ginnu**՝ «փողոց, ճամփա, գրոհ, արշավ» բառից, որի այս վերջին իմաստներն էլ պահպանվել են հայերենի մեկ այլ **գոնի** բառի մեջ:

276. ՄԻԵՎՆՈՐԻՅՆՆ Է ԱՐԴՅՈՐ «ՀԱՍՏԱԳՆՈՒԽԸ» «ԴՈՂ ՂԼԽԻ» ՀԵՏ

Արդի խոսակցական լեզվում կան բազմաթիվ արտահայտություններ, որոնք հատկապես նոր սերնդի համար մնում են անհասկանալի:

Այդպիսի արտահայտություններից մեկն էլ մեր լեզվում շատ տարածված **դողզուխն** է: Ի՞նչ է նշանակում այն: Բավական չէ **դողզուխ**–ը, դեռ կա նաև **դողիկ**–ը: Դե արի զլուխ հանիր և վիրավորական, և փաղաքշական **դողիկ**–ից:

— Դազար են ասել, որ դու **դող** ես, **դող** զլուխ ես, **դողիկ** ես.— վիրավորում են մեներ: Ա մանուկնու «Դայոց բառ ու բանուն» **դողը** «լայնաբերան կերակրի հողե մեծ ամանն» է, հետևաբար **դողզուխն** էլ «մեծ զուլխը», իսկ **դողիկը** դեռևս չնեծացած, բայց արդեն **դող** դառնալու ենթակա զուլխը: **Դող**–ի բացատրությունը գտնում ենք նաև Ս. Մախասյանցի «Դայոց լեզվի բացատրական բառարանում»: Դայերեմի բարբառներն ունեն նաև մի քաղ **դողել**, որ նշանակում է «մեծ–մեծ կարել»: Ծագո՞ւմն է ձեզ հետաքրքրում: Խնդրեն: Միջազետքի ամենահին գրավոր լեզուներից աքքադեերեմում գտնում ենք **դող** ամանի հիշատակությունը, իսկ դա մեզանից 4 հազար տարի առաջ:



Գիտեն միայն ոչ **դողիանցորդի** ճանկել էր մի գառան մորթի:

Արևմտյան բարբառներում և խոսվածքներում ունենք **մեկդի**՝ «մի կողմ, առանձին», **ասդին** «այս կողմ», **անդին** «այն կողմ» **չորսդին** «չուրքը, չորս կողմ» և այլն: Եվ այսպես, պարզվում է, որ **մտդեհ** նշանակում է «տեղից դուրս գտնվող, իր երկրից ելած»: Իսկ ինչպե՞ս ընկալել **պանդուխտ**–ը:

Ինչպես տեսանք վերևում բերված նախադասություններում, **մտդեհ**–ն ու **պանդուխտ**–ը գործ են անվում կողք կողքի որպես հոմանիշներ, և նրանց կողքին էլ կա մի հոմանիշ՝ **անցավոր** բառը: Եվ իսկապես **պանդուխտ** բառի մեջ առկա **պանդ** կերը նշանակում է «ճանապարհ, ճամփա», որն առկա է սկյութների կողմից Կերչի նեղուցին տրված *Panta kapeya*՝ «Չկան ճամփա» տեղանվան մեջ: Եվ այսպես գտնված է **պանդուխտ**–ի առաջին մասը, որով բառն ընկալվում է ամբողջությամբ հավանաբար «ճամփորդող, ճամփորդելն ուխտանք» նշանակությամբ:

278. ԴՐԱՍԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

Դայ ժողովուրդը իր պատմության երկար ու ծիգ ճանապարհին, հաճախ գտնվելով նվաճողների լծի տակ, ստիպված է եղել ոչ միայն ենթարկվել նրանց սահմանած կարգուկանոնին, այլև օգտագործել նրանց կողմից սահմանված դրամական, քաշի, երկարության և չափի միավորները: Բնականաբար շփվելով տարբեր ժողովուրդների՝ ասորեստանցիների, պարսիկների, արաբների, ասորիների, հույների, իսաչակիրների, քաթար–մոնղոլների, մյուսների հետ, չէր կարող հայ ժողովուրդը խուսափել այնպիսի բառերի փոխառությունից, որոնք վերաբերում են դրամական սիստեմին և այլ չափի միավորներին: Դայերենի բառապաշարում մեծ նստվածք կա բոլոր դարաշրջաններն արտացոլող և բոլոր ժողովուրդների հետ հայոց շփումները վկայող այս կարգի բառերի, որոնցից են՝ **բանքար, դրամք, լումա, տաղանդ, մող, կտտ, կոտպ, լիտր, արկը, կանգուն, շինիկ, շափի, քանկա, ռուբլի, կոպեկ, մանեթ, մխախ, փուք, արշին, գրամ, մետր, գրվանքա, դանկ, չետվեր, փաս, փլորին /ֆլորին, արասի, մեջդիյե, կարատ, դուկատ, պոտատ, մարկ, վտավան, սատդիոն, ճաքապակիտ, սատեր, դիմար, մմաս** և այլն:

Յին Արևելքի ժողովուրդների մոտ անհիշելի ժամանակներից սկսած ազնիվ մետաղները ծառայել են որպես արծեքի միավոր: Ամենատարածված դրամական միավորը, արծեքի չափանիշը համարվում էր **արծաթը**: Սեպագիր արծաճարություններում, Դամմուրաբքի և խեթական օրենքներում դրամական տուգանքների չափերը սահմանվում են հիմնականում **արծաթով** և հազվադեպ միայն **ոսկիով**:

277. Ո՞Վ ԵՍ ԴՈՒ, ՆԺԴԵՆ, ԵՎ ԴՈՒ, ՊԱՆԴՈՒՄՏ

Կան բառեր, որոնք, խոսակցականից աստիճանաբար դուրս մղվելով, շարունակում են ապրել բանաստեղծություններում և գրքերում: Սուրբ գրքում հայր Աբրահամը, դիմելով խեթերին, ասում է. «**Պանդուխտ** ու **մտդեհ** են ի միջի ծերուն» (Չեր մեջ **պանդուխտ** են ու **մտդեհ**), «**Պանդուխտ** են ես առաջի քո, **մտդեհ** և անցաւոր» (Քո առջև **պանդուխտ** են և անցավոր **մտդեհ**): Այս երկու բառերն էլ հայերենը փոխ է առել պահլավերենից, ավելի ճիշտ պահլավ և արշակունի գաղթականներն են իրենց հետ բերել դրանք Դայաստան, ծովվելով մեզ մուծել դրանք հայերենի բառապաշարի մեջ: Նժդեհը կազմված է պարսկերեն ու «դուրս, արտա» և ժեհ, մի «երկիր, գավառ» բառերից, որով բառն ամբողջությամբ ընկալվում էր «երկրից, տեղից դուրս գտնվող» նշանակությամբ: Ի դեպ, **դեհ** բառը պահպանվել է հայերենի նաև **դեհպետ** կամ **դեհկան**՝ «կուսակալ, գավառի, երկրի պետ, գավառապետ» բառերում, իսկ պարսկերենում ժեհkan նշանակում է «գյուղացի, կողմնային» առանձին գործածությամբ, ունենք ի **ծախ դեհ** (ծախ կողմից), ի **հարատյ դեհեն** (հարավի կողմից): **Դեհ**–ը պահպանվել է նաև բազմաթիվ բարբառներում, ինչպես, օրինակ՝ Ջեթունի, Տիգրանակերտի, Երևանի, Կոտայքի խոսվածքներում: Կոտայք գյուղում

Մարդկությանը հայտնի զբաղող պատմության չորս հազարամյակներից ավելի ժամանակաշրջանում **արծաթը** մնում է որպես դրամական միավոր: Այս իսկ պատճառով էլ բազմաթիվ ժողովուրդների մոտ **արծաթ** և **փող** հասկացությունները նույնանուն են: Հին հրեաների մոտ ևս հիմնական դրամական միավորը **արծաթն** էր: Հիշենք թեկուզ Հիսուսին մատնող Հուդայի ստացած 30 **արծաթի** մասին: «Երեսուն **արծաթով** տիրոջը մատնել» արտահայտությունը ծանոթ է բոլորին: Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ անճուրեք եբրայական և հունական քնագրերի argurion (արգյուրիոն) **արծաթ** բառերի դիմաց հայերենն ունի նույն **արծաթ** համարժեքը. «Գանձե՞ին **արծաթ** և ոսկի» (Բարուք 9 18), «Կշռեցին զվարձս իմ երեսուն **արծաթի**» (Ձաքար. մԱ 13.):

Հետագա դարերում **արծաթ** հասկացությունը փոխարինվեց հայերեն **սպիտակ** բառով, իսկ ավելի ուշ՝ նաև **ստակ**–ով: Հիշեցնենք, որ արծաթը հռոմեացիների մոտ argentum, ֆրանսիացիների մոտ argent (արծան), ռուսիացիների մոտ argint եր կոչվում: Չէ՞ որ ծագումով այս բոլորը հնդեվրոպական areg «սպիտակ, փայլ(ուն)» արմատից են: Ի դեպ, հունական **ասպրոս**–ը, թուրքական **աքչեն** նույնպես սպիտակ են նշանակում: Ոսկու անունը էլ է գույնով նշվել: Օրինակ վանեցիները միմյանց հետ խոսելիս երբեք չէին գործածում **ոսկի** բառը, այլ միայն **կարմիր**–ը. «**Կարմիր** քանի՞» (ոսկու կուրսն ինչպիսի՞ն է): Թուրքերենում նույնպես **քըզըլ** բառը (կարմիրը) փոխարինել է **ալքըն** (ոսկի) բառին, ինչպես, օրինակ **Քըզըլ Օրդա**՝ «Ոսկյա Հորդա» պետության անվանումը թաթար–մոնղոլների կողմից:

Եվ այսպես միջնադարյան հայ վիճագրության մեջ է մատենագրությունում **արծաթ**–ի փոխարեն ավելի շատ սկսում են գործածել **սպիտակ**–ը: Օրինակ Գրիգոր Ականց պատմիչի մոտ հանդիպում ենք հետևյալ նախադասության մեջ **սպիտակ** բառին **արծաթի** նշանակությամբ կամ **դրամի**. «Ի տասն և հինգ տարեկանն է ի վերն... մինչ ի վաթսու տարեկանն և յամեն զվտյ, որ համարեին, վաթսու և **սպիտակ** առնուին» (14–րդ դար): Ինչպես հայտնի է, հայերեն **սպիտակ** բառը փոխ է առնում պաղլավերենի **սպիտակ**–ից, որի զուգահեռները իրանական լեզուներում գտնում ենք **սպետ**, **սպանտա**, **սիֆեդ** և այլն հնչումներով, իսկ ռուսերենում **սվետ** ձևով:

14–րդ դարի հայ մեծ գիտնական Գրիգոր Տաթևացին «Գիրք քարոզության, որ կոչի Չմերան հատուր» գրքում գրում էր. «Արծաթն **սպիտակ**, զոր դրամ կոչենք»: **Սպիտակ** բառին աստիճանաբար փոխարինելու է գալիս **ստակը** հատկապես արևմտյան քարաթաներում և գրական լեզվում: 16–րդ դարի դատավարական մի արձանագրության մեջ (1559թ. օգոստոսի 7)

դեռևս կողք կողքի հանդիպում են **սպիտակ**, **ստակ** և **արծաթ** բառերը. «Փաղիսդային որդին սկսաւ Յովհաննէսէն զայս սուման ճաղտ **սպիտակով** տաւի առնելոյ, որ ճաղտ **սպիտակ** վճարէ մմայ... Դատավորքն ասեն Յովհաննէս, որ նախ երդվնայ, որպէս ճաղտ **ստակ** և կամ ոսկի **արծաթ** չյունի...»: Կամ «90 ֆլորին **սպիտակ**ն էր, զոր մնացել էր ի այդ **ստակն**»: Որոշ լեզվաբաններ մերժում են այն կարծիքը, թե **ստակ**–ը **սպիտակ**–ի կրճատված ձևն է, ոմանք էլ ենթադրում են, որ **ստակ** բառը



յտակ–ից է առաջացել: Հանձնայն դեպս **ստակ**–ը **սպիտակ**–ից չի կարող լինել, քանի որ նրանք կողք կողքի ապրում են իբրև առանձին բառեր: Հավանաբար ավելի հիմնավոր է **յտակ**–ից **ստակ** առաջանալու վարկածը: Թրիլիսիի բարբառում գտնում ենք հետևյալ առածը. «Հայ գիրի **ստակ**, բանը կու շինիս իստակ», ուր դարձյալ կողք կողքի, իբրև առանձին բառեր են գիտարկվում **ստակ**–ն ու **իստակ**–ը: Այժմ պատմենք այն մասին, թե ինչպես են թագավորների անունները վեր ածվում դրամական միավորների:

279. ՇԱԿ ԱԲԱՍԸ՝ ԱԲԱՍԻ

Պարսկական տիրապետության ժամանակ Անդրկովկասում և Հայաստանում տարածվեց **արասի** դրամական միավորը, այն մետաղադրամ էր և կտրվում էր արծաթից Աբասյանների տիրապետության ժամանակ (ոմանք ատում են Շահ Աբասի ժամանակներից), ի տարրերություն շրջառույթում մեջ գտնվող մյուս մետաղադրամների, այս հարստության թողարկած դրամները կնքվեցին **արասի**, այսինքն՝ «աբասյան»: Ջարմանայիորեն այս **արասի** 5 կոպեկանոցից չորս անգամ ավելի արժողությամբ մետաղադրամի անվանումը փոխանցվեց ռուսական 20 կոպեկանոցին և որպես այդպիսին գործ էր ածվում մինչև հեղափոխությունը, նույնիսկ մինչև մեր օրերը, հին սերնդի մարդիկ արծաթյա կամ սպիտակ 20 կոպեկանոցներն անվանում են **արասի**, որն արդեն ոչ մի կապ չունի Աբաս շահի հետ:

280. ԴՐԱՍ

Հայերեն **դրամ**՝ «փող» բառը նախապես եղել է քաշի միավոր «կես սիտղ, երկու ունկի» չափով, որը հավանաբար հայերենի մեջ է մուտք գործել պաղլավերենից, ուր գտնում ենք dram, պարսկերենում՝ dirhem՝ «մի փոքրիկ կշռաչափ և **դրամ**, փող» նշանակություններով: Իրանական ձևերն էլ փոխ են առնված հունարենի դրախմեն (drachme)՝ «մի փոքր քաշի միավոր» բառից, որը արաբերենին է անցել դիրհամ (համեմատորի Քուլչակի «Սերը խնձորով պիտի ու տիրինեն–տիրինեն շեքերով» արտահայտությունը) ձևով:

Դրամ բառի իրանական ծագումը գիտեր դեռևս Ա. Շիրակացին, որը գրում է. «**Դրամ** ըստ պարսկական լեզուին անուանեցավ»: Յ. Շրյոլերը նույնպես իրանական ակունք էր ենթադրում, մինչդեռ Գ. Պետերմանը՝ արաբական դիրհամ–ից:

Կրացերենի դրամա կամ դրամի ձևերը և, Մառը համարում է հայերենից փոխառյալ:

281. ՄԱՐԿ, ՄԱՐԿԱ, ԱՅՍԻՆԸՆ՝ ԴՐՈՇՍ

Դեթում պատմիչի մոտ հանդիպում ենք 60 (100000) **մարկ** արծաթ, ինչպես նաև կիլիկյան օրենքներում (Անսիզք Անտիոքայ) որպես դրամական միավոր հիշատակվում է **մարկ**–ը, որ արծաթյա մետաղադրամ էր նշանակում: **Մարկ**–ը հայերենին էր անցել ֆրանսերենից, ուր առկա է marc–ը, իսկ սա էլ ֆրանսերեն էր

մուտք գործել գերմաներենից: Նախապես գերմաներենում Marke նշանակում էր «դրոշմ, նշան»: «**Չանգա**» առևտրական ընկերությունը սկսեց բաց թողնել ոսկու կտորներ, որոնց վրա գրված էր նրանց քաշը: Այդ ոսկու կտորների վրա «Չանգայի» քաղաքները դնում էին իրենց Mark-ը՝ **մարկա**-ն ցույց տալու համար, որ այն ստուգված է: Եվ այս **մարկ**-ի կամ **մարկա**-ի շնորհիվ վատահեղի էին դառնում ոսկու կտորները, որոնք էլ հենց սկսեցին փոխարինել դրամին: Սիա, հետագայում այս **մարկ** հասկացությունը հավասարազոր դարձավ «դրամ» նշանակությանը և սկսեց գիտակցվել որպես դրամ: Սակայն չկորցրեց նաև իր նախկին նշանակությունը: Մարկա ասելով հիմա հասկանում ենք նաև որևէ գործարանի, ընկերության կամ ֆաբրիկայի հեղինակությունը, պատիվը, նրանք կամ դրոշմը: Օրինակ, եթե ասում ենք՝ «ճապոնական տրանզիստորների կամ համալարգիչների **մարկա**-ն բարձր է, ապա հասկանում ենք նրանց արտադրանքի որակը, դրոշմը:

282. ԸԱՎՆ ԻՆՉ ԻՍԱՆԱՐ, ՈՐ ՊԻՏԻ ԱՐԺԵՆԱՐ ԸՆԴԱՍԵՆԸ 5 ԿՈՊԵԿ

Չայկական ժողովրդական երգերից մեկում հանդիպում ենք «երկու **շահի** փող տուր» արտահայտությանը, որը խնդրում է սիրածը՝ նրան բժիշկ կանչելու նպատակով: Ուրեմն որքա՞ն արժեք բժշկի այցի վարձը, եթե **շահին** պարսկական **դռանի** մեկ քսաներորդ մասն էր կազմում և **արասիի** մեկ քառորդը: Չայաստանում և Անդրկովկասում այս մանր մետաղադրամը տարածում գտավ պարսկական տիրապետության ժամանակաշրջանում: Երբ պարսկական տիրապետությունը փոխարինվեց ռուսականով, և շրջանառության մեջ մտան ռուսական ռուբլիներն ու կոպեկները, դարձյալ ժողովուրդը չմոռացավ **շահին**: Այսպես սկսեց անվանել ռուսական 5 կոպեկանոց մետաղադրամը, որը նույնպես արծաթյա 20 կոպեկանոցի մեկ քառորդ մասն էր կազմում, թեև կոպեկն արդեն շահական չէր, այլ ցարական: Ուրեմն **շահի** նշանակում է «շահական», ինչպես **արասի**՝ «արասյան»:

283. ՈՐՆ Ե ԹՈՒՄԱՆԻ ԱՐԺԵԸ

Չայկական ժողովրդական խաղիկներից մեկում աղջիկն ասում է իր սիրածին. «Չազար **թուման** ա գին...»: Որքա՞ն է գնահատում աղջիկն իրեն: **Թումանը** պարսկական դրամական միավորներից էր և շահերի տիրապետության ընթացքում արժեքի փոփոխություններ էր կրել: Դասելով Ն. Քուլակի այն վկայությունից, որ «**Թուման** մի հեծել կանգնի, դարձյալ հավատից իրեն չի հանի», կարելի է ենթադրել, որ շատ մեծ բվի հետ գործ ունենք: Եվ իսկապես նախապես այդպես է եղել: **Թուման** բառը պարսիկներին անցավ Միջին Ասիայից և նշանակում էր 10000-անոց զորք: Այդ **թուման** բառից է առաջացել նաև Սիբիրի **Տյումեն** քաղաքի անունը, որտեղ 10000-անոց կայազոր էր պահվում: Սակայն հետագայում որպես դրամական միավոր **թումանը** կրեց արժեքի փոփոխություն, և ըստ Րաֆֆու հաշվումների, իր ժամանակներում ունեցել է մոտ 4 ռուբլի արժողություն, իսկ 1930-ական թվականներին մոտ 2 ռ. 85 կոպեկ: Ռուսական տիրապետության ժամանակ

սկսեցին ռուսական 10 ռուբլանոց **չերկոններ** անվանել **թումաններ**: Եվ այսպես, որքա՞ն է գնահատում սիրած աղջիկն իրեն, հավանաբար դժվար է ասել **թումանի** կուրսի փոփոխության պատճառով: Դա միայն նրան ուզողը կիմանա, թե որքան արժի սիրած աղջիկն իր համար:

284. ԳՐԻԿ, ԳՐՎԱՆ, ԻՆՉ ՉԱՓ Ե ԱՅՍ

Աստվածաշնչում բազմիցս օգտագործված է **գրիվ** (**գրիւ**) բառը որպես չափի միավոր. «**Թրեա գրիւս** երիս ալեր մաշիոյ» (Ծննդ. ԺԸ 6) (Շաղիր երեք **գրիվ** նուրբ այլուր), «ժողովեսցէ **գրիս** երիս» (Նայի Ե 10) (Թող հավաքի երեք **գրիվ**): Դանդիպում է նաև **գրվան** (**գրուան**) ձևը, որ հավանաբար մեծ էր **գրիվ**-ից, այլապես նրա տակ չէր կարելի քան պահել, առավել ևս ճրագ. «Ոչ լուցանեն ճրագ և դնեն ընդ **գրուանաւ**» (Ճրագը չեն վառի և **գրվանի** տակ դնի) (Մատթ. Ե 15): Թանի որ պարսկերենում պահպանվել է *girib* **գիրիբ** ձևը և նրա հոգնակին՝ **գրիվան**, ենթադրում են, որ հայերենը պահպանել էր *girib* պիտի կատարած լինի փոխառությունը: **Գրվանը** սորուն նյութերի չափի միավոր էր, սակայն հետո դարձավ քաշի:

Բայց սա բոլորը չէ: Ռուսերենում **гривна** է կոչվում մեկ ֆունտ արծաթամույլ մողայիկ վզնոցի, զարդի (անրակածև օղակներով) անվանումը, որ, ենթադրում են, պարսկերեն **գրիվան** ձևից կարող էր անցնել: Չետագայում **գրվանը** դարձավ քաշի միավոր՝ **գրվանքա** ձևով:

285. ԹԱՆԿԱՆ ԵՎ ДЕНЬГИ-Ն՝ ՍԻԵՎՆՈՒՅՆ ՍՈՐԻՑ

Թաթար-մոնղոլական արշավաքններից հետո հայ իրականության մեջ սկսեցին գործածել **թանկա** կամ **թանգա** բառը՝ որպես փոքր քաշի մի դրամի անվանում: Այս բառը ծագում էր արևելյան թուրքերենից և տարածվեց նաև Պարսկաստանում, Միջին Ասիայում, հիվկայում՝ որպես 15 կոպեկանոց արժողության մետաղադրամ: Իրանական *danakan*-ն մեկ տասներորդ սիկդի անունն էր, և սա էլ իր հերթին թուրքական *tanğa*՝ «հնչում» բառից էր ծագում: Կուլիկովյան ճակատամարտից հետո, երբ Դիմիտրի Դոնսկոյի կողմից Ոսկե Չորդայի արծաթյա դրամները վերածուլվեցին և դրվեցին շրջանառության մեջ, թաթարական անվանումն այդ դրամներին «կպած» մնաց որպես **деньги** և 15-րդ դարից սկսած մտավ որպես դրամի անվանում ռուսերենի բառապաշարի մեջ: Եվ այսպես, հայերեն **թանգա**-ն և ռուսերեն **деньги**-ն միևնույն մտրից ծնված քույրեր են:

286. ԿՈՒՋԵԻՊԸ ԿՈՉՎԵԼ ՏԱԴԱՆԴԱՎՈՐ, ԵԹԵ ՏԱԴԱՆԴԻ ԲԱՆՆ ԸՆԴԱՍԵՆԸ 26... ԳՐԱՍ Է

Աշխարհում չկա մի լեզու, որ փոխառություններ կատարած չլինի հարևան լեզուներից: Երբեմն լեզուները փոխ առած բառերն այնպես են խնամքով պահում իրենց բառազանձում, որ, կարելի է ասել, «սեփականում» են կամ «սեփականաց-



ուն» են: Այս կարգի բառերից մեկն է հայերենի տաղանդը կամ տաղանդավորը, այնքան հաճախ ենք օգտագործում այս բառը, որ նրա ոչ հայկական լինելը շատերին կարող է զարմանք պատճառել շատ «հայազգած» լինելու պատճառով: Այսպես, օրինակ մենք սովոր ենք ասել «տաղանդավոր մարդ», «տաղանդավոր գիտնական», «Նրա տաղանդի առջև կարելի է խոնարհվել» և այլն, և այլն: Այս «զտարյուն» հայերեն թվացող բառը հունարենից է գալիս, և ոչ միայն հայերենն է վերցրել, այլև ֆրանսերենը, անգլերենը և այլն: Հունարենում տալանտոս բայը նշանակում էր «տատանել, ճոճել», որի պատճառով էլ կշեռքը սկսեց կոչվել տալանտոն (այսինքն «ճոճող, տատանող»): Եթե ծագումն ենք ուզում իմանալ, ապա հիշեցնենք, որ բառիս հիմքում հնդեվրոպական տել կամ տոլ՝ «քաշել, կշռել» արմատն է ընկած, որից էլ սասնկրիտում առկա տոլպա՝ «կշեռք» և լատիներենի

արտահայտվում է նաև սպիտակ և ստակ բառերով, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ արծաթի մակդիրներ, նրա հատկանշական կողմը արտահայտող բառեր, որոնք դալիս են փոխարինելու արծաթին: Նման երևույթ շատ է տարածված աշխարհի ժողովուրդների մոտ: Հենց ինքը՝ արծաթ բառը, որ ծագումով հնդեվրոպական բառ է՝ *areg- արմատից, նշանակում է սպիտակ, փայլուն:

Ինչպես նախնիքն ուզվեց, միջնադարյան հայ վիճաբույժական և մատենագրության մեջ մասսայաբար գործածվում է սպիտակը արծաթ-ի փոխարեն: Օրինակ Գրիգոր Սկանց պատմիչը 14-րդ դարում գրում է. «Ի տասն և հինգ տարեկանն է ի վերո գանձեն համարին մինչ ի վաթսուն տարեկանն և յամեն զլիտոյ, որ համարին, վաթսուն սպիտակ առնուին»: Կամ «Շ սպիտակ ի այն խիլային փոխան» (13-րդ դ., փմնագիր արծ.):

Հայերեն սպիտակ բառը փոխ է առնված պահլավերենի սպետակ-ից: Իրանական խմբի մյուս լեզուներում գտնում ենք սրանց զուգահեռները սոզդիերենում՝ սպետ, պարսկերենում՝ սիպեդ, Ալեքստայում՝ սպետտա, ռուսերենում՝ սվետ և այլն: Մի շարք հետազոտողներ (Թ. Ավդաբեգյան, Ղ. Ինճիճյան) կարծում են, որ հասպավումից առաջացել է ստակը, որն արդեն գործածվում է ոչ թե ճերմակ նշանակությամբ, այլ դրամ, արծաթ: Այս բանը նկատել է դեռևս Գրիգոր Տաթևացին (1-4-րդ դար) իր «Գիրք քարոզութեան, որ կոչի Չմերան հատոր» գրքում. «Արծաթն սպիտակ, զոր դրամ կոչենք»: Իսկապես արևմտահայ բազմաթիվ բարբառներում (Պոլիս, Սուչավա, Խարբերդ և այլն) ստակը գործածվում էր դրամ նշանակությամբ: Մի շարք բարբառներում ստակ բառի գործածությանը հանդիպում ենք նույնիսկ 15-16-րդ դարերից: Օրինակ՝ Կաննեց-Պողոսի քաղաքի հայկական դատարանի արծանագրություններում միևնույն տեքստի մեջ մերթ օգտագործվում է սպիտակ բառը, մերթ՝ ստակը: Ահա 1559 թվականի օգոստոսի 7-ին տեղի ունեցած դատավարության արծանագրությունից մի հատված. «Փաղիսդային որդին սկսա Յովհաննեսին զայս օուման մաղտ սպիտակով տալի առնելու, որ մաղտ սպիտակ վճարէ նմա... Դատավորքն ասեն Յովհաննես, որ մախ երդվմայ, որպես մաղտ ստակ և կամ ոսկի արծաթ չյունի, որ սպիտակի մօտիկ լինի և ապա զայն խումշով վճարէ, զոր յունի»: Կամ «90 Ֆլորին սպիտակն էր, զոր մնացել էր ի այդ ստակն»:

Հ. Անադյանը մերժում է Հ. Գյունըյարպեյեռյանի այն կարծիքը, թե ստակը ոչ թե սպիտակ-ի հապավումն է, այլ հայերեն յստակ, մաքուր, պարզ բառն է: Մեզ թվում է, որ լոր հիմքերը կան այս բացատրությունը ընդունելու համար, մանավանդ տրամաբանական տեսանկյունից, որն է, ինչպես կարող էր միևնույն արծանագրության մեջ սպիտակը և սպիտակ մնալ և ստակ դառնալ: Պարզաբան ստակը յստակ-ից է առաջացել և ոչ թե սպիտակ-ից: Մի շարք բարբառներում, այդ թվում նաև Թբիլիսիի ստակը և խստակը գործածվում են կողք կողքի. «Հայ գիրի ստակ, բանը կու շինիս խստակ»:

288. ՈՐԲԱՆ ԱՐԺԵ ՍԱՐԴՈՒ ՀԱՆՃԱՐԸ, ԵԹԵ ԲԱՆԲԱՐԸ 4,3 ԿԻՆՈՐԱՍ Է

Պտտվում են երկմային մարմինները, աստղերը, երկիրը, Լուսինը, Արեգակը, և մենք նրանց հետ անտես ու լռիկ... Եվ այսպես անտեսանելի անցնում են տարիները,

տուլո՝ «բարձրացնել» բառերը:

Եվ այսպես հունարենում տալանտոնը սկսեցին գործածել «կշռաչափ» և «ոսկեդրամի չափ» (մոտ 26,2 գրամ) նշանակություններով: Այս իսկ նշանակություններով էլ տաղանդը անցավ հայերենին, այսպես՝ «Ծախն Օոցա 100 տաղանդ արծաթոյ» նշանակում է «Նրանց 100 կշռաչափ արծաթ ծախիր» և ոչ թե խելք: Սակայն հետագայում այլ քաշի միավորների գործածության պատճառով, ինչպես, օրինակ՝ քանքար, դահեկան, լիտր և այլն, աստիճանաբար մոռացվեց բառիս հիմնական նշանակությունը, և կնշեց մեր լեզվում միայն նրա փոխարեարկան իմաստը: Եվ այսպես, եթե Բաֆֆին գրում է. «Մանվել ճարտարապետը սպառեց իր բոլոր արարչագործ տաղանդը», նկատի ունի ոչ թե նյութական հարստությունը, այլ խելքը, հնարամտությունը, ձիրքը, մտավոր կարողությունը, քանքարը (ի դեպ քանքար-ի մասին քիչ հետո):

287. ԱՐԾԱՌ, ՍՊԻՏԱԿ ԿԱՆ ՍՏԱԿ

Ինչպես արդեն նշվեց, արծաթը որպես դրամական միավոր շրջանառության մեջ մնաց շուրջ 30 դար: Այդ պատճառով էլ շատ ժողովուրդների մոտ փողը և արծաթ հասկացությունները նույնացել են: Այսպես, օրինակ՝ հռոմեացիների մոտ արգենտում (argentum), ֆրանսիացիների մոտ՝ արժան (argent), ռումինացիների մոտ՝ արջինտ (argint) և այլն:

Հին հեռաների մոտ նույնպես արծաթն էր հիմնական դրամական միավորը: Հիշենք թեկուզ Հիսուսին մատնող Հուդայի ստացած 30 արծաթի մասին: Ատովածաշնչի հայերեն թարգմանության մեջ անճնուրեք եբրայական բնագրի և հունական արգուրիոն (argurion) բառերի դիմաց գտնում ենք արծաթը: Այսպես, օրինակ «Գանձեին արծաթ և ոսկի» (Բարուք. գ.18), «Կշեցցին զվարձս իմ երեսուն արծաթի» (Չաքար. ԸԱ13) և այլն: Հետագա դարերում արծաթ հասկացությունը



ՔԱՆՔԱՐ

փոխվում են տարագները, փոխվում են նաև բառերի նշանակությունները: Այսօր սովորական է դարձել մեր լեզվի համար **քանքար** բառից ածանցավոր և բարդ ձևեր կազմել, ինչպես, օրինակ՝ **քանքարաշատ, քանքարավոր, քանքարաթաթույց, քանքարագեղ** և այլն: Այս բոլոր բառերում քանքար-ը գործ է ածվում «տաղանդ, խելք, հանճար, կարողություն, գիտելիք, շնորհք, իմաստություն» նշանակություններով: Եվ թե մեկն ասում է **քանքարաշատ** իմ ժողովուրդ կամ **քանքարավոր** իմ ժողովուրդ, ապա այս արտահայտություններն ընկալվում են «տաղանդավոր, տաղանդաշատ, հանճարավոր, հանճարաշատ, շնորհալի, շնորհաշատ և խելացի ժողովուրդ» նշանակությամբ:

Բայց այս նույն նշանակությամբ չէ, որ գործածվել է **քանքար**-ը հնում: Այն ծագում է հին սեմական

լեզուներից, աքքարական սեպագիր արձանագրություններում գործածվում է **քաքքար** ձևով և նշանակում էր չափի միավոր (եբրայերենում՝ քիքքար): Արծաթն ու ոսկին Գին Արևելքում կշռում էին **քաքքարով**, կամ ինչպես հայերենում էր ասվում, **քանքար**-ով: Ինչպես տեսնում ենք, բառամիջի երկու **քք** հնչյունները հայերենում վեր են ածվել **քք**-ի, սա օրինաչափ է ասես սեմական լեզուներից հայերենին՝ անցած բառերի համար, որտեղ կրկնակի պայթյալական հնչյունները կան (բառամիջում), դրանց դիմաց հայերենում առաջինը վեր է ածվում ռճային **ք** հնչյունի: Օրինակ՝ ասորերեն՝ մագգեա, հայերեն՝ մանգաղ (այսինքն՝ **զգ** = ճգ), ասորերեն՝ ազգանա, հայերեն՝ անգան՝ «սանդ, անոթ, մաման» և այլն: Եվ այսպես, Աստվածաշնչի թարգմանության ժամանակ թագմաթիվ դեպքերում **քանքար**-ը գործ է ածվում իր ճիշտ նշանակությամբ՝ «**քանքարք** արծաթյն և **քանքարք** ոսկւոյ»: Գրաբար թարգմանողները գիտեին, թե քանի տաղանդի կամ լիտրի է հավասար մեկ **քանքարք**, այսպես՝ «տաղանդն **քանքար** ասի ըստ եբրայեցոց, որ է ճիւղ դիտր (= 1025 լիտր կամ մոտ 4,3 կիլոգրամ)»: Եվ այսպես, աստիճանաբար գործածությունից դուրս է գալիս **քանքար**-ը նոր կշառաչափերի գործածության պատճառով, և մնում է նրա փոխաբերական նշանակությունը այսօրվա հայերենում, ինչպես **տաղանդ** բառինը, որպես նրան համարժեք:

289. ԴՐԱՍԸ ԿԱՐՈՂ Է ԾԵԼ ՏՈԿՈՍ, ԲԱՅՑ ՄԻԱՅՆ ԴՐԱՍԱՐԿՂՈՒՄ

Եթե ուզում ես շահել, ապա դրամ պահ տուր դրամարկղում և կստանաս երեք **տոկոսի** հավելում: Ի՞նչ է **տոկոս**, որտեղի՞ց եկավ այս բառը մեր մայրենիի բառապաշարի մեջ: Եթե դատելու լինենք նրա վերջավորության -ոս ածանցից, ապա դա մատնում է նրա հունական ծագումը: Եվ իսկապես **տոկոս**-ը հունարեն բառ է, որը ծագում է հունարենի tikto՝ «ծնել» բառից: Դետևաբար tokos նշանակում է «ծնունդ, վաշխ, որդի, զավակ»: Եթե այսօր մեկն ասում է՝ աճը կազմում է 50 **տոկոս**, ապա ոչ մեկը չի ընկալում 50 ծնունդ կամ 50 որդի իմաստով, այլ «հավելում, աճ,

վաշխ»: Իհարկե, Գ. Նարեկացին դեռևս այդ իմաստով է օգտագործել **տոկոս**-ը, երբ գրում էր. «Փառք նոցա **տոկոսեայ** և յերկանց և յուրթեանց» (Փառք նրանց երկուցների, հողությունների և **ծնունդների** համար): Սակայն այսօր մենք «հարյուր տոկոսով, հիսուն տոկոսով ավելացնել արտադրանքը» արտահայտություններում այլևս չենք գիտակցում **տոկոսը** «ծնունդ» իմաստով, այլ «ավելացում, աճ», բայց նկեք խոստովանենք, որ դրամարկղում դրամը այնուամենայնիվ «ծնում» է ռուբլիներ և կոպեկներ: Ուրեմն ինչ-որ տեղ **տոկոս**-ը դեռևս ծնում է:

290. ԵՐԿՈՒ ԼՈՒՅՆԱՆՈՒՆ ԲԱՌԵՐ՝ ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐ ԼԵԶՈՒՆԵՐԻՑ

Ո՞վ չի գործածել «ծծելով **փոստը** համել» կամ «նրա **փոստը** փռել» արտահայտությունները, որոնք փոխաբերաբար նշանակում են «մեկին տանջամահ անել, մահվան դուռը հասցնել»: Իհարկե, **փոստ**-ը փոխառություն է իրանական լեզուներից, ուր post նշանակում է «մորթի, մուշտակ» (այծի, ոչխարի, տավարի կամ ընդհանրապես որևէ կենդանու կաշին բրդով հանդերձ):

Մեր խոսակցական և գրական լեզվի մեջ մուտք է գործել նաև մեկ այլ **փոստ**՝ «նամակատուն, կապի միջոցների՝ հեռագրի, հեռախոսի տուն կամ ծառայություն» նշանակությամբ, որը ծագում է բոլորովին ուրիշ լեզվից՝ Գին Դոմինից, ուր և հիմք դրվեց 1-ին դարում՝ Օգոստոս Օկտավիանոս կայսեր ժամանակ, նախնական փոստային ծառայությանը: Դոմեական բանակի բեռների և լուրերի տեղափոխման համար հատուկ ծիր առանձնացվեցին, որոնց անվանում էին **evcites poziti** («evcus՝ «ծի» և ponere՝ «դնել, գետեղել» բառից): Դարերի ընթացքում այս երկու բառերից մնաց վերջինը, որից էլ՝ իտալերենի posta-ն: Իտալերենից posta-ն անցավ եվրոպական այլևայլ լեզուների դասաբալով post office, ռուսերենում՝ **почта** և հայերենում՝ **փոստ** (թարգմանություն՝ **փոշտ**): Սկս և երկու նույնանուն **փոստ**-եր, որոնք ոչ մի հեռավոր կապ չունեն միմյանց հետ: Ֆրանսերենում **պոստե** ոչ միայն նամակատուն, այլև «տեղ, կառք, ծառայություն և պաշտոն» է նշանակում: Այս իմաստով ռուսերեն էլ գիտե nocT՝ «պաշտոն», որից էլ՝ հայերենի **պոստ**-ը, օրինակ՝ «Լա այդ պոստում երկար մնաց»:

291. ԵՁԵ ՆՍՏԵՍ ԱՅՈՒՆ, ԿՂԱՌՆԱՍ ԲԱՆԿԻՐ, ԻՍԿ ԵՁԵ ՍԵՂԱՆԻ ԱՌՋԵՎ՝ ՍԵՂԱՆԱՎՈՐ

Ինչպես նշել ենք նախաբանում, ժամանակակից որևէ քաղաքի փողոցներով անցնելիս մեզ անպայման կհանդիպի **բանկ** ցուցանակը, որի մասին կենսագրական տեղեկություններն արժանի են ուշադրության: Ոմանք կարող են մտածել, թե ինչ հետաքրքիր բան կարող է լինել այստեղ: Դե **բանկ** այն վայրն է, ուր դրամ է պահվում, դրամական գործարքներ են կատարվում, վալյուտա է փոխանակվում, վարկ է տրվում և այլն: Էլ ի՞նչ: Բայց ե՞րբ և ինչպե՞ս հայտնվեց **բանկ**-ը մեր բառապաշարում: Աստվածաշնչում ունենք **սեղանավոր** բառը, որ գործ է ածվում «դրամափոխ», «լուծալափոխ» նշանակությամբ: Քանի որ դրամափոխ անձը

նստում էր սեղանի առջև իր գործարքները կատարելիս, այստեղից էլ «կպավ» նրան սեղանավոր արտահայտությունը: Այս բառը հունարեն տրապեզիտ, լատիներեն նունանուկարիոս բառերի համարժեքն է: Վերջինս ծագում էր նունմին բառից, սա էլ նունուս-ից, սա էլ իր հերթին՝ նոմինոս՝ «օրինակ» բառից, իսկ սա էլ ոսո՝ «օրենք» բառից, որն էլ, իր հերթին աղավաղվելով, ասորերենում և հայերենում դարձավ լունա (այս մասին կարդա՛ր Լունա հոդվածում): Իսկ ինչպե՞ս հայտնվեց բանկ-ը:

Բանկ բառը ծագում է գերմաներեն Bank «նստարան, աթոռ» բառից: Քանի որ միջնադարյան լունայափոխները դրամական գործարքները, դրամափոխանակությունը կատարում էին աթոռին կամ նստարանին նստած, այդ իսկ պատճառով էլ նրանց «աշխատավարը» կոչվեց բանկ՝ աթոռ: Լատիներենում banco-ն ուներ նախապես «նստարան», ապա՝ «կրպակ, խանութ» նշանակությունները: Եվ այսպես բանկ-աթոռ բառը սկսեց գործածվել այն վայրի բովանդակությամբ, ուր դրամափոխարանն էր, այսինքն՝ այն շինության առումով, ինչպես գիտակցում ենք այսօր:

292. ԵՔԵ «ՕՐԻՆԱԿԱՆ» Է, ՈՒՐԵՍՆ ԼՈՒՄԱ Է

Այսօր շատ տարածված արտահայտություն է լունա ներդնել-ը: Օրինակ «Ադամյանը մեծ լունա է ներդրել հառուստատեսության զարգացման գործում»: Կամ «Ես իմ լունան ներդրել եմ, հերթը ձերն է»: Լունա-ն հիշյալ արտահայտություններում գիտակցվում է «ներդնում, միջոց, հնարավորություն կամ պարզապես դրամ» իմաստով:

Գրաբարում այդ իմաստով էլ օգտագործվում էր: Նույնիսկ Աստվածաշնչում գտնում ենք լունափոխ «դրամափոխ», այլուր՝ նաև լունայափոխ ձևը: Լունայ-ի հետ միասին գործածվել է նաև լոմայ-ը՝ «մանր դրամ, փող» նշանակությամբ: Ենթադրվում է, որ այս բառը ասորերեն և հայերեն լեզուներից է հասել որպես աղավաղում հունարեն նոմինոս՝ «օրինական», ոսո՝ «օրենք» բառի, որը լատիներենում դարձել էր նունուս կամ նունմունս՝ «դրամ»: Արաբերենում նունա-ն պահպանվել է «դրամ, լունա», նշանակություններով, իսկ ասորերենում և հայերենում լունայ: Ենթադրվում է, որ նունա-լունայ անցումը ասորերենում և կատարվել, սակայն նման հնչյունափոխությունը խորք չէ նաև հայերենի համար, հիշենք՝ նման-լման (կլմանի՝ «նմանում է»), մեխուր-լախուր, ներբան-լերբան, նապաստակ-լապստրակ և այլն:

293. «ԱՆԱՐԱՏ», «ԱՆԹԵՐԻ», ԱՆԲԻԾ ԱՍՏՎԱԾՈՒԿԻՆ ԿԱՍ ՆՈՒՅՆ ԻՆԹԸ՝ ԱՆԱԿԻՏԸ

Մինչև մեր թվարկության 301 թվականը հայերը հեթանոսներ էին, պաշտում էին բազմաթիվ աստվածների, որոնցից մեկը շատ էր սիրված: Դրա ապացույցն է այն փաստը, որ նույնիսկ քրիստոնեության մուտքից հարյուր հիսուն տարի հետո էլ քրիստոնեության մեծ ջատագով Ագաթանգեղոսը մեծարանքի և հիացական խոսքերով է հիշատակում մեծ Արամազդի դուստր Անահիտին, որին «Մեծ Անահիտ տիկին, փառք ազգիս մերոյ և կեցուցիչ, մայր ամենայն զգաստութեանց, բարերար» է համարում:

Ստորաբունի վկայությամբ՝ «Պարսից բուրդ աստվածությունները պաշտվում էին նաև մարերի և հայոց կողմից, բայց Անահիտի պաշտամունքը հայոց մեջ գերազանցում է բոլորին»:

Անահիտի ոսկե արծանը կանգնեցված էր Երիզայի մեխանում, որի մասին հիշատակում է Անտոնիոսը: Դայ հեղինակներն էլ են հիշատակում «ոսկի պատկերն Անահիտականաց դից» (Անահիտական աստվածների ոսկե պատկերը): Ստորաբունի վկայությամբ՝ հարուստ և նշանավոր մարդկանց աղջիկները նույնիսկ իրենց կուսությունում էին նվիրում Անահիտին:

Անահիտ աստվածուհին չնոռացվեց հայոց կողմից, դրա ապացույցն է այսօր Անահիտ անվան առատությունը մեզանում: Իսկ գիտե՞ց արդյոք Անահիտները, քե ինչ է նշանակում այն: Իրանական լեզուներում «թերություն, պակասություն» բառը ինչու էր ahita, ինչպես Ավեստայումն է, պահպակերենում՝ ahok՝ «թերություն, պակասություն», պարսկերենում՝ aho՝ «պակասություն, արատ, մեղք» և այլն: Ահոկ-ը բազմիցս օգտագործել են հայ հեղինակները, նույնիսկ ահոկել բայը և անահոկ ժխտականը: Օրինակ՝ «ժառոց չափով գետափն» (ժանեղին գետափը չի վնաս), «ահոկ մի խոսիք» (արատավոր մի խոսիք) և այլն:

Իրանական կամ պահլավական առ ժխտական մասնիկը, ավելանալով այս ահի բառին, դարձել է anahit, որն ընկալվում էր «անարատ, անքերի, անքիծ» իմաստով: Նախապես կարող էր բառը Anahita լինել՝ իզական սեռին պատկանելու պատճառով:

294. «ՓՐԿԻՉ» Է ԱՍՏՎԱԾ, ԻՍԿ Ո՛Վ Է ՏԵՐ-Ը ԿԱՍ ԱՐԱՍԱԶԳ-Ը

Աստծո անունը բազմաթիվ լեզուներում միայն մեկ անվամբ չէ, որ հայտնի է, այլ բազմաթիվ: Պատճառներից գլխավորը տվյալ ժողովրդի անցած պատմական ուղին է: Դեթանոսության ժամանակ բնության ուժերն էին աստվածներ համարվում, ուստի և բազմաթիվ բնության ուժերի անվանումները՝ Երկինք, Արև, Լուսին, Որոտ, Կայծակ, Կրակ, Շանթ և այլն, ճանաչվեցին որպես աստվածներ: Փոխվեցին ժողովուրդների պատկերացումները բնության ուժերի վերաբերյալ, և նոր վարդապետություններ, նոր կրոններ հանդես եկան իրենց նոր աստվածների անուններով, բայց այս անգամ արդեն քրիստոնեության կամ իսլամի, բուդդիզմի պատկերացմամբ աստվածը մեկն էր:

Այսպես, օրինակ՝ Միջագետքում գլխավոր եռաստվածություններից Անու անունը միաժամանակ «Երկինք» էր նշանակում ինչպես շումերացիների մոտ, այնպես էլ աքքադացիների, իսկ Բել աստծո անունը նշանակում էր «տեր», Շամաշ-ը «արև», այստեղ պիտի հիշել նաև հայոց Տեր Աստված արտահայտությունը, ուր դարձյալ գործ ունենց երկու տեր և Աստուած բառերի համատեղության հետ: Ճիշտ է, տեր-ը թվում է, քե հայերեն տեր (տի+այր) հասարակ բառից է ծագում, սակայն վերադառնալով Միջագետք, որի պատմության հետ անխզելի է մեր ժողովրդի անցյալը, գտնում ենք աքքադերենում tir՝ «փրկիչ, պահապան, թիկնապահ» (որից էլ բայածանցյալ mstir՝ մատուռ-ը, որ սխալմամբ համարում են հունարենի մարտիրոս՝ «նահատակ» բառի ձևով): Այստեղ կարելի է հիշատակել նաև ռուսերենի 6օ՝

«աստված» բառը, որն օգտագործվում է նաև կոչական **боже** ձևով (**боже мой**), դարձյալ ծագում է «փրկել, փրկիչ» հասկացությունից, որի ապացույցն է իրանական լեզուներից պարսերենում պահված **bož** «փրկել» բառը: Իմիջիայլոց, bog բառը նաև հայերենում է պահպանվել **բազ** ձևով, որը պահլավերենի bag «աստված» բառից է, **Բագարան** հայոց դիցակաճառը **պանքեռնը**, այսպես էր կոչվում **Բագին**, **Բագարատ** հատուկ անունը՝ «աստծո նվեր, տուրք» և այլն: Ռուսերենի **о**–ին հայերենում համապատասխանում է **ա**–ն, ինչպես որ ունենք ռուսերեն **око**, հայերեն **ակ**– **«աչք»**, հետևաբար ռուս. **бор** = հայ. **բազ**: Բայց բնիկ լինելու դեպքում պիտի լիներ **բակ**, ուստի և փոխառություն է պահլավերենից, սանսկրիտում Bhaga «բաշխող, բաժանող, հարգելի, պաշտելի Արեգակ, Լուսին, Սիրո աստվածն» է, պազենդերենում bay, հին պարսկերենում бага «աստված»: Վերադառնալով **Հիսուս Քրիստոս** անվան ծագմանը՝ պիտի հիշել, որ **Յիսուս** անվանումը հունարենից է անցել հայերենին և այլ եվրոպական լեզուներին, իսկ իրականում այն ծագում է եբրայերենի **Յաշուա՛** «փրկիչ» բառից, որը հունարենում դարձավ Jesus: **Հիեսուս** հունարենում շ–ի բացակայության պատճառով: Իսկ **Քրիստոս**–ն ավելացավ բունհարեում, ուր **Χριστος** նշանակում է «**օծյալ**» (եբրայերենի **մեսիա** «օծված» բառի թարգմանությունն է): Ուրեմն, երբ մենք ասում ենք **քրիստոսյա**, բառացի նշանակում է «օծված», սակայն, ավելի ճիշտ՝ «հետևող օծվածի», այսինքն **Քրիստոսի կամ Յիսուսի**:

Իսկ ավելի առաջ հեթանոսական շրջանում, այլ կերպ էին կոչում աստծուն, ինչպես վկայում են մեր պատմիչները: Արշակունյաց հարստության օրոք, երբ խիստ ուժեղ էր իրանական ազդեցությունը, հայերեն աստծուն անվանում էին **Արամազդ**: Օրինակ Ազաբանդեղոսն ասում է. «Մեծն արին Արամազդ, արարիչ երկնի և երկրի, հայր անուանեալ դիցն ամենայնի»: Եվսեբիոսի «Ժամանակագրության» մեջ գտնում ենք հետևյալ բացատրությունը. «Եւ զԲէլայն ասէն, որ յունարեն **Դիոս** թարգմանի և հայերեն **Արամազդ**» (Բելի մասին ասում են, որ հունարեն **Դիոս**, հայերեն **Արամազդ** է թարգմանվում): Իսկ ի՞նչ է նշանակում **Արամազդ**: Թեև եվսեբիոսն ասում է, որ այն **տեր** (=բել) է նշանակում, սակայն այն հայերեն չէ: Արամազդ–ը հին պարսկերեն ahura «տեր» և mazda «գերագույն, մեծ իմաստություն» բառերից է ծագում:

Հայերից ոմանք Արամազդ–ն ընկալում են **Արա–մազդ՝ «մեծ Արա»** նշանակությամբ: Հայերի համար հատկապես հասկանալի էր բառի վերջին mazda–**մազդ կամ մաստ** եզրը, որը նշանակում է «մեծ»: Այն առանձին գտնում ենք Քուչակի հայրեններում՝ «Հայ իմ **մազդ** ուրի մորճիկ» (Այ իմ մեծ ուրի դալար), կամ բարբառներում պահպանված **մաստ** ասեղ՝ «մեծ ասեղ, մախաթ ասեղ», որ գիտեն խարբերողի, Սիվրիհիսարի, Մալաթիայի, Հաճընի և Բուբանիայի բարբառները, **մաստ ու՛**՝ «երկաթն մեծ մուրճ» և այլն: Լոր պարսկերենում իսկապես mazda–ն դարձել է masti՝ «մեծ» նշանակությամբ:

Դարձյալ իրանական ծագում ունի հայոց մյուս աստծո անունը՝ Միիրը, որ ծագում է mitra–ից, իսկ աս էլ mihr՝ «արև, աշխարհ» բառից, ինչ ռուսերենում գտնում ենք **мир** ձևով՝ «խաղաղություն» և «աշխարհ» նշանակություններով:

295. ԶԱՆԻ՞ ՏԱՐԻ Է ԱՊՐՈՒՄ ԱՅՂ ԴԱԺԱՆ ԱՍՏՎԱԾ ՆԵՌԸ

Դուք գիտե՞ք, թե որքան գեղեցիկ խաղիկներ էին հորինում Ավնում: Եվ որ միայն Ավնում են պահպանվել հայոց **հայրենները**: Ուրիշ ոչ մի տեղ **հայրեններ** չկան: Եվ նշանավոր Ավնա հայրեններում գտնում ենք այսպիսի տողեր.

Դու՛շման, աչքըդ թոռ կենա,
Մանգ ու **Օնե** լեզուդ չորնա...

Ի՞նչ է **Օնե**–ը: Այս անվանը մենք հանդիպում ենք բազմիցս և՛ հայրենի տարբեր բարբառներում, և՛ կրոնական գրականության մեջ, և՛ Աստվածաշնչում: Գուցե սկսենք Ավետարանի՞ց, ուր Հովհաննեսի Հայտնության մեջ խոսք է գնում **Նեռի** մասին:

Այստեղ մի գաղտնիք բացենք: Եվրոպացի գիտնականները Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը «թարգմանությունների բազուկի» անվանեցին: Եվ ահա մյուս լեզուներում տվյալ հատվածում պակասում է **Նեռ** բառը և միայն նրա տեղում **անտիքրիստոս** է գրված: Նեռը չկա: Բայց **Նեռ**–ը, ինչպես հիշատակեցինք, հորինված բառ չէ, այլ գործածական է մեր օրերում էլ: Ասում ենք. «**Նեռ** մարդ է»: Խ. Արուսյանն ունի «Ինչպես **Նեռ** օծ», «**Նեռ**ությունն է բռնել», «**Նեռ**ություն մի անիլ», «**Նեռը** քեզ տանի» և այլ արտահայտություններ:

Նեռ–ն այս բոլոր դեպքերում չարություն, դաժանություն, դիակալություն և վատ արարք է նշանակում: Մյուս կրոնական գրվածքներում **Նեռին** անվանում են **որդի կորստեան**, այսինքն **ոչնչացնող**: Այս բոլորը շատ լավ, բայց ինչո՞ւ մեր հոգևոր հայրերը **անտիքրիստոսը** փոխեցին **Նեռ**–ով: Որպեսզի հասկանալի դառնա, թե ով էր այն **չար ուժը**, որ ելնելու էր **Քրիստոսի** դեմ: Չէ՞ որ հայերը վաղուց գիտեին **Նեռ** չար աստծուն: Իսկ **անտիքրիստոսին** չէին հասկանում:

Իսկ ո՞վ էր **Նեռ**–ը: Ner–ը մահվան ու չարության, համաճարակների, երաշտի ու չարիքների աստվածն էր, որից վախենում էին Միջագետքի ժողովուրդները շուրենները, աքքադացիները մեզանից ինչպե՞ս հազար տարի առաջ: Աքքադերենում ner նշանակում է «ոչնչացնել, խլիել, սպանել», ուստի կարելի է ասել, որ **Նեռը** այդքան ապրել է... ոչնչացնելով հազարամյակները:

296. ԱՍՏՎԱԾԱԸՆԾԻՑ ԵՎԱԾ ԲՈՍՈՐ-Ը

Եղիշե Չարենցը «Ամենապոնում» դրոշների արճավառ և կարմիր որոշիչները թանձրացնում է ավելի դիպուկ **թոսոր** մակդիրով.

Դրոշներ ծփացին արճավառ,
Դրոշներ կարմիր, **թոսոր**:

«Լաիրի երկրից» բանաստեղծության մեջ նույն այդ **թոսոր**–ով որակում է «**սիրտը** բոլոր կողմերի տառապող մարդու».

Բերե՛լ է մեկը այսօր աշխարհում
հառնելու հոգը, բոսոր ձեր սրտին
Մի սիրտ ավելի ըմբոստ ու արի,
Քան իմ սիրտը թե՛ս–սիրտը Նաիրի:

Հարենցի և շատ բանաստեղծների կողմից սիրված **բոսոր** բառը, որ նշանակում է «արճազույն, բամբը կարմիր», հայոց լեզվում «ծնվել» է Աստվածաշնչի հունարեն բարգվանության օրինակից, այսինքն 5-րդ դարում:

Աստվածաշնչի երբայերեն օրինակում **բոսոր**–ը դեռ **բոսոր** չէ, այլ **Բոզրա տեղանուն**, որը թարգմանվելով հունարենի դարձավ bosor: Ահա այդ հատվածը. «Իսկ այս ո՛վ է, որ դիմեալ գայ յեղովմայ. կարմրութիւն ձորձոց իւրոց ի **Բոսորայ**» (Ո՛վ է սա, որ գայիս է եղովմից, հանդերձները կարմրացրած **Բոսորայից**), երբայերենում bašara, հմմ. գերմաներեն՝ Bozra: Ենթադրվում է, որ **բոսոր**՝ «մուգ կարմիր, արնակարմիր» գույնի անվանումը Bosor տեղանունից է, ինչպես **Բորդոյից** ունենք **բորդոյի** գույն և այլն:

Հայ մեկնիչների և բանաստեղծների ամենասիրած բառերից մեկը դառնալով **բոսոր**–ը գործածվում էր նաև բարդված և ածանցված ձևերով՝ **բոսորբանգնան** «բոսորագույն», **բոսորաբուղխ** «արճաբուխ», **բոսորած** «կարմրած», **բոսորակայլակ**՝ «կարմրակաթիլ» և այլն:

297. ԲԱՆԻ՞Ր ՏԵՍԱԿ ԵՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ ԵՐԿՆՔՈՒՄ ՍԵՐՈՐԲ-Ի ՈՒ ԹԵՐՈՐԲ-Ի ԵՎ ԶՎԱՐՁՆՈՅԻ ՍԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Ոչ մի **Սերոբ** կամ **Թերոբ** անուն կրող այսօր չի կասկածում, որ ինքը պապի հիշատակին այդպես չի կոչվում, այլ քրիստոնեության, որն ընդունած ժողովուրդների բառապաշարի մեջ մուտք գործեցին այդ բառերը: Նախ սկսեցը **հրեշտակ**–ից, որպեսզի ամեն ինչ հերթով լինի: Պաշլավերենից կատարած հայերենի վիդյառությունների մեջ գտնում ենք նաև **հրեշտակ**–ը, որն ուներ՝ *freštak հնչումը: «մարգարե, հրեշտակ, առաքյալ, պատգամավոր, դեսպան» նշանակություններով: Իսկ որպեսզի հասկանանք այս նշանակությունների ծագումը, անհրաժեշտ է, որ նրա բաղադրիչները վերլուծենք: Այն կազմված է իրանական fra– նախածանցից՝ «առաք» նշանակությամբ, aēs՝ «շարժվել, շտապել, ուղարկել» արմատից և անցյալ դերբայի –išta ածանցից: Համարառության համար ասենք, որ արաբերենի malak–alak՝ «հրեշտակ, դեսպան» բառն էլ «ուղարկված» է նշանակում, որովհետև ծագում է alak՝ «գնալ, առաջանալ» բառից (հմմ. աքքադերեն՝ alek՝ «գնալ»): Դարձյալ չմոռանալու համար ասենք, որ հայերեն **Մաղաքիա** անունն էլ սեմական ունյն malakia՝ «առաքյալ, հրեշտակ, պատգամաբեր» բառից է ծագում: Չմոռանաք նաև նշել, որ ոմանք **հրեշտակ**–ը միայն անմեղ էակ են պատկերացնում, այստեղից էլ՝ «Չէ, դու անմեղ **հրեշտակ** ես» արտահայտությունը: Սակայն Դուրյանը ճիշտ էր գնահատում այդ բառը, երբ որակում էր.

Եթե դժգույն մահու հրեշտակ
Անուն ժպտով՝ ո՛րքն իմ դեմ...

Այսինքն՝ մահվան պատգամաբեր, մահվան առաքյալ... այդ էակը:

Ինչևիցե, մենք դառնանք մյուս բառերին, որոնց մասին սկսեցինք զրույցը:

Եվ այսպես, քրիստոնեության մուտքի հետ միասին հայ ժողովրդի կենցաղ մտան նոր բառեր, նոր պատկերացումներ, որոնք նոր գաղափարախոսության անխուսափելի ուղեկիցներն էին:

Նման նոր պատկերացումներ արտահայտող բառերից էին **քերովբ** կամ ժողովրդական հորոջրջմամբ՝ **քերո** և **սրովբ** (կամ **քերովբ**–ի ազդեցությամբ՝ **սերովբ**) և ժողովրդական **սերոբ** ձևերը:

Այս բառերի հետ զուգահեռաբար շարունակում է իր գոյությունը նաև **հրեշտակ**–ը, որովհետև թեև նա հին իրանական աշխարհի և կրոնի հետ մեզ մոտ եկած պատկերացումն էր, և նա էլ հենց պիտի մեկնաբաներ ու բացատրեր այս նոր բառերի էությունը: Ուստի շատ դեպքերում **հրեշտակ**–ն օգտագործված ենք տեսնում **քերովբ**–ի և **սերովբ**–ի հետ կողք կողքի մեկնողական բնույթի երկերում կամ որպես հոմանիշներ:

Իհարկե **սերովբ**ների և **քերովբ**ների միջև հավասարության նշաններ դնելը միայն էր, որովհետև երկնային այդ էակների պաշտոններն ու դերերն էլ էին տարբեր: Չենք բառերի ծագումներն էլ հաստատում են այս փաստը: Ոսկեբերանն ասում է. «Ի հերբայեցի լեզու **հրեղեն բերանք** թարգմանին **սրոբք**» (Երբայերենում **սրոբենեղ** թարգմանվում են «հրեղեն բերաններ»): Ենթադրվում է, որ հայերենը ասորերենի saraf բառից է, որ հունարենում դարձել է serafim, լատիներենում՝ seraphim, իսկ սրանք էլ երբայերենի serahim հոգնակի ձևից են (–im–ը երբայերենի հոգնակի վերջավորությունն է), արմատն է sraf «այրել», եզիպտերեն՝ srf «տաք», աքքադերեն՝ sarāpu՝ «այրել» և այլն, սակայն անբացատրելի է մնում այստեղ հայերենի **թ**–ն, քանի որ սպասելի էր **սրափիմ**. գուցե ավելի հի՛ն է մեր բառի ծագումը, քան քրիստոնեությունն է:

Իսկ **քերովբ**–ն, որն ավանդված է նաև **քերովբ**, **քերովբիմ**, **քերոբիմ** ձևերով: Դարձյալ ենթադրվում է ասորերենի karowa, հոգնակին՝ krowe, հունարեն՝ kerub, kerubeim, որը երբայերենի kerub, kerubim ձևերից է ծագում, իսկ թե երբայերենն ինչ արմատից է ծագում, մի քիչ կասկածելի է. կա աքքադերեն karabu՝ «խոնարհվել, հարգել, աղոթել, օրհնել, աղաչել» բառը, որ կարող է կուշել նրա ծագումը, սակայն հայկական ավանդական մեկնություններն այս կետում տարածիտվում են: Երկնային զվարթունքների մեջ **քերովբ**ները **սերովբ**ներից հետո են միշտ, որոնց այսպիսի մեկնությամբ են ներկայացնում՝ «բազմաչեյա», «որ է յաճախ գիտութիւն», «հեղուն իմաստութեան», «բազում գիտութիւն», «բանդակագործ» և այլն: Երբեմն այսպիսի մեկնություններով՝ «**սերովբ** հողեղէն և մարմնապոր **քերովբ**», ինչպես Փիլոնն է կարծում: «**Քերովբ**ական աթոռ կամ կառք» արտահայտությունները նույնպես չեն օգնում լրիվ բացահայտելու այս հրեշտակների կամ երկնային զվարթունքների անբողջ էությունը...

Հայ իրականության մեջ այս եակների պատվին կառուցվել է տաճար, որը և կոչվել է **Զվարթնոց**:

298. ԻՆՉՈՒ՞ «ՊԱՌԱՎԱԼՅ ՅՐՏԵՐ», ՊԱՌԱՎԱԵՐԻ՞, ԹԵ՞ ՎԵՐՏԻՆ

Ցրտե՞րն էլ կարող են լինել պառավների կամ երիտասարդների: Պարզվում է, որ այո: Գնուց ի վեր հայոց մոտ ընդունված է փետրվարի վերջերից մինչև մարտի կեսերը անվանել «պառավանց ցրտերի» օրեր: Այս օրերը նշվում են նաև եկեղեցական օրացույցներում, ուր գրված է. «Սկիզբն ցրտոյն պառավանց, որ տևէ եօթն տիւ և ութ գիշեր (25-ից փետրվարի մինչև 3-ը մարտի կամ 6-13-ը մարտի): Իսկ մարտի 13-ը համարվում է «վերջ պառավանց ցրտոյն»:

Իհարկե, այսպիսի անվանման համար ցրտերը ինչ-որ պատճառներ, այն էլ «հարգելի», ունենին: Զրույցները փորձում են կապել պառավի այծերի հետ, որ իբրև թե պառավի ձմեռային խոտի պաշարը սպառվել էր, և նա էլ արոտ է հանում այծերին: Սակայն սկսվում են սաստիկ ու անսովոր ցրտեր, որի պատճառով մի քանի օր այծերը մնում են սոված և ապա հիվանդանալով սատկում են: Մեկ այլ զրույցում համկարծակի ծյուն կամ կարկուտ է տեղում, և այծերը կոտորվում են դաշտում: Ահա այստեղից էլ ցրտերի նման անվանումը: Սակայն ճշմարտությունը պիտի որոնել ոչ թե «պառավի այծերի» մեջ, այլ փոխարեւոյթյան, քանի որ **պառավների** հասկացությունն այստեղ պիտի ընկալել **վերջին ցրտերի** առումով և ոչ ուղղակի **պառավների**:

299. ԱԽՐ... ԵՎ ԱԽԱՌ ԿԻՐԱԿԻ, «ԱԽԱՌԻ ՍԱՏԱՂ»

Հայերենի բազմաթիվ բարբառներում, ինչպես Արարատյան, Աշո, Շիրակի, Ղարաբաղի և այլն, տարածված են **ախառի կիրակի**, **ախառի մատաղ**, **ախառի միս** կամ պարզապես **ախառ** արտահայտությունները: Նոր սերունդը արդեն անծանոթ է կամ արդեն մոռացության է մատնում այս արտահայտությունների նշանակությունը: Մտավել ևս չգիտե, թե ի՞նչու է կամ ինչպես է առաջացել **ախառ**-ը: Ազգագրական հանդեսներում և Ս. Ամատունու «Հայոց բառ ու քան» բառարանում գտնում ենք մեզ հետաքրքրող վերոհիշյալ արտահայտությունների բացատրությունը. «**Ախառ** կամ **ախար**— գատկի մատաղ, որ լինում է եզ կամ արջառ և կամ երից, որ գնվում է գյուղի կամ քաղաքի համայնքի կողմից հավաքված կամավոր դրամով և մորթվում է, եփվում է **գատկի** առավոտյան եկեղեցու զավթում»: Սուրբ պատարագից հետո ամեն ոք ստանում է իր բաժինը և ստում հենց եկեղեցու զավթում կամ տուն տանում: Իսկ տեղ-տեղ հում-հում հավասար բաժանվում է ծխերին պատարագից առաջ, որից էլ առաջ է եկել «մատաղաբաժին» անունը: Եթե մենք 150 տարի ետ գնանք, Այն ժամանակները, երբ Պերճ Պողոյանի «Սուս և Վարդիթեր» և «Հացի խնդիրն» ժր գրված, ապա, ունկնդրելով նրա հեղուների խոսքերը, մենք կհասկանայինք, թե որքան անհրաժեշտ էր և կարևոր **ախառ**-ը հարգելը յուրաքանչյուր հայի համար: Ահա թե ինչ է ասում Պողոյանի հերոսը. «Ջատկի

կիրակի առավոտյան հայ քրիստոնեն պիտի ծեղելահան **ախառի** մսով բերան բաց անի... Էն քրիստոնեն, որ **ախառով** չմասնավորվի, սաղ տարին իրավունք չունի մի համ տեսնելու»: Հայ քրիստոնյան պարտավոր էր երկար շարաքների պահած իր պարզ բացել կամ լուծել **ախարի** մսով. «Աման, մարդ պետք ա **ախարի մսով** ուրան նվրկատիք-ը բենա»: Ուրեմն **նաակատիքը** պետք է **ախառի** մատաղի մսով բացվեր:

Ինչպես գիտենք, **Մեծ պատեր**, որ տևում էր 50 օր, ավարտվում էր զարմանք, և ահա **Մեծ պառի** ավարտին էլ կատարվում էր մատաղի արարողությունը, որը կոչվում էր **ախառի** մատաղ, **ախառ** կիրակի օրը մորթված լինելու պատճառով: Իսկ ի՞նչ է նշանակում **ախառ**-ը: Եթե դուք գիտեք ինչ է նշանակում **ախր**-ը, ապա պարզ կդառնա նաև **ախար**-ը կամ **ախառ**-ը: Ամեն թուպ օգտագործում ենք. «**Ախր** ես չգիտեմ, **ախար** մենք չենք մեղավոր...» և այլն, այս բառը՝ **ախր** կամ **ախար**, **արարեղենից** է անցել մեզ, ուր **axr** նշանակում է «վերջը, վերջիվերջո»: Այստեղից դժվար չէ հասկանալ **ախառ կիրակի**-ն, այսինքն **վերջին կիրակին Մեծ պառից** հետո, որտեղից էլ **ախառի միս**, **ախառի մատաղ** կամ պարզապես **ախառ** արտահայտությունները:

300. ԿՍԱԽԻՔ ԵՎ ԿՍԱԽԻԻՔ

Հայերենի **կմախք** բառը, որն ունի «ոսկրակազմ, հիմնակազմ» նշանակությունը, մի քանի մասնագետների կարծիքով (Բրոքելման, Աուրան, Ամառյան, Ղափանցյան) ծագում է շուներաաքքադական **ki.mah**՝ «գերեզման, դամբարան, դագաղ» բառից: Կարո՞ղ է նման իմաստային անցում: Շուներները **գերեզման** կամ **ki.mah** ասելով հասկանում էին ոչ այսօրվա գերեզմանն ու քաղման արարողությունը, այլ իրենցը: Իսկ իրենք դիակը դագաղի մեջ չէին դնում, այլ ծեփում էին այն կավով և սարկոֆագի նմանվող կավածեփ այդ դիակն էլ թաղում էին չորանալուց հետո: Այս վիճակում աճյունը կոչվում էր **կիմախ**: Կիմախի վրա կատարվող լացի, ողբի սգո արարողությունն էլ կոչվում էր **կմախք**, ինչպես զրաբարում պահպանված կրոնական տեքստերից է պարզվում: Այսպես հունարենից հայերեն կատարված թարգմանություններում (Քարոյք Զ 31 և Յոթանասուներեց թարգմանություն) հունարեն բնագրի «մեռելի սգահանդես» և «հուղարկավորություն» համարժեքների դիմաց հայ թարգմանիչներն օգտագործել են **կմախիք** բառը: Ահա այդ նախադասությունները. «Ունան և ողբան և գուծեն իբրև կմախիս մեռելոց» (Ունում, ողբում և գուծում էին, ասես մեռելների սգահանդեսում), «Եվ ոչ արարին նմա այնուհետև ժողովորդ լալիս և կմախիս» (Եվ այնուհետև նրան ժողովուրդը լաց ու սգահանդես չարեց):



Եվ այսպես շունդերական ki.mah-ից հայերենում գոյացան երեք բառեր՝ 1. կմախք «մեռելի ոսկորոտից, ոսկորակազմ», 2. կմախից, կմախիս «մեռելի սզահանդես, լալիք, բաղման ծես, ողբ ու կոծ», 3. Կամախ քաղաքի անունը, որ գտնվում էր Եփրատ գետի ափին, որը հայ Արշակունիների գերեզմանատեղին և դամբարանատեղին էր:

301. ԻՆՉՈՒ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ ԶԵՆ ՅՈՂՈՒՄ ՎԱՐԴԱՏՈՐ



Ամռան շոգին ո՞վ չի մասնակցել **Վարդավառի** (կամ **Վարթերի**) ուրախ ցնծություններին, երբ ջուր են ցողում միմյանց վրա:

Սակայն մտածե՛լ է արդյոք որևէ մեկը, թե ինչու ջուր ցողելու այդ սովորությունը **Վարդավառ** է կոչվում: Ի՞նչ կապ կարող է լինել **վարդավառ** բառի և ջուր ցողելու արարողության միջև:

Մինչև այս փարցի պատասխանն ենք որոնում, առաջանում է նաև մյուս հարցը.

— Ինչո՞ւ քրիստոնեության մուտքից հետո այս տոնին հարմարեցվեցին **Պայծառակերպության** և **Չամբարծման տոները**: Զե՞ որ **Վարդավառի** տոնը հեթանոսական շրջանից էր գալիս: Չետևաբար իրավացի են այն գիտնականները, որոնք ընդգծում են Գիսուսի համարածման և ջուր

ցողելու սովորության միջև բացակայող տրամաբանական կապը:

Գուցե ինքը՝ **Վարդավառը**, մեզ հուշի, թե ինչու է ինքն այդպես կոչվում: Եթե մեզ համար հասկանալի է բառի առաջին բաղադրիչը՝ **վարդը**, ապա բոլորովին անբացատրելի է մնում երկրորդը՝ **վառ**-ը: Բայց հասկանալի լինելով հանդերձ **վարդ**-ը՝ մնում է անբացատրելի նրա՝ **ջրի** հետ ունեցած կապը, թեև որոշ անձինք փորձում են ենթադրել, որ նախապես ոչ թե պարզ ջուր, այլ **վարդաջուր** են ցողել, որից էլ՝ **վարդ** բառը **վարդավառ**-ի մեջ: Ինչ-որ անհամոզիչ է **վարդ**-ը:

— Իսկ **վարդ**-ից հետո եղող մա՛սը՝ **վառ**-ը կամ **ավառ**-ը, ի՞նչ է նշանակում այն: Թերևս ա՛յլ կազմություն ունի այս բառը, ինչպես իրավացիորեն ուշադրություն է դարձրել Գ. Ղափանցյանը: Նա նկատում է, որ **ջրի** և **վարդավառ**-ի միջև իսկապես կարող է կապ լինել, որովհետև հին հայերին հարևան խեթերը ջրին ասում էին **վադար** (ինչպես անգլերենում՝ water, ռուսերենում՝ вода, գերմաներենում՝ Wasser, իսկ ջրել, ջրցողել, ոռոգել, հեղել՝ արր, երկուսը միասին՝ **վադարարր**, իսկ եթե տեղափոխվում են մի քանի հնչյուններ ետ և առաջ, ապա ստացվում է **վարդառա** և ապա՝ **վարդավառ**, քանի որ այսպես ավելի հեշտ է հնչելը: Հիշեցնենք, որ հայերենում ր-մ մյուս հնչյուններից առաջ ընկնելու սովորություն ունի, որ նկատվում է նաև հետևյալ «շրջված» բառերում՝ **կապերտ**-ը՝ **կարպետ**, **կամուրջ**-ը՝ **կարմուռ**, հետևաբար և **վադարառա**՝ **վարդավառ**:

302. ԲԱՌ, ՈՐ ՄԻԱՅՆԱԿ ԱՊՐԵՆ ԶԻ ԿԱՐՈՂ

Ո՛ւմ ծանոթ չեն Տերյանի «Ջարդեցեք անդուլ, անգութ, անխնա, ջնջեցեք աշխարհն ապական ու հին...» տողերը, ուր օգտագործված է **անդուլ**՝ «անդադար, առանց հանգստի» բառը: Զպետք է զարմանք հարուցի այն փաստը, որ ոչ միայն այս դեպքում, այլև մյուս դեպքերում **դուլ** բառը միայնակ հանդես չի գալիս, այլ միշտ որևէ բառի կամ ածանցի հետ միացած: Այսպես օրինակ, վերցնենք թերթերից մի հատված.

«**Գործադուլը** շարունակվում է...» կամ «Ամնկուն հեղափոխականը **հացադուլ** է հայտարարել» և կամ «Հիլիի ուսանողների դասադուլը ողջ երկրի **անդուլ** պայթրի մի մասն է»: Ինչպես բովանդակությունից եք կռահում, **դուլ** բառն ունի «դադար, հանգիստ» նշանակությունները: Գրաբարում նույնիսկ գործ էր ածական բայական դուլ կամ **դղալ** ձևն անկախաբար, առանց «օգնականի»: Այսպես՝ «Մի տար **դուլ** ական թում արտասուաց» (Քո աչքերի արցունքներին հանգիստ մի տար), «Ոչ տայ **դուլ** գօրուն» (Ձորքին դադար չի տալիս), «Չապա մի **դլար** և մի դադարեր» (Չապա մի հանգստանա և մի դադարի) և այլն: Ինչպես գրաբարում, այնպես էլ մի շարք բարբառներում **դուլը** «հենվում» է հոմանիշ **դադար** բառի վրա: Օրինակ՝ «Երեսնեն **դուլ** ու **դադար** չունի», որը նույնն է գրաբարյան «**Դուլ** և **դադար** թեզ ոչ գտանիցի» (Քեզ համար հանգիստ և դադար թող չգտնի): Ինչպես տեսնում ենք այս օրինակից, արդեն գրաբարում **դուլ**-ը սկսում էր փնտրել մի հենարան և օգնական, ինչպես հոմանիշ **դադար**-ն էր, և կառչելով դրան՝ այն հարթուեց մինչև մեր օրերը:

Դուլը հավանաբար հնդեվրոպական ծագում ունի, քանի որ գտնում ենք նրա զուգահեռը խեթերենում՝ dul ձևով հայերենի նշանակությամբ և հեռավոր իլլաանդերենում:

Դկալ և դղալ զուգահեռների օրինակը հայերենում եզակի չէ, նույն ձևով ունենք լամբար և դամբար, Ալեքսանդր և Աղեքսանդր, լակոնացի և դակոնացի տարբերակները:

303. ԵՐԵՔ ԱՐԱԲԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ՝ ԻՐԵՆՑ

ՀՈՂԵՐՈՎ (ԱԿՎՈՀՈՒ, ԱԼԹԻՄԻԱ, ԱԼՄԱՆԱՄ)

Սովորաբար լեզվից լեզու կատարվող փոխառությունների ժամանակ անտեղծվում են հոդերը, քանի որ դրանք տվյալ լեզվի քերականությանն են միայն հասկանալի: Սակայն լեզուները նույնպես ունեն շեղումներ...

Թերևս ամեն օր, ամեն ժամ մենք օգտագործում ենք բազմաթիվ արաբերեն բառեր, սակայն առանց գիտակցելու այդ իրողությունը: Այսպես, օրինակ՝ արաբերենը սովորություն ունի բառերից առաջ դնել al (ալ) հոդը, որը կարող է նաև դառնալ ար, առ, ազ, ան, ամ և այլն, նայած թե ինչ հնչյունով է սկսվում սրանից հետո եկող բառը, որի հետ ձուլված էլ արտասանվում է բառն ամբողջությամբ: Այսպես, օրինակ, եթե դուք ասում եք՝ **ալկոհոլը** վնասակար ներգործություն ունի մարդու մտավոր և առօրյա գործունեության վրա, ապա այստեղ ընդգծված բառը արաբերեն է: Բանն այն է, որ **ալկոհոլ**-ը կազմված է արաբերենի ալ որոշող հոդից և ըրուլ՝ «նուրբ փոշի» բառերից»: Արաբների պատկերացմամբ՝ թորումը հեղուկին

հասցնում էր նուրբ փոշու կամ մոխրի վիճակին: Եվրոպայում առաջինը շվեդացի հասարակական գործիչ Յուսան է ներկա նշանակությամբ օգտագործել alcohol բառը, որը ռուսերենում դարձավ **алкоголь**: Քիմիա բառի հետ հաճախ ենք օգտագործում նաև **ալքոհիա**-ն, որ արդի քիմիայի ոչ գիտական նախահայրն է եղել: Նախապես դա գիտություն էր (կենդ գիտություն) անգազնիվ մետաղներից ոսկի ստանալու, կյանքի էլեքտրոն և փիլիսոփայական բարը գտնելու վերաբերյալ:

Այսօր շատ սովորական է հնչում **ալմանախ**՝ «ժողովածու» բառը, երբ գործածում ենք «Քանաստեղծությունների **ալմանախ**» և նման արտահայտություններ, մինչդեռ այն արաբերենում al manak՝ «օրացույց» էր նշանակում և առաջին անգամ Եվրոպայում գործ է ածվել 1391 թվականից: Դայերենում դարձյալ **օրացույց** նշանակությամբ **ալմանակ** ձևով ունենք 1633 թվականից, իսկ **ալմանախ**-ը գերմաներեն հնչումն է: Յուսաներեն՝ almanakon: Ներկայումս **ալմանախ**-ը «օրացույց» չի նշանակում, այլ «գրական ժողովածու»:

304. ԱՆՑԻՐ ԵՎ ԱԿԱՎԱՆԳՍՏՈՎ, ԵՌԵ ԱՆՑԱԹՈՒՂՈՒ ԿԱՍ ԱՆՁՆԱԳԻՐ ՈՒՆԵՍ



Դայերեն բառերի մի մասը կազմված է օտար լեզուների բառերի պատճենմամբ: Այս կարգի բառերից է **անձնագիրը**: Անձնագրի գործածությունը շատ հին պատմություն չունի, ընդամենը երկու դարի պատմություն: Չենք կարող ասել, թե ով է անձնագրի հեղինակը, և կամ ով էր, որ առաջինը մտահղացավ մարդուն բնութագրող հիմնական տվյալները գրանցել մի փաստաթղթում՝ ըստ հարկի ներկայացնելու համար: Մի բան, սակայն, պարզ է, որ նախապես անձնագիրն այնպիսին չէր, ինչպիսին այսօրվանն է: Նախապես այն մի երկտող էր, ավելի ճիշտ՝ երկուբառանոց մի անցաթուղթ, որ Ֆրանսիայի նավահանգիստներում տալիս էին օտարականներին կամ ժամանողներին: Այդ **անցաթղթի** կամ **անցագրի** վրա գրված էր

pasaporte՝ «անցիր նավահանգստից», որ հետո դարձավ passeporte՝ «նավահանգստի անցագիր» կամ «նավահանգստի անցաթուղթ», որպեսզի ժամանածները ազատ ելունուտ ունենային՝ կարանտինից զերծ համարվելով: Դետագայում անձի մասին լրացուցիչ տեղեկություններ պարունակող անցաթղթերը կամ անցագրերը թեև կոչվում էին դարձյալ հնի պես՝ passeporte, սակայն արդեն դրանք ունեին **անձնագրի** նշանակություն: Եվ այսպես բոլոր երկրներում աստիճանաբար ընդունվեց անձը ներկայացնող փաստաթղթի անհրաժեշտությունը, որ կոչվեց passeporte. հայերենը հորինեց սեփական բառապաշարից **անձնագիր** բառը, իսկ հին passeporte նշանակությամբ էլ՝ **անցաթուղթը** կամ **անցագիրը**: Եվ այսպես **անձնագիր**, թե՛ անցիր նավահանգստից:

305. ՀԻՍՔ ԳՑԵՑԻՐ՝ ՀԻՍՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ Է

Ի գիտություն բոլոր **հիմնարկությունների** և **ծեմարկությունների** աշխատողների՝ վաղը համաքաղաքային շաբաթօրյակի օրն է... Նման սովորական նախադասություններ կարողախ մենք չենք նկատում, թե ինչ ենք ասում, թեև հասկանում ենք, որ խոսքն այստեղ «աշխատավայրի, գործատեղի» մասին է, սակայն առանց խորանալու **հիմնարկ, ծեմարկ** բառերի բուն իմաստների մեջ:

Նախապես այս բառերը շատ էին հեռու այսօրվա նշանակությունից: **Դիմարկ**-ը թարգ բառ է՝ **հիմն**՝ «հիմք, կառույց, հատուկ, պատվանդան» և **արկանել**՝ «գցել, դնել» արմատներից: Գրաբարում **հիմն արկանել**՝ «հիմք գցել, հիմնել, հիմն դնել» հարադրությունը դարձավ մեկ բառ՝ **հիմնարկեմ, հիմնարկյալ, հիմնարկեք, հիմնարկողութիւն, հիմնարկութիւն**: Օրինակ՝ **հիմնարկեք** եկեղեցույ (կամ **հիմնարկողութիւն, հիմնարկութիւն**) պարզապես նշանակում էր եկեղեցու հիմք դնելու, հիմք գցելու, հիմնադրելու արարողություն: Սակայն այսօր որևէ մեկը եթե ասում է՝ գնում եմ **հիմնարկություն** կամ գալիս եմ **հիմնարկությունից**, ապա ոչ ոք չի հասկանում, որ գնում է կամ գալիս **հիմք** գցելու արարողությունից, այլ աշխատավայրից:

306. ԶԵՆՔ ԶԱՐԿԻՐ՝ ԶԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ Է

Այսօրվա առումով **հիմնարկ**-ի ճակատագիրն է ունեցել նաև գրաբարյան **ծեմարկ**-ը, որից էլ՝ **ծեմարկել, ծեմարկութիւն, ծեմարկատեր, ծեմարկու, ծեմարկում, ծեմարկատիրություն** և այլն:

Գրաբարում **ծեմարկ**-ը ուղղակի իմաստով էր գործածվում, օրինակ. «Ի՞ մեջ ժողովոյն **ծեմարկ** արարեր», իսկ **ծեմարկեմ** նշանակում էր հենց «բուռը վերցնել, ծեցուն տալ, գործը ձեռքը վերցնել», «**ծեմարկություն**» ջանք, հնարք, **ծեմերեցություն**՝ «գուցում» և այլն:

Այսպիսով՝ մենք վերոհիշյալ բառերում ակնհայտ ենք լինում գրաբարյան այս բառերի և դարձվածքների նորովի ընկալման փաստին:

Գրվում են զանազան **ծեմարկներ** մեղվաբուծության, մետաղաշակության, ակտիվիզմի, խոհարարության, գրաբարի, գեղագրության և այլն, որոնց մեջ «գիտելիքների որևէ բնագավառի հիմունքներն են շարադրվում», բայց և միաժամանակ **ծեմարկ**-ը «հիմնարկ, ծեմարկություն, արտադրական կամ անտարատեսական միավոր կամ միավորում» է նշանակում, ռուս.՝ **предприятие** կամ **руководство помеще**, մի որևէ գործի սկիզբ՝ **նախածեմություն**, այստեղ **ծեմարկում**-ը համարժեք է դառնում **նախածեմության**-ը: Մի որևէ գործի գաղափարի իրականացման սկիզբը **ծեմարկումն** է: **Զեմարկում**-ը կազմված է ծեմն՝ «ծեռք» և **արկում** (**արկանել**՝ «դնել, գցել») բառերից, որ նշանակում է «մի քանի սկիզբը, հիմնադրումը, սկսելը», «մի գործի հիմքը դնելը, աշխատանք սկսելը, աշխատանքի **ծեմանով**ս լինելը» և այլն: Սիս այստեղից էլ՝ **ծեմարկատեր**՝ «որևէ աշխատանքի հիմնադրման տեր, տնօրեն, ղրկելստոր», **ծեմարկատիրություն**՝ **ծեմարկու**՝ «մի բան ծեմարկող, նոր գործ սկսող, նախածեմող, ծեմարկատեր, տնօրեն»:

307. ՀԱՐԵՎԱՆՑԻ-Ն ՀԱՐԵՎԱՆ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ

Գրաբարուն «հարևան» նշանակությունն արտահայտում էին **դրացի**՝ «դռակից» կամ **երդակից**՝ «երդիկով կից» բառերով: Արևմտահայերենի բարբառներում և գրական լեզվում կենդանի է առ այսօր **դրացին**, իսկ արևելահայերենը հազվադեպ է դիմում այդ բառին: Ավելի շատ արևելահայերենը գործածում է «բարիդրացիական հարաբերությունը», մինչդեռ **դրացի** նշանակությամբ ունի **հարևան**–ը: Ի դեպ, գրաբարուն **հարևան**–ը չի գործածվել մինչև 14–րդ դարը: Առաջին անգամ օգտագործվել է այն 1341 թվականին Ղրիմի **Ազախ (Ազով)** քաղաքում գրի առնված մի հիշատակարանում Երևանցի գրչի կողմից: Հետևաբար **հարևան**–ը արևելյան բարբառները գիտեն Վելի հին ժամանակներից սկսած: **Հարևան**–ը կազմված է պահլավերենի (կամ իրանական *hadā*) և հայերեն –վան (հավանաբար դարձյալ իրանականից փոխառյալ)՝ «քնակատեղի, կայան» բառերից, ինչպես ունենք այդ արմատը **իջևան, օթևան և վանք** բառերում՝ պահպանված գրաբարից:

Իսկ **հարևան** բառի առաջին **հար**–բաղադրիչը շատ բառերում է գործածվում, ինչպես **հարազատ**՝ «միասին ծնված», **հարակաշ**՝ «միասին աշխատող, կիսար» և այլն:

Այս ամենը հասկանալի է, սակայն կա՞ որևէ կապ հայերենի նմանահունչ մեկ այլ բառի՝ **հարևանցի, հարևանցիկ**–ի և քննված **հարևան** բառերի միջև: Ոչ մի կապ պատասխանում է լեզվաբանությունը:

Գրաբարում գտնում ենք գործածված **հարևանցի ուսանել, հարևանցիկ առնել, երկրպագել հարևանցի** կամ պարզապես **հարևանցել և հարևանցիկ** ձևերին, որոնց մեջ բառս ունի «թեթևակի, մակերեսորեն, ոչ կայուն» նշանակությունները: Արդի գրականում նույնպես գործածական է **հարևանցիորեն** արտահայտությունը:

Իսկ ինչո՞ւ կապ չունի այս **հարևանցին հարևան** «դրացի» բառի հետ: Բանն այն է, որ **հարևանցի**–ն կազմված է **հար**՝ «խփիր» և անց՝ «անցնել» արմատներից, և շողկապից և ի (**հարևանցիկ** ձևում –իկ) ածանցից: Եվ այսպես **հարևանցի և հարևանցիկ**–ը՝ «թեթևակի անցնող», չի կարող լինել **հարևան**–ի ազգականը, որը «միասին կեցողն» է:

308. ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳՈՏԻ-Ն ԴԱՐՉԱԿ ԵՂԱՆԱԿ...

Կան բառեր, որոնք փոխ են առնվում լեզվից լեզու ոչ թե մեկ, այլ երկու և նույնիսկ երեք անգամ, և այդ ժամանակամիջոցում տվյալ բառը, ճանապարհորդելով լեզվից լեզու, աստիճանաբար կորցնում է իր նախկին իմաստը և անգամ ծեղ ձեռք բերելով նոր նշանակություններ: Նման բառերից է հայերենում երկու անգամ փոխ առնված **կլիմա**–ն:

Գրաբարում նա հինգում էր **կլիմ, կլիմայ և կլիմայ** ձևերով և ունի «կողմ, շրջան, գավառ, գոտի, տարածք» նշանակությունները: Այսպես՝ **հարեմացու** մոտ կարողում ենք. «Անուաճեն զկլիմայն զայն՝ Պոռտին Արմենիան» (Այն տարածքը անվանում են Պոռտին Արմենիան), «ժղ կլիմ է աշխարհս, այսինքն՝ բաժին, և է կլիմն անբնակ է մարդկան» (Աշխարհը 14 շրջան է (այսինքն՝ բաժին), և 7 կողմերը մարդկանց համար անբնակ է):

Անա որքան ճշգրտությամբ են մեր լեզվագետները ժամանակին հայերեն թարգմանել հունարենի *klima* բառը, որը, լեզվից լեզու անցնելով, երկրորդ անգամ փոխ է առնվել **կլիմա** ձևով, սակայն հեռացած նախկին նշանակություններից: Ներկայումս այն ընկալվում է միայն «եղանակ» նշանակությամբ, ինչպես՝ «Այրիկայի կլիման միատեսակ չէ», կամ «Տափաստանային կլիման կտրուկ տարբերվում է լեռնայինից» և այլն:

309. ՊՈՐՏ-Ը ԵՎ ՆԱՀԱՊԵՏ-Ը

Յուրաքանչյուր ժողովուրդ իր նախնիների մասին ունի բանավոր ավանդություններ, թե ինչպես են նրանք իրենց ժողովրդի կամ իրենց պետության սկիզբը դրել: Ժողովուրդներից շատերն էլ կրում են իրենց նախահոր, ցեղապետի, նախապապի անունը: Տոհմի առաջնորդի անունը փոխանցվում է սերնդեսերունդ: Խորեմնացու շնորհիվ մենք գիտենք Հայկ Նահապետի անունը, որի անունով էլ հարևանները մեզ հայոց ազգ են անվանում, իսկ երկիրը՝ Հայաստան: Քանի որ մի ժողովուրդ կարող է մի քանի ցեղախմբերից առաջանալ, ապա և մի քանի նահապետների անուններով կոչվել: Թերևս այդ պատճառով են մեզ **Արամազդյան** անվանում **Արամի** անունով, **Թորոզյան**, **աքսանազյան**՝ **Թորոզմի** և **Աքսանազի** անուններով և այլն: Մեր հարևան բուրբերին անվանում են **սելջուկ–թուրքեր**՝ **Սելջուք** առաջնորդի անվամբ և կամ **օսմանցիներ**, **օսմանյան** **Թուրքիա**՝ **Օսման** առաջնորդի անվամբ: **Ցեղապետ, առաջնորդ, նախահայր կամ նահապետ** բառերը հավասարաթիվ չեն, որովհետև **նահապետ**–ը ցեղի կամ ժողովրդի սկիզբն է: **Նահապետ** բառը իրանական ծագում ունի և կազմված է *nafa*՝ «պորտ» և *pati*՝ «պետ» բառերից, այսինքն՝ «սկզբի, պորտի, ցեղի, ազգի պետ»: Չէ՞ որ **պորտ**–ը ունի մեր ժողովրդի մոտ նաև «սերունդ» հասկացությունը: Օրինակ՝ ամուսնության ժամանակ մերձավոր հարազատների միջև պետ է «յոթը պորտը» հարգիլ: Ուրեմն նահապետը սերնդի, տոհմի գլխավորն էր, մենք, **պորտի** սկիզբը:

310. ԻՆՉՈՒ ԵՆՔ ՀԱՐԿԱԴՐԱԲԱՐ ՈՐԴԵԳՐՈՒՄ ՕՍԱՐ ԲԱՌԵՐԸ: ՈՐՏԵՂ ԵՆ ԼԵՉՎԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆԿԵՐԸ

Որքան էլ լեզվաբաններն ու մայրենի լեզվի սահմանապահներն արգելեն օտար բառերի թափանցումը մեր լեզվի մեջ՝ կատարելով դրանց բառապատճենումները, միևնույն է, ինչպես ցույց է տալիս իրողությունը, օտար բառերը աստիճանաբար, գրեթե առանց արգելքի, հայտնվում են ժողովրդի շուրթերին և գրականության մեջ: «Սեղավորը» տեխնիկայի անընդհատ զարգացումն է: Ամեն սապարեզում նոր առարկաներ, նոր նյութեր, նոր երևույթներ են հայտնաբերվում, և դրանց հետ էլ նոր անվանումներ: Իսկ քանի որ նոր բառը գալիս է մեր լեզվի մեջ նոր առարկայի, գործիքի, նյութի և երևույթի հետ, ուստի առաջին տալավորությունն էլ ամբողջությամբ մնում է կապված նրա հետ: Բերենք օրինակներ մի քանի սապարեզներից, այսպես, ավտոմեքենաների գյուտի հետ միասին աշխարհի լեզուներում հայտնվեցին նրա մասերի և նրա հետ կապված հարյուրավոր անվանումներ, որպիսիք են նաև

հայերենում գործածվող ռուսերեն արզոն, բազաժնիկ, բարբրիս, տրավերս, բանդաշ, ֆար, սվեչա, նատոս, մարգատել, բենգասոս, ստոպ, կյուչ, դամկրատ, կամեր, ռադիատոր, գայկա, տորնուզ (ոչ տորնոզ), պոլոս (ոչ պոլուոս), կոիլո և այլն: Թեև հայ լեզվաբանները հենարել են բառապատճենմամբ դիմադար ապակի, բեռնասանդուկ, թափք, արգելակ, վազանց և այլ համարժեքներ, սակայն իզուր...

Ավելի վատ է բանը դեղագործության ասպարեզում, որտեղ միևնույն դեղամիջոցը երբեմն մի քանի անուն ունի՝ նայած թե որ երկրում է սինթեզվել, սակայն դրանց հայերեն համարժեքներն ստեղծելու փորձեր անգամ չեն արվում: Եվ այսպես, մենք գործ ենք անում պենիցիլին, ստրեպտոմիցին, բիոմիցին, սինտոմիցին, էրիտրոմիցին, յոդ, ասպիրին, ասկոֆեն, ամիդոպիրին, անալգին, կոֆեին, ֆտիլվազիտ, բիսպատոլ, նորսուլֆազոլ, վիտամին, վազելին, խիմին, մորֆի և այլն:

Նորագույն տեխնիկայով ստեղծված կտորեղենների և նյութերի անունները նույնպես պատկառելի թիվ են կազմում, այսպես՝ խՍՀՄ-ում 50-ական թվականներին արհեստական թելերից ստացված կտորեղենին, գործվածքներին կրճատ անվանեցին կապրոն (որի գիտական անվանումն է поликапроамид-ային, полиамид-ային): Այդ նույն պոլիամիդային թելից ստացված գործվածքներին անվերեն սկսեցին անվանել նայլոն կամ նեյլոն: Հայերենն ընդունեց այս բառերը առանց դիմադրության և նրանց հետ նաև հարյուրավոր այլ տերմիններ: Պատմե՞ք վերջին տասնամյակներում որոնված մի քանի բառերի մասին:

311. ԻՆՉ ԻՍԱՆԱՐ ՍՈՐՖԵՈՍԸ, ՈՐ ԻՐ ՊՆՍԿԻՆ Է ՍՈՐՖԻՆ...

Կակաչից ստացվող ալկալոիդը կիրառվում է բժշկության մեջ որպես ցավազրկող միջոց: Ինչպես միշտ, մարդիկ դիմեցին հունական միֆոլոգիային (առասպելաբանությանը), որպեսզի մի հարմար անուն դնեն այս դեղամիջոցին: Եվ քանի որ դեղամիջոցը թմրեցնող, հանցատացնող հատկություն ուներ, կենցեցին այն քնի աստծո՝ Հիպնոսի որդու՝ Մորֆեոսի անունով մորֆի, մորֆին: Բայց, ինչպես Եզոպոսն էր պատգամում. «Այս կյանքում ամենալավ բաները հաճախ նաև ամենավատ բաներն են»: Եվ այսպես էլ սկսեցին չարաշահել մորֆին որպես թմրադեղ: Մորֆի օգտագործող անձանց սկսեցին անվանել մորֆինիստներ:

312. ՆԱՐԿՈՉԸ ԶԿՈՉԿԵՑ ԸՆԻ ԱՍՏԻՈ՝ ՀԻՊՆՈՍԻ ԱՆԿԱՍԲ

Եթե մորֆին թերֆեոսի՝ երգեցող պարոնոզի հիշատակին կոչվեց, սպասելի էր, որ նարկոզ էլ կոչվեր Մորֆեոսի հոր՝ քնի աստված Հիպնոզի անվամբ, ինչ սակայն տեղի չունեցավ: Թեև նարկոզը բժշկության մեջ կիրառվում է գերազանցապես միայն հիվանդին տեսակետորեն քնեցնելու նպատակով, այն իր անունն ստացավ հունարենի նարկոսիս (narkosis) «շղթայում» բառից: Վիրահատվողը, առժամանակ քնած լինելով, հնարավորություն է տալիս վիրահատողին ազատորեն կտրել ու

կարել: Նարկոզը ոչ միայն ներշնչման, այլև մկանային և աղիքային ներարկմամբ է կիրառվում:

Ինչպես մորֆին, այնպես էլ նարկոզը սկսեցին չարաշահել թմրամոլները, որոնց ընդհանուր անվամբ կոչում են նարկոմաններ: Նարկոտիկներ են կոչվում այն թմրադեղերը, որոնք թմրեցնող հատկություն ունեն, և դրանք բավական շատ են:

Ոմանք կմտածեն, որ անարդարացի բան է կատարվել. «Փոխանակ քնեցնող դեղամիջոցը Հիպնոսի անվամբ կոչելու, կոչել են նարկոս»: Դիտողությունը ճիշտ է, սակայն Հիպնոսի հիշատակն էլ մնում է այն աճաբարձրների վրա, որոնք առանց դեղամիջոցի են քնեցնում մարդկանց և կոչվում են հիպնոսացնողներ:

313. ՈՐՐՈՏԸ ԿԱՍԱԿԱՏԱՐ Է, ԹԵ՞ ՈՐՐՈՏ

Հաճախ կարելի է լսել այսպիսի խոսակցություն. «Ես հո քո ռորոտը չեմ, որ քոլոր քնահանույքները կատարեմ»: Իհարկե, ռորոտը հայերեն բառ չէ, սակայն մուտք է գործել հայերենի բառապաշարի մեջ տեխնիկայի զարգացման հետ միասին: Որոտի բացատրությունը, եթե փորձենք բառարաններում որոնել, հաստատորեն չենք գտնի: Ո՞ր լեզվի բառապաշարից է այն գալիս, հունարենի՞, լատիներենի՞, անգլերենի՞, ֆրանսերենի՞: Իզուր աշխատանք է: Սինչև 30-ական թվականները այս բառը չկար աշխարհի ոչ մի բառարանում, որովհետև 1920 թվականին միայն առաջին անգամ այս բառն օգտագործել է չեխ գրող Կարել Զապեկն իր «R. U. R.» պիեսում: Ինչպես հայերենը, այնպես էլ չեխերենը աշխարհի այն քիչ լեզուներից են, որ օտարամուտ բառերը չեն հանդուրժում և իսկույն ստեղծում են դրանց համարժեքները: Աշխարհի բոլոր լեզուները ընդունել են հունական театрон բառը: Չեխերենը թերևս աշխարհի միակ լեզուն է, որ ստեղծել է театр բառերն քնած փոխարեն իր սեփականը՝ գրելիչչե-ն: Թերևս ռորոտ բառի հիմքում սլավոնական роѠ «ծառա, ճորտ» բառն է ընկած, робить «անել, աշխատել», այսինքն՝ ռորոտ՝ «կատարող, ծառա»:

Հայերենը կարող էր իր հին բառապաշարից հարմարեցնել թերևս կամակատար-ը ռորոտի համար, սակայն քանի որ ռորոտները մարդանման մեխանիզմներ են քայլող, շարժվող, աշխատող և խոսող, ուստի լրիվ էությունը կամակատարը չէր կարող արտացոլել, որի պատճառով և հայերենն էլ հանդուրժեց նրա մուտքը իր բառապաշարի մեջ:

314. ԵՌԵ ՅՈՒՐԱՔԱՆԶՅՈՒՐ ԲԱՈՒՅ ՍԵԿ ՏԱՌ ԿԵՐՅՆԵՆՔ, ԿՈՒՆԵՆԱՆՔ ՆՈՐ ԲԱՌ՝ ԼԱԶԵՐ

Տեխնիկայի զարգացման արդյունք է նաև աշխարհի լեզուներում նոր հայտնված լազեր բառը: Այն նորագույն հապավումների թվին է պատկանում և անգլերենի հինգ բառերի սկզբնատառերից է ստեղծվել՝ light amplification by stimulated emission of radiation. Բարձրամաքար լինում է՝ «լույսի ուժեղացում ճառագայթման խթանման միջոցով»: Ի՞նչվար թե որևէ հայ լեզվաբան ուտա՞ծի ավելի հարմար մի բառ լազեր-ի փոխարեն նրա մուտքը հայերենում արգելելու համար:

315. ՍՈՁԵԼՈՒՄ՝ ԱԿՏՈՍԵՔԵՆԱՆ, ՕՁԵԼՈՒՄ՝ ԿԱՐՈՐԴԸ

Այն անձինք, որոնք ճանապարհորդում են իրենց անձնական մեքենաներով, մեծ ղեկարությունների առջև են կանգնում, եթե otel-ը՝ հյուրանոցը, չունի ավտոտեխնապատրվման արհեստանոց, կայանելու տեղ, բենզինի և յուղման կետ և այլն: Եվ ահա անձնական և բեռնատար մեքենաների քվի կտրուկ բարձրացման հետ միասին **հոթելներին** կից ստեղծվեցին նաև, ավտոմեքենաներին հյուրընկալելու ավտոտեխնիկան և հրապարակներ (տեխնիկական սպասարկման հարմարություններով), որոնք էլ կոչվեցին **մոթելներ**: Բառն երկու արմատների միացումից է ստեղծվել motor և hotel (mo-otel): Գարկ կա՝ արդյոք մի բառ ևս ստեղծել հայերենում «սեփական» միջոցներով մերելու համար օտարազգի **մոթել**–ը:

316. ՉԵՂՅԱԼ ԵՓՐԵՍԻ ԳԻՐԸԸ՝ ԵՓՐԵՍՎԵՐԴԻ՝ «ԵՓՐԵՍԸ ՏԿԵ՞Ց»

— Այսիկ Նոյեմբար, մեր **Եփրեմվերդին** հո ախպերդ չի՝ տարել, բեր նայեմք ևս տարվա համար ի՞նչ աս գրված:

Այս ի՞նչ հեղինակի գրքի մասին է խոսվում: Ո՞վ է այդ Եփրեմը: Այսպես հայերենի խոսակցականում հայտնվեց **Եփրեմվերդի** բառը, որ գոյություն չունեի մինչև 18-րդ դարը: **Եփրեմվերդին** աստղագիտական կամ, ժողովրդի ընկալմամբ, աստղագուշակության, երազների մեկնության գիրք է, որ կանխագուշակում է ապագան:

Առաջին անգամ հայերեն այս գիրքը լույս տեսավ Վենետիկում 1748-ին **Էֆիմերտե, Եփիմերտե** վերնագրով: Ժողովրդի խոսակցականում այն դարձավ **Եփրեմվերդի՝** ընկալվելով որպես Եփրեմ աստղագուշակի կողմից գրված գիրք:

Գիրքը թարգմանությունն էր Եվրոպայում արդեն տարածված աստղագիտական այն տոմարների, որոնք սկսած 1776 թվականից լույս էին տեսնում 100 տարվա կանխագուշակումների աղյուսակներով: Առաջին անգամ այն լույս տեսավ Նյուրնբերգում և անվանվեց **Էֆիմերտե**՝ հունարենի efemeris՝ «առօրյա դեպք, օրվա անցք, օրագիր» բառից: **Էֆիմերդիներ** ունեցել են Գին Եգիպտոսի և Գին Գունաստանի պետական գործիչներն ու զորավարները, որոնք քվում նաև Ալեքսանդր Մակեդոնացին: Եվ այսպես, հունարենի մշակութային ամենալուսավորումը պատճառ դարձավ նոր բառի ստեղծմանը խոսակցական հայերենում:

317. ՌԵՍՏՈՐԱՆԸ՝ ՋԱՇԱՐԱՆ, ՉԵ՞...

Ինչպես քաղաքակիրթ, այնպես էլ նոր քաղաքակիրթիղ երկրներում **Restourant** ցուցանակը սովորական բան է: Գայաստանում նույնպես այն հաճախ է հանդիպում, սակայն կողքին էլ **ճաշարան** կամ հայերեն **Ռեստորան** բառն է լինում: Անգլերեն կամ ֆրանսերեն լեզվից եկող restaurant-ը պիտի թարգմանվեր հայերենում **կազդուրիչ** կամ **վերակազդուրում**: Սակայն ցուցանակը կարևոր է: Մի՞թե Չեզ այնպես չեն կարող սպասարկել **ճաշարանում**, ինչպես **ռեստորանում**:

318. «ԱՎԵԼԿԱՅԵ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՏՈՐԻ ԱՌԱՋԱԲԱՆԻՑ ԿԱՍ ԱՅՆ ՍԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՈՒ ԱՇԽԱՐՀԻ ՈՉ ՄԻ ԲԱՌԱՐԱՆ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ԿԱՏԱՐՅԱԼ

Յուրաքանչյուր անձ իր գիտակցական կյանքի ընթացքում, որ միջին հաշվով կազմում է կես դար, ականատես է լինում խոսակցական լեզվի բառապաշարում մի քանի տասնյակ, եթե ոչ մի քանի հարյուր նոր բառերի հայտնվելուն:

Այդ բառերը ոչ միայն այլ լեզուներից են վերցված լինում, այլև սեփական լեզվի հին բառազանծից, որոնց նոր իմաստներ են տրվում: Եվ քանի որ բառարանները վեպ կամ պատմվածք չեն և գրվում են տասնյակ տարիների ընթացքում, ուստի բառարաններում հեղինակները չեն կարող ընդգրկել հատկապես նորահայտ իմաստներն ու նորամուտ օտարաբանությունները:

1996–2000 թթ. ընթացքում երեք հրատարակություն ունեցավ մեր «Բառերի կենսագրությունից» գիրքը, որին հետևեցին բազմաթիվ գրախոսականներ:

Բազմաթիվ զովասանական խոսքերի հետ գրախոսականներից մեկը հրամայաբար պահանջում էր. «Գուտվ ենք, որ «Բառերի կենսագրությունից» գրքի հեղինակը ընթերցողներին պիտի ուրախացնի երկրորդ հատորով»:

Բնականաբար գրախոսական գրողն էլ է ընթերցող, այն էլ՝ մասնագետ, ուստի, ունկնդիր լինելով ընթերցողների պահանջին՝ ես ձեռնամուխ եղա երկրորդ հատորի հրատարակությանը: Սակայն ներկա սուղ պայմաններից ելնելով՝ մեկ երրորդով կրճատեցի նյութերը՝ վերածելով այն առաջին հատորի հավելվածի:

Լեզվի մեջ կատարվող բնաշրջությունը կամ փոփոխությունները անկառավարելի են և անկանխատեսելի: Մարդը հասարակական երևույթները ինչ–որ չափով դարձնում է կառավարելի որոշումներով և օրենքներով, սակայն լեզվի զարգացումը չի ենթարկվում ոչ մի օրենքի, այն ընթանում է իր ներքին՝ ուրույն օրինաչափություններով:

Ներկա բաժնում, ի թիվս ավանդականի, կան երկու մեծ վերնագրեր՝ **Անթարգմանելի բառեր, Պարտադիր փոխառություններ**, որոնք հասցեագրված են նաև մաքրամոլներին, քանզի օտար բառերի պատճենված կամ թարգմանված հայերեն համարժեքները հաճախ նույնարժեք կամ նույնական չեն լինում փոխառությունների հետ:

Լեզվի սահմանները, ավելի ճիշտ՝ նրա բառազանծի սահմանները օտար բառերի ներխուժումից ղեկար է պահպանել, քանզի օտար բառերը ոչ միայն նոր իրերի հետ են մեր կենցաղի մեջ մտնում, այլև թափանցում են եթերից, հեռատեսիլից ու ֆիլմերից, համդեսներից, թերթերից ու գրքերից...

Նման նորամուտ, թեև կարճ կենսագրություն ունեցող բառերը ևս կարիք ունեն բացատրության:

319. ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԶԵՉ ՀԱՍԱՐ ՀԱՐԵՎԱՆՆ Է ԸՆՏՐՈՒՄ ԱՆՈՒՄ

Վարդուց է ընդունված այն կարծիքը, թե հարևանի մասին ճիշտ բնութագիրը միայն կարելի է իմանալ մոտիկ հարևանից:

Սակայն արդո՞ք իսկապես այդպես է... Իսկ եթե հարևանը հարևանի հետ չունի, այսինքն կռվել է կամ անհաշտ է: Ինչպե՞ս կարող է ստույգ գնահատական տալ: Եթե հարևանը չի վիճարանել կամ կռվել, դրական գնահատական կտա, իսկ եթե հանկարծ մրանք բշտամացել են ինչ—որ պատճառով, ապա գնահատականը միայն բացասական կլինի... Իսկ եթե խոսքը ոչ թե դրացի բնակիչների, այլ դրացի ժողովուրդների մասին է, ապա նույնը չէ՞ իրավիճակը: Այն ժողովուրդները, որոնք միմյանց հետ շատ լավ հարաբերությունների մեջ են, դրական բնութագիր են տալիս իրենց հարևաններին (իսկ սա բացառիկ երևույթ է), իսկ եթե բշտամական բացասական:

Բայց դրացիների գնահատականը շատ է կարևոր, որովհետև ավելի հեռավոր ազգերը տվյալ հարևանի մասին տեղեկությունները մոտ հարևանից են իմանում: Ահա այսպես հարևանի տված կանխակալ բնութագիրն էլ տարածվում է որպես ժողովրդի ամուր: Բերենք մի քանի օրինակներ. հարևանները արաբական թափառական ցեղերին անվանել են սարակինոսներ՝ «զողեր» (sarak՝ «զող» բառից): Իսկ արաբներն էլ պարսիկներին **աճամներ** են անվանել, որ նշանակում է «ապիկար, ոչ հմուտ», պարսիկներն էլ նրանց **տաճիկներ**՝ «վազողներ» (tađi՝ «հոսել») բառից):

Պիշենք հայոց Աճեմյան ազգանունը, որը ոչ թե ավիկար, այլ Պարսկաստանից եկած է նշանակում:

320. ԼԱՏԻՇ

Լատիչ կամ լատվիացի ժողովրդի անունը ռուսերենում նախապես ըմբռնվել է որպես «ոչ հստակ խոսող, թոթով, թլվատ», հավանաբար ռուսերեն խոսելիս լատիչները ռուսերեն բառերը ոչ ճիշտ էին արտաբերում:

321. ԳՆՉՈՒ

Նման պատճառով էլ հայերենում **գնչու** բառն է առաջացել, որ նշանակում է «թոթով, թլվատ»:

322. ՃԻՎԱՂԱԲԱՐՈՆԵՐ

Ըստ հայ պատմիչ Կորյունի՝ Մեսրոպ Մաշտոցը գրերի գյուտից հետո դպրությունը տարածելու նպատակով գնաց Մարաց և Սյունյաց աշխարհները: Մարերը հայերենով վարժ չէին կարողանում խոսել «վասն խեցքեկագույն և խոշորագույն լեզվին», այլև «դիվական սատանայակիր ճիվաղության բարբեր» ունենալու համար: Սյունական աշխարհի բնակիչները նույնպես «առավել զազանամիտ վայրենագույն ճիվաղաբարո» հայկական ցեղերից էին:

323. ԽՈՒԺԱՆ

Չայերենի **խուժան** բառն առաջացել է Պարսկաստանի խուժիկ (խուժ) ժողովրդի անունից, որոնց երկիրը մեր հարևան պարսիկներն անվանում էին **խուժիստան** կամ **խուժիստան**: Հավանաբար **խուժան**, **խուժել**, **ներխուժել** իմաստները այդ ժողովրդի ավազակաբարո, վայրենի, անկիրթ, թալանչի բարքերի որակման արդյունքն են եղել: Չայերենում այսօր էլ **խուժան** բառը նոր իմաստային երանգներով է գործածվում, ինչպես, օրինակ՝ **խուժան արալ**՝ «ոչ ազնիվ, անմակարդակ, ցածր որակի օրի»:

324. ԹԱԹԱՐԻ, ԹԱԹԱՐՅԱԽԻ

Մինչև 13-րդ դարը հայ մատենագրության կամ ժողովրդախոսակցական լեզվի մեջ **թաթար** կամ **թաթարի**, **թաթարյախի** բառերը չկային. դրանք հայտնվեցին **թաթար—մոնղոլների** արշավանքներից հետո: Պատկերացրեք, որ հայերենում **թաթարի**, **թաթարյախի** բառերն ստացել են «շատ արագ, վայրկենապես, հապշտապ» նշանակություններ: Օրինակ՝ «Տանը ուտելու ոչինչ չկար, ես **թաթարի** մի ձվածեղ սարքեցի»: Այս իմաստը առաջացել է **թաթար—մոնղոլների** արագ գործելու ռազմավարությունից: Նրանք փոքրաթիվ իրենց հեծելազորով կայծակի արագությամբ հարձակվում էին բշտամու զորքերի վրա և խուժապի մատնում ավելի գերակշիռ հակառակորդին: Ահա այսպիսի արագ գործելու նրանց որդեգրած ռազմավարությունն էլ կոչվել է **թաթարի**՝ «թաթարի ձևով, թաթարավարի»: Նույնիսկ ծագումով նույն լեզվաընտանիքին պատկանող թուրքերենում նույնպես **թաթարի**, **թաթարյախի** բառերը նշանակում են «թաթարավարի, թաթարի պես շատ արագ»:

325. ՖԻՆՆ ԿԱՍ ՃԱՀՃԱԵՐԿԻՐ, ՅԱԾՐ ԵՎ ԲԱՐՉՐ ԵՐԿԻՐ

Ավելի բախտավոր են եղել ֆինները, որոնց անունը հարևան շվեդներն են կնքել. իրոք նշանակում է **որսորդ**: Ֆինները իրենց երկիրը կոչում են *Suom*՝ «ճահճի» (*suo*՝ «ճահիճ» բառից): **Չուլանդիա** երկիրն ունի նաև մեկ այլ անվանում՝ **Նիդեռլանդիա**, որ նշանակում է գերմաներենում «Ցածր երկիր», այնտեղ ապրող ժողովուրդն էլ՝ **նիդեռլանդացի**՝ «ցածր երկրացի»: Բայց դրա հակառակն էլ կար. խեթերը հայոց լեռնաբնակ ցեղերի երկիրն անվանում էին **Բարձր երկիր**, որը համապատասխանում է հայոց **Բարձր Չայքին**:

326. ՈՐՏԵՂ ԷԻՆ ԱՊՐՈՒՄ ԱԼԱՆՆԵՐԸ

Հյուսիսային Կովկասը Անդրկովկասի հետ կապող անենակարծ ճանապարհը **Ղարյալի** կիրճն է, որտեղով հոսում է թեյքը, որտեղով անցնում է ռազմավիրական ճանապարհը: **Ղարյալ** բառի ծագումը հազարամյակների փոշու տակ է: Հայկական աղբյուրներում գտնում ենք **Ղարյալ** բառի ծագման բանալին: Հայ պատմիչները հիշատակում են **Պուռն ալանյա**, որը փաստորեն **Ղարյալ** բառի թարգմանությունն է: Պարսկերենում այն հնչում էր *darı alan* (այսինքն՝ **դուռ ալանների**): Որովհետև ալանների (օսերի) երկիրը տանող դուռը այդ կիրճն էր, որը թարգմանաբար (և մասամբ էլ ստուգաբանությանն անտեղյակ) ռուսերենում գրում էին **Дарьялское ущелье** կամ **Аланские ворота** կամ պարզապես **Ворота Кавказа**: Իսկ ալան բառն էլ առաջացավ **արիան** (արիացի) բառից:

327. ՆՈՐՍԱՆՆԵՐ ԵՎ ՎԻԿԻՆԳՆԵՐ

Նորվեգիայից հարավ գտնվող ժողովուրդները նորվեգացիների նախնիներին սկսեցին անվանել **Նորմաններ**՝ «հյուսիսային մարդիկ», որոնք նաև կոչվում էին **վիկինգներ**: Նրանք խիզախ ծովագնացներ էին: Նրանք հասան Իսլանդիա (Սառցե երկիր), ապա 10-րդ դարում վիկինգ թորվալսոնը հասավ Ամերիկայի հյուսիսը, որն անվանեց **Գրենլանդիա** (Կանաչ երկիր): Ուրեմն, երբ մենք ասում ենք իսլանդացի, նշանակում է «սառցե երկրացի», գրենլանդացի՝ «կանաչ երկրացի», հիդեռլանդացի՝ «ցածր երկրացի», ուկրաինացի՝ «ծայրամասցի» և այլն:

328. ԻՆՉՈՒ ՍԼԱՎՈՆՆԵՐԸ SKLAV՝ «ԱՏՐՈՒԿ»

ԿՈՉՎԵՑԻՆ

Սլավոնական բազմաթիվ ցեղեր էին ապրում Եվրոպայի արևելյան մասում, որտեղ հաճախ էին արշավանքի գնում հռոմեական զորավարները: Հին աշխարհում ավարառությունից ավելի մեծ արժեք էին ներկայացնում ստրուկները, որպես ծրի աշխատուժ: Սիս սլավոնական երկրներից թերվող գեղիներին հռոմեացիներն անվանում էին *slav*՝ *slav*-ի փոխարեն, և քանի որ նրանց աշխատեցնում էին որպես ստրուկներ, ուստի **սլավոն** բառն էլ հենց դարձավ «ստրուկ» բառին համարժեք մի հասկացություն:

329. ԲԵՂՎԻՆ: ԲԵՂՎԻՆՆԵՐ ԿԱՍ ԱՆԱՊԱՏԱՅԻՆՆԵՐ

Արաբներնում *badiya* նշանակում է «անապատ», անապատում ապրող քոչվոր հարևաններին անվանում էին *badavi*՝ **բադավի, րեդուլին** (թեղվին)՝ «անապատային»: Արևելահայերենում ավելի շատ գործածական է **թեղվին** ձևը, իսկ արևմտահայերենում՝ **բադավի**:

330. ԵՂԵՎՆՈՒՏԻ ԿԱՍ ՍՈՃՈՒՏԻ ԵՐԿԻՐ՝ ԴԱՆԵՍԱՐԿ, ԴԵՆԵՍԱՐԿ

Դանիա երկրի անունը ծագում է գերմաներեն *Tenne*՝ «եղևնի, սոճի» բառից: Նախապես այն անվանվել է *Tenne Marke*՝ «եղևնու, սոճու երկիր», բառացի **եղևնուտ, սոճուտ**, ապա կրճատ՝ **Դանիա**:

331. ՎՐԱՑԻ

Մեզ հարևան ժողովուրդներից վրացիների երկիրը մեր պապերը կոչում էին **Վիրք**, երկիրն **Վրաց**, Աշխարհն **Վրաց**: Մյուս հարևանները՝ պարսիկները, թուրքերը անվանում էին վրացիներին **գուրջի**, իսկ երկիրը՝ **Գյուրջիստան** (*gurcistan*): Միս այս **գյուրջի** բառն էլ դարձավ **գուրգի** (դրափոխությամբ՝ **գրյուն**) և փոխանցվեց ռուսերենին: Ռուսները նրանց այս պատճառով են անվանում **գրյուն**, իսկ երկիրը՝ **Գրյուն**:

332. ԳՅԱՎՈՒՐ

Մուսուլմանները ոչ մահմեդականներին անվանում էին **գյավուր**, որ նշանակում է «անհավատ»: Նրանց համար, ովքեր իրենց կրոնը մահմեդականությունը, չի դավանում, որ ազգից էլ լինի՝ հայ, հույն, վրացի, ռուս, եվրոպացի, միևնույն է, **գյավուր** է: Որտեղի՞ց է այս բառը: Արաբերենում ունենք *kafir* (քաֆիր)՝ «անհավատ» բառը, որը ենթադրվում է պարսկերենի *gabr*՝ «կրակապաշտ» բառից: Գյաբրերը շարունակում են պարսիկների նախնիների նման կրակի պաշտամունքը: Նրանք չընդունեցին մահմեդականությունը, և այս իսկ պատճառով էլ **գաբր** կամ **գյաբր** հասկացությունը համարժեք դարձավ **անհավատ** բառին:

333. ՀՈՒՆԳԱՐ

Վենգր (հայերեն՝ **հունգար**, նաև **մաջար**), երկիրը՝ **Վենգրիա**, հունգարերեն՝ *Magyarország*, այս բառը երկար ճանապարհ է անցել: Հունգարների նախնիներն ապրում էին Ուրալից այն կողմ, նրանց ազգակից ժողովուրդներն են **խանտիանիսեցիները**: Ռուսները նրանց անվանում են **венгр**, նաև **угрны**, լեները *wegry*:

334. ՉՈՒՎԱԸ

Լեզվաբանների վկայությամբ՝ Վուլգայի միջին հոսանքում գտնվող չուվաշ ժողովրդի անունը ստուգաբանվում է որպես «համզիստ, խաղաղ», հավանաբար նկատի է առնվել նրանց մյուս հարևանների հետ համեմատած ավելի խաղաղ, ոչ բշտամական, ոչ զավթողական կեցվածքը: Չուվաշների մի մասը Ասպուրակի գլխավորությամբ գաղթեց դեպի Բուլղարիա, ուր ծուլվեց տեղի սլավոններին (6-րդ դ.):

335. ԹՈՒՆԳՈՒԶ, ՏՈՒՆԳՈՒԶ

Ժողովրդին անվանում են նաև **Էլենկ**: **Էլենկ** բառն առավելապես ինքնանվանում է, իսկ **թունգուզ**-ը՝ նրանց հարևանների կողմից տրված անվանում: Հարևան թուրքախոս ժողովուրդները նրանց անվանել սկսեցին **թունգզը**-ներ (*tonguz*: «խոզ»)՝ նկատի ունենալով նրանց մեծ մասի զբաղմունքը՝ խոզաբուծությունը: Հետագայում էլ այդ բնութագրող մականունը դարձավ ժողովրդի անուն:

336. ԼԵՀ

Լեհաստան երկրի անունը ենթադրվել է առասպելական **լեհ** նահապետի անունից, որը հանդիսացավ նաև լեհական պետության հիմնադիրը, նա Չեխի եղբայրն էր:

337. ՉԵԽ

Առասպելական նահապետ **Չեխ**-ի անունից էլ՝ **Չեխիա** և **չեխ** ժողովրդի անվանումը: Չեխ նահապետը համարվում է Լեխի (կամ Լեհի) եղբայրը: Վրացական ավանդությունն էլ պատմում է, որ հայերի և վրացիների նախապապերը եղբայրներ են եղել:

338. ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՏՆՈՒՄ Է ՉԻՆ ՈՒ ՍԱՉԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՏԵՂԸ

Հայկական ժողովրդական գրույցներում և հեքիաթներում բազմիցս հանդիպում ենք **Չին ու Սաչին** երկրների հիշատակությանը: «Թագավորը մարդ է ուղարկում Չինումաչինա երկիրը՝ են Լողմա հեքիմին բերել տալու»: Անգամ Վահան Տերյանը մի բանաստեղծության մեջ հիշատակում է այդ **Չին ու Սաչինը**:

Իսկ որտե՞ղ է այդ **Չին ու Սաչին** երկիրը, թերևս մոտ է Չինաստանի՞ն, այլապես դրանք չէին հիշատակվի **միասին**: Տրամաբանության վրա մենք ճիշտ ենք դատում, սակայն գիտությունը միայն տրամաբանության վրա չի կարող հենվել, այն ամբողջական կարող է դառնալ ու համոզիչ, եթե տրամաբանությանը չհակասեն **փաստերը**: Իսկ որտեղի՞ց գտնենք փաստեր: Եվ ահա դրանք կան: Արիական լեզվաճյուղերից է **փուշտուն**, ուր նույնպես գտնում ենք **Մաուր**-ը (**Սաչի**-**Սաչին**-ը), որով անվանել են աֆղանները և պարսիկները **Չինաստանն ու հարևան երկրները**, այսինքն **Չինաստանն ու Ղնդկաչինը** (տե՛ս 778):

Մա նախածանցը նշանակում է «այն կողմ, անդր», այսինքն՝ **Մա-Չին** (**Ma+In**)՝ «**Անդրչինաստան, Չինաստանից այն կողմ**», ուրեմն **Չին ու Սաչին**, մենք ճիշտ ենք ընկալել՝ տրամաբանելով, այն հաստատվում է փուշտուի քերականական կանոններով, Սաչին նշանակում է **Անդրչինաստան**:

339. ԽԱՄՍԱԿՅԻ ՄԵԼԻԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՏ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐՏԱԿԵՏ

Հայ ժողովրդի պատմությունից ծանոթ է ձեզ **խամայի մելիքություններ** արտահայտությունը, որից սակայն հասկանալի է ընթերցողին միայն **մելիքություն** բառը, այն էլ «**Սասնա ծռեր**» մեր ազգային էպոսի **Մսրա Մելիք** անունից: Իհարկե, և **խամաս**, և **մելիքություն** բառերը հայերեն չեն և գալիս են արաբերենից: Մելիք նշանակում է թագավոր, իշխան, եթե առում ենք **Մսրա Մելիք**, ապա հասկանում ենք եգիպտոսի թագավոր, իշխան, եթե առում ենք **Մսրա Մելիք**, ապա հասկանում ենք «հինգ մելիքություններ-հինգ թագավորություններ»: Ահա սա արդեն պատմություն է: Հայկական պետականության կամ անկախության ամենավերջին եզրափակողները այս իշխանություններն են եղել, որոնք գտնվում էին **Արցախ-Ուտիք** տարածքում: Ահա այդ հինգ միավորված իշխանությունների անունները՝ **Դիզակ, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ, Գյուլիստան**, որոնք մեծ դեր խաղացին ուսական զորքերի Ղարաբաղը գրավելու ժամանակ՝ դրանով նաև կայացնելով իրենց դատավճիռը: Ուսական կայսրությունը իրեն կցեց նվաճված հայկական հինգ մելիքությունների տարածքները և այսպիսով վերջ տվեց հայկական անկախ վերջին հինգ թագավորություններին:

340. ԶԱՆԻ ԱՆՈՒՆ ԿԱՐՈՂ ԵՆ ՈՒՆԵՆԱԼ ՄԻՏԱՆԿՅԱԼ ՈՒՍԱՆԵՐԸ ԿԱՍ ԽԱՆՆԱԾԻՆՆԵՐԸ

Նոր աշխարհամասի հայտնագործությունից հետո եվրոպական ժողովուրդների կենցաղում ոչ միայն նոր ուտելիքների, մրգերի ու բույսերի անուններ հայտնվեցին, այլև հարյուրավոր նոր այլ բառեր, որոնց թվում նաև մի շարք ժողովուրդների խառն ամուսնություններից ծնվածների անվանումները, այսպես՝

- ա) **Մետիսներ** սկսեցին անվանել Ամերիկայում սպիտակամորթների և հնդկացիների ամուսնությունից ծնվածներին: **Մետիսը** (*metis*) ֆրանսերեն բառ է, որը լատիներենի *misticus* «խառը» բառի «անփոփված» ձևն է:
- բ) **Կրեոլներ** անվանեցին Լատինական Ամերիկայում իսպանացիների և պորտուգալացիների առաջին ժառանգներին (ֆրանս. *creole*, իսպ. *criollo* բառից):
- գ) **Մուլատներ**: Եվրոպայի սպիտակամորթ և սևամորթ մարդկանց խառնուրդից ծնվածներին սկսեցին անվանել **մուլատ**, որը ծագում է իսպ., ֆրանս. *mulet* «ջորի» բառից, այսինքն՝ **խառնածին**:

341. ԱՆՁԱՐԳԱՆԵԼԻ ԲԱՌԵՐ ԿԱՍ ՊԱՐՏԱԴԻՐ ՓՈՒՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆ՝ ՄԻ ԲԱՌ, ՈՐ ԲԱՅԱՐՁԱԿ ՌԵԿՈՐԴՄԵՆ Ե, ՈՐ ՉԻ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԳԻՆԵՍԻ ԳՐԶՈՒՄ: ՌԵԿՈՐԴՄԵՆ ԱՆ-Ե ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՆԵՄԱԿՆԱՍ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՐ ԲԱՌՆ Է: Ներկայումս աշխարհում թերևս գոյություն չունի մեկ այլ բառ, որն ավելի հաճախ

գործածվի, քան **ալո**-ն: Որ ժողովրդի կենցաղի մեջ մուտք է գործում հեռախոսը, այդ լեզվի բառապաշարում էլ **ալո**-ն կամ **հելլո**-ն:

Անգլերենին անծանոթ մարդիկ չգիտեն **հելլո**-ի նշանակությունը: *Allo* անգլերենում նշանակում է «ողջույն»: Դողգանդի տարբեր ծայրերում ամեն վայրկյան հնչում է **հելլո**-ն, և թե քանի միլիարդ անգամ ոչ ոք չի կարող հաշվել այս հաճախականությունը: Բայց ոչ ոք էլ չի առարկի, որ մեկ այլ բառ իր հաճախականությամբ կարող է մրցել նրա հետ. ամենաշատ օգտագործվող բառը նա է, այսինքն **ռեկորդսեն** է:

Հանիրավի, **ալո**-ն տեղ չի գտել Գինեսի գրքում:

342. ՊԵՏՔ Ե ԽՐԱԽՈՒՄԵԼ ՍԱՔՐԱՍՈՒՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՍ ԻՆՉՊԵՍ ԹԱՐԳՍԱԿԵԼ ՏԻՆՍ-Ը

Իհարկե լեզվաբանները պետք է պահպանեն և պաշտպանեն լեզուն օտար ներխուժումներից՝ քարգմանելով կամ հարմարեցնելով օտար բառի փոխարեն սեփական լեզվից ստեղծված բառերը: Սակայն նման պատվաստումները հաճախ չեն արժատավորվում. և ներխուժում են օտար բառերը նաև բանավոր և ասլա գրավոր խոսքի մեջ: Այսպես օրինակ՝ **քինս** բառը ոչ պատճենվեց և ոչ էլ քարգմանվեց որևէ հարմար համարժեքով: Եվ արդյո՞ք իմաստ ուներ այդ կարծ բառի փոխարեն մեր լեզվում մի նոր բառ ստեղծել, երբ այն արդեն նվաճել էր իր գոյության իրավունքը:

343.

Կաղնջական ժամանակներից ի վեր մի ցեղի լեզվից մյուսին են փոխանցվել բառեր, և այս երևույթը շարունակվում է առ այսօր: Որքան էլ որևէ լեզու հարուստ բառապաշար ունենա և փորձի սեփական միջոցներով՝ բառապատճենմամբ ու քարգմանությամբ օտար բառերի համարժեքն ստեղծել, միևնույն է, չի կարող խուսափել փոխառություններից: Սակայն հաճախ պատճենված բառը օտար բառի իմաստային բոլոր նրբերանգները չի ունենում: Ենչու էր ասում Հ. Թունանյանը, որ քարգմանությունը նման է գորգի հակառակ երեսին, այն երբեք մայր օրինակի համարժեքը չի կարող լինել: Թեև նա ասում էր գրական ստեղծագործության մասին, սակայն նույնն է երևույթը նաև առանձին բառերի դեպքում:

344. ՏՈՒՆԱՍԻ

Այսպես օրինակ, ի՞նչ համարժեքով կարելի է հայերենում արտահայտել ճապոներենի **ցունամի** բառը. **փոթորի՞կ**, **մրրի՞կ**, **պտտահող՞մ**, **սատանի քամի՞**, **մրրկահող՞մ**: Չէ՞ որ սրանցից ոչ մեկն էլ նույնարժեք չէ **ցունամի**ի հետ: **Ցունամի** նշանակում է ծովային խոշոր ջրի հորձանք, որ հսկայական արագությամբ և ուժով սրբում և ավերում է իր ճանապարհին ամեն ինչ՝ նավեր ու քաղաքներ, նավահանգիստներ ու կառույցներ:

345. ԹԱՅՖՈՒՆ

«Մի քանի վայրկյանում **թայֆունը** սրբեց 3000–անոց քնակավայրը» (մամ.): Աշխարհի բազմաթիվ լեզուների բառապաշարի մեջ է մտել նաև **թայֆուն**-ը: Այն նշանակում է կործանիչ մեծ ուժի փոթորիկ: Ծագում է չինարենից: **Թայ** նշանակում է «մեծ», **ֆուն** «քամի»: Որոշ լեզվաբանների կարծիքով առասպելական հրեշ *Typhon*-ի անունից է ծագում **տայֆուն**-ը կամ **թայֆուն**-ը, որը ճիշտ չէ:

346. ՍԱՄՈՒՄ

Սամում շիկացած ավազի մրրիկ, այրող քամի, մրրկահողմ Արաբիայի և Աֆրիկայի (Սահարայի) անապատներում: «Եվ ոչ մի **սամում** հրաշունչ թևով չէր կարող հասնել նրանց արշավին» (Ա. Իսահակյան): Ծագում է արաբերենի *samum*՝ «հրաշունչ, այրող քամի» բառից:

347. ՊԱՐԵՐԻ ԱՆՈՒՆԵՐԸ Ե ԹԵ ԹԱՐԳՍԱԿԵԼ, ԱՊԱ ԱՍԵՆ ԻՆՉ ԿԵԱՌՆԿԻ

Աշխարհի բազմաթիվ լեզուներում գործ են ածվում մի քանի տասնյակից ավելի պարերի անուններ, որոնք ազգային պարեր չեն, և դրանց անունները քարգմանելու հարկ չի առաջանում: Չէ՞ որ պարերի հիմքում տակտն է, չափն է ընկած, իսկ տարբեր անուններ ունեցող պարերի չափերը նույնն են: Բերենք մի քանի՝ թվով 25 տարածված պարերի անուններ, որոնք չքարգմանված են օգտագործվում նաև հայերենում: Սկսենք Կովկասյան պարերից:

Շալախո – վրացա–հայկական պար, անունը՝ անհայտ ծագմամբ:

Լեզգիկակ – «լեզգիական պար», հարկ չկա քարգմանելու:

Կաբարդինկա – կաբարդինական–բալկարական պար. նույնպես հարկ չկա քարգմանելու:

Պոլոնեզ – պոլոնական–լեհական պար, որ տարածվեց 18–րդ դարում Եվրոպայում, որպես հանդիսավոր պարեր՝ *dance polonaise*, դարձավ սալոնային սիրված պար:

Մազուրկա – լեհական մազուրկների (մազուրների) պարը, որ տարածվեց 17–րդ դարում, 3/4, 3/8 չափով, արագ տեմպով, հետո դարձավ սալոնային: Մազուրկաներ են գրել բազմաթիվ կոմպոզիտորներ՝ Չայկովսկին, Գլինկան, Շոպենը, Սկրյաբինը:

Կրակվյակ – լեհական Կրակով քաղաքից տարածված պար, 2/4 չափով, հնում միայն տղամարդկանց պար էր, հետո դարձավ զուգապար:

Հաբաներա – Հավանայի, հավանական պար է, 18–րդ դարում Կուբայից այն ներմուծվեց Իսպանիա՝ *la Habana* անվամբ, 2/4 չափով, որի հիմքում, սակայն, եվրոպական **կոնտրդանս** էր: Միրված այս պարատեսակը օգտագործել են Բիզեն, Դեյուսին, Ռավելը և այլն:

Սեզեղիլիա – տե՛ս **Սևիլիանա**:

Սևիլիանա – իսպանական Սևիլիա քաղաքի անունից է՝ սևիլիական, փաստորեն

սեզոնիկայի սկիզբն տարբերակն է: Իսկ սեզոնիկան Կաստիլիայի Լա Մանչից է սկիզբ առել 15–16–րդ դարերում:

Չարդաշ – հունգարերեն նշանակում է «զինետուն», ինչը, որովհետև զնչուական ծագում ունեցող այդ պար նախապես զինետներում էր կատարվում:

Մալագուենյա – ֆրանսագոյի մի տարբերակն է, որ տարածվեց Անդալուզիայի Մալագա նավահանգստից, 3/4, 3/8 չափերով:

Բոլերո – 18–րդ դ. պարոզ Սերետն, օգտագործելով Լա Մանչի սեզոնիկան կիրառի և կաստանիետների նվազակցությամբ, ստեղծեց **բոլերոն**, որ հետագայում մեծ տարածում ունեցավ:

Վալս – զերմաներեն Valzen՝ «պտտվել» բառից, 3/4 չափով զուգապար:

Վալս–բոստոն – ամերիկյան Բոստոն քաղաքի տարբերակով վալս, որ ավելի դանդաղ չափով էր:

Չարլստոն – ամերիկյան Չարլստոն քաղաքում տարածված 1920–ական թվականների պար, որը ֆոքստրոտի արագ տեսակն էր 4/4 չափով, Եվրոպայում տարածվեց 1930–ական թթ.:

Վենզերկա – «հունգարական», նույն չարդաշ պարն է:

Ֆոքստրոտ – անգլ. fox՝ «աղվես» և trot՝ «արագ քայլ», զուգապար, որ **ձեզբայմի** և **թու սքեփի**, **ուսն սքեփի** հետագա զարգացումն էր Ամերիկայում 1910–ական թթ.: Այնուհետև որպես պարահանդեսային պար տարածվեց Եվրոպայում և աշխարհում:

Տանգո – զնչուական գիտանո, **անդալուզյան**, **կրեոլական**, **արգենտինական**:

Մուկնգ – ֆոքստրոտի տարատեսակն է, 40–ական թթ. առաջացավ անգլերեն swing «ճոճվել» բառից:

Ռումբա – աֆրո–ամերիկյան կիսաքաղաքային–կիսազուլական բնույթի զուգապար, որ ծնավորվեց Կուբայում երգի զուգորդմամբ:

Սամբա – աֆրո–բրազիլական զուգապար երգի ուղեկցությամբ՝ 2/4 տակտով, մի քանի տարատեսակներով:

Բլյուզ – անգլ. blues՝ «վիատություն, թախիծ». Ամերիկայի նեգրերի ստեղծած երաժշտությունն է:

348. ԴԱՐԻ ԱՍԵՆԱՍԱՐՍԱՓԵԼԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄՊԻԴ (ԶԻԱԿ)

Սեպագիր լեզուներով՝ Շումերից, Աքքադից, Բաբելոնից և հեթանոսի արիստոկրատից պեղված բազմաթիվ արձանագրություններում հանդիպում ենք «սև մահ» (Նիգ զիգ) արտահայտությանը, որ գիտնականների ենթադրությամբ **համաճարակ** էր նշանակում, հավանաբար ժանտախտն էր: Այնուհետև ուշ միջնադարում մարդկությանը ահավոր սարսափեցնում էին **թրոսխտը**, հետո՝ մալարիան, **քաղցկեղը** և հիմա արագորեն տարածվում է **ՄՊԻԴ**-ը, որն առաջին անգամ ի հայտ եկավ 1981 թվականին, որը մասնագետների կարծիքով **Աֆրիկայից**, այն հայտնվեց Կարաիբյանի ավազանի երկրներում, ապա անցավ Եվրոպա և այլուր: **ՄՊԻԴ**-ը ռուսերենի **синдром приобретенного иммунного дефицита** բառերի հապավումն է: Ինչո՞ւ այսպես կոչվեց սարսափազդու: Որովհետև այն մարդու վիրուսային այնպիսի հիվանդություն է, որից

մարդու լիմֆատիկ սիստեմը թուլանում է, մարմնի դիմադրողականությունը՝ կորչում: Գլխավորապես այն տարածվում է սեռական ճանապարհով, թմրադեղերի արսվման, հոմոսեքսուալիտետների միջոցով և արյան ներարկման հետևանքով: Հայերենը որդեգրեց այս բառն առանց առարկության, իսկ ավելի ուշ ստեղծվեց նաև **ԶԻԱԿ** հապավումը:

349. ԲՈԶԻ ԳՅՈՒՂ ԵՎ ԲՈԶՈՅԱՆՆԵՐ

Հայերենում երկու համանուն կամ նույնանուն **բոզ** բառեր կան, որոնցից մեկը «պոռնիկ» նշանակությամբ է օգտագործվում (այն փոխառյալ է կովկասյան լեզուներից), իսկ մյուսը՝ փոխառյալ է թուրքերենից, boz նշանակում է «սպիտակավուն, հողագույն, մոխրագույն, բաց գույնի» (ԺԳԲ, 1, 333): Օրինակ, երբ Հ. Թումանյանը գրում է՝ մի **բոզ** նապաստակ, ապա նկատի ունի նապաստակի սպիտակավուն, մոխրագույն, բաց գույնի, հողագույն և ոչ թե անբարոյական լինելը: Այս երկրորդ **բոզ**-ը, գործածական լինելով միայն բարբառներում, շատերին ծանոթ չէ, և եթե մեկը լսում է այս բառը, ապա անմիջապես ենթադրում է առաջին՝ անբարոյական իմաստը:

Հատկապես ամաչում են **Բոզոյան** ազգանուն ունեցողները, որոնց նախնիներին տրվել է այդ ազգանունը հողագույն, մոխրագույն մազեր և դեմքի գույն ունենալու պատճառով:

Ամոթահար վիճակի մեջ են ընկնում նաև այն անձնավորությունները, որոնց ծննդավայրը **Բոզի** գյուղն է, թուրքերեն **Համազիծանը**: Գյուղն այս անվանումն ստացել է բաց կանաչ արոտավայրերով շրջապատված և գորշ մոխրագույն հող ունենալու պատճառով:

350. ԱԽՏԱ

Շուրջ հարյուր տարի առաջ «Էմիլյան ազգագրական ժողովածուում» Ս. Հայկունին հրատարակել է բանասիրական նյութեր, որոնց մեջ հանդիպում ենք հետևյալ առածին. «Ասըմ եմ՝ ախտա եմ, դու հարցընըմ ես. «քանի՞ զավակ ունես» (ԷԱՄ, 2, Մոսկվա – Վաղարշապատ, 1906, էջ 211, նաև Ա. Ղանալանյան, «Առածանի», Երևան, 1960, էջ 57): **Ախտա** նշանակում է «ամուլ, ամորձատված, անպտուր, անբերրի»: Այս իմաստով են տրված նաև Ախտա տեղանունները: Ներկայի Հրազդան քաղաքը նախկինում Ախտա է կոչվել ոչ բերրի, ծառազուրկ լինելու պատճառով: Պարսկերենում գտնում ենք **ախտե** նույնիմաստ բառը, որտեղից էլ անցել է հայերենին:

351. ԱՍԵՆԱԿԱՆՐԱՍԱՏՉԵԼԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԶԵՆՈՆՅ ԵՆԵՏՈՒՄ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ

Համաճարակային վիրուսային հիվանդություն A, B, C և այլ այրուբենային անուններով...

Իրենից ոչինչ չի ներկայացնում զրիպը, սակայն ինչպիսի՞ բարդությունների տեղիք է տալիս մարդու մարմնում: Այո, հետևանքներ, հետևանքներ: Որքան մուծիչ միջոցներ ստեղծվեցին նրա դեմ, սակայն իզուր, նրա հաղթարշա-

վը շարունակվում է: Նա կերպարանափոխվում է և հայտնվում նորից այլ տեսքով (շտամմներով): Իսկ նոր տարատեսակների դեմ անգոր են լինում արդեն հին միջոցները: Իզոլո չէ, որ անվանել են այն grupper «ընդգրկել, փաթթվել»:

352. ԿՈՍԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ Ե «ՔՈՒՆ, ԲԱՅՑ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ»

Չանազան հիվանդությունների պատճառով գիտակցության կորուստը մարդու մոտ, որն առաջանում է հատկապես մալարիայով, էնցեֆալիտով, մենինգիտով և շաքարախտով տառապողների կամ լյարդի բորբոքում ունեցողների մոտ, բժշկությունը անվանում է **կոմա** (հուն. **кома** նշանակում է «քուն»): Սակայն այս բունը **վերջինը** կլինի, հավերժականը... եթե թվածնային քաղցը արագ չվերացվի:

353. ՍԵՔՍ

Սեռական բավարարվածության հասկացողությունն այսօր բազմաթիվ լեզուներում արտահայտվում է **սեքս** բառով, որը բնավ էլ այդ նշանակությունը չի ունեցել մախիմոն, օրինակ՝ ֆր. **sexe**, լատ. **sexus** նշանակում է «սեռ»:

Սեքսուոգիա (**sexe** և **logia**) – գիտություն սեռական կյանքի մասին, որը զբաղվում է սեռական հարաբերությունների հարցով, պարզում է տկարության պատճառները, շեղումները և նման հարցեր:

354. «ՏԱՔ ԽՄԻՉՔԸ՝» ՀՈԿՈՒԱԴՐԸ, ՉԵՆՔ ՈՒՏԻ, ԵՁԵ ԱՄԵՐԻԿԱՆ ՉԲԱՅՉԵՐ

Որքան բարիքներ մենք չէինք ճաշակի, եթե Կոլումբոսը չբացեր Ամերիկան: Նման բարիքներից մեկն էլ **շոկոլատն** է, որի անվանումը եվրոպացիներին անցավ ացտեկների լեզվից: Ացտեկներն **chocolate** նշանակում է «տաք խմիչք», որ հետո անցավ իսպաներենին առանց է –ի՝ **chocola** ձևով: Իսկ ինչո՞ւ տաք խմիչք. երբ շոկոլադը հեղուկ ըմպելիք չէ: Որովհետև այն պատրաստվում էր կակաոյի սեմբերից՝ հուճերից, հատուկ մշակմամբ: Նախապես այս քաղցրավենիքից միայն թագավորներն էին օգտվում, որովհետև շատ բանկ հաճույք էր: Շուրջ 200 տարի սովորական մահկանացուներին **շոկոլադը** անմատչելի էր: Նրա մեջ հետագայում սկսեցին կաթի, ընկուզի, սուրճի, շաքարի հավելումներ կատարել, որից ավելի համեղ և դուրեկան դարձավ նրա համը:

355. ԵՁԵ ՉԼԻՆԵՐ ԿԱԿԱՈՆ, ՉԵՐ ԼԻՆԻ ՆԱԵԿ ՀՈԿՈՒԱԴՐԸ

Կակաո–ն իսպաներեն **cacao** բառից է, որն էլ իր հերթին վերցված է ացտեկների լեզվից: **Կակաոն** թեորոմին ցեղի բույս է, որի հուճերից ստացվում է դաճն ու տոխպ համի սննդամթերք: Ունդերը մանուշակագույնից մինչև սպիտակ ու

մոխրագույն են: Հավաքված սերմերը 2–7 օր ֆերմենտացվում են, և ստացվում է մուգ շագանակագույն երանգ, համն էլ դառնում է դուրեկան: Սերմերը չորացվում են տաք օդում կամ արևի տակ: Կակաոյից կակաոյի յուղ և շոկոլադ են պատրաստում, իսկ քուսպից՝ կակաոյի փոշի:

356. ԿԱՐՏՈՖԻՒՆ, ԹԵ՞ ՓԱԹԱԹԵՍ ԿԱՍ ԲԱՏԱՏ

Նոր աշխարհի բարիքներից թերևս ամենազնահատելին **կարտոֆիլ**ն է, որը եվրոպա է բերվել 16–րդ դարում, իսկ Ռուսաստան Պետրոս 1–ի ժամանակ: **Картофил, картошка**–ն բերվել է Հայաստան մի քիչ ուշ: **Կարտոֆիլ** բառը (որոշ բարբառներում՝ **կարտոլ**) ծագում է գերմաներենի **kartoffel**, սա էլ՝ իտալերենի **tartufo, tartufole** (պալար–**трюфель**) բառից: Իսկ արևմտահայությունը գերադասում է **փաթթես, բաթթես** անվանումը: Ֆրանսերենում անվանվում է «գետնախնձոր» (**potome de terre**), անգլերենում՝ **potatoes** «կարտոֆիլ», որն էլ ծագում է **potato**՝ «գետնախնձոր» բառից: Փորձել են հայերեն համարժեքը հորինել **հողկիթ** ձևով, որը գործածական չէ:

357. ՏՈՒԲԱԿՈՒՅ ՍԵՐՎԱԾՆԵՐԸ՝ ԾԽԱԽՈՏ-Ը, ԹԹԱԽՈՏ-Ը, ԹԱՄԲԱԹՈՒՆ, ԲՈՆՈԹԻՆ, ԹՈՒԹՈՒՆ- Ը ՏԱԲԱԿ

Նոր աշխարհի՝ Ամերիկայի հայտնագործումից հետո եվրոպա բերվեցին բազմաթիվ բարիքներ՝ լոլիկը, եգիպտացորենը, կարտոֆիլը, շոկոլադը և մի բարիք էլ, որ չարիք դարձավ մարդկության համար: Այդ «բարիքը» Հայիթի կղզու բնիկների՝ արավակների լեզվով կոչվում էր **տորակո**: Եվրոպայում այն դարձավ **տորակո, տաբակ**: Շատ ժողովուրդներ այդպես էլ գործածել են այս բառը, ոմանք էլ դրա համարժեք են ստեղծել, ինչպես հայերը՝ **ծխախոտ**: Թուրքերենում այն դարձել է **թամբաքու**, որը փոխ է առնվել նաև ժողովրդախոսակցական հայերենում. «Մարդիկ զրգռում են իրենց ուղեղը **դահվեով, թամբաքուի** ծխով» (Բաֆֆի), «Ներս մտնելիս քիթը է մտնում **թամբաքուի** դուրեկան հոտը» (Դեմիրճյան):

Սիս այս դուրեկան բույրի պատճառով էլ ծխախոտը փշրած, փոշու վերածած սկսեցին թթով շնչել, միմյանց հյուրասիրել հատուկ գրպանի տուփերից՝ **տաբակերկաներից**: Սիս և այսպիսի գործածության պատճառով ծխախոտը կոչվեց նաև **քքախոտ**: Թուրքերենից փոխառյալ **բոնոթի** բառն էլ հենց նշանակում է **քքախոտ** (բուռուն՝ «քիթ» և **օթու**՝ «խոտ» բառերից): Գ. Թումանյանը օգտագործում է այս բառը. «Կարպետը պատասխանի փոխարեն **բոնոթի** էր քաշում»: Գ. Թումանյանը «Գիբորը» պատմվածքում գործածում է նաև **թուրուն** բառը. «Գնում էր Համբոն՝ շալակին մի խուրջին, մեջը մի քանի հաց ու պանիր ու մի երկու դաստա **թուրուն**»: Այս բառը թուրքերենից է գալիս, **tütmeğ** նշանակում է «բուրել, ծխալ», **թուրուն**՝ «ծխացող»: Սիս թե մի մորից որքան նոր բառեր առաջացան:

ԿՏՈՐԵՆԵՐ ԵՎ ՀԱԳՈՒՏՆԵՐԻ ԱՎԱՆՈՒՄՆԵՐԸ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԻ ԱՆՈՒՄԸ

Վաղնջական ժամանակներից առ այսօր ժողովուրդների կենցաղում գործ են ածվում կտորեղենների բազմաթիվ տեսակներ, որոնց մի մասը տարաշխարհիկ ծագում ունի: Այս իսկ պատճառով էլ ներմուծվող գործվածքների անունները կրում են արտադրող վայրի կամ երկրի անունը: Հայերենում 200–ից ավելի կտորեղենների և հագուստների անուններ են գործածվել ու գործածվում, զրաբարից սկսած առ այսօր, որոնք չեն թարգմանվել, և շատ հաճախ դրանց օտար ծագում իսկ չի գիտակցվում, որոհե՛տև դարձել են մեր բառապաշարի անքակտելի մասը: Գիտության և տեխնիկայի մեր օրերում նորանոր կտորեղենների տեսակներ են արտադրվում, և մեր բառապաշարը շարունակում է համալրվել նոր կտորեղենների անուններով: Բերենք մե՜սն չթարգմանվող անուններից մի քանիսը:

ա) **Ամերիկան, ամերիկան, ամրիկան**–բամբակյա հասարակ կտավի տեսակ, որ ներմուծվում էր **Ամերիկայից**: «Ամերիկաններու վրա առջի շահերը չէին մնացած» (ԳՁ):

բ) **Բամբազե, նույնն է՝ բումազե** – ռուսերենում бумазеа, իտալ.՝ bambagino: նեթարվում է **բամբակ՝** batak արևելյան ձևից: Խավվոտ բամբակյա մի կտորի տեսակ է: «Երկար **բումազե** խալաթը հազած՝ ներս մտավ Արուսը» (ՎԹ): «Մեկը մանուղեղեն էր ցույց տալիս իր հաճախորդին, մյուսը՝ չիթ, **բումազե** և այլն» (ՄՍ):

գ) **Բառիստ** – նուրբ, թափանցիկ բամբակյա կտավի տեսակ, (ֆլամանդացի ճյուղակ **Բառիստի** անունից), որից կանացի սպիտակեղեն են կարում:

դ) **Բյազ** – կտավի (սպիտակ) ավելի ծիգ տեսակն է, որից գերազանցապես տրամարդու և անկողնի սպիտակեղեն՝ սավան, ներքնակի երես են կարում: Ծագում է արաբերենի bazz՝ «կտավ» բառից: Բյազի հենքի թելերն ավելի բարակ ու նոսր են, քան հյուսվածքինը: Բյազ վաճառողներին ասում էին **բազազ** (դարձյալ արաբերենից է): Հիշենք Հ. Թումանյանի «Գիրքի» **Բազազ Արտեմին**:

ե) **Բոստոն** – խավոտ և խիտ գործված բարձրորակ բրդյա կտորի տեսակ, ինժնականում մուգ գույնի (սև, կապույտ և այլն), որն արտադրվել է **Բոստոն** քաղաքում: Նրանից կոստյում, վերարկու և վերնաշապիկ են կարել: «Նա հագել էր կապույտ **բոստոնե** բլուզ» (ՄԽ):

զ) **Մուսլինը** գործվածքի, կտորի ընտիր տեսակ է, որի անվանումը շատերին հայտնի չէ, կապված է այն որակի՝, թե՛ տեղի հետ: Բառարանները բացատրում են բաճակե, մետաքսե կամ բրդյա նուրբ, ընտիր գործվածք: Մինչեղև այս կտորի անունը նույնպես ծագում է արտադրված տեղից՝ **Մոսուլ** քաղաքից, որտեղից արտահանվում էր այն տարբեր երկրներ: Միջազգետի **Մոսուլ** քաղաքից հարևան երկրներ և Եվրոպա էր արտահանվում **մուսլինը (մոսլինը)**: Հետագայում Եվրոպան ինքը սկսեց մե՜սան արտադրանք տալ՝ նոր՝ ավելի էժան և կատարյալ տեխնոլոգիայով: Սակայն պահպանվեց **մուսլին** անունն արդեն ոչ արտադրության տեղի, այլ որպես տեսակի անուն:

յ) **Քաշմիրը** գտնվում է Հնդկաստանի հյուսիսում Ինդոս և Ջամմու գետերի

հովտում, որտեղ արտադրվում և այնտեղից արտահանվում էին ընտիր գործվածքներ, որոնք Եվրոպայում և այլուր հայտնի են **քաշմիր, քաշմիր** կամ **քիշմիր** անուններով: Հայերենում ավելի շատ տարածված էր **քիշմիրը**: **Քիշմիրի** շալ արտահայտությունն ավելի էր տարածված, որովհետև արտահանվող կտորը բրդյա նուրբ շալե գործվածք է: Բաֆֆին բազմիցս հիշատակում է իր գովածքներում **քիշմիրի** կամ **քիշմիրյան շալ** արտահայտությունը. «Շեքղազարդ սենյակում բարակ **քիշմիրյան** շալով պատկել էր մի մանկահասակ կին» կամ «Նախշում գորգերի երեսի վրա սփռված էին ավելի փափուկ օրոցներ **քիշմիրի** ամենաթանկագին շալերից»:

ը) **Շալ** – նախապես շալը արտահանվել է Հնդկաստանի **Շալ** քաղաքից, որի քնակիչները հմտացել էին բրդյա նուրբ և որակյալ գործվածքներ արտադրելու մեջ: Շալը ընկալվում է երկու իմաստով՝ մասի՝ որպես բրդյա գործվածքի անուն ընդհանրապես, ապա՝ ծուպավոր, շյուղեղով գործված քառանկյունի կամ եռանկյունի մի կտոր, որը կանայք գցում են իրենց ուսերին, գլխին:

թ) **Սնդուսը** հայտնի է Աստվածաշնչից, ուր հանդիպում ենք՝ «Ջգեցար **սնդուս**»: Սնդուսը ծագում է Հնդկաստանի **Սինդ** գավառի կամ ժողովրդի անունից (sindus), որտեղից արտահանվել է նուրբ, ողորկ և փայլուն երես ունեցող գործվածքեղենը կամ կերպար: Ներկայումս շարունակում են **սինդուսը** բնակվել Կարաչի քաղաքի շրջակայքում՝ Պակիստանում: Միայն մեծառնեցը ունի շատ գեղեցիկ մի պատկեր. «Տանիքներում վրա մշուշը **սնդուս** լաթեր կլփոտե...»: Սնդուսի ողորկ և փայլուն արտաքինը նույնիսկ հայերենում նոր իմաստ է ստեղծել՝ **սնդուսը**՝ «փայլեցնել, հղկեցնել», **սնդուսում**՝ «փայլեցում, հղկում» նշանակություններով:

ժ) **Կուլքնի** – հայկական միջնադարյան խաղիկներում, հայրեններում և այլ գրական երկերում հաճախ է հիշատակվում **կուլքնի** կտորի մասին: Ըստ երևույթին այն շատ արժեքավոր ու հայտնի գործվածք է եղել, քանզի շատ է գովերգվում որպես արժեքավոր մկեր, որ տրվում է նշանածին կամ հագնվում է տոնական օրերին.

Էլ ման էկավ աշնան օրեր.
Սաքոն խաբավ **կուլքնի** շորեր...
Կամ շամ կուզես, թե **կուլքնի** պիրեմ...

Բառարանները բացատրում են որպես «մետաքսյա փայլուն կամ կերպասե գործվածք»: Անգամ նրա համբավը հասել է Ռուսաստան, ուր գիտեին **кунтя** ձևով՝ «կիսամետաքսե կտոր» նշանակությամբ:

ժԱ) **Քթթ** – հազարամյակների թանձր վարագույրներով է պատված **քթթ**–ի անցած ուղին: Այն հիշատակվում է աքքադական սեպագիր արձանագրություններում kift հնչյամբ և «վուշե, քաթանե գործվածք» բացատրությամբ: Պերոն Պոռշանի մոտ գտնում ենք. «Քահանան առաջ մատանին օրհնեց, հետո՝ **քթթը**»: Այսինքն՝ հարսնացուի հագուստեղենը: Ի՛ դեպ, **քթթն** ու **քաթանը (քթանը)** ծագում են միևնույն արմատից:

ԺԲ) **Սավան** բառին կարելի է հանդիպել աշխարհի բազմաթիվ լեզուներում: Լեզվաբանների կարծիքով՝ այն հինարևելյան քաղաքակրթության արգասիք պետք է լինի, որովհետև մարդուն անհրաժեշտ մի շարք այլ կտորեղենների հետ սավանն

էլ է արտադրվել Միջազգային Բաղդադ քաղաքի մոտ գտնվող Սաբան բնակավայրում: Արաբերենում գտնում ենք sabaniyyat, հունարենում՝ sabanon, որտեղից էլ եվրոպական լեզուների savaan-ը: Դայերենում սավանը կտավե սփռոց է, որ փռում են ներքնակի վրա կամ թուփ թափ տալուց են պահում ծառի տակ:

ԺԳ) Ատլաս – հինարևելյան քաղաքակրթությունից եկող մի բառ է նաև **ատլասը**, որը «մետաքսե փայլուն, հարթ կտորի» անվանումն է: Ծագում է այն արաբերենի «սնդուս, ողորկ, հարթ» բառից: Միջնադարյան տաղերգու Ֆրիկն ասում է. «Սևկին **ատլաս** ու ղըրմըզի»: Գրվում է նաև **աթլաս**:

ԺԴ) Աստոն, սափն, զեյթնի – եվրոպական լեզուներից հայերենին փոխանցված բառերից է **սատիւ**-ը (**սաթեն**), որը գերմաներենին կամ ֆրանսերենին է փոխանցվել արաբերենից, որը այն ուներ zaitun հնչույթ, իսկ սա էլ իր հերթին գալիս է չինարենի czaidin բառից:

359. ԵՌԵ ՀԱԳԻՆԴ ԿԱԼԱՁ Է, ԱՊԱ ԱՅՆ ԵՎԵՐ Է ԱՆՊԱՅՄԱԼ

Մինչև արաբական արշավանքները հայերենի բառապաշարում չկային ոչ **խալաթ**, ոչ էլ **խիլ** կամ **խլ** բառերը: Դայերենում ստեղծվեց նաև բայ **խիլայել**, **խլայել**՝ «նվիրել, մեծարել»՝ նշանակություններով: Վարդան պատմիչի մոտ կարդում ենք. «Եօթն անգամ արքունական զգեստուք **խիլայել** զնա» (Յոթ անգամ (թագավորական) զգեստներով նրան մեծարում է (նվիրատվություն է անում)): Ուրեմն **խիլ** կամ **խլ** նշանակում է «նվիրված հանդերձանք, թիկնոց, պատմունք»։ Միջին դարերում, երբ հարևան թագավորը կամ խալիֆը թանկարժեք պատմունք էր ուղարկում որևէ թագավորի կամ իշխանի, դրանով հավաստում էր, որ նրան արքա կամ իշխան լինելու պատվի է արժանացնում: Ահա արաբերեն այս **խիլ** բառից է կազմված **խալաթ** գոյականական ձևը: Արաբական խալիֆը հայոց Աշոտ Բագրատունու ճանաչեց որպես թագավոր և, ի նշան այդ բանի, ուղարկեց թագ և թագավորական հանդերձանք **խալաթ** (**խիլ**):

Ներկայումս **խալաթ** բառը հայերենում արդեն մի թանի իմաստներով է օգտագործվում.

1. Վերնազգեստ արտադրության մեջ կամ տանը հագնելու համար, օրինակ նստած էր տնային խալաթով:
2. Բարբառներում՝ նորահարսին կամ նորափեսային տրվող դրամական քվե: Ինչքա՞ն **խալաթ** ստացար:
3. Պատմական իմաստով՝ որևէ իշխանի կամ թագավորի տրվող թանկարժեք հանդերձանքը (պատմունք, թագ և այլն):

360. ՍՈՂԱ

Ֆրանսերենի **մոդա** «նորածևություն» բառը անցել է աշխարհի բոլոր լեզուների բառապաշարի մեջ, որը սակայն նախապես նշանակում էր լատիներենում modus՝ «ձև, չափ, միջոց, կանոն»։ Աստիճանաբար նախնական նշանակությունը կորցրեց

մոդա–ն ձեռք բերելով արդի «նոր ձևի» (հագուստ, կոշիկ, կահույք, մեքենա, սանրվածք և այլն) նշանակությունը:

ա) **Բլուզ** – բաճկոնի տեսակ, պարանոցը կոճակով տղամարդու վերնաշապիկ: Եվրոպական լեզուներին է փոխանցվել եգիպտական Պելուզիա քաղաքից, ուր արտադրվում էին դրանք և արտահանվում: Միջին լատիներենում pelusia, ֆրանսերեն՝ blouse, գերմաներեն՝ Bluze և այլն: Մինչև խաչակիրների արշավանքը այդ կապտազույգ վերնաշապիկները ներկված ինդիգոյով եվրոպացիները հագնում էին զրահաշապիկ վրայից: Դետազայում տարածվեց այն եվրոպական և ասիական բազմաթիվ ժողովուրդների մեջ:

բ) **Յափունջ/յափնջի-այծենակաճ** – այծի մազից կամ բրդից թիկնոց– վերարկու, որ հագնում են հովիվները: Այն հաստ է և չունի կոճակներ, ուսերից դեպի ներքև լայնանում է: Բառը թուրք-թաթարական ժողովուրդների միջոցով տարածվել է մեզ մոտ, Ռուսաստանում և այլուր: Ծագում է **յապանջա** (japanca)–**японика**՝ «ճապոնական» ձևից, որը հայերենում դարձավ յափնջի կամ **յափունջի**:

գ) **Մայկա** – Միթե միայն մայիսին պիտի հագնենք սպորտային տիպի տրիկոտաժե գործվածքից ներքին կամ արտաքին անթև, կիսաթև կամ բերքով զգեստ (շապիկ): Ծագում է ռուսերենի маѣ + ка՝ «մայիսյան» բառից, ֆրանսերեն՝ mayo:

դ) **Կինոն** – ճապոնական խալաթանման վերնազգեստ, որ հագնում են և իզական, և արական սեռի անձինք:

զ) **Գազ** – շատ նուրբ մի հյուսվածք՝ շղարշ, որի անվանումը ենթադրվում է Պարսեստիհի Գազա բնակավայրի անունից: Ոմանք ենթադրում են ավելի շուտ արաբերենի kazz՝ «մետաքսի հունք» բառից:

է) **Բուխարկա** – Բուխարայում արտադրվող մի կտորի տեսակ (նաև գլխարկի ձև):

ը) **Շոտլանդկա** – վանդակավոր նախշերով գործվածքը նախապես հարզի է եղել հեռավոր Scotland-ից՝ Շոտլանդիայից, որի պատճառով էլ և ներմուծվել է այն զանազան ժողովուրդների մոտ՝ ստանալով **շոտլանդկա**՝ «շոտլանդական» անունը՝ անկախ գործվածքի նյութից (կտավից, բրդի, թե արիեստական թելերից):

թ) **Շամ կամ շամի** – հայկական ժողովրդական երգերում այլ թանկարժեք կամ տարաշխարհիկ կտորեղենի հետ հիշատակվում է նաև **շամ** կամ **շամին**. «Շամ՝ կուզես, թե՛ կուքնի պիրես...»: **Շամը** կամ **շամին** բաց դեղնավուն մուգ մետաքսե թելերով մի կտոր էր, որն արտադրվում էր Դամասկոսում: Իսկ ինչո՞ւ **շամի**, որովհետև **Դամասկոս** ավելի շատ տարածված էր իր երկրորդ անվամբ՝ **Շամ**: Ռուսերենում **шамскый**:

ժ) **Միտկալ** – հայերենում, ռուսերենում, ֆրանսերենում և մի շարք այլ լեզուներում գործածվում է **միտկալ** կտավի կոչու տեսակ նշանակող բառը, որի ծագումը ենթադրվում է, որ կարող է լինել պարսկերենից, ուր գտնում ենք mitakali ձևը:

ժա) **Ֆիլտեքոս, ֆիլդեկոս** բառն իհարկե ավելի շատ կանանց բառապաշարում էր գործածվում դարասկզբին, մինչև կապրոնե, մեյլոնե գուլպաների հայտնվելը: Ահա կարդում ենք Գրիգոր Զոհրավալի մոտ. «Ան **ֆիլտեքոս** գուլպան կընդգրկեր մինչև ծնրակապն ու անկե անդին»: Որտեղի՞ց է հայտնվել այս բառը, իհարկե մոդաների երկրից՝ Ֆրանսիայից, ֆրանսերենից, ուր այն հնչում է fil d'ecosse՝

«շուտամոտական թել»։ Այսպես՝ էր կոչվում մետաքսաման ողորկ և բամբակե թելով գործված գուլպան կամ կտորը։

361. ԳՈՐԵԼԵՆ

Գորելեն՝ «պատկերանկար գորգ» բառը աշխարհի ժողովուրդների լեզվում հայտնվել է 17-րդ դարում։ Այն տարածվեց Փարիզից 1662 թ. հիմնված Գորելենների ազգային մանուֆակտուրա թագավորական ֆաբրիկայից։ Դիմնադրի անունն է Կոլբեր, նրանց տոհմը ծագում էր Ռեյմսից։ Նրանց տոհմը հայտնի էր ներկարարությամբ։ Նախապես այդ հիմնադրված ֆաբրիկան, որ տեղավորված էր հյուրանոցում, արքունիքի համար կառույց էր արտադրելու, սակայն գորգերի նկատմամբ եղած հսկայական հետաքրքրությունը հետևի պլանի վրա մղեց կահույքի արտադրությունը։

ա) **Պարուսին** – ամուր և ձիգ գործվածքի կտավ է, որից առագաստներ են պատրաստում։ Միաժամանակ նրանից կարում են անառային կոստյումներ։ Պարուսինը ծագում է *парус*՝ «առագաստ» և «и» ածանցից, այսինքն՝ «առագաստի, առագաստային»։

բ) **Տրիկո** – բրդյա կտոր՝ նախշավոր, ծագում է ֆր. *tricot*՝ «շյուղերով գործված, հյուսվածք» բառից։

գ) **Տրիկոտաժ** բառը ծագում է ֆրանսերենի *tricotage*՝ «հյուսել» բառից, մեքենայով հյուսված գործվածք է կամ այդ գործվածքից սպիտակեղեն, հագուստ։ Այն առածական հյուսվածք է և շատ գեղեցիկ ընդգրկում է մարմինը։

դ) **Կրեպ** – ծագում է ֆրանս. *crepe*՝ «սանրել» բառից, անհարթ մակերեսով մետաքսե կամ բրդյա կտոր։ Կրեպ-ից են ծագում նաև.

ե) **Կրեպ ժորժեն**

զ) **Կրեպդեշին** – *crepe de Chin*՝ «չինական կրեպ» ամուր և նուրբ անփայլ մետաքսե կտորի անվանումը։

է) **Չեչունչա-չեսունչա, չեսուչա, չեսունչի**, որ ծագում է *чечуныча* բառից աղավաղված, դեղնավուն-ավազազույն մետաքսե գործվածքի անունն է։ «Մոտ քառասուն տարեկան մսեղ մարդ էր... Բաճկոնի տակ հազած չեսունչի արխալուղով» (Ե)։

զ) **Վուշ, վուշե, վշյա** – կտավահատից, քաթանից գործած կտոր։ «Անդին ճերմակեղեններ վուշե» (ԳԾ)։

թ) **Քաթան** – կտավատից հյուսված կտոր, կտավ։ «Մի երկու արշին **քաթան** տուր» (ԱԲ)։

ժ) **Լահորի, լաֆուրի, լառոփ շալ** – Չապել Եսայանը գրում է. «Մորաքույրս ծածկվել էր **լառոփ** շալով»։ Գնդկաստանի (այժմ՝ Պակիստանի) Լահոր քաղաքում գործվող բրդյա շալ։ Այն հայրեններում երգում էին.

Կապեցի լաֆուրի շալ գոտիս
Կանաչ ու կարմիր **քեմխաս**...

ժա) **Քեմխա** – թանկարժեք ազնիվ կտորի տեսակ, որը թերևս արտադրվել է **Կանախում**։ Այն հիշատակվում է միջնադարյան Այնա հայրեններում։

ժբ) **Կերպաս** – նուրբ մետաքսե կտավ, որը հիշատակվում է սանսկրիտում *karpas*՝ «բամբակենի», պարսկերենում *kirpas*, արաբերենում *kirbas*, մինչև Իսպանիա տարածված անուն է. հանդիպում է այն նաև լատիներենում՝ *carbasus* ձևով։

ժգ) **Մահուղ, մահուղյա, մահուղե** – բրդյա հաստ խավովո գործվածք։

Դ. Թումանյանը գրում է՝ **մահուղ** չուխա։ Արուսյանը հազնում էր **մահուղե** վերարկու։

ժդ) **Մահուղյա չիթ** – բարակ ծաղկավոր կտոր։ Անունը հուլանդերենի *sits* բառից է ծագում. սա էլ սանսկրիտի *sitras*՝ «խայտարղետ» բառից։ Պատրաստում են միտկալից՝ երփներանգ ծաղկանկարներով դաջելով (ռուսերեն՝ **ситреу**)։

362. ԱՆԹԱՐԳԱՆԵԼԻՆԵՐԻՑ ԵՎՍ ՄԻ ԶԱՆԻՍԸ

ՀԵՆՏ ԱՅՆՊԵՍ ՈՉԻՆՉ ՉԻ ԼԻՆՈՒՄ... ԽԱԴԻ
ԱՆՈՒՆ ԻՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍ ՆՊԱՏԱԿԻ
ԱՆՈՒՆ Է

1. **Ֆուտբոլը**, կարելի է ասել, անենատարածված սպորտային խաղն է աշխարհում։ Այս բառը ծագում է անգլերենի *foot*՝ «ուրթ» և *ball*՝ «գնդակ» բառերից։ Այս բառից են կազմվել **ֆուտբոլիստ, ֆուտբոլասեր, ֆուտբոլային** բառերը։

2. **Գոլ** – անխզելիորեն **ֆուտբոլ** բառի հետ է կապված նաև **գոլ**-ը, որը նույնպես այս խաղի հետ աշխարհի լեզուներին անցավ անգլերենից։ **Գոլ խիել, գոլային պահ, գոլապահ** բառերը նոր բառեր են հայերենում, և ոչ մի հաջող թարգմանություն չի կարող ծածկել **գոլ**-ի ու նրանով կազմված բառերի իմաստը։

3. **Ստադիոն** – մրցումների, սպորտային խաղերի համար հատուկ չափերով սարքավորված հրապարակ, որ շրջապատված է հանդիսատեսների նստարաններով։ Բառը հունարենից է ծագում, որտեղ *station* նախապես նշանակում էր «600 ոտնաչափ կամ 125 քայլ», հետագայում՝ «ասպարեզ, մրցարան»։

4. **Եթե չեմպիոն ես, ապա նաև մարտիկ ես**։

«Դայերս պարծենում ենք, որ աշխարհի շախմատի չեմպիոններից մեկը հայազգի Տիգրան Պետրոսյանն է։ Աշխարհի շախմատի առաջնության չեմպիոնատը տեղի ունեցավ Եվրոպայում»։ **Չեմպիոն, չեմպիոնատ** բառերը ունեն թեև անգլիական ծագում (անգլ.՝ *champion*), սակայն դրանց հիմքում ուշ լատիներենի *campio*՝ «մարտիկ» բառն է։ Ուրեմն, այսօր **չեմպիոն** մեքեն գիտակցում ենք որպես մրցումներում «հաղթող, առաջին», մինչդեռ նրա իրական(նախնական) իմաստն է եղել «մարտիկը»։

5. **Լոտո** – ֆրանսերենի *loto* և իտալերենի *lotto* բառերը ենթադրում ենք, որ ծագում են գոթերենի *hlauts*՝ «վիճակ» բառից։ Ուրեմն **լոտո**–ն ավելի շատ վիճակահանության, բախտի խաղ է, քան ուժի և հնտության։

6. **Դոմինո** – ո՞վ չի խաղացել **դոմինո**։ Բայց մտածե՛լ եք արդյոք, թե ինչու է այն կոչվում **դոմինո**։ Բայց ես պարտավոր եմ բացատրել, թե ինչու է նման անվանում տրվել այս խաղին։ Դիշենք խաղի նպատակը, խնդրե՛ք։ Այն է՝ պետք է ավելի արագ, շուտ վերջացնել վերցված «քարերը»։ Ով առաջինը վերջացնում է քարերը, նա էլ դառնում է «տիրող, տիրակալ, հաղթող», և քանի որ լատիներենում **տիրող**,

տիրակալ անձը կոչվում էր dominus, իսկ խաչերենում՝ domino, այդպես էլ խաղի անունը մնաց դոմինո:

7. **Դամա** – կա ժամանցի համար ևս մի խաղ, որ կոչվում է դամա: Իսկ ինչո՞ւ դամա: Կապ ունի՞ արդյոք գեղեցիկ սեռի՞ **դամաների** հետ այս խաղի անունը: Պարզվում է՝ այո: Քանի որ այս խաղը առավելագույն կանանց համար էր նախատեսված: Այսպիսի դարձվածք կար՝ jeu des dames կամ jouer aux dames, այդ իսկ պատճառով էլ խաղին «կպավ» դամա անվանումը, չնայած ճշմարտության դեմ եղած մեղանցման, քանի որ ավելի շատ տղամարդիկ են խաղում այս խաղով, քան թե կանայք, բայց ո՞ր կազմակերպությունը համձնառու կլինի «ուղղել» նման անարդարությունը:

8. **Շաշկի** – շախմատի տախտակի վրա խաղացվող **շաշկի** կոչված խաղի անվան ծագումը վիճելի է: Ոմանք ուզում են կապել Չյուսիսային Կովկասի ժողովուրդների լեզվում գոյություն ունեցող **շաշկա՝** «թուր» բառի անվան հետ, որպես թե քարերը շեղակի՝ թրի մնաց կտրելու նմանությամբ, ոմանք էլ հենց **շախմատի շախ** կամ **շախակի** տերմինի աղավաղման հետ...

9. **Ճատրակ** – արևմտահայերենում է միջին դարերում շախմատը անվանում են **ճատրակ**, որը ծագում է հին հնդկերենի **ճատար անկա՝** «չորս անկյուն» բառից: Արաբերենի միջոցով խաղը և անվանումը տարածվել է շատ երկրներ:

10. **Շախմատ** – հայերենում երկրորդ անգամ ճատրակը հայտնվել է **շախ մատ** ձևով, որը պարսկերենի **շախ՝** «բազավոր» և **մատ՝** «մեռավ» բառերից է կազմաված: Շահմատ–ի փոխարեն **շախմատ** ձևը ռուսերենից փոխ առնելու պատճառով է, որտեղ բացակայում է հ հնչյունը:

363. ԵԱՏԻԿԻՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ԴԵԿ ԿԱՍ ՍԱՏԱՆԱ, ԱԼՔ ՈՒ ՔԱՋՔ

Նոր գաղափարների հաղթանակից հետո հասարակության հին կուռքերը դեն են չպրտվում, ինչպես Աստվածաշունչն է ասում՝ Նոր գինին հին տիկերի մեջ է լցվում:

Նոր կրոնները հերքում են հին աստվածներին ու կուռքերին՝ համարելով նրանց դևեր, սատանաներ, սաղայելներ, պիղծ և ինքնակոչ, մոլորեցնող ուժեր՝ հաստատելու համար իրենց օրինակյան պաշտամունքը՝ որպես ամօտետի աստվածային իշխանություն:

Այսպես է փառաբանվել յուրաքանչյուր Նոր կրոնի աստված, որպեսզի մերժվի հինը, հինը համարվի չար ուժ, պիղծ, հակառակ բանականությանը և այլն:

ա) **Դև:** Ահա հին հնդիկների մոտ devas «աստված» էր նշանակում, հուն.՝ dios, այստեղից՝ լատիներենի divus՝ «աստվածային» բառը: «Ավետսան» համարում է daeva–ին «դև»: Այստեղից էլ՝ պարսկերենում արդեն dev–ը «չար ոգի, սատանա, դև» է, որից էլ՝ devana՝ «դիվահար», դիվանա՝ «խենթ, հիմար»: **Դև** բառը անցել է նաև հայերենի բառապաշարի մեջ:

բ) **Բագ/րոզ –բագ–ը** նույնպես աստծո անուն է եղել, որին պաշտում էին հին հնդիկները, պարսիկները: Սանսկրիտում bhaga նշանակում էր «բաշխող, բաժանող, նվիրող», դրանք էին Արեգակը, Լուսինը, Սիվա աստվածը: Աստիճանաբար բագա–ն դարձավ «աստված, թոզ», ռուս.՝ **бог**, պահլ–պազենդ, bay, հին պարս.՝ бага և այլն:

Պայտանումն նույնպես տարածվեց **բագի** պաշտամունքը, որի հետքերը մնացին **Բագարան, Բագին, Բագայառիճ** տեղանուններում ու **Բագարաւ**՝ «Աստվածատուր» անձնանվան մեջ: Սլավոնականներում **богатыи՝** «հարուստ», **убогий՝** «աղքատ», կազմված են նույն արմատից: Հիշենք, որ ռուսերենի օ–ին համապատասխանում է հայերենի ա–ն, օր.՝ **օւի**–աչք, **օկո**–ակն:

364. ԻՍԿ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԱՆՈՅԱՆՆԵՐԻՆ ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԿՈՉԵԼ՝ «ԱԿԱՌԱ՞Կ»

Այսօր մեր բառապաշարում կան բազմաթիվ բառեր, որ թվում են հայերեն, սակայն չեն թարգմանվում հայերենով, դրանց թվում են նաև **աստանա** կամ **աստան**, **սաղայել** բառերը: Դեռևս միջնադարում մեր աստվածաբանները և քերականները գիտին հիշյալ բառերի ծագումը և նրանց բացատրությունը երբայերեն լեզվով. «Աստանայ ըստ երբայեցուց բառիցն **հակառակ** թարգմանի» («Հաճախապատում»): «Եւ ամենայն, որ բարոյ հակառակ կայ, **աստանայ** անուանի»: Հայերենում և **աստան** ձևն է ավանդված, որ երբայերենից է և **սատանայ**, որ ասորերենից է, իսկ արաբերենում այն հնչում է **շայթան**: Աստվածաշնչի հունարեն օրինակում **սատանան** թարգմանվում է հաճախ **դիաբոլոս** (Diabolos), որից էլ՝ ռուսերենի **դյավոլը (дьявол):**

Նույնպես **սաղայելը**, որ հաճախ հայկական հեթաթեոներում որպես դևերի զլխավոր կամ թագավոր է հանդես գալիս, երբայերենում նշանակում էր «Աստծո հակառակ», **սաղա՝** «հակառակ» + էլ՝ «աստծո», այսպես էլ մեկնում էին հայ աստվածաբանները ու Սուրբ գրոց մեկնիչները. «Ես եմ **սատանայ**, որ և կոչի անուն ինձ **սաղայել**» (Վարդ հարանց, ԾԹ):

365. ԻՆՉՈՒ ՔԱՋ ԱՍՏՎԱԾԸ ԴԱՐՉԱԿ ՍԱՏԱՆԱ-ՔԱՋ...

Գրաբարի բառարանները **քաջ** բառը երբեմն նույնացնում են **դիք**–ի հետ, ի թիվս նրա բազմաթիվ նշանակությունների (**դյուցազն, քաջազն, հերոս**): «Գա ի վերայ ջո Բել՝ հավերժիք **քաջօք** (խոր. Ա10)»: Արտաշես թագավորի անձեռն ուղղված որդուն՝ Արտավազդին. «Զքեզ կայցին **քաջք**, տարցին յկզատն ի վեր ի Մասիս»: Որպես հզոր ոգիներ են այստեղ **քաջքերը** ներկայանում: «Զգիտիցես դու զքեզ **քաջ**, քան զԱստուած...»: Ու դարեր անց հեթանոսական աստվածակաճառից աստիճանաբար մոռացվեցին բազմաթիվ աստվածներ ու ոգիներ, ինչպես և **քաջքը**, ու հանկարծ միջնադարում **քաջք**–ն արդեն համարժեք է դառնում **դև**–երին, **սատանա**–ներին ու **այլք**–երին: «Դևք, սատանա, **քաջք** և այլն, յորոց անեն հոգիք հայիւն...»:

Եվ այսպես, **քաջ** բառը, որն ուներ «ընտիր, առավել, լավ, բարձր, հմուտ, ազնիվ, վսեմ, անվախ» նշանակությունները, հավասարվում է **դևերին այլքերին, սատանաներին** և այլ բացասական ոգիներին, որովհետև Նոր կրոնը մերժում էր հին աստվածակաճառի աստվածներին ու ոգիներին:

366. ԱՐԱՄԱԶԴ

(Այս մասին տե՛ս նաև § 294)

Մենք այս աստծո անունը վերցրել ենք պահլավերենից՝ Ahura-mazda՝ մեծ՝ Ah ura բառից, որը հայերենում դարձավ **արամազդ**: Մազդա՝ «մեծ» իմաստով բառը մնում է դեռ ժողովրդական մաստ ասելով՝ «մեծ, մախաթ, ասելով» բառի մեջ:

367. ԿՈՊԻԱ ԿԱՍ ՊԱՏՃԵՆ: ԿՈՊԻԱ ՀԱՆԵԼ ԵՎ

ՊԱՏՃԵՆԵԼ ԵՎ ԿՈՊԻԱ ԿՈՄՍ ԵՎ ԱՌԱՏԱՏՆԵԼ,
ԲԱԶՄԱՏՆԵԼ

Հին Հռոմում բազմաստվածություն էր, և ամեն երևույթ ուներ իր աստվածը: **Կոպիան** (copia) համարվում էր առատություն տվող, շատացնող, բազմացնող աստվածուհի: Երբ քրիստոնեությունը դարձավ մեկ աստվածության պաշտամունքի կրոն, հին աստվածների հետ աստիճանաբար մոռացվեց նաև **Կոպիայի** անունը: Սակայն առատության, բազմացման երևույթը մնաց կապված նրա անվան հետ եվրոպական լեզուներում, օր.՝ ֆր., իտալ., ռուս.՝ **копи** «պատճեն», **копировка** «պատճենահան թուղթ» կամ «բազմացման թուղթ» և այլն:

368. ԿՈՒԿԱՆ, ԴՈՒ ԻՆՉՊԵՄ ԵՍ ԱՊՐՈՒՄ

ԱՎՏՈՂՈՂԵՐՈՒՄ

- Դու ի՞նչ ես անում ավտոմեքենայի ծակված կամերաները:
- Ինչպե՞ս թե, տալիս եմ **վուկանիզացիայի**, հո չե՞մ դեմ նետում:

Լսելով նման մի խոսակցություն սեփական ավտոմեքենա ունեցողներից՝ ո՞նանք կարող են մտորել, թե ինչու է ռետինե կամերա կայցնելը կոչվում **վուկանիզացիա**:

Հռոմեական առասպելաբանության մեջ **Վուկանը** կրակի, դարբնության հովանավոր աստվածն էր: Հետագայում հրաբուխները կոչվեցին **վուկաններ** ենթադրելով, որ ժայթքող ստորգետնյա կրակները կապ ունեն նրա հետ: Տեխնիկայի զարգացման հետևանքով մարդիկ սովորեցին ջերմային մշակմամբ բնական **կաուչուկից** ռեզին ստանալու տեխնոլոգիան, որն էլ անվանվեց դարձյալ **Վուկանի** անվամբ՝ **վուկանիզացիա**: Եվ ոչ միայն ռետին կամ ռեզին ստանալու պրոցեսը, այլև կամերաներ կայցնելը նույնպես կոչվեց **վուկանիզացիա**: Ուրեմն աստված Վուկանի օգնությունը մարդկանց դեռ չի չքացել, այն ներգործում է դարերի խորքից:

369. ԻՆՉ ԻՍԱԼԱՅԻՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ...

1. ԽԵՂԵ ՎԵՆԵՐԱ, ՈՐՆ Ե ՄԵՂԵ ԶՈ

Հին Հռոմում **Վեներան** (Venus, սեռական հղ.՝ Veneris) գարնան, պտղաբերության, սիրո աստվածուհին էր, որը նույնացրին հետագայում հունական Աֆրոդիտեի հետ, իսկ հայերս նույնացրինք նրան հայկական Արուսյակի հետ:

1527 թվականին Բետանկուրն առաջարկեց սեռական հիվանդություններն անվանել **վեներական**: Ահա և այսպես «քնշացվեց» ասելով **սիֆիլիսը**՝ անվանվելով **վեներախտ** և **վեներական** հիվանդություն: Թեև այդ հիվանդությունները չորսն են, սակայն դրանցից ահավորը **սիֆիլիսն** է:

2. ԱՆԱՅԱՅՈՒՄ ՍԵՆԱԿԱՆ ԳԻՎԱՆՈՒԹՅԱՄ

Սիֆիլիս բառն առաջացավ իտալացի բժիշկ Ջ. Ֆրակաստորոյի «Siphilis sive de morbo callico» («**Սիֆիլիս** կամ ֆրանսիական հիվանդություն») պոեմի անվանումից: Պոեմի հերոսը սեռական ախտով տառապող ոմն հովիվ Սիֆիլուսն է. այստեղից էլ՝ **սիֆիլիսը**, ինչպես կոչում են վեներական հիվանդություններից ամենավատը: Այս է պատճառը, որ հայերենում նաև **սիֆիլիսը** անվանվում է **ֆրանկախտ** կամ ֆրանսիական հիվանդություն:

370. ԶԱՍԻՆԵՐԻ ԱՍՏՎԱԾՈՒԿԻ ԷՆԼ, ԵՎ ԱԳԻՐ ՏԱՎԻՂԻ ԱՌԱՆՑ ՍԱՏՆԵՐԻ

Տավիղներ աշխարհում շատ կան: Հին Հունաստանում **տավիղի** մի տեսակ կար, որն անվանում էին **էույան**: Իսկ ինչո՞ւ **էույան տավիղ**: Որովհետև այդ **տավիղները** առանձնահատուկ էին. նրանց վրա ոչ թե մատներով էին նվազում, այլ **քամիով**: Իսկ քամին նույն ինքը՝ **էուլ** էր: Այդպիսի տավիղներն ունեին 9–13 լարեր, որոնց եռանկյունի շրջանակն ամրացված էր արկղի վրա, և տավիղն էլ՝ լուսամուտի շրջանակին կամ տանիքի վրա: Երբ քամին փչում էր, հատկապես գիշերային լուսյան մեջ, **էույան տավիղի** լարերը աղիոզորմ թթթում էին, լալազին ծայերը հանում, իսկ մարդկանց թվում էր, թե ինքը՝ **էուլ** էր նվազում...

371. ԴՐԱԽՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Էդին, Եդեն: Միջագետքի հին ժողովուրդների մոտ **դրախտի** մասին գոյություն ուներ նաև հավատալիք, և հետևաբար գոյություն ուներ նրա անունը: Եդեններն ու արքադացիներն այն անվանում էին **էդին**: Երանցից այս բառն անցավ հույներից **Եդեն** ձևով: Իսկ Աստվածաշնչի թարգմանության հետ միասին հույներից այս բառն անցավ աշխարհի շատ ժողովուրդների բառապաշարին: Հայերենում ոչ միայն ունենք **Եդեն**, այլև նրանից կազմված **Եդենական, Եդենային Եդենաբուխ** և այլն:

372. ՈԱՅ

Ռուսերենում րա՞յ նշանակում է «դրախտ»: Որտեղի՞ց հայտնվեց այդ բառը ռուսերենի բառապաշարում: «Ավետալուսն» հանդիպում ենք րա՞յ բառին, որը նշանակում է «հարստություն, երջանկություն»: Հետագայում այն լիակատար երջանկության նշանակությամբ սկսեց գործածվել: Եվ այդ իսկ իմաստով էլ հանգրվանեց ռուսերենի բառապաշարում:

373. ՊԱՐԱԴԻԶ

Եվրոպական բազմաթիվ լեզուներում գործ է ածվում paradis բառը, որ նշանակում է «դրախտ»: Սա նույն հայերենի պարտեզ բառն է, որոնք երկուսն էլ փոխ են առնված Աբեմնեյան պարսկերենից: Ի դեպ, pairi daeza, հին պահլավերենում՝ «շուրջը դիզել» ծևով է գտնվում «Ավեստայում», հետագայում pair: Daeza կապակցությունը միաձուլվեց և դարձավ մեկ բառ՝ paradis > paradez:

374. ԴՐԱՄՏ

Հայերենի դրախտ բառը նույնպես պարսկական ծագում ունի, ուր diraxl նշանակում է «ծառ», ֆիր դաուզի—firdaus՝ «ծառաստան», ասուր․ paradisu:

375. ԲԵՀԻՇՏԻ

Պարսկերենից է նաև միջին հայերենում գործածված բեհիշտի—ն: «Բեհիշտի խնձոր»... պարս. behisti կամ bahisti՝ «դրախտային»:

376. ՏԵՆԵԱՑ

Ըստ մահմեդականների սուրբ գրքի՝ Դուրանի՝ հանդերձյալ կյանքում արդարները արժանանում են Ալլահի ջեննաթին, ուր ջրի փոխարեն կաթ էր հոսում, և մերկ հուրիները մատուցում էին շարբաթ: Ջեննաթ բառը նշանակում է «այգի», հիշենք «Աբու Լալա Մահաբուրց».

«Բաղդադն էր նիրհում ջեննաթի շքեղ, վառ երազներով...»: (Ավ. Իսահակյան)

Անթարգմանելի

377. ԻՆՉՊԵՍ ՍԱՐԴԿԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐԻՑ ԵՆՎԵՑԻՆ ԲԱՌԵՐ՝ ԴԻԶԵԼ, ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹ, ԴԻԶԵԼԱՅԻՆ ՇԱՐԺԻՉ

Չպատճենվող կամ հայերեն համարժեքը չունեցող բառերի թվին են պատկանում դիզելային վառելանյութ և այս բառի հիմքը կազմող դիզել բառերը: Այն ծագում է հատուկ անունից: Գերմանացի գյուտարար Ռ. Դիզելը հորինեց ոչ բենզինով աշխատող շարժիչ, որն իր անվամբ (ազգանվամբ) էլ կոչվեց դիզել: Այստեղից էլ դիզելային շարժիչ, դիզելային վառելանյութ, դիզելային մոտոր արտահայտությունները, որոնք պատճենելու կամ թարգմանելու, թվում է, հարկ չունեն:

378. ՎՈՒՆՏ, ՎՈՒՆՏԵՏՐ

Քաղաքային էլեկտրացանցի լարումը սովորաբար լինում է 220 վոլտ: Ռոտերդից եկավ այս բառը: Իտալացի Ալեքսանդրո Վոլտան 1800թ. հայտնաբերեց էլեկտրական լարվածության չափի միավորը, որը ի պատիվ նրա կոչվեց վոլտ: Իհարկե այդ բառից էլ վոլտմետր չափիչի անվանումը: Սա նրա միակ գյուտը չէ, նա է հայտնաբերել նաև առաջին քիմիական հոսանքի աղբյուրը:

379. ԱՄՊԵՐ, ԱՄՊԵՐՄԵՏՐ

Միայն վոլտով չի որոշվում հոսանքի ունեցած չափումները, նաև օհմով և ամպերով: Էլեկտրական հոսանքի ուժի, ինչպես նաև մագնիսաշարժման ուժի (ամպեր փաթույթի) միավորը կոչվել է հայտնաբերողի՝ Անդրե Մարի Ամպերի անվամբ 1820 թվականից: Չափող գործիքն էլ կոչվեց ամպերմետր: Հաճախ ենք գործածում Ամպերի օրենք, Ամպեր—ժամ, Ամպեր—փաթույթ, Ամպեր—կշեռք և այլն: Խոսքի մեջ օգտագործում ենք իքս ամպեր—ժամ, հարյուր ամպեր ժամ և այլ նման արտահայտություններ, որոնց մեջ հանդիպող օտար բառերը հազիվ թե թարգմանելու կարիք ունենան:

380. ՏՈՒՒԼ ԵՎ ՏՈՒՒԼ-ԼԵՆՑԻ ՕՐԵՆՔ

Էներգիայի և ջերմության միավորը, 1848 թվականից սկսած, ընդունված է գիտության մեջ կոչել հայտնաբերողի անվամբ՝ ջոուլ (Ջեյմս Պրակոտ Ջոուլ), անգլիացի ֆիզիկոս (1818—1889): Կա նաև Ջոուլ—Լենցի օրենք, որով հոսանքալարում հոսանքի անցման ժամանակ ստացվող ջերմության քանակն է չափվում, որը կրկնակի ուղիղ համեմատական է անցնող հոսանքի ուժին:

381. ԻՆՉ Է ՍԵԿ ՏՈՐԸ

Իտալացի ֆիզիկոս և մաթեմատիկոս Էվանգելիստա Տորիչելլին, ի թիվս այլ աշխատանքների, մշակել է մթնոլորտային ճնշման տեսությունը: Երա պատվին է տրված **տորի միավորը** որպես ճնշման միավոր (օդի և այլն): Այն հավասար է մթնոլորտի 1/760 մասին:

382. ՕՃՍ: ՕՃՍԻ ՕՐԵՆՔԸ

Էլեկտրական լարվածության շրջայի միավորն է հաստատուն հոսանքի համար, որ կոչվում է գերմ. ֆիզիկոս Գ. Ս. Օհմի անունով (1826թ.):

383. ՎԱՏՏ-Ը

— Չեր էլեկտրական հաշվիչը քանի՞ վատտանոց է, — երբեմն հարցնում ենք միմյանց.— **հեկտո՞ւ, թե՞ կիլովատտանոց է:**

Միջազգային այս տերմինի առաջացումը անգլիացի Ջեյմս Ուատտի անվան հետ է կապված, որը հնարեց շոգու ուժով աշխատող մեքենան: Գիտության մեջ **վատտը** հավասար է այն հզորությանը, որի դեպքում 1 վայրկյանում կատարվում է 1 ջուլ աշխատանք: **Վատտով** են չափում նաև էլեկտրական շրջայի 1 վոլտ մեխանիկական հզորությունը:

384. ԿԱՅՍՐ - ԿԵՍԱՐ

Կայսր և կեսար բառերը ծագում են միևնույն բառից, սակայն մուտք են գործել հայերենի քառապաշարի մեջ տարբեր լեզուների միջնորդությամբ և տարբեր ժամանակներում: Աստվածաշնչյան հայտնի արտահայտությունը հիշենք՝ «Կեսարինը կեսարին, Աստծունը՝ Աստծուն»: **Կայսր և կեսար** բառերը ծագում են հռոմեական թագավոր Caesar-ի անունից: Գայերենում ավելի շատ տարածված է կայսր ձևը, որից էլ՝ **կայսերական**, սեռական գրաբարյանն է՝ **կայսեր (կայսեր** հրամանով և այլն):

385. ԿԱՐՈՒ, ԿՐԱԼ

Ֆրանսիայում իշխող **Կարոլինգների** դինաստիայի առաջին ներկայացուցչի անունը Charlemagne, հետագայում դարձավ **թագավոր, արքա** բառին համարժեք: Եվրոպայում տարածվեց **կորոլ**, ռուսերենում **կորոլ**, Գարավելավիայում՝ **կրալի**, թուրքերենում՝ **քրալ**, իսկ **թագուհին**՝ **քրալիչա** և այլն:

386. ԽԱԼ

Թագավոր նշանակությամբ սկսեցին գործածել նաև **խան** բառը, որը չինական ծագում ունի: Օրինակ՝ **Չինգիզ խան**, **Բաթու խան**: Սայաթ-Նովան գործ է ածում. «Սուլթան ու խան իս ինձ անա»: Այն ծագում է չինական **Լյու Բանի** հիմնադրած թագավորական դինաստիայի ժամանակներից (մ. թ. ա. 209–200 թթ.):

387. ՕԳՈՍԱՓԱՌ, ՕԳՈՍԱ, ՕԳՈՍԱԿԱԿԱԼ

Օգոստափառ, **օգոստա**, **օգոստական** բառերը մեծ տարածում ունեին միջնադարյան հայկական ձեռագրերում: Օրինակ՝ «Վարք հարանցում» կարդում ենք. «Օգոստա տիրուհի (կամ **օգոստական**)»: Երվանդ Օտյանը գրում է. «Մեր **օգոստափառ** տերը կիրամայե»: Իսկ Լեոն. «Կգա Մոսկվայի **օգոստափառ** տանից մի մեծ իշխան»: Լույսիակ գործ են ածվում **օգոստափառ հունիս** և նման այլ արտահայտություններ:

Ինչպե՞ս առաջացավ այս բառը: Դռնում սկսեցին աստվածացնել կայսրերին: Սենատը (ծերակույտը) **Օկտավիանոս կեսարին** տվեց պատվավոր տիտղոս՝ Augustus (**Օգոստոս**), այդպես որոշվեց կոչել նաև տարվա ամիսներից մեկը: Միա այսպես առաջացան հայերենում **օգոստափառ**, **օգոստա**, **օգոստական** բառերը, որոնք նշանակում են «**Օգոստոսի** նման փառապանծ, վսեմաշուք»:

388. ԽՈՍՐՈՎԱՅԻՆ

Միջին դարերում հաճախ էր օգտագործվում **խոսրովային** մակդիրը. «Կանգնեցին թուրգն **խոսրովային**», «Եվ թուրգն ամենայնք **խոսրովայինք**»: **խոսրովային** բառը նշանակում է «արքայական, թագավորական շքեղությամբ»: Ծագում է բառը պրս. Xusrav՝ **խոսրով** թագավորի անունից, որից էլ՝ xusravana՝ «թագավորական արքա»:

389. ՍԵՆԴՎԻՉ, ԲՈՒՏԵՐԲՐՈ՞Տ, ԹԵ՞ ԲՐԴՈՒՃ

«Վարժատուն, դպարտուն էրթալուս ատեն մայրս հետս **սենդվիչ** կոներ, որպեսզի հոն սոված չկենամ»:

Ողջ Սփյուռքում օգտագործվում է **սենդվիչ** բառը, որը վերցված է անգլերենից, անգլերենում այդպես են անվանում բրդուճի մի տեսակը, երչիկով, պանրով կամ մեղեղնով հացը: Գետաջրփոր է բառի ծագումը. քմահաճ Լորդ Սենդվիչը ուտելիքները մատուցել էր տալիս իր խաղասեղանին: Բնականաբար այնպես պիտի մատուցվեր ուտելիքը, որպեսզի չթափվեր և մեծ տեղ չզբաղեցներ, այսինքն՝ չլիներ ջրայի: Միա նրա անվանը էլ սկսեցին կոչել նման **բրդուճ**:

390. ԳԱԼԻՖԵ

Տղամարդու անդրավարտիչի տեսակ է, որը հետագայում դարձավ զինվորական համազգեստ: Ազդերի մոտ, զրպանների տեղում լայնացված է, իսկ սրունքների մոտ նեղացված է, որպեսզի դյուրությամբ մտնի երկարաճիտ կոշիկների մեջ: Ծագում է ֆրանսիացի գեներալ Մարկիզ դը Գալիֆեի (1830–1909) անունից, որը դաժանորեն ճնշեց Փարիզի Կոմունան 1871 թ.: 1899–1900 թթ. Ֆրանսիայի ռազմական նախարարն էր:

391. ՋԱԶ, ՋԱԶՄԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի ոչ մի լեզվում մինչև 20-րդ դարի 20-ական թվականները **ջազ** բառը չի եղել: Ամերիկացի նեգր երաժիշտ **Չարլզի** անունը 1912 թ-ից արվավղվելով դարձավ **ջազ** (Charles>jazz): Գետազայում արդեն որպես հասարակ բառից կազմվեցին ջազբանդ (jazzband), ջազմեն (jazzman) և նման այլ բարդություններ:

392. ԽՈՒԼԻԳԱՆ, ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գասարակական կարգի կոպիտ խախտումը, հասարակությանը կամ անհատներին վիրավորելը, կոպտելը, հայիոյելը, ծեծկռտուք սարքելը, ընդհուպ մինչև զենքի կիրառումով բռնանալը կոչվում է **խուլիգանություն**: **խուլիգանությունը** քրեական օրենսգրքով պատժվում է տարբեր պատժաչափերով:

Ընդհանրապես հիշյալ հանցանքներով մարդկանց անդորրը խանգարողներին անվանում են **խուլիգան**: Իսկ ինչպե՞ս է ծագել այս բառը: Անգլիացի Hooligan **Գուլիգանի** անունից, որը հայտնի է եղել իր սադիստական չար արարքներով և անտանելի կոպիտ վարքագծով: Եթե հայերենին այս բառը անցներ անգլերենից, ապա մենք այսօր պիտի ունենայինք **հուլիգան**, **հուլիգանություն** ձևերը, բայց բանի որ միջնորդող լեզուն ռուսերենն է, իսկ ռուսերենում չկա *h* տառը, ուստի և **հուլիգանը** դարձել է **խուլիգան**:

393. ԼԻՆԶԻ ԴԱՏԱՍԱՆ

Լինչի դատաստանի ենթարկել արտահայտությունը ծագում է ռախտ ամերիկացի Չարլզ Լինչի անունից, որը 18-րդ դարում նեգրերի նկատմամբ թույլ տվեց կիրառել առանց դատի նեգրերի հետ հաշվեհարդար տեսնելու, դատաստան կատարելու մահապատժի կամ պատժի ձևը: Գետազայում այսպիսի հաշվեհարդարը կամ դատաստանը սկսեցին կիրառել նաև գիտության և հասարակական գործիչների նկատմամբ: Այն կոչում են նաև **Լինչի հաշվեհարդար**, տե՛ս **Լինչի դատաստան**:

394. ԲՈՅԿՈՏ, ԲՈՅԿՈՏԵԼ, ԲՈՅԿՈՏԻ ԵՆՁԱՐԿԵԼ

Որևէ անհատի, անձի կամ պետության նկատմամբ անհանդուրժողական, թշնամական վերաբերմունց ունենալը, երբ խզում են նրա հետ բոլոր կարգի հարաբերությունները՝ մեկուսացնելու և սասարեզից նրան հանելու նպատակով: Առաջին անգամ այս միջոցը կիրառվել է 1880թ-ից սկսած, կապիտան Ջեյմս Բոյկոտը դարձավ նման մեկուսացման գոհ (to boycott, գերմ.՝ boycottieren) իռլանդական վարձա-

կալների կողմից: Գետազայում որևէ պետության արտահանումն ու ներմուծումը արգելելը և պետությունների խմբակցության կողմից նման խնչընդոտների կիրառումը կոչվեց **բոյկոտի ենթարկել, բոյկոտել**:

395. ՄԱՆՍԱՐԴ

Տան կամ շենքի տանիքի տակ բնակության համար հարմարեցված բնակատարածքն է: **Մանսարդ** բառն առաջացել է ֆրանսիացի ճարտարապետ Ֆրանսուա Մանսարի (Mansart) անունից, որի նախագծած շենքի տանիքների ազատ տարածքները բնակության համար էին նախատեսվում:

396. ՍԱԿԻՆՏՈՇ

«Այսօր եղանակը ամպամած է, **մակինտոշի վերցրու**»,- հիշեցրեց կինը: Բառաբանները **մակինտոշ** բառին տալիս են «անջրանցիկ անձրևանոց» բացատրությունը: Առաջինը շոտլանդացի քիմիկոս **Չ. Մակինտոշը** 1823թ. (Mackintosh) փկնոցը պատեց ռետինանման անջրաթափանց նյութով, որը հետագայում մեծ տարածում գտավ իր անվամբ:

397. ՈՒՆՏԱԳԵՆ

Մինչև 19-րդ դարերի սահմանագլուխը աշխարհի լեզուների բառապաշարում **ռենտգեն** բառը գոյություն չուներ, քանի որ դեռևս չէր կատարվել նրա գյուտը: Գերմանացի ֆիզիկոս Կոնրադ Վիլհելմի **Ռենտգենը** 1895 թ. հայտնաբերեց ռենտգենյան ճառագայթները, որոնք թափանցում են առարկաների ներսը: Գետազայում գյուտը կատարելագործվեց, և նկարելու հնարավորություն եղավ թարանթի վրա պատկերը: Երբ բառեր ստեղծվեցին **ռենտգենից** **ռենտգենոթերապիա**, **ռենտգենախոտրում**:

398. ՄԵԿԵՆԱՍ, ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼԸ ԱՍԵԼ ՍԱՐԴՈՒ ԲԱՆ ԶԵ

«Մեծապատիվ մուրացկաններ» վիպակում հանդիպում ենք այսպիսի տողերի. «Մեծանուններն ալ կիիշեն Բքիսողոմ աղան, երբ գրական մարդ մը անոց մեկնասությունը խնդրե»:

Բառարաններից տեղեկանում ենք, որ **մեկնասություն** նշանակում է «արվեստի, գրականության և գիտության հովանավորություն»: Այն ծագում է շուրջ երկու հազարամյակ առաջ ապրած հռոմեացի մի ազնվական մարդու: **Մեկնասի** անունից, որը սալարուն էր մ.թ.ա. 64-8 թթ. Գոմուս, կայսր Օգոստոսի մտերիմներից էր և կատարում էր նրա դիվանագիտական և այլ հանձնարարությունները: Նա բանաստեղծների, գրողների, արվեստագետների հովանավորն էր, և շուտով **Մեկնասի** անունը դարձավ հասարակ բառ՝ հովանավոր, որից էլ **մեկնասությունը**՝ հովանավորություն:

399. ՍԱՌԳԵՐ

Գերմանացի զինագործ եղբայրներից Պաուլին 1896 թ. ստեղծեց 6, 10, 20 փամփուշտանոց ատրճաճանկեր 6, 35, 7 մմ տրամագծով, որի ազգանունով էլ տարածվեց այդ ատրճաճանկը:

400. ԿԱՐԱԲԻՆ

15-րդ դարավերջին Ֆրանսիայում մի տեսակ հրացան տարածվեց, որի փողը կարճացված էր, ուստի այն կոչվեց **կարաբին** (carabine): Դետազայում տարածվեց այն իտալիայում, Չիլիում և այլն: Ժանդարմերիայի աշխատողներին զինեցին **կարաբին-ճերով**, որի պատճառով էլ նրանց սկսեցին անվանել **կարաբիններ** (այսինքն **կարաբինավորներ**): Ներկայումս Ռուսաստանում որսորդական հրացանն ու ավտոմատ հրացանի մի տեսակը նույնպես անվանվում է **կարաբին**: Եվ այսպես անցան դարեր, փոխվեցին հրացանների տեսակներ, սակայն անվանումը մնաց առ այսօր:

401. ՊԻՍՏՈՒԼԵՏ ԵՎ ՊԻՍՏՈՆ

Եվրոպական երկրներում 16-րդ դարից սկսած զենքի, ավելի ճիշտ հրազենի մի տեսակ տարածվեց, որն ավտոմատ էր կրակում: Այն անվանվեց **պիստոլետ**, իսկ փամփուշտները՝ **պիստոն**: Այս հրազենի անվան ծագման մասին երկու ենթադրություն կա. կամ ճիշտ է այն պնդումը, որ այն իր անունն ստացել է իտալացի Պիստոյա քաղաքից, կամ չեխական (սլավոնական) **пищаль**՝ «դուղուկ» բառից, այսինքն բնածայնությունից, որ կրակելիս էր լսվում: **Պիստոն** նշանակում է «ճտացող»:

402. ԲԵՐԴԱՆԿԱ

1868–1891 թթ. ռուսական բանակի զենքը դարձավ **բերդանկան**, որը անշուշտ իր անունն ստացել էր ամերիկյան զեներալ **Բերդանի** անունից: Այս հրազենը մեկ լիցքանի էր, որը կատարելագործեցին ռուս Գորլովը ու Յունիուսը:

403. ՈՒԵՎՈՒՎԵՐ

Ուելվեր, անգլ. revolve՝ «պտտվել» ստեղծվել է 16-րդ դարում, ամուրը ստացել է պտտվող թմբուկի պատճառով: Կրակում էր մինչև 100 մետր տարածության վրա: Մեծ տարածում ստացավ 20-րդ դարի 30-ական թթ., երբ այն կատարելագործվեց:

404. ՆԱԳԱՆ

Պտտվող թմբուկով ատրճաճանկներից ամենատարածվածը **Նագան** է, որի մեջ մեկ անգամ լիցքավորելիս 7 փամփուշտ է տեղավորվում: Անունն ստացել է հորինող բելգիացի զինագործի՝ **Նագանի** ազգանունից:

405. ԿՈՒՏ

Ամերիկացի կոնստրուկտոր Սենուել Կուտը (1814–1862) կատարելագործեց ուղղվերը՝ տրամաչափը դարձնելով 11, 43: 1835 թ. հիմնեց հրազենի գործարան՝ մասսայաբար արտադրելով ԱՄՆ-ում պահանջարկ վայելող այս ատրճաճանկը:

406. ՍԱՔՍԻՍ

Մաքսիմ խայրենը (1840–1916) անցյալ դարի 80-ական թթ. ստեղծեց մի ավտոմատ կրակող (վայրկյանում 250 կրակոց) սարք՝ **մետրոլյոզ**, որն իր անունով Ռուսաստանում կոչվում էր պարզապես **Մաքսիմ**: Նրա «հայացված» ձևն է **զնդացիոր**:

407. ԿԱԼԱՇՆԻԿՈՎ

Ժամանակակից ռուսական մի քանի ավտոմատ զենքերի AK, AKM, **PKK**, **PK** հերինակ Միխայիլ Կալաշնիկովի անվամբ աշխարհում հայտնի են **Կալաշնիկով** տիպի ավտոմատ հրացաններ:

408. ԿԱՏՅՈՒՇԱ

Գերմանացի ֆաշիստների դեմ մղվող Դայրենական մեծ պատերազմի տարիներին ստեղծվեց հրթիռային ռեակտիվ հրանոթը, որը զինվորները փաղաքշարք անվանեցին «Կատյուշա»:

409. ԴԻՆԱՄԻՏ

1900 թ. շվեդացի քիմիկոս **Նորելը** ստեղծեց պայթուցիկ մի նյութ. որը, հսկայական ավերիչ ուժ ունենալով, կոչվեց հունարենից վերցրած *dinamos*՝ «ուժ» բառով: Այստեղից էլ՝ հայերենի **ուժանակ** բառը:

410. ՏԻՐ

Յուրաքանչյուր քաղաքում կարելի է հանդիպել **Տիր** ցուցանակն ունեցող հրաձգարանների: Իսկ ինչո՞ւ տիր: Այն ֆրանսերենի *tirer*՝ «կրակել» բառի կրճատված ձևն է, սակայն ոճանք ենթադրում են, որ կարող էր այն առաջանալ հայերենի **թիր-ախ-ից** (առ էլ՝ պարսկ. *tirax*):

411. ՄՈՍԻՆ

Ռուսական բանակի հրացանները անցյալ դարի 90-ական թթ. կոչվեցին պաշտոնապես **մոսիններ**. Նման անվանումը կապված է կոնստրուկտոր Սեդոյե Ռավինի

Մոսիճի կատարելագործած 1891 թ. երեքգծանի (մագազինավոր) 7,62 մմ հրացանի հետ, որը անփոփոխ կես դարից ավելի մինչև ավտոմատ հրացանի հանդես գալը ռուսական բանակի զենքը եղավ:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի երգերում շատ է հիշատակվում մոսիճ-ը:

412. ՍԱԿԱՐՈՎ

«Խուզարկության ժամանակ հայտնաբերվեց լրտեսի մոտ Մակարով տիպի ատրճանակ»: Ատրճանակի նոր մշակված տեսակի անվանումն է (ԿԾ պիստոլետ Մակարովա), որը ստեղծել է սովետական կոնստրուկտոր Լիկոլայ Ֆեոդորովիչ Մակարովը (1914–1988):

413. ԼԵԶՈՒ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԻՑ

Գեներալիսիմուսն ո՞վ է աշխարհում: Զինվորական աստիճաններում և կոչումներում ամենաբարձր աստիճանն է **գեներալիսիմուսը**, որը ծագում է լատիներենի generalisimus՝ «զլիավորագույն» բառից: Ռուսաստանում այն սկսեց գործածվել Պյոտր Մեծի ժամանակ: Այս կոչմանն արժանացել են տարբեր ժամանակներում բավական քիչ թվով զինվորականներ, որոնց կարելի է մտոների վրա հաշվել: Այսպես՝ Ռուսաստանում Պյոտրի ժամանակ **գեներալիսիմուս** են դարձել Մենշիկովը, Սուվորովը, ապա՝ 1945 թ.՝ Ստալինը, Չինաստանում՝ Չան Կայ Շին:

414. ՍԱՐՇԱԼԸ ԹԵԵԿ ԱՆՈՈՎՊԵՏՆ Է, ՍԱԿԱՅՆ՝ ԶԻԵՐԻ

Մարշալը ամենաբարձրագույն զինվորականն է (չհաշված ինարկե բացառիկ դեպքերում շնորհվող **գեներալիսիմուսը**), որը առաջացել է ֆրանսերենի marechal՝ «ծիերին բուժող, պայտար» ապա՝ «ախոռապետ» բառից: Միջին դարերում հայերը Կիլիկիայում, շփվելով խաչակիրների՝ ֆրանկների հետ, առաջին անգամ այդ բառը վերցրել են նրանցից մարաջախտ ձևով: Այս պատճառով էլ արևմտահայերենում տարածվեց **մարաջախտ**, իսկ արևելահայերենում՝ **մարշալ** տարբերակը:

415. ՀԱՍԸՆԴՀԱՆՈՒՐ, ԳԼԵԱՎՈՐ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՆՆԱԿՈՒՄ Է ԳԵՆԵՐԱԼ

Գեներալը զինվորական կոչումներից մեկն է, որ Ռուսաստանում սկսեցին գործածել 17-րդ դարի կեսերից: Քանի որ Հայաստանը միջին դարերից կորցրել էր իր անկախությունը, ուստի չունեի բանակ ու բանակի հրամանատարական սպայական աստիճաններ նշանակող բառեր: Երբ Ղարաբաղն ու Արևելյան

Հայաստանը միացվեցին Ռուսաստանին, հայերից շատերը մտան ծառայության Ռուսական կայսրության բանակում: Բազմաթիվ **գեներալներից** մեծ համբավ ձեռք բերեց հայազգի Մադաթովը: Իսկ ի՞նչ ծագում ունի այս բառը: Լատիներենում generalis նշանակում է «ընդհանուր, զլիավոր, համընդհանուր»: Կան նաև **գեներալ-մայոր**, **գեներալ-լեյտենանտ**, **գեներալ-ադյուտանտ**, **գեներալ-ադմիրալ** և այլ կոչումներ:

416. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՄԵԾԸ ԿԱՍ ԱՎԱԳԸ ԿԱՐՈՂ Է ՆԱԵԿ ԿՈՉՎԵԼ ՄԱՅՈՐ ԿԱՍ ՍԱԺՈՐ

Զինվորական աստիճանների մեջ **մայոր** է կոչվում **կապիտանից** բարձր գտնվող հրամանատարը: Այս կոչումը ևս Ռուսաստանի զինված ուժերում գործածվեց 17-րդ դարի 30-ական թթ., իսկ հայերենում՝ ավելի ուշ: Այն լատիներենի major՝ «մեծ, ավագ» բառն է, որ երաժշտության մեջ ևս գործածվում է **մաժոր** ձևով:

417. Ո՞Վ Է ՀԱՍԱՀԱՐԶԸ ԿԱՍ ՀԱՍՀԱՐԶԸ

«Նիզակակից, մտերիմ, պաշտպան, փշտիպան, թիկնապահ» նշանակություններով է գրաբարում օգտագործվել **համհարզ** բառը. «Իբր զհամհարզ իմ հրաման տուր պատրաստել զօրու. զամենայն փշտիպանս **համահարզ** իւր»: Ինչպես նկատում ենք, **համհարզը** համարժեք է **փոշտիպանին**, որից հայերենում ունենք նաև **պաշտպան** ձևը: Այն պահլավերենից է փոխառված:

Ներկայումս **համհարզը** զինվորական պետին ենթակա սպան է, որ կատարում է շտաբի կամ պետի հանձնարարությունները, համապատասխանում է եվրոպական-ռուսական **ադյուտանտ** բառին:

418. ՀԻՆ ՀՈՈՍՈՒՄ ԵՎ ՀԱԶԱՐԱՍՅԱԿՆԵՐ ԱՆՅ ՄԵՁ ՄՈՏ

Հին Հռոմում զինվորական ծառայությունը ավարտած զինվորներին անվանում էին veteran՝ **վետերան**՝ vetus՝ «հին, փորձված, փորձառու» բառից: Սակայն մեր օրերում **վետերան** են անվանում ոչ միայն զինվորականներին, այլև աշխատանքի երկարամյա փորձ ու ստաժ ունեցող անձանց ևս, ի՞նչ կա որ:

419. ԱՅՆՈՒՎԱՏԵՆԱՅՆԻՎ, ԿԱՊՐԱՆ ԷԼ Է ՀՐԱՍԱՆԱՏԱՐ, ԹԵԵԿ ԿՐՏՍԵՐ

Կապրալը, ինչպես և մյուս զինվորական աստիճանները (եվրոպական), ռուսական բանակում սկսեցին գործածվել 17-րդ դարից սկսած: **Կապրալը** կրտսեր հրամանատարական կազմի զինվորական կոչումն է, որը ծագում է ֆրանսերենի caporal բառից:

420. ԿՈՍԱԼԴՈՐԸ ԿԱՐՈՂ Է ԿՈՍԱԼԴԻՐ ԼԻՆԵԼ

Միջնադարյան ասպետական կրոնական օրդեններում ամենաբարձր կոչումներից էր **կոմանդորը**, որը հետագայում ընդօրինակեցին նաև մատոնները: Հետագայում սկսեցին նավակումբի նախագահին ևս անվանել **կոմանդոր**: Հետագայում պարզապես ամեն տեսակի ղեկավարներին և նախագահներին որպես մեծարանքի, հարգանքի նշան սկսեցին անվանել **կոմանդոր**, օրինակ՝ սպորտի համընթացողիների (ծիարշավի, հեծանվի, շախմատի և այլն) նախագահներին: Սակայն ավելի շատ այն գործածվել սկսեց եվրոպական երկրներում «նավակումբի պետ, ղեկավար» նշանակությամբ, որը չուներ ծովակալի աստիճան: Այսպես սկսեցին **կոմանդոր** անվանել նաև այն նավերի հրամանատարներին, որոնք չունեին ծովակալի աստիճան կամ կոչում:

Ռուսաստանում հայտնի դարձավ իր խիզախ նավարկություններով **կոմանդոր Բերինգը**, որը բազմաթիվ կղզիներ, նեղուցներ հայտնաբերեց, և այդ իսկ պատճառով էլ 1741 թ. նրա հայտնագործած կղզիների շարքը կոչվեց **Կոմանդորյան կղզիներ**: Իսկ կապ ունի՝ արդյոք **կոմանդորը կոմանդիրի** հետ: Պարզվում է, որ, այդ: Քանի որ այս բառերը ծագում են ֆր. *commandeur commande*՝ «բանավոր հրաման» բառից, որն ունի այլ իմաստներ ևս՝ «3 հոգուց բաղկացած խումբ», նաև «սպորտային խումբ»: Կոմանդիր՝ ուրեմն «հրամայող, կարգադրող»:

421. ԵՔԵ ԹԱՐԳԱՆԿԵՆ ԶԻՆԿՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ...

ՀՈՒՄԱՐՆԵՐ: ՄԻԵՎՆՈՒՅՆ ԶԷ՝ ԱՅՐՈՒՋԻ, ԹԵ
ՀԵՅՅԱԼ

Մինչև տանկերի և հրթիռների հայտնվելը մարտի դաշտում մեծ տեղ էր վերապահված **հեծելազորին**: Հայ պատմիչները բազմիցս վկայում են հայոց այրուծիի՝ հեծելազորի մեծ հեղինակության, նաև, ինչու չէ, մեծ կշռի մասին պարսից բանակում:

Հեծելազորը բարձր է գնահատվել նաև այլ երկրներում, քանի որ մարտի դաշտում վճռական դեր էր պատկանում հեծելազորին: Բայց չէ՞ որ դա շատ բանկ հաճույք էր: Որքա՞ն ծիսասարք էր պետք, որքա՞ն ծի և որքա՞ն զարի ու խոտ (վարսակ) ձիերին կերակրելու համար: Սիւս և մենք մոտենում ենք **հուսար** բառի ծագմանը, որն ամփոփյալան կապի մեջ է **այրուծի**-ի հետ:

Թեթև հեծելազորը Հունգարիայում կոչվում էր *huszar* = հուսար: **Հուսար**-ը ծագում է հունգարերեն *husz*՝ «20» թվականից: Բանն այն է, որ հունգարական օրենքով բանակ զորակոչվածներից քսանից մեկին էր միայն բաժին հասնում ծառայել հեծելազորում, որի պատճառով էլ «քսաներորդ» բառը դարձավ «հեծելազորային» բառին համարժեք: **Հուսար** բառը 15-րդ դարից հայտնվեց չեխերենում (*husar*), լեհերենում (*husar*), ռուսերենում (**rycap**) նախապես ծանր հեծելազորային էր այն, իսկ 17-20-րդ դարերում միայն թեթև հեծելազորային:

422. ԵՖՐԵՅՏՈՐ ԵՎ ՍԵՐՃԱՆՏ

Զինվորական կոչումներում **եֆրեյտորը** բավական համեստ տեղ է զբաղեցնում: Այն ծագում է գերմաներենի *Gefreiter* «ազատված» բառից, այսինքն՝ շարքայինների պարտականություններից ազատված: Ռուսերենում այն սկսել է սխալ գործածվել 1589 թվականից **ефрейтор** ձևով, որը Պետրոս Առաջինի ուղղումով դարձավ **ефрейтор**:

Սերժանտ-ը ծագում է ֆր. *sergent* «ծառայող», սա էլ լատիներենի *serviens, serventem*՝ «ծառայող» բառից. մի կոչում, որը տրվում է ոստիկանությունում կամ բանակում ծառայող կրտսեր հրամանատարական կազմին: Կան կրտսեր և ավագ սերժանտի կոչումներ ևս:

423. ԼԵՅՏԵՆԱՆՏ

Լեյտենանտը միջին հրամանատարական կոչում է, որ տրվում է ոստիկանությունում և բանակում ծառայող անձանց: Կա ավագ և կրտսեր **լեյտենանտի** կոչում, ծագում է ֆր. *lieutenant*, որն էլ՝ լատ. *locumtenens*՝ «տեղակալ» բառից:

424. ԿԱՊԻՏԱՆ

Ոստիկանությունում կամ բանակում, նավատորմում ծառայողների սպայական կոչում ավագ **լեյտենանտի** և **մայորի** միջև: Ծագում է միջին լատիներենի *capitaneus, capitano*՝ «նավի, զորքերի ղվուխ, պետ, հրամանատար» բառից: **Կապիտան** է կոչվում նաև **նավապետը**, ինչպես նաև **թիմապետը**: Նավատորմում ընդունված է նաև I, II, III կարգի **կապիտան**-**լեյտենանտի**, ինչպես նաև I, II, III կարգի **կապիտանի** կոչումներ:

425. ԵՐՏԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՂԵԿՑԻ ՍԱՐԴՈՒՆ, ԵՔԵ «ԱՍՏՎԱԾ» ԲԱՐԸ ԼԻՆԻ ԱՆՎԱՆ ՄԵՏ...

Քրիստոնյա (և հաճախ մահմեդական) ժողովուրդների անձնանունները երբեմն նման են միմյանց, ինչպես, օրինակ՝ Յակոբ- Յաղուբ, Եղիա-Իլիաս, Նոյ-Նուի, Արահամ-Իրրահիմ, Սիարոն-Հարուն (կամ Արոն) և այլն: Սրանք բոլորն էլ երրայակամ (սեմական) ծագում ունեն: Քրիստոնեության մուտքի հետ միասին այդ անունները անցել են եվրոպական բազմաթիվ ժողովուրդների: Այս պատճառով էլ Աստվածաշնչի անձնանունները մեկնաբանվում են կամ ստուգաբանվում են սեմական լեզուներով:

Աստվածաշնչում մեծ թիվ են կազմում հատկապես տղամարդկանց այնպիսի անունները, որոնք վերջավորվում են -էլ բառով: Իսկ ի՞նչ է նշանակում -էլ-ը (կամ իլ-ը): Այն սեմական լեզուներում նշանակում է **Աստված**, աքքադ. *ilu*, եբր. *el*:

Հայերենում միայն մեկ անձնանվան մեջ է **Աստված** բառը, ինչպես, օրինակ՝

Աստվածատուր–Ասատուր անունում: Իսկ հինում ենթադրում էին, որ եթե Աստծո անունը լինի անձնանվան մեջ, ապա նրա նկատմամբ Աստված կլինի բարեհաճ:

Բերենք հայոց մոտ տարածված եբրայերեն այն անձնանունները, որոնք ենթադրում են Աստծո միջամտությունը կամ բարեհաճությունը:

Գարրիել– «Աստծո մարտիկ» (հանուն աստծո մարտնչող), «Աստծո մարդ»:

Աամուել (կամ **Շամուել**, **Շմուել**)– վերջին ձևը եբրայական հնչյամբ է, իսկ առաջինը՝ հունական, որտեղ բացակայում է շ հնչյունը, նշանակում է Շամու+ել «Աստվածատուր»:

Եզեկիել (եհեզզ+ել)– «Ձորավոր Աստված» (Աստծով հզոր):

Դանիել (դանու+ել)– «Աստծո դատավոր»:

Էմմանուել, **Մանուել** (մանու+ել)– «Մեզ հետ է Աստված»:

Միքայել (միքա+ել)– «Ով է որպես աստված»:

Ռափայել (ռափա+ել)– «Աստծո փրկած (թշկած)»:

Սաղաբել (սաղաբ+ել)– «Աղոթեցի առ Աստված»:

426. ԻՆՉՊԵՍ ՀԱՍԿԱՆԱԶ ՍԵՐ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԼՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ...

Մի շարք եբրայերեն անձնանուններում հանդիպում ենք **Արու** կամ **Արի**՝ «հայր» բառին, ինչպես **Աբիսողոմ** կամ **Աբիսալոմ**՝ «հայրխաղաղության», **Աբրահամ** կամ **Աբրամ** (արուարամ՝ «հայրժողովրդի») (հիշենք հայերեն **Չայրապետ**, **Չայրիկ** բառերը, որոնց հիմքում նույնպես **հայր** բառն է հիշատակվում՝ խրիմյան Չայրիկ):

Մի շարք անձնանուններում էլ **Բենու**՝ «որդի» բառն է իշխում. **Բենիամին**, **Բենիամին** (բենու–յամին՝ «որդի աջի»), բառացի՝ հաջողության զգալակ, **Ռուբեն** (ռա–բեն՝ «տես, որդիս»), ոմանք մեկնում են՝ «լսիր, որդիս»:

427. ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՒՍՎԱԾ ԿԵՐԱԴԱՆՈՒՄ ԲԱՌԵՐԸ ԻՐԵՆՑ ԵՆՆԴԱՎԱՅՐԵՐԸ

Երբ մարդիկ պանդխտում էին երկրներ՝ դրան վաստակելու կամ ճանապարհորդելու նպատակով, ապա տարիներ անց, հայրենիք վերադառնալով, գրեթե նրանք անճանաչելի էին լինում իրենց արտաքինով, նրանց է՛զ գեեստն էր տարաշխարհիկ, և՛ դեմքն էր կնճռապատ:

Հաճախ նույն բանն է կատարվում նաև բառերի հետ: Սկսեմք անձնանուններից:

Գաղտնիք չէ, որ քրիստոնեությունը տարածվել է Իսրայելից կամ Հրեաստանից:

Քրիստոնեության հետ միասին հրեական անձնանուններն էլ մուտք գործեցին քրիստոնեացած ժողովուրդների մեջ: Սակայն ամեն ժողովուրդ փոխառյալ հրեական անձնանուններն սկսեց իր լեզվի մախափրած արտասանական կանոններով հնչել: Այսինքն՝ եթե տվյալ լեզվում բացակայում էին ինչ–որ հնչյուններ, ապա դրանք փոխարինելու էին գալիս նրան մոտ արտասանություն ունեցող այլ հնչյուններ: Այսպես, օրինակ եբրայերենի **Մագդալենա** անձնանունը հայտնի դարձավ անտառակ

վարքի տեր **Մարիամ Մագդալենացի** անվանաբանի դրվագով (Նրան ներքե և դարձի բերեց **Չիսուալ**): Աստվածաշնչի միջոցով **Մագդալենայի** անունը փոխանցվեց թուրք քրիստոնեությունը ընդունած ժողովուրդների մոտ: Իհարկե **Մագդալենա** նշանակում է **Մագդալ**–ցի: Հայերենում դարձել է **Մագթաղ**, եվրոպական ազգերի մեջ՝ **Մադլեն**, **Մագդա**, **Մադլենա**, և այսօր **Իսրայել** վերադարձող շատ կանայք կրում են **Մադլեն**, **Մադլենա**, **Մագդա** անունները որպես նոր անուն, մինչդեռ դրանք **Մագթաղենայի** փոխված ձևերն են:

Եբրայական ծագում ունի նաև **Էլիսաբեթը**, **Էլիզաբեթը**, որը եբրայերենում հնչում էր **Eliseba**, կազմված է **El**՝ «աստված» և **seba**՝ «յոթ» բառերից: Բայց ի՞նչ էր նշանակում **Աստված յոթ**, հրեաները երգվում էին 7 առարկաներով, ուստի 7 բառը համարժեք էր երգում բառին: Եվրոպական լեզուներում այն դարձավ **Елизавета**, **Eliz**, **Elise**, **Лиза**, **Izabella**, **Zabell**, **Bella**, **Zabel**, հայերենում՝ **Չաբել**, **Եղս**, **Եղսիկ**, **Եղիս**: Իսրայել է վերադարձել **Էլիշաբեթը**՝ բազմապատկված և կիսված, տարբեր երկրներից եկած հրեուհիների հետ՝ որպես նոր անուն:

Եբրայական **Մարթա** անձնանունը կազմված է՝ **mara**՝ «տեր» և **ta**՝ «ուկի» իզակամակերտ ածանցից: Որոշ լեզուներում մնացել է առանց էական փոփոխությունների, սակայն ուսերենում դարձել է **Марфа**, **Марфушка**:

Հայերենի **Հովսեփ** բառը (ավանդված է նաև **Յովսեփ** ձևով) եբրայերենի **Yosef**–ի միշտ տառադարձումն է, ասորերենում դարձել է **Yousef**, հուն.՝ **Iosef**, գերմ., անգլ.՝ **Joseph**, անգլ. նաև կրճատ՝ **Jo**, ռուս.՝ **Осип**, **Иосиф**, ֆրանս.՝ **Ioseph**, իտալ.՝ **Giuseppe**, արաբ.՝ **Yusuf**, վրաց.՝ **Uocseph**, իսպ.՝ **Xoze**, **Xose**: Մեկնաբանվում է մի քանի ձևով: Օսիպ կամ **Իօսիֆ** ձևով վերադառնում է հիմա Իսրայել, Իտալիայից՝ որպես **Ջուզեպպե**, Իսպանիայից՝ որպես **խոզե**: Երբ **Xanna**՝ «աստվածաշնչորի, աստծո գութ» անձնանունը հունարենում ստացավ արական –**es** վերջավորությունը, դարձավ **Yohannes**, ասոր.՝ **Yohannes**, լատին.՝ **Yohannez**, գերմ.՝ **Iohann**, ֆր.՝ **Jean**, իտալ.՝ **Giovanni**, անգլ.՝ **Johy**, **Jonni**, ռուս.՝ **Иоан**, **Иван**, **Ваня**: Ռուսաստանից որպես **Վանյա** կամ **Իվան** Իսրայել են վերադառնում **Հաննաները**, իսկ երբեմն էլ՝ **ժան** կամ **Ջոն**, **Ջոննի**, **Ջիովաննի** դարձած:

Յովնաթան, **Հովնաթան**, որը եբր. **Yeho**՝ «աստված» և ռուս.՝ «տալ, նվիրել» բառերից է կազմված (այսինքն՝ Աստվածատուր), եվրոպայում դարձավ **Ջոննաթան** (անգլ.) և որպես այդպիսին վերադարձավ Իսրայել:

428. ԻՆՉՊԵՍ ԵՆ ՇՐՏՎՈՒՄ ԲԱՌԵՐԻ ԻՍԱՍՆԵՐԸ. ԻՆՉՊԵՍ ԹԵ ՀԱՍԱՐԱԿ ԵՎ ՀԱՆԿԱՐԾ ԲԱՐՁՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ...

Գրաբարում **հասարակ** բառը բազմաթիվ նշանակություններով է գործածվել: Հիմա էլ, եթե առում ենք՝ **հասարակ** ծիրան է կամ **հասարակ մարդիկ** են, նշանակում է անարժեք. ցածր որակի, **հասարակ բան** է՝ հեշտ, պարզ բան է, **հասարակ** նաև նշանակում է **հավասար**, այստեղից էլ՝ **հասարակած**՝ «հողաբանող երկուսի բաժանող գիծը», այսինքն՝ երկու հավասար մասերի բաժանող գիծը: Իսկ **հասարակություն**–ն ընկալվում է հավասար վիճակում գտնվողների ընկերակցու-

թյուն, և այսպես բառեր, բառեր: Իսկ **հասարակաց տուն**՝ «անառականոց, պոռնկանոց» բառը թերևս պիտի ընկալել բոլորին մատչելի վայր, **հասարակաց աղբիկ**՝ «պոռնիկ», **հասարակաց փոս**՝ «ընդհանուր գերեզման», ու հանկարծ նաև սրանց կողքին՝ **բարձր հասարակություն**, դե արի ու էլը ցեխից համիր, ինչպե՛ս անարժեք, ցածր որակի, **հասարակ բառը բարձր բառի** օգնությամբ բարձրացավ մինչև ընտրյալների, բարձր, ազնվական դասի աստիճանը:

429. ԱՉՆՎՈՒԹՅՈՒՆ, ՅԵՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ՂԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆ

— Ազնիվ խոսք, ես չեմ տեսել գողերին, բայց **ազնվաբար** կպատմեմ, ինչ որ տեսա:

Հաճախ ենք մենք բառն օգտագործում առանց մտածելու նրա հիմքում գտնվող արմատի բովանդակության մասին: Եվ ինչերի՞ս է պետք, թե այդ բառը առաջ ինչ իմաստ է ունեցել... Բայց ինչ—որ տեղ էլ առանց գրաբարի չենք կարող յուր գնալ... Այժմ տեսնենք, թե գրաբարում **ազն** արմատն ինչպիսի իմաստ է ունեցել... Ազն «ազգ, ցեղ, սերունդ» է նշանակել, այդ իսկ պատճառով էլ հինգ ունենք **դյուցազն** «աստվածների ցեղից, հսկա, հերոս», **հսկայազն**՝ «հսկաների ցեղից», **ազնավոր** կամ **ազնավոր** (Շառլ Ազնավորի ազգանունը), որն ընկալվում էր «ցեղական, ազնվացել, ոչ հասարակ ծագում ունեցող», ազնվատոհմիկ: Այդ իսկ պատճառով էլ **ազնիվ** ընկալվում է «ճշմարիտ, պատվարժան, ուղղամիտ, վեհ, բարձրարժեք, մաքուր և բանկ», ուստի գործ ենք ածում նաև **ազնիվ մետաղներ** արտահայտությունը, **ազնիվ մետաղներն են** ոսկին, պլատինը, արծաթը և այլն, նաև **ազնիվ մորի** (ազնվամորի, **ազնիվ վարդ**) **ազնվավարդ**, **ազնիվ մահուդ** և այլն: Ու դարձյալ բառեր, բառեր՝ **ազնվական, ազնվաշուք, ազնվազարմ, ազնվադեմ, ազնվարյուն, ազնվատոհմիկ** և այլն, և այլն:

430. ՕՐԱԳԻՐԸ ԴԱՆՈՒՄ Է ԸՆԲԲԱԹԱԹԵՐԹ, ԱՊՎ՝ ԱՍՍԱԳԻՐ

Ֆրանսերենի **ժուռնալ** (journal) բառը հայերեն թարգմանում ենք **ամսագիր** նկատի ունենալով նրա արդիական նշանակությունը անգլերենում և ֆրանսերենում: **ժուռնալ**—ը ծագում է ֆրանսերենի jur «օր» բառից, journal նշանակում է **օրագիր**, սակայն անգլերենում այն դարձավ **շաբաթաբերք**, իսկ հայերենում գործ է ածվում **ամսագիր** նշանակությամբ:

431. ԴԵՂՈՐԱՅԹԻ ՀԱՍԱՐ ՊԻՏԻ ԳԵԱՍ «ՊԱՀԵՍ»

Դեղորայքը վաճառում են **դեղատանը** կամ եվրոպական լեզուներում տարածված **ապոտեկարում**: Ապոտեկան հունարեն բառ է և նախապես apodeka նշանակում էր «պահեստ»: Այդ deka բառով ունենք նաև **բիբլիոտեկա**՝ «գրապահեստ», **դիսկոտեկա**՝ «ձայնակալատակների պահեստ» և այլն:

432. ԿՏԱՎ՝ ԳՈՐԾՎԱԾՔ, ՏՈՒԱԼԵՏ ԵՎ ՊՉՐԱՆՔ, ԶԱՐԴԱՐԱՆՔ ԵՎ ՈՏԱՑ ՃԱՆԱՊԱՐՀ

Արևմտահայերենում գործ է ածվում **տուալետ** բառը նաև **զարդարվածք** նշանակությամբ. «Կեցիր, **տուալետիդ** նայիմ»: «Ինչ անուշ **տուալետ** ըրած էր»: Իսկ ի՞նչ լեզվից է արևմտյան բարբառները թափանցել այս բառը: Ինչպես —տն անանցն է մատնում, այն ֆրանսերենից պիտի լինի, ինչպես ունենք կոստետ, բուֆետ, կլոզետ և այլն:

Ֆրանսերենում այն հնչում է toilette (toile արմատից, որն իր հերթին գալիս է լատիներենի tela «գործվածք, կտոր») բառից և նշանակում է «պաստառ» կտավ:

Բայց ի՞նչ կապ կարող է լինել **պաստառի** «կտավի» և **զուգարանի** միջև: Ինչո՞ւ միևնույն բառով է կոչվում և՛ մեկը, և՛ մյուսը:

Չէ՞ որ **տուալետ** նշանակում է «հարդարանք, զարդարանք և զուգվածք», ապա այստեղից մինչև պետքարանց էլ մի քայլ է միայն: Չէ որ **պետքարանց** կա նաև լվացվելու, հարդարվելու հնարավորություն (հայելի, օճառ, սանր և այլն): Ինչո՞ւ հայերենում պատճենվեց **զուգարան** բառը՝ **պետքարան**—ի, **ոտաց ճանապարհ**—ի կողքին: Իսկ եվրոպացիք անվանում են այդ տեղը նաև «այնտեղ, ուր ոտքով է գնում նաև թագավորը»:

433. «ԾՆՈՒՄ» Ե ԵԱԵՎ ԴՐԱՍԸ

Այդ, աճում է նաև բարեկամից կամ դրամատից վերցված պարտքը: Ահա այդ են վկայում հունարենից կամ պարսկերենից հայերենի բառապաշարին անցած տոկոս և վաշխ բառերը: Ավեստայի լեզվում գտնում ենք vaxšaiti, vaxšs ձևով. առկա է այն սանսկրիտում vaxšitan ձևով, պահլավերեն «աճում է», հայերենում դրափոխվելով դարձել է **վաշխ**՝ «աճ», «տոկոս» նշանակությամբ (խշ>շխ, ունենք նաև բախշել>բաշխել, ժող. նախշել>նաշխել բառերում):

Վաշխառու նշանակում է դրամի աճած մասը վերցնող: «Նրանք վաշխ էին առնում մանեթին երեսուն, քառասուն և ավելի տոկոսով»: Իսկ **տոկոս** ի՞նչ է նշանակում: Հունարենում tikto նշանակում է ծնել, որից էլ tokos՝ «ծնունդ, երեխա, ծնված»:

434. «ԵՐԿԱՐԱՍՈՐՈՒԹՆԵՐԻ» ԳՐԱՎԱՏՆԵՐԻ՝ ԼՈՍԲԱՐԴՆԵՐԻ ՏԵՐԵՐ

Երեկ ընկերուհիս զանգահարեց ինձ. «Ոչ մի տեղից դրամ չճարեցի, ստիպված լոճբարդ պիտի տանեմ աղամանոյա օղերս և մատամիս, խնդրում են՝ ինձ հետ լինես»: Իսկ ի՞նչ է լոճբարդը. որտեղի՞ց է հայտնվել այն հայերենում: Պարզելու համար դարձյալ պիտի դիմենք նորին գերազանցություն պատմությանը:

15-րդ դարում (զլխավորապես Փարիզում) հայտնվեցին բազմաթիվ վաշխառու-ական գրասենյակներ, որոնք տոկոսով փող էին տալիս: Որպեսզի վստահ լինեն, որ տրված գումարը կվերադարձվի, այն գրասենյակները տրված գումարի դիմաց

սկսեցին թանկարժեք զարդեր և իրեր վերցնել: Եվ քանի որ նման գործարքներ կատարողները ծագումով հիմնականում Իտալիայի **Լոմբարդիա** նահանգից էին, սկսեցին այդ գրավատներն անվանել **լոմբարդներ**: Իսկ լոմբարդացիները, ինչպես գիտենք, «երկարամորուքներ—լանգորարդներն են», որոնց անվամբ էլ Իտալիայի այդ գավառը կոչվեց **Լոմբարդիա**:

Եվ այսպես՝ Ֆրանսիայի օրինակով ողջ աշխարհում սկսեցին բացվել **լոմբարդներ**, գրավատներ, բայց արդեն ոչ «երկարամորուքների» կողմից, այլ տարբեր ազգերի, սակայն միևնույն է, ոչ ոք արդեն չի կարող ցնցել այդ ցուցանակներից **լոմբարդ** բառը, որն ամուր «կպել» է նրանց, և չի էլ զիտակցվում որևէ մեկի կողմից, որ **լոմբարդի** տերը անպայման լոմբարդացի պիտի լինի:

435. ԸՎԵՅՑԱՐԱՑԻ ԵՍ, ՈՒՐԵՄՆ ՄԻԱՅՆ ԴՈՆԱՊԱՆ ԿԱՄ ՁԻՆՎՈՐ ԿԱՐՈՂ ԵՍ ԱՃԵԱՏԵԼ

«Երբ մոտեցանք հյուրանոցի դռանը, դեղնադաշնագույն պիջակով և փառահեղ մորուքով **շվեյցարը** հյուրընկալորեն բացեց դուռը»: Ի՞նչ պատճառով է հեղինակը և կամ մենք նույնպես, **դոմապան**, **բարապան** բառի փոխարեն գործածում **շվեյցար**—ը: Բանն այն է, որ միջին դարերում Շվեյցարիայից Ֆրանսիա և Գերմանիա աշխատանքի մեկնող **շվեյցարացիներին** զերզանցապես առաջարկում էին զինվորի կամ **դոմապանի** պաշտոն: Որոշ ժամանակ անց կարծես թե **շվեյցարացիները** «մասնագիտացան» դոմապանության մեջ՝ ստանալով յուրատեսակ մենաշնորհ: Ուստի նրանց դիմելիս ոչ թե նրանց անունն էին տալիս, այլ պարզապես կոչում էին **շվեյցար** (այսինքն՝ **շվեյցարացի**): Եվ այսպես «կպավ» այնուհետև բոլոր դոմապաններին **շվեյցար**՝ «շվեյցարացի» մականունը՝ անկախ նրանց ցեղային պատկանելությունից: Բոլորը մտածում էին, որ եթե **դոմապան** է, ուրեմն **շվեյցար** է: Ազգությամբ ռուս կամ հայ դոմապանը նույնպես **շվեյցար** է: Ներկայումս այս բառը գործածողները նրա մեջ միայն «դոմապան» իմաստն են տեսնում և ոչ **շվեյցարացի**:

436. ԸԱՐԺԱՆԿԱՐ, ԿԻՆՈՖԻԼՍ, ԿԻՆՈՌԱՂԱՆԹ, ԹԵ ՊԱՐԶԱՊԵՍ ՖԻԼՍ

Ֆիլմ անգլերեն բառ է, որ նշանակում է «թաղանթ»: Այսինքն՝ **ֆիլմ** նախապես նշանակում էր նկարահանման ժապավեն, թաղանթ, որը հայերեն պատճենվեց **կինոժապավեն** կամ **երկաթաղանթ**: Սակայն ակտիվ բառապաշարում **ֆիլմ** բառն ավելի շատ գործ է ածվում որպես ոչ «թաղանթ», այլ նկարահանված կինոնկար՝ «շարժանկար» նշանակությամբ: **Կինո** ասելիս մենք հասկանում ենք նաև այն շենքը, ուր ցուցադրվում է **ֆիլմը**:

437. ՄԱՆԿԱՍԱՅՆԱԿԸ ԵՔԵ ՊՏՏԿԻ, ԿԿԱՆԱ ԿԱՐՈՒՄԵԼ

Ով չի վայելել **կարուսելով** պտուղներ հաճույքը: Անգամ նրա մասին փիլիսոփայական—խոհական բանաստեղծություններ են գրվել:

«Պտուղիր, պտուղիր **կարուսել**, ես քո երգը վաղուց եմ լսել».— գրում էր Վ. Տերյանը: Բայց ինչպե՞ս է այդ բառը ստեղծվել և ապա աշխարհի բազմաթիվ լեզուների բառապաշարի մեջ հաստատուն իր տեղը գտել: Զրոսայգիներում դարասկզբին շրջանաձև պտուղող մի սարք ստեղծեցին, որտեղ նախապես նստում էին երեխաները մանկական սայլակների նման նավակներում: Ահա այստեղից էլ ծագեց **կարուսել** բառը, որի հիմքում իտալերենի *carro*՝ «կառք» բառն է, որից՝ *caruzzi*, *caruzzello*՝ «կառքիկ, սայլակիկ, մանկասայլակ»: Կառուցելը—**կառուսել** ներկայումս այն պտուղող հաճույքն է, ուր սայլակների հետ միասին կենդանիներ, զազաններ ու թռչուններ կան. մի խոսքով՝ բառը վերափոխաստավորվել է, այն այլևս սայլակիկ չէ:

438. ՏԱԶՍԻՆ ՄԻԱՅՆ ԱՎՏՈՍԵՔԵՆԱ ԶԵ

Տաքսի— 1. Ներկայումս բեռներ և մարդիկ փոխադրող ավտոմեքենաները, որոնք որոշված գնով, առանց սակարկելու են աշխատում, կոչվում են **տաքսի**: 2. Ընդհանրապես նախապես որոշված որևէ ապրանքի կայուն զին:

Տաքսի բառը ծագում է լատիներենի, ֆր. *taxa*, լեի. *taksa*, գերմ. *Take*՝ «որոշված զին» բառից:

439. ԱՆՄԵՂ ԲԱՈՒՐԻՑ ԻՆՉՊԻՍԻ՝ ՍԱՐՍԱԾ: ՖԱՐՄԱՍՈՆԸ ՆՈՒՅՆ ԱԶԱՏ ՈՐՄԱԿԻՐՆԵՐԻ ՍԻՈՒԹՅՈՒՆՆ Ե

— Անուշ, ինչո՞ւ բաժանվեց ընկերուհիդ նշանածից:

— Աղջի, պատահականորեն իմացան, որ նշանածը **ֆարմատոն** է: Ավելի ճիշտ՝ **ֆրանկ մատոն**:

Ֆրանկմատոնությունը կամ «Ազատ որմնադիրների» քաղաքական—կրոնական շարժումը ծագեց Եվրոպայի մի շարք երկրներում և Ռուսաստանում: Մեծ մասամբ այն բուրժուական—ազնվական միջավայրի կրոն լինելու հավակնությունն ուներ, ցեխային, օրդենային բնույթ ուներ լոժաներում: Ուսուսական—միստիկական գաղափարների միջոցով նրանք ցանկանում էին միավորել միջազգային մարդկությանը **եղբայրական մեկ կրոնի մեջ**, որը պիտի տեղի ունենար գաղտնի միստիկական ծեսերով: «Բարոյական կատարելագործմամբ պիտի կանգնեցվեր առաքինության տոմարը», ահա այստեղից էլ՝ **ազատ որմնադիր** անունը, որ ծագում է ֆր. *franc macon* բառերի թարգմանությունից:

440. ՍԱՐՍԱՓԱԶԳՈՒ ՖԱՇԻԶՄԸ ՇԱՏ ԱՆՍԵՂ ՄԻ ԲԱՌԻՑ Է

Ֆաշիզմը սկիզբ առավ Իտալիայում XX դարի 10–20–ական թթ. կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի տարիներին՝ տարածվելով իմպերիալիստական ագրեսիվ շահեր հետապնդող հարևան երկրներում ևս: Բացահայտ տեռորիստական դիկտատուրա է մարտնչող, ռասայական խտրակալության, շուկինիզմի և ընդդեմ կոմունիզմի ու սեմիտիզմի գաղափարախոսության: **Ֆաշիզմ** բառը իտալերենի fascio՝ «ճյուղերի կապուլ, տրոցակ» (որից՝ fascismo՝ «միություն») բառից է ծագում, որը խորհրդանշում է միասնության ուժը: Գաղափարախոսներից են Վ. Լապոլդը, Ա. Գիտլերը: Այս անմեղ բառը՝ ֆաշիզմ–ը, թե ինչպիսի սարսափ է առաջացնում մարդկանց մեջ, զիտեն երկրորդ աշխարհամարտի ակամատեսները: Այդ անմեղ բառի դրոշի ներքո քանի միլիոն զոհ տվեց մարդկությունը:

441. ԵՁԵ ՍԵԾԱՍԱՍՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆ ԵՄ՝ ԲՈՒՇԵՎԻԿ ԵՍ, ԻՍԿ ԵՁԵ ՓՈՔՐԱՍԱՍՆՈՒԹՅԱՆՆ ԵՍ ՀԱՐՈՒՄ ՄԵՆՇԵՎԻԿ

Այս բառերի կենսագրությունն սկսվում է 20–րդ դարի հետ միասին...
Բոլշևիկ և մենշևիկ բառերի առաջացումը անխզելիորեն կապված են միմյանց հետ: Կոմունիզմի գաղափարախոսությունը Ռուսաստանում յուրահատուկ ձևով դրսևորվեց. նոր տիպի կուսակցությունը պրոլետարական շարժման գաղափարախոսություն դարձավ, որն սկսեց ղեկավարել աշխատավոր դժգոհներին որպես ՌՄԴԿ կազմակերպություն: 1903 թ. ՌՄԴԿ 2–րդ համագումարում տարածայնությունների պատճառով կուսակցությունը երկփեղկվեց, և Լենինի կողմնակիցները մեկ ծայրի առավելությամբ կոչվեցին **բոլշևիկներ (большевики)**: Մենշևիկներ (**меньшевики**) կոչվեցին Մարտովի կողմնակիցները: Այստեղից էլ՝ **большевизм, меньшевизм** նոր տերմինները:

442. ԻՆՉՊԵՍ ՀՐԱՍԱՆ-Ը ՎԵՐԱԾՎԵՑ ԲԱՐԵՀԱՃ ԻՆԴՐԵՄ-Ի ԵՎ ՀԱՍԵՑԵՔ ՀՐԱՍԱՆՔԴ, ՏԵՐ-Ի...

Ժողովրդական խոսքը այն կենսունակ երակն է, որ համընթաց կյանքին ընտրում է առավել կարճ, երբեմն համառոտված բառերի ձևեր՝ կրճատելով երկար բառերը: Դին Դայաստանում ուսմիկ, շինական խավը, որ ենթակա էր նախարարական տներին, սեպուհներին ու իշխաններին, սովոր էր դիմել իշխողներին **հրամայեցեք, տեր իմ կամ հենց հրամայեցեք, հրամանքդ տեր իմ ձեռով**, որովհետև նա հրաման կատարող ենթակա անձ էր...

Դարերն անցան, անցան նաև նախարարական տների իշխանները, սեպուհները, սակայն, ըստ նախկին սովորության, պատրաստակամ ժողովուրդը դիմում էր

տներին նախկին ձևով՝ **հրամայեցեք**: Եսլյնիակ նա իշխանավորին դիմում է **հրամանքդ** ձևով՝ միշտ իրեն հրաման կատարողի դերում զգալով:

— Աղա, հարցնելը ամոթ չլինի, **հրամանքդ**, ի՞նչ մարդ ես...

(Գ. Թունանյան)

— **Դրամմե, տեր**, անուշ արա,— բախանձում էր տանտիրուհին:

Աստիճանաբար **հրամայեցեք** հարգալից արտահայտության ձևի է վերածվել: Այն հոգնակի ձևով էլ է գործածվում. «**Դրամայեցեք, հրամմեցեք, ներս եկեք**»:

Արևմտահայ բարբառներից և գրականից է հատուկ նաև **հրամցունել** պատճառական ձևը, ահա մեկ օրինակ Գ. Պարոնյանի երկերից.

— Ջարդարուն սենյակ մը **հրամցունելով** զայն, իմաց տուավ:

Այստեղ բառն ունի «հրավիրել» նշանակությունը, մինչդեռ նրա մյուս նշանակությունն է «չյուրափրել, մատուցել», ահա Ա. Իսահակյանից մի հատված. «Ուստա Կարոն կրկին սուրճ **հրամցոցե** սրան»:

Եթե հին հայերենի **հրամայեցեք**–ը կրճատվելով, զերազանցապես արևմտահայերենում, գործ է ածվում **հրամմեցեք** ձևով, ապա այս կրճատումը ավելի առաջ է գնացել արևելահայերենում և դարձել է **համեցեք**. «Ուրբաթ օրը **համեցեք**, տար» (Գ. Թ.): Այսինքն **հրամայեցեք–հրամեցեք–համեցեք**: Դաճախ գործածվում է նաև եզակի երկրորդ դեմքով՝ **համեցիր**.

— **Դամեցիր** մեր աշխարհը (Ս. Խ.)

Դաճախ **համեցեք** ձևը գործ ենք ածում **խնդրեմ, բարեհաճեք, եկեք, վերցրեք** նշանակություններով, քանի որ այն քաղաքավարական, հարգալից վերաբերունքի բառ է դարձել և արդեն շատ է հեռացել խրոխտ **հրամայեցեք**–ից:

443. ԻՍԱՍԱՆԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱԻՍԱՍԱԿՎՈՐՈՒՄ ՈՐՊԵՍ ՆՈՐ ԲԱՌԵՐԻ ԱՈՒՋԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

«Արոտավայրերից վերադարձրին կենդանիներին, և սկսվեց մասսայական **մորթը**»: Այսինքն՝ սկսվեց կենդանիների մորթվելու գործը: «Գիշտոյններից վազրի **մորթը** շատ թանկարժեք է»: Գրաբարում կենդանիների մորթելու իմաստով գործ էին ածում **զենուկ**–ը, իսկ կոկորդը կտրելու իմաստը **փողոտել** բառով էին արտահայտում: Սակայն հետագայում այս նշանակություններն սկսեցին արտահայտել **մորթել** բայով, որը բառացի նշանակում է «մորթել համել, մաշկել, քերթել» և ոչ փողոտել կամ **զենել**: Գրաբարյան իրանական ձևը՝ «զոհ, վնաս» բառից է **զենլի**–ն՝ «մորթվելու, մատաղացու անատունը»:

444. ՊԱՂՊԱՂԱԿ (ՍԱՌՆԱՆՈՒՇ)

Ամռան շոգերին դիմակայելու համար մեր նախնիները ամառանոցներ են գնացել, լեռներից ծյուն են բերել, օշարակ սարքել: Պատմիչների գրքերում չենք հանդիպում **սառնամուշի** կամ **պաղպաղակի** գործածության որևէ դեպքի:

Սառնամուշի կամ պաղպաղակի գործածությունը ուշ ժամանակների երևույթ է:

Իսկ եթե երևույթը կամ առարկան չկա, չի կարող լինել նաև բառը՝ առարկայի անունը:

Սառեցված կաթը՝ որևէ մրգահյութի, սերուցքի կամ շոկոլադի հետ խառնած, արևելահայերը կոչեցին **պաղպաղակ** (պաղ՝ «ցուրտ» բառից), իսկ արևմտահայերը **սառնանուշ** (սառն՝ «ցուրտ» բառից): Երկուսն էլ հաջող բառեր են: Սակայն **պաղպաղակ**–ը նոր բառ չէ. այն գրաբարից է մեզ հասել. գրաբարում նշանակում էր ոչ թե սառնանուշ, այլ «սառցանման, սպիտակ ու թափանցիկ մի թանկարժեք քար, վնակն, բյուրեղ»: Տեղի ունեցավ իմաստի շրջում, երբ հին բառը գործածության մեջ մտավ նոր իմաստով. ռուսերենում **мороженое**՝ **мороз**՝ «սառնամանից» բառից, գերմաներենում՝ Speiseeis (ուտելի սառույց), անգլերենում՝ ice-cream (սառը կրեմ):

445. ԴԱՐՍԱԼ

Գրաբարում **դարձան** նշանակում էր «բժշկության միջոց, ճար, դեղ»: Այն պարսկերենից է անցել հայերենին, որտեղ օգտագործվում է նույն նշանակություններով: Հետագայում **դարձան**–ը հայոց մոտ սկսեց գործածվել «հարդ, կտրատած ծղոտ» իմաստով: Ինչպե՞ս կատարվեց իմաստային այս անցումը: Բանն այն է, որ Հայաստանի խոստաշունչ ձմեռների պատճառով, երբ սպառվում էր խոտի պաշարը, գյուղացիները որպես կեր էին մատուցում հարող՝ ցորենի, գարու կտրատած ծղոտը, որպեսզի մի կերպ անասունները կարողանան հասնել գարնան խոտին: Քանի որ այս հարող օգնում էր անասուններին ապրելու, չստակելու սովից, դարձավ դեղ ու դարձան, ճարունարակ և վերաիմաստավորվեց հարող որպես **դարձան** – **դեղ**: Պարսկերենում ծարս նշանակում է «դեղ, ճար», man–ը անվանակերտ ածանց է:

446. ՍԱՏԱԴ

Գրաբարում **մատաղ** կամ **մատղաշ** գործ էր ածվում դեռատի, փափուկ, փոքրիկ, նուրբ, մանկահասակ նշանակություններով՝ հիմնականում որպես ածական, օրինակ՝ «Աղջիկ մի **մատաղ**», «Ռոդի **մատաղ** հասակաւ», «Ռոթ մի **մատաղ**», նաև **մատաղածին**, **մատաղատունկ**, **մատաղատի** և այլն:

Հեթանոսական ժամանակներից մնացած սովորության համաձայն՝ Աստծուն յուրաքանչյուր տուն զոհաբերում էր գառ, հորթ, ուլ, աքլոր, հավ, և որպեսզի զոհաբերումն ընդունելի լիներ, զոհը պիտի լիներ մատղաշ, ոչ դախ: Ահա այսպես անցում կատարվեց զոհաբերվող կենդանուն բնորոշող **մատաղ**, **մատղաշ** ածականից դեպի գոյականը:

Իսկ այնուհետև ժողովրդախոսակցական լեզվում **մատաղ** անել, **մատաղ** խոստանալ, **մատաղ** լինել արտահայտությունների հետ նաև մի բացականչություն **մատաղ**, որ «սիրելիս, ջանիկս» բառին է համարժեք:

447. ԺԱՍ

Հայերեն **ժամ** «ժամանակ» բառը բազմաթիվ ածանցումներով բառաբարդված գործածություն ունի և գրաբարում, և ներկայումս:

Քանի որ ժամացույցի գյուտը միջին դարերում եղավ, և մինչև մեր օրերը ժամացույց ունենալը թանկ հաճույք էր, ապա մարդիկ ժամանակն իմանում էին եկեղեցու զանգից, եկեղեցու զանգի միջոցով: Այս հանգամանքն էլ **ժամ**, **ժամանակ** հասկացության հետ զուգորդեց **եկեղեցին**: Առաջացան **ժամ**–սասցությունը, **ժամ**–ասեր, **ժամ**–ագիրք, **ժամ**–կոչ, **ժամ**–հար, **ժամ**–աբակ, **ժամ**–աշապիկ, **ժամ**–ատուն և այլ նոր բառերը: Ես ժամը վկա, ժամ ու պատարագ, ժամի դուռ դառնալ և նման այլ արտահայտություններում **ժամն** արդեն եկեղեցի է նշանակում. «ժամ ենք զնում ամեն օր...»:

448. ՊՐԻՄՈՒՍ

«Տունը հողեծիվ էր **պրիմուսի** պայթյունից»: «**Պրիմուսի** մեջ նավթ չի մնացել»: Երեսնական թվականներին, երբ մեր կենցաղում զազօջախները դեռևս մուտք չէին գործել, տներում հիմնականում օգտվում էին նավթի այրիչներից՝ **կերոսինականերից** և **պրիմուսներից**: **Պրիմուս** բառը լատիներենի prima՝ «առաջին» բառից է ծագում և նշանակում է «առաջնակարգ», այսինքն՝ նմաններից առաջին տեսակի, մինչդեռ ոմանք կարծում են, թե **պրիմուս** առարկայի անունն է և ոչ նրա մարկայի (իսկ կերոսինկայի մասին տե՛ս այդ բառի տակ):

449. ԾՈՐԹ-Ը ԿԱՊ ԶՈՒՆԻ ԾՈՐԹ-ԵԼՈՒ <ԵՏ

«Ծովափին կրպակներում վաճառում էին խայտաբղետ **շորթեր**»: **Շորտը** (ռուսական հնչյունն է) կարճ տարատն է, որ հազում են արևադարձային երկրներում կամ ամռանը նաև տանը: Այն ծագում է անգլերենի պարզ short՝ «կարճ» բառից, որը հնչում է շորթ և նույնանում է հայկական **շորթ** բառի հետ. հայերենում ունենք **դրամաշորթ**, **շորթել** և այլն: **Շորթել** նշանակում է «պոկել, կորզել, խելել»:

450. ԾՈՇ...

Հայկական ժողովրդական երգերում հանդիպում ենք **շոշ** բառին. «էլենն կայնեն շոշ–ին...», որ նշանակում է՝ «ասֆալտած ճանապարհ», հայերենում այն փոխ է անցվել ռուսերենի **шоссе**–ից, իսկ ռուսերենն էլ՝ ֆրանսերենի chausse–ից, սա էլ լատիներենի calciata (via calciata)՝ «կրապատ ճանապարհ» բառից:

451. ԵՐԵԿ, ԵՐԷԿ, ԵՐԵԿՈ, ԻՐԻԿՈՒՆ, ԵՐԻԿՈՒՆ

Կեսօրից հետո մինչև մայրամուտ ընկած ժամանակամիջոցը: Այս բառից է կազմված **ցերեկ** բառը, որ նշանակում է «մինչև երեկո» (ց՝ «մինչև»– երեկ): Այսպես երեկո հասկացությունը աստիճանաբար դարձավ «երեկ, անցած օրը»:

Լման անցում **երկրյի** և **անցյալ օր** հասկացությունների միջև տեղի են ունեցել նաև ռուսերենում և այլ լեզուներում, օրինակ՝ ռուս. **завтра**՝ «երեկո» բառից է առաջացել **вчера**՝ «երեկ»:

Գերմաներենում **Morgen**՝ «առավոտ» բառից առաջացավ **morgen**՝ «վաղը»: **Չայերեն վաղ**՝ «շուտ, կանուխ, առաջ, անցյալ» բառից ունենք **վաղեմի, վաղահաս, վաղ-վաղ**՝ «շատ հնուց, առաջ, հինից», **վաղուց**՝ «շատ առաջ, հինից, կանխավ», **վաղ առավոտյան**՝ «կանուխ առավոտյան, շատ շուտ» և այլն:

Այսպես վաղը՝ «մյուս, հաջորդ օրը» արտահայտությունը առաջացավ **վաղ-ից**: **Չայերենում էգուց**՝ «մյուս օրը, հաջորդ օրը, վաղը» նույնպես իմաստափոխության պատճառով է տեղի ունեցել: Այն ծագում է **այգ**՝ «առավոտ, լուսաբաց» բառից: **Այգուց** գրաբարյան ձևը հնչյունափոխվելով դարձավ **էգուց** (այ→է պատմական հնչյունափոխությամբ)՝ այսօրվա նկատմամբ՝ էգուցը դիտելով հաջորդ օր:

452. ՇՈՖԵՐ ԿԱՍ ԻՆՉՊԵՍ <ՆՈՅԱՊԱՆԸ ԴԱՐՁԱԿ ԿԱՐՈՐԴ

Ֆրանսերենում **շոֆյոր** (**chofeor**) նշանակում է «հնոցապան»: Սակայն ինչպես պատահեց, որ այսօր **շոֆեր** ենք անվանում ավտոմեքենայի վարորդին, պետք է դիմենք պատմությանը: 19-րդ դարում, երբ ստեղծվեցին առաջին շոգեմեքենաները և շոգու ուժով շարժվող ինքնագնացները, բնականաբար բենզինով աշխատող ներքին այրման շարժիչներ դեռևս չկային: Ուրեմն ինքնագնաց առաջին մեքենաները **շոգեշարժ** էին և աշխատում էին ածուխով: Այդպիսի մեքենաների վրա դեկը բռնող անձից բացի կար նաև **հնոցապան**, որի դերն ավելի մեծ էր, քան դեկը վարողինը: Չետագայում, երբ ստեղծվեցին բենզինով աշխատող ներքին այրման շարժիչները, արդեն ավելորդ էր հնոցապանի դերը, քանի որ վարորդը կարգավորում էր և՛ մոտորի աշխատանքը, և՛ դեկի գործողությունները: Ահա այսպես «անկկատ» **հնոցապան**–ը դարձավ **վարորդ**՝ **շոֆեր**:

453. ԱՉԱՏԿԵԼԸ ԵՆՆ ԴԱԲԵՐԵԼՆ Է, ԿԵՍԱՐՅԱԼ <ԱՏՈՒՄԸ՝ ՆՈՒՅՆՊԵՍ

Չայերս կնոջ ծննդաբերելուն առում ենք **ազատվել**: Գրեթե ամեն օր կարելի է լսել «Չարդ **ազատվեց**», «Աղջիկն **ազատվել** է, տղա է ունեցել» և նման արտահայտություններ: Ինչո՞ւ **ազատվել**: Որովհետև հաճախ կյանքում, հատկապես գյուղական վայրերում, կնոջ երկունքը, ծննդաբերությունը տանջալից ու դժվար է եղել ու հաճախ ավարտվել է մահով: Ուստի ժողովուրդը բարեհաջող էլքը համարել է **ազատվել**: Չին աշխարհում, Չոնում, երբ տեսել են, որ դժվարանում է կնոջ ծնունդը, փորձել են միջամտել վիրահատությամբ՝ փրկելու համար նրան ու երիտասիակ վերահաս մահից. այսինքն՝ պատռելով կնոջ որովայնը՝ փրկել են և՛ երեխային, և՛ ծննդկանին: Այսպիսի գործողությունը լատիներեն կոչվել է **Caesar**՝ «ճղել, պատռել, կտրել»: Չին Չոնում դժվար ծննդաբերությունից մոր փորը պատռելով փրկեցին **Չուլիոսին**, որին այնուհետև կոչեցին **Չուլիոս Կեսար**,

այսինքն՝ **Չուլիոս Կատոս**: Չետագայում նա դարձավ նշանավոր զորավար, տիրակալ, բազավոր միշտ Չուլիոս անվան կողքին ունենալով **caesar** – **Կեսար** մականունը: Չետագայում **կեսար** բառը դարձավ համարժեք **թագավոր** բառին, և նրանից հետո Չոնմի թագմաթիվ տիրակալներ իրենց նույնպես հռչակեցին կեսարներ՝ կայսրեր: Չոնմից **կեսար**՝ կայսր բառը անցավ նաև եվրոպական շատ ժողովուրդների՝ **ցեզար, ցար, արք** ձևով: Իսկ վիրահատությամբ երեխային ընդունելը կոչվեց թշկուրյան մեջ **կեսարյան հատում**:

454. ԶԱՐՏԵՉՆԵՐԻ ԳԻՐԹԸ ԻՆՉՈՒ ԱՏԼԱՍ

Չունական առասպելաբանության հսկաներից էր **Ատլասը**, սեռական հոլովում այն դառնում է **Ատլանտոս** (հիշեք **Ատլանտյան** օվկիանոսը): Նրա տիտանական ուժի մասին հրաշքներ էին պատմում: Նա այնքան ուժեղ էր, որ **երկրագունդը** պահում էր իր ուսերին դրած:

Երկրորդ դարում ալեքսանդրիացի Կլավդիոս Պտղոմեոսը քարտեզների մի գիրք հրատարակեց, որի կազմի վրա նկարված էր այս գերմարդկային ուժի տեր **Ատլասը**՝ երկրագունդը դրած ուսերին: Եվ ահա քարտեզների այդ ժողովածուն այնուհետև կոչվեց **Ատլասի գիրք** կամ պարզապես **ատլաս**: Ու այսպես քարտեզների ժողովածուին «կպավ» տիտանի անունը՝ **ատլաս**:

455. ԸԵՂԵՎՐ, ԱԵ՞ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՅ...

«Ոմանք Չ. Այվազովսկու «Իններորդ ալիքը» համարում են ծովանկարչության և ինչու չէ, նաև, հեղինակի **շեղերը** կամ **գլուխգործոցը**»: Երբեմն այս բառերը գործ են ածում ոմանք առանց գիտակցելու, որ հայերենի **գլուխգործոցը** նույն ֆրանսերեն բառի պատճենումն է, **շեղեր**–ը Չր. **chef-d'oeuvre**՝ «գլխավոր, գործերի գլուխ» բառի բարզամանրությունն է:

456. ՎԻՐՏՈՒՈՋ

Իր արվեստի տեխնիկայի կատարելությանը հասած երաժիշտ, արտիստ, կատարելության, ճարտարության հասած արտիստ: Ափսոս, Պազանինիի **վիրտուոզ** կատարումը չենք լսել, այն մեզ է հասել միայն ականատեսների վկայությամբ: Եթե նրա ժամանակ լիներ ծայնագրության տեխնիկան, մենք ևս կվայելեինք նրա կատարումները: Սակայն որևէ մեկը մեզանից մտածե՞լ է, թե ինչ է նշանակում **վիրտուոզ**: Այն իտալերենի **virtus**՝ «բարեգործ», իսկ **virtuoso**՝ «բարեգործական, ուժեղ, քաջասիրտ, արի, զորավոր» բառից է ծագում: Լինել վիրտուոզ, նույնն է, թե լինել արի և ուժեղ:

457. ԴԻՊԼՈՄԱՏԸ ՊԵՏՔԸ ԵՎ ԴԻՊԼՈՄՆԱՆ ՈՒՆԵՆԱԿ, ԹԵ՞ ԴԻՊԼՈՄԱՏ

Այսօր ողջ աշխարհում գործածական է **դիպլոմատիա**՝ «դիվանագիտություն կամ արտաքին քաղաքականություն», **«դիպլոմատ»**՝ ֆր. diplomate (արտասահմանում գործող որևէ պետության պաշտոնական դիվանագետ կամ ներկայացուցիչ, որն ունի դիվանագիտական աստիճան): **Դիպլոմատիկական փոստ, դիպլոմատիկական կորպուս, դիպլոմատիկական կուրյեր, սուրհանդակ, դիպլոմատիկական ներկայացուցչություն** և այլն, և այլն: Բոլոր այս արտահայտություններում առկա է մի բան, որը հունարենից է գալիս, ուր diploma «երկծալ փաստաթուղթ» է նշանակում: Դա **երկծալ** (մի՞ «երկու»+ploma՝ «ծալք») ամուր կազմով մի փաստաթուղթ էր, որ տրվում էր այն ներկայացնող անձին: Ներկայումս **դիպլոմը** բուռն ավարտելու վերաբերյալ վկայականն է կամ որևէ մրցություն հաղթելու վկայականը: Իսկ որևէ մրցություն կամ կոնկուրսում հաղթածներին անվանում են **դիպլոմատներ**: Բոլոր այս բառերի հիմքում նույն հունարենի diploma՝ «երկծալ փաստաթուղթ» արձատն է:

Եվ վերջապես ամենատրորինակը **դիպլոմատ** բառի «պայուսակ» իմաստն է, տրվում է «երկփեղկ մի տեսակ պայուսակին», որը կողպվում է բանալիով և կողավոր փականքով, թերևս այն նախապես օգտագործում էին դիվանագետները գաղտնի թղթեր կրելու նպատակով:

458. ԵՌԵ ԶՎԵԱՐԿՈՒՄ ԵՆՔ, ՈՒՐԵՍՆ՝ ՉԱՌ ԵՆՔ ԳՑՈՒՄ

— Ո՞ւմ են **քվեարկել**, եթե գաղտնիք չէ.— հարցոցն ընկերս:

Իսկ են հարցին պատասխանեցի հարցով.

— Իսկ դու ո՞ւմ են **քվեարկել**:

Պարզվեց, որ երկուսս էլ **ծայն** ենք տվել մինևույն անձին: Չնագիտական պեղումները պարզել են, որ խորանարդիկներով **գառերով** խաղալը, ընտրություն կատարելը, վիճակ, բախտ գուշակելը մարդու վաղուցված ժամանակների գրազնունքներից է եղել: Վրան կետեր ունեցող խորանարդիկներով նաև ազարտային խաղեր են խաղացել: Չայերենում ավելի շատ խորանարդիկների անվանում են **գառեր** կամ **քվե** (գրաբարում **քուե**), վերջինս վերցված է թալմուդի արամեերենի գաւա՝ «գառ, վեզ» բառից, որին ավելացվել է հայերեն **արկ**—ել՝ «գցել» բառը, այսինքն՝ **քվեարկել** նշանակում է «գառ կամ վեզ գցել, խորանարդիկներով գուշակել, ընտրել»: Ներկայումս քվեատուփին մոտեցողները այստեղ վեզ կամ գառ չեն նետում, սակայն հին սովորության համաձայն շարունակում ենք ասել **քվեարկել**, թեև քվեատուփերում թերթիկներ ենք գցում և ոչ գառեր:

459. ԳՈՍԵՇԻ ԿԱՍ ԶՈՒԲՐԻ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼ... ԹԵ՞ ՏՐԻ ՊԵՍ ԱՆԵԼ

Աշխարհի բոլոր երեսներին էլ ստիպում են ոտանավորներ անգիր անել, այսինքն՝ առանց գրին նայելու ասել ոտանավորը: Որոշ ուսուցիչներ ոչ թե **անգիր**, այլ **բերանացի**, որոշ անձինք էլ ասում են՝ **ջուր անել**, այսինքն ջրի պես սահուն, առանց կանգ առնելու, վարժ արտասանել: «**Ջուր կանես** հա, թե չէ ծեղքից չես պրծնի» (Շ) կամ «Կաղը կգաք անգիր արած **ջրի պես**» (ՅԹ): Նույն թեմանյա՞ն մոտ հանդիպում ենք **սերտել** բառին. «Մի պատանի սերը սրտում դաս էր **սերտում**»:

Մահարու պատմածով դպրոցներում նույնիսկ **սերտարանի** սենյակներ էին առանձնացված:

Իսկ **զոց ըսել, զոց ընել կամ զոց անել, զոց գիտնալ** արտահայտությունն ինչպե՞ս առաջացավ, պարզ է, այսինքն՝ գիրքը փակ վիճակում ասել...

«**Չոց** գիտե ամեն մեկուն դիրքն ու պատկերը» (ԳՁ):

Իսկ ինչպիսի՞ արտահայտություններով էին նույն բանն ասում աշխարհի մյուս լեզուներում, ռուսերենում ասում են **зубрить, вызубрить, зазубрить, зубок** և այլն, այսինքն՝ **զուրը** կենդանու պես ուժ գործադրել, դժվարին աշխատանք կատարել...

Գերմաներենում՝ **բյուֆելարբայտ** (Büffelarbeit)՝ «գոմշի աշխատանք» կատարել: Գիշերք հայերենի **գոմշի ուժ** գործադրել արտահայտությունը, որ դժվարին, ծանր, ուժից վեր գործ կատարելը որակելու համար է գործածվում:

460. ՄԵՇ ՊԱՍ ԵՎ ԲԱՐԵԿԵՆՊԱՆ, ԻՍԿ ԻՆՉ Է ԿԱՌՆԱԿԱԼԸ

Չայոց եկեղեցական մեծ տոներից է **Բուն բարեկենդանը** կամ **Մեծ պասի** սկիզբը: Ողբան հեղինակներ են նկարագրել **Բարեկենդանը**: Գիշերք ևս Աբովյանի «Բարեկենդանը»: Ինչպիսի տոնախմբություններ, կերակուրներ, խաղեր և մրցումներ... Խեղճ հավատացյալներ, զվարճացեք... զվարճացեք, չէ որ 40 օր պիտի **պաս** պահեք: **Պաս**—ը առաջացել է **պասիս**—ից: Որոշ բարբառներում և գրաբարում **պահք**: Իսկ մնատոլիայի մի շարք հայ գաղթաբառներում՝ **պաք** (պահք—ից):

Այս ամենը շատ լավ: Սակայն ինչո՞ւ կաթոլիկական երկրներում **Բարեկենդանը** կոչվում է **կառնավալ**: **Կառնավալը** ամբողջ աշխարհում տարածված բան է, որ նշանակում է «զանգվածային տոնախմբություններ՝ ուրախ պարերով և դիմակներով», հատկապես Լատինական Ամերիկայի երկրներում: Սակայն նախապես **կառնավալ** նշանակում էր իտալերենում **carne**՝ «միս» և **vale**՝ «հրաժեշտ»: Ի՞նչ կապ կա միս և **հրաժեշտի** ու ուրախ տոնախմբությունների միջև: Բանն այն է, որ **Մեծ պահքի** օրերին՝ 40 օր, միս և այլ յուղալի ուտեստներ արգելվում էր ուտել: Պահքն սկսելուց առաջ մարդիկ մի կուշտ ուտում էին մսեղեն և նման կալորիականությամբ հագեցած կերակուրներ, որպեսզի մեծ համբերությամբ արտես իրենց 40 օր: Ահա այստեղից էլ՝ «**հրաժեշտ մսին**» կառնավալ արտահայտությունը, որի մեջ արդեն չի գիտակցվում եկեղեցական նախկին նշանակությունը:

461. ԲՈՐԲԱՏԱԿԻ ԾԱՂԻԿ ԼԻՆԵԼ ՉԻ ԵՇԱՆԱԿՈՒՄ ԱՆԹԻԿԱ

— Մի տես է, ո՞նց է իրեն երևակայում, ասես բորբսնակի ծաղիկ է, — ասում էին մեր հարևանուհուն, որը քիչ էր տնից դուրս գալիս և հազվադեպ էր շփվում հարևանների հետ:

Որքան դիպուկ են ժողովրդական ասացվածքները և թևավոր խոսքերը...

Վերի արտի ցորեն և կամ վերի արտի ծաղիկն են հեզմական արտահայտությունները գրեթե ամեն օր, ամեն ժամ օգտագործվում են հատկապես հին սերնդի մարդկանց կողմից:

Եթե հիշյալ ասացվածքները շատ հասկանալի ու պարզ են, ապա նույնը չի կարելի ասել վերոհիշյալ ասացվածքի մասին նույնպես, որի իմաստը արդեն անըմբռնելի է այսօր հին իմաստի մթազման պատճառով:

Բորբսնակի ծաղիկ է, ինչ է (դարձյալ հեզմական արտահայտության մեջ) ենթադրվում է **բորբոսի* ծաղիկը**, սակայն զարմանք է պատճառում ո՞նքան, քե՛ ինչու է **բորբսնակի ծաղիկը** այդպես «թանկարժեք», և կամ իսկապես խոսքը **բորբսնակի ծաղիկ*** մասին է և ոչ այլ բանի: Կառչելով այս վերջին մտքից իսկապես կասկածում ես, որ դժվար թե խոսքը **բորբոսի** և նրա ծաղկի մասին լինի: Ուրեմն ի՞նչը կարող է լինել **հազվագյուտ** և **արժեքավոր**... Թերևս նման արտահայտությանը կա մեկ այլ գեղեցիկ ծաղիկ, որ **հազվագյուտ** է երևում մարդկանց, բացվում է և շատ արագ անհետանում, որի պատճառով էլ նման որակման իմաստ է դրսևորվում: Այդ փուշտու լեզվում՝ *barbuzak*, քրդերենում՝ *barbarbaza*, բառացի՝ «ծյունածին»: Իսկապես այն վայրի հիբիկն է, որ ձմեռակից անմիջապես հետո է երևում, քիչ անց չորանում: Եվրոպայում գիտական տերմին է *iris germanica* (թրաշուշանի նման մանիշակագույն և մեջտեղը դեղին գծիկներով սիրուն մի ծաղիկ է): Այն հազվադեպ է երևում մարդկանց՝ կարճ ծաղկած մնալու պատճառով: Քջերին է վիճակվում կյանքում գեթ մեկ անգամ տեսնել այդ ծաղիկը ծաղկած: Ահա նրա հազվագյուտ, թանկարժեք կոչվելու պատճառը:

462. ԱՆՏԻ՞Կ, ԹԵ՞ ԱՆԹԻՔԱ

Արդեն առիթ է եղել խոսելու միևնույն բառի երկու կամ երեք տարբերակների մասին, այսինքն՝ ինչպես միևնույն բառը մուտք է գործում որևէ լեզվի բառապաշարի մեջ՝ տարբեր ինչումներով, ինչպես ասենք քիմիա և խիմիա, կրկես և ցիրկ, կարկին և ցիրկույ, մարաջախտ և մարչալ, կաֆե և կոֆե և այլն:

Ահա մենք կարդում ենք Բաֆֆու «Կայծերը», ուր հանդիպում ենք հետևյալ խոսակցությանը.

— Լսել ենք, պարոն բժշկապետը **անթիքա** բաներ է հավաքում. մենք քերել ենք պարոն բժշկապետի համար այնպիսի **անթիքաներ**, որ ողջ աշխարհում չի գտնվի (Կայծեր, էջ 69):

Ինչի՞ մասին է խոսքը, իհարկե հնությունների, հին թանկարժեք իրերի, գտածոների, այնպիսի իրերի, որոնք պատմական թանգարանային արժեք են ներկայացնում:

Անթիքա բառը շատ է գործածական հատկապես արևմտահայ գրական լեզվում և քարթառներում, ուր նշանակում է «հազվագյուտ, չտեսնված, թանկարժեք մի բան»: Բառը ծագում է ֆրանսերենի *antique*՝ «հին ժամանակներին պատկանող», սա էլ՝ լատիներենի *antique*՝ «հնություն», *antique*՝ «հնավանդ» բառից:

Երկրորդ անգամ այս նույն բառը հայերենը փոխ է առել արդեն եվրոպական այլ լեզուներից և ռուսերենից **անտիկ** ձևով, որը սակայն ըմբռնվում է մի քիչ այլ՝ «հին հունառոմեական մշակույթին վերաբերող» և «հին դասական» նշանակություններով:

463. ԵՌԵ ԱՂԱՍԻ ԿՈԿՈՐԴՈՒՄ ՉՄԱՐ ԽՆՁՈՐԸ...

Թե ինչու դրախտից Աստված վտարեց Ադամին ու Եվային, գիտեն բոլորը, խնձորի պատճառով: Սակայն քչերը գիտեն, թե ինչու է մարդու խաչափողից՝ կոկորդից դուրս ցցված մասը **աղամախնձոր** կոչվում: Բազմաթիվ լեզուներում նույնպես այդպես է՝ ռուս.՝ *адамово яблоко*, ֆր.՝ *pome d'Adam*, գերմ.՝ *Adamsapfel* և այլն:

Բայց ինչո՞ւ **աղամախնձոր**: Կորուսյալ դրախտի հետ կապված մի զրույց էլ սա է, որ հնարել են քրիստոնյա ժողովուրդները: Որպես թե օձից խաբված Եվան արգելված պտուղը՝ խնձորը, ճաշակելուց հետո տալիս է նաև Ադամին: Սակայն Ադամը հազիվ է սկսում ուտել, երբ ինչու է Աստծո ահեղ ծայրը.

— Որտե՞ղ ես, Ադամ:

Ադամը հապճեպով ուզում է կուլ տալ խնձորը և նոր միայն Աստծուն ներկայանալ, սակայն այն կուլ չի գնում, մնում է նրա խաչակում՝ չծամված լինելու պատճառով: Ահա և **աղամախնձոր**՝ առաջացման պատմությունը:

464. ԿԱՎԿԱԼՈՍ ԳԱԶԱՐ ԱՌԵՔ...

Փողոցով անցնում էին մարդիկ, իսկ ճամփեզորի մայթից գովազդում էին իրենց մթերքները՝ **հայկական շոկոլադ, կալկալոս գազար առեք...** դեմիորձյան խնձոր **առեք...**

Ես օրերից մի օր դիմեցի գազար ու խնձոր վաճառողին և հարցրի.

— Ի՞նչ է նշանակում **կալկալոս գազար** և կամ **դեմիորձյան խնձոր**...

Նա թե՛ դե ո՞նց ասեմ, **կալկալոս**՝ ընտիր, շատ լավ, շատ համեղ, ո՞նց որ **կասառդորա** ծուկ են ասում, ես էլ կասեմ **կասառդորա**...

— Իսկ **դեմիորձյան**, ինչո՞ւ, չե՞ որ սա **գոլդեն** «ոսկյա» խնձորն է, իսկ այս կարմիրներն էլ այլ տեսակի են: Այ, մենք ունենք ջրմաթաճ, սեմերենկո և այլ տեսակներ, որոնք կոչվում են պատվաստողների անվամբ և կամ սիբիրյանկա և այլն, բայց ինչո՞ւ հանկարծ դեմիորձյան: Այս խնձորների տեսակները ներմուծվել են Ղաչաստանի Կեստկոնի քարտուղար Կ. Գեմիորձյանի օրոք, որի ազգանունն էլ «կալե» է՝ գոլդեն և մյուս խնձորներից: Իսկ չե՞ որ անբացատրելի մնաց **կալկալոս** գազարի հարցը:

Բանն այն է, որ երեսնական թվականներին Ղաչաստան է ներմուծվել Ռուսաստանից ցորենի մի տեսակ, որը քիստեր չի ունեցել, կամ որի քիստերը գրեթե

չէին երևում, իսկ հատիկները խոշոր էին: Այս ցորենի տեսակը կոչվում էր **голый колос** «մերկ հասկ» ունեցող, որն էլ, աղավաղվելով հայերենի խոսակցականում, դարձավ **կակալախ**, հինջը գիտակցվում է որպես «ընտիր» տեսակի և ոչ թե «մերկաքիստ»: Գեներ այս «ընտիր» իմաստն էլ նոր բառ է դարձել մրգերի որակման համար:

465. ՊԻՈՆԵՐՆԵՐ՝, ԹԵ՞ ՀԵՏԱԽՈՒՅՁՆԵՐ, ԻՍԿ ԳՈՒՅԵ ԲՈՅՍԿԱՈՒՏԵՐ՝

— Գայրիկ, այսօր մեզ ընդունեցին **բոյսկաուտի** կազմակերպության մեջ: Մենք արդեն **բոյսկաուտներ** ենք:

— Իսկ դու գիտե՞ս, թե ինչ է նշանակում **բոյսկաուտ**: Այն անգլերեն բառ է կազմված *boy*՝ «տղա» և *scout*՝ «հետախույզ» բառերից: Ուրեմն դուք պիտի շատ ճարպիկ, հնարամիտ, ուժեղ, մարզված, տոկուն տղաներ լինեք, որ դառնաք անվախ մարտիկներ:

— Գայրիկ, իսկ միշտ է եղե՞լ **սկաուտիզմը՝ սկաուտական** կազմակերպությունը:

— Ոչ, այն ստեղծվեց Անգլիայում 20-րդ դարի սկզբում գնդապետ Ռ. Բադեն-Պոուելի (1857–1941) կողմից՝ որպես դպրոցից դուրս ելնախմբի նպատակասլաց դաստիարակության կազմակերպություն, որի մեջ կարող էին ընդգրկվել 7–21 տարեկան տղաներ, իսկ աղջիկներին համար ստեղծվեց **գյորլսկաուտների** (աղջիկ հետախույզների) կազմակերպություն, որովհետև սեռերի տարբերությունը պահանջում էր տարբեր տիպի մարզումներ:

Գայկական բոյսկաուտների կազմակերպությունը ստեղծվեց 1921 թվականին Գայաստանի անկախությունը հռչակելուց հետո, որը սակայն դադարեցվեց բոլշևիկյան պետության կողմից՝ որպես կապիտալիստական գաղափարախոսության միջոց: Տարբեր երկրների բոյսկաուտների միջև կապը իրականացվում է Շվեյցարիայի կենտրոնի կողմից: Գայ բոյսկաուտի գոտու ճարմանդին գրված էր մի կարգախոս **Բարձրացիր՝ բարձրացրու**:

— Գայրիկ, իսկ դու եղե՞լ ես բոյսկաուտ:

— Ոչ: Ես եղել եմ նախ **հոկտեմբերիկ** (որը ռուսերեն **октябрьенок** բառի պատճենումն է, այսինքն Գոկտեմբերյան հեղափոխության սան), հետո՝ **պիոներ**, ապա՝ **կոմսոմոլ**, **կոմերիտական**: Անխտիր մեզ դպրոցում **պիոներ** էին դարձնում:

466. ԻՍԿ ԻՆՉՉ Է ԵՆՎԱՆԱԿՈՒՄ ՊԻՈՆԵՐ: ԴԱ՞ ԷԼ Է ՀԵՏԱԽՈՒՅՁ

— Ոչ, **պիոներ** (ֆրանսերենում *pionner*) նշանակում է «ճանապարհ բացող, ռահվիրա, առաջինը սկսող, նախաձեռնող»: Օրինակ՝ Ամերիկա եկած առաջին եվրոպացիները Մույնպես պիոներներ էին: Երբ մի քիչ մեծանում էինք, մեզ ընդունում էին **կոմերիտական** կամ **կոմսոմոլի** կազմակերպության մեջ: **Կոմերիտական** կազմակերպությունը նշանակում էր **կոմունիստական-երիտասարդական** կազմակերպություն, իսկ **կոմսոմոլ**-ը կրճատված ձևն է ռուսերենի **Коммунистический Союз Молодежи** բառերից (**ком+со+мол**):

467. ԻՍԿ ԻՆՉՈՒ ԷԻՆ ԱՎԱՆՈՒՄ ԱՎԱՆԳԱՐԴԱՅԻՆՆԵՐ, ԹԵՐԹՆ Է՛ ԱՎԱՆԳԱՐԴ

Ավանգարդ բառը ծագում է ֆրանսերենի *avant*՝ «առաջ» և *garde*՝ «պահպանություն», այսինքն՝ «առաջապահներ» բառից՝ նկատի ունենալով երիտասարդական կազմակերպության առաջապահ դիրքերում լինելու հանգամանքը:

468. ԻՆՉՉ ԿԵՎՎԵՐ ՀԱՅԵՐԵՆԸ, ԵԹԵ ԹԱՐԳԱՆՎԵԻՆ ՆՈՏԱՆԵՐԸ... ԻՆՉՈՒ ԴՈ, ՈՒ, ՄԻ, ՖԱ, ՍՈՒ, ԼՅԱ, ՍԻ ԵՎ ՈՉ ԱՅՆ ԿԵՐՊ

Առանց նոտաների հնարավոր է արդյոք երաժշտական կրթություն ստանալ, իհարկե՞ ոչ: Իսկ հարկ կա՞ արդյոք փոխել նոտաների անվանումները սոսկ այն բանի համար, որ նոր անվանումները «հայերեն» պիտի լինեն և ոչ «օտար»: Ուզածդ լեզվի բառապաշարի ո՞ր մասն է «սեփական» բառերից: Չկա գտարյուն, անխառն որևէ լեզու: Եվ արդյոք ճիշտ կլինի նոտաների անունները ավելի գեղեցիկ, ավելի դյուրին ընկալվող և հիշվող դառնալու, քան արդեն միջազգային համրության կողմից ընդունված **դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սի, դո-ն**: Ասենք, **դո-ի** համար մի նոր անուն՝ չիկ, իսկ լա-ի համար էլ նույն անունը հորինեցինք և այսպես շարունակ: Չէ՞ որ իտալացի Գվիդոյի հորինած նոտաների անունները «անթարգմանելի» են և ենթակա չեն պատճենման: Ահա թե ինչու:

11-րդ դարում իտալացի երաժշտական տեսաբան Գվիդոն դ'Արեցցոն մշակեց նոտաների գրանցման 5 գծանի սիստեմը՝ ստեղծելով արդի նոտաների 7 անուններից վեցը՝ **ուտ, ռե, մի, ֆա, սոլ, լա, սի**: Իսկ այս անունները քմախած չէին: Ոչ: Ես վերջոց Գովհաննես Մկրտչին նմիված միջնադարյան մի շարականի վեց տողերի առաջին վանկերը, որը հետևյալ տեսքն ուներ (իեղինակ՝ St. Jean Baptist).

UT queant Laxis
REsonare fibris
Mira gestorum
FAMuli tuorum
SOLve polluti
LABii reatum
Sanocte Iohanne.

Յոթերորդ՝ **սի** նոտայի անունը վերջին տողի սուրբ Իոհաննես բառերի առաջին տառերից է ստեղծված, որն ավելի ուշ կազմվեց, իսկ 17-րդ դարում էլ փոխվեց առաջին նոտայի **ուտ** անունը ավելի հնչեղ **դո** անվանք, և ստացվեց **դո ռե մի ֆա սոլ լա սի** գեղեցիկ հնչաչար:

469. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԾՆՎՈՒՄ ՀԱՍԱՆՈՒՆ ԲԱՌԵՐԸ

Աշխարհի բոլոր լեզուներում էլ գոյություն ունեն **համաճում** բառեր, որոնց իմաստը ընթացում է միայն նախադասության մեջ: Օրինակ՝ չինարենում, տիբեթերենում, աննամբերենում համաճումները մինչև 6–7 իմաստ կարող են ունենալ, այդպիսիք միմյանց հետ չչփոթելու համար արտասանվում են տոնիկ տարբեր շեշտերով:

Բայց ինչպե՞ս պիտի վարվեն հայերը, որոնք լեզվում բառային շեշտը մեկն է:

Օրինակ՝ հայերենի **մարտ** բառը, որ նշանակում է «կռիվ, պատերազմ, ճակատամարտ», ունի իր համաճումը՝ **մարտ**՝ «երրորդ ամիս», որը փոխ է առնվել հռոմեական (լատիներեն) լեզվից, այն հաճախ է շփոթվում հայերեն **մարտ**-ի հետ նույնիսկ նախադասության մեջ. օրինակ՝ «**Մտանք ցեխը**», չի հասկացվում արտադրամաս՝ սը, թե՞ տիղմը: «**Մարտի** մեջ կվերադարձնեն քո զենքը», կռվի ժամանակ, թե՞ մարտ ամսին, չի հասկացվում: Նույնպես օտար փոխառությունների հաշվին են հայերենում համաճումներ դարձել **կետ**՝ «կետ նշանը» և **կետ**՝ «մեծ ծուկ», **փոկ**՝ «պարան» և **փոկ**՝ «կաթնասուն ջրային կենդանի, ծովաշուն», **բալ**՝ «բալենու պտուղը», **բալ**՝ «մեզ, մշուշ», **բալ**՝ «պարահանդես» և **բալ**՝ «միավոր», **բոր**՝ «ուրվախտ, մաշկային հիվանդություն, ջուս» և **բոր**՝ «քիմիական տարր» բառերը:

«Արարատ»-«Սկյութ» խառն ժամանակ հօգուտ «Արարատի» երեք անպատասխան **գոլ** է գրանցվել: Ֆուտբոլի հետ **գոլ** հասկացությունը հայերենի համար համեմատաբար նոր հասկացություն է, և հայերենի բառապաշար է **գոլ**-ը ներմուծվել 20-րդ դարի սկզբին անգլերենից՝ դառնալով հայերենի **գոլ**՝ «քիչ տաք», (Գոլ ջուր տվեք հիվանդին, եղանակն այսօր **գոլ** է) բառի համաճումը և այլն: Եվ այսպես, եթե չեն բարձրանվում օտար բառերը, ապա դրանց մի մասը դառնում է հայերենում արդեն գոյություն ունեցող նույն հնչյունային բառի համաճումը: Հայկական ժողովրդական երգում ասվում է. «Ծիրանի ծառ, **բար** մի տա: Ոնց բախչա ես՝ **բար** չունես: **Բար** են զնում ջահելները, բայց թե ի՞նչ կա **բար**-ի մեջ»: Հայերենն արդեն ուներ **բար**՝ «բերք, պտուղ» բառը, և ահա օտար **բար**-ն էլ:

— Ախորժալուր ձենիդ մատաղ, Չորագեսի ուրխա **դիզել**.— երգում է պրոլետարական մեր բանաստեղծը՝ Դակոբ Հակոբյանը:

Իսկ հայերենն արդեն ուներ **դիզել**՝ «կուտակել, իրար վրա հավաքել» նշանակությամբ բայ, որը ծագում էր դեզ՝ «կույտ, բարոց, շեղք» բառերից. «Ինչպե՞ս են այդքան ոսկի դիզել»:

470. ԸՈՐԹ ԵՎ ԸՈՐԹԵԼ (ՏԵՍ ԸՈՐԹ):

ՅԵՆ (ՏԵՍ ՅԵՆ)

Ֆրանսիական **շարժ**-ով թեև ծիծաղ են շարժում, սակայն ոչ մի կապ չունի այն հայոց **շարժ**-ի հետ, իսկ **կարիկատուրան** քնա՞վ կապ չունի: **Ընկերական**, բարեկամական ծաղրանկարն ընդունված է անվանել **շարժ**: Բայց այն ոչ մի կապ չունի հայերեն **շարժ** բառի հետ: **Շարժ**-ը ծագում է ֆրանսերենի charge, նախապես՝ «բեռ, պարտավորություն, ծառայողական պարտավորություն» բառից, որն իր հերթին խոսակցական լատիներենի *caricare*՝ «գերծանրաբեռնում» բառից է գալիս:

Ահա արդեն գլխի եք ընկնում, որ կարիկատուրա (caricatura)՝ «ծաղրանկար» բառը նույնպես «գերծանրաբեռնում» նշանակությամբ ազգակից է **շարժ**-ին, որը սակայն գալիս է արդեն իտալերենից, ուստի մենք ունենք միևնույն արմատից, միևնույն պլուրեքից երկու բառ, երկու տարբեր արտասանությամբ՝ **շարժ** և **կարիկատուրա**:

471. ԹՅՈՒՐԻՄԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅՈՒ, ԼԻՆՈՒՄ Ե ԵԱԵՎ ԲՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ

Հայկական ռադիոյով հաճախ ենք լսում **սպիտակ տամզո** արտահայտությունը.

— Իսկ այժմ հաղորդում ենք **սպիտակ տամզո**:

Հնչում է տանգոյի մեղեդին, սակայն բարձրանում է նաև հարցը. ինչո՞ւ **սպիտակ**: Արդյո՞ք տամզոները լինում են նաև այլ գույների: Ինչո՞ւմ է **սպիտակի** տարբերությունը: Պարահրապարակներում կամ երեկույթների ժամանակ, երբ հայտարարվում է **белый танго**, ապա աղջիկներն են հրավիրում տղամարդկանց և ոչ հակառակը: Ուրեմն կա տարբերություն տամզոների մեջ, սակայն դրա հետ մեկտեղ նաև մի թյուրիմացություն: Ուսներեն **белый танго** (ոչ **белое**), ընկալելով **սպիտակ**, անհեթեթ բարձրանություն է ստացվել, որովհետև այդ բառը ռուսերեն չէ, այլ իտալերեն: Իտալերենում **bella** նշանակում է **գեղեցիկ**, այսինքն՝ **bella tangoo՝ գեղեցիկ տամզո՝ գեղեցիկ սեռի տամզո**, այսինքն՝ հրավիրելու հերթը տրվում է **գեղեցիկ սեռին**: Ուրեմն այստեղ կատարվել է արտասանությամբ նման երկու բառերի շփոթություն՝ **контаминация**. ռուսերեն **белый**՝ «սպիտակ» և իտալերենի **bella**՝ «գեղեցիկ» բառերի բաղադրություն:

472. ԻՆՉՊԵՍ ԵՂՏՅՈՒՐԸ ԴԱՐՁԱՎ ԾԵՓՈՐ

Քանի որ կենդանիների կոտոշները անհիշելի ժամանակներից ի վեր ծառայել են մարդկանց համար որպես նվազափող կամ սովակ, ուստի քնականորեն նման նյութից շինված գործիքն էլ կոչվել է հենց պարզապես **կոտոշ**, **պող**, **եղջյուր**: Այսպես, օրինակ՝ հայերենում գրաբարից ավանդված ունենք. «Հարին **զփող** պատերազմին, **զպուկն** ու զմաֆիրն, զգաւ հարկան»: Պուկ-ը փոխառյալ է արաբերենից կամ պարսկերենից, ուր **бу** «եղջերյա փող» է նշանակում:

Հայերենի **շեփոր** կամ **շեփորա** բառերը նույնպես սեմական ծագում ունեն, սեմական լեզուներում նախապես այն նշանակել է «եղջյուր», արբ. *sappar*՝ «վայրի այծ», արաբ. *savafir*՝ «խոյի եղջյուր», *šofar*՝ «շեփոր», ասոր. *šifora*՝ «շեփոր», պրկ. *šepor*:

Վերևում բերված նախադասության մեջ հիշատակված երաժշտական գործիքների թվում հանդիպող **գաւ**-ը նույնպես «եղջերափող» է նշանակում, **գաւ** հարկանել «կոտոշ փչել» է նշանակում: Իսկ նախապես պարսկերենում գալով նշանակում էր «կով, եզ», ապա՝ «եղջյուր, կոտոշ, որով ըմպում են, ըմպանակ»:

473. ՀՈՒԲԵԼՅԱԼ

Այս բառը նույնպես սեմական ծագում ունի և եբրայերենի yobel «խոյ», geren hoybel «խոյի եղջյուր» արտահայտությունից է գալիս, որը աշխարհի բազմաթիվ լեզուներին է անցել հոբելյան ձևով:

Ռուսերենում **рог**՝ «կոտոշ, եղջյուր, փող» (**трубить в рог**) բառից ունենք **рожок** «փող, շեփոր», **пастуший рожок**, **охотничий рожок** և այլն:

Լատիներեն com-us (եղջյուր) բառից ունենք «փող, շեփոր» և comicen «փողահար, շեփորահար», ռուս. **горнист**՝ «շեփորահար»:

Գերմաներենում Horn «եղջյուր» նաև նշանակում է «շեփոր, փող», որից էլ ունենք Hornist՝ «շեփորահար», որ բառացի «կոտոշ փչող» է նշանակում: Դրանից էլ առաջացավ Saxshorn՝ «սաքսի եղջյուր», ապա՝ Saxaphon՝ «սաքսի ծայն», իսկ հինեվրոպական ծագում ունեցող այդ kern-ից ունենք նաև տիկի, պարկապզուկի cornemuse (ֆր.), cornamuse (իտ.) անվանումները: Ապա իրանականում corn-ը դառնում է sur՝ «կոտոշ», որից էլ՝ surnay (sur+nay)=զուռնա: Չմոռանանք սակ է, որ հայերենի **սրվակ** բառն էլ իրանական sur՝ «կոտոշ»-ից է:

474. ՈՎԲԻՉ ՏՂԱՆ ԻՆՉ ԿԱՊ ՈՒՆԻ ԱՐԿԵՍՏԻ ՀԵՏ...

— Չեն կարող լսել նրա **ռաբիզ** կատարումները, մանավանդ, երբ բեն է գալիս իր **ռաբիզ** կոշիկներով ու փողկապով.— ասում էր հարևանուհին: Ի տարբերություն դասական երաժշտության՝ քսաներորդ դարում համդես եկավ երաժշտության մեջ մի ուղղություն, որի նպատակն էր ստեղծել աշխատավորական մասսաներին (զանգվածներին) մատչելի և հասկանալի երաժշտություն: Այս նկատառումներով ստեղծված երաժշտությունը անվանվեց **рабочее искусство**, կրճատ՝ **рабник**: **Ռաբիսկ**-ի նպատակն էր մատչելի, պարզ ձևով մատուցել երաժշտությունը ժողովրդին: Նոր ձևով ստեղծված երաժշտությունը իր էությանը տարբերվում էր դասականից և մեն ժողովրդականություն էր վայելում: Ահա այսպիսի նոր երաժշտության ստեղծագործություններն սկսեցին որոշ աղավաղմամբ անվանել **ռաբիզ**: Սակայն **ռաբիզ** անվանումը հայ իրականության մեջ ավելի շատ սկսեց օգտագործվել դասականից դուրս, ոչ դասական երաժշտության որակման համար, ապա սկսեց գործածվել որպես «ամնաչակ», «անարվեստ» ստեղծագործության չափանիշ: Եթե ուզում են մի նոր ստեղծագործություն գնահատել՝ լավ է, թե վատ, ապա ասում են՝ դա ինչ երաժշտություն է, դա **ռաբիզ** է: Այսինքն՝ անորակ, ցածրորակ, անմակարդակ գործ է, օր.՝ **ռաբիզ երգիչ, ռաբիզ երգ** և այլն:

Աստիճանաբար այս որակումն արդեն դարձավ սովորական այլ անձաշակությունները գնահատելու համար ևս՝ **ռաբիզ տղա, ռաբիզ փողկապ, ռաբիզ նշանած, ռաբիզ շոր, ռաբիզ կոշիկ, ռաբիզ շալվար** և այլն:

475. ԵՁԵ ԿԱՊԻՏԱԼ ՈՒՆԵՍ, ՈՒՐԵՍՆ՝ ԳԼՈՒԽ ԷԼ ՈՒՆԵՍ

Այսօր շատ սովորական բառեր են **կապիտալ**-ը, **կապիտալիզմ**-ը, **կապիտալիստ**-ը, մինչդեռ մինչև մեր օրերը նրանք անցել են երկար ճանապարհ:

Բառարանները բացատրում են **կապիտալ**—«դրամագլուխ, փող»: Բուրժուական հասարակության մեջ մեծ քանակությամբ դրամ, հարստություն ունեցող անձը, որը ներդրում է իր դրամական միջոցները արտադրության մեջ, կոչվում է **կապիտալիստ**: Բնականաբար, այն հասարակարգը, որի կացության ձևը հիմնված է վարձու աշխատանքի միջոցով շահույթ ստանալու վրա, և որտեղ արտադրությունը կազմակերպվում է կապիտալի ներդրման միջոցով, կոչվում է **կապիտալիզմ**:

Իհարկե, **կապիտալ** բառը ունի նաև այլ նշանակություններ, որոնք բխում են հիմնական իմաստից, այսպես, օրինակ՝ **կապիտալ** շինարարությունը դրամով կատարվող հիմնական կառույցն է, **կապիտալ** վերանորոգումը՝ հիմնովին վերանորոգումը: **Կապիտալ**-ը գործածվում է նաև «գլխավոր, ամենակարևոր երկը, գործը» նշանակությամբ, օրինակ՝ «Կ. Մարքսի **Կապիտալ**»-ը կապիտալ ստեղծագործությունն է»: **Կապիտալը** ընդհանրապես ունեցվածքն է, ինչքը, գույքը, հնարավորությունը, կարողությունը, այսպես օրինակ. «Իմ **կապիտալ** իմ խելքն է» և այլն: Վերջապես ինչպե՞ս առաջացան այս իմաստները: Թերևս արժե որոնել նրա նախնական նշանակությունը:

Շիծաղելի է, սակայն փաստ է, որ **կապիտալ** բառը ծագում է լատիներենի capital-ist՝ «գլխային, գլխավոր» բառից, որի արմատն է capa՝ «գլուխ»: Capitale էր կոչվում Դիմ Դոմնում քուրմի «գլխակալը», որ զոհաբերության ժամանակ կապում էր գլխին, capitolium՝ «գլխիկ, գլուխ, քաժին»: Սա դեռ ամբողջը չէ: Դոմի յոթ բլուրներից մեկը, որի վրա կար մի տաճար, այն ստացավ capitolium՝ «քարձր, գլխային, վերին» անունը, որտեղ սենատը նիստ էր առնում: Ահա այստեղից էլ ԱՄՆ-ի Վաշինգտոնի Ապիտակ տան **Կապիտոլիում** անունը, որ ընդօրինակված է Դոմից: **Կապիտոլիում** պետք է ընկալել որպես «գլխավոր, վերին, բարձր»:

Ահա թե ինչ. **կապիտալ** ներդնել նշանակում է **գլխադրամը** ներդնել և ոչ թե **գլուխը**:

476. ԹՅՈՒՐԻՍԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ԲԱՌԵՐ, ՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՅՆ ԿԵՐՊ Է ԸՆԿԱԼՈՒՄ ԲԱՌԻ ԱՐՍԱՏԸ...

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՎՅՈՒՆԱՉԵԿԸ ԴԱՐՉԱԿ ԱՆԳԼԻԿԱՆ, ԻՍԿ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆԸ՝ ԴԱՆՃԱՍՈՐ

Երաժշտական գործիքների անունները հաճախ կապված են երկրների, տեղի հետ, հաճախ էլ՝ ստեղծողների անվան, իսկ երբեմն էլ... թյուրիմացությամբ:

Գրոյի մի տեսակը կոչվում էր «ալտային» կամ cor anglai՝ եղջյուր-անկյունավոր: Ոմանք, չգիտակցելով անգլայի «անկյունածև» բառի իմաստը, այսինքն՝ coranglai-ը «անկյունավոր եղջերափող» թարգմանելու փոխարեն այն ընկալեցին սխալմամբ որպես cor anglais՝ «անգլիական եղջյուր», մինչև այսօր էլ այդ թյուրիմացությունը չի ուղղվում, և **անգլիական եղջերափող** է կոչվում **անկյունավոր եղջերափողը**:

477. ՈՌՅԱԼ ԿԱՍ ԴԱՃՆԱՍՈՒՐ, ԱՐԺԵ՝ ՈՒՂԴԵԼ ՍԽԱԼԸ

Դաշնակի-պիանոյի գյուտից հետո սկսեցին կատարելագործված (piano-ներ) պիանոնոն արտադրել, որպեսզի ավելի հնչել և հաճելի ներդաշնակությամբ ընկալվեր **դաշնակի** ձայնը: Եվրոպայում նոր ստեղծված հզոր հնչեղություն ունեցող գործիքներն անվանեցին *pianoforte*, ապա՝ *fortepiano*, բառացի՝ «ուժեղ ներդաշնակ», որը թարգմանվեց հայերենում **դաշնամուր** բառով: Իսկ Եվրոպայում այն ավելի շատ ճանաչվեց *royal*՝ «թագավորական» հորջորջմամբ, որովհետև այդ գործիքը թանկարժեք էր և մեծ տեղ գրավող, հասարակ մահկանացուների համար ոչ մատչելի: Այն դարձավ արքունական և սալոնային, ապա՝ համերգային գործիք: Այնուամենայնիվ հայերենում *ռոյալի* համար ստեղծված անունը փոխանցվեց պիանոյից **դաշնամուր** ձևով, իսկ **ֆորտեպիանոն**, որ պիսի **դաշնամուր** կոչվեր, մնաց *ռոյալ* հորջորջմամբ:

478. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵՂԾ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ԾՆՎԱԾ ԲՎՈՒՐ (ՏԵՄ ՆԱԵՎ ԵՐԳԵՀՈՆ, ՀՈՆԻ ԱՐԱՂ)

Չաճախ են բառեր ծնվում լեզուներում բառերի արմատները չհասկանալու պատճառով, այսպես, օրինակ՝ ռուսերենում **близорукий**՝ «կարճատես» բառը նախապես եղել է **близозоркий**՝ «մոտիկը տեսնող», ապա բառի մեջ իրար հաջորդող երկու մասն վանկերից մեկը՝ *зо*-ն, կրճատվել է, դարձել **близорукий**: Սակայն քանի որ ռուսերենում չկա **рукий** բառ, կարծվել է, որ ճշգրիտ ձևը **близозорукый**-ն է, և սկսել է արտասանվել այդպես՝ **близозорукый**, այսինքն ոչ հեռուն, «մեռեքին մոտ սահմաններում տեսնող»: Նման բառերը ոչ գիտական, այլ ժողովրդական կեղծ ստուգաբանության արդյունք են:

Չայերենում նույնպես ունենք այս կարգի մի շարք բառեր, ինչպես, օրինակ **հաշմանդամ**՝ «խեղված, վնասված անդամով» բառն արտասանվում է **հաշվանդամ** ենթադրելով **հաշիվ** արմատից կազմված մի ձև, քանի որ **հաշվանդամը** առողջությունը կորցրած այն անձն է, որ հաշիվ, դրամ է ստանում:

Նման բան է կատարվել նաև **մարդ-մարդասան, մարդ-մարդասանք** բառում, որը նախապես եղել է **մարդազան**՝ «մարդակերպ, մարդանման», ինչպես ունենք **սրբազան**՝ «սրբի մասն», **այլազան**՝ «այլ կերպ» բառերում: Սակայն իրական **զան**՝ «ձև, կերպ, մասն, պես» բառերի իմաստը չգիտակցելով՝ ժողովուրդը դարձրել է **զան-ը**՝ **ասան**, այսինքն **մարդասան**՝ «մարդ ասող»: «Առավոտ շուտ, քանի մարդ-մարդասանք չկար...»:

479. ԳՐԱՄԱՖՈՆԸ ԴՈՆՆՈՒՄ Է ՊԱՏԵՖՈՆ ԵՎ ԱՊԱ՝ ԴՈՒՐՍ ՄԴՎՈՒՄ ԼԵԶՈՒՆԵՐԻՑ

Մինչև քսաներորդ դարը լույս տեսած բառարաններում դուք չեք գտնի **գրամաֆոն** կամ **գրամոֆոն** բառի բացատրությունը, որովհետև այդ սարքի գյուտը կատարվել է 20-րդ դարի վերջում: Իսկ որևէ նոր գյուտ երբ հրապարակ էր գալիս,

ապա նրա համար անուն էին հորինում հիմնականում հանարենից կամ լատիներենից վերցված բառերից: Եվ ահա ծայնապնակներ (ծայնասկավառակներ) նվագող երաժշտական մեխանիկական սարքն անվանեցին **գրամաֆոն**՝ հունարեն *gramma* «գիր» և *phone*՝ «ձայն» բառերի միացումով: Այն գոյություն ունեցավ մինչև **պատեֆոնի** և էլեկտրականությամբ աշխատող նվագարկիչների երևան գալը, այսինքն՝ մինչև քսաներորդ դարի 50-ական թվականները: Սիա Ա. Բակունցի մոտ հանդիպում ենք. «Սեղանի վրա փողը կապույտ ներկած **գրամաֆոն** էր»: Նույն Ակսել Բակունցի մոտ հանդիպում ենք **պատեֆոն** բառին, որն օգտագործված է **գրամաֆոնի** փոխարեն. «Նրանք պահանջում էին կարի մեքենա... իսկ հարսը նույնիսկ **պատեֆոն**»: Ն. Ջարյանի մոտ նույնպես հիշատակվում է այդ բառը. «Յոթ ծովի մերանը փոխեց իր անխոնջ **պատեֆոնի** պլաստիկան»:

30-ական թվականներին ֆրանսիական մի ֆիրմա, կատարելագործելով **գրամաֆոնը**, այն անվանեց **պատեֆոն**՝ իր՝ ֆիրմայի *Pathe* անվան և հունարենի *phone*՝ «ձայն» բառերի միացումով: Ֆիրման, **գրամաֆոնի** հսկայական փողը փոքրացնելով, հնարամտորեն տեղավորել էր սարքի արկղի ներսում՝ տալով նրան ճամպրուկի տեսք:

Իհարկե, էլեկտրական նվագարկիչները կենցաղից դուրս մղեցին այս սարքերը, սակայն նրանց անունները ամբողջ աշխարհի լեզուներում կամ գոնե բառարաններում մնացին:

Չթարգմանվող բառեր և արտահայտություններ: Նույն բառը երկու անգամ կերտն և կերտսին...

480. ԿԵՐՈՍԻՆ

Կերոսին ներկայումս ասում ենք նավթի մշակության ընթացքում նավթից թորված հեղուկին, որն այրվում է: Կենցաղում օգտագործվում է նաև **կերոսինկա**, որը կերոսինով աշխատող այրման հարմարանք է: **Կերոսին-ը** և **կերոսինկա-ն** քսաներորդ դարում են հայտնվել մեր բառապաշարում՝ եվրոպական լեզուներից և ռուսերենից, սակայն այդ բառերի արմատը հունարենից է վերցված, հունարենում **կերոս**՝ «մեղրամոմ» էր նշանակում: Երբ հուն մավթից ստացան լավ այրվող նավթահեղուկը, որը գրեթե ծուխ չէր արձակում և նավթի լամպերում օգտագործվում էր լուսավորության նպատակով, անվանեցին **կերոսին**, հավանաբար **մոմին** փոխարինելու պատճառով:

Չունարենի **կերոս** բառը մեկ անգամ ևս մենք ավելի վաղ ժամանակներում կրոնական այլ բառերի հետ փոխ ենք առել **կերոն** ձևով, որը հունարենի հայցական հիլովն է և հայերենում «մեծ մոմ», երբեմն նաև «ջահ» նշանակությամբ է օգտագործվել:

481. ՍԱԶՈՒԹ

Սազուքը **նավթի** մշակությունից հետո մնացած թանձր, գորշ հեղուկն է, որի անվանումը ծագում է արաբերենի **մակիզուլաք**՝ «մնացորդներ, թափոն» բառից:

Գետագայում եվրոպական լեզուներում արաբերեն ձևը «մաշվեց, մտավ» և ստացավ **մազուք** հնչումը: Այս ձևով էլ օգտագործվում է այն աշխարհի բազմաթիվ լեզուներում:

482. ՆԱԿԹ

Նավթը անհիշելի ժամանակներից հայտնի է եղել Միջագետքի ժողովուրդներին, և հիմա էլ այն հետամնաց ու հատկապես չգարգացած երկրներում կարևոր դեր է խաղում: Այն սենական լեզուներից է անցել աշխարհի մյուս լեզուներին, արքայերենում՝ *napta*: Դայերը Միջագետքից են վերցրել **նավթ**-ը:

483. «ԼԵՌՆԱՅԻՆ ԽԵԺ» (ԿԱՍ ԱՍՓԱՂՕԹ)

Ասֆալտը հանքային ծագում ունեցող թանձր կուպրային զանգված է, 50–60% բիտումից, որն օգտագործվում է ճանապարհները, մայթերն ու հրապարակները ծածկելու համար: Միջագետքում նրանով փողոցներն էին ծածկում՝ վրան ավազ ցանելով, և պատեր շարում: Նրանից բազմաթիվ ածանցյալներ կան կազմված **ասֆալտապատել, ասֆալտային, ասֆալտած, ասֆալտուղի, ասֆալտագործ, ասֆալտատար** և այլն: Միջին դարերում հունարենից մենք փոխ ենք առել այս բառը **ասֆալոթ** ձևով, քանի որ այդ ժամանակ հայերենը չուներ **ֆ** տառը:

484. ԲԻՏՈՒԿ

Լատին. *bitumen*՝ «լեռնային խեժ», խեժանյութերի ընդհանուր անունն է (ասֆալտ, նավթ, գուղորոն և այլն):

485. ԱՍԲԵՍ

Գրն. *asbestos*՝ «չհրկիզվող», կտավաքար հանքային և հրակայուն բնական մանրաթելերին տրվող հանքանյութերի ընդհանուր անունն է:

Տեխնիկան ծնում է նոր բառեր

486. ԻՆՉՊԵՏ ՏՈՎԱՄԱԿԸ Ե ԾՆՎԵԼ 1950 թ.

Մինչև 20-րդ դարի 50-ական թվականները լույս տեսած աշխարհի ոչ մի բառարանում և հանրագիտարաններում դուք չեք գտնի **տոկվամակ** բառի բացատրությունը, որովհետև այդ տարիներին այն դեռևս գոյություն չուներ իրականության մեջ: Երբ Սովետական Միության ատոմագետները պատրաստեցին **տորի** ձև ունեցող փակ մագնիսական մի թակարդ՝ բարձր ջերմաստիճանային

պլազմա ստեղծելու և պահելու համար, այն կոչվեց **տորոնդալնայնայն կամերա** с магнитным катушками: Քանի որ անվանումը շատ երկար էր, ապա կրճատեցին այն յուրաքանչյուր բառից վերցնելով մեկական վանկ կամ տառ, որից ստացվեց **ТО—КА—МА—К՝** տոկվամակ:

487. ՈԱՂԻՈ՞, ԹԵ՞ ՉԱՅՆԱՍՓՅՈՒՈ

Քսաներորդ դարի արշալույսին 1910–15 թվականներից ծնված բառերից է նաև **ռադիո**-ն: Ռադիոյի գյուտը Պոպովին է պատկանում, սակայն նրա կատարելագործման պատիվը՝ անշուշտ իտալացի Մարկոնիին: Տարածության վրա ծայրը հաղորդելու սարքը կոչվեց **ռադիո**: Ռադիո բառը վերցվեց լատիներենի *radius*՝ «ճառագայթում» բառից, *radio*՝ «ճառագայթում են»: Այնուհետև ստեղծվեցին բազմաթիվ նոր բառեր ու արտահայտություններ՝ **ռադիոակտիվ, ռադիոակտիվություն, ռադիոակտիվ թափոններ, ռադիոակտիվ ճառագայթներ, ռադիոակտիվ տարրեր** և այլն: Մինչդեռ արևմտահայերենում հաճախ կարելի է հանդիպել **ձայնասփյուռ** նորաբանությանը, որ ստեղծել են որպես **ռադիոյի** համարժեք բառ: Բայց իհարկե **ռադիո**-ն այլ է:

488. ՖՈՏՈ

Ներկայումս ընկալվում է երկու իմաստով՝ նախ **լուսանկար** և երկրորդ՝ **լուսանկարչատուն**: Բառը ծագում է հունարենի *phos*՝ «լույս» բառի սեռական *photos* ձևից: Դայերս հունարենի *photos*-ը՝ լույսը, թարգմանել ենք, ապա ավելացրել ենք իրանական **նիկար**-ը և ստեղծել **լուսանկար, լուսանկարիչ** և, ավելացնելով տուն, **լուսանկարչատուն** բառերը:

489. ՏՐԱԿՏՈՐ

Տրակտոր բառը աշխարհի լեզուներում հայտնվեց անցյալ դարի վերջերին, այն գալիս է անգլերենի *tractor* ձևից, որի հիմքում լատիներենի *trahere*՝ «ձգել, քաշել» բառն է: Ինչո՞ւ է այդ մեքենան այդպես կոչվել, որովհետև այն նշանակված էր հողային, գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար: Թերևս որոշ լեզուներ այն թարգմանելու փորձ են կատարել, սակայն մեծ մասամբ թողել են անթարգմանելի:

490. ԱՎԻԱՅԻԱ ԿԱՍ ՍԱՐԴԸ ՍՈՎՈՐՈՒՄ Ե

ԹՈՂՈՒՆՆԵՐԻՑ

Մարդը, նախանձելով թռչուններին, հազարամյակներ փորձեր էր անում թռչել օդում, Իկարիոսի ժամանակներից սկսած: Թռչելու սարքերը կատարելագործվեցին, և մարդը բազմապիսի տարբերակներով թռչում է: Օդային ուղիներով ճանապարհորդելը ոչ միայն հաճույք է, այլև ժամանակի խնայողություն: Եվ ահա

մեր բառապաշարի մեջ հայտնվել են բազմաթիվ բառեր՝ կապված օդազնացության հետ՝ **ավիացիա, ավիատուհիներ, ավիամոդել, ավիատոմս, ավիատոր, ավիաներթ** և այլն: Սակայն որոշ մարդկանց մտքով էլ չի անցնում, որ մարդը ոչ միայն ընդօրինակել է **թռչունին** թռչանման սարքեր հորինելիս, այլև **թռչուն** բառն է օգտագործել վերոհիշյալ բառերը կերտելիս: Ավիա բառը վերցված է լատիներենից, ուր avis՝ «թռչուն, հավք» է նշանակում:

491. ԿՈՌՆԿԱՎԱՐ Է ՀԱՅՐԱ, ԻՍԿ ՏԱՏԻԿԱ ԵՐԳՈՒՄ ԵՐ ԿՈՌՆԿԻ ՍԱՍԻՆ

Այսօր բառարանները, որ գրված են 40–ական թվականներից հետո, **կոռնկ** բառը բացատրելիս ավելացնում են նաև մեկ կետ. **կոռնկ** կամ **վերամբարծ կոռնկ**—«մեխանիկական բարձրացնող հարմարանք, որը շինարարություններում կամ գործարաններում բեռներ է բարձրացնում իր սլաքի օգնությամբ»: Այն ծագում է գերմաներենի Kranich՝ «կոռնկ» բառից, որը ռուսերենում կրճատվել է դառնալով **кран**: Այստեղից էլ՝ մեր նոր բառը՝ **կոռնկավարը**: Իսկ տասն երգում էր հայ պանդուխտի երգը՝ ուղղված չվող կոռնկին:

492. ՍԱՐԴՈՒՆ ՍՈՎՈՐԵՅՆՈՒՄ ԵՆ ՆԱԵԿ ԹՐԹՈՒՐՆ ՈՒ ՃԻՃՈՒՆ...

Մեր նոր բառապաշարում սովորական են **թրթուրավոր տրակտոր, թրթուրանիվ սարքեր, տանկի թրթուրներ** արտահայտությունները: **Թրթուր** բառի բացատրությունը նույնպես ավելացել է մեկ կետով, որովհետև բացի սաղարթները խժռող բազմտանգի միջատից **թրթուր** կամ **թրթուրավոր** է կոչվում տրակտորների, տանկերի, բուլդոզերների և **բետեր**—ների մետաղյա շղթայաձև, հատվածավոր, փաթաթվող ռելսը:

493. ՕՉԻ ՆՍԱՆ ԵՎ ՕՉ Է ՇԱՆՁ

— Կարողը դարձյալ բակի ծորակին էր միացրել իր **շլանգը**: Ավտոյի բաքից բենզինը հնարավոր է հանել միայն **շլանգի** օգնությամբ:

Շլանգը ռետինե ճկուն խողովակն է: **Շլանգ** բառը ծագում է գերմաներենի Schlange «օձ» բառից: Սողունի հետ ունեցած արտաքին նմանության պատճառով է այն ստացել իր անվանումը, իսկ մեզ համար բուն իմաստը չի ընկալվում... հայերենն այն ընկալում է միայն որպես ռետինե խողովակ:

494. ԵԹԵ ՀՐԱՊՐԱՐԱԿԵՔ ՈՐԵՎԷ ԳԱՂՏՆԻՔ, ԴԱ ԿԼԻՆԻ ԱՆԵԿՂՈՏ...

Չին—հին դարերից սկսած զվարճալի և սրամիտ պատմություն ասելը ժողովրդի անենասիրած զբաղմունքն է եղել: Մանավանդ մեր օրերում մեծ տարածում են

ստացել քաղաքական, էրոտիկ, ծիծաղաշարժ, անհավանական, անհավատալի, սակայն անսպասելի տրամաբանական վերջաբան ունեցող զվարճախոսությունները:

Անեկդոտները միշտ նորոգվում են հավուր պատշաճի և կամ հորինվում են օրվա հրատապ անցուդարձի թեմաներով՝ մատուցվելով որպես իրողություն: Ի՞նչ է նշանակում **անեկդոտ**: Այն հունարեն բառ է, ծագում է anekdotos՝ «չիրապարակված» բառից:

Աշխարհում մեծ տարածում ունեն «Հայկական ռադիոյի» **անեկդոտները**, ինչպես նաև հայրենադարձ հայերի՝ **ախպարների** (նորեկ հայերի) հորինած սրամիտ զրույցները, որոնք մեծ մասամբ սրամիտ բառախաղերի լուծում ունեն: Բերենք մեկ—երկու նման **անեկդոտներ**՝ հորինված հայրենադարձ **ախպարների** կողմից:

495. ՍԱՔՈՒՐ ՀԱՅՎԱԿԱՆ ԱՆԵԿՂՈՏ

Խորհրդային տիրապետության տարիներին, երբ օձն իր պորտով, և դուշն իր թևով չէր կարողանում դուրս գալ խորհրդային սահմաններից, հայրենադարձ հայերը փորձում էին վերստին արտագաղթել Սովետական Միությունից: Սիս մի օրինակ. գործարանի տնօրենը մի նորեկի կամ **ախպարի** իր կաբինետն է հրավիրում և փորձում է անաչեցնելով ետ պահել ուն **Կարապետի**՝ հայրենիքը լքելու մտադրությունից:

— Կարապետ, լսել եմ, որ դիմում ես տվել Ամերիկա գնալու համար, բա չե՞ս ամաչում, որ թողնում ես քո հայրենիքը և գնում ես մեզերի. մեքսիկացիների, մաֆիոզների այդ փչացած երկիրը: Ի՞նչ հրապուրիչ բան կա այնտեղ: Ի՞նժ թվում է, որ հեռվից է Ամերիկայի ծայրը գրավիչ հնչում, ինչպես ասում են, դիտլի ծայրը հեռվից է քաղցր հնչում... Մի կտոր հաց դու այստեղ էլ գտնում ես և իզուր հոսանքի հետ մի գնա. ես ոչ մի տարբերություն չեմ տեսնում **այստեղի** և **այնտեղի** միջև, արի ետ կանգնիր սխալ ճանապարհիցը:

Կարապետը բուշկիկյան տնօրենի քարոզչական խրատների դիմաց գտնում է մի սրամիտ, զինաթափող պատասխան և «հիմնավորում» է իր գնալը հետևյալ բառախաղերով.

— Ընկեր տնօրեն, կըսեք տարբերություն չիքա **հոսի** և **հոնի** մեջ: Ե, եթե տարբերություն չիքա, հապա ինչո՞ւ կըսեն **հոնի** արաղ և ոչ **հոսի** արաղ, ինչո՞ւ կըսեն **երզեհոն** և չեն ըսեր **երզեհոս** և ինչո՞ւ կըսեն **հոնորար** և չեն ըսեր **հոսորար**:

Անեկդոտ, «չիրապարակվող» կոչվեցին նման զրույցները՝ նկատի ունենալով այս կարգի զրույցների մեծ մասամբ անպատշաճ, անպարկեշտ, ցինիկ, լպիիր թովանդակությունը, իսկ այժմ նաև քաղաքական, հակապետական բնույթը, քանի որ պատմվում էր մեղ շրջանակներում և ոչ հրապարակավ: **Անեկդոտ** բառը չի պատճենվում:

Անեկդոտային ածականը նշանակում է «անհավատալի, անիրական, չեղած, ֆանտազիա»:

496. ՈՐՔԱՆ ԷԼ ՍԵԾ Է, ՄԻԵՎՆՈՒՅՆ Է, ԳՐՈՇ Է

Եվրոպական լեզուներից, լատիներենից՝ denarius grosus, գերմաներենից, ավստրիերենից Groschen, ապա լեհերենից՝ grosz, ռուսերենից՝ **гросш**, հայերենին անցած **գրոշ** բառը ամենահաճախ գործածվող բառերից մեկն է. «**Գրոշ** չարժի»: «Նրա զինը մեկ **գրոշ** է»: «**Գրոշի** զին»: «**Գրոշի** արժեք չունենալ» և այլն:

Ամենացածր արժեք ունեցող մետաղադրամն է եղել այն, որի արժեքը 12-րդ դարից սկսած (երբ Իտալիայում էր հատվում) նախապես հավասար է եղել Ռուսիայում 1657–1838 թ. 2 կոպեկի, ապա՝ մեկ և հետո՝ կես կոպեկի (1838–1917), անընդհատ իջել է նրա արժեքը:

Այստեղից էլ՝ **գրոշանոց**, որ հավասար էր 1 կոպեկի, դարձավ ոչնչության հավասար մի բան: Որպեսզի որոշ չափով նրա նկատմամբ հարգանքը մեծանա, սկսեցին հատել այդ դրամը ավելի խոշոր չափով և քաշով, քան մյուս մետաղադրամներն էին, սակայն, ավազ, ուշ էր, արդեն նա վաստակել էր ամենացածր զին ունեցող դրամի արժեք, և ոչ մեկի կարծիքը այսուհետև չփոխվեց նրա արժեքի վերաբերյալ: Միևնույն է, ռուսը ասում է՝ **гросш цена**, եթե որևէ բան չնչին արժեք է իրենից ներկայացնում կամ անարժեք է:

497. «ԽՈՐԱՍԱՆԿԻՐ, ԹԵ ՉԷ ԿԱՍԵՆ՝ ՆԱԻՎ ԵՍ...»

Աշխարհի բազմաթիվ լեզուներում գործ է ածվում **ճափ** բառը՝ «միամիտ, դյուրահավատ, ոչ խորամանկ, պարզունակ» նշանակություններով: Սակայն սրանք **ճափ** բառի արդի իմաստներն են. հնում այն այլ իմաստով է գործածվել: Այն լատիներենում հնչում էր naivus, որը նշանակում էր «բնական», ֆրանսերենում՝ naïf, naïve:

Ուրեմն, դուրս է գալիս, որ եթե մեկը կյանքում չի խորամանկում և արտահայտվում է իր բնական, սովորական ելույթամբ, ուրեմն նա **ճափ** է՝ պարզունակ:

498. ԻՆՉՈՒ Է ԹՈՒՐԸ ԿՈՉՎՈՒՄ ՀԱՎԱՐՄԵՆ...

Միջին դարերի մատենագրությանը ու ժողովրդական խոսակցական լեզվում մի քանի տարբերակներով ունենք ավանդված **հավլունի** բառը, սակայն միշտ որպես **թուր** բառի որոշիչ ածական: Որոշ ձեռագրերում ունենք **հաւալանի**, **հաւալունի**, **հաւալալի**, **հաւալալի**, նաև ժողովրդական **հավլունի**, որոնցից և ոչ մեկն էլ չի հուշում, թե նախնականը որ ձևն է, այսինքն՝ ո՞րն է ուղիղը, ճիշտը: Նշանակությունը բառարաններում բացատրվում է «մեծ»: Գ. Թումանյանը ունի՝ «Կապեք թուրը **հավլունի**»: Շիրազը՝ «Ինքը քնքը մի մանուշակ, խոսքը մի թուր **հավլունի**»: Բայց ի՞նչ է վերջապես **հավլունի**-ն: Այս մասին Գ. Աճառյանի «Դարերի արձագանքներում» լուր է: Սակայն խոսում է արաբերենի բառարանը: Արաբերենում **հավլ** (hawl) բառն ունի «վախ, սարսափ, սարսափազդու, ահռելի, ահազդու» նշանակությունները հաճախ արձատից, որն ունի նաև «լուսապսակ, փայլատակում» նշանակությունները: **Չավլ** արձատին ավելացվել է –ունի և կազմվել է **հավլունի**՝

«սարսափազդու, ահեղ, ահռելի, սակայական» նշանակությամբ: Ուրեմն **հավլունի** այս նշանակություններով պիտի ընկալել և ոչ թե **մեծ**, ինչպես բացատրվել է ներադրաբար սխալ:

499. ՅՆԾԱԼ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է «ՐՃՎԵԼ», ԲԱՅՑ ՆԱԵՎ՝ ՀԱՐԿԱԴՐՎԱԾ ՎՃԱՐԵԼ

Հաղթանակը ցնծությամբ էր լցրել թուրքի սրտերը: Փոքրիկի դեմը **ցնծում** էր հրճվանքից: «Ցնծա, քյուրվիշապ Դայաստան աշխարհ...»:

Ցնծ արձատից ունենք ցնծաբեր, ցնծազին, ցնծալի, ցնծալուր, ցնծահույզ, ցնծածայ, ցնծամույն, ցնծապատար, ցնծառիթ, ցնծավետ, ցնծացնել, ցնծերզ, ցնծին տալ և այլ բառեր:

Սակայն լեզուն այնպիսի անակնկալներ է մատուցում, որ տրամաբանության հետ երբեք չի համընկնում... Ահա բերենք մի քանի օրինակներ մեր ժողովրդական խոսակցականից, որ արձանագրված են Դոռոշանի, Օտյանի և այլոց երկերում. «Ուստե՛ն ասեք. «Բարկեն, **ցնծա**: **Ցնծա**՝ տեսնե՛մ, տղեր խալխի փողերը շատ ա ուտում»»: «Ապետացում եթե հարուստ է, առատածե՛ն է, ծայն չհաներ և կիսվան է պահանջված գումարը **ցնծալու**» (Ե. Օ.):

Իհարկե, հարկադրաբար դրամ կամ գումար վճարելը, որքան էլ առատածե՛ն լինի վճարողը, ուրախություն, առավել ևս **ցնծություն** չի կարող պատճառել նրան, այլ հեզմաբար պիտի ընկալել այս իմաստը...

500. ՍՈՒՐԻԿԸ՝ ՈՐՏԵՂ, ԲՈՐԴՈՆ՝ ՈՐՏԵՂ...

Ընկերս նոր մեքենա (այսինքն՝ ավտոմեքենա կամ եթե կուզեք՝ ինքնաշարժ) գնեց և նախքան տուն հասնելը կանգ առավ ներկերի խանութի առջև: Նա խնդրեց վաճառողից 2 լիտր **սուրիկ** տալ: Ես զարմացա, հարցրի նրան այդ **սուրիկ**-ի մասին: Նա թեև լեզվաբան չէր, սակայն, շատ կարողացած մարդ լինելով, բացատրեց, թե ինչու այդ կարմիր ներկը **սուրիկ** է կոչվում. «Ղու գիտե՛ս, որ ներկայիս **Սիրիա** երկրի անունը նախկինում արտասանել են **Սուրիա**» (արաբերենում, արևմտաօստրալանդում հիմա էլ է **Սուրիա**), իսկ Սուրիայում վաղնջական ժամանակներից գիտեին կարմիր ներկ պատրաստելու գաղտնիքը, մի ներկ, որն արևից չէր գունաթափվում և նույնիսկ մետաղն էր փրկում ժամգից: Այս ներկը շատ հարգի էր հարևան և հեռու երկրներում և տարաշխարհում: Դույններ այն անվանում էին **սուրիկոն** կամ **սուրիկ** (**սուրիկոն**–ը հունարենից է, որտեղ surikon նշանակում է «սիրիական»): Այսօր որտեղ էլ արտադրեն այդ ներկը, Սիրիայում, թե այլուր, միևնույն է, նրան «կպել» է **սուրիկ** անունը:

501. ԲՈՐԴՈ

Նրա հազին **բորդո** կոստյում կար: Այս բառի ծագումը (բորդո նշանակում է «մուգ կարմիր») կապված է Ֆրանսիայի **Բորդո** քաղաքի հետ, ուր նշանավոր մուգ կարմիր

գինի էին պատրաստում, երբ ասում էին՝ բորդոյի կամ բորդո գույնի, հասկանում էին այդ գինու գույնը: Ուրեմն աշխարհի ժողովուրդների (այդ թվում նաև հայոց) լեզվում և որդեգրվեց բորդո բառը, որ ծագում էր բնակավայրի անունից:

502. ԵՁԵ ԶԻ ԶՈՒԷԻ, ԿԱՐՈՂ Է ՍԱՐԴԸ ԱՍՊԵՏ ԿՈՉԿԵԼ...

Առօրյա խոսակցության և զեղարվեստական գրականության մեջ հաճախ ենք հանդիպում «Ասպետորեն» ներքե կնոջ սխալը, հիմա քիչ են հանդիպում այդպիսի **ասպետ** տղամարդիկ», «Նրա այս վերջին արարքը միայն **ասպետություն** կարելի է անվանել» արտահայտություններին:

Ասպետական քայլ, ասպետական արարք, ասպետական վարմունք և այլ նման արտահայտություններում, ինչպես նաև վերևի մեջքերումներում **ասպետ** բառով կազմված ձևերն ընկալվում են «մեծահոգորեն, վեհանձնորեն, վեհանձնաբար, մեծահոգաբար» նշանակություններով: Սակայն հին հայերենում **ասպետը** այն անձն էր, որն ուներ ձի և ազնվական, իշխանական ծագում: Իսկ ինչո՞ւ անպայման ձի ունեցողն էր **ասպետ** կոչվում: Որովհետև նախապես այդ բառը նշանակում էր «ձի ունեցող (ազնվական), հեծյալ (հիշխան)»: **Ասպետ** բառը իրանական ծագում ունի, այն կազմված է *asp* «ձի» և *patē* «պետ» եզրերից: Դայկական իշխանական տնօրին մեջ ամենապատվավոր ասպետները **Բագրատունիներն** էին, որոնց և վատահված էր թագավորին թագադրելու պատիվը: Այս պատճառով էլ նրանց կոչում էին **թագադիր ասպետ, թագադիր արքայի**:

Եվ այսպես, մեր օրերում կարող է մարդ ձի չունենալ, հետիոտն երթնելել կամ ավտոմեքենայով շրջել, սակայն կոչվել **ասպետ**՝ ասպետին սագական կեցվածքի, վարվելաձևի համար:

Զարմանալիորեն մյուս եվրոպական մի շարք լեզուներում ևս **ձիավոր, հեծյալ** բառը, որ լատիներենում հնչում էր *caballero*, իսպ., ֆր., լեհ., ռուս.: *кавалер*, նման իմաստաշրջության է ենթարկվել: **Կավալեր** բառից է ծագում կավալերիա՝ «հեծելագոր» բառը: **Ասպետ, հեծյալ** իմաստից բացի **կավալեր**–ը ռուսերենում գործ է ածվում նաև «երկրպագու, սիրած, պարընկել, սիրող գույզի տղամարդը» և այլ իմաստներով: Նույնիսկ նշանակում է «շքամշանակիր», օր: «Նա «Ոսկե աստղի» **կավալեր** է»:

503. ԿԻՆԱ-ԿԵՂԵՎ-ԽԻՆԻՆ

Մալարիա (դոլորոց, տենդ) հիվանդության բուժումը կատարվում է **կլեպի** կամ **խիմի** օգնությամբ: Իսկ ինչո՞ւ **կեղև** կամ **խիմի**, որովհետև Պերուի կենդան ցեղի հնդկացիների լեզվում **կինա** կամ **կինակինա** նշանակում էր «կեղև, կլեպ»: Եվրոպացիները սովորեցին նրանցից մալարիայի բուժումը կինակինայի օգնությամբ: Այս ակալիդի պարունակող ծառերի կեղևից ստացվող նյութը գերմանացիները **խիմա**, իսկ դեղահարերը՝ **խիմին** կոչեցին: Այս ձևով այն մտավ բազմաթիվ լեզուների, այդ թվում նաև հայերենի բառապաշարի մեջ:

504. «ԿՅԱՆԸ ՏՎՈՂԸ» «ԿՅԱՆԸՆ» Է. ԻՆԸԸ՝ ՎԻՏԱՄԻՆԸ

Մարդու կյանքի համար խիստ անհրաժեշտ քիմիական տարրեր նյութերի միացությունները կոչվեցին **վիտամիններ**, այս բառի հայերենը չկա: **Վիտամինը** լատիներենի *vita*՝ «կյանք» բառից է: Իսկ ինչո՞ւ **կյանք**, որովհետև կյանքի գործունեության համար բազմաթիվ օրգանական միացություններ, թեև քիչ քանակով, խիստ անհրաժեշտ են մարդուն, դրանք լավ ուսումնասիրված են և համարակալված **A, B, C, D, E** և այլն:

505. ՊՈՒՆԸԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԳԱՂՏԵԻԹԸ... ՏԱԼԻՍ Է ՀԻՆԴԻ ԼԵՉՈՒՆ

Պունըն հաճույքով են ըմպում եվրոպայում և աշխարհի շատ այլ երկրներում: Առաջինը **պունջին** ծանոթացան անգլիացիները Գոկլաստանում: **Չինի** լեզվում այն հնչում էր **փանց** (*pance*), որ նշանակում է «հինգ»: Իսկ ինչո՞ւ խմիչքի անունը՝ **հինգ**: Որովհետև **փունց, փանց** կամ պունջ պատրաստելու համար անհրաժեշտ էին 5 բաղկացուցիչներ՝ օղի, շաքար, լիծոնի հյութ, ջուր և համեմունքներ: Ահա փանջի պատրաստման բաղադրատոմսը: Ինչպես տեսնում ենք, **փանց**՝ «5» բառի ոչ միայն իմաստն է մթազնել, այլև արտասանությունն է աղավաղվել՝ դառնալով **պունջ**:

506. ԷՍԵՆՑԻԱ՝ «ՆԳԱՊԱՏԻԿ ԿՈՐԶՎԱԾ ՈՂՈՒ» ԷՈՒԹՅՈՒՆ...

Որպես ջրազմանվող բառ հայերենի բառապաշարում ևս գործ է ածվում **եսենցիան**, որ նշանակում է որևէ ցնդող նյութի **խտալուծույթ** կամ **ուլթյուն**: Լատիներեն ծագում ունի այս բառը, որ նշանակում էր *quinta essentia*՝ «հնգապատիկ կորզված ոգի», այսինքն՝ **ուլթյուն**, բնույթ:

507. ԱՐԱՂ, ՋՔԻ, ՕՂԻ

Աստվածաշնչի հայերեն օրինակում բազմիցս հիշատակվում է **ցքի** բառը «օղի» նշանակությամբ: Այն շատ հին ծագում ունի և հավանաբար սեմական բառ է: Աքքադերենում *zaqu* նշանակում է «մաքուր, զուլալ, թորված»: Իսկ ժողովրդախոսակցական լեզվում գործ է ածվում **արաղ**–ը, որ դարձյալ սեմական ծագում պիտի ունենա: Արաբերենում *arak* նշանակում է «քրտինք» (թորելիս կաթիլների ձևով օդու հոսելը նկատի առնելով): Իսկ **օղի**–ն առայժմ հայտնի չէ՝ ինչ ծագում ունի:

508. ԾԽԱԿԱՆ ԳՊՐՈՑԸ ԿԱՊ ՈՒՄԻ՞ ԾԽԻ ՀԵՏ

Պատմում էր տատս, որ պապս բախանա է եղել և ունեցել է մինչև 175 **ծուխ**: Ինչպես թե **ծուխ**: Նա բացատրեց, որ **ծուխը** փոխաբերաբար նշանակում է «տուն»,

տնտեսություն, ընտանիք, նաև գերդաստան», որովհետև մի քանի տղա ունեցող հոր ընտանիքը, հաճախ բազմանալով, դեռևս մնում էր հայրական օջախում: Գրականության մեջ և որոշ բարբառներում **ծուխ**–ի փոխարեն հանդիպում ենք նաև **երդ** բառին: **Երդ** կամ **երդիկ** բառով է արտահայտվել տուրը կամ ընտանիքը՝ անվախ նրա ներսում քնակվող ընտանիքների թվից: Այսինքն՝ յուրաքանչյուր երդիկից կամ երդից ելնող ծուխը մեկ ընտանիքի հաշիվ էր:

Ահա և մոտենում ենք **ծխական դպրոց**, **ծխական քահանա** հասկացություններին: Մինչև 1917 թ. հեղափոխությունը Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների գյուղական դպրոցներն անվանում էին **ծխական**, որոնք ունեին 3–6–րդ դասարաններ, իսկ քահանաներին՝ **ծխական քահանաներ**:

509. ԻՆՉՊԵՏ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԿԻՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ ԱԶԳԱԿԱՆ Ե ԴԱՌՆՈՒՄ ԵՎ ԲԱՐՁԻԹՈՂԻ...

Ես արդեն մեծերի գործերից բավական բան հասկանում էի և առաջին դասարան էի հաճախում, երբ պիտի ծնվեր քույրս: Ինձ շտապ ուղարկեցին **մամիի** ետևից: Երբ **մամիի** հետ մտամք բակ, մեզ տեսնելով՝ մորաքույրներս ուրախ բացակայեցին.

— **Մանկաբարձուհին** եկավ, եկավ:

Ես երկար տարիներ տանջվում էի **մանկաբարձուհի** բառի իմաստի վրա՝ մտածելով, թե ինչու իր հետ **մանկան բարձ** չէր բերել **մանկաբարձուհի մամին** և ինչու եկել էր դատարկածեռ: Իմ միտքը պտտվում էր ավելի շատ **բարձ** բառի շուրջը. բան թե **մանկան**, որը հասկանալի էր: Թեև **բարձ** բառն էլ էր հասկանալի, երբ քրոջս ծնունդը շնորհավորողները ասում էին մորս. «**Բարձը** բարի»: Ուրեմն իսկապե՞ս **մանկան բարձի** մասին էր խոսքը և ոչ ուրիշ բանի: Անցան տարիներ, և ես միայն գրաբարի ժամերին հասկացա **բարձ** բառի իմաստային առումները, որից մեկն էլ «վերցնել, բարձրացնել» էր: Այսինքն՝ **մանկաբարձ**՝ «մանուկ վերցնող, մանկանը բարձրացնող»:

Այս **բարձ** բառի «վերցնել, առնել» նշանակությունը ես գտա նաև **հոգաբարձու** բառի մեջ, որը նույնպես ինձ բավական ժամանակ մտախառնեցում էր, թե ով է այս **հոգաբարձուն**. Ինչ՞ու՞ **հոգու բարձ**: Հասկացա բառի իմաստն այն ժամանակ, երբ ինձ համար պարզ դարձավ, որ **հոգաբարձու** բառի մեջ առաջին մասը ոչ թե **հոգի** պիտի հասկանալ, այլ **հոգս**, այսինքն՝ **հոգսը վերցնող** անձ, այլ կերպ՝ **խնամակալ, հոգացող**, որևէ կազմակերպության, դպրոցի, ճեմարանի **հոգաբարձու, խնամակալ, խնամքը, հոգսը** իր վրա վերցնող: Օր.՝ «Ներսիսյան դպրոցի **հոգաբարձու** էր հորեղբայրս»: «**Հոգաբարձուների** խորհուրդը նվիրյալների խումբ է»:

Հապա ինչպե՞ս հասկանանք **բարձիթողի** արտահայտությունը: Մեր տանը բոլոր գործերը **բարձիթողի** վիճակում են: Այն նշանակում է «վերցված–թողնված», այսինքն՝ բարձրացված և զցված: Բարձիթողի վիճակում են հիմա դպրոցները:

510. ԵՐԵՅՓՈՒԽԱՆՆ ԻՀԱՐԿԵ ԱՆՓՈՒԽԱՆ ՀԻ ԼԻՆՈՒՄ...

Ես երկար ժամանակ զլուխ էի կտրում, թե ինչու մարդը պիտի կոչվի **երեցփոխան**, այսինքն՝ քահանայի ոտաշոր, տերտերի ոտաշոր, վարտիք: Իսկապես բառարանները բացատրում էին **երեց**՝ «ավագ, տերտեր, քահանա», իսկ **փոխանը**՝ «ոտաշոր, վարտիք»: Երբ գլխի ընկա, որ **փոխանը** նաև կարելի է **փոխանորդ**, **փոխնորդ** բառով էլ արտահայտել, նոր միայն պարզ դարձավ **երեցփոխան** բառի նշանակությունը, որ **փոխնորդի**՝ **սպիտակեղենի** հետ ոչ մի կապ չունի, այլ՝ **փոխարինողի**: Այն մեր ժամանակներում համարյա թե չի օգտագործվում: Նախկինում **երեցփոխանը** եկեղեցու տնտեսությունը վարելու համար ծխականների կողմից ընտրված անձն էր, այսինքն՝ **քահանայի փոխարեն** եկեղեցու տնտեսությունը վարող, երեցին **փոխարինող** անձ, որ զանապապի, մոմավաճառի, ծախսարարի աշխատանքն էր համատեղում, այլ կերպ կոչվում էր նաև **աթռակալ**:

Մեր օրերում փորձ արվեց օգտագործել **երեցփոխան**–ը «ղեկուտատի», «պատվիրակի» նշանակությամբ, սակայն այն տարածում չգտավ:

511. ԲՆՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԵՐԻՑ ԾՆՎՈՒՄ ԵՆ ԲԱՌԵՐ

ճոկ, **ճպուռ**, **մլավոց**, **բառաչ**, **կարկաչ**, **շառաչ**, **շշուկ**, **շշունց**, **ագառվ**, **մկկոց**, **խրխինջ**, **թխկոց**, **ճայթոն**, **ֆշշոց**, **խոմիոց** և այլ նման բառեր անվիճելի է, որ աղմուկի նմանողությամբ են ստեղծված:

Մեծ թիվ են կազմում նաև դարերի խորքից եկող մի շարք ջրամանների կամ կուլաների ու կուժերի անվանումները, որոնց հիմքում հենց այն ձայնն է, որ իրենց միջից է դուրս գալիս հեղուկը, ջուրը կամ գինին դատարկելիս:

Մեր նախնիները, գեղագիտական հաճույքից ելնելով, ոչ միայն կուլաների արտաքին ձևավորումն են ճաշակով կատարել, այլև ջրամանների վզիկները նեղացնելով և ծակտակեն փակվածներ դնելով՝ ստեղծել են գեղեցիկ, երաժշտական հաճույք պատճառող «երգեցիկ» ջրամաններ՝ հեղուկը նրանց միջից դատարկելիս: Ահա թե ինչ են գրում լեզվաբանները նման ջրամանների անունները բացատրելիս:

Սեբաստիայի բարբառի բառարանի հեղինակ Կ. Գաբրիկյանը գրում է. «**Բլբլը**–նեղերան սափրիկ, դորակ, բնածայնած ջուրը բլբլ–բլբլ ձայն հանելեն կվագե» (118): Համեմատեք Վանի **պլպլիկ**–ի և Ալաշկերտի **բորդիկ**–ի հետ: Սասունում նույնպես **բորդիգ**, **բորդեղիկ** կար (Ա. Պետրոյան), իսկ Գազանջյանը վկայում է Եվրոկիայում **պլպլ** կուժի մասին, որը ջուրը դատարկելիս կոկորդից պլբլպլբլ ձայն է հանում (51): Հիշեցնենք, որ պարսկերենում նույնպես **բուբուլե** անունով (boibole) կուժ կա, որի վիզը նեղ է ու երկար, նույն պարսկերենում **բուբուլի** նշանակում է «բլբլացնել», իսկ **բլբուլ** (bol–bol) բառն էլ հենց այս բնածայնությունից ծնված անվանումն է: Հ. Աճառյանը ի թիվս մի շարք բնածայնական անուններ ունեցող կուլաների հիշատակում է նաև **կուլկուլ**–ը՝ կլկլ ձայնից, **զլզլը**, որ համապատասխանում է Կ. Գաբրիկյանի նկարագրածի հետ. «**Գլզլը**– նեղերան դորակ, ուրվէ ջուրը գլլ–գլլ ձայն հանելեն կվագե» (142): Նույն բառարանում նա բերում է նաև Կարինում պատրաստվող **բլբլս** կավե ջրամանի հիշատակությունը (118):

Հավանաբար կուլա, պուլիկ կուզում, մամնամ բառերն էլ ունեն բնաձայնական ծագում:

Սակայն սա դեռ ամբողջը չէ: Բանն այն է, որ մեզանից մի քանի հազարամյակ առաջ ապրող մեր հարևանները՝ խեբերը, խուտիները, բաբելացիները, նույնպես զուրկ չեն եղել գեղազիտական ճաշակից, և նմանատիպ ջրամաններ են պատրաստել, որոնց մասին տեղեկանում ենք սեպագիր արձանագրություններից: Նման անոթները նրանք գործածում էին ծիսական, կրոնական արարողությունների ժամանակ, որպեսզի խորհրդավորություն տան սպանդելու իրենց արարողություններին: Նման կուլաներից են խեթական կիլ-կիլը (KIL-KIL), պուլան (PULA), կումկումը և այլն:

512. ՆՈՐ ԲԱՌԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵԿ ՀՆՉՅՈՒՄԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՄ...

Լեզվից լեզու անցնելիս հաճախ է պատահում, որ բառերից մեկ հնչյուն «կորչում» է, այսինքն «ընկնում» է, սակայն պատահում է նաև հակառակը, այսինքն՝ որ թե տեղի է ունենում հնչյունի կորուստ, այլ հավելում, ահա և անհապաղ բերենք օրինակները.

ա) Հնչյունի հավելում

Յուրաքանչյուր հայ կամ Կովկասի բնակիչ ծանոթ է **գառ**-ին, որով նարդի են խաղում: Միաժամանակ գրականության մեջ (լինի դա հայերեն, լինի այլ լեզվով) ընթերցողը հանդիպում է **ազարտ** բառին, որի նշանակություններն են «անգուսպ, բուռն կիրք, մուլուցք, տարվածություն խաղի կամ մրցման մեջ»՝ «Նա **ազարտի** մեջ էր և չէր զգում, որ բախտն իրենից երես է թեքել, և ողջ ունեցվածքն արդեն տանուլ է տվել»:

Ազարտ-ը ծագում է արաբերենի *azar*՝ «զառերով խաղ» բառից, որը, անցնելով ֆրանսերենին, պորտուգալերենին ու իսպաներենին, ապա նաև եվրոպական այլ լեզուներին, դարձել է *hazard*՝ մեկ հնչյունի հավելմամբ: **Ազարտ**-ը աղավաղված՝ երկու հնչյունի հավելմամբ (**գառ**-ի հետ համեմատած), որպես նոր բառ հայտնվել է նաև հայերենում:

բ) Հնչյունի կորուստ

«Լազուր երկնքում ամպի ծվեն անգամ չկար»:

Լազվարթ կամ **լազուր**, կապույտ քարը իր անվան հետ տարածվել է ամբողջ աշխարհում **Բադաշխանից**: Հնդկաստանում դարձել է *lazavarda*, արաբների մոտ՝ *lazvard* կամ *lajvard*, լատին.՝ *lazurum*, *lazulum*, *azurum*, *azura*, գերմաներենում՝ *Azur*, անհետացել են բառակազմի լ-ն, վ-ն՝ բառամիջից և դ-ն՝ բառավերջից:

Լիտավր՝ «ծծողա»՝ հարվածող երաժշտական գործիքի անվանումը ծագում է հին հունարեն *polytaurea* բառից: Այն հարվածային գործիք է՝ սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր գործիքներից մեկը: *Poly* նշանակում է «բազմաշատ», *poly* բառի քօ-ն ընկել է՝ դառնալով *lytaurea*: Ռուսերենում այն արդեն զրկված է առաջին վանկից՝ դառնալով **литавра**:

513. ԼԱՏՈՒՆԸ ԳԻՏԵՐ ԸՐԴՅՈՔ, ՈՐ ՈՍԿՈՒ ԺԱՈՒՆԳ Է ԻՆՔԸ...

Ռուսերենում **արդյուրիմ** կամ ոսկեզույն պղնձին, պղնձալարին անվանում են **латунь**: Նեղ մասնագիտական շրջաններում **արդյուր**-ի փոխարեն ավելի շատ գործ է անվում **լատուն** բառը՝ ի զանազանում կարմիր կամ մյուս պղնձի (պղնձալարի): Այս բառը «ծնվել» է **մեկ** տառի կորստով: Թուրք-թաթարական լեզուներից է անցել այն ռուսերենին՝ *aitun*-ը՝ «ոսկին», դառնալով *latun*, այսինքն՝ մեկ տառի պակասով նա արդեն **ոսկի** նշանակել չէր կարող...

514. ԻՍԿ ՈՐԻՐ Է «ԱԼԱԶՈՒՄ» ԲԱՌԻ ՍԿՋԲԻ Ա-Ն...

Ռուսերենում գործ է անվում **лачуга**՝ «հյուղ, խուղ», **лачужка**՝ «հյուղակ» (հիշենք Պուշկինի բանաստեղծությունը *Наша бедная лачужка*...) որը նույնպես «պակասով» է ծնվել, **а**-ի կորստով, թուրք-թաթարական **alaçux** բառից: Ուրեմն լ-ից առաջ գտնվող բառասկզբի **а**-ն օրինաչափորեն «ընկնում» է ռուսերենում... Թուրքերենում *alacik*՝ «վրան, բաց խրճիթ»:

Հայերենի որոշ բարբառներ գիտեն այս բառը **ալաչուխ** ձևով, ինչպես գործ է անում Վահան Միրաքյանը. «Որը տանում է **ալաչուխի** քեջան...»: Հայերենում **ալաչուխ**-ը զարդարուն, շքեղ վրանի անվանումն է:

515. ՈՐՔԱՆ ԲԱՌԵՐ ԵՆ ԾՆԿԵԼ «ՇՐՋԱՆ» ԲԱՌԻՑ: ՊՏՏԿՈՒՄ Է ՇՐՋԱՆԸ, ԵՎ ԻՆՉԵՐ ԱՍԵՍ ՉԻ ՂԱՆՈՒՄ ՇՐՋԱՆԸ...

Հին Հռոմում գլադիատորների պայքարի սիրահարները անհաշիվ էին: Իսկ նրանց պայքարը ցուցադրվում էր *circus*-ներում: **Յիրկուս** կամ **ցիրկ** բառը անցավ աշխարհի բազմաթիվ լեզուների, իսկ հայերենին՝ **կրկես** ձևով (որովհետև լատիներենի *c*-ն նախապես ընթերցվում էր և արտասանվում որպես կ *i*-ից առաջ, հետագայում՝ նաև *g*), երկակի արտասանություն ունեն լատիներեն *c*-ով գրվող հարյուրավոր բառեր, ինչպես **Յիցերոն** / **Կիկերոն**, **ցիրկուլ** / **կարկին**, **Մարցելուս** / **Մարկուս**, **ցինիկ** / **կունիկ** և այլն: Իսկ լատիներենում **ցիրկուս** նշանակում էր «շրջան»:

516. РЫНОК

Ռուսերենում, բուլղարերենում գործածվող **рынок**՝ «շուկա» բառը նույնպես ծագում է «շրջան» բառից, նրա զուգահեռներն են՝ ուկր. **рынок**, լեհերեն *rynek*, չեխերեն *rynk*, որը «օղակ, շրջան» իմաստից բացի նաև քաղաքային հրապարակ էր նշանակում: Միա այսպիսի հրապարակներն էլ աստիճանաբար վերածվեցին շուկաների, որոնց «կապով» **рынок** կամ *rynk* անունը:

Բռնցքամարտի սիրահարները իրենց կուռքերի պայքարը դիտում են **ռինգում**, **ռինգ** կամ **րոնգ** անգլ. նշանակում է «պարաններով շրջափակված բռնցքամարտի մրցարանը (6x6), իսկ ծագումով անմիջապես այն կապ ունի վերևի բոկ՝ «շուկա» բառի հետ:

518. ՈԱՌԻՂ

Ի դեպ բռնցքամարտի երեքրոպեանոց մարտի պահը մինչև ընդմիջումը անվանվում է **ռաունդ**, որ անգլերենի round՝ «կլոր, շրջան», rond՝ «կլոր» բառից է ծագում: Իտալ. rondo, ֆր. rondeau:

519. ԿՐՄԻ

Ռուսերենի **кряжеса**՝ «ժանյակ» բառը նույնպես **կրյի**՝ «շրջան, օղակ, անիվ, մարդկանց շրջան» բառից է ծագում, այսինքն՝ «հյուսվածք, որը բաղկացած է օղակաձև շրջաններից»: **Крив**–ից է նաև **окрив**՝ «շրջան» բառը:

520. ՇՐՋԱՆ

Չայերենում **շրջան** բառը նույնպես իմաստի զարգացում է ապրել, և ժամանակակից հայերենի բացատրական բառարանը տալիս է նրա 11 նշանակությունները (4–րդ հատոր, էջ 88): 1. կլոր պարագիծ, 2. պարփակված օղակաձև տարածություն, 3. մարդկանց կլոր կանգնածների խումբ, 4. քնազավառ, ոլորտ, 5. սոցիալական կամ պրոֆեսիոնալ մարդկանց միջավայր, 6. երկրի վարչական բաժանում ըստ մարզերի, 7. տերիտորիալ, տարածքային կամ իրադարձությունների տարածք, 8. ժամանակաշրջան, ժամանակամիջոց, 9. միջավայր, 10. պտույտի ավարտ, 11. արաբ. davr–շրջան, daura–ժամանակամիջոց, դար, «100–ամյա շրջան», ժամանակաշրջան, աքքաղ. ժար, հայ. դար և այլն:

521. ՑԻԿԼ

Չուև. kyklos՝ «շրջան»:

Ցիկլոն (kyklon)՝ «պտտվող»:

Enciclopedia, հունարենի enkyklios paideia՝ «ուսուցում ողջ գիտության շրջանով»:

Ցիրկուլ՝ լատին. circulus՝ «շրջան»:

Ցիրկուլացիա՝ «շրջանառություն»:

Ցիկլոն–1. գլանաձև եզրավոր տղամարդու գլխարկ, 2. գլանաձև:

Գլան – գիլ արմատից գլաքար՝ «կլոր հղկված գետաքար»:

522. ԲՈՒՆՐ

Բուլոր հայերենում նշանակում է **ամբողջ, ամեն** (... բուլորը թեզ), նաև՝ **լրիվ**՝ տարին բուլոր, նաև՝ **կլոր** (բուլոր լուսին) և **շուրջը** (վզիդ բուլոր շարեշար): Գործ է ածվում նաև **բուլորք, բուլորտիք** ձևով (ծառի բուլորքը, բուլորտիքը), **բուլորել, բայական ձևը խմբել, հավաքել** (անասունները **բուլորել**), **շրջապատել** (Բերրը բուլորված էր անուր, բարձր շրջապարիսպով: Խարույկի շուրջը **բուլորած** ծափ էին տալիս:), **լրանալ**, **ամբողջանալ** (Թոռնիկի երեք տարին աշնանը բուլորեց):

523. ԿԱՊԵՐՏԸ՝ ԿԱՐՊԵՏ, ԱՊԱ՝ ԿԱՐՊԵՏ ԵՎ ԴԱՐՁԱԾ ԿԱԼԻ, ԽԱԼԻ՝ ԴԱՐՁՅԱԼ ԿԵՐԱԴԱՌՆՈՒՄ Ե <ԱՅԵՐԵՆԻՆ>

Անհիշելի ժամանակներից Չայաստանը (այսինքն՝ հայ կանանց աշխատանքը) հռչակված էր իր գունագեղ **կապերտներով** ու **գորգերով**, որոնց մասին իրենց հիացական խոսքերն են թողել ուղեգրություններում արաբ և եվրոպացի ճանապարհորդները: Բնականաբար հայ վաճառականներն էլ եվրոպայում գորգեր ու կարպետներ վաճառելիս պիտի այս ապրանքներն իրենց անուններով կոչեին: Եվ ահա հայերենից եվրոպական լեզուներին հիշատակ մնաց անգլ. carpet, իտալ. carpite, գերմ. Karpet, սերբ. karpit, հունգ. karpit՝ «վարագույր», սերբ. krpeta՝ «սեղանի վրա փռոց»:

Ըստ իտալացի Մարկո Պոլոյի՝ Կարին քաղաքում գունագեղ գորգեր էին գործում: Իսկ արաբ ճանապարհորդների վկայությամբ՝ **Կարինը** քանի որ արաբական հորըրջմամբ **kali–կալի** էր կոչվում, ուստի այնտեղի գորգերն էլ ստացան **կալի** անվանումը, որն էլ հետո **խալի, խալիչա** դարձած էտ վերադարձավ ռեպի հայերենի բարբառները. «Ջահել էի, երբ գործեցի քանի **խալի, խալիչա**» (Ղ. Ա.):

524. ՍԱՀՄԱՆ ԿԱ ԵՎ ԼԵԶՎԻ ՍԵՏ, ՈՐԸ ՏԵՐՄԻՆՆ Ե ԿԱՍ ԵԶՐԸ

Եթե նկարիչն ընտրում է գույներ, երաժիշտը՝ հնչյուններ, ապա բանաստեղծն է՝ բաներ՝ իրենց նուրբ իմաստային երանգներով: Դիպուկ կամ գեղեցիկ է խոսքը, եթե ճիշտ են ընտրված բառերը: Այսօր մենք կարիք ենք զգում բազմաթիվ նոր տեխնիկական տերմինների, այսինքն՝ մասնագիտական բառերի, որոնց մի մասը պատեճնում ենք, մի մասն էլ՝ վերցնում օտար լեզուներից: Դժվար է այս գործը, օտար ներխուժումից հայերենի սահմանները պահպանել մեր պատվի գործն է: **Տերմին** բառն էլ այդ է հուշում, չէ՞ որ լատիներենում terminus հենց «սահման» էր նշանակում: Այստեղից էլ՝ **սահմանել**՝ «որոշել, կարգավորել» կամ **սահմանադրել** արտահայտությունը: Մեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթի գիրքն անվանվել է «Յաղագս **սահմանաց**»՝ հասկացությունները միմյանցից սահմանազատելու, բացատրելու առումով: Իզուր չի ասված. «Մարդու թշնամին իրա լեզուն ա» կամ «Լեզվի ձեռիցը կրակն ա ընկնում», եթե ճիշտ չենք ճանաչում բառերի **սահմանները**: Այժմ էլ տերմինը հայերեն «եզրույթ» բառով ենք արտահայտում:

525. ՈՐՊԵՍ ՎԵՐՏԻՆ ԶՐՈՒՅՑ ԿԱՍ ԶՐՈՒՅՑ ԵԶՐԱԳԱՎԿԱՄԱԼ

Ամփոփում, եզրափակում կամ վերջաբան գլխի փոխարեն կարող էինք ևս մեկ գրույց լեռել՝ պեղելով հայոց մատյանների անսպառ զանձարանը: Սակայն ոչ մի գիրք, ոչ մի քննադատություն, ոչ մի հեղինակ **համապարփակ** չէ: Ուստի և ոչ ոք չի կարող **սպառիչ** աշխատանք ներկայացնելու հավակնությունն ունենալ: Առավել ևս, եթե խոսքը լեզվի մասին գրված աշխատանքին է վերաբերում, մեր նպատակը հայերենի բոլոր բառերի մասին պատմելը չէ, այլ մի բանիսի կենսագրությամբ ցույց տալ լեզվում կատարվող փոփոխություններն ընդհանրապես:

Եթե այսօր մենք ասում ենք մեր երեխային. «Աղբը **ճետի**ր աղբարկը», բոլորովին էլ չենք մտածում, թե ինչ ենք ասում: Չէ՞ որ **ճետ**ը նշանակում էր «աղեղից **ճետ** արծակել»: Իսկ այսօր, ինչ որ դեռ ենք ծգում **ճետ**ում ենք: Այստեղից եզրակացություն, ինչպես մարդն ու նրա շրջապատն է փոխվում, այնպես էլ բառերն են փոխվում: Նրանք «մաշվում են, հնանում, իմաստափոխվում և կամ հարություն առնում, երբեմն էլ մեռնում են, որ տեղ տան նոր ծնվածներին»:

Նոր սերունդն այսօր չգիտե սեպուհ, առուրչամ, շինիկ, **ճետ**իկ, կերոն, մաշտոց, **դեմքակ** և նման հարյուրավոր բառեր, որոնք մեռել են: Բայց չէ՞ որ սրանցից շատերը դեռ կենդանի էին մեզանից քիչ առաջ մեր պապերի կամ ապուպապերի շուրթերին: Այսօր ասում ենք. «Նա սեփական խելք չունի, սեփական կարծիքից զուրկ է, բայց ման է գալիս սեփական մեքենայով, սեփականատեր է, և դա իմ սեփական աչքով եմ տեսել, նա այդ սեփականությունը պետության միջոցները սեփականելով է ստեղծել» և այլն, բայց չենք զգում, թե ինչ է նշանակել վերջինս: Ինչպե՞ս թե, սեփական խելք, սեփական կարծիք, սեփական աչք, սեփական մեքենա, սեփականություն, սեփականել, սեփականատեր և այլ նման արտահայտություններ, որոնց մեջ ընդգծելով հանդերձ աչքի, կարծիքի, խելքի, մեքենայի՝ մեկին պատկանելը, միաժամանակ ասում ենք կարծես, որ դրանք մերը չեն, այլ սեպուհինն են: Այժմ սեփականատեր-ը սեպուհական-ի տերը չէ, այլ իրեն պատկանող կայքի, ունեցվածքի:

Ո՞վ է այս սեպուհ-ը: Հինգերորդ դարի գրաբար գրքերում սեպուհ նշանակում էր «ասպետ, նախարարական տոհմի իշխան, ազնվական զինվոր, ազատ, իշխանավոր»: Այս բառը հիշյալ իմաստներով պարունակում էր մինչև 18-րդ դարը: Այսպես, օրինակ՝ Ղուկաս կաթողիկոսի կոնդակներից մեկում (4507, էջ 1289) կարդում ենք. «Մելիք Մեծունն և Ապովմ տարագրեցան ի բնիկ տեղաց և ի սեպուհ ժառանգութեանց իւրեանց»: Ի՞նչ է սեպուհ ժառանգութիւն՝ «իշխանական կալվածք, հայրենիք, ժառանգություն, ունեցվածք»: Այստեղից էլ՝ սեպուհական բառը, որը ու-ի կրճատմամբ դարձել է սեփական և ապա՝ մեր ժամանակներում, սկսել է հնչել սեփական: Սրանից էլ՝ սեփականություն, սեփականել և այլն:

Ուրեմն ի՞նչ է ստացվում. սեփական աչք, սեփական ձեռք, սեփական խելք, սեփական կարծիք, սեփական մեքենա, սեփական գրքեր, սեփական տուն և այլ նման արտահայտություններ գործածելիս մենք ոչ թե դրանց մերը լինելն ենք ընդգծում, այլ իշխանակա՞ն կամ ասպետակա՞ն լինելը: Իհարկե, ոչ: Պարզապես մենք նոր ձևով ենք մտածում և իրերն ընկալում ենք նորովի, նոր իրադրությամբ

պայմաններում: Եթե հունւմ միայն սեպուհին էր տրված իրավունք այդ ամենի տերը լինելու, և նա էր օգտվում իրավունքից, ապա այժմ բոլորն են այդ իրավիճակում, և հետևաբար էլ արտահայտվելիս խոսում ենք սեպուհավարի՝ սեպուհական իրավունքների տեսանկյունից: Ահա և սեպուհականը դարձավ անձնական:

Եվ այսպես ամեն դար, ամեն տարի, ամեն ամիս (թերևս նաև ամեն օր) իմաստափոխվում են բառերը, ամեն պահ բանաստեղծների, գրողների, գիտնականների, լրագրողների և ժողովրդի լայն զանգվածների խոսքում հանդես են գալիս նոր արտահայտություններ, նոր ոճեր, նոր դարձվածքներ, նոր իմաստներ՝ բառերի նոր երանգներ, այսինքն՝ ծնվում են ու մեռնում բառերը, և լեզուն փոփոխվում է աննկատ մեր աչքերի առջև: Եվոր բառը 5-6 տարեկան է: Այն նոր է հայտնվել հայերենում: Հարյուրավոր դեղորայքների անվանումներ են ստեղծվում աշխարհում և ներմուծվում են դրանք մեր լեզվի մեջ: Հրաժարվել դրանք օգտագործելուց՝ անհնար է, ամեն ինչ թարգմանել՝ անիմաստ է: Չավելուական չէ՞ օպերան երգի՞ն, բալետը պարի՞ն թարգմանելը: Եթե կենդանի է տվյալ լեզվով խոսող ժողովուրդը, ապա չի կարող անփոփոխ մնալ նրա հաղորդակցության միջոցը՝ լեզուն, եթե համընթաց է քայլում տվյալ ժողովուրդը ժամանակի հետ: Հեղինակին բվում է, որ այս գրքում ծնված շուրջ 2000 բառերի կենսագրությունը պատմելով՝ նա հասել է ինչ-որ չափով իր նպատակին՝ դարձնելու համար ընթերցողին իր լեզվի զանձարանի և նրա սահմանների պաշտպան օտարամուտ ներխուժումներից:

108. Եթե նրանց խնամքը քիչ է, որովհետև...	77
109. Ո՞ր է նրանց քիչը, եթե նրանք...	77
110. Երբ ոչ ոք չի նայում նրանց...	78
111. Նրանք ունենալու, նրանք ունենալու...	78
112. Եթե նրանք ունենալու...	79
113. Մյուսը նրանք, թե՛ գիր ԿԱՄ թուրք...	80
114. Եթե նրանք չեն ունենալու...	81
115. Քանի որ նրանք ունենալու...	81
116. Քանի որ նրանք ունենալու...	82
117. Մյուսը նրանք ունենալու...	82
118. Ինչո՞ւ նրանք ունենալու...	83
119. Եվ նրանք ունենալու...	84
120. Դիպե՞լ նրանք ունենալու...	84
121. Եթե նրանք ունենալու...	85
122. Եթե նրանք ունենալու...	86
123. Գործը նրանք ունենալու...	86
124. Եթե նրանք ունենալու...	87
125. Մյուսը...	87
126. Մյուսը...	88
Մի քիչ է լեզվաբանություն	89
127. Մեկ զորքն է...	89
128. Գրքեր ԿԱՄ ձև...	89
129. Գրքեր ԿԱՄ ձև...	89
130. Գրքեր ԿԱՄ ձև...	89
131. Բայ նրանք...	90
132. Բայ նրանք...	90
133. Բայ նրանք...	91
134. Բայ նրանք...	94
135. Բայ նրանք...	95
136. Բայ նրանք...	96
137. Բայ նրանք...	96
138. Եթե նրանք...	96
139. Եթե նրանք...	97
140. Ինչ է նրանք...	97
141. Ինչ է նրանք...	98
142. Եթե նրանք...	99
143. Եթե նրանք...	99
144. Եթե նրանք...	100
145. Եթե նրանք...	100
146. Եթե նրանք...	101
147. Եթե նրանք...	101
148. Եթե նրանք...	102
149. Եթե նրանք...	102
150. Եթե նրանք...	103
151. Եթե նրանք...	104
152. Եթե նրանք...	104
153. Եթե նրանք...	105
154. Եթե նրանք...	106
155. Եթե նրանք...	106
156. Եթե նրանք...	107
157. Եթե նրանք...	108
158. Եթե նրանք...	108
159. Եթե նրանք...	109
160. Եթե նրանք...	109
(Այս մասին տե՛ս նաև ստա՞ղյակ (579) քաղի տակ)	110

161. Որովհետև...	110
162. Որովհետև...	111
163. Որովհետև...	111
164. Որովհետև...	111
165. Որովհետև...	112
166. Որովհետև...	113
167. Որովհետև...	114
168. Որովհետև...	115
169. Որովհետև...	116
170. Որովհետև...	117
171. Որովհետև...	117
172. Որովհետև...	117
173. Որովհետև...	118
174. Որովհետև...	118
175. Որովհետև...	119
176. Որովհետև...	119
177. Որովհետև...	120
178. Որովհետև...	121
179. Որովհետև...	121
180. Որովհետև...	122
181. Որովհետև...	123
182. Որովհետև...	123
183. Որովհետև...	124
184. Որովհետև...	124
185. Որովհետև...	125
186. Որովհետև...	126
187. Որովհետև...	126
188. Որովհետև...	127
189. Որովհետև...	128
190. Որովհետև...	128
191. Որովհետև...	128
192. Որովհետև...	128
193. Որովհետև...	129
194. Որովհետև...	130
195. Որովհետև...	131
196. Որովհետև...	132
197. Որովհետև...	133
198. Որովհետև...	134
199. Որովհետև...	134
200. Որովհետև...	135
201. Որովհետև...	136
202. Որովհետև...	137
203. Որովհետև...	138
204. Որովհետև...	138
205. Որովհետև...	139
206. Որովհետև...	140
207. Որովհետև...	140

318.	ՀԱՆՔԿԱՑՑ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ ԱՌԱՋԱՔԱՆԻՑ ԿԱՍ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՇՈՒ ԱՇԽԱՐԻՔ ԻՉ ՄԻ ԲԱՌԱՐԱՆ ԾԻ ԿԱՐՈՂ ԼԻՒՆԵԼ ԿԱՏԱՐՁԱԼ	215
319.	ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՇՈՒՅ ԱԵՅ ՀԱՏԱՐ ՀԱՐԵՎԱՏՆ Է ԸՆՏՐՈՒՄ ԱՆՈՒՆ	216
320.	ԱՄՏԻՇ	216
321.	ԳԼՇՈՒ	216
322.	ԾԻՎԱՆԱԲԱՐՈՒՆԵՐ	216
323.	ԽՈՒՐՈՆ	217
324.	ԹԱԹԱՐԻ, ԹԱՅԱՐՅԱՍԻ	217
325.	ՅԻՆՆ ԿԱՍ ՃԱՂՃԱԵՐԿՐԻ, ՅԱՐԻ ԵՎ ԲԱՐՈՐԻ ԵՐԿՐԻ	217
326.	ՈՐՏԵՂ ԵՆ ԱՊՐՈՒՄ ԱՎԱՆՆԵՐ	218
327.	ՆՈՐՄԱՆՆԵՐ ԵՎ ՎԻՒԽԱԳԵՆ	218
328.	ԻՆՇՈՒ ԱՎԱՎՈՆՆԵՐԸ SKLAV «ՄՏՐՈՒԿ» ԿՈՉՎԵՑԻՆ	218
329.	ԲԵՒԿԻՆ: ԲԵՂԱՔԻՆՆԵՐ ԿԱՍ ԱՆԱՊԱՏԱՑԻՆՆԵՐ	218
330.	ԵՂԵՎՆՈՒՏԻ ԿԱՍ ԱՌՈՒՏԻ ԵՐԿՐԻ ԳՍՆԵՄԱՐԿ, ԴԵՆԵՄԱՐԿ	219
331.	ԿՐԱՅԻ	219
332.	ԳՑԱՎՈՐ	219
333.	ՀՈՒՆԳԱՊ	219
334.	ՉՈՒԿԱՇ	219
335.	ԹՈՒՆԳՈՒՅ, ՏՈՒՆԳՈՒՅ	220
336.	ԼԵՂ	220
337.	ՉԵՆ	220
338.	ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՏԱՌԱՄ Է ՉԻՆ ՈՒ ՄԱՅԻՆ ԵՐԿՐԻՆԻ ՏԵՂԸ	220
339.	ԽԱՄԱՅԻ ՄԵՆԷԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՎԱՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՁԱՎԵՅ	221
340.	ՔԱՆԻ ԱՆՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՈՒՆՆԱԼ ԱՅՎԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆԵՐ ԿԱՍ ԽԱՍԱՇՐԻՆՆԵՐԸ	221
341.	ԱՆՔԱՂԱՎԱՆԵԼԻ ԲԱՌԵՐ ԿԱՍ ԴԱՏԱՐԻՔԻ ՓՈՒՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	221
342.	ՊԵՏՏԻ Է ԽՐԱՆՈՒԲԵԼ ՄԱՐԿԱՌԱՌՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՍ ԻՆՇՈՒՅ ԹԱՐԿԱՍՆԵԼ ՁԻՆԱ-Ը	222
343.		222
344.	ՑՈՒՆԱՄԻ	222
345.	ԹԱՅՉՈՒՆ	223
346.	ՍԱՄՈՒՄ	223
347.	ԴԱՐԵՐԻ ԱՌՈՒՆՆԵՐԸ ԵԹԵ ԹԱՐԿԱՍԱՎԵՆ, ՄՐԱՄ ԱՍԵՆ ԻՆՉ ԿԱՍՈՒՆՎԻ	223
348.	ԴԱՐԻ ԱՍԵՆԱՄԱՐԱՍՓԵԼ ՊԻՎԱՆՊՈՒԹՅՈՒՆԸ ՄՐՈՂ (ՉԻՆԴՂ)	224
349.	ԲՈՅԻ ԳՅՈՂ ԵՎ ԲՈՅՈՅԱՆՆԵՐ	224
350.	ՍՈՍՏԱ	225
351.	ԱՍԵՆԱՄԱՐԱՍՓԵԼՆԻ ՊԻՎԱՆՊՈՒԹՅՈՒՆ ԵՆՈՒՆՈՑ Է ՆԵՏՈՒՄ ԳԻՏԱԿԱՎԱՆՆԵՐԻՆ	225
352.	ԿՈՍԱՆ ԵՇԱՆԱԿՈՒՄ Է «ՔՈՒՆ, ԲԱՅՑ ՀԱՎԵՐՈՎԱԿԱՆ»	226
353.	ՍԵՔՍ	226
354.	«ՏԱՔ ԽԱՊՉԻՔ» ԵՆՈՒՈՒՄԸ, ՉԻՆՆ ՈՒՏԻ, ԵԹԵ ԱՄԵՐԿԱՆ ՉՔԱՅՎԵՐ	226
355.	ԵԹԵ ՉԻՆՆԵՐ ԿԱՎԱՍՈՒ, ՉԻՐ ԼՈՒՆ ՆԱՎԻ ԵՌԱՒԱՐԸ	226
356.	ԿԱՐՏՈՒՅԻՆ, ԹԵՊ ՓԱՅՏԱԶԵՍ ԿԱՍ ՔԱՏԱՑ	227
357.	ՏՈՒՐԿՈՒՅՑ ՄԵՂՎԱՇԵՐԸ՝ ԾԱՆԱՒԱՆՑ-Ը, ԹՅԱՄԱՌՑ-Ը, ԹԱՄԱԲԱՌԻՆ, ԲՈՒՆՈՒՅՆ, ԹՈՒՑՈՒՆ-Ը ՏԱՔԱԿ	228
358.	ՉՔԱՂԱՎԱՆԱԿՐ ԲԱՌԵՐ ԿԱՍ ԴԱՏԱՐԻՔԻ ՓՈՒՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	229
359.	ԵԹԵ ՀԱՂԻՆԴ ԽԱՍԱՍԸ Է, ՄՐԱՄ ԱՅՆ ԵՎԵՐ Է ԱՆՊԱՅՄԱՆ	230
360.	ՄՈՐԱՄ	230
361.	ԳՈՒՔԵԼԵՆ	232
362.	ԱՆՔԱՂԱՎԱՆՆԵՐԻՆՔԻՑ ԵՎԱՄ ԲԱՍԱՌԱՅ: ԳԵՏՑ ԱՅՆՊԵՆ ԻՉԻՆԻ ԾԻ ԼԻՆՈՒՄ... ԽԱՂԻ ԱՆՈՒՆ, ԻՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍ ՆՊԱՏԱԿԻ ԱՆՈՒՆՆ Է	233
363.	ԼԱՆԱԿԻՆ ԱՍՏՎԱՇԵՐԸ ԴԱՌՈՒՄ ԵՆ ԴԵՎ ԿԱՍ ՍԱՏԱՆԱ, ՍԱՔ ՈՐ ՔԱՅՐ	234
364.	ԽԿԱ ՍԱՏՎԱՇԵՐԻ ԱՌԱՅՈՒՆՆԵՐԻՆ ԻՆՇՈՒՅՆ ՊԻՏԻ ԿՈՆԵԼ «ՀԱՎԱՌՈՒԿ»	235
365.	ԻՆՇՈՒ ՔԱՅ ԱՍՏՎԱՇԸ ԴԱՐՉԱԿ ԱՍՏԱՆԱ-ՔԱՅ	235
366.	ՄՐԱՄԱՅԻ	236
367.	ԿՈՊՐԱԿ ԿԱՍ ԴԱՏՏԵՆ: ԿՈՊՐԱԿ ՀԱՆՆԵԼ ԵՎ ԴԱՏՏԵՆՆԵԼ ԵՇԱՆԱԿՈՒՄ Է ԱՌԱՍԱՅՆՆԵԼ, ԲԱՅՄԱՌՅԱՆ	236
368.	ՎՈՒԿԱՆ, ԴՈՒ ԻՆՇՈՒՅՆ ԵՆ ՄՐՈՂՈՒՄ ԱՎՏՐՈՂՈՒԵՐՈՒՄ	236
369.	ԻՆՇՈՒ ԽՏԱՄԱՅԻՆ ԱՍՏՎԱՇԵՐԸ	236
370.	ՔԱՄԻՆԵՐԻ ԱՍՏՎԱՇԻՐԻՆ ԷՆԼ, ԵՎԱԳԻՐ ՏԱՎԻՂՐ ԸՈՒՆՑ ԱՍՏԵՐԻ	237
371.	ԴՈՒՄՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	237
372.	ՈՍՑ	237

373.	ԴԱՐԱՐԻՑ	238
374.	ԴՐԱՍԱՏ	238
375.	ԲԵՂԵՇՏԻ	238
376.	ԶԵՆՆԱՍԸ	238
	ԱՐՏԱՊԱՁԱՆՆԻՔ	239
377.	ԻՆՇՈՒՅ ԱՌԱՂԱՎԱՆՑ ԱՌՈՒՆՆԵՐԻՑ ԾՎԱՇԵՐԻ ԲԱՌԵՐ ԴՊԶԵԼ, ԴՊԶԵԼԱՅԻՆ ԿԱՌԵԼԱՆՅՈՒԹ, ԴՊԶԵԼԱՅԻՆ ԸՆԴՈՒՇ	239
378.	ՎՈՒՆ, ՎՈՒՆԱՅԵՏՐ	239
379.	ԱՄՊԵՐ, ԱՄՊԵՐԱՅԵՏՐ	239
380.	ԶՈՒԼ ԵՎ ԶՈՒԼ-ԼԵՆՑԻ ՕՐԵՆՔ	239
381.	ԻՆՇՈՒ Է ՄԵՎ ՏՈՐԸ	240
382.	ՕՐԱ: ՕՐԱԻ ՕՐԵՆՔ	240
383.	ՎԱՏՏ-Ը	240
384.	ԿԱՅԱՐ Է ԿԵԱՍՐ	240
385.	ԿՐՈՒԼ, ԿՐԱԼ	240
386.	ԽԱՆ	240
387.	ՕՐԱՍՏԱՓՈՒ, ՕՐԱՍՏԱ, ՕՐԱՍՏԱԿԱՆ	241
388.	ԽՈՒՐՈՒԱՅԻՆ	241
389.	ՍԵՆԴԱԿԻ, ԱՐՏՏԵՐՊՐՈՒՑ, ԹԵՊ ԲՐՈՂՈՑ	241
390.	ԳԱՆՈՅԵ	241
	ԱՌՅՈՒՆԱՆՆԵՐԻՔԻ ՑԵՆՆԱԿ ԵՆ ՔԱՌԻՐ	242
391.	ՑԱՅ, ՑԱՅԱՅԻՆ ԵՐԱԾՇՏՈՐՅՈՒՆ	242
392.	ԽՈՒՐԱՂԱՍ, ԽՈՒՐԱՂԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	242
393.	ԼԻՆՇՈՒ ԴԱՏԱՍԱՆ	242
394.	ԲՈՅԿՈՑ, ԲՈՅԿՈՑԵԼ, ԲՈՅԿՈՑԻ ԵՆՔԱՐԿԵԼ	243
395.	ԱՍԱՄԱՐԴ	243
396.	ՄԱԿՆՏՈՇ	243
397.	ՌԵՆՏՅԵՆ	243
398.	ՄԵՎԵՆԱՆ, ՄԵՎԵՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՍԵԼ ԱՍԵՆ ՄԱՐՊՈՒ ՔԱՆ ԾԻ	243
399.	ՄԱՌՈՒՅԵՐ	244
400.	ԿԱՐԱՔԻՆ	244
401.	ՊԻՏԱՌԱՅԻՆ ԵՎ ՊԻՏԱՌՆ	244
402.	ԲԵՐՈՒՆԱԿԱ	244
403.	ՌԵՎՈՒՄԵՐ	244
404.	ՆԱԳԱՆ	244
405.	ՎՈՒՆ	245
406.	ՍՏՅԱՍԻՄ	245
407.	ԿԱՍԵՆԱԿՈՎ	245
408.	ԿԱՏՅՈՒՇԱ	245
409.	ԴՈՒՄԱՐՏ	245
410.	ՏՈՐ	245
411.	ՄՈՒՍԻՆ	245
411.	ՄՈՒՍԻՆ	245
412.	ՄԱԿԱՐՈՎ	246
413.	ԼԵՑՈՒ ՁԻՆՎՈՐԿԱՆ ԿՈՉՈՒՆՆԵՐԻՑ	246
414.	ԱՄՐԵԱԸ ԹԵՎԱ ՄՈՒՆՊԵՏՆ Է, ՍԱԿԱՅԵՆ ՉԻԵՐԻ	246
415.	ՀԱՍԵՆԱԿԱՌՈՒՄ, ԳԼԱՍԿՈՐ, ԸՆԴՈՒՄՈՒՐ ԵՇԱՆԱԿՈՒՄ Է ԳԵՆԵՐԱԼ	246
416.	ՁԻՆՎՈՐԿԱՆ ՄԵԾԸ ԿԱՍ ԱՎԱԳԸ ԿԱՐՈՂ Է ՆԵՎԱ ԿՈՉԿԵԼ ՄԱՅՈՐ ԿԱՍ ՄԱՌՈՐ	247
417.	ՈՐԿ Է ՀԱՄԱԿԱՐՉԸ ԿԱՍ ՀԱՄԱՐՅՈՐ	247
418.	ՀԻՆ ԴՈՒՄՈՒՄ ԵՎ ՀԱՅՐԱՑՈՒՄԿԱՆ ՄՐԱ ՄԵՎ ՄՈՑ	247
419.	ԱՅՆՈՒՄԱՆՅԱՑԱԿ, ԿԱՐՊԱԼՆ ԷՆ Է ՀՐԱՍԱՆՍԱՐ, ԹԵՎԵՎ ԿՈՏԱՐ	247
420.	ԿՈՍԱՐՈՐԸ ԿԱՐՈՂ Է ԿՈՍԱՐՈՐ ԼԻՆԵԼ	248
421.	ԵԹԵ ԹԱՐԿԱՍԱՎԵՆ ՁԻՆՎՈՐԿԱՆ ԿՈՉՈՒՆՆԵՐԸ... ՀՈՒՄԱՐՆԵՐ: ՍԻՇՆՈՒՆՑ ԾԻՑ, ԱՅՐՈՒՇ, ԹԵ ՀԵԾՅԱԼ	248
422.	ԵՆՆԵՑՏՈՐ ԵՎ ՄԵՐՈՎԱՅ	249
423.	ԼԵՑՏԵՆԱՆՏ	249
424.	ԿԱՊԻՏԱԼ	249
425.	ԵՐՊԱՎՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՐԵՅԻ ՄԱՐՊՈՒՆ, ԵԹԵ «ԱՍՏՎԱՍՏ» ԲԱՌԸ ԼԻՆԻ ԱՆՎԱՆ ՄԵՑ...	249
426.	ԻՆՇՈՒՅ ՆԱՍԱՎԱՆԱՆ ՄԵՐ ԱՌՈՒՆՆԵՐԻ ԵՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ...	250

427. Թե ինչո՞ւն են Կերպարանաթուրան Կերպարանոս բառերը իրենց ժանրապատկերը	250
428. Ինչո՞ւն են Շրջակայք բառերի իմաստները. ինչո՞ւն են Չասարկած եւ չանկարծ բառերի շարքերը	251
429. Անշուքիչ, Գերազանցիկ, Թե՛ ղստարկարձեան արձակութիւն	252
430. Օրակարգը դառնո՞ւ է շարժառեւ, Մի՞նչ աստիճան	252
431. Գեղարարութիւնը շարժառեւ զեպ «Պատկերներ»	252
432. Կարճ գործնաբան, Տողակներ եւ Դրամներ, Զարգացում եւ ՈՏՈՒ ճանաչողութիւն	253
433. «Ճանաչում» է կենդանի	253
434. «Երկարատարութիւն» գրականութիւնը կարգադրութիւններ	253
435. Կենսագրութիւնը, Որքան տեսնուած Կարգադրութիւնը կարգադրութիւն	254
436. Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը, Թե՛ ղստարկարձեան	254
437. Անշուքիչ, Կարգադրութիւնը	255
438. Տարբեր տեսակներու Կարգադրութիւնը	255
439. Անշուքի բառերի ինչո՞ւն են Մարտնչ: Զարգացումը կարգադրութիւնը տարբերութիւն է	255
440. Անշուքի բառերը կարգադրութիւնը	256
441. Թե՛ ղստարկարձեան, Կարգադրութիւնը կարգադրութիւն է, Կարգադրութիւնը Փոքրատարութիւնը կարգադրութիւնը	256
442. Ինչո՞ւն են ղստարկարձեան Կարգադրութիւնը կարգադրութիւնը Կարգադրութիւնը, Տարբեր	256
443. Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը Անշուքի բառերը	257
444. Կարգադրութիւնը (Ստանդարտ)	257
445. Կարգադրութիւնը	258
446. Անշուքի	258
447. Կարգադրութիւնը	259
448. Կարգադրութիւնը	259
449. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	259
450. Կարգադրութիւնը	259
451. Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը	259
452. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	260
453. Անշուքի ղստարկարձեան է, Կարգադրութիւնը կարգադրութիւնը	260
454. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	261
455. Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը	261
456. Կարգադրութիւնը	261
457. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը, Կարգադրութիւնը Կարգադրութիւնը	262
458. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	262
459. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը, Կարգադրութիւնը Կարգադրութիւնը	263
460. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	263
461. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	264
462. Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը	264
463. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	265
464. Կարգադրութիւնը կարգադրութիւնը	265
465. Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը կարգադրութիւնը, Կարգադրութիւնը Կարգադրութիւնը	266
466. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	266
467. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը, Կարգադրութիւնը Կարգադրութիւնը	267
468. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը, Կարգադրութիւնը Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը	267
469. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	268
470. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	268
471. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը, Կարգադրութիւնը Կարգադրութիւնը	269
472. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	269
473. Կարգադրութիւնը	270
474. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	270
475. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	270
476. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը, Կարգադրութիւնը Կարգադրութիւնը կարգադրութիւնը	271
477. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	272

479. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	272
480. Կարգադրութիւնը	273
481. Անշուքի	274
482. Անշուքի	274
483. «Կարգադրութիւնը կարգադրութիւնը» (Կարգադրութիւնը)	274
484. Կարգադրութիւնը	274
485. Անշուքի	274
486. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	274
487. Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը	275
488. Կարգադրութիւնը	275
489. Կարգադրութիւնը	275
490. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	275
491. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը, Կարգադրութիւնը Կարգադրութիւնը	276
492. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը, Կարգադրութիւնը Կարգադրութիւնը	276
493. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	276
494. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը, Կարգադրութիւնը Կարգադրութիւնը	276
495. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	277
496. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	278
497. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	278
498. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	278
499. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը, Կարգադրութիւնը Կարգադրութիւնը	279
500. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	279
501. Կարգադրութիւնը	279
502. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	280
503. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	280
504. «Կարգադրութիւնը կարգադրութիւնը» է, Կարգադրութիւնը	281
505. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը, Կարգադրութիւնը Կարգադրութիւնը	281
506. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	281
507. Կարգադրութիւնը, Կարգադրութիւնը	281
508. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	281
509. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	282
510. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը, Կարգադրութիւնը	283
511. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	283
512. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	284
513. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	285
514. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	285
515. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը, Կարգադրութիւնը Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	285
516. Կարգադրութիւնը	285
517. Կարգադրութիւնը	286
518. Կարգադրութիւնը	286
519. Կարգադրութիւնը	286
520. Կարգադրութիւնը	286
521. Կարգադրութիւնը	286
522. Կարգադրութիւնը	287
523. Կարգադրութիւնը կարգադրութիւնը, Կարգադրութիւնը կարգադրութիւնը Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	287
524. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը, Կարգադրութիւնը Կարգադրութիւնը	287
525. Կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը կարգադրութիւնը	288

ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՉՅԱՆ

ԲԱՌԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Բառերի ճակատագիրը, դեպի լեզվի ակունքները

Հրատարակչության գլխավոր տնօրեն՝ ՄՊԿՐՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Տնօրեն՝ ՄԱՇԱ ՍԵՄՎԿԱՆՅԱՆ

Նկատիչ և գեղարվեստական խմբագիր՝ ԱՐՄ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ
Համակարգչային ծնավորումը՝ ԳՐԱԲԳԻՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ
Կազմի ծնավորումը՝ ԱՐԵՎԿԿ ՅԵԿՈՐՅԱՆԻ
Սրբագրիչ՝ ԱՇԽԻՎԻ ԱՍՆԱՆՅԱՆ

Քգզօ ճրագմամբոց
Չափսը 70x100 1/16
Յուրքը՝ օֆսեթ
Ծանրությունը՝ 18.75 տգ
Էլեկտրոնային ընկի
ճրագմամբոց

«ՃԱՆԳԱԿ-87» ԳՐԱՍԱՐԿՈՒԹՅՈՒՆ
375051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Ֆեքս՝ (+3741) 23 25 28,
Ֆաքս՝ (+3741) 23 25 95
Էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայք՝ www.zangak.am

4
2P-80

հղ.



Ներսես Ալեքսանի Սկրտչյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող և մի շարք բուհերի դասախոս

Ծնվել է 1928թ. Երևանում: Հեղինակ է մի շարք գրքերի և բազմաթիվ հոդվածների՝ նվիրված հայ բարբառներին, հայերենի և սեպագիր խեթերենի ու աքքադերենի լեզվական փոխհարաբերություններին, ինչպես նաև հայ ազգագրության խնդիրներին: Նրա գրչին են պատկանում «Բուրդուրի բարբառը»(1971թ.), «Գամիրքի բարբառը, ազգագրությունը և բանասիրությունը»(1988թ.), «Երաժշտական բառարան»(1999թ.), «Ամատոլիայի չուսումնասիրված բարբառները» (անտիպ), «Սեմական լեզուները և հայերենը»(ռուս.) և այլ գրքեր:

